Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ,
ԵՐԵՎԱՆ— 1983

ԳՄԴ 8427
Չ 282

Կազմեց՝ Ռ. Մ. Մուրադյան
Խմբագրեց և առաջաբանը գրեց՝ Ա. Գ. Զաքարյան

Չարենց, Ե.
Չ282 Երկեր/Կազմեց՝ Ռ. Մ. Մուրադյան., խմբ. և առաջաբանը գրեց՝ Ա. Գ. Զաքարյան.— Եր.: Սովետ. գրող, 1983.— 672 էջ.— Հայ գրաս. գ-բան).

Ժողովածուում զետեղված են հեղինակի բանաստեղծությունները, պոեմները, բալլադները և թարգմանությունները։

470 20 80 200 (902) / 765 (01) 83 — 83 «8»
ԳՄԴ 84
Ար 2

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմելու, առաջաբանի և ձևավորման համար, 1983

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

(Ստեղծագործական ուղու ուրվագիծ)

Վաղ նախափորձերից հետո, որոնցից մեզ է հասել միայն մեկը՝ «Մաղիկները հեզ թեքվում են քամու օրորի տակին»,— 1914 թ. Կարսում լույս ընծայած «Երեք երգ տխրադալուկ աղջկան» գրքույկով Եղիշե Չարենցը ներկայանում է որպես դրամատիկ մեծ շնչի բանաստեղծ:

Դրամատիկ էր սիրո հուզապրումը՝ «Հոգեվիճակ...» երգի հանդարտ ելևէջումից «Անմուն գիշերներին» տաքարյուն տառապանքով ալիքվող, ապա «Մեռելոցում» նորից իջնող-հանդարտվող մարմնավորումը: Դրա հետևում դրամատիկ էր և՛ շարքի երկալիք հոսքը՝ իրական մի խաղերի և բանաստեղծի ապրումների հակադրությամբ:

Եվ որքան էլ Տերյանի ազդեցությունն ահեղերեկ, այն չարենցյան առանձնատարբերի արտահայտություն էր՝ բացահայտ նշաններով տարբեր Տերյանից: Տերյանի երգերը հաջորդում են միմյանց տրամադրությունների տարբերակվող հավասար շնչառությամբ: «Երեք երգում» դրամատիկ հուզապրումը խորանում է՝ ունենալով լիցքավորվող կիզակետ, որն արդեն պոեմային կտավներ ստեղծելու կարողության հայտ էր: Ակնհայտ տարբերություն էր և առարկայական պատկերների առատությունը նրա առաջին երկու երգում, այլև բանաստեղծական անհատի ներգործության բնույթը, որոնցով, ինչպես նկատել է Գ. Մահարին՝ «... դաժան հրապարակական գույներով գրված Չարենցի «Երեք երգը» մի դեռ տակցված հերոսն էր տերյանական «ցնորք-աղջկա» գոյության, նա պատկերածումը»:

Բացառյալ «պատկերածումը» իմաստադրոշմ առանձնահատկությունով է հատկանշվում և 1913-ին մտահղացած «Հրո երկիրը», որից մեզ հասած տասը երգը «Երեք երգից»՝ «Ցիրտ» ծգվող պատանի բա-

հաստեղծի հոգու և հոգեբանության, սիրո և կարոտների յուրատեսակ հայելի է: Հեթանոսորեն պաշտվող սեր, որի առարկան միաժամանակ և՛ Քույր է, և՛ կին, և՛ ցնորք է, և՛ Շամիրամ, և՛ աստվածացվում է արևի պես.

Երազում եմ այն Երկիրը հեռավոր,
Ուր մարմինը, սեգ մարմինը ու հոգին՝
Անմյութացա՜ծ ու նյութացա՜ծ, լուսավոր՝
Ողջակիզվեն Արևի՜ մեջ, քույր իմ, կին։

Ու միանա՜ն սեգ մարմի՜նը ու հոգի՜ն...
Ու չլինի՜, ու չլինի՜ դու ու ես։
Անմյութացած— դու մարմնանաս— ու կրկին
Հրա՜շք դառնաս՝ անդունդները արևես...

Եվ երբ կանչեմ— դու գրկիս մեջ արևից
Ու տարփանքի՜ց, տառապանքի՜ց շիկացած—
Գրկես թևե՜րս մանկական ու անբիծ,—
Ախ, կի՜ն— ցնորք, քո՜ւյր, Շամիրա՜մ ու Աստվա՜ծ։

Սա նշմարիտ սիրո Չարենցի պատկերացումն է, որ, հասակային վերակերպություններով, որպես սիրո իմաստասիրական լուսավոր հոգեբանություն ու խորհուրդ անբաժան է եղել նրա ներաշխարհից մինչև Արփենիկին նվիրված «Ութնյակները Արևին», ապա «Չարենց–նամեից» մինչև կյանքի վերջին տարիներին գրած «Նավգիկե»։

Էապես այդտեղից էլ ծայր է առնում բանաստեղծի արևապաշտությունը, և սակայն «Հրո երկրի» հաջորդ արծարծումները հիշեցնում են մեկ «Տեսիլաժամերի» ճերմակ–լուսնաշխարհային տեսիլները, մեկ բնական բալլադների խորհրդավոր կարոտները և կորցրած տան ուղիների որոնումները, «Կապուտաչյա Հայրենիքի» հասկերի շշուկները ու աստղերի ոսկին, մահի, ոճիրի, արյունոտ գիշերների «Դանթականի» արնաքույր զգացողությունները, և վերջապես «Միածանի» իրիկնային կապույտ երազները...

«Հրո երկիրը» այդ ամենի յուրատեսակ միացում է, իրական կյանքի հետ ունեցած բանաստեղծի հոգու և մղումների խզումների հոլովումներով: Ըստ որում հոգևոր մղումները, ինչպես և խզումները վերաբերում են նաև մոգական ու ամոքիչ Քրոջ կերպարանքով գծագրվող նրա սիրուն՝ Երկու դեպքում էլ ընդունելով տուռում ու հուսախաբ այսպիսի շեշտեր.

Ո՛չ մութ կար, ո՛չ լույս։ Ո՛չ հրդեհ, ո՛չ ձյուն։
Մշուշում միայն, մեր հոգու վրա

Թևերն էր փռել մի անտես թռչուն
Ու դողո՜ւմ էին թևերը նրա...

Եվ ապա՝

Կամուրջներ չկան։
Իսկ գետը— վարար։
— Փնտրելով նրան,
Փնտրում ենք իրար...

Իսկական գրողի, բանաստեղծի կոչումով ծնված անհատականությունները պատմական ժամանակների զգայացույց են, և նրանց արծարծած տրամադրությունները, որոնք էլ անձնական կամ անձնականացված, օրգանական պայմանավորվածությամբ սերմանել են պատմական ժամանակաշրջանն ու իրականությունը: Չարենցի պատանեկությունը զուգադիպում է նորագույն ժամանակներում մարդկությանը առավել դաժանությամբ հետապնդող պատերազմական արհավիրքների, որոնք նրա արևաբաղձ փխրուն հոգում բնականաբար բեկվում են տխրության ու անելանելիության տրամադրություններով:

Նման ժամանակներում ռազմամոլ գերմարդու կամ ցեղի գերազանցության, ուռուս–հայրենասիրական որոտմունքի դիմաց նշմարիտ գրականության գենը մնում է մարդասիրությունը: Ուստի և ամեն դեպքում կարևորն այն է, թե գրողը, ավյալ դեպքում ձևավորվող Չարենցը՝ արդյո՞ք ճահանջել է մարդասիրության դիրքերից:

Եվ ոչ մի քայլ: Ավելին. որքան պատերազմական արհավիրքները դաժան, այնքան ավելի խոր մարդասիրությամբ է նա փարվում ու ապավինում մարդկանց, երբեք չանջատելով, վեր չդասելով իրեն, իր սերը, կարոտները ու երազանքները մարդկանցից ու աշխարհից:

Խառնվածքով նախորդներից տարբեր, մարդասիրական տարերքով Չարենցը օրգանապես շարունակում էր հայոց բանաստեղծության տոնմիկ ավանդները, իր վաղ ստեղծագործության մարդկային գթասրտությամբ բառացիորեն մնալով Միսաք Մեծարենցի և Վահան Տեր–յանի հարազատ եղբայրը, նրանց մարդապաշտական հանգանակները խաչավորող–կրողը: Մտաբերենք 1915–ի սկզբներին հյուսված «Կապուտաչյա Հայրենիքի» առաջին երկու հատվածը, որոնք բանալի են բացելու ոչ միայն պոեմը, այլև նույն թվականին վերաբերող «Տեսիլաժամերը», ապա լիրիկական բալլադները ու «Միածանը»:

Յուրատեսակ նախերգանք հիշեցնող այդ հատվածներում ներկայանում է բանաստեղծը՝ անանուն ճամփաների և հուրհրատող երազների սպասումներով: Ճամփաները, երազները ու սպասումները առնչվում են

զուրշ առօրյայից վերացած այն նոպիներին, առեմ, ինչպես ինքը, նա-
վատում են՝ «որ հեռվից բախան է կանչում...».

... Դուռս բաց է, դուռս բաց է ձեզ համար
Օ՜, հեռավոր բարեկամներ ու քույրեր.
Սիրտս վառել է կրակները անմար՝
Հին երազներն ու կարոտները հրեն.
Սիրտս վաղո՜ւց ձեր գալուն էր սպասում,
Հավատում էր կարոտակեզ, որ կգաք,
Ու կլինի հանդիպումի երազում
Քաղցր ժպիտ ու խնդությունն ու կրակ։
Ա՜խ, ես գիտեմ, որ դուք կգաք խնդալին,
Լո՜ւյս կվառեք մառախուղում ու մառում...

Հեռվից կանչող բախտը՝ հեռավոր քարեկամների ու հայրերի զա-
լուստն է գետեզերքի իր տնակը, և հենց սպասումի առանցքով էլ զար-
գանում է «Կապուտաչյա Հայրենիքը»՝ Կապուտաչյա Սիրունուց ձգվելով
մինչև «որը, արնահամ ու ավերակ» երկիր մեկնած հնձվորներ. մինչև
Կապուտաչյա Սիրունու հետ նույնացող Կապուտաչյա Հայրենիքի բախ-
տի սպասումը: Տարբերակվող սպասումները առաջակիտորեն խմբավա-
վորվում են բնության երևույթները մարդեղացնելու մեծարենցյան-սեր-
յանական մեկնակետով: Երևույթները երաշխավորվում, ձայնագրվում-
հնչնագրվում են՝ ծառայելով մարդկային հերաշխարհի գրսևորմանը,
ըստ որում, ինչպես և «Հրո երկիր» շարքում, նշված մեկնակետին ուղեկ-
ցում է հեթանոսական մի երանգ, վկայելով պատանի հեղինակի ծանո-
թությունը արևմտահայ բանաստեղծության ժամանակի միտումներին:

«Կապուտաչյա Հայրենիքը» բնական սրտառուչ զույգ է Կապու-
տաչյա Սիրունու, հայրենի հարազատ մարդկանց ու մասունների, հայ-
րենիքի հետ՝ հավասարապես ներծծված մարդասիրությամբ ու հայրե-
նասիրությամբ: Այստեղ Չարենցը արդեն պատերազմի մեջ քաշված
հայրենիքի անձնվեր ուխտավոր է՝

Մտնում եմ ահա վանքիդ մեջ։— Հոգիս
Զոհելու այն մեծ հրաշքի համար,—

գրում է նա, և նրա խոսքը ամենուրեք երանգավորված է ազգերի շեշ-
տերով:

Նման շեշտեր ունեն և «Տեսիլաժամեր» շարքի հայրենիքի «վիրա-
խոստումներին» հասցեագրված երգերը, նույնքան տեսիլային, որքան
շարքի սիրային բանաստեղծությունները: «Տեսիլաժամերը» բանաստեղծի
առաջին սիրո՝ Աստղիկ Զոհրաբյանի, լուսե տեսիլներից և սեփական

«խեղդող» կարոտներից ճյուսված մոնացումի ու հրաժեշտի երգաշար
է, որպիսիք նա ամեն անգամ ճյուսում էր՝ զարգարելով ու սրբագործե-
լով իրեն հանդիպած ու կորցրած սերերը:

«Երեք երգի...» պոռոկումնալից ծառացումից արդեն հանդարտված
Չարենցը «Մեռելոցի» մոտիվներով հրաժեշտ է տալիս իր սիրուն՝

Մի լուսե աղջիկ, գուտ մի մեռել
Օրերի միջում երևում է ինձ։
Թարթում են միջում կրակները դեռ,
Ու կարոտը հին խեղդում է նորից։

Մոնոմոլի այս ապրումներով էլ կամավորական զորագունդ ընդ-
ելու նպատակով նա մեկնում է Քանաքեռ:

Գ. Ենանյանի հայտնաբերած տվյալներով 18-ամյա Չարենցը
1915 թ. օգոստոսին Քանաքեռում ձևավորվող կամավորական 6-րդ բա-
նակի 2-րդ վաշտի № 3 «նասիլյայի» երեք հոգիանոց սանիտարական
անձնակազմի ղեկավարն էր: Այդտեղից էլ, բայց իբրև 6-րդ գումար-
տակի 864 զինվորներից 373-րդը, մեկնում է ռազմաճակատ և սեպ-
տեմբերի 30-ին արդեն մարտական դիրքերում էր:

1915 թ. ամառվա անհաջողությունից հետո, ռուսական զորքերն
անցել էին հարձակման, նորից կռիվներ էին մղվում հանանջած վայրե-
րում, ինչպես և Սուդուքի դաշտով անցնող այն նահապարհների ու բար-
ձունքների վրա, որ նկարագրված է «Դանթեական առասպելում»:

Այդ օրերից Չարենցի կյանքում և ստեղծագործության մեջ սկսում
է նոր շրջան. բազմերազ անհաղ պատանեկությանը փոխարինելու են
գալիս պատերազմական դաժան իրողությունն ու օրենքները: Պա-
տերազմական բռնությունում 19-ամյա բանաստեղծը բառացիորեն
իմաստնանում է օր օրին, հանգելով ընդհանրական նման խոհերի.

Ինչո՞ւ է երազն այս ամբարհավար
Կախվել մեր գլխին այսպես կուրորեն։
Ինչո՞ւ են փռում այսքան ցավ, ավեր,
Հողմերը այս չար ե՞րբ պիտի լռեն։
Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր—
Կյանքը դարձնում նզովյա՛լ գեհեն։

Պոեմի երկրորդ գլխից գլուխ առ գլուխ ասարբերակվելով պատկեր-
վում են պատերազմի իրական և դրանց ուղեկցող պատերազմող զին-
վորների վերապրած սարսափները. ճամբի մոտ ընկած մի դիակ, մի

քանի դիակ, ոսկրացած մի ձեռք, մերկ սուսերներ, ցիրուցան ատամներ, որոնց միահյուսվում է սարսափի այս հոգեբանությունը.

Սարսափած սրտով մենք անցանք առաջ,
Եվ մեր հայացքից արյուն էր կաթում,
Լուսնոտի նման բութ ու շվարած՝
Այլևս ոչինչ չէինք նկատում,
Մի անհուն կսկիծ ուսերիս առած՝
Լուռ քայլում էինք արնաբույր տոթում,

Հաջորդ գլխում պատերազմական ողբերգական մահառումի տարբերակը ներկայացվում է զինվորների ծանր վերելքով՝ սառցապատ լեռան ծերպերով մինչև գագաթը: Պոեմն առավել հնկվածության հասցնելու միտումով 1932 թ. լույս տեսած երկերի վրա Չարենցը կատարել է հեռաբիր շտկումներ, հիշատակելով նաև լեռան անունը՝ Թափարիզ, որով կարելի է ավելի նշանությամբ վերականգնել մինչև Մեռած Քաղաք՝ Վան, անցած նրա ճանապարհը:

Լեռան գագաթին իր և իր նմանների ընդհանուր զգացողությունը ապրելու հրճվանքն էր, որը, սակայն, կրկին ալեկոծվում է անի ու մանի դաժան տեսարաններով:

Ծավալվող դրվագներով զինվորների անցած ուղին գծագրվում է որպես խորապես դրամատիկ երկակի մահառում. մահառում ամեն վայրկյան սպառնացող դարանակալ մահվան դեմ, բայց և մահառում՝ ի պաշտպանություն մարդու հոգևոր ու բարոյական գեղանհարվող նկարագրի: Այդ երկակի նպատակին են ծառայում և մեջբերվող պայծառ ծեգերի, ոսկի հասկերի, դյութիչ հեռուների, ձյունապատ գագաթների, ծովի գիշերային ծփանքների դողանշները՝ ամենատարբեր դարձումներով նորից ուղղված արնաբույր պատերազմի նյութական, ֆիզիկական ու հոգևոր ավերումների դեմ.

Եվ ճամփա ընկանք որպես մեռելներ,
Թաղելով այնտեղ և մեր խիղճն ունայն...

Եվ մեր թափորի ընթացքն համրաքայլ
Ցար, մահաշշուկ բարձրանում էր վեր,
Եվ մեր համր հոգին ծանր էր, որպես քար,
Եվ չէինք կարող այլևս ցավել...

Եվ ապա՝

... Մեռելների պես սփրթնած էինք,
Չէինք հավատում, որ ապրում ենք, կանք.
Անխոս հայացքով իրար թաղեցինք,
Իրար հոգու մեջ գերեզման մտանք...

Ամեհի ցավով ներթափանցված այս և նման զուգադրությունները երկսայրի նպատակասլացությամբ պարուրում են և՛ պատերազմի զոհերին, և՛ պատերազմող կենդանի մարդկանց, որոնց հոգու նեղվածքները ցուցադրելով բանաստեղծը անհուն տագնապներով ծառանում է պատերազմ կոչվող խելահեղության դեմ:

Գրականության պատմաբանները «Միածանն» ու լիրիկական բալլադները մեկնաբանելիս, դիմելով այլևայլ գաղափարաբանությունների, երբեմն մոռացությամբ շրջանցում են Չարենցի կյանքի բուն հանգամանքները:

«Միածանը», ինչպես և բնական բալլադները՝ «Դանթեականը» շրջավարող խոհերի, «Հսկա երազի» մարմնավորում-իրացում են: Եվ միայն պատկերացնել պետք է, թե դժոխային սարսափներ նաշական երիտասարդ բանաստեղծը որքան կորով պետք է ունենար, որպեսզի այդօրինակ դաժան բեռով կարողանար ապրել «Միածանի» կամ «Հարազատի համփոդների» բազմերազ, բազմակերպ մակընթացությունները: Պատերազմական բարբարոսությանը ընդդիմադիր մարդկային հոգիների մտերմության ու վեհացումի, սիրո ու հարազատության կարոտների արձարձումներ են դրանք՝ հյուսված նիշտ և նիշտ «Դանթեականի» հետևյալ մարտահրավերի ոգով.

Եվ միթե մարդիկ այստեղ չե՞ն նայել
Երբեք հեռուներն այս լա՜վ աշխարհի,
Ուր սրեր բյո՜ւր հրաշք է վառել,
Որ մարդու հոգին խանդավառ, բարի՝
Գգվի մի անմար հիացքով ջահել—
Ամեն մի խոտի, ամեն մի քարի:

Պոեմի ամենավերջին վեցյակում արդեն «Հսկա երազի» կողքին խոսվում է մարած «աստղերը վառելու» խորհրդից: Խոռված արյունոտ հողից՝ նա դիմում է անհուն աստղերին, հարազատի հեռուներին, հնամենի խորհրդավոր դղյակներին, արևի ոսկուն, ծեգերի կապույտին, մանիշակագույն մշուշներին՝ ծիածանելու մարդկային հոգիների հարազատության ու սիրո, ասես մագնիսական, մղումները: Եվ ամենից ավելի դիմում է լույսին՝ սեփական հոգու լույսերի խառնուրդով պարուրելու մարդկանց՝ հրոջ, բարեկամի, մերձավորի, հեռավորի հոգու բազմերեզ երկիրը, որքանով՝

Երազներ կան, որ կարոտներ են միայն,
Լույս կարոտներ, որ կանչում են կապույտում...

«Եթե «Երեք երգն» ու «Կապուտաչյա Հայրենիքը»՝ գրական ընդհանուր ակնարկներում, «Դանթեականը»՝ առանձին գրախոսությամբ արժանացել էին ճնճաղատության վերաբերմունքին, ապա 1917-ին Մոսկվայում լույս տեսած «Սիրամարգը» գրավում է բանաստեղծական երիտասարդության ուշադրությունը: Այն բերում էր բանաստեղծական խորհրդապաշտական արվեստի նոր միջոցներ ու շերտեր՝ գունային խորհրդանիշներ, գունազգացողություն, գունա-հնչունային գծեր ու ռիթմեր, սեռական-տաղաշափական նորույթներ, որպիսիք շուտով ընդօրինակված եմ տեսնում ուրիշների երիտասարդական փորձերում:

Դժվար է ասել, թե որոշակիորեն երբ, Կովկասյան ճակատից վերադառնալով, Թիֆլիսում, ապա Մոսկվայում կարգի կիսատ թողած ռեալական դպրոցի գիտելիքների հիմքի վրա ինքնազարգացմամբ Չարենցը հասնում է հոգևոր-իմացական անհերևակայելի կուտակումների: Կյանքի կոչին նրա համար անփոխարինելի դպրոց էր գրքերի աշխարհը, և Մոսկվա հասած հասունացող Չարենցն արդեն զարմացնում է ոչ միայն հայ, ռուս և եվրոպական գրականության, հատկապես պոեզիայի, այլև փիլիսոփայության, պատմության, կրոնների, արվեստների պատմության հետաքրքրություններով: Բավական է ասել, որ այդ հասակում ինքնուրույն զգաստությամբ կարդում էր Պլատոն, տարբեր հետազոտություններով լայնորեն տեղյակ էր ոչ միայն խորհրդապաշտության, այլև հնամենի բուդդայականության:

Այդ ամենի հետ միասին նա ուներ նաև հասարակական-քաղաքական որոշակի կողմնորոշումներ՝ ձևավորված նախ հայրենի բերդաքաղաքի մթնոլորտում, որը 90-ական թվականներից հասարակական խմորումների յուրատեսակ օջախ էր, և ապա հասարգան ժողովրդին վիճակված դաժան փորձությունների բովում:

Ինչպես մարդկային մյուս բոլոր կողմնորոշումներն ու ճանաչողություններ՝ հասարակական կողմնորոշումները ևս սերմանվում են մանկության և պատանեկության տարիներից, կաթիլ առ կաթիլ, և, անշուշտ, այդ իմաստով էլ պետք է հասկանալ Պ. Սևակի տողերը, ըստ որի՝ «... Չարենցը հեղափոխական *չդարձավ*, ինչպես շատ-շատերը, այլ պարզապես *արթնացավ* իբրև հեղափոխական, ուստի և հեղափոխությունը նրա համար ոչ թե կեցվածք էր, ինչպես շատ-շատերի համար, այլ պարզապես *կեցություն*»:

Պարզապես արթնանալով իբրև հեղափոխական՝ նա հենց Մոսկվայում արձագանքում է փետրվարյան հեղափոխությանը, ընդունելով այն որպես «փառքի օր», ապա կարճ ժամանակից մտերմամուտ «Հսկա երազանքի» աշխարհից թեակոխելով հեղափոխական «կեցության» պորտալը՝ հարազատ ժողովրդի բախտի տարամաբանությամբ, անմնացորդ ապավինելով, փարվում-ողջագուրվում է Հոկտեմբերյան հեղափոխությանը: Չարենցի հասունացումը, նրա ստեղծագործական ուղու և անձնական ճակատագրի բոլոր հանգույցները անքաժան են հարազատ ժողովրդի ճակատագրից:

Հեղափոխությունից հետո նոր ուժով բորբոքված ծառացող ոգով նա նորից ու նորից է անդրադառնում պատերազմի խառնարանում հոշոտվող հայ ժողովրդի բախտին: Ստակեղեմ են նրա ինչերն ու անափ մորմոքները «Վանաձորում».

Հրդեհի ասպված, հրդեհ ու կրակ,
Ծ, Վանաձոր սիրտ— Տեսնում եմ ահա,
Որ ծիծաղում ու քրքջում են նրանք
Արնաթաթավ ընկած դիակիդ վրա...

Առաջին տողից վերջինը կապարե այսօրինակ ծանր տխրությամբ է ներծծված «Հատվածը».

... Եվ ո՞վ է
Տվել քեզ
Այս խեղճ հոգնությունը,
Այս խեղճ հոգնությունը,
Հիմա—
Երբ քո հոգնությունը
Քարի հոգնություն է—
Քարի՞ հոգնություն է
Ու մահ...

Ողբերգական ու երգիծական երակներից հյուսված «Եզգային երազ» պոեմում արդեն նույնանման մարմոքներին ուղեկցում է դատափետումը: Երգիծանքի այրող սաղմերն ուղղված են բոլոր նրանց դեմ, ովքեր ժողովրդի փրկության հույսերը կապում են ուրիշների հետ, մինչդեռ բանաստեղծի կարծիքով նման հույսերն անտեղի են:

Դրանց կողքին «Արիլլայում» առնական հզոր բախով դատափետվում է պատերազմը՝ ահեղ հրահրողներով ու բարբոքողներով: Պոեմում աշխարհում հուր ու ավեր տարածող Աթիլլայի սուրը ի վերջո շրջվում ենդոում է Արիլլայի կուրծքը: Նման դրամատիկ լուծումով պատերազմն ահա և գալիք հրձիգներին բանաստեղծը վերադարձնում է իսկ և իսկ այն անեծքն ու պատիժը, ինչ նրանք բերել ու բերում են աշխարհին: Այստեղից պոեմի մտահղացման, ինչպես և Վ. Եվանովից բաղված «Դո-

խոտի՛ր դրանց դրախտը, Արիլլա» բնաբանի երկիմաստ ուղղվածությունը, և դա նշանակում է, թե՝ մեր հայրենի դրախտը կոխոտեցիր, այժմ էլ կոխոտիր նրանց՝ պատերազմի հեղինակների հայրենիքը, Արիլլա՛, որը պոեմում իր հնօրյա բարբարոս կերպարանքով խորհրդանշում է պատերազմը:

Մառացող, մերկացնող ու դատապետող նման դիրքորոշումով Չարենցը քայլ առ քայլ մերձենում է հեղափոխական «կեցությանը», որին նվիրված «Սոմա» և «Ամբոխները խելագարված» պոեմներին անմիջականորեն նախորդում են հայ ժողովրդի պատմության ողբերգական իրողություններ: 1918 թ. գարնանամուտից կրկին անցնելով հարձակման, թուրքական զորքերը գրավում են Կարսը, Ալեքսանդրապոլը, շարժվում Ղարաբիլիսայի ու Երևանի ուղղությամբ: Հարցականի տակ էր Արևելյան Հայաստանի գոյությունը ևս, որը փրկվում է Ղարաբիլիսայի ու Սարդարապատի անհեղ դիմադարձությամբ:

Էրզրումից նահանջող հայ զինվորների շարքերում անասելի դառնություններ հաշված Չարենցը 1918 թ. ամռանը հայտնվում է Հյուսիսային Կովկասում: Ապա վերադառնալով Թիֆլիս, նույն թվականի ուշ աշնանը հրատարակում է «Սոման», կարճ ժամանակից՝ «Ամբոխները խելագարված» պոեմը:

«Չարենց-նամեում» նոլովվող տվյալներից ելնելով, կարելի է ասել, որ այս երկու գործում, անշուշտ, տարբեր մտահղացումով և կերպարանավորումով, մարմին է առել 1918 թ. Հյուսիսային Կովկասում ապրած բանաստեղծի հոգու «սանձարձակ բոիշքը»: Քաղաքացիական կռիվներին դեմ հանդիման այդտեղ է բմբոշխնել «աստվածային սուրբ խմիշքը» և «մահի անուրջներից» մարգարդվելով, փարվել-միաձուլվել աշխարհը մարգարդող հեղափոխությանը:

«Սոման» այդ ողջագուրանքի օրհներգություն-հիմներգություն է՝ հյուսված ռոմանտիկական-հուզական ներքին առիթքնող բոնկումով: Օրհներգվում է հեղափոխության մարգարդող տարերքը՝ պատկերված աշխարհային հրդեհների և քար ու շար աշխարհի հակադրությամբ, օրհներգվում են աստվածային խմիշքից ծփացող, երկնային հրեղեն Քրոջ հետ քար աշխարհի կրծքի վրա աշխարհասասան շուրջպարի ելած ազատասեր հոգիները: Այս բոլոր հանգույցներով ու բեկբեկումներով «Սոման» բանաստեղծի սրբազան երդումն է հեղափոխությանը.

...Թվում է հիմա կյանքը իմ հոգուն
Մի ոսկի տեսիլ.

Ինչ լա՜վ է, Սո՜մա, որ կյանքի հոգուն
Հիմա՛ եմ հասել.
Ինչ լա՜վ է, Սոմա՛, որ քո կրակում
Վառվում եմ ես էլ...

Իսկ ամենավերջում՝

Կյանքս կմարի՝ հին, ընչին մի կայծ
Քո ոսկի հրում—
Բայց վառվի՜ պիտի սիրտս մոխրացած
Քո բոլոր գալիք արշալույսներում...

Հաջորդ պոեմում արդեն պատկերվում է այդ հոգիների, խելագարված ամբոխների գոտեմարտը այլաբանորեն հին աշխարհը խորհրդանշող քաղաքն ու կայարանը գրավելու համար: Գրականագիտության մեջ տարակուսանքներ են եղել, թե այդ ինչ կայանի հետ կապված մրտապատկերներ են տեղ գտել «Ամբոխները խելագարված» պոեմում: Անշուշտ, «Չարենց-նամեում» հիշատակված Տիխորեցկ կայարանում Դենիկինի զորախմբերի դեմ հեղափոխական ուժերի մղած կռիվների մտապատկերներ, որոնց հենքով Չարենցը հյուսել է մեծաշունչ դյուցազներգություն, որի հերոսը հարստահարված ու ոտնահարված հոգիներն են՝ խմբված անծայր Ռուսաստանի բոլոր ծայրերից:

Եթե դյուցազներգական խառնապատկերային երակով պոեմն ասրնչվում է Սիամանթոյի «Դյուցազնորեներին», ապա վերջին գլուխների այլաբանական արևագնացությամբ՝ Խաչատրյանի ավանդներին: Բայց և ակներև է գեղարվեստական նորամուծությունը. մեկի փոխարեն դեպի խորհրդանիշ Արևն են սուրում հոծ ամբոխներ, որոնց մահառող արևագնացությունը նույնանում է ժողովուրդների հեղափոխական ազատասիրական երթին ու առաջշարժմանը.

Աչքերն հառած հեռո՜ւ-հեռո՜ւն կարմիր վառվող արեգակին՝
Արևավառ հեռուներում նրանք կռվում էին կրկին.
Հոծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառված՝
Դեպի Արևն էին գնում ամբոխները խելագարված...

«Սոմայով» ու «Ամբոխներով», ինչպես և իր հետագա ողջ ստեղծագործությամբ ու կյանքով Հոկտեմբերյան հեղափոխությանը փարած Չարենցը ժողովուրդների գալիք հեղափոխական ազատամարտերի, մարդկության ազատասիրական բոլոր արշալույսների հետ է:

1918-ի վերջին և 1919-ի սկզբներին է վերաբերում նաև «Ողջակիզվող կրակ» բանաստեղծական շարքի հղացումը: «Իրիկուն», «Վերա-

դարձ», «Առավոտ» ենթաշարքերով այն խորհրդանշում է հեղափոխական շրջադարձով՝ «Առավոտով», նշանավորվող բանաստեղծի հոգեոր ուղին: Եվ սակայն, ինչպես ասված է «Զարենց-նամեում», հոգու ազատվելը «հին կապանքից» ուղեկցվում է «վիթխարի ցավով»: Տերյանական իրիկնային երանգների, մոտիվների ու կարոտների մոտիվներով հյուսված «Երիկունի» և «Վերադարձի» երգերից հետո՝ «Առավոտը» ամբողջացնելու համար պահանջվում է զգալի ժամանակամիջոց: Հարազատ ժողովրդի նակատագրի շարունակվող դաժան հոլովումներում պարզապես անհնար էր հյուսել «Առավոտի» երգեր, մանավանդ որ 1919 թ. ամռանից անելանելի արտադրությունների ու ծանր խոհերով Զարենցն արդեն Հայաստանի հողի վրա էր՝ Կարսում, Թաշքյանդիկարում, Երևանում: Ամենուրեք մահ, համահարակներ ու սով, ամենուրեք անօթեան որբեր, գաղթականություն, ամենուրեք ժողովրդին այդ վիճակից հանելու անհարկություն, և «Առավոտի» երգերը կրկին դառնում են նույն այս մորմոքներին.

Ինչպես երկիրս անափոփ, ինչպես երկիրս բախտազուրկ,
Ինչպես երկիրս ավերակ ու արնաներկ—
Մխում է սիրտս հիմա որթ, մխում է սիրտս բախտազուրկ,
Մխում է սիրտս՝ ավերակ ու արնաներկ...

Մխում է, մխալով հեռահար նշանակետ ունենալով այս երազանքը.

Վառի՛ր երկիրս քո դեմ — մի կարմիր կանթեղ,
Նեսի՛ր ժպիտդ վերջին իմ ավե՛ր երկրին.
Տուր վերքերին նրա մատ, վերքերին անգեղ,
Կարմիր ժպիտը քո սուրբ, քո՛ւյր իմ, Ծոմա՛, կի՛ն:

Եվ իրոք, երիտասարդ Զարենցի ստեղծագործական հաջորդ թռիչքը գծագրվում է այն պահից, երբ հեղափոխության «կարմիր ժպիտը» ողողում է նրա ավեր հայրենիքը, կապվում է 1920 թ. Մայիսյան ապրամբության հետ: Իսկ ինչ այդ ո՛չ բանաստեղծական երջանկահիշատակ հանճարման ուրախությունը, ո՛չ երազելով-երազված փոխադարձությունը՝ անդրադարձված «էմալե պրոֆիլը Զեր», «Տաղարան» շարքերում և այլ երգերում, էապես ոչինչ չեն փոխում նրա մորմոքներում: Եվ, ահա, Երևանի մայիսմեկյան ցույցի մասնակից Զարենցը՝ մայիս-հունիսյան իրադարձությունների օրերին ամբողջացնելով, «Բոլորին, բոլորին, բոլորին (երեք ռադիոպոեմ)» խորագրով հրապարակում է «Նաիրի երկրից», «Դեպի ապագան» և «Բռնգե թեերը կարմիր գայլիի» պոեմները: Հայոց բանաստեղծության պատմության մեջ անախադեպ հրովարտակային խոսքի շիկացումով միմյանց հետ սերտորեն կապված այդ պոեմներում հառնում է նաիրյան երկիրը, ծնվում հեղափոխությանը, հեղափոխության բռնգեթեերով ձգվում դեպի մարդկության գալիք լուսավոր հեռուները: Անհանգիստ է այս պոեմներում Նաիրի երկիրը, անհանգիստ է Նաիրյան երկրի խնդասիրտ երգը բոլոր կողմերի ասառապող մարդկանց ավետող բանաստեղծի ոգեշունչ, հպարտ ու արի կեցվածքը.

Ո՞վ գիտե արդյոք՝
Թերե՞լ է մեկը այսօր աշխարհում
Խառնելու հզոր, բարձր ձեր սրտին
Մի սիրտ— ավելի՞ քաջուստ ու աքի,
Քան իմ սիրտը թեմ— սիրտը Նաիրի,
Եվ ո՞վ, ո՞վ կասի՝
Նետե՞լ է արդյոք մեկը աշխարհում
Այսօրվա կաքմի՞ր, կարմիր ձեր երթին
Ողջույն— ավելի՞ առնական, արի,
Քան ողջույնը քո, երկիր արնաքամ,
Կարմի՞ր Նաիրի...

Իզուր չէր հնագայում բանաստեղծը հավատում, թե առաջին անգամ իր սրտում են վառ խառացել ու մարմին առել Նաիրի երկրի գալիքները:

Ռադիոպոեմները լույս են տեսնում Մայիսյան ապստամբության տեղավորության օրերին, հեղինակին թերելով հալածանքի ու զրպարտությունների: Հայրենիքին անհունորեն նվիրված Զարենցը մնողդրվում է ոչ հայրենասեր, «կույր ատրերի» գովերգու հորջորջումներով: Մնալով առանց աշխատանքի ու անօթեան, գրական մարդկանց ջանքերով նա աշխատանք է ստանում արքանոցում, մասուզերիանների հաշվենատարքից մազապուրծ՝ հիվանդ վիճակում փոխադրվում Քանաքեռ:

Եվ սակայն առավել դաժան փորձություններն սպասում էին, քանի որ դաշնակցական կառավարության անհնոստես քաղաքականությամբ արդեն իսկ 1920-ի սեպտեմբերին թուրքական զորախմբերը ամբողջ ճակատով ահցանի մեջ էին առել մնացած մի կտոր Հայաստանը: Այդ ամիսներին ապրած ու վերապրած Զարենցի գեղարվեստական տառապանքների ծնունդ են հանրահայտ «Ես իմ անուշ Հայաստանի...» և «Մանվան տեսիլ» բանաստեղծությունները, դառնադի այն արձարձումները, որ զոնում են «Փողոցային պշրությունն» յոթ բալլադների շարքում: Ազգային կյանքում փրթած նամարեալ մեծագարությունը, անհոգությունը, եսապաշտությունը, կարճատեսությունը և այլ արատներ դատապարտող այս շարքի տրամաբանությունները՝ լայն կտրվածքներով այնուհետև

մարմնավորում են գտնում սովետական տարիների նրա ստեղծագործության մեջ՝ «Ամենապոեմում», «Երկիր Նաիրի» պոեմանման վեպում, «Կապկազ բամաշայում, «Խմբապետ Շավարշը» և այլ գործերում:

Հայաստանում սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից կոմունիստ Չարենցը նշանակվում է Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի արվեստի բաժնի վարիչ: Այդ ժամանակից էլ ծայր է առնում Սովետական Հայաստանի լուսավորության և մշակույթի մեծ կազմակերպչի ու շինարարի նրա անգնահատելի գործունեությունը՝ դպրոց, թատրոն, կերպարվեստ, երաժշտություն, հարտարապետություն, հայագիտություն, թանգարանային, գրադարանային, հրատարակչական գործ... բազմապիսի ոլորտներով:

Փետրվարյան խռովությունների օրերին նրան տեսնում ենք Ղազարյուի նակատում՝ հուշագրերի վկայած հայրենիքի զինվորի ու բանաստեղծի անձնվեր նկարագրով, ապա կրկին արվեստի բաժնի վարիչի պաշտոնում: Նյութական-տնտեսական ծանր կացության մեջ էր ժողովուրդը, հավասարապես մտավորականությունը, և բառացիորեն սրտանմլիկ են Չարենցի ստորագրությամբ արխիվային ֆոնդերում պահպանված հաշառանային-մթերային չեքերը՝ տրված ականավոր ու շարքային մտավորականների: Դրանց մեջ պահպանվել է նաև Չարենցի ազգանունով մի չեք, որով նա ստացել է նավթ՝ գիշերները աշխատելու համար:

Հայ ժողովրդի լուսավոր զավակ, հավատարիմ լենինյան Ալեքսանդր Մյասնիկյանի Հայաստան գալու օրերից (1921 թ. մայիսի 20) արվեստի գործերի բաժնի վարիչ Չարենցի գործունեությունը նշանավորվում է նոր կողմերով: Հայ մտավորականությանը Հայաստանում համախմբելու, երեվանը հոգևոր կենտրոն դարձնելու մտահոգության հետ միասին Մյասնիկյանը իրականացնում է կուլտուր-լուսավորական, մշակութային պետական չափազանց կարևոր մի այլ նախաձեռնություն: 1921-ին և հաջորդ տարիներին Սովետական Ռուսաստանի, Անդրկովկասի, ինչպես և արտասահմանյան ուսումնական հաստատություններում ամենատարբեր մասնագիտություններով սովորելու են գործուղվում հարյուրավոր երիտասարդներ, որոնց ուսերին է ընկնում հետագա տասնամյակների Հայաստանի գիտության ու մշակույթի ամենատարբեր ճյուղերի զարգացման ծանրությունը:

Արվեստների գծով ընտրությունը, անշուշտ, կատարում է արվեստի հանձնախումբը, անկասկած ուղեցույց ունենալով Չարենցի կողմնորոշումներն ու զգացողությունը, ծանոթությունը Թիֆլիսում գտնվող կամ

արդեն Երևան փոխադրված երիտասարդ մտավորականության լայն շրջաններում:

Անպայման Մյասնիկյանի Երևան հասնելու առաջին օրերին էլ, ամենայն հավանականությամբ, մայիսի 27-ին Վ. Տերյանի անվան հասարակական գրադարան-ընթերցարանի բացման հանդեսին Չարենցը ծանոթացել է Մյասնիկյանի հետ՝ այնուհետև ամբողջ կյանքում հոգում կրելով պետական գործչի նրա սրբազան կերպարը.

Նաիրյան արևն էր քո մեջ՝ լենինյան հրով ճառագած.
Կործանվող մեր երկրի համար դու եղար փրկության առագաստ,—
Դու տվիր ընթացք և ուղի մեզ մինչև դարերն հեռակա.—
Նաիրյան արևն էր քո մեջ՝ լենինյան հրով ճառագած,

Կործանումից փրկվող երկրից 1921 թ. հունիսին սովորելու մեկնող երիտասարդների մեջ էր Չարենցը՝ դեռատի կնոջ՝ Արփենիկի հետ, որ գործուղվում էր Մոսկվա ստանալու բարձրագույն մանկավարժական կրթություն:

Նյութական զրկանքներով Մոսկվայում բանաստեղծի անցկացրած տարիները նշանավորվում են նախ ստեղծագործական տեսակետից. միայն 1921 թ. աշնանը ամբողջականացնում է «Խաղաղության ռադիոն» և «Ամենապոեմը», սկսում և ավարտում է «Երկիր Նաիրի» վեպի առաջին մասը, 1922-ի սկզբին գրում է «Չարենց-նամեն», այնուհետև «Ռոմանս անսերը», «Երկիր Նաիրիի» երկրորդ մասը, ապա «Պոեզոգոտնայի», հետագայում «Կոմալմանախի» զգալի մասը և այլ գործեր: Եվ որ նույնքան կարևոր է՝ վերջնական տեսքի բերելով, հրատարակության է պատրաստում երկերի ժողովածուն, որ երկու հատորով լույս է տեսնում 1922 թ. Մոսկվայում:

Մոսկվայում անցկացրած տարիները միաժամանակ նշանավորվում են փիլիսոփայական, հասարակական-քաղաքական գիտելիքների, հոգևոր-մշակութային իմացությունների հիմնավոր նոր կուտակումներով: Պոեզիայի, արվեստի մյուս ճյուղերի զարգացման ուղիների հարցեր շոշափող բանավեճեր, Ա. Լունաչարսկու, Վ. Բրյուսովի, Վ. Մայակովսկու և շատ ուրիշների դասախոսություններ ու ելույթներ, մոսկովյան ներկայացումներ, գրական հոսանքների ու խմբակցությունների պայքար՝ ռուսական մշակութային կյանքի նմանօրինակ լայն խմորումների կողքին Չարենցը հայ մշակութային կյանքի ամենօրյա մասնակից էր այն օջախում, որ կոչվում էր Խորհրդային Հայաստանի կուլտուրայի տուն: Ամենօրյա պարապմունքներով, վեճերով, զրույցներով, երեկույթներով, հավա-

ֆույթներով, հանդեսներով այդ օջախում համախմբված էր հայ հարուստ-
ռապետության, կերպարվեստի, բատրոնի, երաժշտության, գրականու-
թյան երիտասարդ սերունդը, և արվեստների բնատուր զգացողությամբ
նրանց միջավայրում Չարենցը հնարավորություն ուներ խորացնելու իր
արվեստագիտական իմացությունները: Այս ամենի հետ միասին Լազար-
յան եմարանի հարուստ գրադարանը և այն գրքերը, որ ձեռք է բերում
նա՝ առանց շափազանցության ծախսելով երկերի ժողովածուի հրատա-
րակությունից ստացած հոնորարի շատ զգալի մասը:

1922 թ. Մոսկվայից Երևան հանապարհին, գիհակից դարձնելով Ա.
Վշտունուն, Չարենցն ու Գ. Աբովը գրում, ապա հունիսի 14-ին «Խոր-
հրդային Հայաստան» օրաթերթում հրապարակում են հայտնի «Երեքի
դեկլարացիան»:

Այն Աբովի և Չարենցի 1919-ի սկզբներից հանգավորվող բանաստեղ-
ծական նախասիրությունների արդյունք էր, և, ինչպես պետք էր սպասել,
Երևանյան միջավայրում բնդունվում է բանավեճային շեշտված ընդդի-
մությամբ: Չարենցը ներհաշվում է գրական պայքարի մեջ, ամեն պա-
րագայում ճշմարիտ լինելով *կենսահաստատ հրապարակային* լայն զանգ-
վածների համար կոչված բանաստեղծության պաշտպանությամբ, որը
հրամայական պահանջ էր մահի ու հուսախաբության ճիրաններից ետ
դարձող ժողովրդի վերածնվող կյանքի թելադրանքով, որի համար և
«նորահայտ բանաստեղծը» արժանացել էր հանաչման:

Որքան էլ եզրեր ունենա պրոլետկուլտական, իմաժինիստական և այլ
մտայնությունների հետ, «Դեկլարացիան» իր ոգով, իհարկե, առավելա-
պես հարազատ է ֆուտուրիզմին: Մանավանդ հայտնի է, որ Չարենցը մի
անգամ չէ, որ հանդես է եկել ֆուտուրիզմի պաշտպանությամբ, հայտնի
է և նրա խոստովանությունը. «Եթե հարկ կա ասելու— ես կարող եմ
հայտարարել, որ շատ բան եմ սովորել Մայակովսկուց, որին պարծանք-
ով կարող եմ համարել իմ ուսուցիչը»:

Եվ իրոք. հեղափոխական ժամանակների բանաստեղծական հզոր
խոսքը, դինամիկան, հրապարակային շունչը, թափը, ռիթմերը, պլակա-
տայնությունը, կենսագրական փաստերի, առօրեականի, «պրոզայիկի»
բանաստեղծականացումը՝ Վլ. Մայակովսկու ստեղծագործությանը իմ-
անանատուկ նման հատկանիշներ գրականագիտությունը լայնորեն մատ-
նացույց է արել «Ամենապոեմում», «Չարենց-համեում», «Պոեզոգուռ-
նայում», «Լոռանս անեբում», «Կապկազում», «Կոմպոմանախում»: Այդ
առանձնահատկություններից շատերը, ինչպես և խորհրդապաշտությու-
նից ժառանգած շատ գծեր ձուլված Չարենցի սիեքետիկ արվեստին հա-

ռատեել են մինչև նրա ստեղծագործության վերջին էջը: Եվ սակայն հո-
գևոր սիրո ֆուտուրիստական մերժումը հացնում է «Ռոմանս անեբրի»
գոնիկությանը, միակողմանիորեն պլակատայնությամբ կամ առօրեակա-
նով տարվելը տեսականում կանգնեցնում է նրան «Սատանդարտի կուրսի»,
ստեղծագործության մեջ՝ «Կոմպոմանախի» սխեմատիզմի առջև:

1930 թ. լույս տեսած «Էպիֆական լուսաբացում» բազմիցս անդրա-
դառնալով իր սայրաֆումներին, Չարենցը, վերին խստությամբ դատա-
պարտելով, այդ ամենը բացառում է սեփական անհոգությամբ: Նախ
հասարակական անհոգությամբ, երբ թվում էր, թե հեղափոխության հետ
անցել են բոլոր դժվարությունները և ուր որ է աշխարհով մեկ հաղթա-
կանելու է համաշխարհային սոցիալիզմը: Սրափնցնող առաջին հարվա-
ծը անփույթ անհոգությանը լինում է Վ. Ի. Լենինի մահը, որը բանաս-
տեղծը ապրում ու վերապրում է առաջնորդի էյնշտակին նվիրած բա-
նաստեղծությունների ու բալլադների անհուն սիրով ու տառապանքով,
անձնանվեր հավատարմությամբ լենինյան գաղափարներին: Կարճ ժա-
մանակից առաստանմանյան ճանապարհորդության միջոցին նրան է
հասնում Ավ. Մյասնիկյանի մահվան բոթը, ապա շատ չանցած վախճան-
վում է նրա պաշտելի կինը՝ Արփենիկ Չարենցը, որին հաջորդում են այլա-
զան իրազարձություններ: «Անհոգ», «տեսեր, «տենկիրֆ», «մարդուց ու
հողից» կարված երգի համար կյանքը կարծես մահասարսուռ վրեժ է
լուծում բանաստեղծից ու նրա մուսայից՝

Չկարողացար ես կրել կյանքում
Գայթակղությունը քո, որպես դրոշ,—
Եվ դեմս իջավ խավարը անդուռ,
Եվ ես հասկացա, որ դո՛ւ ես, այդ դո՛ւ
Ինձ հետապնդում հատուցման սրով...

Եվ մահամերձ է թեշտես հայցում օդ՝
Գլուխը դրած արնահոտ բարձին,—
Այդպես մահամերձ ու հրակարոտ,
Սրբելով հոգիս տանջանքի հրով,
Ես սպասեցի քո վերադարձին...

«Էպիֆական լուսաբացը» Չարենցի մեկնությամբ սեփական մահա-
ռող ոգու, մահառող մուսայի վերադարձն է, որին ողջագուրվում է նա
կյանքի «ամենի հոգսի» հրամայականով, հասուն խանդով ու իմաստու-
թյամբ.

Պայքար է կրկին քո շուրջը հիմա
Եվ զենքեր են պետք ավելի՛ հասուն,
Եվ այս ամենի պայքարի համար

Նոր զենքեր պիտի կռես հիմա դու.
Եվ պետք է լինես ավե՛լի համառ,
Ավելի՛ զգաստ, ավելի՛ արթուն

Դու կերգես հիմա անխոնջ ու անդուլ,
Քրտինքով թրջած երես ու ճակատ,—
Եվ, ինչպես խոփը բարաշատ արտում,
Միտքը կհերկես այսօրվա մարդու,
Նոր զենքեր պիտի կռես հիմա դու.

Երեսնական թվականների նախաշեմի իր այս երդումից «մարտիկ» բանաստեղծը, «քաղաքացի-բանաստեղծը», «մարդ» բանաստեղծը այնուհետև չնահանջեց և ոչ մի քայլ: Նրա զգաստ ու արթուն մուսան համառ ու հաստատուն քայլերով գնում է պայքարի ճանապարհով, մի կողմից դատափետելով կյանքի անհանդուրժելի երևույթները՝ ուռռա թրմից կասերների, «մարքսիզմի շատեր հագած ֆիլիստերների» շնչին դավերից սկսած մինչև ստոր դավադրությունները, մյուս կողմից՝ «ողջույն հրնչեցնելով», ողջագուրվելով լիարժեք մարդուն ու լիարժեք կեցությանը:

«Էպիկական լուսաբացից» սկսած գնալով խորանում է Չարենցի աշխարհատեսությունը, լայնանում է խոհական-փիլիսոփայական ընդհանրացումների կշիռը, կրկնապատկվում է նրա ստեղծագործության ժանրային տարողությունը՝ շափածո նովել, ներբող, խոհ, էլեգիա, էպիգրամ, մանրաքանդակ, էսքիզ, տաղ, խորհուրդ, դիստիխոս, բեյթ...

Էջ առ էջ, գիրք առ գիրք ծավալվում է բանաստեղծի մաքառման երգը՝ հավատարիմ զենք ունենալով լենինյան գաղափարները, գինակից՝ Դանթեի, Գյոթեի, Պուշկինի, Նեկրասովի, Աբովյանի, Նալբանդյանի, Թումանյանի ավանդները: Նրա ստեղծագործությունը բոլոր թելերով հյուսված է ժողովրդի հոգսերից, բոլոր հնչյուններով ու դողանչներով հասցեագրված է իր ժամանակակցին և ամենից ավելի՝ «ապագա կյանքին», գալիք գանգրահեր սերունդներին:

Պատահականորեն չէ Չարենցի վերջին գիրքը վերնագրված «Գիրք ճանապարհի». դա նրա ստեղծագործության հասցեն է՝ ուղղված մարդկության պատմության խոովանուլ ժամանակներում ապրելու կոչված մարդկանց, հարազատ ժողովրդի սերունդներին: Ինչպես «Գիրք ճանապարհի» պոեմների հակադարձ դարձդարձվող, տողամիջի շրջուն կամ ուղղակի շեշտերով ու հարցումներով, այնպես էլ մյուս գործերի, մասնավորապես տաղերի ու խորհուրդների մարդկայնության, մարդկային արժանապատվության ու առաքինության պատգամներով, կյանքի ու գոյության փիլիսոփայական ընդհանրացումներով Չարենցը մարդուն մղում և կոչում է

բարձրագույն կեցության, յուրաքանչյուրից պահանջելով լինել միաժամանակ և՛ մարտիկ, և՛ քաղաքացի, և՛ մարդ.

...Թեև գալիս եք դուք ալիքների նման և աստղերի՝
Ձեր ճանապարհի՛ն, ձեր կոչումի՛ն, ձեր ընթացքի՛ն անկետ—
Բայց լինելու է ձեր երթը այս գծի ու լուրթ ափերին
Արևներից, աստղերի՛ց ավելի ուրույն ու բարձրականթեղ...

Եկվորների՝ արևներից, աստղերից բարձրականթեղ երթը փառաբանող այս տողերի կողքին մտաբերենք խիզախ ճանապարհորդին ձոնած տաղը, մարդկային խիզախումի ոգեշունչ և իմաստուն խորհուրդ՝ անցյալի, ներկայի ու ապագայի շրջագիծ-հեռագծով հասցեագրված մարդկային անվանի ու շարքային բոլոր խիզախ հոգիներին: Այդ տաղի մեկնակետից էլ հարկ է բացել ոչ միայն «Գիրք ճանապարհի» պոեմները՝ «Սասունցի Դավիթը», «Դեպի լյառը Մասիս», «Զրահապատ «Վարդան զորավար», «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության» և մյուս գործերը, այլև Կոմիտասի հիշատակին նվիրված պոեմը, այլև բանաստեղծ Չարենցի հերոսական մաքառամաքուռ դիմապատկերը.

...Ընթացքի՛ր, գնա՛ քո ուղին, և լինի թող այն թարքարուռ,
Անվհատ թո՛ղ լինի ոգիդ և կարոտդ թո՛ղ լինի անհինջ—

Հազար կարավանի բեռներից ավելի
Հարուստ կլինի ոգիդ վերադառնալիս,
Իբրև բարիք՝ կբերես բաղձանք անրավելի,
Կպարգևես նրանց, որ ցանկացան քեզ մահ և
կարուստ դառնագին...

Իսկ եթե ընկնես ճանապարհիդ և չվերադառնաս,—
Օ՜, մեռնելուց առաջ, վերջի՛ն ժամին,
Քո ոունգերից, քո սրտի՛ց, քո հետքե՛րից հառնած՝
Քեզ կողջունեն օրերդ— և՛ անցյալդ, և՛ ներկադ, և՛
գալիքդ՝ միանգամի՛ց...

Այս դիմանկարով է ներկայանում «ձայնի խնկարկու» Կոմիտասը, բանաստեղծի «անեկիր ժողովրդի» մեծ որդին և հայրը, որի ողբերգական ճակատագրին պոեմում տեղ-տեղ ուղեկցում են իր հոր՝ Աբգար աղայի, կյանքի տարաբախտ հանգամանքներ, ինչպես այդտեղ, այնպես էլ վերջին տարիների մյուս աճավարտ և ավարտուն գործերում այդ նկարագրով է ներկայանում բանաստեղծ Չարենցը:

Անհնար է, իրոք, պատկերացնել նրա տկար մարմնում բնավորված «անվրհատ ոգու» ուժը, սեփական մուսայի հետ վեհահոգի դաշնությամբ

եղբայրացած մեծահոգության չափը, դավանած գաղափարներին ու բարոյական սկզբունքներին հղվանանելու կորովը։ Դժվար է հաղորդել «Նավզիկեում» բեկբեկվող սիրո և մարդկայնության անհնչ կարոտների խորությունը, նրա տագնապահար ալեկոծությունները՝ «Անվերնագիր», «Խոհ», «Իմ լուսատոր» և մյուս բանաստեղծություններում, նրա հուզումնավոր անվերջանալի մուրմուները, վերջապես իր բարձրությունից երբեք, ոչ մի պահ չիջնելու միայն մեծերին հատուկ արժանապատիվ հպարտությունը, «մարտիրոսամերձ ցանկություններ» կողքին՝ մարտիրոսանալու սխրանքը։

Իսկապես՝ «Չարենցը ուժի բանաստեղծ էր», «... մի զուտ մոցարտյան կամ պուշկինյան բնավորություն»։ **«Չարենցը շատ էր տարեց երիտասարդ՝ տարեց օրերին»։** «Չարենցն իր **սարդ ժամանակ և շատ էր երիտասարդ՝ տարեց օրերին»։** «Չարենցն իր ժամանակակիցների մեջ առաջինն էր, որ սրտով ու գլխով, երակով ու **արյամբ** հասկանում էր արվեստի խորհուրդների... խորհուրդը։ Նա ապրում էր իր ժամանակակիցների հետ և մեջ, բոլորից ավելի և բոլորից շատ այրվում իր ժամանակի կրակներով ու տագնապներով, ցավերով ու հոգսերով, դողով և էրոցիով։ Բայց միաժամանակ նա նրանց մեջ... միակն էր, որ ապրում էր նաև **ապագայում և սնցյալում»** (Գ. Սևակ)։

Այս ամենով Չարենցը հավիտենապես հարազատ ժողովրդի, սովետական ժողովուրդների և առաջավոր մարդկության հետ է, նրանց լուսավոր ձգտումների ու մղումների հետ։

ԱԼՄՍԱՍ ՉԱՔԱՐՅԱՆ

1913
ԵՐԵՔ ԵՐԳ ՏԽՐԱԴԱԼՈՒԿ ԱՂՋԿԱՆ

Աստղիկ Ղանդախչյանին

Et c'était le dernier
amour du soir antigue...

ALBERT SAMAIN

1. ՃԱՄՓԻՆ...

Օրորվելով կառքն էր վազում սրընթաց
Դաշտի միջին, ճանապարհով ցեխապատ։
Թոնն էր մաղում միապաղաղ, ցուրտ ու թաց։
Օրն էր մարում հիվանդոտ ու մեղմ-վհատ։

Օրորվում էր կառքը, վազում ու վազում։
Կառապանը երգում էր մի ինչ-որ երգ։
Թոքախտավոր կինն էր մուտիս դառն հաղում։
Մութն էր գրկում արևմուտք ու արևելք։

Թոնն էր մաղում միապաղաղ, ցուրտ ու թաց։
Ագռավները անցնում էին քրքջալով։
Թոքախտավոր կինը տխուր հեծկլտաց։
Քամին անցավ՝ մեկի մասին ողբալով։

Եվ կառապանն, օրորվելով, դեռ երկար
Երգում էր իր օրերի երգը անգույն։
Գնում էինք։ Ո՞ւր— չգիտեմ։ Վերջ չկար։
Գնում էինք։ Անխոս։ Անձայն։ Ու անքուն...

2. ԱՆՔՈՒՆ ԳԻՇԵՐԻՆ

Քնել չի՞ լինում...
Հիմա, երբ այնպես ուզում եմ քնել,
Ամե՜ն, ամե՜ն ինչ մոքիս հանել։

Հայացքներս՝ անփակ՝ թափառում են լուռ—
Ու միտքս, տարտամ, դեգերում է մութ
Դաշտերում տխուր։

Մթության գրկում լալիս է դողդոջ
Լույսը լապտերիս՝ մեռնող աղջկա
Հոգեվարքի պես...
Մեկը բախում է դռներն անցածի—
Ու հիշում եմ քեզ։

Մոռացված երգի նվագի նման
Դողում է հոգիս լույս մատների տակ—
Եվ ահա մեկ-մեկ շարվում են իմ դեմ
Պատկերներ, դեմքեր, որ կորել էին
Առանց հիշատակ։

Այնտեղ, մութի մեջ հայտնվում է ահա
Տեսիլդ գունատ ու տխրադալուկ,—
Օրերի անհայտ մշուշից ելած
Գունատ այցելու։

Ու հիշում եմ ես անձրևոտ մի օր—
Մի հին իրիկուն.
Հեռու երգերի խանդավառ օրոր,
Հարսանքի հանդես,—
Մաղող անձրևի կաթիլների տակ
Կանգնել էի ես...

Է՛, քնե՛լ, քնել...
Աչքերս փակեմ ու սեղմեմ ամուր
Ու չմտածեմ ոչնչի մասին։
— Մի՞թե, երբեմն, չէի՞նք միասին...
— Ա՜խ, օրոր ասա, անդորր ու օրոր.
Քնել եմ ուզում՝ գիշերն անց կացավ...
— Երա՞զ էր արդյոք, զառանցա՞նք, թե ցավ...

Ցա՜վ, ցա՜վ էր, անշուշտ.
Դու երբե՛ք, երբե՛ք ինձ չես ժպտացել—
Քո ժպիտն անդամ ցա՜վ է թվացել
Իմ հոգուն տվար...
Ես քեզ կանչեցի երկա՜ր ու երկա՜ր—
Դու չեկար, չեկար,—
Ցանկացա լինել քո դեմ մի հլու
Ու անկամ գերի—
Եվ ես իմ սիրով բեղ ծանծրույթ բերի...

Օտա՜ր էր հոգիս քեզ համար, ինչպես
Օտար դաշտերից բերած ծաղկեփունջ.
Տանջանքի վարդեր, հույսի ծաղիկներ,
Երազի աստղեր, հույսերի ցոլքեր—
Ու կարմի՜ր, կարմի՜ր խաշխաշներ ցավի.—
Այս ծաղիկներով զարդարված հոգիս քեզ նվեր բերի,

Որ քո կույս հոգին իմի հետ ցավի...
Ու ես չեմ հիշում, թե ի՞նչպես մի օր—
Օտար, անմեկին—
Ես քեզ կորցրի նոր կյանքի շեմքին...

Չէ՛, դու գնացիր, չգիտեմ թե ուր։
Ես էլ գնացի։ Իհարկե, այնտեղ,
Ուր ապրել ես դու երկար ժամանակ—
Ապրել չէ՛ր լինի։—
Չէ՛ր լինի տեսնել լույսերը ձեր տան,
Չէր լինի տեսնել լայն փողոցը ձեր,
Որ մինչև հիմա ես չեմ մոռացել...

Փողնենք, ախ, ի՞նչ հոգ.
Չէ՞ որ չգիտե, չգիտե ոչ-ոք,
Թե ինչո՞ւ կյանքում այսպես է եղել.—
Սերը մեզ համար— արցունք ու արյուն,
Սերը մեզ համար մահվան գին ունի,
Իսկ կնոջ համար— հրճվանքի գինի...

Այս անբուն, անքուն ու լուռ գիշերին
Ա՜խ, էլ չեմ ուզում վերհիշել կրկին
Անցյալը անմիտ ու անմխիթար.
Էլ ինչո՞ւ ես դու գալիս անդադար
Եվ ուշ գիշերով փորել ես ուզում
Իմ հոգին տկար...

Դրա համա՞ր ես դու այստեղ եկել
Օ, նենգոտ տեսիլ...
Ուզո՞ւմ ես հոգուս վերքերը պեղել,
Որի գանձերը չուզեցի՞ր տեսնել...
Օ, զզվելի՜ կին,—
Ջեզ արատ է պետք, սին արատ հոգու,
Որ լավ ծիծաղես ու չարկամ խնդաս—
Եվ ամբողջ հոգով հրճվանքից թեղաս...
Ուզո՞ւմ ես՝ պատմեմ, թե ինչպես հանկարծ
Ինձ համար փոխվեց ամեն, ամեն բան—
Եվ ես կորցրի երազի ճամփան...

. . . . . .

Մի գիշեր էր մութ։ Անձրև էր գալիս։
Խավար էր իջել իմ մթնած հոգում։—
Ամայությունն էր հեկեկում այնտեղ
Հին, անվերադարձ երազների տեղ։
Եվ ես դուրս եկա։ Ցեխոտ փողոցով
Քայլեցի երկար։
Չգիտեմ, թե ո՞ւր. ինձ համար աբդեն
Ճանապարհ չկար...

Երկա՞ր քայլեցի։
Եվ իմ դեմ ահա— մի երկա՞ր փողոց։
Հեռում—դեղին, տարտամ կրակներ։
Եվ ես մոտեցա այն կրակներին,
Որոնք իմ սրտին մի հի՞ն լուր բերին...
Մի հին լուր՝ հոգուս մեջ պահված ծածուկ—
Եվ ես այն շեմքը անցա կամացուկ...

Ու... այս եմ հիշում՝
Մի հին անկոգին— թաղված մշուշում,
Ու մի մերկ մարմին։
Ու ցավոտ, ճնշված հեկեկանքը իմ...
Ու դուրս եկա ես։
Չգացի միայն, որ ցուրտ է, քամի,—
Որ կյանքն ինձ համար էլ կատակ է մի...
Ինձ համար մեռավ ամեն սրբություն։
Գնա՜, սիրելիս։
Թող կյանքը գլխիս մրրիկներ տեղա
Ու մոխիր ցանի—
Էլ ո՜չ մի ղղջում իմ երազը հին
Հետ չի դարձնի...
Գնա՜, սիրելիս.
Ու թող մի վայրկյան քեզ մտքից հանեմ,—
Ուզում եմ քնեմ— ա՜խ, ինչպե՞ս քնեմ...

3. ՄԵՌԵԼՈՑ

Երեկոն անձրևոտ էր ու թաց։
Փողոցները—գատարկ, անաղմուկ։
Ու քամին էր անցնում սրընթաց
Ու տամուկ։

Ու կիշերը իջնում էր մթին.
Ծրևում էին մութ հեռում
Փողոցի կրակներն երերուն՝
Հանձնված ամոթին ու ստին։

Ու գնում էի ես համբընթաց,
Ինքս ինձ քո անունը ասում։
Հեռում ինչ-որ մեկը խնդաց
Փողոցի անձրևոտ երազում։

Ու օրհնում էի ես իմ սրտում
Մոռացված գամբարանը քո մութ։
Մեկն ասաց, որ ստում եմ, ստում,—
Ու լսվում էր հեռվում մեկի լացն անօգուտ...

1913 – 1916
«ՀՐՈ ԵՐԿԻՐ» ԳՐՔԻՑ

*
* *

Երազում եմ այն երկիրը հեռավոր,
Ուր մարմինը, սեգ մարմինը ու հոգին՝
Աննյութացա՜ծ ու նյութացա՜ծ, լուսավոր՝
Ողջակիզվեն Արևի՜ մեջ, քույր իմ, կին։

Ու միանա՜ն սեգ մարմի՜նը ու հոգի՜ն...
Ու չլինի՜, ու չլինի՜ դու ու ես։
Աննյութացած—դու մարմնանաս— ու կրկին
Հրա՜շք դառնաս՝ անդունդները արևես...

Եվ երբ կանչիմ— դու գրկիս մեջ արևից
Ու տարփանքի՜ց, տառապանքի՜ց շիկացած—
Գրկես թևե՜րս մանկական ու անբիծ—
Ախ, կի՜ն—ցնորք, քո՜ւյր, Շամիրամ ու Աստվա՜ծ։

*
* *

Ու իրիկնային
Ոսկի մշուշում
Քո կորած ու հին
Երկիրդ եմ հիշում...

Հիշում եմ կապույտ
Դղյակները քո,
Հիշում եմ մի սուտ,
Կապո՜ւյտ երեկո...

Ու իրիկնային
Շշուկը հասկի—
Երբ վառվում էին
Աստղերը ոսկի...

Տո՜ն էր, տոնակա՜ն
Ջոհերի հանդես—
Բայց ինչո՞ւ այնքան
Տրտում էի ես...

*
* *

... Ու կապտագույն, ու երկնագույն քողերի մեջ
Երևայիր։
Ջեմ մոռացել քո մազերի հրո՜տ, անշե՜ջ
Խուրձի վրա՝ ճերմակ պսակդ ձյունաձիր...
Ջե՜մ մոռացել, որ աչքերիդ իրիկնային
Հրդեհներում
Երևում էր աղամանդե՜, սառցայի՜ն, հի՜ն
Լուսնաշխարհի անկի՜րք, լուսե՜ղ, ձյունո՜տ
Հեռուն...

... Ու մոռացար, շրթունքներով շամշո՜տ, հրո՜տ—
Համբուրեցի՜ր։
Բայց շրթունքներս՝ շրթերիդ հրի՜ն կարոտ—
Համբուրեցին ճերմակ պսակդ ձյունաձիր...

*
* *

Ու լալիս էիր—
Գո՞ւ էիր, թե ես...
Ու մազերդ հի՞ր
Մարեցին կարծես...

Ես կանչում էի
Մշուշում, մուժում.
Ու չդիտեի—
Ի՞նչ էի ուզում...

*
* *

Բայց մոտեցար ու փարվեցիր—
Կրկի՛ն, կրկի՛ն։
Մեկը ճչաց.— «Անցի՛ր, անցի՛ր
Լուսնաշլոարհի դաշտերը, կին...»։

«Անցիր, անցիր...»։
... Ու ոռնում էր լուսնի դեմքին գուրսը մի շուն։
Եվ զգացի՛, որ արնաբույր, արնոտ մուժում
Բռնկվե՛լ է ճերմակ պսակդ ձյունածիր...

*
* *

Ու մոտեցար, ու ձեռքերդ կարմի՛ր, հրո՛տ
Դրիր սրտիս։
Սիրտս ճչաց. հրդեհների լույսի՛ն կարոտ—
Ճչաց— ցրտի՛ց...
. . . . . .
... Ու հիշո՛ւմ եմ, որ— ես երկա՛ր, երկա՛ր
Կանչում էի Քեզ։
Դու ինձ մոտ էիր։ Արնոտ, խելագար—
Մենակ էի ես...

*
* *

Օ, այն չէ՞ր, այն չէ՞ր—
Երկիրը Հրի...
— Մահի՛, ոճիրի՛
Արնաբո՛ւյր գիշեր։

Օ, այն չէ՞ր, այն չէ՞ր։
Ու, ցուրտ էր այնքան...
Ձեռքեր արնաքամ...
Հուսահատ կանչեր...

Ու սուտ հեռանում
Երկիրը Հրի
Լեգենդ էր թվում
Մահի՛, ոճիրի՛...

*
* *

... Եվ երբ դադարեց հեծկլտանքը քո—
Մարած աչքերով նստեցիր ինձ մոտ։
Ինչել էր մի սո՛ւտ ու մո՛ւթ երեկո։
Ինչել էր մի սո՛ւտ ու մո՛ւթ առավոտ։

Եվ երբ նայեցիր աչքերով մեռած
Տրտում, հոգևար, կծկված հոգուս—
Հառկացա՝ հանկարծ, որ թե մութ, թե լույս՝
Երկո՛ւսն էլ չկան, երկուսն էլ— երազ...

Ո՛չ մութ կար, ո՛չ լույս։ Ո՛չ հրդեհ, ո՛չ ձյուն։
Մշուշում միայն, մեր հոգու վրա
Թևերն էր փռել մի անտես թռչուն
Ու զոզո՛ւմ էին թևերը նրա...

*
* *

Ես ի՞նչ անեի, քույր իմ, երբ չկար
Այլևս ոչինչ.
Ո՛չ կապույտ հոգուս թևը խելագար,
Ո՛չ կույս-աչքերիդ ձյունը ամոքիչ։

Ձեռքերդ՝ նիհա՜ր, դալկացա՜ծ, ծարա՜վ,
Պարզել էիր դու—
Ո՞վ գիտե, արդյոք Հյուսի՞ս, թե Հարավ,
Թե՞— դեպի ստվերն Արևի— հոգու...

Ես ի՞նչ անեի, ի՞նչ աներ հոգիս,
Որ կանչում էր Քե՜զ—
Ու Քո հո՜ւշ դարձած երազը մոգին,
Երազը ձյունե, երազն—արևկե՜զ...

*
* *

Քո՛ւյր, գուցե՛ չըկանք...
Գուցե մեկը,—ո՞վ—
Երազել է մեզ
Անլույս գիշերով...

Թվում էր հոգուս,
Թե երկուս ենք մենք,
Բայց, նայի՛ր, հիմա
Դարձել ենք— երեք...

Երկուսս էլ հիմա
Կանչում ենք նրան—
Փնտրելով կորած
Ուղիները Տան։

Կամուրջներ չկան։
Իսկ գետը—վարար։
— Փնտրելով նրան,
Փնտրում ենք իրար...

1915
ՏԵՍԻԼԱԺԱՄԵՐ

*
* *

Մի լուսե աղջիկ, լուսե մի մեռել
Օրերի միգում երևում է ինձ։
Թարթում են միգում կրակները դեռ,
Ու կարոտը հին խեղդում է նորից։

Անցնում է, որպես անմարմին տեսիլ
Ու նորից միգում երևում է նա։
Ու նորից չկա։ Ու նորից գիշեր—
Փողոցի վրա ու հոգուս վրա։

Կրակներ, ջահեր։ Անցնում են նրանք,
Կանչում են նրանք, ակնարկում են ինձ։
Կանգնում են թարթող կրակների տակ,
Ներկած աչքերով կանչում են նորից։

Ու լուռ է հոգիս։ Ու մենակ եմ ես։
Երազուն, տխուր։ Հավատում եմ դեռ։
Ու անցնում է նա— անմարմին, անտես,—
Մի լուսե աղջիկ, մի լուսե մեռել։

*
* *

Ես նստում էի անմարդ բուլվարում՝
Աշնան արևի համբույրին գերի։
Խմում էր հոգիս երկնքի հեռուն,
Լսում էր հոգիս երգը զանգերի։

Ու անթա՜րթ, անթա՜րթ նայում էի ես
Անսահման, անծիր երկնքի հեռուն։
Ու թաց աչքերով տեսնում էի քիչ—
Հավիտենության կապույտ դաշտերում։

Եվ երբ երեկոն մեռնում էր բոցում
Ու իջնում էր պարզ, աստղազարդ գիշեր—
Կապույտ ջրերի հեռու զնգոցում
Ես լսում էի քո շշուկը դեռ...

*
* *

Եվ մի իրիկուն զանգերի երգում
Լսեցի վճիտ խոստումները քո։
Կարծես թե հոգիդ իրիկվա մթում
Կանչում էր անտես... Խաղա՜ղ երեկո։

Ու ղողանջները կապույտում անծայր
Թիթեռի նման ճախրում էին դեռ—
Երբ հեռուներում դեգալով անցար,
Որպես մի ղողանջ, մի լուսե թիթեռ...

Անցար—լուսավո՜ր, հեռավո՜ր, թնթե՜,
Ճառագայթի պես իրիկնամուտի։
Իսկ սիրտս՝ տխուր, հոգնաբեկ, անթև,
Խմում էր իջնող տագնապը մութի...

*
* *

Հոգուս մեջ իջել ու փռվել էր մի
Հիվանդոտ, հիվանդ տխրության հանգիստ։
Հաշտվել էի ու լռել էի։
Ու լուռ էր հոգիս՝ լուռ ու լռանիստ։

Եվ մեկը հանկարծ խնդաց խավարում—
Դուրսը, դաշտերի մենակության մեջ։
Մեկը դաշտերում տագնապ էր փռում—
Ու մութ սենյակում հսկում էի ես։

Դուրսը, դաշտերում, քրքջում էր քամին։
Ճչում էր հոգիս՝ հիվանդ ու տկար։
Ստվերները լուռ օրորվում էին։
Ու լուռ էի ես։ Չկայիր։ Չեկար։

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Ձյունապատ լեռներ ու կապույտ լճեր։
Երկինքներ, որպես երագներ հոգու։
Երկինքներ, որպես մանկական աչեր։
Մենակ էի ես։ Ինձ հետ էիր դու։

Երբ լսում էի ճրմունջը լճի
Ու նայում էի թափանցիկ հեռուն—
Ջարդնում էր իմ մեջ քո սուրբ անուրջի
Կարոտը այն հին, աստղայի՜ն, անհո՜ւն։

Կանչում էր, կանչում ձյունոտ լեռներում
Մեկը կարոտի իրիկնամուտին։
Իսկ գիշերն իջնում, ծածկում էր հեռուն,
Էտոնելով հոգիս աստղային մութին...

* *

Եվ մի առավոտ, մշուշ էր ու մեգ,—
Մոռացել էի ու չէի հիշում—
Երբ եկար հանկարծ՝ տխուր, հուսաբեկ։
Հովի պես անցար, անունդ— Աշուն...

Անցնում էիր դու անմարդ պուրակում
Եվ ընկնում էին քո ոտների տակ
Տերևներ, թերթեր՝ դեղին, ոսկեգույն,
Մոռացված միգում, որպես հիշատակ։

Լո՜ւռ ընկնում էին տերևները վար,
Ու ծածկում էին ճանապարհը, քեզ։
Ու ցուրտ պուրակում, մենակ, հոգևար
Մեռնում էր հոգիս ու լուռ էի ես...

*
* *

Հիմա չգիտեմ, մոռացել եմ ես
Ճամփաները քո։ Մշուշ ու թախիծ։
Մոռացել եմ ես, մոռացել է քեզ
Օրերի միգում կուրացած հոգիս։

Անցնում են, հոսում օրերը անծայր։
Ճամփորդների պես գնում են հեռու։
Հիշում եմ միայն, որ մի օր անցար
Օրերիս նման— ու ետ չես գալու։

Եվ գուցե մի օր, մի վերջին գիշեր,
Երբ վերջին միգում աչքերս մարին—
Արթնանա հանկարծ անիմաստ մի սեր
Ու աստղը ժպտա մոխրացած քարին...

ՄԱՐԻ, Է՛Գ ԹՈՒՉՈՒՆ...

Չգիտեմ, Մարի, երկնքի մովից
Ինչո՞ւ էր հոգիս կարոտով կանչում,
Որ ճախրես, թռչես, վերանաս նորից,
Մարի, ի՛մ Մարի, Մարի, է՜գ թռչուն։
Դաշտերը մինչև գրավում են քեզ.
Դաշտերը կանաչ, գետարը ցողի։—
Դաշտերի միջում կորցրել եմ ես
Մի հին, երկրային բերկրանքի ուղի։
Մոռացել եմ ես դաշտերի ուղին.
Մոռացել է իմ երազող հոգին
Հովը դաշտերի, զմրուխտը կանաչ.
Աշխարհը մեռավ հավերժի առաջ—
Եվ ես մոռացա բախտը աշխարհի՝
Աշխարհի հեռուն ու բախտը բարի։
Լուսնյակ գիշերով ես ճամփա ընկա
Ու կյանքը թողած, ու կյանքի հեռուն—
Թաղեցի հոգիս լուռ ու լուսնկա
Հավիտենության մեռած դաշտերում։
Ու լուռ էր շուրջս— ձմեռ ու գիշեր,
Ու երգը մահի, որ կոչվում է— սեր։

Մեռած է, Մարի՜, իմ սիրտը հիմա։
Շուրջս— լռություն, ու գիշեր, ու մահ.
Շուրջս բարացած երգը մահի.

— Կուզեի՞ այնպես, որ ետ դառնալի
Ու համբուրեի շրթերը հողի.
Փնտրեի մի պարզ, երկրային ուղի,
Հո՞ղը լիզեի, որպես համբ շուն—
Ու լո՞ւռ կորչեի աշխարհի փոշում...
Ախ, ցուրտ է այստեղ— երկնի կամարում—
Չի վառում այստեղ ճառագայթը հուր.
Երկնքում չկա ծաղիկ ու դալուն
Ու սուտ է հոգու բերկրանքը մաքուր։
Մարի, ի՜մ Մարի, մնացիր նախշուն,
Արևոտ ու տաք դաշտերում երկրի,
Թող հոգիդ զնգա՝ երկրի մշուշում,
Աշխարհի մուժում թող հոգիդ բերկրի։
Մի՛ նայիր դու վեր. թող կյանքդ լինի
Ոսկի մի զողանջ. վա՜ռ բախտի հնչյուն,
Թող կյանքդ լինի հուրհրող գինի,
Մարի, ի՜մ Մարի, Մարի, է՜զ թռչուն...

— Իսկ ե՞ս. ի՞նչ անեմ ես, որ մնացի
Երկնի դաշտերում— ու մեռավ հոգիս,
Ես, որ երկրային կյանքս թաղեցի—
Լսո՞ւմ ես, Մարի,— ի՞նչ արի ես ինձ։
Ինչո՞ւ արևի համբույրը երբեք
Չվառեց իմ մեջ ցանկություն ու դող
Ու չհրդեհեց սիրուս հոգնաբեկ
Քո հուր մարմնի հմայքը դյութող։
Բայց չէ՞ որ հոգին, ասում են, ունի,
Կամ գուցե առաջ ունեցել է նա—
Կարմիր կարոտը կարմիր արյունի
Ու հրդեհումի երազը անահ։
Ախ, մարդու հոգին, ասում են, առաջ
Ապրել է այնտեղ— արևի վրա,
Եղել է վառման խնդագին երազ,
Հրոտ, հրանագ, ու անունը— Ռա։
Վառվել է անմար արևի հոգում՝
Ինքը զոհ իրեն ու զոհաբերող,
Ու սփռել է մութ օրերի միգում

Հրդեհ ու կարոտ, ցանկություն ու դող։
Ու եղել է այս կյանքը երկրային
Արևի առաջ խանձված մի զոհ.
Աղոթք են արել հրակամ Ռային—
Ապրել են հրում ու անցել են գոհ։

Հոգնե՞լ եմ, հոգնե՞լ երազից, մահից,
Անտարբերության վիճակից երեր.
Ուզում եմ զգալ, շոշափել նորից,
Ջունենալ երազ, թռիչք ու թևեր։
Կուզեի՞ լինել հաստատ ու կարող,
Աշխարհը զգալ, որպես քաղցր դող,
Եվ ամբողջ կյանքով մի պահ երկարող—
Վառվել ու մարել հրճվանքում բանտող։
Եվ ինչո՞ւ համար իմ մարմինը լույս,
Մարմինը մարող, մարմինը հիվանդ
Դեռ պետք է կրի դիակը հոգուս,
Որպես ծանր բեռ՝ հնամյա ավանդ։
Ճնշում է, ճնշում ուսերիս վրա
Դիակը այդ ցուրտ, ծանր, անբաժան,
Ինչո՞ւ եմ կրում ես բեռը նրա,
Այդ բեռը դաժան։

Եվ ինչու հիմա, օրերիս ծոցում,
Ուր բերել է ինձ բախտը այս գիշեր—
Ես ինձ եմ փնտրում ու մեռելոցում
Վերջին տագնապում, որ կոչվում է— սեր...
. . . . . .
Ես ինձ եմ ուզում, ի՞նձ, լսո՞ւմ ես, կի՛ն,
Ինձ, որ չե՛մ լինի էլ ուրիշ անգամ,
Որ վաղը պիտի հո՞ղ դառնամ կրկին
Ու անցնեմ անդարձ ու աշխարհ չգամ։
Ի՞նչ անեմ ես, կին,— ի՞նչ անեմ հիմա,
Թե զգամ, որ ես անցել եմ անդարձ—
Ու ցուրտ մշուշում ճերմակ երևա
Մահը՝ աստղային զգեստներ հագած։
Եվ ցույց տա նա իմ երազած ուղին՝

Հավիտենության սահմանը ունայն—
Եվ ես հասկանամ, որ հավերժը հին
Վերջ չի ունենա, որ հանգստանամ...
Երբ զգամ հանկարծ, որ հասել եմ ես
Հավիտենության սահմանը— ու նու,
Քարացած հոգիս՝ աներազ, անտես՝
Ցո՜ւրտ հավերժության եզերքում մնա։
Չէ՞ որ ով հասավ հավիտենության
Ու նիրվանայի լուսնաշխարհը սառ—
Նա էլ չի՛ դառնա կյանքի անսահման
Օվկիանը, որ կոչվում է Սանսար...

Օ, ծա՜նր է, ծա՜նր է, օ ծա՜նր է այնքան
Ուսերիս համար բեռը հավերժի.
— Ախ, լինել թեթև՜, հրո՜տ, հրակա՜մ,
Վառվել, որպես զոհ, զոհս չմերժի
Արևը—արև, ու Ա՛գնի, ու Ռա.
Վառվել ու մարե՜լ աշխարհի վրա՝
Զոհի՜ պես արդար, ինքնաամոքիչ—
Ու մահից հետո չլինի՜ ոչինչ...

ՀԱՐԴԱԳՈՂԻ ՃԱՄՓՈՐԴՆԵՐԸ

Սիրելի Վիվանին

И так мы живём, что нельзя нам не жить

Фет

*
* *

Հարդագողի ճամփորդներ ենք մենք երկու,
Երկու ճամփորդ պատառոտած շորերով։
Ու սիրել ենք տրտմությունը մեր հոգու՝
Անրջական կարոտներով ու սիրով։
Մենք սիրել ենք տրտմությունը մեր հոգու՝
Անրջական ինչ-որ կարոտ, ինչ-որ սեր։

Ու սիրում ենք առավոտից-իրիկուն
Ճամփա երթալ— ու հավիտյան երազել։
Աչքերիս մեջ մենք պահել ենք երկնային
Ճամփաների հեռուները դյութական—
Ու անցնում ենք ուղիներով երկրային,
Ուր բյո՜ւր մարդիկ երազեցին ու չկան։
Մշուշի պես մեր մանկությունը անցավ՝
Ցորչ, անարև, անմխիթար մանկություն։
Զառանցանքի պես մանկությունը անցավ—
Ու հեռացանք։ Ու չենք դառնա կրկին տուն։
Լո՜ւռ հեռացանք ու քայլեցինք անդադրում,
Երազելով հավերժական հեռուներ։
Կյանքը դարձավ հավերժական մի փնտրում—
Մութ, անհեթեթ, տարօրինակ կյանքը մեր։
Ու օրերում բազմագույն ու բազմազան
Վառվեց, վառվեց ողջակիզվող սիրտը մեր,—
Բայց աչքերը մեր— արևներ չտեսան,
Եվ մեր սրտերը— լուսավոր հեռուներ։
Ու մշուշոտ մեր աչքերը հավիտյան
Որոնեցին պատահական աչքերում
Հարդագողի ուղիները ոսկեման,
Նրա անծիր, անծայրածիր այն հեռուն։
Բայց աչքերում նրանք երկինք չգտան,
Ու սրտերում— արեգակներ ոսկեվառ.
Ու բզկտվեց հայացքներից անկենդան
Որբ սիրտը մեր՝ երազորեն— հոգևար։
Ես ուզեցի երգել գովքը աստծու,
Երգել փառքը պայծառ սիրո ու հացի.
Սիրտս լցվեց... բայց չգիտեմ, թե ինչու—
Ցորչ օրերի տաղտկությունը երգեցի...
Թաղված մնաց իմ աչքերում մի անհուն,
Կապուտաչյա երջանկության առասպել.
Մի երկնային առնչության պատմություն—
Ու կարծրացավ սիրտս՝ անլույս ու անբեր։
Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ,—
Ու խնդացին լուսավո՜ր մեր աչքերին,
Բութ հեգնեցին մեր կարոտները հրիեզ—

Ու հեռացան։ Ու ո՛չ մի լույս չբերին։
Քույրը խնդաց, բարեկամը ծիծաղեց,
Օտար մարդիկ հայհոյեցին ու անցան։
Միայն պոռնիկը մշուշում համբուրեց
Եվ խելագարը բարևեց կիսաձայն։
Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես,
Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք.
— Մենք կժպտանք, գո՜հ կժպտանք մեռնելիս,
Որ երազում երազեցինք ու անցանք...

*
* *

Մենք բոլորս, որ գնում ենք մենակ, տրտում,
Որ գնում ենք խանութներում գինի ու հաց,
Որ փնտրում ենք անկարելի մի խնդություն,
Բայց չենք գտնում՝ վազքով տարված ու զբաղված—
Մենք բոլորս, որ, հոգնաբեկ, չենք նայում վեր—
Մոռանալով աշխարհային չարը, բարին՝
Տրտո՜ւմ կօրհնենք մի իրիկուն օրերը մեր—
Ու կնայենք Հարդագողի ճանապարհին...

1916—1917
«ԾԻԱԾԱՆԸ» ՇԱՐՔԻՑ

Կարինե Քաբանճյանին

Դու իմ վերջի՜ն, իրիկնայի՜ն, աստղայի՜ն քույր...

*
* *

Ես աստղային մի պոետ, լաբիրինթում քո Կապույտ,
Քո՜ւյր, անցնում եմ, որպես աստղ, հոգիս— մեռած աստղի փայլ.
Այնքան տրտում է հոգիս, բայց միշտ ժպտում է հոգուդ,
Որ երազը չդառնա Գողգոթայի ճանապարհ...

*
* *

Հոգին չի մեռնում։ Մարմինը թողած երկրային
փոսում—
Թափառում է նա տիեզերական լաբիրինթոսում։
Անցնում է բոլոր ճամփաները սուտ ու անբեր
երկրի,—
Որ պայծառ, մաքուր, դարձերից հետո,— քո
գրկում բերկրի։
Բայց ե՞րբ կհասնի հոգիս, որպես սեգ, սրբացած
մի զոհ,—
Մայրամուտային եզերքը Կապույտ,— լույս
եզերքը Քո...

ՍԻԱԾԱՆԸ

Լուսամփոփի՜ պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի՜ պես երազի՜.
Կապո՜ւյտ աղջիկ, ակաթի ու կաթի պես հոգեթով,
Լուսամփոփի՜ պես աղջիկ...

Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չմեռնի իմ հոգին,
Որ չմարի իմ հոգին քո ակաթե աչքերում.
Ես ի՞նչ անեմ, որ մնա ծիածանը երեքգույն,
Որ չցնդի, չմարի՜ իմ հոգու հեռուն...

Լուսամփոփի՜ պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմինի՜ պես երազի,
Կապո՜ւյտ աղջիկ, ակաթի ու կաթի՜ պես հոգեթով,
Լուսամփոփի՜ պես աղջիկ...

*
* *

Երեք ճաճանչ, երեք երանգ, երեք դույն,
Որ անցան—
Քո՜ւյր, կապել են քո աչքերում, իմ հոգում—
Ծիածան։

ԿԱՊՈՒՅՏԸ

Կապույտը հոգու աղոթանքն է, քույր,
Կապույտը—թախիծ.
Կապույտը— կարոտ թափանցիկ, մաքուր,
Ու հստակ, ու ջինջ։

Կապույտը քրոջ աչքերի անհուն
Առավոտն է թաց։
Կապույտում հոգիս մի հին իրիկուն
Անզո՜ր հեծկլտաց։

Կապույտը ծեգին աղոթքի կանչող
Ղողանջն է զանգի։
Կապույտը—արցունք, ու կապույտը—ցող
Հոգու, երկնքի։

Կապույտում անսուտ խոսքեր են հասում
Երկնքից—երկինք։
Հոգիս—Կապույտի լաբիրինթոսում
Սրբացած կնիք։

Այն, որ չի եղել, որ պե՛տք է լինի
Մանկական սրտում—
Հոսում է, որպես լուսավոր գինի—
Հոգու կապույտում։

*
* *

Առավոտ կանուխ, երբ արև չկա,
Լուռ զգում եմ ես,—
Որ լուսե հոգին քնած աղջկա
Մոտի՜կ է այնպես։

Ու լսում եմ ես, լսում եմ միայն,
Երազուն—տրտում։
Ժպտում է հոգիս անդորր տրտմության
Գունատ կապույտում։

Զգում է հոգիս շրթերի վրա՝
Անմարմին, դողդոջ—
Կապույտ, երկնագույն համբույրը նրա—
Լուսավո՜ր քրոջ։

ՈՍԿԻՆ

Կապո՜ւյտի մեջ, կապո՜ւյտի մեջ— արևի ոսկին։
— Քնի՛ր, քնի՛ր, կապո՜ւյտ աղջիկ, չզարթնես
ծեգին։

Կարապները լճերի մեջ, ջրերի վրա
Դեռ քնել են, դեռ նիրհում են. կարթնանան հիմա։

Ու զանգերը զողանջում են՝ կարկաչուն, հնչուն,—
Փախցնում են աստղերի չուն և կանչո՜ւմ, կանչում։

Խա՜չը վանքի, ե՛րգը զանգի— կապույտում վերջին.
— Զարթի՛ր, զարթի՛ր, կապո՜ւյտ աղջիկ, ու
նայի՛ր խաչին...

Նա ոսկի՛ է, երկի՛նք նետած մի կտոր ոսկի.
Նա—մի երազ, ոսկի՛ միրաժ արթնացած խոսքի։

Ու արևի թևը ահա լճերի նիրհում
Հրդեհում է աստղանկար տրտմության հեռուն...

Ու մարում են, ու մեռնում են այն աստղերը, տե՛ս։
Արթնացել են կարապները ու կանչո՜ւմ են մեզ։

Քո՜ւյր, վայրկյանը սրբազան է— բռնկում ու մահ.
Կարապները, որ կանչում են, կմեռնեն հիմա։

Ու կմարի խաչը վանքի կապույտում վերջին.
— Զարթի՛ր, զարթի՛ր, կապո՜ւյտ աղջիկ,— ու
նայի՛ր խաչին...

ՄԱՆՈՒՇԱԿԱԳՈՒՅՆ

Կապույտից հետո և ոսկուց հետո,
Քո՜ւյր, փռվեց ահա իմ տրտմած հոգում,

Որպես երազում ապրած երեկո—
Մի խամրած մշուշ մանուշակագույն...

Հիշում եմ հիմա, որ մի իրիկուն,
Ժպտալուց հետո, երբ ոսկի շղթան
Ընկավ ամոթխած գիրկը լռության—
Փռվեց քո դեմքին, իմ տրտմած հոգում
Մի խամրած մշուշ մանուշակագույն...

*
* *

Աչքերիդ վճիտ ու թաց կապույտում—
Ժպիտը ոսկի.
Մայրամուտային մշուշը տրտում՝
Այտերիդ վրա.
Եվ, որպես շշուկ չքաղված հասկի,
Մեր հոգնած սրտում—
Սպասումը, որ ցրտաբեր քամին
Հիմա կսուրա...

Ստվերներն իջնում ու փարվում էին
Դեմքիդ, իմ հոգուն.
Մթնում էր հեռուն խանձված հոգու,
Որպես իրիկուն.
Երազները, քո՜ւյր, երանգներ էին,—
Խամրեցին միգում,—
Խամրեցին, հանգան մայրամուտային
Իրիկնաժամում մանուշակագույն...

*
* *

Ու տրտում էին քո աչքերը թաց,
Ու մթնում էին գույներն իմ հոգում,
Երբ վերջին անգամ արտմորեն ժպտաց
Դեմքդ մշուշում մանուշակագույն...

Եվ քո թաց, վճիտ, ցողոտ աչքերում
Լույսի ճաճանչներ ճախրելով անցան—
Ու բացվեց հանկարծ միգամած հեռուն՝
Քո ջինջ աչքերում— պայծա՛ռ ծիածան...

Քո՛ւյր իմ, այն մեռնող արև՛ն էր— ժպտաց,
Մի վերջին անգամ բռնկվեց միգում,
Որ ծիածանե քո աչքերը թաց
Ու տրտում հոգիս մանուշակագույն...

*
* *

Իրիկուն էր։ Իրիկնային տրտմության
Հուշն էր հյուսվում— մայրամուտի մի երգ։
Դու հարազատ ու մոտ էիր ինձ այնքան՝
Քո աչքերով իրիկնային, ցողաթաց...

Քո աչքերի ու երկնքի կամարում
Ճառագայթները, այնքան հե՛զ, այնքան ջի՛նջ,
Ճախրում էին, հոգնարում ու մարում՝
Համբուրելով ծիածանը ամոքիչ...

Եվ լույսերը, որ ճախրեցին ու անցան,
Իրիկնային ժայռի մեջ այն վերջին—
Անրջացած, երազ դարձած սրբացան,
Որպես դեմքը քո լուսավոր — իմ հոգին...

ՀՐԱԺԵՇՏԻ ԵՐԵԿՈՆ

Ջինջ ճախրում են ղողանջները հորիզոնից-հորիզոն,
— Ինչ տրտո՛ւմ է, կապո՛ւյտ աղջիկ, հրաժեշտի երեկոն...

Տրտմություն ու լույս է իջել քո աչքերում, իմ հոգում
Օրհնե՛նք, օրհնե՛նք այս երկրային հրաժեշտի երեկոն...

Եվ թող հալվե՛ն, ձուլվե՛ն, մարվե՛ն իրիկնային կապույտում
Մեր կույս հոգու իրիկնային սպասումները տրտում։

Եվ զանգերը անրջորեն, հորիզոնից-հորիզոն,
Օրհներգելով թող օրորեն հրաժեշտի երեկոն...

*
* *

Դու գնում ես, բայց հոգիս սպասում է քեզ.
— Կապո՛ւյտ աղջիկ, քո՛ւյր իմ հեզ, դու հետ չե՞ս գալու...

Ես ժպտում եմ, որ երկար ճանապարհին չտրտմես.
Հոգիս մնաց ո՞րը այնպես— դու հետ չե՞ս գալու...

Դու գնում ես, բայց կարծես կայարան եմ եկել ես,
Որ հանդիպեմ, քույր իմ, քեզ,— դու հետ չե՞ս գալու...

ԳԱԶԵԼՆԵՐ

*
* *

Ի՞նչ տրտում են դանգերը, քո՛ւյր, մայրամուտի,—
Ջանգերը թաց ու ցողաբո՛ւյր մայրամուտի...

Ահա կույսերը գնում են աղոթելու.
Սգահանդես, տրտում թափոր մայրամուտի...

Լուսամփոփի պես կախվել է երկինքը բիլ
Հոգուս վրա— օ, սո՛ւրբ անդորր մայրամուտի...

*
* *

Իրիկուն է, քո՛ւյր,— աչքերդ փակի՛ր,
Հոգնաբեկ, տխուր,— աչքերդ փակի՛ր։

Թարթիչներդ թող չթարթեն միգում,
Միգամած ու խոր աչքերդ փակի՛ր։

Կոպերիդ տակ թող երազս թաղեմ,
Իրիկուն է, քո՛ւյր,— աչքերդ փակի՛ր...

*
* *

Թող ապրի հոգին— կապույտ վանդակում.
Կան դանձեր անգին— կապույտ վանդակում։

Դու—ծարավ աղջիկ, կապույտը— գինի.
Դու— արբած մի կին— կապույտ վանդակում։

Ի՞նչ պիտի անես, ի՞նչ պիտի անես,
Երբ թափվի գինին կապույտ վանդակում...

*
* *

Սիրո երգի կորած տողն ես հոգուս համար,
Սո՛ւրբ է կարոտդ՝ մոխրագույն հոգուս համար։

Դու մի՛ֆ դարձած ու սրբացած մեռելների
Սուգը տոնող տրտում քո՛ղն ես հոգուս համար։

Իրիկնային մեռելոցի այս սուրբ պահուն—
Հի՛ն կարոտի վերջին դողն ես հոգուս համար...

1918 - 1920
«ՈՂՋԱԿԻԶՎՈՂ ԿՐԱԿ» ՇԱՐՔԻՑ

ԻՐԻԿՈՒՆԸ

Նո՛ւյնն է կարոտս հիմա՝ անսփոփ ու որբ։
Նո՛ւյնն է աշխարհը վառվող ու արևը բորբ։

Նույնն է երկինքը կապույտ ու լճակը ջինջ—
Եվ չի՛ փոխվել իմ սրտում, իմ հոգում— ոչինչ։

Նույնն է սերը՝ կրակված իմ սրտում հիմա՝
Նո՛ւյն կարոտը անսփոփ ու անունը— Մահ։

*
* *

Ծորենների արտի վրա հրաբորբոք,
Անցնում է մի երկնային կարմիր մորմոք։

Հով է կարծես, կարմիր մի հով, հրե մի սյուք,
Որ անցնում է հրաբորբոք, հրաշշուկ։

Վերը, հեռուն, արյունամած հորիզոնում,
Մեկը կարծես— հրե մի մարդ— ղո՛հ է անում։

Երկնից իջած հորիզոնի դծի վրա—
Վառել է մի ոսկերոսոր, կարմիր քուրա։

Ու քուրայից կարմի՞ր, կարմի՞ր հոսում է վար՝
Արտի վրա՝ մի խնդություն արևավառ։

Ջերմ ծփում է արտի վրա հրաբորբոք,
Որպես հեռո՞ւ մի խնդության կարմիր մորմոք...

ԱՌԱՎՈՏ

Իմ անցած օրերի պես,
Հնացած օրերի պես,
Ես արդեն հեռացել եմ,
Հնացել եմ ես.
Ես արդեն հնացել եմ,
Ես արդեն հիմա ծե՞ր եմ,
Հեռացել ու անցել եմ—
Մերացել եմ ես։

Բայց այս վառ օրերի մեջ,
Երբ հողմերն աղմկում են,
Աղմկում ու երգում է
Անցած սիրտը իմ.
Ես արդեն հիմա ծե՞ր եմ,
Ինձ կարծես հմայել են,
Եվ իմ սիրտը պահել է
Կրակները հին։—

Այո, գիտեմ, որ այդ դո՞ւ ես,
Որ այդպես հմայում ես,
Հմայում ու նայում ես
Օրերում այս հուր.
Դու անուշ կարկաչում ես.
Դու կանչող մի հնչյուն ես,
Կարկաչում ու կանչում ես.
Չգիտեմ, թե ո՞ւր։

Եվ հիմա ես լսում եմ,
Որ վերջին երազում իմ

Քո կարոտն սկսում է
Իմ հոգին հուզել—
Ես կարծես ծերացե՞լ եմ,
Ծերացել ու դարձե՞լ եմ
Ու նորի՞ց երազել եմ
Կարոտանք ու սեր...

*
* *

Օրերը հուր են հիմա,
Օրերը հողմ են հրե.
Քաղցր է կյանքը, որպես մահ,
Քաղցր է աշխարհը հրե։

Ո՞վ գիտե՝ ո՞վ է վառել
Հուրը, հրդեհն այս հսկա.
Ես գիտեմ՝ դո՛ւ ես վառել
Հուրը, հրդեհն այս հսկա։

*
* *

Հնչում են խոսքերը, բառերը,
Հանգերը, վանկերը բոլոր,
Երբ քաղցր կարոտդ վառել է
Սրտիս մեջ նոր սեր ու օրոր։

Սրտիս մեջ վառվել է, վառվում է
Կարոտդ անուշ ու հրկեզ—
Իսկ դուրսը հողմի պես տարվում են
Օրերը շեշտով այս երգիս։

Օրերը փրփուր են, ալիք են,
Ծփում են փրփուր առ փրփուր,

Հողմի պես թռչում է գալիքը—
Հուզվում են օրերը պուրպուր։

Հուզվում ու ծփում են օրերը,
Ինչպես իմ երգերը բոլոր,
Երբ քաղցր կարոտդ վառել է
Սրտիս մեջ նոր սեր ու օրոր։

*
* *

Հնչում են օրերը, կանչում են,
Օրերը— կարմիր ու բոսոր.
Օրերը զողանջ ու հնչուն են,
Զնգում են՝ հրե ու հզոր։

Ու սիրտս զնգում է, զնգում է,
Թռչում է՝ կրակ է ու բոց.
Լսո՞ւմ ես սրտի իմ զնգունը,
Լսո՞ւմ ես, լսո՞ւմ ես, թե ոչ...

Կրա՛կ կա սրտիս մեջ, կրա՛կ կա,
Հրդեհ է՝ վառվում է հրկեզ.
Գալիքը կուզեմ որ արա՛գ գա—
Անդարձ է կարոտը երգիս։

Կուզեմ, որ կյանքի մեջ գալիք այն
Երգերս զնգան ու հնչեն—
Կուզեմ, որ լսե, ախ, գալիքը
Երգերըս այս վառ ու հնչեղ...

*
* *

Նո՞ր է կարոտս հիմա. հուր է կարմիր ու հրդեհ։
Նո՞ր է հմայքը, որով դու ուզում ես կախարդել։

Հո՛ւր ես դարձել ու կրակ, փայլ ես կարմիր
ու փրփուր,

Ինչպես օրերը այս տաք, ինչպես օրերը պուրպուր։

Շուրջդ օրերը վառվում ու հոլովվում են արագ՝
Օրերը տո՛թ ու այրող, ինչպես նայվածքդ հրակ։

Ինչպե՞ս երգեմ, չգիտեմ, կարմիր հմայքը քո այս,
Ինչպե՞ս ասեմ աշխարհին, որ աշխարհում
արդեն կաս...

*
* *

Դու հրե մի ուրու ես, աղջի՛կս,
Դու մոտիկ ու հեռո՛ւ ես այնպես։
Դու փրփուր ու պուրպուր մի աղջի՛կ ես—
Ու մոտիկ ու հեռո՛ւ ես այնպես։

Քո փայլով դու վառել ես երկիրը,
Կարոտով ու փայլով քո անուշ.
Քո կարոտը վաղո՛ւց ես երգել եմ—
Քո կարոտը ու փառքը անուշ։

Դու հիմա կարկաչում ես, կանչում ես,
Երևում ես հրե օրերում.
Դու կարմի՛ր քայլերգի մի հնչյուն ես—
Կարկաչում ու կանչում ես հեռու...

*
* *

Բրո՛նզ ես, հո՛ւր ես,
Բրոնզե սո՛ւր ես,
Բրոնզե փա՛ռք ես,
Բրոնզե փա՛յլ—

Բայց դու զո՛ւր ես,
Ախ, իզո՛ւր ես
Կոտրում սուրս
Արևառ։

Ինչպես քաղցր
Մեր երգերը—
Մեր վերքերը
Հրաբույր—
Դու միշտ նո՛ր ես,
Ու հզո՛ր ես,
Ու բոսո՛ր ես,
Քաղցր քո՛ւյր...

Բրո՛նզ ես, հո՛ւր ես,
Բրոնզե սո՛ւր ես,
Բրոնզե փառք ես,
Բրոնզե փայլ—
Բայց ափսո՛ս որ
Դու հեռո՛ւ ես—
Դու ուրո՛ւ ես
Արևառ...

*
* *

Բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե հա՛բս,
Լուսավոր դու, հրաբիրտ ու հրավարս,
Բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե հա՛բս։

Դու վառվել ես օրերի մեջ ու հրում,
Դու վառվել ես կարմրավառ այս օրերում,
Դու վառել ես գալիքները ու հեռուն։

Եվ քո սիրտը—մի խարույկ է ճարճատուն,
Ու հրում քո այրվում ես հիմա դու,
Ու կարմիր են կրակները քո հատու։

Բայց գրկել է քեզ խավարը անսփոփ,
Արնոտել են կրակներդ հիմա որբ,
Օ, երկի՛ր իմ, բրոնզե քո՛ւյր իմ հրասուրբ։

Ու խավար է, շուրջդ ահ է ու մշուշ,
Արնոտել են կրակները քո անուշ—
Շուրջդ ա՛հ է, շուրջդ մա՛հ է ու մշուշ։

Քեզ խաչել են ու թքել են երեսիդ,
Օ, երկի՛ր իմ, հրադեմ ու հրասիրտ,—
Բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե հա՛րս իմ երազի։

Քեզ խաչել են ու թքել են երեսիդ,
Քրքջացել են լուսավոր քո երազին,
Բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե հա՛րս իմ երազի։

Ու վերքերը կարմրել են երեսիդ,
Արնոտել են շուշանները երազի,—
Բայց քո ճիչը Ամոքիչը կլսի։

Եվ հողմերը կճչան ու կշաչեն,
Եվ զենքերը մեր զվարթ կշառաչեն,
Որ հառնեն քո երազանքը լուսաճեմ։

Ու հրում, հողմերում մեր երազի
Կկորչեն քո դահիճները անբասիր,
Ոսոխները, ոսոխները քո զազիր։

Եվ նրանք, որ թքեցին քո երեսին—
Պետք է մահը ու դժոխը երազեն
Գայլերի ու ցիների հետ միասին։

Եվ նրանք, որ լրբացել են էլ հիմա
Անկումից քո, խարխափից քո ակամա—
Գտնելու են միայն մեզ ու միայն մահ։

Կհառնես դու, հրասիրտ ու հրավարս,
Կվառվես դու խնդասիրտ ու կխնդաս,
Օ, երկի՛ր իմ, բրոնզե քո՛ւյր իմ, բրոնզե հա՛րս։

*
* *

Կարմիր նժույգները թռչում են սրընթաց,
Կարմիր նժույգները՝ բաշերը փրփուր։
Վառվում, բոցկլտում են պայտերը նրանց,
Պայտերը սփռում են բոցկլտուք ու հուր։

Վառվե՞լ է երկիրը կարմիր կրակով.
Կարմիր նժույգները վառե՞լ են երկիրը,—
Թռչում են— հողմի՛ պես— անընդհատ շարքով,
Ամեն տեղ— երաշտ է, տաղնա՛պ է, գրգի՛ռ է։

Դոփում են պայտերը, կայծկլտում են վա՛ռ,
Կայծերը նետի՛ պես ճեղքում ե՛ն գալիքը.
Հողմի մեջ փլչում են շենքերը մարմար.
Ամեն տեղ հրդեհ է, ու հուրը— բարիք է։

Թռչո՛ւմ են, թռչո՛ւմ են անվերջ, սրընթաց
Կարմիր նժույգները, բաշերը— փրփուր,
Վառվում, հրդեհվում են հետքերը նրանց—
Կարմիր նժույգները հրդեհ են ու հուր...

*
* *

Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս
բախտազուրկ,
Ինչպես երկիրս ավերակ ու արնաներկ—
Մխում է սիրտս հիմա որբ, մխում է սիրտս
բախտազուրկ,
Մխում է սիրտս՝ ավերակ ու արնաներկ...

Եվ այս երգերը իմ կարմիր, ախ, այս երգերը իմ
կարմիր,
Որ երգում է անսփոփ սիրտս կրակուն—
Ինչպե՞ս պիտի արդյոք հնչեն, ախ, այս երգերը
իմ կարմիր—

Իմ ավերակ, իմ ո՞րբ երկրում...
Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս
ավերակ—

Այնպես էլ սիրտս—անսփոփ, այնպես էլ
սիրտս—անուրախ,

Վա՜ղ է դառնում սրտիս խորքում օրերի փա՜յլը
այս հրակ—

Ախ, սի՜րտ իմ՝ ո՞ր ու անսփոփ,— երկի՜ր
իմ՝ ո՞ր ու անուրախ...

*
* *

Վառվում ես՝ մարմա՜նդ, մարմա՜նդ,
Սրտիս մեջ դառնում ես հուր։
Վառվում ես մարմա՜նդ, մարմա՜նդ
Հրով քո՝ շարմաղ, մաքուր։

Անբախտ եմ, ո՞ր եմ ու խեղճ,
Ինչպես իմ երկիրը, որ—
Կորե՜լ է աշխարհի մեջ,
Լռե՜լ է՝ անտեր, անօր։—

Ես ինչպե՞ս կանչեմ հիմա,
Որ տաս ինձ շրթերդ կաս.—
Ախ, ինչպե՞ս կանչեմ հիմա,
Որ ձայնս լսես ու գաս...

*
* *

Վառվում է հեռու մի սեր
Սրտիս մեջ, դառնում մոխիր.
Մխում է հուզմունքը զուր—
Հարբե՜լ եմ բույրով հողի։—

Վառել եմ, տվիլ հրին
Բոլո՞ր այն երգերը, որ

Սրտիս մեջ փռել էին
Հոգնած սեր, հոգնած օրոր...

Երկունք կա սրտիս մեջ մի,—
Վառե՜լ եմ շենքերը բիլ.
Օրհնում եմ կյանքում հիմի
Ամե՜ն հուր, ամե՜ն մոխիր։

Հոգմի պես հնչեղ երգեր
Հնչում են սրտում իմ ջինջ.
Տեսնում եմ— մի նո՜ր երկիր
Բացվում է իմ դեմ քիչ-քիչ...

*
* *

Ելե՜լ են նորից...
Լսո՞ւմ ես երգերը հնչեղ...
Շիկնել է աշխարհը հրից։—
Պատրաստ ես, եթե քեզ կանչեն...

Աշխարհը— զգո՞ւմ ես,
Շեփո՜ր է. զնգում է անուշ...
Շիկնե՜լ է, շիկնե՜լ է հսկումս,
Եվ սիրտս— կրակ է և ուժ։

Զգում եմ՝ սրտիս մեջ
Ծփում է ալիք առ ալիք
Արյունը նրանց, որ ելել սեզ՝
Գնում են դեպ կյանքը գալիք...

Օ, ե՜րգ իմ, թռչո՜ւմ ես.
Դիտեմ, որ— ո՜ւր էլ որ թռչես-
Երգիս մեջ կզգա ջերմ ողջույնս
Ընկերը, կամ քո՜ւյրը հրկեզ...

— Օ, ե՜րգ իմ, օ, քո՜ւյր իմ հրկեզ...

1920
«ԷՄԱԼԵ ՊՐՈՖԻԼԸ ՁԵՐ» ՇԱՐՔԻՑ

(Գալանտ երգեր)

Արմենուհի Տիգրանյանին

ՍՈՆԵՏ

Ես ինչպե՞ս Ձեզ չսիրեմ։— Դուք արվեստ եք
ու հոգի։
Օ, կարելի՞ է արդյոք պրոֆիլը Ձեր չսիրել։
Ով երգ ունի իր սրտում ու սովոր է գեղեցկի՝
Նա պարտավոր է Ձեզ բյուր, հազա՛ր սոնետ
նվիրել։

Դուք այնպես մե՞ղմ եք խոսում։ Երբ Դուք կարդում
եք, տիկի՛ն,
Ձեր շրթունքները դունատ նմանվում են հասմիկի։
Եվ Ձեր աչքերը, գիտե՞ք, առանց ներքին կրակի,
Լուսաշող են՝ Ձեր կրծքի քարերի պես թանկագին։

Իսկ երբ ա՛յրանջ եմ դնում ես Ձեր թեթև քայլերին—
Թվում է ինձ, թե նոքա տրիոլետներ են երգում

Եվ այդ երգով հմայված՝ սիրտս տխրում է լռին։

Եվ Դուք գիտե՞ք, որ սիրուց հիվանդացած իմ
հոգում
Ես միշտ լսում եմ թեթև, թավ թրթիռներ շուրթակի—
Երբ համբուրում եմ ես Ձեր բարակ մատներն
ալակի։

*
* *

Էմալե պրոֆիլը Ձեր,
Ձեր հակինթ աչքերը բիլ
Ես այսօր կուզեմ երգել,
Որպես մի անհայտ դը Լիլ։
Արդյոք ո՞ր վարպետը մեծ
Հորինել է դեմքը Ձեր.
Արդյոք ո՞ր Ոգին տվեց
Ձեր դեմքին լուսե գծեր։
Կուզեի երգեր կապել
Եվ դողվել երգով անծիր
Էմալե պրոֆիլը Ձեր,
Ձեր հակինթ աչքերը բիլ։

*
* *

Երբ ես տեսնում եմ Ձեզ—
Անդարձ անցած մի սեր
Սկսում է իր հեզ
Հեքիաթները հյուսել։
Հիշում եմ ես հանկարծ
Կապույտ լապտեր գազի,
Որոնք վաղո՞ւց հանգած՝
Սպասում են լույսի։
Հիշում եմ ջինջ, մաքուր
Ակվակիներ կորած,
Կապույտ ծովի փրփուր՝
Փխրուն դիպսից փորած։
Ինչ-որ մի տեղ գնած
Ֆոլիանտի թերթեր—
Ու Միթենդից շինած
Դիակաթի վարդեր։

*
* *

Հստակ հոսում են իմ
Երգերը Ձեր մասին.
Տրվե՞լ եմ Ձեր բույրին,
Ձեր մեղմահոս լույսին։

Հստա՞կ, հստա՞կ է այս
Տխրությունը իմ նոր,
Որպես մանկան երազ,
Որպես մանկան օրոր։

Սրտիս վրա մի հեղ
Քնքշություն է իջել—
Թեթև՞, թեթև՞, որպես
Կապույտ վուալը Ձեր։

*
* *

Երբ ես տեսնում եմ դեմքը Ձեր
Եվ Ձեր մատները ապակի,
Եվ Ձեր դեմքին— լուսե գծեր
Ինչ-որ հեռու արեգակի—
Սիրտս զգում է ցավը նուրբ
Ձեր ուսերին նիրհող շալի,
Մետաքսի վիշտը անսփոփ,
Անբառ թախիծը ոսկալի,
Ու բաժակում նիրհող թեյի
Անմահ ձանձրույթը հորանջող—
Ու ջահազարդ սենյակների
Մարմանդ մորմոքը մեզ տանջող։

*
* *

Թղթից շինած ծաղիկների պես հիվանդոտ,
Թոքախտավոր ստեղների պես ոսկալի,
Փոշուց կերած նկարների նման անթով,
Որպես մեռած դեղեցկուհու մի հայելի—
Հոգիս տխրել է անբարբառ ու չգիտե
Ինչո՞ւ է օրն իրիկնանում ու լուսանում—
Երբ ոչ մի լույս դրսից ընկած ճառագայթի
Չի՞ ամոքում նրա կարոտը անանուն։

*
* *

Այսօր Ձեր մատները, տիկի՛ն,
Նման են հեռու մի հուշի.
Մաղում են կապույտ մի փոշի,
Այսօր Ձեր մատները, տիկի՛ն։
Հին բույրն եմ զգում ես կրկին,
Հին բույրը անցած, ուրիշի,—
Այսօր Ձեր մատները, տիկի՛ն,
Նման են հեռու մի հուշի...

*
* *

Շրշում են իմ շուրջը, շրշում
Շորեր ու շորեր կանացի.
Անցնում եմ մայթով փողոցի—
Շրշում են իմ շուրջը, շրշում։
Լսում եմ գարնան մի շրշյուն,
Կարծես թե անտառ գնացի—
Իսկ շուրջս շրշում են, շրշում
Շորեր ու շորեր կանացի...

*
* *

(ՏՐԻՈԼԵՏ ԻՆՏԻՄ)

Հիմա ամեն ինչ անիմաստ է,
Իզուր այդպես դու շիկնեցիր.
Ինչի՞դ է կյանքը, իր իմաստը,
Հիմա ամեն ինչ անիմա՞ստ է.
Թողել ենք նավը, ղեկը, լաստը,
Իսկ ծովը մո՞ւթ է ու անծիր.—
Հիմա ամե՛ն ինչ անիմաստ է—
Իզո՞ւր այդպես դու շիկնեցիր...

*
* *

Զրնգում է շուրջս աստղազարդ գիշերը
Ու պարում են շուրջս լուսազարդ հուշեր—
Այս գիշեր իմ սիրտը Ձեզ նորի՞ց հիշել է...
Զրնգում է շուրջս աստղազարդ գիշերը.
Օ, ինձ ի՞նչ, որ երգն իմ ու գինով իմ սերը
Շարժելու են ծաղրը ու ծիծաղը Ձեր—
Զրնգում է շուրջս աստղազարդ գիշերը
Ու պարում են շուրջս լուսազարդ հուշեր։

1920
«ՓՈՂՈՑԱՅԻՆ ՊԶՐՈՒՀՈՒՆ» ՇԱՐՔԻՑ
(ՅՈԹԸ ԲԱԼԼԱԴ)

ՇԱՄԻՐԱՄ

Նորից՝ անմար կարոտով գգվանքների ու հրի՝
Դու եկել ես տեսնելու քաղաքները Նաիրի։

Անհրապույր ու կանաչ քո աչքերը մեռելի
Ցանկությունով հրահրած՝ անհագ վառվել են էլի։

Դու անցնում ես ու տեսնում քաղաքները հիմա այն,
Որոնց տեղ խոտ էր բուսնում, երբ դեռ ապրում էր Արան։

Ա՛յլ է աշխարհը հիմա, ա՛յլ է հիմա Նաիրին.
Ո՛չ մի արքա էլ չկա, որ չտրվի քո հրին։

Մտի՛ր ակումբը հիմա, մտի՛ր թատրոնն ու կաֆեն՝
Հաղա՞ր արքա ու Արա կհանդիպեն ժպտադեմ։

Ո՛չ վեճ է էլ հարկավոր, ո՛չ պատերազմ մահառիթ—
Արքաների համար նոր— բավական է մի ժպիտ.—

Միայն ակնարկ մի թեթև— և կտրվեն նրանք քեզ,
Քո հմայիչ ու անթև տարփանքներին հրակեզ։—

Կգան մեկ-մեկ ու սիրով— ու կտանջես նրանց դու
Անհագ կրքի ու սիրո նիզակներով քո հատու։

Եվ այնպիսի՞ տարփանքներ նրանք կտան հիմա քեզ,
Որ կամոքվի քո հոգին կարոտանքից սիրակեզ։

... Բայց կլինի մի գիշեր— ու հմայքով նաիրյան
Կբարձրանա մշուշից մանկաժպիտ քո Արան։

Նորի՞ց հոգիդ անսփոփ կարոտանքով կվառվի—
Ու սարսափով մի անօգ՝ նորից կելնես դու կռվի։

Եվ որպեսզի չտրվի նա ախտաժետ քո հրին—
Ոտքի կելնե նրա հետ հազարամյա Նաիրին։

Եվ դաշտերում Նաիրի կպարտվի նորից նա,
Կնահանջե զորքը հետ, երկիրը քեզ կմնա։

Նա կմեռնի, որպես զոհ— բայց չե՛ս հաղթի դու նրան.
— Դա՛ռն է խորհուրդը սիրո, շամբշոտաշո՛ւրթ Շամիրամ...

ԱՆԿՈՒՄՆԵՐԻ ՍԱՐՍԱՓԻՑ

Ե՛ս եմ հիմա— մի պոետ. և իմ անունը— Չարենց—
Պիտի վառվի դարերում, պիտի լինի բա՛րձր ու մեծ։

Ես եկել եմ դարերից ու գնում եմ հաղթական
Դեպի դարերը նորից՝ դեպի վառվող Ապագան։

Ի՞նչ է ուզում ինձանից կապույտ մորմոքը հրի.
Ի՞նչ է ուզում քո հոգին, հազարամյա Նաիրի՛։

Եվ ինչո՞ւ ես դու փռել իմ դեմ քո բույրը բոլոր
Եվ իմ մորմոքը վառել թախիծներով ահավոր։

Եվ ինչո՞ւ է իմ առաջ ելել աղջիկը քո հին՝
Բորբ աչքերով իր կանաչ ու հմայքով իր դեղին։

Ուզում է մե՞րկ-լինեմ ես, ու անսփոփ, ու անօգ,
Որպես մեռել մի հրկեզ, որպես կորած մի մանուկ։

Եվ չարձակած ո՞չ մի նետ, անկումների սարսափից,
Ես փախչում եմ ահա հետ— ես նահանջում եմ նորից։

Եվ աչքերս, որոնց դեմ կանգնել է բիլ մի նկար—
Նորի՞ց հառնում են դեպի ամբոխները խելագար։

Նրանք ելել են նորից, նրանք շատ են, նրանք վառ,
Ու ավերե՞ն պիտի ձեր քաղաքները լուսնահար։

Ո՞չ մի հմայք էլ պիտի ձեր աշխարհը չունենա՝
Նրա տեղ մահ ու ավեր, վերք ու մոխիր կմնա։

Ու չի ելնի մոխիրից տխուր հմայքը ձեր տան,
Ու չի լինի էլ սիրո քաղցր ու կապույտ ձեր շղթան։

Ձեն վառվելու տափակեզ կանաչ աչքերը էլ ձեր,—
Նրանք մոխի՞ր կդառնան, չե՞ն բորբոքվի նրանք էլ։

Եվ չի՞ հիշի ո՞չ մի սիրտ, որ գարերի մեջ մի օր
Սիրտս եղել է գերի անկումներին ահավոր։

Որ եղել է դարերում մի սարսափի նման կին,
Որը նետել է հեռու աստղանկար իմ հոգին։

Նրանք կգան, կավերեն, և չի մնա էլ ոչինչ՝
Ո՞չ դրախտը ձեր գեհեն, ո՞չ թախիծը ձեր դյութիչ։

Եվ չի լսի ո՞չ մի կին իմ անկումի մասին այս,
Որ դարձրեց իմ հոգին թարախակալ մի երազ։

Եվ չի մատնի ո՞չ մի բառ շնչում իմ տոթ երգերի,
Որ եղել եմ ես տակար, որ եղել եմ ես գերի...

Ես պոետ եմ— և հիմա իմ վառ երգերը պիտի
Դեպի գալի՞քը թռչեն սլաքների պես նետի։

Ես եկել եմ դարերից ու գնում եմ հաղթական
Դեպի դարերը նորից, դեպի կարմիր ապագան...

ՎԱՐՍԱՎԻՐԻ ՀՄԱՅՔՆԵՐ

Վարսավիրի մոտ հիմա նա լուռ նստել է էլի.
Դեմը փայլում է հսկա արծաթափայլ հայելին։

Դեմը նստել է մի կին ու աչքերով մեռելի
Նայում է պաղ աչքերին՝ անվերջ, էլի ու էլի։

Թափել է վար, ճակատին գեղին մազերը հիմա
Ու ակնարկում է մթին տագնապներով ակամա։

Այնպես օտա՞ր է, այնպես անսիրելի ու հեռու.
Ի՞նչ են գտել նրա մեջ գուրգուրելու, սիրելու։

Տխո՞ւր, տխո՞ւր, որպես մահ, ակնարկում է հայելին.
Սանրվում է սակայն նա, դեմքը ժպտում է էլի։

Ու կանգնել է իրեն մոտ—մոտի՞կ, մոտի՞կ որպես սեր—
Մի բարեկամ անծանոթ, հրաշագործ մի ընկեր։

Դեմքին տաղտուկ մի ժպիտ, ձեռքին սրվակ ու փոշի՝
Թափում է նո՞ւրբ հմայքներ, ծանավող բույրեր ուրիշի։

Հարազատ է այնքան այդ գրնգունը մկրատի.
Ի՞նչ է ուզում սակայն ձեր, շար ժամացույցը պատի։

Նա ինչո՞ւ է աղմկում, որպես տաղտուկ թշնամի
Սուր զարկերով իր բեկուն՝ հարվածների պես գամի։

... Մոդ-վարսավիրը ոտքաչն թափում է նուրբ հմայքներ—
Ու էլ դեմքով դյութական՝ ահա ելնում է նա վեր։

Ո՞ւմ ինչ, որ նա էլ հիմա ինքն իրեն չի ճանաչի—
Ու ժպիտով ակամա պիտի գերի ու խաչի։

Ես պոետ եմ ու գիտեմ, որ աշխարհում այս նասեմ,
Ճշմարիտ է միայն այդ ամոքող սուտը լուսե։—

Սուրբ է կյանքում միայն դա՞— ամոքող փայլը ստի.
— Ծ, ոչիրուհի՞, հավատա՞ երազներին պոետի...

ՇԱՆ ԿԱՐՈՏՆԵՐ

Գատուհանիս տակ հիմա որբ մղկտում է մի շուն.
Սիրտս լսում է նրան— և սիրտս քեզ է հիշում։

Նա տխուր է ու մենակ, ոչ-ոք չունի հիմա նա—
Ու գանգատը դժնդակ լուսինը չի՛ իմանա։

Դուրսը ամպ է ու մշուշ, անաստղ երկինք ու գիշեր.
Մղկտում է այսքան ուշ, գանգատվում է առանց սեր։

Հեռուն թարթում է տարտամ գազե լապտերը բեկուն.
Ինչ շո՛ւտ մարեց այս անգամ արևավառ երեկոն...

Ինչ շո՛ւտ մարեց ցերեկի զվարթ աղմուկը, ու մութ
Գիշերն իջավ՝ անհոգի, անմխիթար ու անգութ։

Ցերեկը լա՛վ է այնքան, ցերեկը խինդ է բերում—
Փողոցների խրախճան, անմխիթար դեգերում։

Լոհանոցի դռան մոտ, կամ խանութի մոտ հացի—
Սպասումներ ու ամոթ՝ խո՛ւլ տագնապներ փողոցի։

Բայց ցերեկները չունեն մղկտուքը գիշերվա
Ու հոգու ցավը անհուն ցերեկը չի՛ երևա։

Մղկտում է հիմա նա, սիրտը գգվանք է ուզում,
Սիրտը ճչում է հիմա, մղկտում է անլեզու—

Բայց սիրտ չունեմ էլ քո խեղճ մղկտանքը լսելու.
— Քնի՛ր, քնի՛ր, եղիր խե՛ղճ, անոգնական ու հլու։

Չի ուղարկի ո՛չ մի փայլ մեզ լուսինը հիմա էլ—
— Շո՛ւն, կարոտի՛ իմ եզբայր, դառնաթախի՛ծ իմ ընկեր...

ԽԵՂԿԱՏԱԿ

Ու գինու պես քո ճոգին
Հոդ կթափվի նրանց մութ
Ու մանանոտ հատակին:
«Խրախճանք», բալլադ 1-ին

Կուզե՞ք—երգեմ՝
Ձեզ համար,
Հիմա։
Այնպես երգեմ, որ զգաք—
Ի՛նչ որ կուզեք, կուզեք— սեր,
Կուզեք— մահ։
Ես երգում եմ, որ հուզեմ.
Տալիս եմ երգս լուսե
Ո՛ւմ որ կուզեք. թեկուզ նա
Լինի պոռնիկը վերջին.
Դուր չի՞ գալիս ձեզ միթե
Այս քնքշությունը—
Արջի։

Ես երգում եմ ակամա։
Ի՛նչ էլ երգեմ. կուզեք— սեր,
Կուզեք— մահ։—
Բայց չե՛մ կեղծում ես երբեք։
Լսե՛ք երգերս—
Ահա—
Լսեք երգերս, բայց թե—
Չհարբեք։
Ես չեմ ուզում, որ հարբեք.
Լավ չէ, գիտե՞ք, երբ որ մի
Անհո՛ւն կարոտ դառնում է քաղցր
Քամի...

Ձե՞ք հասկանում։
Իզո՛ւր, իզո՛ւր։ Դուք պե՛տք է որ
Հասկանաք։
Թուչե՞լ է պետք. սակայն ո՞ւր։—

Չե՞ք հասկանում. ես կուզեմ,
Որ իմ երգերը
Լուսե—
Ձեզ թուղթ թվան ու թանաք։
Չե՞ք հասկանում... —Դուք պե՞տք է որ
Հասկանաք։

Ուրիշ— ոչինչ։
Ու հիմա—
Նո՛ւյնն է նորից. ես երգում եմ, որ հուզեմ։
Ես երգում եմ— ակամա։
Ի՞նչ էլ երգեմ՝ կուզեք— սեր,
Կուզեք— մահ։

Ես— խիզկատակ եմ հիմա...

1920—1921
ՏԱՂԱՐԱՆ

Աբգինին

Հիղրս խոսի՛, մի՛ կենա խրո

Նազանք արավ, Սայաթ-Նովի սիրտը լցրեց միրգ ու մուրազ,
Կանգնեց-մնաց՝ դեմքից քաշած օսկեկարած խասը ձեռին։

Նայե՛ց-նայեց Սայաթ-Նովին, ամպի նման տխուր մնաց,
Ասավ՝ Զարե՛նց, էս գոզալից սրտիս մե հին մրմուռ մնաց.
Սիրտս վառվեց, մոխիր դարձավ՝ ինքը կրակ ու հուր մնաց.—
Դո՛ւ էլ նրա գովքը արա, որ գա՝ օսկե մակը ձեռին։

Էսպես ասավ Սայաթ-Նովին ու վեր կացավ, որպես գիշեր,
Գնաց նորից տխուր ու լուռ՝ սիրտը հազար մուրազ ու սեր.
Երազն անցավ— դո՛ւ մնացիր, պատկերքը քո մնաց լուսե,
Մեկ էլ իմ խեղճ սիրտը մնաց՝ Սայաթ-Նովի սազը ձեռին։

*
* *

Աշուղ Սայաթ-Նովի նման՝ ես երգ ու տաղ պիտի ասեմ,
Երգեմ պիտի գիշեր-ցերեկ— ու սրտի խաղ պիտի ասեմ,
Եվ էն սրտին, որ իր խորքում սիրո երգեր ունի ու սեր—
Ես էն սրտին դրախտային մրգերի բաղ պիտի ասեմ։

Աստղ ու նկար շորեր հագած՝ դեմս ելար երազի պես,
Էշիդ՝ կրակ՝ սիրտս էրեց անհասանելի մուրազի պես,
Անուշ հոտով սիրտս լցրիր— Վարդստանի, Շիրազի պես,—
Ինչ էլ ըլի էշիդ, գոզալ,— երգս ուրախ պիտի ասեմ։

Աշխարհը մե բաղ է, գոզալ,— նստել ես դու բաղի մեջը,
Վարդ ես բացված՝ առավոտվա դրախտային շաղի մեջը,
Ծամ ես դարձել տեսքով քո սուրբ՝ Հավլաբարի թաղի մեջը—
Սրտիս անուշ արտասուքին երկնային շա՛ղ պիտի ասե՛մ։

Ինքան ըլի մե-մե անգամ տեսքդ տեսնեմ՝ վարդ ես, գոզալ,
Էս փուչ կյանքում սրտիս տված անմահական զարդ ես, գոզալ,
Էնպես արա, որ քեզ չասեմ՝ դո՛ւ էլ ինձ պես մարդ ես, գոզալ,—
Թե լի մնա սիրտս քեզնով՝ ափսոս ու ախ պիտի ասեմ։

*
* *

Ես մե անգին գոզալ տեսա—Գյուրջստանի քաղաքումը,—
Վզին՝ վարդեր ու խալ տեսա—Գյուրջստանի քաղաքումը։

Կանգնել էր լեն քուչի մեջը, հագին ատլաս ու խաս ուներ,
Գլխին ոսկի ու շալ տեսա—Գյուրջստանի քաղաքումը։

Արեգակի շողքն էր ընկել վրեն ոսկե չիքիլի պես՝
Շրթները խաս ու ա՛լ տեսա—Գյուրջստանի քաղաքումը։

Անցա, կամաց աչքով արի, ուզի ասեմ՝ ջա՛ն ես, էլի՛,—
Դեմս կեցած մե սա՛ր տեսա—Գյուրջստանի քաղաքումը։

Հիմի տխուր երգ եմ ասում, էշիս կրակ ըլի ասես՝
Անմահական մե յա՛ր տեսա—Գյուրջստանի քաղաքումը։

*
* *

Կուզեմ հիմի փչե զուռնեն— հարբած ըլիմ մինչև էգուց.
Ամեն մարդու ընկեր ըլիմ— ու բաց ըլիմ մինչև էգուց։

Ֆայտոն նստած՝ անցնեմ քուչով, պատուհանից վրես նայես՝
Էշիդ անքուն սիրտս ընկնի— ու լաց ըլիմ մինչև էգուց։

Խելքս քամուն, հովին տված՝ երթամ ընկնեմ դուքան ու բաղ՝
Ընկերների սուփրին գինի ու հա՛ց ըլիմ մինչև էգուց։

Երթամ— ուրիշ գոզալների գիրկը դնեմ գլուխս տաք՝
Քո էդ անուշ, ազի՛զ տեսքով հարբած ըլիմ մինչև էգուց։

*
* *

Ես մե հարբած դուքանդար եմ— դուքանիս մեջ բան չմնաց,
Ամենքի հետ սեղան նստա՝ սուլթան, վեզիր, խան չմնաց,
Ամենայն տեղ գովքդ արի, տաղեր ասի՛ դրախտային—
Էլ ի՞նչ ասեմ սիրեկանին՝ գոզալ, հոգի, ջա՛ն չմնաց։

Թողի ամենն, ինչ ունեի՝ կյանքս դարձավ հոլի նման,
Էշխոդ հլավ, ճամփես կտրեց՝ Հնդստանի ծովի նման,
Հարբած՝ խալխի նոքար դարձա աշուղ Սայաթ-Նովի նման,
Կարոտ կեցա հրամանիդ՝ ուրիշ հրաման չմնաց։

Ես մեկ հարբած դուքանդար եմ— դուքանիս մեջ բան չմնաց,
Էլ ի՞նչ ասեմ սիրեկանին— գոզալ, հոգի, ջա՜ն չմնաց։

* * *

Էլի գարուն կգա, կբացվի վարդը,
Սիրեկանը էլի յարին կմնա։
Կփոխվին տարիքը, կփոխվի մարդը,
Բլբուլի երգն էլի՛ սարին կմնա։

Ուրիշ բլբուլ կգա կմտնի բաղը,
Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը,
Ինչ որ ե՛ս չեմ ասե— նա՛ կասե վաղը.
Օրերը ծուխ կելին, տարին կմնա։

Հազար վարդ կբացվի աշխարհի մեջը,
Հազար աչք կթացվի աշխարհի մեջը,
Հազար սիրտ կխոցվի աշխարհի մեջը—
Էշիկը կրակ կելի՝ արին կմնա։

Ուրիշ սրտի համար կհալվի խունկը,
Կբացվի շուշանը, վարդերի տունկը.
Գոզալը լաց կելի, կընկնի աչքունքը—
Գերեզմանիս մարմար քարին կմնա։

* * *

Ամեն տեսակ երգ երգեցի— ամենից լավ տաղն է էլի.
Սայաթ-Նովի դրախտային, անմահական խա՛ղն է էլի։

Ինչքան էլ լեն դուքաններում ռանգ-ռանգ մրգեր ըլին շարած՝
Անմահական մրգերի տեղ— շահնշահի բաղն է էլի։

Բախչի միջի ծաղիկները ինչքան էլ լավ ջրով անես՝
Ծաղիկների ջուրը ուզած—առավոտվա շաղն է էլի։

Գնա՛ կուզես Ֆռանգստան, ամենամեծ քուչեքը տես՝
Սրտիդ ուզած տեղը միակ— սիրեկանի թաղն է էլի։

Վա՜յ քեզ, Զարե՛նց, լա՛վ իմացի, ականջ արա սիրեկանին՝
Ամեն բանից լավ ու անուշ սիրեկանի դաղն է էլի։

* * *

Երբ էս հին աշխարհը մտա ես տաղով, սազով-քամանչով՝
Ի՞նչ պիտի անե աշխարհում էս անմիտ-անճարը, ասին։

Սակայն երբ խալխի քեֆերին ես անուշ տաղերս ասի՝
Ամառվա մրգերի նման անո՞ւշ է քո բառը, ասին։

Բայց խալխի անսիրտ քեֆերին ես տխուր, մենակ մնացի,
Ուզեցի Թողնեմ-հեռանամ՝ հպարտ է ու շար է, ասին։

Եվ սրտիս ցավից հուսահատ ես մեկ թաս օղի խմեցի,—
Զարենցը ցնդած-գինեմոլ, հարբեցող-հիմար է, ասին։

Ու ձմռան բուքերի միջին ես բոբիկ ու մերկ մնացի.
Դուրսը ցուրտ, ձմեռ է, սակայն հոդուդ մեջ ամառ է, ասին։

Ասի թե՝ մա՛րդ եք ախար դուք, չե՞ք տեսնում մարմինս ծվատ.
Զարենցի հոգին տաղերում աննկուն, համառ է, ասին։

Խնդացին, քրքջացին միայն, որ այդպես մնացել եմ մերկ,—
Դարերի հիացմունքը վսեմ տաղերիդ համար է, ասին։

*
* *

Աշխարհիս մեջ ես էլ մեկ օր կանցնեմ անդարձ ու կերթամ,
Ետ չեմ նայի, չեմ պահանջի ես փառք ու վարձ— ու կերթամ։

Աշուղ Սայաթ-Նովի նման ես էն գլխեն խմացա,
Որ աշխարհում փուչ է ամեն երազ ու լաց— ու կերթամ։

Էն էլ, որ ես իմ վառ սրտով ու կարոտով սիրեցի—
Քամուն կտամ, կմոռանամ ամեն մի հարց— ու կերթամ։

Ու գոզալի պատկերքը վառ, դեմքը մախմուր ու անուշ
Կմոռանամ... կառնեմ խոնավ, հողե մեկ բարձ ու կերթամ։

Կյանքիս նման հեռո՛ւ մարդիկ, անանուն ու անծանոթ,
Չե՛ղ կթողնեմ երգերս այս՝ կյանքս երազ— ու կերթամ։

*
* *

(ՀԱՅԱՍՏԱՆԻՆ)

Հազար ու մեկ վերք ես տեսել— էլի՛ կտեսնես,
Հազար խալխի ձեռք ես տեսել— էլի՛ կտեսնես։

Աշնան քաղած արտի նման՝ հազա՛ր զոհերի
Չհավաքած բե՛ռք ես տեսել— էլի՛ կտեսնես։

Գլուխդ չոր քամուն տված պանդուխտի նման
Հազա՛ր տարվա հերք ես տեսել— էլի՛ կտեսնես։

Նարեկացի, Շնորհալի, Նաղաշ Հովնաթան—
Ինչքա՛ն հանճար, խելք ես տեսել— էլի՛ կտեսնես։

Քո Չարենցին լեզու տվող երկի՛ր Հայաստան,
Հազա՛ր ու մեկ ե՛րգ ես տեսել— էլի՛ կտեսնես։

*
* *

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բարն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման,
Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն սա՛րն եմ սիրում։

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում։

Ուր է՛լ լինեմ— չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՛մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն աբյունաքամ վերքերը մեր—
Էլի՛ ես որբ ու արնավառ իմ Հայաստան-յա՛րն եմ սիրում։

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում։

1921
ՈՒԹՆՅԱԿՆԵՐ ԱՐԵՎԻՆ

*
* *

Նետե՞լ է երկաթե մի ձեռք
Դեպի վեր ոսկի մի ծնծղա.
Բռնկվել է ոսկի ծնծղան,
Դաբձել է արնածոր մի վերք։
Վառվել է երկնքում հակինթ
Ու ծորում է արյունը յուր կեղ,—
Զոհվե՞լ է երկնքում վճիռ.—
Ինչքան լա՞վ է հատնումը հրկեզ...

*
* *

Աղջկա կոնքերի նման
Երազուն, կիզուն ու հասուն՝
Վառվում է արևի ծնծղան
Աշխարհի անհո՞ւն երազում։
Դաշտերից նժույգներ են վազում,
Վրնջում են կրքոտ ու վառ,—
Աղջիկները շար խոսք են ասում—
Ու խնդում է արևը խելառ...

*
* *

Ինչ որ լավ է՝ վառվում է ու վառում,
Ինչ որ լավ է՝ միշտ վառ կմնա.

Այս արև, այս վառ աշխարհում
Քանի կաս՝ վառվի՛ր ու գնա՛։
Մոխրացի՛ր արևի հրում,
Արևից թող ոչինչ չմնա,—
Այս արև, այս վառ աշխարհում
Քանի կաս՝ վառվի՛ր ու գնա՛։

*
* *

Տեսնում եմ՝ արևի վրա
Վրնջում են ձիեր ոսկենալ,
Մերկացել են աղջիկները խելառ,
Ու ծծում են շրթերը նրա։
Բորբոքվել են շրթերը շոգ,
Համբուրում, բուրում են կեզ,
Վախենում են— մնան անշող.—
— Ախ, այնպե՞ս ուզում եմ— քեզ։

*
* *

Բորբ մի աղջիկ զարկեց ձեռքով իր բոց կոնքին
Ու վերևից խնդաց զվարթ ու ոսկեձայն.—
Հազար վարդեր կրակվեցին շուրջը, կողքին,
Հազա՞ր խաշխաշ, ու գարնան օր, ու ծիածան։
Քաղցր ծփաց հեշտանք ու տապ, թույն ու գրգիռ,
Դաշտերը խաս ծաղիկներով ծփծփացին.—
Աշխարհը— ալ, նարնջագույն, վառքը— կարմիր,
Ողջը— հրա՞շք ու խնդությո՞ւն արևնածին...

1911 — 1922
ԽԱՌՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*
* *

Գիշերը ամբողջ հիվանդ, խելագար,
Ես երազեցի արևի մասին։
Շուրջս ո՛չ մի ձայն ու շշուկ չկար—
Գունատ էր շուրջս՝ գիշեր ու լուսին։

Ես երազեցի արևի ոսկին,
Տենչացի նրա հրաշքը խնդուն՝
Ուզեցի սիրել շշուկն իմաստուն
Արևանման, արնավառ խոսքի,—

Բայց շուրջս այնպես գունատ էր, տկար—
Խոսքեր չկային ու արև չկար...

ՇԱՄԻՐԱՄ

Իրիկնային փողոցում ես տեսա նրան։
Նա— սևաչյա պչրուհի, գուցե—Շամիրամ։

Եվ ինձ տվեց հինավուրց հուռութները նա.
Երկու համբույր—փողոցում, մայթերի վրա։

Եվ հմայեց ու տարավ նա դղյակը հին։
Լապտերները ժպտալով ճանապարհ դրին։

Եվ, չնայած որ անթիվ դարեր են անցել՝
Նո՛ւյնն է երազը նրա, լոկ մարմինն է— ծեր։

Նո՛ւյնն է խոսքը, կարծես նոր տրվող աղջկա,—
Միայն մարած աչքերում էլ հրդեհ չկա։

*
* *

Կան անտես հյուրեր։ Գալիս են նրանք
Անխոս ու անձայն, լռության ծոցում։
Գալիս են, ապրում ու անցնում նրանք՝
Ոչ դուռ ենք բացում և ոչ դուռ դոցում։

Ո՛չ անուն ունեն, ո՛չ ստվեր, ո՛չ ձայն։
Գալիս են, ապրում և անցնում են լուռ։
Եվ ինչո՞ւ եկան, և ինչո՞ւ անցան—
Մենք չենք իմանում աշխարհում անդուռ։

Միայն մի անծայր ու խոր տխրություն
Երբ փռում է իր թևն ամենուրեք—
Ցգում ենք հանկարծ կարոտով անհուն,
Որ մեկը անդարձ անցել է երեկ...

*
* *

Երգում է քաղաքն իր երգն առօրյա,
Իսկ ես— մտածկոտ, տրտում ու լռին—
Կանգնել եմ տխա կամուրջի վրա
Եվ նայում եմ հորդ, հեռացող ջրին։
Նայում եմ տարված, մոռացված, անթարթ։
Վազում են, վազում ջրերը անվերջ։
Փրփուրի միջից ահա մի նայադ
Ինձ ձեռքով արավ և իր մոտ կանչեց։

Որպես մանկական կապույտ երազում—
Խառնվեց ահա ճերմակ փրփուրին.
Եվ թվում է, թե կամուրջն է վազում,
Որ հասնի անդարձ հեռացող ջրին...

*
* *

Գիտեմ, որ մի օր կմեռնեմ ես էլ
Ու կվերջանա իմ կյանքի ուղին։
Մոռացած բոլոր երգերս լուսե՝
Կհանձնեն ինձ էլ արգավանդ հողին։

Արևը նորից անհոգ կխնդա՝
Փռելով չորս դին լուսավոր գանձեր։
Եվ մայրս անգամ էլ չի՛ հավատա,
Որ եղել եմ ես, ապրել ու անցել։

Եվ գիրեզմանս երբ փակվի ինձ հետ—
Մեղքս կմոռնան, սիրո խոսք կասեն,—
Եվ անցած կյանքս կդառնա լեգենդ՝
Օրերիս նման անդարձ ու վսեմ...

ՊՈԵՏ

Ինձ համար չարը դառնում է բարի,
Անգույն առօրյան— մոգական երազ.
Սիրում եմ բոլոր գույներն աշխարհի՝
Երկնային հեռուն ու աստղերն անհաս։

Եվ շրջիկների երգերը անհոգ,
Վազքը կառքերի, փողոցի ուղին—
Դառնում են հանկարծ հեռավոր ցնորք,
Որ երազել է պոետի հոգին։

Երբ համբուրում եմ շրթերը կնոջ,
Շրթեր, որ հազար մարդ է համբուրել—
Հավատում եմ ես, որ նրանք քրոջ
Շրթունքներ են կույս— ու մաքուր են դեռ։

Ո՞վ կհասկանա պոետի ուղին...
Երբ փողոցներում թափառում է նա—
Նրա թևավոր, աստղային հոգին
Ճախրում է հեռու աստղերի վրա։

Ո՞վ կհասկանա, թե ինչո՞ւ է նա
Համբուրում նեխած շրթերը կնոջ,
Երբ նույն վայրկյանին աղոթում է նա
Ստվերի առաջ հեռավոր քրոջ։

Ո՞վ նրա տրտում երգը կլսի,
Երգը խելագար, կամ ցնդած մարդու։
Բայց նա մեռնելիս կժպտա, կասի.
— Օրհնությո՛ւն քեզ, կյանք։ Հրա՜շք էիր դո՛ւ...

ԳԱՏԱՀԱԿԱՆ ԱՆՑՈՐԴԻՆ

Մենք երկո՛ւսս էլ, մենք երկո՛ւսս էլ անվերադարձ աշխարհում
Ապրում ենք, կանք, գնում ենք— ո՞ւր, միևնո՛ւյնն է մեր հեռուն։

Կանգնիր, անցորդ։ Կանգնիր։ Նայենք։ Նայենք իրար— գուցե՝ մենք
Հանկարծ ժպտանք՝ չճանաչված մի բայեկամ ճանաչենք։

Կանգնի՛ր, կանգնի՛ր. ո՞ւր ես վազում, ո՞ւր ես գնում դու արագ,
Աչքերիս մեջ գուցե՝ գտնես ոսկե՛ժպիտ մի կրակ։

Դու ուրախ չե՞ս, որ ապրում ենք— ու հանգիպել ենք իրար.
Ո՞ւր ես անցնում անվերադարձ, որպես անգարձ ճանապարհ...

Ե՛ս էլ կանցնեմ— տրտում, մենակ,— ու կգնամ իմ անծայր
Երազ-ճամփան, որով դու էլ այս իրիկուն կո՛ւյր անցար։

Դու կույր անցար, չնայեցիր ու հեռացար մշուշում.
Բայց-ես երկա՞ր քո անծանոթ, օտար դեմքը կհիշեմ։

Կհիշեմ, որ դեգերումիս ճանապարհին, որպես հուշ,
Մեկը անցավ. իրիկուն էր. իրիկուն էր ու մշուշ...

ԱՐՏԻՍՏԸ

(Պ. Ադամյանի հիշատակին)

«Իմ հոգին—որպես լույսերի տաճար,
Իմ հոգին— որպես երազի խորան.
Բոցերի նման թե Բարի, թե Չար
Խանձեցի հոգիս— Արվեստի՜ համար...

Իմ արքայական երակների մեջ
Հոսում էր արյունն Համլետի, Լիրի.
Ես— հազարանուն, ես— թռիչք ու վեհ,
Ես— աստվածային խարո՜ւյկ կրքերի...

Երբ տրտմությունս էր մի գիշեր հոսում,
Երևաց տեսիլն Արվեստի՜— իմ Հոր...
Եվ փնտրումների լաբիրինթոսում
Հեծկլտա՜ց հոգիս՝ երկընքի՜ պես խոր...

Խելագարության մղձավանջի մեջ
Ես արքայական Մավրի դղյակում
Խանձեցի՜ հոգիս, որի հուրն անշեջ
Եղավ ինձ համար, մարդի՜կ, ամոքո՜ւմ...

Եվ ես խելագա՜ր, երկնեցի՜ միայն,
Դեդեմոնային— Արվեստի՜ն ծարավ...
— Ամբոխը, սակայն Յագոյի նման,
Իմ խաչվա՜ծ հոգին գերեզմա՜ն տարավ»...

ՀԵՌԱՑՈՒՄԻ ԽՈՍՔԵՐ

Իմ աչքերի մեջ այնքա՜ն կրակներ եմ մարել ես
Եվ հոգուս մեջ, հուսահատ, այնքա՜ն աստղեր եմ մարել։
Կյանքս, որ հուշ է դարձել, հեռանալիս չանիծես.
Կյանքս կանցնի, կմարի— բայց երգս կա, կապրի դեռ։

Կյանքս կանցնի, կմարի, որպես կրակ ճահիճում՝
Աննպատակ ու տարտամ, անմխիթար ու անհույս։
Երգերիս մեջ— դու գիտե՞ս— ինձ ոչ-ոք չի ճանաչում
Կարծես ուրի՜շն է երգում կապույտ կարոտը հոգուս։

Հավիտյան գոց ու անխոս՝ թափառել եմ ու լռել.
Ոչ-ոք, ոչ-ո՜ք չգիտե՝ արդյոք ի՞նչ է կյանքս, ես.
Միայն գիտեն, որ կյանքում ինչ-որ երգեր եմ գրել,
Ինչպես գիտեմ, որ դու կաս, որ սիրում է մեկը քեզ։

Ես երգել եմ քո հոգին, քո ժպիտը լուսավոր,
Քո աչքերի, քո դեմքի տխրությունը սրբազան.
Կյանքս թողած անհունում— ես երգել եմ սերը խոր
Ու կարոտը թևերիս, որ երբե՜ք քեզ չհասան...

Մոռենում է, քո՜ւյր իմ, ա՜խ, իրիկունս միգամած.
Ես ի՞նչ անեմ, որ հոգիս չհեծկլտա կարոտից.
Ինչպե՞ս, ինչպե՞ս ընդունեմ կյանքիս բաժակը քամած.
Որ ձեռքերս չդողան, որ օրերս ներե՜ն ինձ։

Գուցե՜ հանկարծ կասկածեմ, չհավատամ ինքս, ես,
Ու սուտ թվա իմ հոգուն քո կարոտը սրբազան...
— Ի՜նչ էլ լինի, քո՜ւյր իմ, քո՜ւյր, հեռանալիս չանիծե՜ս
Խե՜ղճ կարոտը թևերիս, որ երբե՜ք քեզ չհասան...

ՏԱՂ ԱՆԶՆԱԿԱՆ

Թողած Կարսում, գետի ափին, տունս՝ շինված անտաշ քարով,
Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով
Եվ Կարինե Քոթանճյանին անգամ չասած մնաս բարով—
Ա՜նց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով։

Անց եմ կենում. շուրջս— մարդիկ, շուրջս դեմքեր հազա՜ր-հազա՜ր.
Շուրջս աշխարհն է աղմկում, մարդկային կյանքն անհավասար.
Եվ ո՞վ կասի՝ ինչո՞ւ ես դու, և ո՞վ կասի, թե ո՞ւր հասար,—
Դեմքերը, ախ, բութ են այնպես՝ կարծես շինված են տապարով։

Գորշ, տաղտկալի ու խելագար երգ է կարծես այս կյանքը մի.
Ինչ-որ մեկի սրտում բացված— վերք է կարծես այս կյանքը մի.
Եվ ո՞ւմ համար— էլ ո՞ւմ համար կարոտակեզ երգե հիմի
Սիրտս՝ լցված տարիների սեղմ արճիճով ու կապարով։

Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի—
Ես— հաշմանդամ ու խելագար ու հավիտյա՜ն վտարանդի՝
Դեպի երկի՜նք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի—
Իմ բա՜րձր, հին ու աստղային երազների ճանապարհով...

Ու էլ ամե՜ն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.
Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ ա՜չքս է հեռուն.
Թե Կարինե Քոթանճյանին տեսնեք Կարսի փողոցներում—
Ասե՛ք նրան՝ Չարենցն ասավ— մնաս բարո՜վ, մնաս բարո՜վ...

*

* *

Ոսկեփրփուր, ոսկեպուրպուր,
Փռեմ չորս դին, թափեմ բուռ-բուռ,
Երգերը իմ հրահրան.
Երգով խնդամ թող բոլորին,
Որ մեռնելիս զգամ, որ իմ
Օրերն անցան ու չկորան։

ԱՇՆԱՆԱՅԻՆ

1

Արևն արծաթել է ամպերը թիթեղ.
Լույսից սփրթնել են ամպերը ոսկե-ոսկե։

Դանդաղ բարձրանում է արևն արծաթին—
Ծառի պես հալչում է երկինքը կաթին։

Ու պաղ հիացքով մի, կարծես թե իդուր,
Սահում են լույսերը սարսուռ առ սարսուռ։

2

Աշունը թափում է թերթերս հիմա,
Ու թոնը թրջում է արտերս հիմա։

Օ, սի՜րտ իմ, դու լուռ ես ու երգդ տխո՜ւր է.
Ինչո՜ր իմ հույսերը ջարդել ես հիմա։

Գարնա՜ն պես, ծաղկանց պես անցել է քո հուրը,
Ու հովը քաղում է վարդերս հիմա...

ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Դոփո՜ւմ են, դոփո՜ւմ են, դոփո՜ւմ են ձիերը,
Մթի մեջ դոփում են, խփում են պայտերը,
Պայտերը խփում են, խփում են հողին.—
Անծա՜յր է գիշերը, անհայտ է ուղին։
Գնո՜ւմ են, գնո՜ւմ են, գնո՜ւմ են ձիերը,
Մոտիկ են, հեռու են, դոփում են պայտերը,
Պայտերը դոփում են քունքի՜ս մեջ հիմա.—
Անհա՜յտ է աշխարհը՝ անցնում է ու մահ...

*

* *

Աղմկում է իմ սրտում ամեն գիշեր մի կարոտ,
Աղմկում է որպես խուլ ու հեռավոր մի քամի,
Աղմկում է մինչև լույս, գանգատվում է վարանոտ
Ու ժամերն է հաշվում իմ, վայրկյանները մեկ առ մի։

Գիշերի մեջ լռանիստ աղմկում է անորոշ,
Խո՜ւլ ծփում է իմ սրտում, և ուղեղում, և հոգում.

Ու թվում է, թե նրա երգը ուրի՜շ, մի՜ ուրի՜շ
Աշխարհից է մոտենում հեռուներին իմ հոգու։

Զարթնում է մեջս հանկարծ հալարամյա մի քաոս,
Ծփում է հորդ, տարուբեր, օվկիանի պես վարար,
Ժամանակի պես անդեմ, մշտահոլով, մշտահոս,
Զառանցանքի պես շփոթ, ու անհասատատ, ու խավար։

Հնչում է մերթ, որպես երդ անծայրածիր մշուշում,
Հիվանդ մանկան պես անօգ՝ մերթ գանգատվում է կամաց,
Ու ոռնում է մերթ տխուր, հուսակտուր, որպես շուն՝
Լուռ, լուսնկա ու անդորր գիշերի մեջ միգամած։

Եվ լսում է իմ հոգին երգը այդ մութ քաոսի,
Շփոթ աղմուկը նրա, ոռնոցները կատաղի.—
Եվ ես գիտեմ, որ այդպես պիտի իմ կյանքը հուսի
Մինչև մարի հավերժի օվկիանի մեջ ադի...

*
* *

Խավար է, գիշեր է։ Մթում սպասում եմ։
Սենյակն անլույս է ու լուռ է գիշերը։
Գիշերը մթի մեջ հոսում ու խոսում է.
Կասկածը ու ահը իմ սիրտը մաշել են։

Լռիլ եմ։ Լսում եմ։ Անծա՜յր է գիշերը։
Իսկ մութը մանվում է, մանվում է, մանվում է։
Իսկ սիրտս բոլո՜ր այն ահերը հիշել է.
Ահով ու մահով, ախ, լցվել է իմ տունը։

Գոկում են ծերպները։ Մթում բրթմնջում են։
Անտես փսփսում են— ու սիրտս լսում է։
Գաղտնիք է ու ահ է ամեն մի հնչյունը—
Մահո՜ւ պես դժվար է անլույս սպասումը...

*
* *

Հիմա հիշում եմ բոլոր օրերս հին ու անցած,
Լուսազարդ ու թեավոր օրերս հին ու անցած։

Եվ թվում է, թե նոքա կարկաչելով պիտի գան—
Մանուկների նման հուր—օրերս հին ու անցած։

Բայց գալիս են նոքա լո՜ւռ, ու հոգնաբեկ, ու տխուր,
Անցորդների պես մոլոր— օրերս հին ու անցած։

Պանդուխտների նման այն, որ հեռացել են վաղուց—
Տուն են դառնում նորից նոր— օրերս հին ու անցած։

Եվ նստում են, հոգնաբեկ, ահա սրտիս վրա ծեր
Ու հորանջում են տխուր— օրերս հին ու անցած։

Եվ չեն կանչում ոչ-ոքի. մտորում են ու լռում.—
Ջո՜ւն են փնտրում ու անդորը—օրերս հին ու անցած։

ՄՈՐՍ ՀԱՄԱՐ ԳԱՅԵԼ

Հիշում եմ դեմքը քո ծեր, մայր իմ անուշ ու անգին,
Լույս խորշոմներ ու գծեր, մայր իմ անուշ ու անգին։

Ահա նստած ես տան դեմ ու կանաչած թթենին
Դեմքիդ ստվեր է գցել, մայր իմ անուշ ու անգին։

Նստել ես լուռ ու տխուր, հին օրերն ես հիշում այն,
Որ եկել են ու անցել, մայր իմ անուշ ու անգին։

Եվ հիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց,—
Ո՞ւր է արդյոք հեռացել, մայր իմ անուշ ու անգին։

Ո՞ւր է արդյոք հիմա նա, ո՞ղջ է արդյոք, թե մեռած,
Եվ ի՞նչ դռներ է ծեծել, մայր իմ անուշ ու անգին։

Եվ երբ հոգնած է եղել, և երբ խաբվել է սիրուց—
Ո՞ւմ գրկում է հեծեծել, մայր իմ անուշ ու անգին։

Մտորում ես դու տխուր և օրրում է թթենին
Տխրությունը քո անծիր, մայր իմ անուշ ու անգին։

Եվ արցունքներ դառնաղի ահա ընկնում են մեկ-մեկ
Քո ձեռքերի վրա ծեր, մա՜յր իմ անուշ ու անգին...

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

I

Վահա՜ն Տերյան, ինչպե՞ս երգեմ հիշատակը քո,
Թող լուռ փովի հիմա իմ դեմ անլույս երեկո։
Սրտիս վրա իջնի թող մութ մի ամպի քուլա,
Ջամին բերե թող մահվան բոթ ու անձրևը լա։
Եվ թող թափվեն շուրջս աշնան տերևներ դեղին
Եվ զարդարեն, Վահա՜ն Տերյան, քո անցած ուղին։
Ու մշուշում տխո՜ւր երգով բյուրավոր զանգեր
Թող օրհներգին թախիծը քո, իմ հեռու ընկեր...

II

Դու արդեն հեռացել ես, աշխարհում էլ չկաս դու,
Ու լռել է երգը քո արդեն հիմա,
Բայց զգում է սիրտս, որ նորի՜ց կգաս դու,
Երբ իջնի գիշերը ու անձրևը լա։

Երբ իջնի գիշերը ու անցած հուշերը,
Անցածի փշերը դառնորեն խոցեն—
Ո՜րքա, մենակ կգաս դու և կերգես քո սերը,
Որ վերջի՜ն մեր սերն է աշխարհում գուցե։

Որքա, մենակ կգաս դու և նորից քո երգը
Կվառե սրտում մեր կարոտանք ու սեր.
Անարև սրտում մեր կվառե քո երգը
Երազներ անմար ու ցնորքներ լուռ։

Եվ նորից կգգանք, որ մեր սրտին դու մո՜տ ես,
Մորմոքող հրի՜ պես մեր հիվանդ արյան,
Որ լուսե երգին քո մեր հոգին կարոտ է,
Օ, հեռու ընկեր իմ, օ, Վահան Տերյան...

III

Դու— լուսե, անցար ու չկաս։
Դու— թեթև, անմարմին, անծիր։
Դու ուրի՜շ խնդության երազ։

Դու սրտում մեր ընդմիշտ վառեցիր
Կրակներ անմար ու թաքուն։
Փոեցիր լուսավոր զանձեր։

Եվ երբե՜ք, երբեք չի աղոտի
Քո կանթեղը խավար մեր հոգում,—
Քո կանթեղը— հեռո՜ւ կարոտի։

ՄԱՀՎԱՆ ՏԵՍԻԼ

Որպես լքված թավջութակի ձգված մի լար՝
Դողում է սիրտս կարոտով մի ահարկու.
Կարոտներիս գագաթն է այն՝ վերջի՜ն քնար.—
Մի պիրկ պարան ու երկնուղեղ փայտեր երկու։
Որպես բախտիս մութ քամահրանքը, կամ որպես
Մի հին խոստում, որ անկատար, գրժած թողի—
Կախաղանի փայտերն ահա քաղաքի մեջ
Կանգնել են, սեգ, ու սպասում են կախվողի։
Կանգնել են, լուռ, իրար կքած, փայտեր երկու,
Ու մեջտեղում դողում է, մեղկ ու երերուն,
Մի գորշ պարան, ինչպես տխուր այս օրերում
Անբոց մորմոքը նաիրյան իմ ո՜րբ հոգու։
Իջել է շուրջը մի անհուր իրիկնաժամ,
Ու լռությունն մի անստվեր, անդուռ, անդող,
Ինչպես մորմոքը օրերի, ինչպես դաժան . .

Մահվան թախիծը՝ իմ անլուր սիրտը բանտող։
Ու խանութները, գորշ կքած, ու այն մարդիկ,
Որ հավաքվել են փայտերի շուրջը հիմա,
Մահվան բեկուն այդ քնարին այդքան մոտիկ—
Ի՞նչ են ուզում՝ այդքան տխուր ու ակամա։
Եվ արդյոք ո՞վ է երազել այդքան դաժան—
Ու լուսավոր առավոտները իմ հոգու
Ո՞վ դարձրեց— մի անկրակ իրիկնաժամ,
Ու գորշ պարան, ու երկնուղեշ փայտե՛ր երկու։
Գուցե այդ ե՛ս եմ, որ սրտով իմ լուսնահար
Ո՛չ մի կրակ հեռուներից ձեզ չբերի,
Ու ցանկացա, որ չօրհներգե ո՛չ մի քնար
Լուսապսակ, պայծառ զալիքը Նաիրի...

Երթամ հիմա։ Ու կարոտով անմխիթար,
Իմ երգիչի երազներով ու հրերով,
Անհրապույր իմ օրերի հրգով մթար
Ու նաիրյան իմ երազի վերջին սիրով,—
Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ,
Որպես ուրու հալածական, որպես տեսիլ—
Տա՜մ պարանոցս կարոտին այն երկնուղեշ
Ու օրորվեմ՝ եղերական ու անբասիր...
Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մո՛տ չգան.
Եվ թող տեսնեն ի՛մ աչքերի մեջ կախված ի։
Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան։
Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախված ի
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագա,—
Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ո՛չ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա...

ԱՍՏՂԻԿ

Քնար չկա ձեռքիս և ոչ սրինգ անուշ,
Որ քեզ երգեմ, Աստղի՛կ, կին դու՝ հավերժ բեղուն,
Ցնորք դարձած դու կին, արդեն մեռած վաղուց,
Քարի՛ կոտրած բիկոր՝ անդարձ կորած հողում։

Աստղի՛կ, հեռու տեսիլ, ինչպես դարերն հեռու,
Ո՛վ թարմություն զարնան, անուշ կարկաչ առվի,—
Ինչո՞ւ ստվեր դարձար, ինչո՞ւ դարձար ուրու,
Եվ ե՞րբ պիտի նորից հմայքը քո վառվի։

Վաղո՞ւց անցել ես դու, Աստղի՛կ, կյանքից մեր մութ,
Թողել ես կյանքը այս հիվանդ քրոջդ մեղկ,
Թողել ես, որ երգեն նրան երգեր լուսնոտ,
Լուսնոտ երգեր երգեն տխուր ձայնով բեկբեկ։

Նրանք սրինգ ունեն, ունեն քնքուշ քնար,
Դեղգեղ երգում են մութ, տարտամ սերերն իրենց,
Սիրում են քո քրոջ մարմինը պաղ մարմար՝
Սիրով անկիրք ու մեղկ, սրտով մեռած ու խեղճ։

Աշնան անլույս, տխուր օրերն անլույս, բեկուն,
Աշնան քամին, առուն, աշնան հովերը թաց
Խոսում են մեղմ ձայնով նրանց հիվանդ հոգուն
Սիրո մասին՝ վաղո՞ւց արդեն ցնորք դարձած։

Նրանք սրինգ ունեն, ունեն քնքուշ քնար,
Դիտեն երգել աշնան հովի նման անուշ,
Երգում են քո քրոջ մարմինը՝ պաղ մարմար,
Երգում են սեր, աշուն, աշնան ցնորք ու հուշ։

Ա՛լ չեն սիրում նրանք էլ քո մարմինը տաք,
Սիրո խնդում չկա նրանց համար հիմա,—
Սիրում են սերն իրենց, ցնորքը ջինջ, հստակ,
Որ տա՜ պիտի իրենց անսուտ դգվանք ու մահ։

Ու ստվերներ դարձած՝ նրանք շրջում են լուռ
Գուրակներում խոնավ, բուլվարներում անմարդ։
Եվ չի վառվի նրանց կյանքում էլ ո՛չ մի հուր,
Եվ չի լցվի խանդով նրանց հոգին վհատ։

Աստղիկ, ինչո՞ւ անցար, ինչո՞ւ նրանց երգից,
Երգած քո թույլ, նվաղ, հիվանդ քրոջ մասին—

Թողիր դու կյանքը մեր և որբ թողիր դու ինձ,
Եվ կյանքը սուտ դարձավ՝ դիշեր, ցնորք, լուսին։

Ես ի՞նչ անեմ հիմա. նրանք երգեր ունեն,
Նրանք դիտեն ապրել՝ լուսնի լույսին գերի,—
Բայց չե՞մ կարող հո ես սիրել օրերը թեն—
Ուզում եմ ես գգվանք, գալարք ու խաղ հրի։

Ուզում եմ ես հիմա քո շեկ մազերը բոց,
Կարմիր շրթերը քո, կոնքերը քո հաստուն,
Ուզում եմ կիրքը քո՝ կրակ դարձած կնոջ,
Տարփանքը քո բեղուն, որ չի՛ երբեք կասում։

Ուզում եմ քո բրոնզե անհագթ թևերը ձիգ,
Ու կուրծքը քո հրե, արգանդը քո գարուն,
Ուզում եմ ջերմ կրքիդ եռերը շոգ, հրձիգ,
Անհո՛ւն ասուզեր սփռող երկրի անձայր հեռուն։

Անցնում եմ ես ահա փողոցներով քարե,
Հսկա շենքերը ինձ նայում են խիստ, խոժոռ,—
Ապրել եմ ես այստեղ հարյո՛ւր, հազա՛ր տարի,
Բայց նո՛ր եմ ես նորից՝ քաղաքներում այս նոր։

Անցնում եմ ես ահա քաղաքներով երկաթ՝
Շուրջս՝ մարդիկ անվերջ, կրքի գալարք ու վեհ,—
Վառե՛լ եմ ես հզոր երգեր կյանքում վհատ
Ու, խե՛նթ, փշրել կուզեմ վերջին պատրանքն իրենց։

Ջնար չկա ձեռքիս և ոչ սրինգ անուշ—
Ջե՛մ էլ ուզում նրանց երգերը մեղմ, հուզիչ,—
Շեփո՛ռն եմ ես կյանքի՝ համակ կորով ու ուժ,
Շեփո՛ռն եմ ես ահեղ՝ մի նո՛ր կյանքի երգիչ։

Ու շուրջը իմ արդեն օրերը՝ կուռ, պողպատ՝
Ահեղ շաչում են՝ նոր երգով առույգ ու ժիր,
Կանչում են ինձ նրանք, որ ես խուրթով երկաթ
Վառե՛մ նրանց հոգում երգեր կարմիր ու հիր։

Եվ իմ հոգին հիմա նրանց երգից այդ կուռ
Լցվել է բորբ հրով, կայտառ սիրով մի նոր.
Ես սե՛ր կուզեմ հիմա, կնոջ գգվանք ու հուր,
Բեղո՛ւն մարմին կուզեմ՝ կրքի՛ս նման հզո՛ր։

Արի՛, Աստղի՛կ, հիմա, որպես գալիք կյանքի
Անհուն, բեղուն խավար՝ աստղի՛ համար իմ վառ.
Եղիր, որպես պղինձ, երկաթ եղիր հանքի,
Շինող կամքիս համար եղիր կարմի՛ր մարմար։

Արի՛, որպես անմար կրքով լցված գարուն,
Ու կո՛ւյս եղիր՝ գարնան դաշտի նման խոպան,
Գարնան խանդի նման եղիր բորբոք, եռուն,
Որ ես, կայտառ, վառեմ քո մեջ իմ նո՛ր ճամփան։

Արի՛ հիմա, ծաղկուն, խնդուն, որպես ամառ,
Երգո՛վ, պարո՛վ արի ու ցանկությամբ որոշ,
Եղի՛ր, Աստղի՛կ, տոկուն, կամքի պես իմ համառ,
Ո՞վ կի՛ն, եղի՛ր հիմա, որպես կարմիր դրոշ։

Ինչպես օրերը այս՝ գալիքներով բեղուն—
Այնպես արգանդը քո անհո՛ւն լինի թող տոթ.
Աստղի՛կ, գալի՛ք դարձիր, դարձիր տարերք զեղուն.
Այլևս մա՛յր դարձիր՝ գալիք կյանքի խորհուրդ։

Գալի՛ս է կյանքը նոր— ու իմ ձայնից շեփոր
Քո դալկադեմ քրոջ ցնորքը ծո՛ւխ դարձավ.
Նրա հմայքը մեղկ ցնդե՛ց երգից իմ նոր,—
Սրինգ չկա արդեն, դողդոջ քնար ու ցավ։

Կանգնե՛լ եմ ես, հզոր, գալիք կյանքի առաջ,
Ու կիրքը իմ անսանձ հորդե պիտի հիմա.
Աստղի՛կ, իջի՛ր նորից, որ իմ հրով վառած՝
Արյունդ արև՝ ծնի գալիք կյանքի համար։

Արի՛, Աստղի՛կ, ու ա՛ռ պայծառ հավերժդ իմ,
Եվ միսդ թող ծաղկի, ինչպես իմ կամքը ձիգ,—
Ջարդե՛լ եմ ես արգեն նրանց քնարը հին,—
Շեփոր-մարմինն է իմ կանչում խանդով հրձիգ...

ԿԱՐՄԻՐ ՍՈՆԵՏ

Поэт всегда с людьми, когда шумит
гроза.
БРЮСОВ

Որպես դաշույն՝ օրերի հնամենի պատյանից
Ելնում է, կարծր ու բոսոր, ու վառվում է ապագան.
Եվ չի մտնի նա հնի փոշոտ պատյանը նորից,
Ու չի թաղվի օրերում, որ վառվեցին ու չկան։

Ի՞նչ է ուզում էլ տաղտուկ հիմարությունը ձեր խեղճ
Եվ ձեր մեռնող աշխարհի տխրությունը հուսահատ.
Այն, որ օրերն ապրեցին և բանաստեղծը երգեց—
Ցի՛ խորտակվի տագնապից ու սարսափից ձեր վհատ։

Իմաստուն է օրերի վայրագ նահանջը հիմա.
Ինչպես փոշոտ պատյանի բիրտ հեռացումը սրից—
Երբ ոսոխի հանդիպած՝ պիտի կռվես ակամա։—

Եվ ես, պոետ իմաստուն, ահա երգում եմ նորից.
Նահանջում են օրերն հետ, հեռանում են ու չկան—
Ու թռչում է երգս՝ նետ՝ դեպի վառվող Ապագան...

*
* *

Ո՞վ կհանդիպի, ո՞վ կբարևի,
Ո՞ւմ հոգեհամբույր խոսքը կլսեմ։
Ո՞ւմ ուրախացած դեմքը կարևի՝
Բարեկամական հրճվանքով վսեմ։

Ո՞վ կհամբուրի, ո՞վ կհեկեկա,
Ո՞վ կհիանա անսուտ հրճվանքով։
Գուցե աշխարհում, դուրսը մեկը կա,
Որ ապրում է իմ անուրախ կյանքով։

Գուցե իմ սրտում, երգերում իմ մութ,
Խոսքերում՝ ասված իմ հոգու մասին—

Հեռավոր մեկի անրջանքն եմ սուտ՝
Նետված աշխարհի անսուտ երազին։

Գուցե՝ ապրելով նրա երազում՝
Երգում եմ նրա տագնապները խոր—
Եվ թվում է ինձ աշխարհի մուժում,
Որ ի՛նձ եմ երգում, կյանքս մենավոր։—

—Ողջո՞ւյն քեզ, անհայտ, անծանոթ ընկեր,
Խաղաղությո՞ւն քեզ, հեռավոր եղբայր.
— Ողջո՞ւյն ձեզ, վաղվա չծնված կյանքեր։

—Ես՝ եղբայրորեն ու մտերմաբար՝
Ողջունում եմ ձեզ անցած խավարի
Իմաստուն, տխուր ժպիտով բարի...

ԿԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԵՍ

Ինձ ասացին, որ ես իզուր եմ ապրում,
Որ՝ ես՝ իզուր վիրավորում եմ իմ խեղճ
Ու խայտառակ գոյությամբ
Վեհությունը աշխարհի...

Ինձ ասացին, որ ես իզուր եմ ապրում...
Եվ ո՞վ ասաց. մի կատու,
Որ գարնան դեմ, սիրակարոտ մլավելով,
Երազում էր տա՛ք գգվանքներ ու խնդում։

Նա նստել էր կտուրին,
Ուր իր մրսած կողերն հողին քսելով,
Մլավելով աղիողորմ,
Կանչում էր որձ կատուների, որ, ավա՜ղ,
չկային...

Գարնան արևն իրիկնային
Գցել էր պաղ մի ճառագայթ կողերին,
Ու արևի տակ գարնան
Տաքանում էր կարոտը ո՜րբ կողերի...

Ու կատվային աչքերում,
Արգեն մարող ճառագայթի նման խեղճ,
Հուրհուրում էր վերջին տագնապը սիրո,
Որ դեռ մխում էր ցամաքած սրտի մեջ։

Երկա՜ր, երկա՜ր մլավում էր հուսահատ։
Եվ որպես սև դառնություն—
Այդ աղեխարշ մլավյունը իրիկվա
Հոսում էր վար կտուրից,
Որպես թախիծ, որպես թույն...

Նայում էի ես երկա՜ր։
Լո՜ւռ էր այնպես։ Ու միայն ջուրն էր կաթում,—
Երբ դիմացի կտուրից,
Գաղտնագողի մոտենալով—
Ցատկեց հանկարծ մի կատու։

Դեռ չէր տեսել։ Բայց հանկարծ
Նա նկատեց— ու մլավյունը խզճուկ
Փոխվեց մի սուր, արնափրփուր խնդության։
Եվ իրարու մոտեցած,
Արդեն մարող լույսերի տակ արևի,
Նրանք իրար միացան,
Ջիմանալով, որ նայում է մի չար աչք—
Ներքևից...

Հետո... Ների՜ր ինձ, երկի՜նք,
Որ հալհլոցը գարնան
Ու տեսարանը հեթանոս այդ սիրո
Մեջս շարժեց չար մի կիրք...

Եվ ես, հանկարծ,
Ինքս էլ դեռ լավ չհասկացած, թե ինչ...,
Վերցրեցի մի բուռ ձյուն
Ու խփեցի կատուներին սիրարծարծ...

Եվ ա՜յդ պահուն միայն ես
Նկատեցի, որ եթե

Ես պատահմամբ այդ չար քայլը չանեի—
Սիրով տարված կատուները կտուրից
Պիտի գետին ընկնեին...

Սակայն իմ թաց ձյունագնդից արթնացած,
Սուր զայրացած, որ չթողին որ խաղան—
Նրանք ահեղ մլավեցին դեպի ցած—
Ու փախան...

. . . . . .

Ո՜վ երկինք,
Ների՜ր, որ ես ոչնչի չե՜մ պետք եկել,
Որ կյանքս ողջ երգ է եղել ու քամի...
Բայց մի անգամ, միայն մի,—
Երբ գարուն էր, հալհլոց—
Ես փրկել եմ— թեկուզ կամքիս հակառակ—
Երկու կատվի... կտուրից վայր ընկնելուց...

ՔԱՄԻՆ

Քամին,
Աշնան քամին
Թոցնում է դեղին նժույգները իրա։

Ինչ-որ մի տեղ հիմա
Հավաքել է ի մի
Ու փչում է աշնան հոգեվարքի ժամին
Իր ահռելի հոգին մի վիթխարի բերան։

Քամին,
Աշնան քամին
Հոնդում է հիմա.
Փոշու հսկա դեզեր փախցընում են իրար
Սարսափահար դարձած նախիրների նման։

Քամին,
Աշնան քամին...

Քաղաքը գորշ ու մութ։
Ամեն անցորդ դեղին զառանցանք է հիմի՛,
Որ իրիկվա մեգին երազվել է քամուն։

Փողոցները երկա՞ր,
Ու ձանձրալի, աշնան անձրևների նման,
Փողոցները, որ կան,
Փողոցների ներկան,
Փողոցները՝ դաժա՞ն, անհրապույր, չարկամ,—
Որքա՞ն, որքա՞ն, որքա՞ն ահավոր են հիմա։

Քամին,
Աշնան քամին
Մոլորվել է այստեղ.
Մահվան սարսուռ առած վիրավոր է նա մի։
Ու կարող է հիմա ամե՞ն արգելք քանդել
Քամին,
Աշնան քամին...

Հոնդում է,
Փնչում,
Ահեղացունց ցնցում ցուցանակները չոր.
Ջրնգում են ահից պատուհանները հնչուն,
Ու թռչում է քամին,—երկաթաթև թռչուն,—
Ջարհուրելի, զազիր փողոցների միջով...

Խելապտույտ, անմարդ փողոցներում կորած,
Ջարհուրելի ոխով ու զայրույթով իրա,
Որպես ոսոխ տեսած մի վիթխարի հովազ,
Հայացքներում՝ փոշի և արնամուժ ավազ,—
Քամին, աշնան քամին հարձակվում է ահա
Անօգնական կքած բուլվարների վրա։

Օ՜, բուլվարի հիվանդ ծառերը որբ ու խենթ,
Ցնցոտիներ հագած պառավների նման,—
Ծվատում են նրանք դեղին մազերն իրենց,
Գլուխները ցնցում ու մորմոքում հիմա։

Ծառերը ծե՞ր, հիվա՞նդ,
Ծառերը ծուռ ու չոր,
Մուրացկանի նման ծառերը խեղճ ու մերկ.
Ջա՛ղին ծեծում է ծեր գլուխները նրանց
Ու ճչում է մահվան չարագուշակ ճչով.—
Երբե՞ք,
Երբե՞ք,
Երբե՞ք...

Օ, գթացե՞ք հիմա.
Այդ ծառերին՝ խաչված բուլվարներին ամա,
Օ, փրկեցե՞ք նրանց հարվածներից քամու,
Որ բերում է նրանց մահվան մորմոք ու մահ։

Օ, գթացե՞ք հիմա.
Լսե՞ք, լսե՞ք, լսե՞ք.—
Այս ահռելի, դաժան, հոգեվարքի ժամին՝
Պիտի դառնա, որ ձեր հոգինե՞րը խուժե—
Քամին,
Աշնան քամին...

ՊՈԵՄՆԵՐ ԵՎ ԲԱԼԼԱԴՆԵՐ

ԿԱՊՈՒՏԱՋՅԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

(Հատվածներ անավարտ պոեմից)

I

Ես սիրում եմ նստել ամեն իրիկուն,
Պատուհանիս առաջ երկա՜ր ու երկա՜ր.
Նայել պահվող ճամփաներին անանուն
Ու երազել խնդություններ արևաու
Նայել կանաչ հովիտներին՝ արևի
Իրիկնային երանգներով շղարշված,
Խմել լուսե երանգները վերևի՝
Երջանկացած ու հարբած։
Ականջ դնել ցորենների շշուկին
Եվ սպասել, որ շշուկները բուրեն
Ու երգ դառնա երկնասլաց իմ հոգին
Ու երազները մեղմորեն օրորեն։
Ես սիրում եմ նստել մենակ ու անձայն,
Աչքերս հառել հուրհրատող երազին,
Լսել ձայներ, որ զնգացին ու անցան
Երանգների պես իրիկվա երազի։
Ապրել՝ հարբած երազներով իրիկվա,
Սուզվել անտես՝ աղբյուրների կարկաչում,—
Հարբե՜լ, հարբե՜լ ու մոռանալ առօրյան
Եվ հավատալ, որ հեռվից բախտն է կանչում...

II

Կա հոգեկան անհունության մի վայրկյան,
Երբ ամեն ինչ սուրբ է թվում ու անբիծ,

Երբ երազ է դառնում աղջատուկ առօրյան
Ու դառնում են ուղևորները ճամփից։
Դուռս բաց է, դուռս բաց է ձեզ համար
Օ՜, հեռավոր բարեկամներ ու քույրեր.
Սիրտս վառել է կրակները անմար՝
Հին երազներն ու կարոտները հրե։
Սիրտս վաղո՜ւց ձեր գալուն էր սպասում,
Հավատում էր կարոտակեզ, որ կգաք,
Ու կլինի հանդիպումի երազում
Քաղցր ժպիտ ու խնդություն ու կրակ։
Ա՜խ, ես գիտեմ, որ դուք կգաք խնդագին,
Լո՜ւյս կվառեք մառախուղում ու մուժում—
Ու մի անմար կարոտանքով կրկնակի
Ճամփա կընկնենք իրիկնային մշուշում...

III

Օ՜ հեռավո՜ր, կապուտաչյա՜ սիրուհիս.—
Հովիտի մեջ փրփրուն գետն էր հոսում
Եվ անդադրում պատմում էր ինձ, որ ունիս
Դու դղվանքներ ու գրկանքներ սերասուն։
Այնտեղ, կանաչ ու ծաղկաշատ գետափին
Տեսակս այնքա՜ն հոգեթով էր ու անդորր.
Լսում էի ալիքների երգը հին,
Որ ինձ թվում էր մայրական մի օրոր։
Ալիքների հապարաձայն երգի մեջ
Ես գիտեի գուշակել քո ապագան,
Լսում էի կարոտերդերդ անվերջ,
Լսում էի խոստումներդ՝ ես կգա՜մ։
Ուռին, բարդին ու թթենին գետափնյա
Լսում էին ինձ հետ երգերը ջրի
Ու սիրտ շոյող շշուկներով դյութական
Թաղծում էին մենության մեջ օրերի։
Ա՜խ, իմ գետակն ու իմ այգին հայրական,
Դեռեզերքին՝ իմ երազը տխրամած.
Ե՞րբ, ե՞րբ էր, որ ասացիր՝ ես կգամ—
Ու խոստումիդ սիրտս խնդաց ակամա...

IV

Օ՜ հեռավո՜ր, կապուտաչյա՜ սիրուհիս...
Հովիտի մեջ փրփրուն գետն էր հոսում
Ու փսփսում էր երազներ անհունի
Գորշ օրերի միանման երազում։
Ելնում էր մայրս տնակից հնամյա,
Ծեր քայլերով գնում էր ափը ջրի
Ու թթենին մեղմ օրորում էր նրա
Թախիծը հին, անհրապույր օրերի...
Ես չըգիտեմ, ես չըգիտեմ հիմա էլ՝
Աղջի՞կ ես դու, թե այն տնակն ու այգին,
Ուր հոսեցին իմ երազները ջահել
Ու վայրկյանները անսփոփ պատրանքի։
Բայց ես գիտեմ, որ սիրեցի քեզ մի օր,
Երբ հասկացա, որ աշխարհում դու չկաս,
Բայց երազի ուղիներով հեռավոր
Դու մի գիշեր պիտի իջնե՞ս, պիտի գաս։
Հավատացի, որ կտեսնեմ քեզ մի օր,
Ու կլինես դու իմ անբիծ հարսնացուն՝
Արևների նման պայծառ, լուսավոր,
Ճաճանչների նման Վահագն Աստծու։
Անեղեռ՜ւթ, կապուտաչյա՜ սիրուհիս,—
Գիշերների տխրության մեջ լուսընկա,
Սիրաս տալով շշուկներին անհունի
Ես մեն-մենակ լույս ճամփաներդ ընկա...

V

Որոնումիս ճանապարհին անծանոթ
Չհոգնեցի, չհոգնեցի ես երբեք։
Այրում էր իմ սիրտը հեռու մի կարոտ,
Կանչում էր լույս հեռուներդ անեզերք։
Գնո՜ւմ էի գիշերային իմ ճամփով
Ես միայնակ ու տրտում։
Միայն կարոտս էր հեքիաթում հոգնթռվ
Երազանքներ անպատում։

Ու լուսընկա ուղիներում անանուն—
Կարոտակեզ, սիրակեզ,
Անբառ սիրով ու կարոտով մի անհուն—
Քեզ սպասում էի ես։

VI

Ու լուռ էր այնպես։ Հեռու-հեռուում
Մի հազարամյա վանք էր երևում։
Փայլում էր ոսկին հնամյա խաչի—
Եվ ես կանգ առա նրա առաջին։
Ճամփան՝ ոլորուն՝ դեռ իջնում էր վար,
Դեպի դաշտերի գիրկը, ուր չկար
Մարդկային աղմուկ ու երգ ու շառաչ,—
Երազ էր կարծես՝ անապատ դառած։
Ու լուռ էր այնպես։ Վայրկյանն էր հոսում։
Ու հին լռության լաբիրինթոսում
Սպասում էին դաշտ, հովիտ ու քար—
Կարծես թե մեկը այցի պիտի գար։

VII

...Եվ մի օր ես այն հին վանքը մտա։
Շուրջը կաղնիներ հաղթ բազմել էին։
Երգում էր անուշ զանգը հնամյա
Ու թախծում էին գորշ քարերը հին։
Եվ այն հին վանքի կամարների տակ,
Ուր մի անիմաց, անիմանալի
Գոյության ճախրում կա լուրջ ու պարփակ՝
Ես ծունկ չոքեցի աղոթքներով լի։
Թեկուզ չվառվեց տոնական բույլով
Ճահը վերևի, ջահը հազարաչ.
Թեկուզ չբացվեց վարագույրը մռայլ
Եվ ոչ մի ծնծղա անուշ չզնգաց.
Թեկուզ ոչ մի երգ չլսվեց վանքի
Այն հազարամյա կամարների մեջ—
Բայց հոգիս ղգաց մի հին բերկրանքի,

Բախտավորության ու սիրո վայրէջք։
Ու սիրտս լցվեց անհուն մի խնդում։
Հասկացա, որ կա, կգա, կլինի...
Ու ժպտում էր ինձ երկիրը տրտում,
Երկիրը ցավի, սուգի, արյունի...

VIII

Վերադարձա տուն...
Վայրկյանն իմաստուն, եկել է ահա։
Գնացել են մեր հնձվորներն արդեն
Ու հսկում եմ ես հին շեմքի վրա։

Գնացել են մեր հնձվորներն արդեն։
Ես մենակ նստած սպասում եմ լուռ։
— Ճերմա՜կ սիրուհիս, ես գիտեմ, գիտեմ,
Որ նրանք հիմա հնձում են տխուր...

Ցավում է հոգիս ու խոցվում է խոր.
Վառվում է քո հին կարոտն իմ հոգում։
Բայց ինչո՞ւ է սիրտս այսպես բախտավոր
Եվ ինչո՞ւ է ցավն այսպես ամոքում...

Հնձում են հիմա հնձվորներն այնտեղ.
— Ճերմակ սիրուհի՜, կապուտաչյա քո՜ւյր...
Արևը հիմա այրում է այնտեղ
Խե՜ղճ հնձվորների կրծքերը մաքուր...

Իսկ ես անսփոփ սպասում եմ դեռ
Վերադարձների բերքառատ ժամին։—
Օ՜, հեռու իմ քույր, երկիր իմ անտեր—
Այնտեղ, երևի, քրքջում է քամին...

IX

Օ՜, իմ հեռո՜ւ, կապուտաչյա՜ սիրուհի,
Երկիր իմ որբ, արնաքամ ու ավերակ...

Օրերում այս տառապանքի ու մահի
Վառել է իմ սիրտը հեռու մի կրակ։
Օրը կգա։ Ու հեռավոր դաշտերից
Մեր հնձվորները, հոգնաբեկ, կգան տուն։
Պրոլորեն սեղանի շուրջը նորից
Ու կլինի հազա՜ր ծիծաղ ու խնդում։
Ու խնջույքում, աներևույթ դու կգաս,
Սիրտս կդգա քո թովչությունը մոտիկ.
Եվ չես լինի դու արնավառ մի երազ,
Ու կխնդան քո զավակներն անոթի...
Կտեսնեն քեզ հանկարծ լուսե՜ ու պայծառ
Ու կլինես դու հարազատ ու անուշ։
Մութը կանցնի ու մառախուղը անծայր
Հուշ կդառնա, հնամենի մի զրույց...

X

Կապուտաչյա՜ սիրուհիս, ամուսնանանք պիտի մենք
Արևի տակ՝ հայրենի հովիտներում կանաչուն։
Ու հնամյա աշխարհում մենք բախտավոր կլինենք,
Կապուտաչյա՜ սիրուհի՜ս, դրախտայի՜ն իմ թռչուն։
Հովիտներում հայրենի, հովիտներում սրբազան
Կլինի մի հարսանիք հազարնվագ ու խնդուն,
Երգ ու ծիծաղ կլինի ու աղջիկները կգան
Ու կպարեն հնամյա պարերը խե՜նթ ու ճկուն։
Ու ջինիներ կլինեն արնափրփուր ու կարմիր,
Որպես երազն արյունիս, որպես հոգուս զոհը հիր։
Ու ծաղիկներ կլինեն բազմաբույր ու բազմերանգ՝
Հարսանիքիս խնջույքին փսփսալու են նրանք
Առստաղներն ապրված ու զրույցներ հնամյա
Նրանց մասին, որ չկան ու մոռացվել են հիմա։
Եկե՜ք, եկե՜ք հարսանիքիս օրն այնքան նրդ կլինի,
Այնքան խնդում ու ծիծաղ, այնքան ցնծանք
արյունի,—
Եկե՜ք, եկե՜ք, սրբազան հովիտներում հայրենի
Վառը մի սուրբ խրախճանք, մի հարսանիք կլինի։

1915

ԴԱՆԹԵԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ

I

Մենք ճամփա ընկանք առավոտ ծեգին՝
Կապույտ երկնքի խորությամբ արբած։
Թարմ, թեթև էր մեր ճամփորդի հոգին՝
Ուրախ էինք մենք և մեր սիրտը—բաց։
Կանչում էր, կանչում ճամփան անմեկին
Ոլորապտույտ մեր առաջ փռված։

Եվ վերջին անգամ նայեցինք մենք ետ,
Ուր ոչինչ չկար մեզ համար դյութիչ։
Անցյալը կորել, ցնդել էր անհետ,
Որպես երազում արձակված մի ճիչ։
Ո՛չ մի տխրություն չէր ճախրում մեզ հետ՝
Կախարդել էր մեզ առավոտը ջինջ։

Գար էինք խաղում ու երգեր ասում,
Ձեռքերի փայլով հրճվում էինք մենք։
Կարծես մանկական կապույտ երազում՝
Ամեն ինչ այնպես ժպտում էր աննենգ։
Ո՛չ հրաժեշտի անորոշ հուզում,
Ո՛չ էլ մեռնելու կասկածանք կար նենգ։

Անսահման դաշտն էր փռված մեր առաջ։
Ոսկի հասկերով ողջունում էր մեզ
Աշխարհի հեռուն՝ բա՛ց, լայնատարա՛ծ,
Արևի շնչով լվացված կարծես։

Իսկ ճամփան, անծայր իրանը փռած,
Թավալվում էր մի հսկա օձի պես։

Թեթև քայլերով ու սրտով թեթև
Քայլում էինք մենք կայտառ ու ջահել։
Մեր հոգին ուներ թռիչքներ ու թև՝
Ո՞վ էր մեզ արդյոք այդպես հմայել...
Նայում էին մեզ լեռները պարթև՝
Կոչո՛ւմն է նրանց— հավիտյա՛ն նայել։

Ուշ իրիկուն էր, երբ մի գյուղ մտանք։
Վրաններն արդեն զարկված էին,
Երբ նույնպես ուրախ, անհոգ, անվտանգ
Բոլորեց իսկույն մեր շուրջպարը հին.
Ջնգացին նորից հազա՛ր երգ ու վանկ
Եվ վերջին անգամ պղպջաց գինին։

Լուսնյակը արդեն բարձրացել էր վեր
Եվ շուրջը փռել արծաթե մշուշ,
Երբ հոգնած մտանք վրանները մեր,
Խոտերի վրա պառկեցինք անուշ.
—Է՛, բարի գիշեր, անգի՛ն ընկերներ,—
Ու խոր քուն մտանք, քնեցինք անուշ։

II

Եվ ուրախ էինք այսպես— երեք օր։
Բայց հետո հանկարծ բացվեց մեր առաջ
Մի ավեր ուղի, ուր անհուն ու խոր
Մի տառապանքի խորշակ կար վառած։
Եվ կամաց-կամաց դարձավ վիրավոր
Մեր հոգին ջահել ու բազմաերազ։

Սրկինքն էլ կարծես փոխվել էր արդեն։
Անձրևներ էին մեր գլխին տեղում։
Ավերված ուղին փռված էր մեր դեմ՝
Իր ծայրը թաղած մեգ-մառախուղում։

Եվ երկնքի պես մեր հոգին էլ թեն՝
Անձրևների տակ մրսում էր, դողում։

Ճամփի մոտ ընկած տեսանք մի դիակ։
Կանգնեցինք, մի պահ նայեցինք իրար։
Փտել էր արդեն անձրևների տակ.
Ի՞նչ ցեղից էր նա— այդ ո՞վ կիմանար։
Իր ապրած կյանքից ամեն հիշատակ
Սրբել էր, տարել անձրևը վարար։

Երկա՜ր կանգնեցինք։ Մի զինվոր— ընկեր
Դիակն հրելով, խնդաց խելագար։
Բայց չէ՞ որ նա՛ էլ կրել է զենքեր,
Եղել է մեզ պես կյանքի սիրահար։
Ես մտածեցի՝ գնում ենք մենք էլ
Այսպիսի դիակ դառնալու համար։

Եվ անցա առաջ։ Լեռներից անդին
Երևաց հանկարծ արեգակը հուր։
Եվ ես մոռացա այն այլանդակ դին,
Շնչեցի հողի թարմությունը խոր,
Եվ նորի՜ց իմ բաց ու լցված սրտին
Աշխարհը թվաց այնքան թա՜րմ ու նո՜ր։

Արևի ոսկի մատները իջան
Ու գուրգուրեցին հեռուները թաց։
Հավիտյան վազող ու միշտ ժրաջան՝
Լոտերի միջից առվակը խնդաց։
Եվ թեթև՜ նետած սլաքի նման
Դևմից մի թռչուն անցավ սրընթաց։

Ախ, այդ դաշտերի հեռո՜ւն ոսկեգույն,
Այդ երկինքների կապո՜ւյտը պայծառ...
Ամեն ինչ կարծես ասում էր հոգուն,
Որ այս աշխարհում քմահաճ ու չար՝
Զրպե՛տք է, որ մարդն հեկեկա անբուն—
Աշխարհում մի օր ապրելու համար։

Եվ ես հարց տվի հանկարծ ինքս ինձ,
Թե ո՞ւր ենք գնում այսպես հոանդով։
Չէ՞ որ աշխարհում կա խոր մի կսկիծ,
Ամենքի համար կա մի վիշտ անթով—
Էլ ի՞նչ ենք ուզում վերցնել կյանքից
Ահաբեկիչի խելագար խանդով։

Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր
Կախվել մեր գլխին այսպես կուրորեն։
Ինչո՞ւ են փռում այսքան ցավ, ավեր,
Հողմերը այս չար ե՞րբ պիտի լռեն։
Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր—
Կյանքը դարձնում նզովյա՛լ գեհեն։

Եվ մի՞թե մարդիկ այստեղ չե՞ն նայել
Երբեք հեռուներն այս լա՜վ աշխարհի,
Ուր արևը բյո՜ւր հրաշք է վառել,
Որ մարդու հոգին խանդավառ, բարի՝
Գգվի հիացքով երջանկավայել—
Ամե՜ն մի խոտի, ամե՜ն մի քարի։

Ախ, ո՜չ... Սատանա՜ն քրքջացել է այս
Ոսկի դաշտերի քնքշությանը խոր,
Փռել է կարմիր խորշակ ու երաշտ,
Վառել է ոսկի հասկերը բոլոր։—
Սրտի կսկիծով ես անցա առաջ
Ու շուրջս նորից նայեցի մոլոր։—

Եվ ահա— կրկին մի քանի դիակ։
Եվ այստեղ ահա— վարսեր կանացի։
Իսկ այստեղ, արնոտ վերմակների տակ—
Փտած փշրանքներ արնաներկ հացի։
Մի՞վ է հեռացել այստեղից— մենակ,
Քարացա՜ծ սրտով, լուռ, առա՜նց լացի...

Իսկ այստեղ ահա— մի ոսկրացած ձեռք։
Մարմինը չկա։ Ընկած է անձայն։

Քիչ հեռուն գտանք սրունքները մերկ,
Իսկ քիչ է՛լ այն կողմ— ատամներ ցիրցան։
Իսկ այնտեղ, ժայռի կատարին այն լեռկ,
Մոռացել էին մի հին հրացան։

Սարսափած սրտով մենք անցանք առաջ,
Եվ մեր հայացքից արյուն էր կաթում։
Լուսնոտի նման բութ ու շվարած՝
Այլևս ոչինչ չէինք նկատում։
Մի ծա՛նը կսկիծ ուսերիս առած՝
Լուռ քայլում էինք արնաբույր տոթում։

Իրիկնամուտին մենք մի գյուղ մտանք։
Անունն էր միայն, իսկ ինքը չկար։
Այլանդակ գուղձեր, դևի ապարանք։
Մնացինք՝ հանգիստ առնելու համար։
Եվ գիշերն ամբողջ պատմեցին նրանք
Զրույցներ զազիր ու խայտանկար...

III

Եվ նորից՝ կանուխ, առավոտ ծեգին,
Մենք ճամփա ընկանք անխոնջ ու համառ։
Այս անգամ արդեն լեռնոտ էր ուղին,
Բայց տրտունջ չկար մեր հոգու համար։
Նախատում էինք տրտնջացողին,
Դեպի նա դառնում անողոք ու չար։

Ես չեմ մոռանա մեր վերելքը թեք
Թափարիզ լեռան ծերպերով անտես։
Այնքան գեղեցիկ չի՛ եղել երբեք
Տոկացող կամքի մաքառումը վեհ։
Թվում էր, թե հին ասպետներ ենք մենք
Եվ վեր է մղում սուրբ ցնորքը մեզ։—

Սառած ծերպերով գնում էինք մենք՝
Ե՛վ զենք, և՛ զրահ ուսերիս առած։

Իսկ ձյունոտ ուղին խաբող էր ու նենգ՝
Սայթաքում էինք, բայց անցնում առաջ։
Վագրերի նման ճկուն էինք մենք՝
Հայացքներս լուրթ գագաթին հառած։

Վերելքը ծանր էր և ուղին-ավեր։
Եվ այնտեղ չկար ո՛չ մարդ, ո՛չ թռչուն։
Եվ շարա՛ն-շարա՛ն բարձրանում էր վեր
Մեր բեռնավորված ընկերների շուն։
Իսկ ձյունն անընդհատ լարում էր դավեր՝
Ոտքերիս կպած մեզ վա՛ր էր կանչում։

Կեսօր էր արդեն, երբ հսկա լեռան
Ցյունապատ ու ցուրտ գագաթը հասանք։
Կանգնեցինք ճերմակ գագաթի վրա,
Ուր ո՛չ արարած, ո՛չ բույս կար, ո՛չ կյանք։
Եվ կրծքերը մեր ահից թունդ առան՝
Անհո՛ւն զգացինք, որ ապրում ենք, կա՛նք։

Հպարտ հայացքով նայում էի ես
Եվ խմում էի անսահման հեռուն։
Բարձրությանն վրա անհո՛ւն է այնպես
Մարդկային հոգին աշխարհը սիրում։
Անբառ հրճվանքով զգում էի ես,
Որ կյանքն է իմ մեջ ցնծում ու եռում։

Եվ՝ խորասուզված կույս հեռուների
Անսահման ու խոր անհունության մեջ—
Ես հոգուս խորքում խոստանում էի
Լինել վեհասիրտ, ու հպարտ, ու մեծ—
Երբ հեռվից հանկարծ մի զինվոր ընկեր—
Դողդոջուն ձայնով ինձ իր մոտ կանչեց։

Մոտեցա... և քար կտրած մնացի։—
Սառույցի վրա ընկած էր մի կին,
Որ առանց խոսքի ու առանց լացի
Ս՛եռնում էր՝ անմիտ մի ժպիտ դեմքին։

Դողդոջ մատներով փշրանքը հացի
Սեղմել էր ամուր, որպես գանձ անգին։

Աչքերը թարթեց նա վերջին անգամ
Եվ գոհ ժպտալով՝ ժպտագեմ հանգավ։
Սարսափելի էր այս ամենն այնքան,
Որ մեր շրթերից ո՛չ մի բառ չընկավ։
Բայց ճչում էր մեր սրտերում կարկամ
Մի անհուն կսկիծ, ամեհի մի ցավ։

Մենք լուռ փոխեցինք սառցե կուրծքը ծեր
Եվ անալելու թաղեցինք նրան։
Դողդոջուն, սառած, չոր ձեռքերը մեր
Նույն ձյունն անհամբույր դիպեցին վրան։
Եվ ճամփա ընկանք, որպես մեռելներ,
Թաղելով այնտեղ և մեր խիզճն ունայն։

Ու քայլում էինք, հոգնած ու մռայլ,
Այդ համփաների հետքերով ավեր։
Եվ մեր թափորի ընթացքն համրաքայլ
Չար, մահաշշուկ բարձրանում էր վեր։
Եվ մեր համր հոգին ծանր էր, որպես քար,
Եվ չէինք կարող այլևս ցավել։

Մենք չէինք կարող խղճալ ոչ-ոքի.
Սարսափն էր նստել մեր հոգիներում։
Զգում էինք, որ— մի մութ թշնամի
Նենգ, դարան մտած, պահվել է հեռուն։
Զգում էինք, որ— չար ոսո՛խ կա մի,
Որ վերք է տալիս ու մահ է բերում։

Եվ սուրբ էր թվում ճամփան ահավոր,
Այդ ճամփան խելառ, քմահաճ բախտի։
Եվ քայլում էինք մենք հանգիսավոր,
Ինչպես մի վսեմ սրբազան ուխտի։
Եվ վերջին անգամ երդվում էինք, որ
Էլ ո՛չ ոք իր այս ուխտը չխախտի։

Եվ՝ ծանրաբեռնված քարավաններով՝
Դառնում էր մեկը ճամփաներից ետ։
Ի՞նչ էր հավաքել. ինչո՞ւ, ո՞ւմ գնով—
Մութ էր մեզ համար, անմիտ, անհեթեթ։
Բարեկամ էր նա... բայց մե՛ր արյունով
«Բարեկամ» դարձած մի գիշեր մեզ հետ...

Եվ թշնամի էր մեզ ամեն մի քար.
Եվ ամեն մի իր լարում էր դավեր։
Եվ անցնում էինք մենք հանդիսաքայլ
Այն ճամփաների հետքերով ավեր,
Ուր ո՛չ մի էակ այլևս չկար,
Ուր չէ՛ր կարող մարդ խղճալ ու ցավել...

IV

Եվ ահա մի օր մենք մտանք մի գյուղ,
Որ գտնվում էր ծովակի ափին։
Հրդեհված էր նա։ Այստեղ ու այնտեղ
Մի քանի տներ դեռ մխում էին։
Իսկ ծովի կապույտ ջրերը հնչեղ
Դեռ երգում էին իրենց երգը հին։

Կարկաչուն, հնչուն մանուկների պես,
Դեմքերին ժպիտ ու փրփուր փռած՝
Ալիքներն, անհոգ ու ժպտուն այնպես,
Վեսվեսում էին ու թռչում առաջ
Անուշ ճիչերով պատմում էին մեզ
Հաղար մանկական զրույց ու երազ։

Իսկ ավեր դարձած գյուղակն ալևոր,
Ծեր, խորհրդավոր, որպես մեռած հայր,
Ննջում էր անվերջ իր սև նինջը խոր,
Մեռելաստանի իր նինջը մռայլ։
Եվ չէ՛ր հասկանում այդ ժիր, բախտավոր,
Չար ալիքների զրույցները չար։

Իսկ այգիների շուրջպարը կանաչ
Զգվում էր անծա՜յր ու անծա՜յր հեռու։
Բնությունը, գիրգ ստինքները բաց,
Ցոփ կնոջ նման հեթանոս, հլու—
Պատրաստ էր ամե՛ն անցորդի առաջ
Իր աշնանային տոփանքը տալու։

Երկու ընկերով նստս մտանք այգին
Եվ տեսանք մեր դեմ— խաղողի մի ծով։
Անձնատուր եղած բախտի քմայքին՝
Սնվել էր անմահ արևի բոցով։
Հովերը նրան օրորել էին
Կարկաչուն ծովի հեռո՜ւ զնգոցով։

Մոռացած մի պահ հոգնությունը մեր
Խոնջացած սրտի, փոշոտ ոտքերի—
Մոռացած ամեն քանդում ու ավեր,
Բնության անճառ հմայքին գերի՝
Զորացած, ծարավ շրթունքները մեր
Վայելում էին բերքը տունկերի—

Երբ տունկերի մեջ... տեսանք մի դիակ։
Խեղդամահ արված՝ ընկած էր մի ծեր։
Ընկած էր արնոտ խաղողների տակ՝
Նրանց ստվերին ընկեր էր դարձել...
Ու չռվել էին աչքերն այլանդակ՝
Զարհուրանքալի մեզ տալով հարցեր։

Ընկերս ճչաց ու ընկավ գետին։
«Ջո՜ւր»,— շշնջացին շրթները նրա։
Մոայլ մոտեցա այգու ջրհորին,
Ամբողջ մարմրնով կախվեցի վրա՝
Ուզեցի նայել հատակի ջրին—
Ոչինչ չերևաց։ Պարան կար։ Առա,—

Եվ կախ տվեցի անտակ հորի մեջ։—
Լսեցի հեռու ճղփոցը ջրի։

Ու վեր քաշեցի ձիգ պարանը ես։
Դույլը մի վայրկյան զարնվեց քարի.
Էլի՜ մի վայրկյան... Եվ հանկարծ ասես
Իմ դեմ ոգինե՜ր ելան շուրջպարի...

Զուռած աչքերով նայում էի ես
Դույլում օրորվող ջինջ, հստակ ջրին,
Որի մեջ մարմնի կիսանեխ մասեր
Հանդարտ, դանդաղկոտ օրորվում էին։
Ճիչը իմ կրծքում զսպելով հազիվ՝
Ջրհորի մոտից հեռացա լռին։

Հուրբաթի երեր, տարտամ քայլերով,
Որպես հալածված երկու ուրուներ՝
Մենք դուրս վազեցինք դեմքերով խռով,—
Եվ սարսափահար հայացքները մեր
Ո՜չ այգի էին էլ տեսնում, ո՜չ ծով,—
Ուր Մա՜հն էր արդեն իր թույնը քամել...

V

Եվ ահա մի օր տաժանքոտ ճամփից
Հոգնաբեկ, անուժ, հանգստի համար—
Մենք մտանք Մեռած Քաղաքի շեմքից
Մեռած Քաղաքի փողոցները մառ։
Սարսափն էր սահում մեր մռայլ դեմքից,
Ու տենդում էր մեր սիրտը դիվահար։

Մեռած Քաղաքում ո՜չ մի մարդ չկար։
Եվ ամայացած շենքերը ավեր,
Մութ, մահատեսիլ, կույրերի նման
Փորած աչքերով նայում էին վեր։
Եվ չէին կարող նրանց հանդիման
Գետին չնայել հայացքները մեր։

Չգիտեմ ինչո՜ւ— մենք մտանք մի տուն։
Անարև, անբիբ աչքերի նման

Նայում էին մեզ կասկածով անքուն
Պատուհանների խոռոչները լայն։
Շեմքի մոտ ընկած՝ նեխել էր կատուն.
Այն ո՞վ էր արդյոք սպանել նրան։

Ներս մտանք։ Տեսանք՝ կոտրած թախտի մոտ
Ընկած էր մի կին՝ արնաշաղ ու մերկ։
Խոռոչի նման բացված ահահոտ՝
Քրքջում էր կարծես բերանն արնաներկ։
Իսկ կոնքերն ու չոր ծծերն արյունոտ
Պատմում էին մեզ պղծումներ անելք։

Ցնդեցին գանգիս ճիգերը հետին.
Ուղեղս կարծես արդեն ի՛մը չէր։
Ու պար բռնեցին երկինք ու գետին,
Եվ մեկն ինձ ասաց, որ պետք է փախչել...
Սակայն ո՞ւր գնալ, որ քեզ չգտնեն
Այդ կոնքերը մերկ, այդ ծծերը ծեր...

Եվ մենք այդ գիշեր մնացինք այդտեղ՝
Մեռած Քաղաքի ավեր շենքերում։
Ամբոխվել էին տեսիլներն ահեղ.
Խեղերի նման ցատկոտում, պարում,
Ու դառնում էին մեռելներ մի տեղ՝
Սատանայական տենդոտ շուրջպարում։

Մեռած Քաղաքի շենքերից մեկում,
Աչքերս անլույս խավարին հառած,
Պառկել էի ես— ահավոր, անքուն։
Ու դեմս, կարմիր կրակներ վառած՝
Ցատկոտում էին, բառաչում, տնքում
Մեռելներ զարհուր ու բազմատարազ։

Գույնզգույն շորեր, մարմիններ մեռած,
Սրունքներ կապույտ, ստինքներ դեղին,
Հետույքներ ուռած ու արնակալած—
Խեղկատակ, արագ ցատկոտում էին,—
Իմ սարսափահար աչքերի առաջ,
Անթափանց մթում գերեզմանային...

Երգ էին ասում, ոռնում էին խուլ,
Հեծկլտում էին, ծիծաղում, շաչում,—
Խինդի էր նման ոռնոցը տխուր,
Լացի էր նման խինդը կարկաչուն,—
Բայց մահո՛ւ նման և՛ ծանրը, և՛ խոր—
Կրծում էր հոգիս ամե՛ն մի հնչյուն։

Եվ դժժում էր իմ ուղեղում բորբոք
Երգը այդ շփոթ, սատանայական,
Դառնում էր հեռու կարոտի մորմոք,
Եվ թվում էր ինձ, որ արդեն չկամ,
Այլ ինչ-որ հեռու երազում մի շոգ
Տարվում է հոգիս անզո՛ր ու անկամ։

Թռչում էի ես, որպես մի ուրու—
Նրանց պես ուրախ խաղում, ցատկոտում։
Եվ հանկարծ նրանց աղմուկը հեռու
Երգ դարձավ անփույթ՝ մանկական խնդում։
Եվ ես հասկացա, որ հեռո՛ւ-հեռուն
Մո՛վն է շառաչում զիշերվա տոթում։—

Մանուկներ ուրախ, խլրտուն ու վառ,
Արևի նման կարմրավառ լուսին,
Մեռելներ զվարթ ու խայտանկար—
Պա՞ր էին խաղում, երգում միասին...
Թռչկոտում էին սեթևեթ ու չար
Եվ երգում էին Աստղկա մասին...

Խե՜նթ երգում էին, որ Աստղիկը կա՛,
Ապրում է այնտեղ— ջրերի խորքում.
Թո՛ղ բուքը ոռնա՝ աշխարհի վրա—
Իրե՛ն ինչ՝ նա կա՛— անմահ, անհերքում,—
Եվ մի՛շտ գեղեցիկ ու կույս կմնա
Իր աստվածային, անհուն եզերքում։

Եվ մեռելների շուրջպարն էր թռչում
Լուսնահար, խելառ, տխուր, արնանկերկ,

Հնչում էր նրանց երգը կարկաչուն՝
Սատանայական տագնապի մի երգ,—
Ու ցատկում էին խավարի միջում
Մարմինները մառ, սրունքները մերկ...

Ու ձուլված իրար սեր, ցնորք ու մահ,
Լուսնահար ծովի երգով օրորուն—
Ուղեղիս բորբոք կտավի վրա
Թանձրացան նրանք ու անցան հեռուն,—
Եվ խավարն իջավ աչքերիս վրա
Եվ ո՛ղջը կորավ աներևաղ նիրհում...

VI

Մեռած Քաղաքից մենք ճամփա ընկանք
Ճի՛շտ դեպի կռիվ— դեպի ռազմավայր։
Գնում էինք մենք՝ համառ և ուրախ
Կռվելու, կռվով մեռնելու համար։
Նահանջում էր դեռ թշնամին արագ—
Եվ չէինք մենք դեռ հանդիպում իրար։

Ընդանոթները թնդում էին թունդ,
Եվ սրտաորոպ տեսնում էինք մենք,
Թե ինչպես այնտեղ, լեռներում կապույտ
Ավեր է փռում նա, հարված ու վերք,
Ու դառնում են շեն գյուղեր—մոխրակույտ,
Եվ ծուխը կապույտ, բարձրանում է վեր։

Եվ գնում էինք առաջ ու առաջ՝
Ջյունապատ լեռան ահավոր կողով։
Դժվար էր ուղին։ Բայց աչքերս հառած
Փախչող թշնամուն՝ անհուն մի կորով
Մղում էր մեզ միշտ առաջ ու առաջ
Եվ սրտերս այրում քանդումի հրով։

Երբ մենք, մի վայրկյան, հանգստի համար,
Կանգնեցինք լեռան ճերմակ գագաթին—
Նայեցի հեռուն։— Վարը, հողմավար,

Ծովն է աղմկում գանգատով մթին։
Զարնվում էին ջրերը իրար,
Ու խուլ, ու վարար մորմոքում էին։

Արճիճի նման գորշ, անփայլ ու մութ
Փռվել էր իմ դեմ ծովը հողմակոծ։
Գորշացել էին ջրերը կապույտ
Ու գորշ էր թվում աշխարհը ամբողջ։
Եվ ինչ-որ մի խոր ու տխուր խորհուրդ
Համակեց հանկարծ էությունս ողջ։

Եվ ծեր, ծովի պես, ծանրացավ հոգիս։
Ու կատակ թվաց արած գործը մեր։
Բայց լուռ բարձրացա, քայլեցի նորից։
Թնդանոթները թնդում էին դեռ։
Լցվել էր հոգիս անբառ մի կսկիծ՝
Թվում էի ինձ մենա՜կ ու անտեր։

Հանկարծ կանգ առա ես ձորամիջին։
Այլանդակ մի դի փռված էր իմ դեմ։
Նրա մոտ ընկած վիրավոր մի ձի
Ջղաձգորեն մեռնում էր արդեն։
Հե՜յ, մի քիչ առաջ, հլու իր սանձին՝
Սա՛ էլ էր փախչում այս վայրից գեհեն։

Ո՞ւր էիր փախչում, խղճո՛ւկ անասուն...
Քեզ քո տերն այստեղ ծեծելո՞վ բերեց։
Բայց նա չգիտե՞ր, որ այս երազում
Միայն Մա՛հն է տեր՝ անողոք ու մեծ։
Էլ ինչո՞ւ էր նա ավերել ուզում,
Այս դաժան մարտին ո՞վ նրան հրեց։

Տե՛ս, այլանդակված այժմ ընկած է նա։
Սևացել է, տե՛ս, արճիճի նման։
Անթաղ, անշիրիմ այստեղ կմնա,
Ոչ ոք չի՛ փորի նրան գերեզման,—
Ոչ ոք չի՛ տխրի, որ նա զոհ եղավ
Մի արնածարավ, անիմաստ ցասման։

Չգիտեմ ինչու, կամքիս հակառակ,
Նայեցի ահով նրա հրեսին,—
Ու առաջ անցա քայլերով արագ,
Հոգուս բեռ արած խեղճությունը իմ։
Իսկ մերոնք, անմար եռանդով վայրագ,
Կռվում էին դեռ ու բանդում էին։

Հուր ու ծխի մեջ օրը վերջացավ—
Եվ մենք կանգ առանք լեռան փեշի մոտ։
Հուր ու ծխի մեջ թշնամին անցավ՝
Ուսին շալակած պարտություն, ամոթ։
Եվ ամեն անկում, ամեն վերք ու ցավ
Ծածկեց գիշերվա վարագույրը տոթ։

Եվ մենք ետ դարձանք դաշտերից մարտի՝
Հանգստանալու հեռավոր գյուղում։
Հեռուն՝ մի այրած, սևասև արտի
Ցողուններն էին ծուլորեն մխում։
Ու քայլում էինք՝ հոգնած, անոթի,
Աշնան գիշերի մեղ-մառախուղում։

Երկու ընկերով քայլում էինք լուռ՝
Հոգնած զինվորի եռանդով անշեջ։
Մեռելի նման ահավոր, տխուր
Ցավն էր տարածվել մշուշոտ ու գեջ։
Գնում էինք լուռ, չգիտեմ, թե ո՞ւր՝
Միշտ նո՛ւյն ծովափով— անվե՛րջ ու անվե՛րջ։

Երբ ուրվագծվեց մշուշում մի լեռ—
Ասացին, որ գյուղն այնտեղ կլինի։
Բայց ծալվում էին սրունքները մեր.
Ընկերս ուզեց, որ ընկնի, քնի—
Բաց երկնքի տակ, գյուղ չհասա՛ծ դեռ,
Հենց ճամփի վրա՝ ինչ կուզե— լինի։

Ու մնաց այնտեղ։ Ես անցա առաջ։
Նրան երևի ձիով կբերեն։

Վերելքը ծանր էր, ծանր էր՝ ի՞նչ արած...
Պետք է իմ բոլոր ուժերը լարեմ,
Հասնեմ— նո՛ր քնեմ հոգնած, խոնջացած,
Որ երազները հոգիս օրորեն։

Բարձրանում էի։ Վայրենի քամին
Մեծում էր կուրծքս ահռելի ուժով
Եվ մթնում էին հայացքները իմ,
Լցվում էր հոգիս թանձր մշուշով։
Բայց ճիգ թափելով մի գերմարդկային՝
Ես քայլում էի լուռ, ուշի-ուշով։

Մենակ, անընկեր։ Հսկա բուի պես
Այլազե մատներն աչքերիս հառած՝
Ոռնում էր քամին։ Ընկնում էի ես,
Նորից բարձրանում ու անցնում առաջ։
Երբեք չէր եղել մարմինս—այնքան հեզ,
Եվ ոգիս— այնքան կամքի ուժ առած։

Ու վատնում էի ճիգերս հետին։
Գագաթը մոտ է— կհասնեմ հիմա։
Բայց հանկարծ քամին շպրտեց գետին,
Դեպի անդունդը՝ ուղի՛ղ դեպի մահ։
Բայց ո՛չ... Մեռնողի բնազդով մթին
Գրկեցի քարերն ու ոտքի ելա։

Չայլեցի նորից։ Եվ հանկարծ իմ դեմ
Փոքրիկ լույսերի մի ոսկի մշուշ։
Ա՜հ, հասել էի ես գյուղը արդեն։
Հասել էի ես։ Կես-գիշեր էր ուշ։—
Եվ ցորեն խրճիթի խոտերի մեջ թեն
Քնեցի անո՛ւշ, քնեցի անո՛ւշ...

VII

... Կռիվն սկսվեց— անողոք ու գոռ։
Մենք դաշտում էինք։ Ձյունոտ լեռներից

Հարձակվում էին նրանք— բյուրավոր,
Մերթ ետ նահանջում մեր գոռ գրոհից։
Մերթ առաջ անցնում ոհմակներով նոր—
Ու փախչում էին, ու գալիս նորից։

Եվ ընկնում էին նրանք շարեշար,
Մռնչում էին գազանների պես։
Բայց խիտ, անհատնում շարքերով վարար
Շարժվում էին նորից դեպի մեզ։
Ամեն ինչ հանկարծ խառնվեց իրար—
Եվ սվինամարտն ահա սկսվեց։

Մենք գրկում էինք ու չանկռում իրար,
Սվինի զարկով գլորում գետին։
Վագրերի նման խորամանկ ու չար,
Ապրելու հսկա ծարավով հետին՝
Խոշտանգում էինք— ապրելո՛ւ համար,—
Եվ կռվում էինք, և կռվում էինք։

Եվ չէինք հիշում այլևս ոչինչ,
Եվ չգիտեինք ի՞նչ էինք անում։
Եվ շատերն էին ընկնում մեզանից
Եվ ոտքերի տակ մեր անշնչանում։
Չէ՞ինք տարբերվում վայրի գազանից
Ահի ու արյան այդ խառնարանում։—

Կոխոտում էինք ընկերների դին,
Ընկերների դին դիրք էինք անում։
Ու վատնում էինք ճիգերս հետին
Անհասկանալի տագնապով անհուն։
Եվ չգիտեինք, և չգիտեինք,
Թե հորձանքը սև մեզ ո՞ւր է տանում։

Իրիկունն իջավ։ Անհուն խավարի
Խավար ծալքերում կորավ ամեն բան։
Եվ իջավ մռայլ երաղը Ձարի
Այն խայտաճամուկ դաշտերում անբան։

—Է՞, մնաք բարի, ընկերնե՛ր արի,
Դուք պատվո՞վ անցաք ձեր կյանքի ճամփան։

Իսկ մենք— նենգորեն նահանջեցինք ետ՝
Ձյունագիշերի մրրիկների տակ։
Եվ իմաստ չուներ ճամփան անհետեթ,
Եվ անցնում էինք՝ անկումին գիտակ։
Երբե՛ք չէր եղել հոգիս— այնքան խենթ,
Եվ գանգս— այնքան զառանցուտ ու տաք։

Հոգուս մեջ կարծես հնոցներ կային,
Եվ աչքերիս մեջ— խարույկներ լափլեզ։
Բայց մարմինս հավե՞րժ, հավե՞րժ մարդկային՝
Ուզրել էր ուզում։ Մահապարտի պես
Հայացքներս հառած ահավոր Մահին՝
Մյուսների հետ փախչում էի ես։

Եվ խավարի մեջ կարմիր ու կարմիր
Գնդակներն էին թռչում ու շաչում։
Եվ ընկնում էին ընկերները մեր
Սատանայական խուճապի միջում։
Եվ ընկնում էին անգի՞ն ընկերներ։
Եվ վերջին անգամ մեզ էին կանչում։

Եվ երբ արևը բարձրացավ երկինք,
Եվ մենք լույսի տակ իրարու դտանք—
Մեռելների պես սփրթնած էինք,
Չէինք հավատում, որ ապրում ենք, կանք.
Անխոս հայացքով իրար թաղեցինք,
Իրար հոգու մեջ գերեզման մտանք։

. . . . . .

Նրանք մնացին ձյունոտ դաշտերում՝
Ցաղցած գայլերի ոհմակներին կեր,
Այնտեղ, ուր ընդմիշտ տանջանքն է լռում
Եվ հոգին դառնում անհունին ընկեր.
Ուր իբր հիշատակ կյանքերից սիրուն—
Մնում են միայն այլանդակ դանգեր։

Ու մութ է հիմա այնտեղ, ամայի,
Քամին է միայն ոռնում ու կոծում,
Տոնելով վայրագ հարսնիքը Մահի՝
Նենգավոր ու խոր ձյունների ծոցում։
Եվ ո՞վ կգնա, և ո՞վ կնայի
Անդրշիրիմյան տոնող Աստծուն...

. . . . . .

Իսկ մենք ապրում ենք ու շնչում ենք դեռ
Այս խայտանկար, ավերակ գյուղում,
Ուր ամեն տան մեջ մա՛հ է ու ավեր,
Ուր ամեն վայրկյան արյուն է ցողում,
Ուր ամեն վայրկյան լարում է դավեր
Քմահաճ բախտի ժրաջան մեղուն։

Եվ առօրյա է հիմա մեզ համար
Մարդկային անթաղ, այլանդակված դին։
Ահարեկիչի քրքիջով համառ
Մենք կեր ենք նետում անկուշտ անդունդին։
Եվ իմաստ չունի այլևս հիմար
Ճակատագրի որոշած Անդին։

Եվ դինին այստեղ ծորում է առատ,
Եվ հարբում ենք մենք կարմիր խնջույքում։
Այլևս չկա և ո՛չ մի արատ,
Որ ծաղիկ չտա մեր գինով այգում։
Պատրաստ է ընդմիշտ մեր գոհը պարարտ՝
Մենք՝ գոհ, մենք՝ դահիճ՝ ուրիշի ձեռքում...

VIII

... Երեկ առավոտ բարձրացա կանուխ
Եվ լուռ կանգնեցի բլուրի վրա։
Հեռուն՝ գնգալով իշնում էր մի ուղխ,
Լսում էի ես կարկաչը նրա։
Կապույտ երկնքում ո՛չ ամպ կար, ո՛չ ծուխ։
Եվ ես մոռացա՝ տաժանքն առօրյա...

Ա՜խ, գյուղակների շուրջպարը կանաչ՝
Դաշտերի ոսկի՜ հնձաստաններում,
Ուր մի անսահման թախիծ կա փռած
Եվ մի հոգեթով տխրության հեռու,
Ուր հավերժության ցնորքը անհաս
Ճախրում է կարծես ոսկի՜ դաշտերում...

Ամեն ինչ այնպես անդորր է ու կույս,
Որ չեմ հավատում կարմիր երազին։
Միրաժի նման փարվում է հոգուս
Անէ աշխարհի քնքշությունը հին։
Բայց չէ՞ որ այստեղ ապրել են անհույս—
Եվ չե՛ն էլ լսել քնքշության մասին...

Օ՜, խորհուրդների հավերժական մա՛յր,
Որ տառապանքի ու տարփանքի մեջ
Հղանում ես միշտ կյանքեր անհամար—
Հազար գույներով՝ հազա՛ր ելևէջ,—
Որ հղանում ես աշխարհի համար
Հավիտենական կշռույթների վեճ...

Օ՜, դո՛ւ, բարբարո՜ս, խելագա՜ր, ցավո՜տ,
Երբեմն իմաստուն, երբեմն— գազան,
Աշխարհներ այրող կախարդական խո՜տ,
Աշխարհներ շինող բախտի գավազա՜ն,—
Դիվային ոգի՝ ճահիճների մոտ,
Ոչնչի՜ մասին— աղո՜թք սրբազան...

... Ու պե՜տք է քայլե՜լ ու քայլե՜լ համառ՝
Ապրելու հսկա տենչը բեռ արած,—
Քայլել անիմաստ մի կյանքի համար,
Մարել— ու վառել աստղերը մարած,
Որ— տիեզերքի զառանցանքը մառ
Ցնդի՜ երբեք ու մնա— երազ...

1915—1916

Տաճկաստան—Պարսկաստան
ռազմաճակատ

ՎԱՀԱԳՆ

Փրկությանդ առե՛ Վահագնին տեսար...
Հ. Հովհաննիսյան

Հրդեհի աստված, հրդեհ ու կրակ,
Օ, Վահագն արի։— Տեսնում եմ ահա,
Որ ծիծաղում ու քրքջում են նրանք
Արնաքամ ընկած դիակիդ վրա։
Թե մի՞ֆ էիր դու... Եկան, երգեցին
Մի հին իրիկուն գուսանները ծեր,
Որ հզո՞ր ես դու, հրոտ, հրածի՛ն,
Որ դո՞ւ կբերես փրկությունը մեր։
Եվ հավատացինք, հարբած ու գինով,
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ու՛ժի—
Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով
Մեր երկիրը հին դարձրին փոշի...
Եվ երբ քարշ տվին դիակդ արնաքամ,
Որ նետեն քաղցած ոհմակներին կեր—
Մեր կյանքի հիմներն անդունդը ընկան
Եվ արնոտ միգում ճարճատում են դեռ...

1916

ԱԹԻԼԼԱ

Топчи их рай, Атилла!
Вяч. Иванов

I

Դարերի խորքից արթնացած նորից՝
Անցնո՞ւմ եմ ահա երկրի դաշտերում.
Նայում եմ դեպի հրդեհվող հեռուն՝
Դարերի խորքից բարձրացած նորից։

Ինձ թաղել էին ոսկի դագաղում
Իմ հոները մի հեռավոր գիշեր։
Եվ ո՛չ մի արքա տեղիս չգիտեր—
Եվ աճյունիս հետ ոչ-ոք չէ՛ր խաղում։

Մոռացե՛լ էին արքա Աթիլլին։
Եվ հեգնում էին երազը նրա...
Եվ կարծում էին, որ մեռել է նա...
Իսկ ես— բարձրացել, անցնում եմ կրկին։

Եվ հրդեհների բոցերը դեղին
Խանձում են ահա աստղերը նորից.
—Էլ չե՛ք մոռանա, չե՛ք հեգնի էլ ինձ՝
Հոների արքա հզո՞ր Աթիլլին։

Ես կրկին ահա քանդում եմ, վառում.
Քաղաքներ, գյուղեր փլչում են իմ դեմ.
Եվ այս անգամ ես՝ գո՞ռ, անհա՛ղթ արդեն՝
Մի կարմիր գիշեր կմտնեմ Հոում...

Եվ իմ երկաթե բռունցքովը ես
Ձեր տաճարները անդարձ կքանդեմ.
Նորի՞ց կսողան արքաներն իմ դեմ՝
Մանր, ճահճային ճիճուների պես...

Նրանք—խեղկատակ ու ողորմելի,
Որ, կույր, խնդացին նստած կրկեսում՝
Երբ Թեոդոսը տեսավ երազում,
Որ կոտրվե՞լ է նետը Աթիլլի։

Նրանք, որ մի օր իմ անակընկալ
Մահով կուրացած, որպես երազում,
Մի ինչ-որ հանգի՞ստ էին երազում
Հոգնած մարդկության ու իրենց համար։

Եվ չըդիտեին, որ ես չե՛մ մեռել,
Որ ես չե՛մ մեռնի, որ եղել եմ, կամ՝
Նորի՞ց կքնեմ, նորի՞ց կարթնանամ.—
Ես— հազարանուն՝ Մահ, Ավերք ու Նեռ...

II

Տեսնում են նորից իմ աչքերը նեղ,
Որ սեգ նժույգիս սմբակների տակ
Ցնդում են, որպես տարտամ հիշատակ,
Ձեր երազային շենքերը բյուրեղ...

Հե՞յ, արևմուտքից մինչև արևելք
Պիտի հրդեհեմ ու քանդե՛մ հիմա՝
Ես— արքա՞, աստվա՞ծ, տե՞նդ, ավերմո՛ւնք
ու մա՞հ,
Ես— ճշմարտության խարազանը մերկ։

Եվ թո՞ղ աշխարհի տերերն իմանան,
Եվ խոր ըմբռնեն մի վերջին անգամ,
Որ եղե՛լ եմ ես, կլինե՛մ ու կա՛մ,
Ե՛ս— անհերքելի ու հավերժական...

Եվ թո՞ղ մարդկային ցեղերն առանձին
Հավիտյան հիշեն աղոթքում, երգում,
Որ խոտ չի՞ բուսնի այլևս այն երկրում,
Որով անցել է Աթիլլի հին ձին...

Թող հիշեն նոքա, որ կամքս բռնի,
Քանդումի, հրի իմ ցնորքը հին,—
Երբեք չի՞ ցնդի, երբեք չի՞ մեռնի,
Ոչ-ոք չի՞ հաղթի արքա Աթիլլին...

III

Իսկ երբ մի գիշեր կրկին հագնամ,
Երբ հոգնի խաղից մարմինս արի—
Նորի՞ց կքնեմ մի քանի տարի,
Ոսկի դագաղիս գիրկը կգնամ։

Եվ ինձ իմ մոայլ հսկաները խենթ,
Առանց աղոթքի և առանց խոսքի,—
Նորի՞ց կթաղեն դագաղում ոսկի
Եվ թաղողները կթաղվեն ինձ հետ—

Որ իմ մարմինը ո՞չ-ոք չգտնի,
Որպեսզի ո՞չ-ոք երբեք չիմանա,
Թե ո՞ւր է թաղված հին Աթիլլը— նա,
Որ հավասարեց ձեր փառքը գետնի...

Որպեսզի կրկին, երբ երկրի հրից
Երկնի աստղերը գանգատվեն քարին՝
Իր հին երազին մի՛շտ հավատարիմ—
Արքա Աթի՛լլը բարձրանա նորից...

1916 թ., Մոսկվա

ՀԱՏՎԱԾ

...Օրերը այստեղ են բերել։
Եվ ես
Այստեղից
Անցնում եմ՝ տարտամ ու երեր։

Նորից
Քայլերս դարձել են տարտամ։
Նորի՜ց ծանրացել է
Սրտիս մեջ թախիծը
Անկամ։

Գնում եմ,
Գնում եմ—
Նորից.
Գիտեմ, որ անցնում է տարին։
Գիտեմ, որ
Նորից ու նորից
Ոտքերս առել են քարի՜...
Ու շուրջս խավար է։
Ու շուրջս մշուշ է
Ու մահ։

Գիշեր է— ու վարը
Հիմա
Խարխուլ, խուլ ծփում է
Խոնավ
Խորխորատը

Հնի.
Թափվում է, թափվում է
Արյան պես կարմիր մի
Գինի...

Հեյ ո՞ւր եմ հիմա ես—
Էս ո՞ւր եմ—
Ես ո՞ւր եմ
Հասել.
Եվ ո՞ւր է,
Երկի՜ր ի՜մ,
Քո հուրը—
Փրփուրը—
Լուսե։

Էն ո՞վ է սրտին քո
Դրել իր
Կապարը—
Էն ո՞վ է թքել քո
Հրին.
Հե՜յ ո՞վ է կոփել կուռ,
Անդուլ այս խավարը՝
Մահե շիրմաքարը
Լռին։

Եվ ո՞վ է
Տվել քեզ
Այս խեղճ հոգնությունը,
Այս խեղճ հոգնությունը
Հիմա—
Սոր քո հոգնությունը
Քարի հոգնություն է—
Քարի՜ հոգնություն է
Ու մահ։
Իսկ էն, որ թռել ես,
Հոգով
Փրփրել ես,

Սրտում քո կրել ես
Հուրե՜ր ու հուրե՜ր.
Հազա՜ր դար քո կամքը
Կուիել ու կռել ես—
Սրել ես քո կամքը
Հրե...

Իսկ է՞ն, որ սրտիս մեջ
Հազա՜ր դար կրել եմ
Քո քաղցր գալիքը լուսե.—
... Օրերը եկե՜լ են,
Օրերը հասե՜լ են,—
Ու հուրը դարձել է քո— սև...

Եվ ի՞նչը,
Էլ ինչը
Պիտի փոթորկի քո
Հին սիրտը— իմ սիրտը հիմա.
Էլ ո՞ւմ նետե՜մ ես
Անզոր իմ այս ճիչը,
Երկիր իմ, մորմոք իմ ու մահ...

Մենք, լուռ, շվարե՜լ ենք,
Լույսերս
Մարել ենք—
Հույսերս էն ո՞ւմ ենք տվել...
Եվ ո՞վ մեզ,
Էլ ո՞վ մեզ,
Էն ո՞վ պիտի տա—
Երկի՜ր իմ, թռիչք ու թևեր...

1918

ՍՈ՛ՄԱ.

I

Որպես քուրմը Գանգեսի,
Կարոտակեզ, սիրակեզ—
Կյանքս տվե՜լ եմ լույսիդ
Եվ երգում եմ քեզ։
Քե՜զ եմ երգում այս կարմիր
Աշխարհում հիմա,—
Քե՜զ եմ երգում, քա՜ղցր քույր,
Խելա՜գար Սո՜մա։

II

Դարեր շարունակ, անվերջ, անդադրում,
Ու սիրտս— գարուն,
Կյանքս երգ շինած՝ քե՜զ էի փնտրում
Այս շար աշխարհում։

Ու չէի գտնում, Սո՜մա, ո՜չ մի տեղ
Քո դեմքը հրե,—
Բայց ես գիտեի, որ մեռնում է նա,
Ով որ քեզ սիրե։

Ու սիրտս տված մահի անուրջին,—
Մա՜հ էի տենչում,—
Բայց տեսա հանկարծ քո դեմքը վերջին
Այս աղջամուղջում։

Քո դեմքը տեսա, որպես սրբազան
Մի զոհարերում.
Քո դեմքը տեսա աշխարհասասան
Այս հրդեհներում։

Եվ քեզնով հարբած՝ կանչեցի՝ նրանց
Հրդեհի պարին,—
Եվ կյանքս տվի, պարզ ու սրտաբաց,
Վառվող աշխարհին...

III

Սո՜մա, ես գիտեմ՝ մի աղջիկ ես դու,
Երկնային մի քույր,
Որ տալիս է մեր սուրբ ծաղիկներին
Թույն, թախիծ ու բույր։

Երկնքից իջած քո ցո՜ղն է սերում
Բույսերը բոլոր.
Քո՜ւյր, ապրում ես դու մեր սուրբ բույսերում
Քաղցր ու ահավոր։

Մենք այդ բույսերից խմիչք ենք շինում,
Գինի հրակեզ,
Եվ այդ սրբազան խմիչքով հարբած—
Ցանկանում ենք քեզ։

Վառվում ես, Սո՜մա, մեր երակներում
Դու, որպես գինի,—
Եվ քեզնով հարբած ուզում ենք մենք էլ,
Որ այս աշխարհում քո կամքը լինի...

IV

Սո՜մա, օ, Սո՜մա, սրբազան խմիչք,
Սրբազան դու սեր,
Ոգևորության դու քա՜ղցր գինի,
Երկունքի գիշե՜ր։

Արշալույսների սրբազան արգանդ,
Ոգու Կաթն Ծիր.
Արևից առաջ դո՜ւ երկնից անցար,
Ոսկի փոեցիր։

Օ, սրբազան հա՜րս դու ազատության,
Դու— ազատությո՜ւն,
Դու— վերջին ցնորք վերջի՜ն քաղցրության,
Դու— ոգու խնդում։

Դո՜ւ, որ սրտերում փրփրում ես վառ,
Հոսում ես արագ,
Ու փրփուր-փրփուր եփվելով սրտում
Վառվում ես հանկարծ, դառնում ես կրակ։—

Սո՜մա, օ, Սո՜մա, օրհնվի՜ թող այն
Վայրկյանը կարմիր աշխարհում այս չար,
Երբ մարդու սրտում առաջին անգամ
Հրի փոխվեցիր ու Ա՜գնի դարձար...

Ու հրդե՜հ դարձար, ու կրակ, ու հուր,
Սրտից ծփալով— անցար աշխարհին.
Եվ կյանքը այս չար, այս կյանքը տխուր
Հանձնեցիր հրին։

Ծփում ես հիմա մարդկանց սրտերում
Ու ողջ աշխարհում հրդեհ ես վառել.
Քո՜ւյր, դո՜ւ ես միայն թիպոտ օրերում
Մեզ մխիթարել...

Վառե՜լ ենք հիմա աշխարհը նորից,
Ուխտի ենք ելել խենթ ու խելագար.
Օրհնվի՜ թող քո անունը նորից,
Որ հուր դարձրեց մեր սրտերը քար։
Հուրդ մեր սրտում թող սուրբ փրփրի.
Խմե՜լ ենք արդեն, ելել ենք պարի,
Խառնել ենք իրար հիմա կյանք ու մահ.

Բոլնկվի՛ր կրկին ու կրկին անգամ,
վառվի՛ր մեր սրտում, ծփա՛ արնաքամ,
խելագա՛ր Սո՛մա...

V

Քո՛ւյր, քո գինին մեր սրտերում
Մխացել է դա՛ր ու դարե՛ր.
Քո՛ւյր, քո գինին մեր սրտերում
Քանի՞ ոսկի ջահ է վառել...
Քանի՞ ոսկի ջահ է վառել
Երկրի մուժում,
Քանի՞ ոսկի ջահ է վառել
Կյանքի փոշում։
Դա՛ր ու դարե՛ր մեր սրտերում
Վառվել է վառ,
Բայց հրդեհվել չի կամեցել
Աշխարհը քար։

Ո՞վ չի տեսել, երբ իջնում է թանձր գիշեր—
Շիրիմներից դուրս են թռչում ոսկի լույսեր։
Փոշիացող ոսկորներից լույս է ծորում.
Գինի՛դ է այն, որ չի վառվել մարդու օրում։
Գինի՛դ է այն, որ զուր հուզվել, բայց չի՛ վառել՝
Գինի՛դ է այն, որ մարդ իր հետ վա՛ր է տարել.

Ու գիշերի թանձր մթում—
Հրե մի սուր—
Դուրս է թռչում գերեզմանից՝
Վառվում է զուր...
Սո՛մա, գինիդ, որով հարբել,
Խենթ ենք հիմա—
Դա՛ր ու դարե՛ր տվել է մեզ
Երկունք ու մահ.
Մա՛հ է տվել ու գերեզման,
Հող ու անհուն—

Որ դուրս թռչի, ազատ վառվի—
Գերեզմանում...
Ու չէր վառվում դա՛ր ու դարեր
Աշխարհը քար.
Հիմա վառվեց... խենթ ենք մենք էլ
Ու խելագար։—

Դա՛ր ենք բռնել խելագար,
Հրդեհում ենք ու վառում—
Այն ամենը, ի՛նչ որ կար
Հազարամյա աշխարհում։
Ու արյունը մեր՝ խառնված հրին՝
Վառվում է ազատ,—
Ու լույս է տալիս վառվող աշխարհին
Դեմքդ հեռակա։

VI

Ու դառնում է մեր շուրջպարը արագ,
Եվ մեր շուրջպարում— հրդեհի պարում
Հեքիա՛թ է կյանքը, ու մարդը— կրակ։

Հրթի՛ռ-հրթի՛ռ վեր են թռչում
Կյանքերը մեր կարճվեր,
Ու վառվում է աղջամուղջում
Ողջակիզվող սիրտը մեր։

Ամբոխները զրահապատ
Ծափ են զարկում ու պարում,
Ջա՛հ է դարձել ամեն մի մարդ
Կրակապատ աշխարհում։

Ու պար բռնած ու խելագար
Ե՞րգ ենք ասում կրակին—
Ու վառվում է աշխարհը քար
Մրրիկներում կրակի։

Կիրակի է կյանքն հիմա—
Ջահազարդվա՜ծ, կրակուն—
Ու պարում են կյանք ու մահ
Սո՜մա, քո սուրբ կրակում...

VII

Հե՜յ, հեռավոր ընկերներ ու եղբայրներ,—
Դուք չե՞ք լսում. ձե՜զ ենք կանչում,—
Ջվարթ ու սեգ,
Եկե՜ք, մտե՜ք շուրջպարը մեր—
Եկե՜ք, եկե՜ք։
Օ, կո՜ւյր է նա, ով չի տեսնում
Երկինք հասած կրակը թեժ.
Եկե՜ք, եկե՜ք, ով սիրտ ունի
Ողջակիզվող ու հրակեզ։
Ով որ եկավ— պետք է իր հետ
Ողջակիզվող մի սիրտ բերի—
Եկե՜ք, հսկա պարը մտեք
Աշխարհային հրդեհների։

Ու ծավալվի՜ թող
Աշխարհովը մեկ
Հրդեհը մաքրող,
Բոցը հրաշեկ։

Կյանքը հնամյա,
Որ մխում է զուր—
Թող մոխի՜ր դառնա
Ու անցնի իզուր։

Հո՜ւրը թող մնա,
Հրդեհը հոգու,
Որ հրաշք դառնա
Սո՜մա, խոսքը քու։

Ու գալիս են անվե՜րջ, անվե՜րջ
Ամբոխները ահագին,
Որ կյանքը հին ու սնամեջ
Ողջակիզեն կրակին։

Ու հուրն ընկած, անդարձ, անել,
Այրվում է կյանքը քար—
Ու հրդեհում պար են բռնել
Ամբոխները խելագար։

Ու արյունը մեր, խառնը-լած հրին,
Վառվում է հրում՝ զո՜հ է սրբազան—
Ու ժպտում է քո դեմքը աշխարհին
Այս հրդեհներում աշխարհասասան...

IX

... Թվում է հիմա կյանքը իմ հոգուն
Մի ոսկի տեսիլ.
Ինչ լա՜վ է, Սո՜մա, որ կյանքի հոգուն
Հիմա՜ եմ հասել.
Ինչ լա՜վ է, Սո՜մա, որ քո կրակում
Վառվում եմ ես էլ...

Կվառվեմ հիմա, որպես զոհ-կամքիդ
Ու զոհաբերում,
Եվ եթե մարի հրդեհը այս մեծ,
Որ չունի մարում—
Դու էլի՜ հազար հրդեհ կվառես
Այս չար աշխարհում...

Սո՜մա, սերը քո թույն է ուժգին,
Բայց քա՜ղցր է այնքան.

Սո՛մա, կաս դու միշտ, բայց անցնում եմ ես
Ու վաղը չկամ.
Սո՛մա, աշխարհում թող կամրդ լինի
Տիեզերական։—

Կյանքս կմարի՝ հին, չնչին մի կայծ
Քո ոսկի հրում—
Բայց վառվի՛ պիտի սիրուս մոխրացած
Քո բոլո՛ր գալիք արշալույսներում...

1918 հունիս—հուլիս
Կարմիր բանակ

ԱՄԲՈՒՆՆԵՐԸ ԽԵԼԱԳԱՐՎԱԾ

I

Հեռո՛ւ, մոտիկ ընկերներին,— աշխարհներին, արևներին,—
Հրանման հոգիներին։—
Բոլո՛ր նրանց, ում որ հոգին վառվում է վառ,—
Բոլո՛ր նրանց հոգիներին արևավառ,—
Կյանքի՛, մահի՛ այս ամեհի աղջամուղջում՝
Ողջակիզվող հոգիներին— ողջո՛ւյն, ողջո՛ւյն։—

II

Իրիկուն էր, հրակարմիր մի իրիկուն։
Արևը, բորբ՝ մայր էր մտնում արևմուտքում։
Դաշտի վրա փռվել էր մուժ արյունամած՝
Թույն էր կարծես՝ բորբ արևի սրտից քամած։
Արևը, թեժ՝ մայր էր մտնում արևմուտքում—
Ու արյուն էր դաշտի վրա, թո՛ւյն էր թքում։
Հորիզոնում վառել էր մի կարմիր քուրա—
Ու արնավառ փայլ էր փռում դաշտի վրա։
Ու արտերը, ալեծածան, վառվել էին
Արեգակի կարմիր փայլով իրիկնային։—
Դաշտը, անծայր ու անսահման, լայնատարած՝
Հրակարմիր տարածվել էր նրանց առաջ։—
Ծով էր կարծես, որ սկիզբ ու սահման չունի—
Ծով էր կարծես՝ մշուշի մեջ իրիկունի։—

III

Արևի տակ իրիկնային, իրիկնային հրով վառված՝
Այդ հին դաշտում կովում էին ամբոխները խելագարված։
Քաղաքներից ու գյուղերից, ստեպներից հեռու ու մոտ՝
Եկել էին նրանք նորից՝ հուսավառված ու կրակոտ։
Ով քաղաքից էր հեռացել— նա թողել էր մշուշը ծեր,—
Մշուշը, որ կյանքի վրա մխաշաղախ ամպ էր դարձել։
Ով եկել էր գյուղից հեռու— նա թողել էր հողը խոնավ,
Որի վրա կյանքը հլու ո՛չ մի ոսկի հասկ չծնավ։
Ով եկել էր ստեպներից, նա թողել էր անծայրածիր
Լայնությունը հորիզոնի, որ իր համար բանտ էր դարձել։
Ով քաղաքից էր հեռավոր, ուր մառախուղ էր անորոշ՝
Նա բերել էր թոքախտավոր սիրտը, որպես կարմիր դրոշ։—
Ով եկել էր, թողած հեռուն անծայրածիր մութը գյուղի՝
Բերել էր իր մկաններում բեղմնավորված ուժը հողի։
Ով եկել էր ստեպներից, ուր ապրում էր որպես գերի—
Բերել էր իր լուրթ աչքերում լայնությունը ստեպների...
Ըմբոստացած, խելագարված, չտանելով հին կյանքը էլ՝
Անծիր դաշտում այդ հավաքված՝ նրանք կռվի էին ելել։

IV

Մայր էր մտնում իրիկնային արևը՝ թեժ լույսով վառված։—
Ու երգելով կռվում էին ամբոխները խելագարված։—
Դաշտն էր դեմը՝ փռված էր նա շառագունված ու արևուն,—
Ու հեռևում, ճամփի վրա հսկա քաղաքն էր երևում։—
Ո՜ւյլ նազանքով, իրիկնային արևի տակ անփույթ փռված՝
Պսպղում էր քաղաքը հին՝ հազարերանգ մի զանգրված։
Հեռո՜ւ, հեռո՜ւ, անծայր ու լայն, տարածվել էր քաղաքը հին—
Լողանում էր կարծես մարմանդ մշուշի մեջ իրիկնային։
Հաղթ շենքերը, բարձր ցցված, կարծես կախված կարմիր օդում՝
Հետզհետե մթնում էին, անգունանում ու աղոտում։
Հեռու հրով միայն վառված պատուհանները ապակի
Փայլում էին արյունամած վերջին հրին արեգակի.
Արևի դեմ փայլում էին հրաբոսոր՝
Բոընկվել էր նրանց սրտում տագնապը սուր...

Եվ երկրնքի սիրտը մխված բևեռների պես արնաքամ՝
Փայլում էին արյունամած ծխնելույզներն հսկայական։
Ծուխ չէր ելնում նրանց փողից՝ չէին փնչում երկինքն ի վեր.
Չէր կարծրանում նրանց ծուխից իրիկնային երկինքը էլ։—
Լոկ մշուշը իրիկնային թանձրանում էր հետզհետե—
Ու մշուշում կորչում էին ծխնելույզները երկաթե։—

V

Իսկ քաղաքից դեպի հարավ՝ ահատեսիլ ու հաղթական՝
Երևում էր երկաթուղու կայարանը հսկայական։
Լսվում էր մերթ շոգեկառքի սուլոցը սուր հեռու մուժում—
Մորթում էին կարծես այնտեղ խելագարված մի անասուն...
Ճչում էր սուր, հուսակտուր, ու հուսահատ ձայնը նրա,
Որպես անդարձ մահի մի լուր տարածվում էր դաշտի վրա։—
Ցրված էր նա, կայարանը, հսկա ու հաղթ, նրանց առաջ։—
Ու հանգույցից կայարանի, դաշտովը մեկ լայնատարած՝
Դեպի հյուսիս, դեպի հարավ, ու արևմուտք, ու արևելք—
Ուղիները երկաթագիծ ձգվել էին ամենուրեք։—
Երակների պես երկաթե քաղաքամոտ կայարանից
Հեռո՜ւ, հեռո՜ւ ձգվել էին ուղիները երկաթագիծ։
Երակների պես երկաթե՝ ամուր գրկած կուրծքը հողի՝
Սեղմըվելով հետզհետե՝ փախչում էին գաղտագողի...
Ու ցցված էր ուղիների խաչակնքման սեղմ հանգույցում—
Կայարանը, որպես մի հարց, որպես հսկա մի բարբացում։
Ուղիների ճամփամիջում հանգույց էր նա կարծես կապված—
Ու անզիջում կռվում էին ամբոխները խելագարված։
Կարծես նետված մի հաղթ ձեռքով՝ աշխարհային կամքին հլու՝
Գնո՜ւմ էին կռվո՜վ, երգո՜վ կայարանը գրավելու։—

VI

Կռվում էին։ Սուրում էր մի իրիկնային մարմանդ քամի։
Դեմը քաղաքն էր տարածվել՝ հազարամյա մի թշնամի։
Սֆինքսի պես հսկայական, շեկ ծծերը դրած հողին՝
Նա կտրել էր արևակամ ամբոխների կարմիր ուղին։—
Ու կայարանը՝ հաղթանդամ իրիկնային կարմիր մուժում,

Հաղթ նստել էր նրա առաջ, որպես նրան հսկող մի շուն։
Հաղթ նստել էր նրա առաջ ու տիրոջհու կամքին զերի՝
Երթն էր հսկում գետնատարած, երկաթագիծ ուղիների։
Ու գծերի մոտ երկաթե, դեպի հյուսիս, դեպի առաջ՝
Զգվել էին ալիքաձև խրամատներ գետնատարած։
Թշնամին էր պահվել նրանց ալիքաձև գետնափորում
Ու մատներով արյունոտած դեմը փռված դաշտն էր փորում։
Մտել էր ջերմ կուրծքը հողի՛, հողի սրտում դարան մտած՝
Կրակում էր գաղտագողի, նենգ ձեռքերով արյունոտած։
Կռվում էին՝ մոտենալով, մոտենալով հետզհետե։
Պայթում էին զրընգալով հրանոթները երկաթե։—
Ե՛րգ էր կարծես կռիվը այդ, որ զնգում էր մայրամուտում.
Նայես՝ թռավ մի հրանոթ ու թունդ պայթեց խրամատում...

VII

Կռվում էին, ու կռվելով անցնում էին նրանք առաջ։
Ու դաշտերում իրիկնային մա՜հն էր քրքջում համատարած։
Երգում էր նա՝ երգը խառնած հրանոթի զրնգունին,—
Անցնում էին նրանք առաջ ու կրակված կռվում էին։
Ե՛րգ էր սիրտը ամենի մեկի. երգ էր հայացքը կրակոտ.
Վառվում էր սիրտը ամենքի, որպես կարմիր մի առավոտ։
Ե՛րգ էր կարծես արևը հին՝ իրիկնային լույսով վառված—
Եվ երգելով կռվում էին ամբոխները խելագարված...

VIII

Եվ երգում էր մեկը՝ հպոր, հուժկու ձայնով ահեղագոչ,
Գո՜վքն էր երգում կռվի ելած, արիացած իր ընկերոջ։—
Որպես բալե՝ երգը նրա սլանում էր հեռո՜ւ, հեռո՜ւ—
Եվ երգելով կռվում էր նա՝ լուսաժպիտ ու ահարկու։
Երգում էր նա։ Մայր էր մտնում արևը հին՝ կարմիր քուրա։
Եվ դաշտերում իրիկնային— զանգ էր կարծես ձայնը նրա։
Զա՜նգ էր կարծես, զանգում էր կիլ, որ ողջ աշխարհը իմանա—
Բորբ կարոտով անձայրածիր. կրակելով երգում էր նա։—

IX

«...Ստեպներից, անտառներից, քաղաքներից հեռու ու մոտ—
Մենք մեր սիրտն ենք բերել նորից՝ հուսավառված ու կրակոտ։
Այստեղ հիմա կռիվ է, մահ, ու աղջամուղջ է անորոշ,—
Մենք մեր սիրտն ենք պարզել հիմա— մահի հանդեպ՝ կարմիր դրոշ։
Արյունաքամ մա՜յր է մտնում հազարամյա արևը հին.
Արյունավառ ժպտում է մեզ այս աշխարհը իրիկնային...
Ու խնդասիրտ կռվում ենք մենք, ե՜րգ ենք ասում կռվում հիմի.
Կուրծք է տվել աշխարհը ողջ՝ հազարամյա մի թշնամի...
Բայց անվհատ կռվում ենք մենք, ու մահը՝ սեգ ժպտում է մեզ—
Շատերս, ախ, պիտի զոհենք սրտերը մեր կարոտակեզ։—
Անողո՜ք է երթը այս սեգ, ինչպես կարմիր կարոտը մեր—
Կրակեցե՛ք, կրակեցե՛ք, խելագարված իմ ընկերներ...»։

X

...Մայր էր մտնում իրիկնային արևը՝ թեժ լույսով վառված։
Ու անվհատ կռվում էին ամբոխները խելագարված։
Աչքերի մեջ՝ կարմիր մի հուր, ու սրտերում— կարմիր կրակ՝
Վերջին թափով մի ամրակուռ՝ անգայթ կռվում էին նրանք։
Խենթ երգելով, կրակելով նրանք անցնում էին առաջ—
Ու թշնամին փախուստ տվեց՝ ահաբեկված ու վտարված։—
Մութ էր արդեն, մայր էր մտել արեգակի շողը վերջին,
Երբ գրոհով մի անվեհեր կայարանը գրավեցին...

XI

Մութ է հիմա։ Գիշերը, խոր, իջել է վար։
Մութ է հիմա, թանձր խավար։
Երկաթուղու կայարանում, ուր ո՜չ մի լույս չկա վառված,
Խռնվել են հազարանուն ամբոխները խելագարված։—
Գիշերի մեջ չեն երևում հաղթ կամարները երկաթե՝
Լույս չեն վառել կայարանում, որ թշնամին չնկատե։
Սպասում են՝ աչքերն հառած խավարամած հեռուներին՝
Մութը իջավ համատարած, մինչ կայարանը վերջերին։—
Սպասում են, որ մինչև լույս գոնե մի քիչ հանգստանան
Ու առավոտ դուրս գան նորից ու քաղաքի վրա գնան։

Աչքերն հառած թանձր մութին, սրտատրոփ, անապաքեն՝
Սպասում են առավոտին, որ կռիվը շարունակեն։
Մի քիչ առաջ, արյունաքամ, երբ դեռ դաշտում կռվում էին—
Մի՜ թվում քաղաքն այնքան երկաթուղու կայարանին...
Մո՜տ էր թվում քաղաքն այնքան երկաթուղու կայարանին...
Եկան իրենք, կռվով, երգով գրավեցին կայանը մեծ—
Իսկ թշնամին փախուստ տվեց ու քաղաքում պատսպարվեց։
Սպասում են իրենք հիմա, որ մինչև լույս հանգստանան—
Ու առավոտ դուրս գան նորից և քաղաքի վրա գնան։

XII

Ու մթի մեջ հազարամյա, գիշերի մեջ խորը, անհուն՝
Խոնվել են նրանք ահա երկաթուղու կայարանում։
Դաշտն է դեմը, խավարակուռ ձգված է նա։
Չկա մի ձայն, չկա քամի, մութ է հիմա։
Դաշտն է դեմը՝ անծիր, անծայր մի զանգված խավարամութ,
Ուր նստել է անաչք, անլույս, խորհրդավոր կասկածը մութ։
Շնթռկել է, որպես մի շուն, ու խավարն է հսկում հիմի,—
Շնթռկել է թանձր մուժում, որպես անտես մի թշնամի։
Մութ նստել է կասկածը հին ու աչքերով խավարամած
Նայում է նա կայարանին, որ կանգնած է իրա դիմաց։
Շարժվում է մութը կարծես ու խավարով իր աչքերի—
Նայում է նա լուրթ աչքերին խելագարված ամբոխների։—
Ու տագնապով անլռելի, հայացքներով անթարթ լարված՝
Նայում են մութ հեռուներին ամբոխները խելագարված։
Լուրթ աչքերով խորը, տխուր— մո՜ւթն են դիտում նրանք անհուն—
Ու դժժում է աղմուկը խուլ գիշերային կայարանում...

XIII

Հոծ բանակով հսկայական կայարանի դեմ խոնված՝
Լուրթ աչքերով արևակամ—դաշտն են դիտում խավարամած։
Մո՜ւթ է դեմը, ու խավարում, որ բացվել է, որպես անդունդ՝
Երևում է հեռո՜ւ-հեռո՜ւն կարմիր լույսով վառվող մի գունդ։
Աչքերի դեմ մթակալված, հայացքների դեմ ակընդետ—
Հեռու մթում լույսն այդ վառված գո՜ւնդ է թվում, կարմիր մի կետ։
Գիշերի մեջ— կարմի՜ր, կարմի՜ր, տագնապալից վառվում է նա՝

Գիշերի մեջ վառել են, որ զորքը պատրաստ, արթուն մնա։
Անծայրածիր մթում հեռվի կարծես կարմիր գլուխ է շան—
Վառել են այն, որպես կռվի ու տագնապի ազդանշան։
— Քաղաքն է այն հազարամյա, ուր տագնապ ու տենդ կա հիմի։
Պահվել է նա, որպես վախից խելագարված մի թշնամի։
Ու կրակը այդ կարմրակեզ— ահանշան ու վիթխարի—
Մի արնագույն կետ է կարծես ուղեղի մեջ խելագարի։
Բռնըկվել է հույսով հետին, հոգեվարքի տենդով վառված—
Ու նայում են կարմիր կետին ամբոխները խելագարված...

XIV

Գիշերի դեմ խավարամած, աչքերն հառած կարմիր կետին՝
Ամբոխները խելագարված սպասում են առավոտին։
Ու վառվում է խավարակուռ հոգիներում նրանց անգայթ
Կետը այդ մուգ, որպես հեռու, հրաբոսոր մի ճառագայթ։
Սուր մխվել է նրանց սրտում, որպես մի թեժ, կարմիր բևեռ—
Թույն է լցնում ու բորբոքում ու երազներ աշխարհավեր...
Աղմըկում է նրանց սրտում մորմոքը հին, հազարամյա—
Տենդ է սփռում ու խլրտում նրանց անգայթ սրտում հիմա։
Լուրթ աչքերում փայլում է վառ արյունամած մի ցանկություն—
Ու աչքերը միլիոնավոր թո՜ւյն են թքում, արյուն ու թույն։
Բարձրանում է նրանց սրտից տարիների մաղձը աղի—
Ու վառվում է լուրթ աչքերում՝ արյունալից ու կատաղի։
Ու աչքերը արյունամած անթարթ հառած կարմիր կետին՝
Ամբոխները խելագարված սպասում են առավոտին։

XV

...Գիշերի՜ դեմ գիշեր է մութ խավարամած նրանց հոգին,
Որ կարոտով մի կրակոտ սպասում է առավոտին։
Խավար է մեծ սիրտը նոցա, բայց խավարում անծայրածիր—
Երկինքնե՜ր կան կապուտաչյա, հորիզոննե՜ր՝ անծա՜յր, անծի՜ր։
Ու աչքերում նրանց կապույտ, ուր իջել է գիշերը մութ—
Հազա՜ր բողբոջ կա կրակոտ, ու արշալույս, ու առավոտ։

Նրանց ձգված մկաններում ո՞ւժն է նստել խոնավ հողի,—
Եթե ուզեն՝ արևներին նոր տե՛մպ կրտան ու նոր ուղի...
Եթե ուզեն՝ արեգակնե՛ր կշպրտեն երկինքն ի վեր.
Եթե ուզեն՝ վա՛ր կբերեն երկինքներից արեգակներ...
Եթե ուզեն՝ կամքով արի ու աշխարհի հրով վառված—
Ինչե՞ր միայն չեն կատարի ամբոխները խելագարված...

XVI

Ու հոսում է գիշերը մութ, մոտենում է առավոտին։
Հոսում է պաղ ու անօգուտ սպասումի ժամը հետին։
Դաշտից ահա սուրում է զով, մարմանդ քամին առավոտի—
Ու վառվում է վերջին լույսով կրակը այն կարմիր կետի։
Նոսրանում է խավարն ահա, գունատվում է հետզհետե—
Ճեղքում է մութն արևելքում հսկայական, հրե մի թև։
Ու սուրում է հեռուներից առավոտվա կիսամթում—
Մարմա՛նդ, մարմա՛նդ, բուրումնալից, գարնանային մի թարմություն։
Շարժվում է խավարը թեն ու հեռում խավարամած
Երևում է քաղաքն արդեն՝ մութ, անորոշ մի զանգված։
Հաղթ շենքերի պատերը հաղթ որոշվում են հետզհետե,
Երևում են ահա հպարտ ծխնելույզները երկաթե...
Ու բորբ սրտում ամբոխների թո՛ւնդ է առնում կարոտը վառ,
Երկինքներում լուրթ աչքերի վառվում է տենդը հոգևար...
Բո՛րբ աչքերով նայում են մեծ, խավարակուռ զանգվածին—
Ու վառվում է սիրտը նրանց, որպես հրդեհ արեգնածին...
— Պիտի երթան առա՛ջ հիմա, պիտի առնեն քաղաքը մեծ,
Պիտի թափե՛ն նրա վրա հազարամյա մաղձը իրենց։
Քանդե՛ն պիտի ու ավերեն, տեղը փոշի՛ պիտի փռեն—
Հազարամյա քաղաքը այդ քանդե՛ն պիտի ու ավերեն։—
Այրե՛ն պիտի, խելագարված պիտի պարե՛ն հրդեհներում,
Ու կարմրավառ կրակ ու կայծ պիտի փռեն երկրի հեռուն։—
Ու մնացած մոխիրը ձիգ պիտի այրե՛ն նրանք նորից,
Որ կյանքը հին, որպես փյունիկ, չբարձրանա՛ մոխիրներից...
Քամո՛ւն տալով մոխիրը այն, որ տանի ու ետ չբերի—
Դեպի հեռո՛ւն պիտի երթան դեռ չծնված արևների...

XVII

...Լուսաբացին, երբ կարմրածուփ հորիզոնում հրաշուշան
Կարմիր վառվեց արևը բորբ, որպես կռվի ազդանշան,
Ծրբ բռնկվեց արևելքում արևը՝ նոր լույսով վառված—
Դո՛ւրս նետվեցին կայարանից ամբոխները խելագարված...
Դեմը դաշտն էր անծայրածիր, ուր մշուշ էր արևագույն,
Ու մշուշում շոգիացող, առավոտի մարմանդ միգում,
Կրկեսի պես մի վիթխարի, խայտաբղետ, խայտանկար—
Եղերքի մոտ ճանապարհի երևում էր քաղաքը բար...
Աչքերն հառած հեռո՛ւ-հեռո՛ւն կարմիր վառվող արեգակին՝
Արևավառ հեռուներում նրանք կռվում էին կրկին.
Հոծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառված՝
Դեպի Արևո՛ն էին գնում ամբոխները խելագարված...
. . . . . .
. . . . . .

1918, հուլիս

ՆԱԻՐԻ ԵՐԿՐԻՑ

Եկել—երկաթե երգ եմ ձեզ ասում
Ես—կարմիր պոետ—Եղիշե Չարենց։
Ե՛ս եմ՝ Նաիրցի մի հսկա պոետ—
Եկել եմ ահա դարերի հեռու
Ու հին մշուշից—
Մշուշի միջից անթիվ դարերի.
Եկել եմ ահա ու կանգնել եմ սեգ,
Եվ երգ եմ ասում հիմա բոլորիդ—
Երկաթե մի երգ։

Ոտքերս, ամուր, հողի մեջ մխած,
Գլուխս աստղերում,
Ահնասան, հաստատ կանգնած հողմային
Օրերի հրում—
Իմ հավերժատես, պայծառ աչքերով
Նայում եմ հեռուն։

Դեմս—հողմակոծ աշխարհն է անծայր,
Հեռո՜ւ ու հեռո՜ւ,—
Շաչում է, զնգում, ահեղ ու պայծառ—
Բոսո՜ր հողմերում։
Գլխիս վրայով
Թռչում են, շաչում օրերը արագ,
Հողմերի նման հավիտենության
Մեծում են կուրծքս վիթխարի թափով,—
Մեծում են կուրծքս, շաչում ու իրենց
Երկաթ թևերով թռչում են հեռու—

Ու հեռուներում ոռնում են անտես,
Ոհմակների պես քաղցած գայլերի,
Որ գազազել ու շշմել են ասես
Հողմերում հրի։
Ու կանգնել եմ ես՝
Ոտքերս ամուր հողի մեջ մխած
Ու գլուխս տո՜թ խառնարաններում
Անցած ու գալիք անթի՜վ օրերի։—

Ու կանգնել եմ ես՝
Լեռների վրա իմ ավեր երկրի,
Կանգնել եմ հաստատ ու երգ եմ ասում
Խնդասիրտ, արի,
Եվ նետում եմ իմ երգը հողմաձայն
Ժողովուրդներին բոլո՜ր կողմերի—
Բոլո՜ր կողմերում տառապող մարդուն։
Եվ ասում եմ ես.
— Եկե՜լ եմ ահա.
Եկե՜լ, հասել եմ դարերի մուժից,
Անբոց մշուշից հեռու դարերի—
Եվ բերել եմ ձեզ, կարմիր ձեր երթին,
Սի՜րտը Նաիրի...
Բերե՜լ եմ կարմիր սիրտը Նաի՜րի
Ձեր կարմիր հրին— կարմիր ողջակեզ.
Եվ ասում եմ ես
Ժողովուրդներին բոլո՜ր կողմերի,
Բոլո՜ր կողմերում տառապող մարդուն.
— Լսե՜ք, հե՜յ, լսե՜ք,—
Բոլոր կողմերում տառապող մարդիկ,
Բանվորներ արի— բոլոր կողմերի,
Եվ գյուղացիներ, զինվորներ բոլոր
Ռազմադաշտերից տուն դարձող արդեն։—
Լսե՜ք, հե՜յ, լսե՜ք.
Դուք, որ հաղթակամ
Ելե՜լ եք արդեն ու կռվով ըմբոստ,
Շաչող, շառաչող օրերի միջով
Գնում եք դեպի Կարմիր Ապագան—

Լսե՞ք, հե՞յ, լսե՞ք, իմ ողջույնը սեգ
Ու եղբայրական...

Նաիրի երկրից— Իմ ողջույնը ձեզ.
Ձեր կարմիր հրին— Նաիրի կարմիր
Սիրտը— ողջակեզ։

Ո՞վ գիտե արդյոք՝
Բերե՞լ է մեկը այսօր աշխարհում
Խառնելու ձեր մեծ ու հզոր երգին
Մի երգ— ավելի՜ ըմբոստ ու արի,
Քան իմ երգը մեծ— երգը Նաիրի...

Ո՞վ գիտե արդյոք՝
Բերե՞լ է մեկը այսօր աշխարհում
Խառնելու հզոր, բոսոր ձեր սրտին
Մի սիրտ— ավելի՜ ըմբոստ ու արի,
Քան իմ սիրտը թեժ— սիրտը Նաիրի։

Եվ ո՞վ, ո՞վ կասի՝
Նետե՞լ է արդյոք մեկը աշխարհում
Այսօրվա կարմի՛ր, կարմիր ձեր երթին
Ողջույն— ավելի՜ առնական, արի,
Քան ողջույնը քո, երկիր արնաքամ,
Կարմի՛ր Նաիրի...

. . . . . .

Ծաղկի պես կարմիր, հրասիրտ, զվարթ,
Բացվել է այսօր սիրտս նաիրյան
Աշխարհի սրտում—
Թեժ, կարմիր սրտում վառվող աշխարհի։
Իմ հազա՞ր անգամ ու հազա՞ր սրով
Արնոտած, խոցված սիրտը նաիրյան
Բացվել է այսօր աշխարհի սրտում.
Հուզում է հոգիս անհուն մի խնդում,
Խնդում մի հրե—
Եվ երգում եմ ես, ահե՞ղ ու պայծառ,
Քո էն երգը մեծ, տիեզերական,

Երկի՞ր Նաիրի...
Երգում եմ հիմա քո երգը էն մեծ,
Որ սրտիս տվեց տառապանքը քո,
Քո աշխատանքը, հազթ ժողովրդի
Տառապանքը մեծ։

Ե՛ս—ե՛ս եմ նորից.—
Դարերից եկած անհո՞ւն մի պոետ—
Եղիշե Չարենց—
Նաիրի երկի՛ր, քո երգիչը վառ,
Օրհներգուն պայծառ
Ու դավակը մեծ...

Ե՛ս—ե՛ս եմ նորից.—
Ոսկի երակը հնամյա ցեղիս,
Իմ ջլաբաղուկ, հազթ ժողովրդի
Օղակը վերջին,
Տվել եմ սիրտս գալիք օրերի
Երկաթե երգին,
Կապել եմ կյանքս Գալիքի հետ վառ—
Եվ կրում եմ իմ մեծ, հսկա սրտում—
Մի երկաթակուռ, նո՞ր, հզո՞ր աշխարհ։

Ու կանգնել եմ ես, հզոր ու հաստատ,
Լեռների վրա քո հավերժաձյուն—
Կանգնել եմ, պայծառ, ու շուրջս հիմա
Գալիքի կարմիր թևերն են շաչում—
Եվ կարծրանում ու պնդվում է հոգիս
Նրանց շառաչում։

Ու հպարտ եմ ես, հպա՞րտ է ու խենթ
Քո կարմիր հրով լցված իմ հոգին.
Հպարտ եմ, որ ես— անհուն մի պոետ,
Ձայնով խնդագին—
Խառնում եմ այս նո՞ր, հզոր ե՞րգը քո—
Բոլորի՜ երգին...

1930

ԴԵՊԻ ԱՊԱԳԱՆ

Լցված է անհուն իմ հոգին հիմա
Շփոթ երգերով ու աղմուկներով.
Լցված է տիրոջ իմ՝ էլեկտրական
Բորբ հոսանքներով։

Ռադիո-կայան է իմ հոգին հիմա
Ամբո՛ղջ աշխարհի ու մարդկանց հանդեպ,
Ու բա՜րձր է, բա՜րձր է կայանն իմ հոգու՝
Մասիսի նման բարձր է ու հաստատ—
Հզո՛ր, ահարկո՛։

Օրերում այս վառ, հողմավար, շփոթ—
Հեռու ու մոտիկ միլիոն սրտերի
Ե՞րդն է վիճակվել ինձ երգել այսօր.
Իմ բազմամիլիոն, բյուր ընկերների
Խինդը այսօրվա ուրախությունը մեծ—
Գալիք օրերին նետե՛լն է երգիս
Վիճակվել այսօր։

Ահա՛ թե ինչո՛ւ է երգս հաղթական,
Ահա՛ թե ինչու է իմ ձայնն այսօր
Հավերժի նման համա՛ռ ու հաստա՛տ։

Ահա՛ թե ինչու
Վիթխարահսկա, որպես էյֆելյան
Աշտարակը մեծ,
Անցած ու գալիք դարերի շեմքին

Հզոր, բարձրաբերձ՝
Կանգնել եմ ամբողջ հասակովս մեկ
Եվ երգում եմ ես։
Եվ հոգիս հիմա՝ ռադիո-կայան՝
Իր հրակարմիր երգն է ուղարկում
Հեռո՛ւ ու հեռո՛ւ,—
Բոլո՛ր սրտերին, որ ապրում են, կան
Բոլո՛ր կողմերում։
Երգում է հոգիս, հրեղեն հնչում։
Գիտեմ՝ այսօրվա իմ երգի առաջ—
Իմ հոգու կարմիր կայծերի հանդեպ—
Ռադիո-կայան է ամեն մի հոգի,
Ո՛ւր էլ նա լինի.—
Ամե՛ն մի հոգի, որ ապրում է, կա
Եվ կրում է իր թևերի վրա
Նո՛ւյն խորհուրդը մեծ, խորհուրդը հսկա
Օրերի այս վառ,—
Այս վառ օրերի խորհուրդը պայծառ։
Ամե՛ն մի հոգի,
Որ իր երկաթե թևերով այսօր
Ջնգում է, շաչում—
Եվ փնտրում է նո՛ր հանգիստ ու օրոր
Միլիո՛ն թևերի ըմբոստ շառաչում...

Գիտե՞ք, որ հիմա
Այստեղ— Նաիրի իմ երկրում ավեր
Ու հեռու-հեռուն—
Կարմիր Մոսկովում,
Տիբեթում դեղին,
Սան-Ֆրանցիսկոյում, Լոնդոնում հսկա
Ու Սինգապուրո՛ւմ—
Բոլո՛ր վայրերում, բոլո՛ր կողմերում
Աշխարհը մի նո՛ր երգով է հղի։

Հե՛յ, հեռո՛ւ-մոտիկ
Հանքահորերում,
Գործարաններում,

Լայն ստեպներում ու անտառներում—
Բոլո՛ր վայրերում, բոլո՛ր կողմերում,
Երկաթի՛, բրոնզի՛, հողի՛ ու հանքի
Երգով օրորված իմ բյո՛ւր եղբայրներ,—
Ո՞վ ունի այսօր կամքը մեր հրե,
Ուժը մեր բոսոր
Ու վառ բախտը մեր
Տիեզերական։

Ո՞վ ունի այսօր...

Մե՛նք ենք, որ նո՛ր ենք, հազա՛ր ենք ու բյո՛ւր։

Երկաթե հսկա մի դիսկի նման
Բյո՛ւր եղբայրների կամքը մեր արի,
Տիեզերական—
Նետե՛լ ենք արդեն թափով վիթխարի
Դեպի հողմերը գալիք օրերի,
Դեպի—Ապագան...

1920

ԲՐՈՆԶԵ ԹԵՎԵՐԸ ԿԱՐՄԻՐ ԳԱԼԻՔԻ

Շաչում է աշխարհը, զնգում է հիմա,
Շաչում ու զնգում են աշխարհի վրա
Բրոնզե թևերը Կարմիր Գալիքի։

Որպես երկաթե մի մրրկահավ՝
Թռչում է կարմիր մեր կամքը հիմա
Աշխարհի հեռուն—
Ու շաչում է հաղթ, երկաթ թևերով
Հեռու ու մոտիկ ռազմադաշտերում։

Փողփողում է վառ արևի առաջ
Մեր կամքը հիմա, որպես վիթխարի
Մի կարմիր դրոշ,
Որի արնագույն, կարմրավառ փայլից
Հնավանդ, զազիր քաղաքները քար,
Ցուլերի նման վիթխարահսկա,
Վախից խելագար,
Կանգնում են հետին ոտքերի վրա.
Փորում են հողը ոտքերի տակի
Ու սարսափահար
Իրենց վայրենի վա՛խն են մռնչում
Աշխարհովը մեկ—
Վա՛խը վայրենի, որ հնչում է մեր
Բոսոր սրտերում, որպես հաղթության
Ու փառքի մի երգ։

Օ՜, բառաչը այդ խելագար վախի,
Օ՜, սարսափահար ճիչը հոգևար
Ու տագնապը սուր՝
Հին, հազարամյա, քա՜ր քաղաքների
Տագնապը զազիր...
Օ՜, սարսափը այդ հուսահատական,
Մեռնող ցուլերի բառա՜չը վերջին
Կրկեսների մեջ հսկավիթխարի,—
Օ՜, սարսափը այդ նրանց հուսահատ,
Որ մեր սրտերում, կրծքերում երկաթ
Փոխվում է կարմիր, խնդացող հրի...

Ճչում են հիմա
Թերթերը բոլոր մայթերի վրա,
Հաղթ կայանները ռադիո-գրի,
Գոց, զրահապատ գնացքներն շտապ
Ու շչակները գործարանների,
Սավառնակների թևերը շաչող,
Աղմուկը մաշվող ավտոշինների,
Թնդանոթների ամբոխները ծույլ,
Որ հիմա արնոտ ռազմադաշտերից,
Գործադուլ արած բանվորների պես
Տուն են շտապում քայլերով տարտամ,—
Ֆանտաստիկական, ահե՛ղ առօրյան
Ճչում է հիմա
Նրանց անամոք, նրանց հոգևար
Տագնապի նման հուսահատական,
Ճչում է խռպոտ իր ձայնով վերջին—
Ու հասնում է այդ ճիչը հուսահատ
Լոնդոնից—Փարիզ—Ցեյլոն—Հնդուչին...

Զգվել են ցանցեր,
Երկաթե անտես ցանցեր ու ցանցեր
Աշխարհում անծիր,—
Սրտից սիրտ հիմա, քաղաքից քաղաք—
Վառ, կարմիր ցանցեր...

Մեր կա՜մքն է այդպես հզոր շղթայել
Աշխարհը համակ,—
Մեր կամքը՝ թռչող, որպես փոթորիկ,
Ու տոկուն, համառ, որպես ժամանակ։—

Ե՜ս եմ—եղբայրս—ընկերս—օ՜, ո՜չ.
Կա՜մքը իմ, կա՜մքը քո— ու էլի՜, էլի՜
Կամքեր նույնազոր— հազար ու հազար։
Ու էլի՜, էլի՜,
Ու էլի՜, էլի՜,—
Զգո՞ւմ ես՝ հոգիս, հոգիդ ու նրա—
Հեռու, անծանոթ ընկերոջ հոգին—
Նո՛ւյն արեգնական խորհրդով է լի։
Ու էլի՜, էլի՜,
Ու էլի՜, էլի՜,—
Ամե՛ն տեղ հիմա, բոլո՛ր կողմերում՝
Մոսկովից—Փարիզ, Լոնդոնից—Հռոմ...

Մինչև—Հնդուչին...

Թնդանոթների բառաչը վերջին։
Տանկերը արնոտ ռազմադաշտերում՝
Կետերի նման երկաթազրահ...
Գնդացիրների ծարավը ագահ,
Գործարանների շչակները լուռ...
Օրերը՝ երկաթ ու պղինձ հագած
Սավառնակների նման ռմբաձիգ—
Օրերը, որ թեժ ռումբեր են նետում
Եվ թռչում են—
Ո՞ւր...

Անծի՜ր դաշտերում— բանակներ կարմիր։
Քաղաքներ մեռնող ու գյուղեր անմարդ։
Օրերի միգում—տագնապ ու զրգիռ։
Ոսկի ու բռունցք, արյուն ու երկաթ։
Ու տագնապը մութ, անկուշտ ու ագահ,

Հրեշի նման դեղին, հազարաչ,—
Ու բազմամրրիկ աշխարհի վրա—
Բրոնզե կարմիր թևերի շառաչ։
Ու երգը իմ նոր պիտի ավետի
Վաղը աշխարհին առաջին անգամ
Թռիչքի՛ մասին անկուշտ կարոտի
Մեր հավերժական։

Եվ նրանք, որ դեռ աշխարհում չկան,
Որ դեռ նոր պիտի ապրեն աշխարհում,
Դեռ նոր պիտի գան,—
Կարո՞ղ են, թող մեր թռիչքն այսօրվա
Անձկորեն չըզգան...

Նրա՛նք, որ պիտի ապրեն աշխարհում
Կարմիր Ապագան։

Նրանք, որ դեռ նո՞ր, դեռ նո՞ր պիտի գան...

1920

ԵՐԳ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ

I

Երկիրը մե՞ծ էր ու լայն։— Տափաստաններ ընդարձակ,
Անծայրածիր հովիտներ ու ստեպներ հեռանիստ,
Հորիզոնից-հորիզոն ձյունե դաշտեր սպիտակ,
Լա՛յն երկնքի տակ փռված գյուղեր անդորր ու հանգիստ։
Մե՞ծ էր Երկիրն՝ հյուսիսի վերի ծովից մինչ հարավ,
Ու արևի մի ծագից մինչ մյուս ծագն արևի։
Նստել էր էդ ընդարձակ երկրի մեջ ցարն անիրավ
Ու իշխում էր սանձարձակ, որպես դաժան թշնամի։
Խեղճ էր ապրում ժողովուրդն հազարբարիք երկրի էդ՝
Ճորտ էր, գերի, հողազուրկ՝ աշխատում էր, աշխատում,
Բայց մնում էր անոթի ու ապրում էր անհեթեթ,
Անիմաստ կյանք մի դժվար, որպես լծկան անասուն։
Նստել էին էդ անբախտ ժողովրդի շլինքին
Գոռ իշխաններ զանազան, հողատերեր ամեհի.
Քշում էին տեղից-տեղ զուրկ, անկրակ մուժիկին,
Ու լռում էր մուժիկն էլ՝ աչքը ահի ու մահի։
Էդ ընդարձակ աշխարհում, ուր հողը շատ էր այնքան,
Որ երկրի կեսը հաճախ մերկ ու խոպան էր մնում—
Հողազուրկ էր գյուղացին ու տառապում էր կարկամ,
Ուրիշի հողն էր վարում առավոտից-իրիկուն։
Լուռ տառապում էր էդ խեղճ ժողովուրդը հողազուրկ,
Հացի տեղ քար էր ուտում ու մեռնում էր անոթի,
Վշտից օղի էր խմում կաբակներում բազմաղմուկ
Ու քնում էր օրն ամբողջ, որ չարթնանա ու չուտի։
Ու հավատում էր մեկ էլ, աղոթում էր աստծուն
Ժողովուրդը էդ թշվառ,— հավատում էր, որ վերից
Լույս կբացվի մի օր էլ— հող կտրվի գյուղացուն,

Եվ ժողովուրդը ազատ ու լի՝ կապրի էդ օրից։
Բայց ո՞չ աղոթքն էր փրկում ժողովրդին էդ թշվառ,
Ոչ էլ օդին՝ դառնահամ կաբակներում աղմկուն.
Երկիրը ծով էր արյան ու կարիքը—անսպառ,
Սովն էր երկրում թափառում՝ արյունարբուշտ ու անքուն։
Հազա՞ր տարի էդ երկրում արևն ելավ արյունոտ
Ու մայր մտավ արյունոտ, որպես թրով զարկած աչք.
Երկիրը ծո՞վ էր արյան, երգը երկրում—մահվան բոթ,
Ու չէր վառվում օրերում լույս— փրկաբեր մի հրաշք։
Վաղո՞ւց էր, շա՞տ էր առաջ, որ հայտնվեց մի մուժիկ,
Շուրջը խմբեց բյուրավոր ըռնչպարներ անոթի,
Անտե՛ն մարդիկ հավաքեց, գործից ընկած ու բոբիկ,
Ու խմբերով նրանց խեղճ ուզեց երկիրն ազատի։
Ձայն տվեց— «Է՛յ, ընչազուրկ, անհող մարդի՛կ, եկե՛ք դե՛ս,
Հավաքվեցեք բյուրավոր հոսանքն ի վար էս գետի.
Հազա՞ր-հազա՞ր հավաքվեք, պիտի տանեմ այսօր ես
Մինչ քաղաքը ցարի ձեր էս բանակն անոթի։
Պիտի Մոսկո՞վ տանեմ ձեզ... Ու քեֆ պիտի անեք դուք,
Էնտեղ օդի պիտ խմեք՝ ինչքան կուզեք, ինչքան կա,
Պիտի նստեք մեծամեծ պալատներում մեծաշուք,
Ու ձայնը է՞ն զրկվածի պիտի գահի՞ց զրնգա...»։
Էսպես կանչեց։— Ու եկան հազարավոր, բյուրավոր,
Եկան, բոլո՞ր եկան, ով որ չուներ խա՞տա-տուն,
Եկան, բոլո՞ր եկան, հավաքվեցին նորից-նոր,
Ու բանակը ծավալվեց օվկիանի պես ծփուն։
Ինչպես անտառը խշշար, ինչպես ծովը շառաչեր,
Ինչպես մրրիկը շաչեր— բանակից էդ բազմամարդ
Ամբողջ երկիրը զնգաց ու դղրդաց ծերից-ծեր՝
Երգը զնգաց բանակի՝ հազարաձայն ու զվարթ։
Ու անտառի նման սև բանակը էդ շարժվեց,
Հորձանք տվեց ու ծփաց հոսանքն ի վեր էն գետի,
Ու հեղեղի պես սրբեց շեն կալվածներ մեծամեծ
Ու հողերի վրա տեր նստեց մուժիկն անոթի։
Էդ քանի օրը մի քիչ զուլալ էր աչքն արևի՝
Կարծես դեղդիր էր քաշել արնոտ աչքին իրա էն.
Արևավառ ծփացին տափաստաններն հեռևի,—
Ջուրկ մուժիկները ելան, որ ստեպները վարեն։

Էսպես եղավ։ Եվ հանկարծ, ինչպես հեղեղը հորդի՝
Ահեղ սուրաց վերից-վար արնախում զորքը ցարի.
Եկան, կռիվ եղավ մեծ, կռվեց բանակն անոթի,
Որ հույսը զուրկ մուժիկի անվերադարձ չմարի։
Երկա՞ր-երկա՞ր կռվեցին։— Ու ետ առան նորից էն
Քաղաքները գրաված ու հողերը խեղճերի,
Իշխանների կիսավեր պալատները հոյաշեն—
Ու բյուր, հազար անոթի տարան հետները գերի։
Ու բռնեցին սևաչյա առաջնորդին նրանց մեծ,
Վանդակ դրին, որպես մութ սարից բռնած մի գազան,
Դեմքին ներկեր քսեցին, արնոտեցին ու էդպես
Մոսկով տարան— ցարանիստ քաղաքը էն սրբազան։
Էնտեղ տարան։ Ողջ երկիրն արդեն գիտեր ծերից ծեր
Առաջնորդի մասին էդ անտունների բանակի,
Գիտեր, որ ռուս աշխարհի, ժողովրդի էդ անտեր
Պաշտպանն է նա ու մեռնի՞ պիտի մահով կրկնակի։
Գիտեր.— ու սուգ էր անում։ Մինչ ղողանջը զանղերի
Արքայանիստ Մոսկովում ահասարսուռ զրնգաց,
Ու ամբոխը հավաքեց, և հսկային էն բերին,
Դահիճն եկավ— ու քաջի գլուխն ընկավ ուսից ցած։
Իսկ նրանց, որ նրա հետ գերի էին վերցրել—
Հոշոտեցին դահիճներն անգղների նման գեշ,
Պատառ-պատառ արեցին ու փորեցին աչքերն էլ
Ու փռեցին դաշտերում հազա՞ր դիակ, նեխած լեշ։
Էսպես արին։ Ու էսպես թաղեցին բախտը խեղճի
Ու ծիծաղը մի օրվա նրա քթից բերին ետ։
Նորից արևը ելավ, ինչպես ձեռքից դահիճի՝
Աչքը թարախ ու արյուն ու շողերը— մեկ-մեկ նետ։
Բայց ժողովուրդը երկա՞ր փր երգերի մեջ երգեց
Քաջի մասին էն խիզախ՝ ժողովրդին մխիթար,
Հազա՞ր երգեր հորինեց էն հսկայի մասին մեծ,
Որ ճորտացած մուժիկին ազատություն պիտի տար։

II

Ու տարիներ սահեցին դանդաղ, իրար ետևից...
Եվ արևը բարձրանում ու իջնում էր արյունոտ։

Պատերազմներ էին միշտ ու նախճիրներ էն թևից՝
Սովն էր իշխում սանձարձակ ու աշխատում էր տենդոտ։
Էնտեղ թոթարն էր զարկում։ Թուրքն էր էնտեղ։ էնտեղ լեհ
Ջորքն էր մտնում ընդարձակ, շեն կալվածներն արքայի։
Տենդ ու երաշտ էր երկրում, հիվանդություն ամեն տեղ,
Ու թռչում էր գեղից-գեղ սև ուրվականը մահի։
Ջեռքին կոտրած գերանդի՝ անցնում էր մահն անկշտում,
Սավառնում էր ձյունաբուք մրրիկներում սպիտակ,
Հունձք էր անում ժրաջան, հազարներով գլխատում
Ու մեռնում էր կյանքն, ինչպես ջրով լցված մի փեթակ,
Էս ժամանակ էր ահա, որ Հյուսիսի դաշտերում
Երկաթակամ ու համառ մի նոր մուժիկ երևաց,
Շուրջը մարդիկ հավաքեց ու վրեժով աններում
Կռվի ելավ ահավոր ու արշավեց սրընթաց։
Նորից անտուն, անոթի հողազուրկները եկան,
Հավաքվեցին գյուղերից, քաղաքներից հեռավոր,
Հոծ բանակներ կազմեցին ու համայնքներ գյուղական
Ու խմբերով իրենց բյուր կռվի ելան նորից-նոր։
Ասին՝ երկրի վրա թող ո՛չ մի իշխան չմնա,
Մա՛հ գիշատիչ ու գազան իշխաններին հողատեր.
Այլևս ոուս աշխարհում հողատեր է միայն նա,
Ով փոցխ ունի իր ձեռքին և կարող է աշխատել։
Ասին՝ էսպե՛ս կլինի։ Եվ երբ իշխան չմնա—
Բոլորը զոհ կլինեն ու կաշխատեն ժրաջան,
Ու ժողովուրդը ամբողջ օր ու արև կիմանա
Ու քարե՛րը անգամ մեծ խնդությունից կճչան։
Ու քշեցին այրուձի՛նն Առան գյուղեր, քաղաքներ,
Ջյունե ուղին բռնեցին արքայանիստ Մոսկովի,
Բայց զորքն իջավ ցարական՝ խեղճի ցավին անտարբեր,
Բայց զորքերը ցարական ո՛չ մի մարտիկ չթողին.
Առաջնորդին բռնեցին, իսկ նրա թաշ այրուձին
Ահից եղավ ցիրուցան ու հանձնվեց հաղթողին։
Ու սրանց էլ անվեհեր առաջնորդին սեաչյա
Վանդակ դրին ու տարան մայրաքաղաքն արքայի.
Ճամփին հաղա՛ր սրիկա թքեց դեմքին ու նրա

Արևառ դեմքն արնոտեց, որ վանդակից չնայի։
Ու բերեցին սրան է՛լ, ինչպես էն հին հսկային,
Հաղարամյա Մոսկովի հրապարակն ահավոր,—
Նորից ահեղ գլրդաց զանգերի խումբն ահագին
Ու դահիճը նլավ վեր՝ ոտից-գլուխ հագած նոր։
Ու դուրս եկավ վանդակից առաջնորդը սեաչյա,
Կանգնեց՝ ըմբոստ ու արի, աչքը հառեց ամբոխին,
Աչքերը հուր շանթեցին, ուզեց կանչի ու ճչա,
«Ելե՛ք» ասի— բայց նրան կապկպեցին, չթողին։
Ուզեց կանչի, համոզի ժողովրդին իր էն ռուս,
Ելի՛ր, ասի, բարձրացի՛ր իշխանների դեմ գազան,
Ճզմի՛ր ահեղ հարվածով իշխաններին էդ գոռոզ
Ու պաշտպանի՛ր, ինչպես մարդ, իրավունքդ սրբազան։
Բայց ի՞նչ ասեր... Դահիճի հարվածներից ահավոր
Խեղդած մանկան նման մի—ձայնը խզվեց ու դողաց.
Ջեռքերը ետ կապեցին, ծունկի բերին նորից-նոր,
Գլուխը վար թեքեցին ու դանակը շողշողաց...
Ու ժողովուրդը նորից մնաց թշվառ ու անտեր,
Նորից արևը ելավ՝ արյուն հագած ու մոխիր—
Ու տարիներ սահեցին անմխիթար, անտարբեր,
Ու չգտեց ո՛չ-ոք էլ կյանքի ընթացքը փոխել։
Նորից երկրում ծերից-ծեր անհուսությունը իջավ
Ու մորեխի պես նստեց հոգիների վրա խեղճ։
Սովը նորից տարածվեց ու արշավեց սրընթաց,
Ու տարիներ անցան մութ ու աղետներ եղան մեծ։
Եվ չէր մուժիկն հավատում էլ ո՛չ մի նոր հսկայի.
Մեծ էր ոսոխն ավելի, քան ուժերը մի-երկու
Ըմբոստ, խիզախ քաջերի, որ օրերում ամայի
Ելնում էին ու վառում փոթորիկներ ահարկու։
Ու ժողովուրդը լռեց։ Կրեց վիճակն իր դժվար,
Որպես վերից սահմանած անմխիթար կյանքի բեռ։
Դարեր անցան ու դարեր։ Մի՛շտ նույն երկինքը մռայլ,
Նո՛ւյն իշխաններն ամեհի ու արքաներն անտարբեր...

III

Էսպես երկար տարիներ ժողովուրդը տառապեց
Եվ օրերը նրան նոր առավոտներ չբացին—
Մինչ բացվեցին ամենուր գործարաններ մեծամեծ
Ու խուլ, խավար գյուղերից քաղաք եկավ գյուղացին։
Եկան, լցրին քաղաքներն հազարանուն խմբերով,
Խուլ գյուղերից անոթի բազմություններ եկան մեծ,
Հավաքվեցին երկաթե աշխատանքի տներում
Ու վաճառքի հանեցին հաղթ մկանները իրենց։
Նրանք ոչինչ չունեին ու էլ ոչինչ չունեցան,
Նո՛ւյն անոթին մնացին քաղաքների մշուշում,
Բայց սրտերը վառվեցին ու մկաններն ամրացան—
Չէին նման էլ նրանք էն անիմաստ գյուղացուն։
Քաղաքների անողոք աշխատանքի հնոցում
Շչակները ճչացին աշխարհների մասին նոր,
Ու երկաթե երկնահուպ ծխնելույզի փնչոցում
Բոլո՛ր հանկարծ լսեցին մի աղաղակ ահավոր։
Մեքենաները նրանց ըմբոստ երգեր երգեցին
Եվ աշխատանքը հոգու մի նոր թռիչք ստեղծեց.
Ջղուտ բանվոր էր արդեն դաշտ ու սարի գյուղացին
Եվ ընկերներ ուներ բյուր ու երազներ ուներ մեծ։
Էսպես եղավ։ Եվ ահա քաղաքներում ամրակուռ
Մի առավոտ երգեցին ծխնելույզները բոլոր—
Բանվորների մասին մերկ, տառապանքի մասին լուռ
Ու բովանդակ աշխարհի մե՛ծ պայքարի մասին նոր։
Ասին՝ համայն աշխարհում երկու բանակ միայն կա՝
Մեկը— խարդախ տերերի, հարուստների անկշտում,
Որ լիանում են առատ, վայելում են անխնա,
Նստում են շեն տներում և երբեք չեն աշխատում։
Նրանք, որ տաք են հագնում, ու միշտ մաքուր, ու միշտ նոր,
Գլխի տեղ վի՛հ ունեն մի ու անկշտում մի բերան,
Որ հարբում են ու փսխում, որ կերակուր ուտեն նոր,
Եվ ափսոսում են միայն, որ աշխարհը չկերան։
Նրանք, որ տերն են հիմա քաղաքների, գյուղերի,
Պալատների, բերդերի, բարիքների բոլոր մեծ—
Նրանք, որ հացն են ուտում կիսաքաղցած բանվորի,

Զո՛ւրկ թողնելով միշտ նրան, որ էդ բարիքն ստեղծեց։
Սակայն բանակը մյուս, մյուս բանակը էն մե՛ծ—
Աշխատավոր բյուրերի բանա՛կն է էն անսասան,
Նրանց, որ բյուր դարերի աշխատանքը ստեղծեց,
Որ աշխատանքն եղան մեծ, բայց բարիքներ չտեսան։
Նրանց, որ բյո՛ւր են հիմա, անհաշիվ ու անհամար,
Որ մկաններ ունեն կուռ ու երակներ վիթխարի—
Ու հոգիներ ունեն մեծ՝ արևների նման վառ,
Եվ ստեղծում են բոլոր հրաշալիքներն աշխարհի։
Նրանք, որ հողն են փորում, ճեղքում են կուրծքը հողի,
Ու վիթխարի գետերին հոսանքներ են տալիս նոր՝
Կուրծք են տալիս ծովերի հորձանքներին կատաղի,
Գնացքներ են շարժում բյուր ու հանքեր են փորում խոր։
Նրանք, որ ուժն են կյանքի, կյանքի բազուկն ստեղծող,
Որ շինել են, ինչ որ կա, ինչ որ դեռ պե՛տք է լինի.
Ասին՝ ամբողջ աշխարհում ինչքան հանք կա, ինչքան հող,
Ինչքան բերք կա ու բարիք— պետք է նրա՛նցը լինի։
Էսպիսի վա՛ռ երազներ մեքենաները ասին,—
Ու երկաթի անողոք շշուկներով ահարկու
Մեքենաները մի օր ահազդարդ ճչացին,
Որ պիտ կռվի ելնեն մեծ էդ բանակները երկու։
Ու տարածվեց վիթխարի քաղաքներից հեռավոր
Ըմբոստ մի ճիչ հրեղեն, մի աղաղակ հրաշեկ—
Քաղաքներից երկաթե մի աղաղակ թռավ նոր.
— Պրոլետարնե՛ր աշխարհի, հավաքվեցե՛ք, միացե՛ք։
Ու միացան, ամրացան նրանց շարքերը փշուր,
Ու սրտերին նրանց կուռ մեքենաները ասին,
Որ պայքարի համար մեծ ու հաղթության համար նոր
Պետք է բոլո՛ր ելնեն ու պայքարեն— միասին։
Ու պայքարի ելան մեծ նրանք մի մութ իրիկուն,
Երբ պատերազմ էր երկրի սահմաններում հեռակա,
Ելան բանվոր-գյուղացիք խենթությունով ահարկու
Ու բանակներ հանեցին արիասիրտ ու հսկա։
Քաղաքներում կարմրավառ դրոշակներ պարզեցին,
Կուրծք տվեցին զորքերին արյունարբու արքայի,—
Սակայն չօգնեց բանվորին դաշտ ու սարի գյուղացին,
Անշարժ մնաց, ահաբեկ՝ աչքը ահի ու մահի։

Ինչքա՜ն արյուն հոսեց վառ, ի՜նչ ընկերներ վիթխարի
Զինվորների թրերից տապալվեցին ու կորան,
Եվ ի՜նչ ահեղ ցասումով բազմություններ բանվորի
Արյունոտած ձեռքերով վերադարձան գործարան...
Նրանք, տխուր, քաշվեցին, բայց պայքարի համար նոր
Զնդաններում, բանտերում նրանց հոգին ամրացավ,
Ու տառապանքը անհուն նրանց հոգին կրեց լուռ,
Մինչև աղետ եղավ մեծ ու ժողովուրդն արթնացավ։

IV

Աղետ եղավ։ Պատերազմ։ Ու ժողովուրդը անտեր
Զավակներին իր հեռու թշնամու դեմ ուղարկեց։
Չէր հասկանում, թե ինչո՞ւ. ինքը ոչինչ չդիտեր։
Գնաց երկրորդ զավակն էլ—ու տունն ամբողջ մնաց խեղճ։
Ու հազարներ գնացին, ու միլիոններ, ու բյուրեր,
Դեպի դաշտերը հեռու ուղարկվեցին շարեշար.
Պիտի այնտեղ նրանց տաք գնդացիրը համբուրեր,
Պիտի գնդակը սուլեր ու թնդանոթը ճչար։
Այնտեղ խեղդող գազերի ամպերը տոթ ու դեղին
Պիտի հանկարծ իջնեին բանակների վրա էն,
Պիտի արյուն թքեին ու արնահազ մեռնեին—
Մա՜հն էր նրանց սպասում գգվանքներով հրեղեն։
Երեք տարի շարունակ սպասեցին տներում,
Որ կռիվը վերջանա— չվերջացավ սակայն նա.
Աչքերը ջուր կտրեցին՝ հառած արնոտ էն հեռուն,
Մահն էր էնտեղ դեգերում ու գլխատում անխնա։
Էսպես եղավ։ Եվ ահա քաղաքներում բազմամարդ,
Ուր երկաթե բյուրավոր գործարաններ կային մեծ,
Մի առավոտ երկնահուպ ծխնելույզները երկաթ
Կոչ նետեցին զինվորին՝ զինվորի դեմ չկռվե՛ս։
Գործարանի մշուշից բանվոր մարդիկ գնացին
Ու բանակները լցրին մեծ խոսքերով իրենց նոր,
Ընկեր դարձան զինվորին, զինվորի աչքը բացին—
Ու հուզվեցին, ծփացին ահա դաշտերն ահավոր։
Չհամբերեց էլ զինվոր-զորքը՝ ելավ գահի դեմ,
Ամբողջ երկիրը ելավ, որպես զինվոր մի արթուն.
Ժողովուրդը հասկացել ու արթնացել էր արդեն—

Ու զինվորը էն ծերից պատերազմից եկավ տուն։
— Էլ չե՛մ կռվի,— ասաց նա,— թշնամու դեմ զրսևի.
Մենք ի՞նչ ունենք կիսելու, բաժանելու աշխարհում.
Նո՛ւյն արևն է բոլորիս արևել ու կարևի—
Մեր ո՛մեորն է միայն մեր թշնամին արնախում։
Կռի՜վ տղրուկ ու վիշապ հարուստների դեմ բոլոր,
Ո՛չ մի հարուստ չմնա թող աշխարհի երեսին։—
Էսպես ասին ու հսկա բանակներով ահավոր
Ճակատներից տուն դարձան նրանք մի օր միասին։
Ու տվեցին կրակի օրենքները հնամյա,
Հարուստների ստեղծած իրավունքը արնատաս,
Ասին՝ ամբողջ աշխարհում մի՛ իրավունք միայն կա՝
Մարդու քրտինքը զուլալ ու աշխատանքը արդար։
Հողերն առան, ցանեցին աշխատունակ, ժրաջան,
Գործարանները մի նոր հպարտությամբ երգեցին,
Մինչդեռ երկրի ծայրերից թշնամիներ բարձրացան,
Որ ետ խլեն կարգը նոր ու հաստատեն կարգը հին։
Բայց էլ զինվո՛ր էր հիմա բանվորն ու գուրկ գյուղացին,
Բազմահազար հրացան ու թնդանոթ ուներ նա.
Հավաքվեցին բյուրավոր ու բանակներ կազմեցին,
Որ մարտնչեն մինչև վերջ, մինչև ոսոխ չմնա։
Ելան, հաստատ, որպես սար ու սարի՛ պես անսասան,
Կուրծք տվեցին բյուրավոր ահեղազարկ հարվածի,
Հազար կռի՜վ արեցին, բայց պարտություն չտեսան,
Հազար կռի՜վ արեցին ու բոլորին հաղթեցին։
Ու կռվում են հիմա էլ, որ ետ չտան էլ երբեք
Իրավունքը բանվորի, որ անսասան է արդեն.
Բարձրացել են նրանց դեմ ունևորներն ահարեկ,
Բայց կռվում են նրանք դեռ— ու կհաղթե՛ն, կհաղթե՛ն։
Չե՞ն տա նրանք էլ իրենց ձեռքից գենքերը իրենց,
Չե՛ն տա թշվառ գյուղացու հողը նորից ավարի.
Ինքն իրեն տե՛ր կմնա էդ ժողովուրդը էդպես—
Մինչև երկիրը սառի, մինչև արևը մարի։
Չկա կյանքում էնպես ուժ, որ կարենա պայքարել
Աշխատավոր բանվորի էլ կուտակված ուժի դեմ։—
— Փա՜ռք բանակին նրանց կուռ, նրանց կամքին պողպատե,
Ժողովրդին, որ կյանքում իր բախտի տերն է արդեն։

1920

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈ

Նորի՜ց զրնգում է հոգիս,
Դղրդում է անսանձ ահով։
Զգում եմ՝ կուտակվում է նորից
Փոթորիկը կյանքի ու մահու։

Նորից—
Աշխարհի բոլոր կողմերում—
Դեպի հյուսիս, արևմուտք, արևելք—
Ահաձայն զրնգում է մի երգ
Ու թռչում է—հեռու։

Նվագվում է նորից
Բյուրավոր սրտերի վրա
Մի անդարձ պարտության կսկիծ...
Բայց վառվում է նո՜ր մի քուրա։
Բոցկլտում է միլիոն աչքերում,
Սրտերում արևտենչ ու վառ,
Երկաթե, բրոնզե կրծքերում,
Կրծքերում— կարմի՜ր մարմար։
Սրտից-սիրտ թռչում է մի ճիչ
Օրերում այս ահեղ ու խենթ—
Հեծկլտում է հիվանդ մի քրքիջ,
Ջառանցում է մի տենդ։

Իսկ նրանց աշխարհում ավեր,
Ինչպես մի ուղեղում հիվանդ,
Սնուցվում են արնոտ դավեր,

Արյունի կարոտ ու խանդ։
Լոնդոնից, Փարիզից, Պեկինից
Մինչև Պո, ու Բեռլին, ու Լիոն—
Ջառանցում է Նյու-Յորքը նորից
Ու տենդում է դեղին Տոկիո՜ն...

Ու նրանց դաժան երազում
Թնդանոթը ճչում է բութ,
Գնդացիրը արյուն է հազում
Ու տանկերը սեղմում են անգութ։
Ու կապույտ ծովերի վրա
Զրահապատ նավերը մեծ
Նորի՜ց հորանջում են հիմա
Արյունոռուշտ ձանձրույթից իրենց.
Բացել են բերանները լեն
Ու նրանց դեղին որկորից
Մռնչում է մահն հրեղեն—
Նորից...

Իսկ մե՞նք, որ ելել ենք կռվի,
Մարտնչել ենք դարե՜ր ու դարե՜ր,
Հարբել ենք երազով հեռվի,
Երազել ենք— կարմիր արև։
Երազել ենք հզոր աշխատանք—
Միլիոնի, բյուրի, բոլորի,—
Խնդությո՜ւն աշխարհից-աշխարհ,
Խենթությո՜ւն անմար հրի...

Մենք, որ բյուր երազներ ենք սնել
Օրերի աքսորում, բանտում,
Օրերում դժվար ու անել,—
Մերկ, հոգնաբեկ, անտուն։
Մաշել ենք մկանները մեր,
Ձեռքերով մեր պողպատ ու քար
Փորփրել ենք միլիոն հանքեր—
Դարերում անսահմա՜ն երկար...
Որ եղել ենք հին Աթենքում,

Կանգնեցրել ենք Մեմֆիսն ու Թեբեն,
Դարերից անցել ենք անքուն
Ու հարթել ենք կյանքի ճամփեն։—
Ու հազար դարերի տենդում
Մեկ ծախել են նրանք ոսկով—
Բայց հիմա եկել ենք—խնդուն։
Ու հասե՛լ ենք հիմա—Մոսկով։
Ծփծփում են հիմա հողմավար
Բանակները մեր բյուր,
Շառաչում են վարար,
Լեռնանում են, շաչում ամենուր։
Զգվում են մկան առ մկան,
Ցանցում են աշխարհը հին,—
Կեցե՛լ ենք հզոր, հաղթական,
Սպասում ենք— վերջի՞ն կռվին։

Ասում ենք.—Ծառացե՛ք հիմա,
Եկե՛ք, ինչքան կաք կյանքում,
Սպասում ենք ձեզ— անահ,
Սպասում ենք— անքուն։
Երազում ենք բանակները ձեր սև,
Որ պիտի հորդեն նորից,
Որ քանդեն մեր ուղին լուսե,
Լուսավոր ուղին բոլորի։
Եկե՛ք, ինչքան կաք։ Եկե՛ք։
Մեր կրծքերը պողպատ են ու քար։
Այս օրվան սպասել ենք մենք
Դարերում—անսահմա՛ն երկար...
Եկե՛ք, հեղեղե՛ք, հորդե՛ք,
Ծփացե՛ք ոհմակ առ ոհմակ,
Հյուսիսից մինչև արևելք
Տարածե՛ք ավերում ու մահ։
Ոսկեղեն արևի ներքո
Թող շողան ոսկի ովիններ,—
Եկե՛ք, դարերի խորքից
Անընդհատ արշավող հոներ։

Դուք, որ միշտ մեր քրտինքն եք կերել
Ու հարբել քրտինքով մեր տոթ,—
Եկե՛ք, թե կուզեք չլինել
Մեր վերջին կռվից հետո...

Մենք ասում ենք.— Կա՞նք, կլինե՛նք,
Աշխարհում ինչքան կա դեռ արև,
Ինչքան կա աշխատանք ու երգ,
Մկաններ— պողպատե, քարե։
Եկե՛ք Փարիզից, Լոնդոնից,
Նյու-Յորքից, Բեռլինից—եկե՛ք.
Սպասում ենք նորից,— նորից
Մեր ճակատը հպա՞րտ է ու սեգ։
Սպասում ենք կռվին վերջին
Եվ գիտենք— վերջին կռվում
Ձեր հետքերը պիտի կորչին
Մեր երթի լուսավոր հեռվում։—
Եվ ձեր խեղճ դիերի վրա
Մեր քրտինքը զուլալ, սրբազան—
Կվառե խնդության մի քուրա,
Կկապե պայծա՞ռ ծիածան...

1921

ԱՄԵՆԱՊՈԵՄ

ՍԿԻԶԲ

Ես—Հայաստանցի պոետ—
Երկիր, ուր մշուշ է ու մահ—
Բոլորի՛, բոլորի՛ համար
Երգում եմ
Նորից
Հիմա։

Բայց ինչո՞ւ միայն ես երգեմ,
Միայն ես, և ո՛չ թե նրանք,
Որ օրերը այս հողմածեծ
Գրոհել են անցյալի վրա։

Նրանք, որ փոշոտ, արևոտ,
Օրերի խոնավ մշուշում
Աշխատում են, եռում, պայքարում
Այս աշխարհի փոշում։

Որ հոսում են քրտինքի նման
Աշխարհի երեսն ի վայր—
Ու սրբում է, տանում է քամին
Ու խառնում է նրանց—իրար։

Եվ մի՞թե դուք չգիտեք,
Որ ամեն մի անհայտ բանվոր,
Որ ձեռքով իր երկաթ է կռում—
Հազա՛ր պոեմներ ունի
Իր հուժկու, երկաթ թոքերում։

Չգիտե՞ք...
Իմացե՛ք հիմա։
Ականջներդ—լայն—բացե՛ք.—
— Ուրիշ հանճարներ չկան
Աշխարհում— նրանցից բացի՛։

Եվ գիտե՞ք, թե ինչե՞ր են երգել,
Ինչե՞ր են ստեղծել նրանք—
Ինչպիսի՛ պողպատե երգեր,
Ինչպիսի՛ եռանդ ու կրակ...

Երգել են—
Եվ երգը նրանց,
Դարերի սարսափից անահ—
Կանգնել է՝ վիթխարի, հաստատ,
Նրանց երգը—
Ա շ խ ա ր հ ը—
ահա՛։

Աշխարհը—
Քաղաքները բոլոր,
Ճամփաները, փոշոտ խճուղին,—
Վերջին արտաքնոցը քարե—
Ու բոլո՛ր բերքերը հողի։

—Ինչպիսի՛ բազմալար երգեր
Ու հրաշք,
Հեքիաթ,
Հիացմունք։
— Ողջո՛ւյն, բյուրհանճար ընկե՛ր։—
Հանքագո՛րծ,
Հանքափո՛ր,
Հացթո՛ւխ...

Այո՛։
Ինչո՞ւ միայն ես։
Թող բոլո՛րը նրանք—երգեն։

Բոլորի՜ն, բոլորի՜ն, բոլորի՜ն—
Երգեն։
Եվ ինչո՞ւ միայն նա՛ երգի—
Մի՛այն նա— նախերգի մի Պողոս.—
Իսկ Իվա՞նը, Յուսո՞ւֆը, Զունկ-Ֆո՞ն,
Որ իրար ճանաչում են վաղուց,
Եվ մի՞թե դուք չգիտեք,
Որ կարող է այսօր Տիբեթից
Մի Խուն-Յուն ինքնիրեն թռչել—
Ռաշտ, Պետրոգրադ, Թիֆլիս։
Կամ աշնան տերևի նման
Կարող է թռչել Կարոն—
Կուզեք, թող լինի Հագո—
Թիֆլիսից՝ Մարսել, Երևան,
Պեկին, Գահիրե, Ջիկագո՛։

Օ, աշխարհը վաղո՛ւց է դարձել
Մի փոքրի՜կ, փոքրի՜կ փողոց...
Վաղո՛ւց դեղնավուն Պեկինից
Մինչև Նորք իր ձեռքը պարզած՝
Մի Զունկ-Ֆու կարող է ասել.—
— Բարի լո՛ւյս, բանվո՛ր Պողո՛ս...

Էլ ինչո՞ւ միայն նա երգե—
Թող երգեն, ինչքան մարդ որ կա.
Թող աշխարհը ամբողջ երգե,
Զրնգա՛,
Զնգա՛,
Զնգա՛...

Գլ. Ա.

1914 թ. նոյեմ. Երևան

Երևան։
Աստաֆյան փողոց։

Փողոցի մեջտեղով ահա,
Մտքերի տակ ծանր կքած՝
Անցնում է մի բանվոր—
Պողոս։

Այրում է արևը եփող,
Խանձում է ջղերն հոգնած։—
Գնում է դեպի դեպո
Նա։

Տոթ է։
Ամառվա կեսօր։
Արևը—կարմիր շաֆրան։
Արևը—դրել է հինա։

Շտապում է նա—դեպո՛։
Մտքերը հրում են՝ գնա՛։

Ամեն ինչ—գո՛րշ, առօրյա։
Ինչպես միշտ— գորշ, փոշոտ փողոց։
Սառը ջուր։
Խաղող։
Գինի՛։
Մարդիկ։ Կառքեր։ Մարդիկ։
Եվ ոչ-ոք չզիտեր, որ հիմա
Աստաֆյան փողոցի վրա—
Հրա՜շք պիտի լինի...

Եվ հրաշքն... այնպես պա՛րզ եղավ...
Հանկարծ բանվորի ճակատից
(Տոթ էր, շոգն ասում էր՝ գնա՛)—
Մի կաթիլ քրտինք ընկավ
Փողոցի փոշու վրա։

Ընկավ— ու մնաց մի պահ։
Ու ցոլաց նրա մեջ հանկարծ—
Երկնքի անսահման հեռուն
Ու արևը— հեռո՛ւ մի առկայծ...

Ու հանկարծ այնտեղից, փողոց,
Ուր քրտինքը մնաց մի պահ—
Բյուրավոր բանակներ ելան՝
Վիթխարի, համարձակ, անահ...

Ելան բյուրավոր մարտիկներ,
Զինվորներ երկաթե, բրոնզե,—
Նրանք, որ իր պես, իր նման
Աշխատում էին դեռ անգեն։

Ելան, հառնեցին հանկարծ
Փողոցի ամառվա փոշում—
Բյուրավոր բանակներ անահ,
Զրահապատ բանակներ ուժի։

Շողացին սվիններ, սրեր,
Երգեցին կրծքեր հզոր,
Դրոշներ ծփացին արնավառ—
Դրոշներ կարմի՜ր, բոսո՜ր...

Եվ նրանց բոլորի առաջից
Մի դրոշ առնական ուսին՝
Արշավում էր Պողոսը հաստատ—
Ելնում էր փողոցի փոշին։

Ելնում էր փողոցի փոշին,
Ծփծփում էր բանակը հոծ.—
— Անցնո՜ւմ էր դարերի միջից
Մի հսկա, բյուրանուն Պողոս...

Գնում էր Աստաֆյան փողոցով,
Աչքերը հառել էր հեռուն։
Վառվում էր արև մի բոսոր
Պողոսի խոնավ աչքերում...

Ոչ-ո՜ք, ոչ-ո՜ք չտեսավ։
Միայն մի վայրկյան էր վառ։

Հետո— անիվներ անցան։
Գորշ, փոշոտ—փողոցի ճանապարհ։
. . . . . .

(Իսկ որպեսզի հասկանաք այս հրաշքը—
Բավական է, որ իմանաք,
Որ մի հին ընկերոջ մոտից էր
Վերադառնում նա։

Այդ ընկերը նրան ասել էր,
Որ գալու են դեպքեր վիթխարի,
Որ արդեն, արդեն հասել է,
Սրընթաց արդեն արշավում է
Ժամանակը մե՜ծ պայքարի...)։
. . . . . .

Երևան։
Աստաֆյան փողոց։
Ջնթաթախ։
Աչքերին փոշի։
Խաղաղ—խաղաղ—քաղաք։
Ու զոռոցը— «Ա՜-ի՜, ա՜-ի՜, ա՜-ի՜»—
Իշու,
Էշան,
Էշի...

Ծույլ,
Դանդաղ։
Մի քնած էշի
Երջանիկ երազի նման—
Տոթ,
Արև,
Ամառվա փոշի—
Երևա՜ն,
Երևա՜ն,
Երևան...
. . . .

Իսկ իրա խանութի առաջ
Նստած՝ խանութպան Համոն
Գանգատվում էր.—Ինչո՞ւ չկա
Մի անուշ, գարնան քամի...

Թվում էր նրան, Համոյին,
Աշխարհը—փոշոտ մի փողոց—
Ու ապրում են ողջ աշխարհում—
Համոն,
Մի Կարո,
Մի Պողոս։—

Երազ էր թվում Համոյին
Փողոցի արևոտ հեռուն.
Թվում էր՝ արևի վրա
Նստել է— ինքը Համոն։
Ոտքերը կախել է վար
Ու մռռում է դանդաղ մի երգ...
Հաշվվում է տոթ ուղեղում.
— Տասնըմեկ... տասերկու... Տասերեք...

Հոսում է արևի գինին...
Իսկ էսօր առևտուր չկա...
Շուտով իրիկուն կլինի—
Կգնա—
Նորից կգա...

Կելնի արևը նորից,
Կվառվի՝ հիմար ու շոգ—
Էդ շոգին ո՞վ կլինի
Գինի կամ կոնյակ ուզող...

Երազում էր Համոն կիսաքուն,
Օրորվում էր մեղկ հոգում
Աշխարհը— շոգ մի անկյուն՝
— Առավոտ,
Կեսօր,
Իրիկուն...

Էլ ո՞նց հրաշքներ տեսներ
Խանութպան Համոյի հոգին,
Էլ ինչո՞ւ շարժվեր տեղից...
Երբ եկան ասին «Պ ա տ ե ր ա զ մ»—
Զդողաց անգամ ծայրը... բեղին։

Զլսեց։ Զզգաց։ Զիմացավ։
Թվաց թե— հարսանիք է մի։
Ու գլխի հորդե այնտեղ—
Անհաշիվ... կարմիր... գինի...

Եվ երբ իրիկուն եկավ
Եվ եկավ, որ գնա վռազ—
Մինչև տուն լսեց բոլորից.
—Պատերազմ։ Պատերազմ։
—Պա—տե—բազմ։

Գ Լ. Բ.

Լսեցի՞ք—
Ելան—
Բանակներ հսկա, հրկաթազրահ։
Լսեցի՞ք—
Ելան—
Աշխարհի բոլո՛ր դաշտերի վրա։

Ելան,
Գնացին—
Ուրալից՝ դեպի Կարպատները լուրթ,
Ու Կարպատներից— մինչև Էրզրում,
Ու Էրզրումից—Տրիպոլի՛, Հռո՛մ։

Բոլո՛ր կողմերից հավաքված ելան.—
Թուրք,
Իտալացի,
Հնդիկ,

Վրացի,
Ռուս,
Շոտլանդացի—
Հայ,
Խունխուզ,
Թաթար,
Կիրգիզ,
Ջինացի—
Նյու-Յորքից եկան,
Տայիտի կղզուց,
Հեռու Բաղդադից,—
Եկան—
Ո՞ւր եկան—
Բոլո՛ր բանվոր,
Մուշա,
Գյուղացի։—

Եկան—
Ո՞ւր եկան.—
Լոնդոնից—Պեկին,
Ղարս,
Սարիղամիշ.—
Փոշի բարձրացավ,
Արճիճե քամի...

Ու ոռնում էին—
«Վո՛-վո՛-վո՛»—«վո՛-վո՛»—
Թնդանոթների կոկորդները չոր—
«Վո՛»
«Վո՛-վո՛»
«Վո՛-վո՛» —
Դիշեր,
Յերեկ,
Կեսօր։

Ու ոռնում էին—
Դաշտերի, ցանքսերի,

Արտերի վրա.
Ճճի՛-ճճի՛, ճճի՛—
Ռումբ—
Բում-բո՛ւմ-բո՛ւմ—
Էլ ոչինչ— կարմիր արճիճից բացի։

Ու ոռնում էին.—
Ռո՛ւմբն էր հողմավար, վարար անձրևում,
Քաղաքներ քանդում, դաշտերը ձևում։
Ու լուսարձակներ հազարաչքանի
Լույս էին սփռում դաշտերի միգում,
Որ արճիճն իր գործն անվրե՛պ անի։—

Իսկ քաղաքներում—
Բեռլինում, Փարիզում,
Նյու-Յորքում հեռու—
Արնաքամ տենդով, ահով վարակված՝
Աշխատում էին գործարաններում։

Գործարաններում վիթխարահսկա,
Որոնց երկաթե շչակները բյուր
Անասունների նման խելագար
Իրենց երկաթե խո՛րխն էին փնչում
Հորիզոնն ի վեր—
Գործարաններում աշխատում էին
Պրոլետարների բյուրավոր խմբեր։
Դեռ կռում էին ու կոփում ռումբեր,
Թեկուզ գիտեին՝ ո՞ւր պիտի ճամփեն.—
Դեռ կռում էին ու կոփում ռումբեր,
Որ միլիոն, միլիոն թնդանոթների
Անկուշտ, անհագուրդ ծարավը չամբեն։

Եվ ովքե՞ր էին նրանք.— կիսաքաղց՝
Ռուս,
Հնդիկ,
Թաթար,
Գալլ,

Իռլանդացի.—
Բոլորը—բանվոր,
Մուշա,
Գյուղացի՛։—

Իսկ իրենց ոսկի կաբինետներում
Նստած՝ գիտուններ, խելքեր վիթխարի
Կովի՛ պես դանդաղ որոճում էին
Երազներ մահի, արյունի, հրի։
Նրանք, ոսկեպատ կաբինետներում,
Հանճարում էին հեղձուցիչ գազեր,
Որպեսզի Մահի ոտքերի առաջ
Մի ակնթարթում կանգնել կարենան
Դիակի բերդեր ու բուրգեր մսե։

Եվ այսպես— եկան, ելան դեմ-դեմի
Բանակներ բազում ու բազմամիլիոն...
Եկան—
Բաղդադից—Բեռլին,
Պերեմիշլ,
Բեռլինից—Կալե,
Դուվր,
Վերդեն,
Լիոն...

Աշխարհից-աշխարհ,
Ծովից-ծո՛վ ելան.—
Նյու-Յորքից—Պեկին,
Ուրալից—Միլա՛ն...

Գ. Գ.

Այսպե՛ս էր։
Խառնվեց իրար
Աշխարհը—եղերքից եղերք։
Եվ բոլո՛ր դաշտերի վրա
Կանգնեցին քաղաքներ մսե։

Ջնամյա արևին մոտիկ,
Արևի հարաղատը միակ—
Քայքայվում էր կարծես տոթից
Աշխարհը—նեխած մի դիակ։

Ու խեղան, սարսափից երեր,
Հավերժի մուժում անուղի—
Տանում էր ժամանակը ծեր
Դիակը իր նեխած տղի...
Տանում էր— նեխած մի դիակ,
Փախցնում էր ամո՛թը իրա—
Ու հոսում էր արյունը տաք
Հավերժի ճամփեքի վրա։

Հեռու—Սատուրնի վրայից
Կարելի էր տեսնել՝ գազիր՝
Արնահոս վերքերի նման—
Լույսերը Բեռլինի, Փարիզի։
Դեղին, ամպերի նման,
Աշխարհի նեխած երեսին—
Կուտակվել էին արնահամ
Ամպերը հեղձուցիչ գազի։
. . . . . .

Այսպես էր։
Եվ դուք չիմացա՞ք,
Չտեսա՞ք ձեր մութ հոգում,
Թե ո՞նց—բանակնե՛ր մեռան՝
Հազա՛րը մի սև իրիկուն։
Որ նորի՛ց, խաչվելու համար,
Ինչպես նա, որ զնաց Հռոմ—
Միլիոննե՛րը անխոս զնացին
Վերդեն,
Պերեմիշլ,
Էրզրում...
. . . . .

Երևան։
Աստաֆյան փողոց։
Նստած է խանութպան Համոն։
Աշուն է։
Անձրև։
Մշուշ։
Թաց, խոնավ—անձրևոտ իրիկուն։

Փողոցը լիքն է հիմա,
Դարձել է լեփ-լեցուն մի բերան։
Թափվել են մարդիկ խմբերով
Անձրևոտ մայթերի վրա։

Հորանջում է փողոցը թաց,
Որոճում է թեն, անատամ.—
Ծամվում են մշուշում ընկած
Հազա՞ր ու հազա՞ր գաղթական։

Նայում է ժամերից ասված,
Ուրախ է. քիչ մնա... երգի.
Հոսում է թուքը նրա
Ճերմակ, փառավոր միրքին։—
Շաքարև աչքերի առաջ
Ծնվում են հիսուսները հոծ.
— Գիտե՞ որ՝ Նյու-Յորքից կգան
Կբանան հազա՞ր որբանոց։
Հորդում է ժպիտը լուսե.
Ամոթխած պառավի նման
Ուզում է, բայց... քաշվում է ասել.
— Իմ որդին անկողին չուներ,
Բայց նրանք—գիտե՞ք—կունենա՞ն...
. . . . . .

Այսպես էր։
Խանութի առաջ
Նստած՝ խանութպան Համոն
Մտածում էր՝ ինչո՞ւ չկա։
Մի փոքրիկ... զարնան... բամի։

Մտածում էր՝ «Բաղդադ են հասել
Ձորքերը անսահման Ռուսի—
Էլ
Սրանք
Ինչո՞ւ են փախել
Բիթլիսից, Բաղդադից, Մուշից։

Ինչո՞ւ են մնացել թափված.
Թող գնան Բիթլիս, Բասեն—
Էլ
Ինչո՞ւ
Էրզրումն առավ
Անհաղթ Անդրանիկ փաշեն...

Եվ էս մեծ մտքերից հոգնած՝
Գնաց տուն, որ փաստոն խաղա։
Իսկ նրա խանութի առաջ
Մեռնում էր մի որբ երեխա։

Այսպես էր։
Խանութպան Համոն—
Հավատո՞ւմ եք՝ ա՛յն էլ չտեսավ,
Որ Պողոսը դարձավ զինվոր
Ու մինչև Պերեմիշլ հասավ...

Բայց երբ առևտուր չկար,
Որպեսզի ձանձրույթից չըքնի—
Համոն երկա՞ր-երկա՞ր
Երգում էր՝
«Մեր
Հայրենիք...»։

Գլ. Դ.

Երևան։
Այսինքն—Նաիրի։
. . . . . .

Այսինքն՝ այստեղից սկսած
Գնում էր դարերի հեռուն
Հնամյա, հին մի երազ,
Երկիր մի՝ դարերի ուրու։
Աշխարհի ճամփեքի մեջտեղում,
Ուր դալիս են, թառնվում իրար
Արևմուտքն ու արևելքը հին—
Կանգնել է—դարերի ուրու—
Հնամյա երկիրը՝ Նաիրին։

Որպես արյունոտ հարցանիշ՝
Դարերի մեջ մեխված վազուց՝
Կանգնել է երազի նման—
Եվ չկա՞ Նաիրի ուրիշ...
. . . . . .
Աշխարհի այն ահեղ օրերին,
Աշխարհի ճամփեքի մեջտեղում,
Ուր եղել էր հին Նաիրին—
Կանգնել էր—խանութպան Համոն։

Կանգնել էր խանութի առաջ.—
Նաիրի պես «հզոր», «անսասան»—
Գնացել էր արյունոտ ռազմադաշտ
Համազասպը՝ «քաջ ջանբեգար»։

Իսկ նրանց երկուսի մեջտեղում,
Ակնոցը Նաիրյան քթին՝
Կանգնել էր վարժապետ Սողոն՝
Նաիրի հարազատ որդին։

Դարերի մշուշից եկած,
Ձեռքին՝ հնամյա մի նետ—
Դարերի մշուշի վրա
Գրում էր՝ «Վ ե ց վ ի լ ա յ ե թ...»։

Ո՞նց իմանար Սողոն,
Կամ «դարիր», «պագթական» մշեցին՝

Թե ինչո՞ւ Կարպատներն առան
Ու Ռեյմսի տաճարն այրեցին։

Է՛ն էլ նա հազիվ հասկացավ,
Որ երբ ռուսը քաշվեց Վանա—
Ուզեց, որ երկրի երեսին
«Խայու անուն չմնա...»։

Ողբալով Նաիրին հարազատ,
Աշխարհի ճամփեքի միջում—
Վարժապետ Սողոն հուսահատ
Հարցնում էր՝ «Ինչո՞ւ, ինչո՞ւ...»։

Եվ միայն Պողոսն էր, որ արդեն
Դեպոյից ընկած Պերեմիշլ՝
Ամրանում էր ոգով ու սրտով
Ու մտքեր ընդունում ուրիշ։

Ջուլվում էր բանակին էն մեծ,
Որ հուզվում էր արդեն, խլրտում,
Որ պիտի աշխարհը ցնցեր,
Երբ դառնար կրկին մի օր տուն։

Բայց նրանք դեմ-դեմի կենցած
Այն ահեղ, ահավոր կռվում
Արնաքամ դեռ կռվում էին
Հայրենի դաշտերից հեռու։

Իվանը, Հանսը, Ժանեն—
Մոսկովցի, փարիզցի, բելգիացի—
Բոլո՛ր մի հսկա, բյուրանուն
Բանվոր,
Մուշա,
Գյուղացի։

Եվ նրանց դիերի վրայով,
Լոնդոնից մինչև Կապուտան—

Անցնում էր երկաթե քայլով
Մի հրեշ՝ անունը Կապիտալ։

Գալիս էր Բեռլինից, Փարիզից,
Գալիս էր—Հյուսիսից դեղին,
Անցնում էր Նաիրի վրայից,
Բռնել էր Բաղդադի ուղին։

Գլխի տեղ—հսկա մի բերան,
Գլխի տակ—անսահման մի փոր,—
Կանգնում էր դիերի վրա,
Խմում էր արյունը բոսոր։

Հագել էր—պուրպո՛ւր, ոսկի՛,
Շողում էր արևի ներքո.
Ժպիտը ճարպոտ երեսին՝
Արշավում էր հաղթական երգով։

Եվ նրա երգին գերի,
Բաղդադից մինչև Լիոն,
Արնաքամ զարնվում էին
Ջորքերը՝ միլիոն-միլիոն...
. . . . . .

Արնաքամ կռիվն այս ահեղ
Վերջ պիտի չունենար գուցե,
Թե բանակը մեր եւ չնայեր,
Չկանչեր՝ կանգնեցե՛ք, կանգնեցե՛ք...

Բանակը։
Բանակում մարդիկ,
Որ ուրի՛շ պայքարի սովոր՝
Կանչեցին ուրի՛շ մի մարտի
Բանակները այն ահավոր։

Կանչեցին—ու դարձան իրանց
Սուեպները անծայր ու լեն,

Վառեցին դաշտերի վրա
Մրրիկներ ահեղ, հրեղեն։

Պարզեցին դրոշներ կարմիր,
Կանչեցին աշխուժով հրձիգ.—
— Բանվորներ համա՛յն երկրի,
Միացե՛ք, միացե՛ք, միացե՛ք...

Վառեց նրանց կանչն ամբողջ
Աշխարհը, որպես հրդեհ,
Նփացին բանակները հոծ
Ու ծփանքը, ահեղ, հորդեց։

Մոսկովը ծփաց կողփողուն,
Ինչպես մի բոսոր դրոշակ—
Պարզե՛ց արնավառ աշխարհին
Մի կարմիր խնդության նշան։

Ու ելած հողմերից այդ վառ,
Որպեսզի խորտակե այդ հինը՝
Լեռնացավ, որպես ղեկավար,
Ու կանգնեց Լենինը։

Ու ելած իրեն տեղից,
Հրահրած արնավառ ոսկով—
Նորի՛ց բանակները դեղին
Շարժվեցին դեպի Մոսկով...

Եվ, որպես դաժան մի երաշ,
Կարմիր զորքերի հանդեպ՝
Փարիզի մշուշից ելած
Կանգնեց գնդապետ Գալիֆեն։

Երկաթե քայլերով նորից
Արշավեց, որպես չար բաղն,
Որ Կարմիր Մոսկովում փորի
Մի հսկա, նոր Պեր-Լաշեզ...
. . . . . .

Գլ. Ե.

Աշխարհի ճամփեքի մեջտեղում,
Ուր գալիս են, խառնվում իրար
Արևմուտքն ու արևելքը հին—
Ուր եղել է հին Նաիրին—
Կանգնել էր վարժապետ Սողոն։

Մի հսկա հորձանքով ահեղ
Ջորքերը անսահման ռուսի
Վարարած ջրերի նման
Քաշվեցին Բասենից, Մուշից։

Նորից—խուժեց թշնամին,
Եկավ—մինչև Կարս հասավ...
Նորի՛ց դարձավ Նաիրին
Բարբարոս սրերի հեսան։

Նորի՛ց քաղաքներն հնամյա
Դարձրին հողին հավասար—
Դաշտերում անթաղ մնաց
Ժողովուրդը՝ հազար-հազար։

Նորից—անվրդով նստած,
Որպեսզի ձանձրույթից չքնի—
Համոն երկա՛ր-երկա՛ր
Երգում էր «Մեր հայրենիք...»։

Չէ՞ որ Երևան քաղաքում,
Հնամյա Մասիսին մոտիկ,
Մասիսի պես հզոր, կանգուն—
Ելել էր «նաիրյան ոգին»։

Ելել էր «հզոր», «անհաղթ»,
Պարզել էր— երեքգույն դրոշ,
Հառնում էր—«անկաշկանդ», «ազատ»—
Ու չկա՞ր Նաիրի ուրիշ...

Աչքերը դարերի հեռուն,
Ակնոցը նաիրյան քթին՝
Կանգնել էր վարժապետ Սողոն՝
Նաիրի հնամյա որդին։

Դարերի մշուշից ելած,
Ձեռքին՝ հնամյա մի նետ—
Դարերի մշուշի վրա
Գրում էր՝ «Վ ե ց վ ի լ ա յ ե թ...»։
. . . . . .

Իսկ այնտեղ—Կարմիր Մոսկովից
Դեպի աշխարհները բոլոր—
Անթել հեռագիրը նորից
Կանչում էր ձայնով ահավոր։

Կանչում էր— երկրից-երկիր,
Ձայնում էր խանդով բոցավառ.
— Ելի՛ր, սովալլուկ մարդկության
Անեծքով գերված աշխարհ...

Հյուսիսից մինչև արևելք,
Մինչև Հինդ, Հաբաշ, Հնդուչին—
Կանչում էր՝ «Եղբայրնե՛ր, ելի՛ք—
Սա՛ է մեր կռիվը վերջի՛ն»։

Եվ ահա այդ ահեղ կանչին
Շիրակի դաշտերից —հանկարծ—
Զրահապատը խանդով առաջին
Նաիրի դաշտերում զնգաց։

Զրահապատը զնգաց զնգուն,
Շիրակի դաշտերից կանչեց—
Նաիրի հնամյա երկրում
Կարմրավառ, ահեղ հնչեց...

Ու կարմիր, հրդեհի նման
Մրրիկներ անցան սրընթաց—

Եվ, ելած քնից հնամյա՝
Արևելքը, կարմիր, խնդաց։—
. . . . . .

Դու հիմա, երկի՛ր Նաիրի,
Աշխարհի ճամփեքի միջում
Կանգնել ես՝ խնդավա՛ռ էլի,
Հառնել ես՝ երկաթե թռչուն։

Աշխարհի ճամփեքի միջում
Ո՞ր գալիս են, խառնվում իրար
Արևմուտքն ու արևելքը հին—
Դու հառնել ես նորի՛ց, բոցավառ,
Վառվել ես՝ կրկի՛ն, կրկի՛ն...

Պարզել ես ճամփեքի միջում
Արևավառ, կարմիր մի դրոշ,
Ու նորի՛ց քո խոսքը հնչուն
Զրնգում է խնդությամբ որոշ։

Եվ ո՛չ թե վարժապետ Սողոն,
Այլ Պողոսն է հիմա քո որդին,
Որ դեմքը քրտինքով ողող՝
Լծվել է գալիքիդ երթին։

Լծվել է օրերիդ երթին
Եվ սրտում խնդություն ու կամք՝
Բյուրերի հետ մեկտեղ, միասին
Այս երկրագունդը հին
Քաշում է դեպի Ապագան...
. . . . . .

ՎԵՐՋԱԲԱՆ

Հիմա—
Ամեն տեղ—
Լսո՞ւմ եք—
Զնգոց...

Երկաթի գրգիռ։
Օրերը—հրետանի։
Ու կյանքը, հին կյանքը հիմա—
Հիշո՞ւմ եք—
«Տ ի տ ա ն ի կ...»։

Հիշում եք.
Եղավ տո՞ն.
Լույսի՞ ու երկաթի մեծափառ հանդես...
— Օրեր...
Շփոթում...
Մարսելյեզ...
...Անտես։

Ու ճչաց—
Սո՞ւր ճչաց—
Կանչեց հոգևար—
Ռադիոն...
Կանչեց։
Դեպի՞ քաղաքները բոլոր,
Դեպի կայարանները բոլոր,
Ճչաց,
Սո՞ւր ճչաց
Կանչեց...

Ու մեռան։
Գնացին։
Ո՞ւր...

— Օրերը թռչում են, թռչում են արագ։
Օրերը—կրակ,
Պուրպուր...

Ուզո՞ւմ ես՝ բռնեմ հոգիդ այսօրվա—
Ու ծանր,
Երկաթե մի դիսկի նման—
Նետե՛մ—

Ո՞ւր նետեմ—
Ո՞ւր...
—Դեպի կյանքը գալիք,
Պուրպուր...
. . . . . .
Շինվում է աշխարհը հիմա,
Շինում են
Փողոց առ փողոց—
Մոսկովցի,
Բանվոր մի Իվան,
Մի Զինկ-Ֆու,
Մի Հանս,
Մի Պողոս։

Ես ասում եմ՝ աշխարհը կդառնա
Մի հանո՛ւր խնդության փողոց,
Ու Զինկ-Ֆուն Պեկինում կխմե
Քո կենա՛ցը, Բարթո՛ւղ, Պողո՛ս...

Իսկ եթե հույսերից իմ այս վառ
Իմ սրտում պիտի մնան վերքեր—
Ես էլի՛ քո փառքը կերգեմ,
Իմ հզո՛ր, երկաթե՛ եղբայր։

Կերգեմ քո կռիվը մեծ,
Աշխատանքդ հզո՛ր, անծի՛ր,—
Այս պոեմս— քո կա՛մքը երգեց,
Այս պոեմս— դո՛ւ երգեցիր։

Թե խաբեն օրերն այս հրկեզ՝
Սրտո՛վ միշտ քեզ պե՛ս ու քեզ հե՛տ—
Ես էլի՛ քո փառքը կերգեմ—
Ես—չնչին,
Վերջին
Պոե՛տ...

1920—1921

ՉԱՐԵՆՑ-ՆԱՄԵՆ

*
* *

Ձեր մտքերը մի պահ ես պիտի
Այսօր տամ երգերիս քարե։—
— Ե՛ս եմ այս՝ անտուն, անոթի
Մի պոետ— Եղիշե Չարենց։

Ես եկել եմ հեռո՛ւ Իրանից։
Հայրենիքս է— Խանի Մակուն։
Իմ հոգում—արևո՛ն Իրանի,
Իրանի արևո՛ն է իմ հոգում։

Իսկ արյան մեջ երգում է իմ—
Նաիրյան տխրությունն անծիր...

Իսկ ուղեղս— կարմի՛ր-կարմի՛ր
Մոսկովյան հրով այրեցի։

Թող իմ սիրտը— բուրմունքը վարդի,
Իսկ ուղեղս— կրա՛կը խանձի։—

—Իսկ հիմա լսեցե՛ք, մարդի՛կ,
Շահ-Նամեն բանաստեղծ Չարենցի...

I

Ոսկեվառ արևի նման
Իրանից նետված Նաիրի,
Նաիրից նետված Մոսկով—
Ես երգում եմ կյանքս հիմա—
Արևով,
Արյունով,
Ոսկով։

Ես ի՞նչ հրաշքով դարձնեմ
Օրերիս անիվն անգո.

Թող իմ երգը ձեզ թոցնե—

Նաիրի.

Կարս—

Մանկություն...

Ես Կարսում եմ—
Նորի՛ց,
Նորի՛ց...

Մանկական շրթերքս կախած՝
Ես տեսնում եմ մորս
Նորից—
Ստինքները՝ երկու ձագար...

Դեռ հոգիս մի նետ է հանգիստ՝
Օրերիս աղեղին կպած։

Հեռում—մորմոքը զանգի։

Ահա հայրս՝ հաղին կապա...

Նրա դեմքը՝ արծաթե ափսե,
Վրան քիթը՝ կեռ մի դանակ։
Թափել է ժամանակն անսեր
Մազերին— ճերմակ նիրվանա։

Ահա մայրս՝ գնում է ջրի,
Գլխին՝ Թեհրանի լաչակ...

Սուլում է քամին Նաիրի—

Ուզում եմ բարձր ճչալ։

Պարզում է ձեռքերն առաջ
Հոգիս, որպես որբ տղա.—
Ուզում է— արևկեզ հարավ,
Ուզում է արևի ծնծղան...

Իսկ երբ մայրս մազերին իր ձյուն
Դնում է ոսկեմուգ հինա—
Թվում է՝ մազերի միջով
Ես կարող եմ Թեհրան գնալ...

Կարող եմ հասնել Հնդուչին,
Տիրանալ գանձերին Շահի...

Մանկություն... ոսկեթև՛ թռչուն...
Դեղնավուն ոսկի՛ հինայի...

II

Ես ծնվել եմ Մակու քաղաքում,
Արևի տակ ոսկեղեն, հասուն,
Շոգ շնչի տակ Որմուզդի թևի—

1897 թվին։

Թափել է արևն Իրանի
Իմ հոգում Շիրազի վարդեր։

Բայց տխուր նաիրյան քամին
Իմ սրտում թախիծ է բարդել։
Դեռ աչքերս արևին չբացած
Նետել է ինձ հին մի քաղաք։—

Ես անգույն Կարսում մեծացա՝
Հայրենիքս հեռուն թողած։

Աչքերս թևերի նման
Դեռ նիրհել էին շվարած—
Երբ գրկեց ինձ թախիծն հնամյա,
Որպես տան մշտական ծառա։—

(Նա մեր տանն էր վաղուց մեծացել,
Դեռ եղել էր պապիս ժամանակ։
Մնացել էր՝ հոգնած ու ծեր,
Սպասում էր, որ երկինք գնա։
Մենք նրան ասում էինք՝ ապի,
Նա տանում էր ինձ փողոց.
Սիրում էր ամեն բան թափել.
Երգվում էր նաիրյան հողով...)։

Հարական տնակում նստած,
Նա մոռում էր, որպես տան [illegible]։
Բայց հոգիս կարոտով վստահ
Երազում էր արև ու խնդում։

Եվ [illegible] էր, թախիծն հնամյա,
Որ ծածկած արև ու Իրան—
Մի ծերուկ ուսուցչի նման
Ինձ մի օր վարժարան տարավ։

Ու, ծածկած արև ու Իրան,
Նա, շնչով կարծես մի հրե—
Ուղեղիս կտավի վրա
Փորփրեց հնամյա գրեր...

(Իմ հոգին
Ո՞նց
Իմանար,
Որ հոսանքը այդ հին գրերի
Իմ հոգու անհատը թևերին
Պիտի բյուր երկինքներ բանա։

Որ հեռու,
Տարիներ հեռու,
Առածից բյուրպատիկ ավելի—
Նավերիս ճերմակ կտավին
Նա քամի ու արև պիտի տա...)։

Իմ խաղաղ, կապույտ մանկություն,
Դու նման ես լճակն ընկած
Արծաթե լուսինի դիսկին։—

Դու կայիր— ու չկաս հիմա դու,
Արևի պեմ դու, թույլ, հանգար—

Բայց արդյոք կայի՞ր դու իսկի...

III

Եվ ահա—պատանի Եմ ես
Տասնըչորս, տասնըհինգ տարեկան։—

Հիմա քեզ,— պիտի քեզ երգեմ,
Իմ լուսե, հեռո՜ւ բարեկամ։—

Աստղիկ։— Քո անունը այս
Ես պահել եմ սրտում իմ — վառ։

Ինչպես ծովն ընկած առագաստ
Թող ընդմիշտ նա այնտեղ մնա։

Օ, հաճա՜խ, հաճա՜խ, բարեկա՜մ,
Որպեսզի հոգիս չմրսի—

Ես հիշել եմ վայրկյան-վայրկյան
Կանաչած այգին կարսի...

Ես հիշել եմ—
Ի՞նչ.
Չգիտեմ։—

Ես հիշել եմ այն ամառվա
Քո ժպիտը—
Տխուր,
Անթև,—
Իմ շապիկը—հիշո՞ւմ ես— ճերմակ...

Հիշո՞ւմ ես...

Ախր ի՞նչ հիշես...

Ախ, ոչինչ չկա հիշելու—

Աշունը
Տերևներ քշեց—
Թիթեռներ դեղնած հուշերի...

Ների՛ր ինձ,
Ների՛ր, բարեկա՛մ,
Ինչքան էլ լուսե լինեիր—

Ես անմիտ պատանի էի
Տասնըչորս-տասնըհինգ տարեկան...

IV

Եվ
Ահա—
Տասներկու թվին—
Առաջին անգամ... այնտեղ...
Առաջին համբույրս տվի—
Քեզ...

Հիշատակ անթև։

Ես ուզում էի— շո՛գ,
Իրան...
Շիրազի վարդեր կարմիր։—

Բայց գտա...
Անկողնի...
Վրա...
Տարածված... մի պաղ... մարմին...
Ներիր, Աստղիկ Ղոնդախչյա՛ն,
Իմ լուսե բարեկամ...
Ների՛ր...

Ես...
Հետո...
Աշխարհներ անցա—
Բայց Ոոդածս հետ չբերի...

Սիրելի,
Լուսե
Ղոնդախչյան—

Ների՛ր... օ...
Ների՛ր...
Ների՛ր...

V

Եվ ահա
Առաջին
Անգամ—
Այնտեղ... մինչև այն պարտեն—
Երևաց մի ուրիշ անգամ,
Անունը... Երկիր Նախիր։

Երևաց։
Երևի չկար։
Երևի չկային վերջերը։

Եկավ—
Ուսերիս վրա
Մի անհուն տխրություն բարդեց։

Թվաց թե—
Տեսնում եմ մշուշում
Մի կապո՛ւյտ-կապո՛ւյտ աղջիկ։—

Նման էր— հնամյա փոշու,
Նման էր—արնոտած խղճի։

Սպիտակ շրթների վրա
Կային... դեղնավուն վերքեր։

Տվեցի սիրտս նրան—
Ուզեցի, որ նրան երգեմ...
. . . . . .

VI

Օ, երգե՛ր իմ—
Առաջի՛ն,
Առաջի՛ն...

«Երեք երգ»...

Աստղիկ Ղոնդախչյան...

Քրքրեմ
Մոխիրն իմ խղճի

Եվ երբե՛ք, երբե՛ք
Չզղջամ...

VII

Ես ինքս էլ լավ միտ
Չբերի—
Թե ո՞նց՝ Կարսի այգուց—

Տասնըհինգ թվի վերջերին—

Արթնացա... զորքերի շարքում։

Կամավոր։

Հայկական բանակ։

Հրացան։ Թնդանոթ։ Ռումբեր։

Եվ ահա— Այգեստանը Վանա։

Եվ ահա— Վարդան, Ռուբեն։

Եվ ահա ընկերներ նոր-նոր։
Նյու-Յորքից, Բասենից, Պոլսից։—

Մա՛հ,
Մա՛հ,
Մա՛հ։
Ընդհանուր, հանուր։

Զինվորի, աղջկա, հարսի։—

Ես կարծում էի— այնտեղ,
Ռումբերի ահեղ որոտում
Կգտնեմ քո դեմքը լուսե։

Բայց գտա... դիակներ փայտե,
Ու տեսա մի երկիր, որը դու
Լքեցիր խուժումից մեր սև։

Ու իջավ թախիծն հնամյա
Ու հոգիս ճնշեց, ճնշեց...

Եվ իմ գեմ հրաշքի նման
Կրակվեց քո ուղին անշեղ...

VIII

(Ո՞ւմ ինչ, որ— միևնույն թվին
«Պրոգրես» տպարանը Թիֆլիսում
Ավետեց իմ կոտրած թևի
Արնոտած անկումի մասին...
Ու «Գիր»-ը փոշոտ վիտրինում
Մի փոքրիկ բրոշյուր դրեց։—

Իմ տողերը վիշտ բերին ո՞ւմ—
Դանթեյան իմ տողերն հրե)։

IX

Իսկ
Հետո—
Տասնըհինգ թվին—
Երբ եկա, հասա Մոսկով—
Զգացի հսկա մի թևի
Թպրտում... Վիթխարի սոսկում։

Թվաց թե—
Հասնում եմ ահա
Աշխարհի վերջին վրանին,—

Բայց որպես ոսկի մի վահան
Բարձրացավ արևն Իրանի...

Վառվեցին իմ հոգում հանկարծ
Վարդերը հեռու Շիրազի...

Օ, սի՛րտ իմ, գլխիվայր ընկար—
Կախվեցիր... աղջկա վարսից։

Զարթնեցին հեռո՜ւ տարիներ—
Ձիերի նման վրնջան...

Սրթնացավ հրկիզող մի սեր...

Կարինե։

Կարինե Քոթանճյան...

X

«Ծիածանը»...
Արևն է այնտեղ,—
Նաիրյան թախիծի միջից.
Հրկիզված իմ հոգին բանտել
Եվ ուզում էր անդարձ շիջի։

Իրանի արևն էր շոգ—
Լացակումած կապույտը Նաիրի...

Ու թախիծը— խեղդող, ճնշող,—
Խառնված ոսկեման հրին։

(Դեռ չկա՞ր աշխարհում անշող
Դեռ չկա՞ր արև-Նաիրին...)։

XI

Մոսկով։
Տասնըյոթ թվական։

Իմ սրտում—արևն Իրանի։

Եվ ուզում էր արևն ագահ.
Հրդեհել սկավոդ տարին։

Հունվար...
Փետրվար...
Քսանըվեց։

Պոկվեց, ինչպես քար սարից։—

Արևը՝ կարմրակեզ բանվոր՝
Գլորվեց թափով վիթխարի։

Ի՞նչ...

— Հսկա,
Վիթխարի մի քար,
Որ նստել էր մեր թևերին։
Ծծում էր մեր արյունն, ագահ,—
Շնչում էր սառնություն բևեռի։

Գլորվեց։
Ու գուբ,
Երերուն,
Մի վայրկյան սպասեց, չըգնաց։
Բացվել էր— անհունամի հեռու։

Ջարդել էր մի հին մեքենա։
. . . . . .

Կանգնել էր ճամփի սկզբին,
Հետևում— մռայլ տարիներ։

Վախենում էր կարծես վազքից...

Կարինե...

Հիմա՞ր Կարինե...

XII

Իմ հոգում— արևն Իրանի
Լափլիզում էր հրդեհի նման։

Ու ծանր, որպես գրանիտ,
Նաիրյան թախիծն հնամյա։

Թե իզո՞ւր կրքերիդ բազեն
Հետևեց ինձ երկա՞ր տարիներ...

Տխրություն էր հմայքդ մսե—

Կարինե...

Մշո՞ւշ— Կարինե...

XIII

Ինչպես քարը, մնացած ճամփին,
Որ նորից գլորվի պիտի—

Իմ հոգին կարոտով անբիծ
Սպասում էր վերջին աղետին։

Պիտ ընկներ, որպես գրանիտ,
Քո կարոտը հոգնած իմ խղճից—
Որ ոսկի արևն Իրանի
Խառնըվեր նաիրյան թախծին...

Եվ ահա—
Հունիս,
Հուլիս...
Եվ ահա—
Սեպտեմբեր,
Հոկտեմբեր...

Զարնվեց կռանը— սալին։
Տեղացին վիթխարի ռումբեր։

Ու ռումբերը— արնակեզ երգով
Գայթեցին ուղեղում իմ մութ։—

Ու կարմիր ռումբերի ներքո—
Երազներս տվի... քամուն։

Գլորվեց, որպես գրանիտ,
Ջո կարոտը հոգնած իմ խղճից։

Ու ոսկի արևն Իրանի
Խառնվեց նաիրյան թախծին...

XIV

Տասնրուք։
Թվական կյանքի։

Իրիկուն։ Վերադարձ։ Առավոտ։

Ազատվեց հին կապանքից
Հոգիս՝ վիթխարի ցավով։

Տասնրուք։
Թվական հրի։

Ողջակեզ— կարմրակեզ բոցում։

Արթնացավ արև՜— Նաիրին
Իմ հոգու նո՜ր զնգոցում։

Հրդեհ էր։
Անհատնում կրակ։
Արնաքամ վերքեր կարևեր։

Ու կարոտդ հանկարծ ալվքլան—
Ողջակեզ— հոգիս արևեց։

Ողջակեզ։ Խնդություն։ Ու մի
Անհատնում վատնում միասին—
Եվ հոգիս սանձարձակ թռավ...

Այսպես էր տաւնրուք թվին։—

Յո՜մա...

Լյուսի Թառայան...

XV

(Հոսում է արնակեզ մի գինի,
Հրդեհվում է սրտում իմ շոգ.
Անցնում է իմ թեժ արյունից
Ու քանդում է կապանքը ճնշող։
Նա այնտեղ է— դուրսը, նա կա,
Որպես կին, որպես նո՜ր Նաիրի,
Հարբել են խմբեր խելագար
Ու աշխարհը հանձնել են հրին։

Նա այնտեղ է—Լյուսի Թառայան.
Վարդերում, արևում Շիրազի,
Նաիրյան դաշտերի վրա,
Սկյության դաշտերում անծիր...
Ու բոլո՜ր նրանց սրտերում,
Որ աշխարհը հանձնել են հրին։
Հրդեհվել է աշխարհի հեռուն...
—Այստեղ էր այն կարմի՜ր տարի՜ն...)։

XVI

19.

Կարմիր Բանակ։

Հորդել են հեղեղները սև։

Անսահման դաշտերի վրա
Շաչում են քո թևերը լուսե։
. . . . . .

Կայարան։

Զորքեր։
Զորքեր։

Զինվորներ կարմիր։

Գիշեր։

Ու կարմիր զորքերի վրա
Կործվել է խավարը սև։

Խոր,
Խավար,
Ահավոր սպասում։
Հեռուն՝ կրակներ տարոտում։

Առավոտ— կգնանք, հզոր.—
Կփշրենք թշնամու շղթան։
. . . . . .
Այստեղ էր—19 թվին։

Օ, ինչ հո՞ւրդ էր տագնապն ուղեղիս...

Ու հոգիս հրդեհին տվի,
Որ լափվի բոցերում դեղին։

Այստեղ էր։
19 թվին։
Հավաքվել էր Բանակը Կարմիր։

Ու բոլոր աչքերում ծավի
Անսահման խնդություն կար մի։

Ու մոտի՜կ, մոտի՜կ էր այնքան
Երազած աշխարհը գալիք...

Հավատում էր—տերևն անդամ
Որ... կգա՜, կգա՜ Անձկալին...

Կանգնել էր Նա դռանը
Կարծես—
Խանդավառ՝ ճակատին արև։

Ես երբեք քեզ չե՜մ մոռանա—

Բառալան...

Կայարան Տիխոռեցկ

XVII

(Եվ մի՜թե
Ես
Չերգեցի՞
Ձեր կռիվը, կարմիր
Ընկերներ...

Նայեցի երկաթե գծին—
Հասկացա, որ ամբողջը— մե՜ն է։

Ու կարմիր հրդեհում հրձիգ
Վառվելով՝ ձգտեցին իրար—
Անձրևը նաիրյան թախծի
Եվ արևը քո, ոսկի իմ Իրան։

Հասկացա, որ որպեսզի դուք
Միանաք ու ձուլվեք ի մի—
Պիտի նախ իրար միանան
Լույսերը Փարիզի, Պեկինի։

Դեռ պիտի խմիչքը վեդյան
Բյուրավոր սրտեր խանձեմ,—
Բայց ուզին նս արդեն գտա՝
Դեռ երեր, անմարմին, անձև...)։

XVIII

Ինձ կանչում էր կարծես անծիր
Կարոտով— երկիր Նաիրին.—

Նորից Հայաստան գնացի
Տասնըվինը թվի վերջերին։

Այնտեղ — Նաիրի երկրում,
Հնավանդ ցանկությամբ ուրիշ՝
Արդեն խմբապետ Դրոն
Պարզել էր երեքգույն դրոշ։

Պարզել էր— Երևան քաղաքում,
Հնամյա Մասիսին մոտիկ։

Ու լցրել էին հողագույն
Ուրուներ քաղաքն անոթի։

Որպես քար՝ սխրությունն իջավ,
Ծանրացավ ուսերիս,
Վրաս։

Ես նորի՛ց, նորի՛ց քեզ տեսա—
Մանկություն...

Կարոտի իմ...

Կարոտ։

. . . .

XIX

Կարոտ։
Տասնըվինը թվին։
Տասնըվինը թվի վերջերին։

Նո՛ւյն երկինքն էր՝ կաթսա արևի։
Նույն խշշոցը քշփչան ջրի...

Բայց արևը իզուր էր փորում
Կուրացած աչքերը շենքերի։

Իզո՞ւր էր նաիրյան հեռուն
Ունկնդրում քշփչուն ջրին...

Մանկական երազում տեսած
Շուքերի նման չկային
Ծանոթներս— լուսե՛ մարդիկ...

Դարձել էր— սրերի հեսան
Կապույտ մանկությունը իմ—
Իմ կանաչ, պայծա՛ռ բարդին...

Էլ ինչո՞ւ ծիծաղեր հոգիս,
Երբ մի լուրջ քննադատ մի օր
Սարսելով դահլիճն ու ֆոյեն—
Ավետեց ամբողջ աշխարքին,
Որ ծնվել է— մեծ մի պոետ...

Որ ծնվել է երգիչ մի վառ
Ու բերել է երգեր հրե.—

Ցնծա՛, նաիրյան աշխարհ,—

Ցնծա՛... Եղիշե Չարենց...

XX

Երևան։
Քսան թվականն։

Փետրվար,
Մարտ,
Մայիս...

Ողջո՜ւյն, ընկեր Թավաքա՜լ։
Մուսայե՜լ։
Սարուխա՜ն։
Ավի՜ս...

Ողջույն բոլորի՜դ, բոլորի՜դ։
Ձեր կամքին— երկաթ,
Գրանիտ։

Մոսկովյան կարմրակեղ հրին,
Կարմրավառ վարդին Իրանի...
. . . . . .

Երևան։
Մեկ մայիսի։
Աստաֆյան փողոցում—խմբեր։

Խնդավառ եկած միասին—
Կտրել են փողոցի ճամփեն։

Եվ ահա— դրոշներ կարմիր։
Հնամյա Մասիսի առաջ...

Ով որ կա— թող գա՜,
վառվի՜,
Սուր ճչա, խնդասիրտ գոռա՜։

Զիգզագներ—
Նժույգներ թռան,
Կապվեցին՝ Երևան-Մոսկով.
Թափվեցին շենքերն հնօրյա
Հարվածի տակ երկաթե բազկի։

Ու սրտում իմ վառ խառացան
Գալիքները... Ո՞ւր գայիր էլ—

Իսկական մարմին ստացած—
Կամքն՝ ինքնավառ Նոյերին...

XXI

Ջահանմեկ։
Հատված բանաբանեկ։

Էլ եկավ բանաբանի թվին—
Թող հոգիս գալիքն՝ գամի,
Ոչ հոգիս բնամիշտ արնի—

Ընթերցո՛ղ։ Քո հոգին հիմա
Թող ճեղքեմ երգիս դանակով.
— Ես եղա... առաջին Նաիրյան
Բանաստեղծ Նարեկը Բանակում...

Ու տեսավ Մասիսն հնամյա,
Առաջին անգամ իր օրից—
Ձերազած հրաշքի նման
Կռիվը նաիրցի բանվորի...

Իսկ
Երբ
Տուն դարձանք բանակից
Սպասում էր ինձ արդեն
Նաիրին... երկրային մի կին.
Աչքերը—ջահեր կրակի,
Շրթունքները—Շիրազի՝ վարդեր։

Ինչքան շա՜տ անցան դեմքեր,
Բայց հոգիս թող չեղնո՜վ հարբի.

— Ախ, ինչքա՜ն ես սիրո՜ւմ եմ քեզ,
Աբփի՜կ, լուսավո՜ր Սրտիկ...
. . . . . .

XXII

Ես հիմա ապրում եմ Մոսկվայում.
Գլխիս մեջ՝ մրրիկներ ոսկի։

Գլխիս մեջ մի Ռոքերտ Օուեն
Հիմա վառ գալիքն է հսկում։

Գրում եմ պոեմներ, երգեր։
Երազում եմ—Գալիքն անծէր։

Նաիրի՛, ես սիրում եմ քեզ.
Քեզ սիրում եմ, իմ Իրան հրձիգ։

Ես հիմա հեռո՞ւ եմ... Օ, ո՛չ.
Քեզ մոտիկ եմ հիմա ավելի—
Ինչպես նետը՝ դեպի ետ քաշած՝
Առաջից փախչող գաղելին։

Իմ հոգին երեք նետ ուներ—
Պի՛րկ հենած աղեղին օրերի։—

Հիմա՝ թռե՛լ են երեքն էլ—
Զարնվել են— խնդո՛ւն հրին։

Ես քեզ չեմ, ~~ձեզ չեմ~~ մոռացել.
Դուք հիմա դարձել եք—մի։—

Մենք շուտով, ինչպես նետ երեքձայր—
Թռչելու ենք— Հնդուշին, Պեկին։

Ընդունե՛ք, առե՛ք ինձ հիմա—
Մոսկո՛վ կարմրակեղ հրի,
Իմ ոսկի՛, ոսկի՛ իմ Իրան,
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ Նաիրի...

1922. 6. I.
Մոսկվա

ՄԱՃԿԱԼ ՍԱՔՈՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(Պոեմ գեղջկական)

Քեզ համար եմ պատմում, գեղջո՛ւկ,
Խրատական զրիցը էս։
Ակա՛նջ արա, լա՛վ լսի դու,
Խելքի կտոր թե որ ունես։
Ռանչպա՛ր, ուշով լսի հիմի,
Թե ոնց քո էս ախպեր Սաքոն
Աղի համար գնաց կռիվ,
Կուռը կտրած ետ եկավ տուն—
Ու թե ընչե՛ր արավ Սաքոն
Ու ո՞նց հասավ իր ուզածին—
Ու թե ընչի՞ մաճկալ Սաքոն
Դեմ է հիմի պատերազմին։

I

Մաճկալ Սաքոն իրանց գեղում
Իրա օրում ապրում էր խեղճ։
Գեղի ծերին ուներ մի տուն,
Էրկու թիզ հող վարելատեղ։
Էդ վարելու տեղն էլ որ կար—
Գեղից հեռու, քար ու քոչոտ։
Արտը հեռու, վարը դժար—
Աշխատում էր տարին բոլոր։
Ու աշունքին թե լավ ըլեր—
Մի չոր հաց էր իրան մնում,

Էդ չոր հացն էլ թե որ չըլեր—
Ուրիշի էր մշակ գնում։
Ինքը ջահել—երիտասարդ,
Տունը պառավ հեր ու նանի,
Քրտինք թափում գիշեր ու զօր—
Պահում էր տուն ու ընտանիք։

II

Էս օրումն էր մաճկալ Սաքոն,
Երբ գերմանու կռիվն ընկավ։
Ի՞նչ իմանար մաճկալ Սաքոն—
Ո՞վ է սարքում կռիվ ու գավ։
Ի՞նչ իմանար Սաքոն ռանչպար,
Թե ընչի՞ են կռիվ անում.
Շա՞տ էր տեսել իրա օրում
Էդ նեմեցին կամ գերմանուն։
Ինքը մենակ էն իմացավ,
Որ գգիրը եկավ մի օր,
Թուղթ է էկել քաղքից, ասավ,
Թե ջահելին տանեն զինվոր։

III

Ըլե՞լ է հեչ, որ զենք առնի
Ու հարուստը գնա կռիվ։
Դե հայտնի է սաղ աշխարքին,
Որ խեղճին են տանում կռիվ։
Էսպես էկան հավաքեցին
Գեղի քյասիբ-քյուսուր խալխին.
Ռեսի տղին ձեռ չտվին—
Մրկուն վերի ծաղի՞կն էր խի...
Բա գղիրանց թաղի Համբո՞ն,
Բա Միլիքանց Սե՞թը մեկ էլ...
Դե ով ուներ ծանոթ ու փող—
Սիպտակ բլեթ էր նրան էկել...

IV

Գեղի ծերին հերը կեցած՝
Ճանապարհ էր դնում տղին,
Սրտին հազար կրակ ու ցավ,
Սրտին հազար աղ ու լեղի։
Ու Սաքոյի վզովն ընկած
Մղկտում էր պառավ նանին
Ու անիծում վիշապ ու չար
Էդ նեմեցին ու գերմանին։
Ի՞նչ իմանար նանը պառավ,
Որ մեղ չունի գերմանն էդտեղ,
Որ հարուստն է խեղդում իրան
Ու էն խալխին՝ իրա պես խեղճ։

V

Ի՞նչ իմանար պառավ նանին,
Որ թե՛ գերման, թե՛ հայ, թե՛ ռուս
Ունևորն է իր թշնամին,
Ու հենց իրանց ռեսը տռուզ։
Որ դրանք են կռիվ էցել,
Խալխին հանել իրարու դեմ,
Որ իրարու արուն ծծեն—
Իրանք վրեն նստեն— ուտեն։
Որ գերմանու խեղճն էլ հիմի
Էդպես գրկած իրա նանին՝
Լաց է ըլում աղի-աղի,
Որ գրկում են իրան բանից։

VI

Մնաս բարով ասավ Սաքոն
Իրա պառավ ծնողներին։
Մտիկ տվեց աչքի տակով
Վերջին անգամ իրանց գեղին։
Տեսավ՝ էնտեղ գեղամիջին

Միկուն նստած կապույտ մի ձի,
Ուրախ-ուրախ, թամքին խուրջին՝
Արտն է գնում հրեն հնձի...
Ու հանից տեսավ ռեսին
Ջուխեն հագին, տեսքը գոռոզ.
Հրաման էր տալիս տղին,
Հետն էլ ցնցում փորը տռուզ։

VII

Էսպես Սաքոն տխուր մի օր
Կռիվ գնաց գերմանու դեմ,
Գեղում մնաց հերն հալիվոր,
Պառավ նանին մնաց անտեր։
Էստեղ հարուստ ռեսը էկավ,
Բռնեց յախից Սաքոյի հոր՝
Դու էլ մի խեղճ մարդ ես, ասավ,
Տղեդ սալդաթ, դու հալիվոր։
Ղրկեմ, ասավ, մշակներին
Արտդ հնձեն, բերեն քո տուն։
Մշակներն էլ էնպես բերին,
Որ մի բուռ էր արտը բիթուն։

VIII

Էս ժամանակ Սաքոն ֆռոնթում
Թոփ էր քցում խալխի վրա։
Մեկ էլ, ըհը, դեմից մի թոփ
Թռավ—էկավ, դիպավ նրան։
Ընկավ Սաքոն արնակալած
Ու շուռ էկավ հողը գլխին,
Ու թե շունչ կար փորում հալա—
Էն էլ փչեց, կտրավ լեղին։
Ու չիմացավ Սաքոն էլ բան,
Միայն ոնց որ էրազի մեջ՝
Տեսավ նանին՝ վրեն չոքած
Կժով ջուր էր տալիս իրեն...

IX

Աչքը մեկ էլ բացեց Սաքոն—
Պիտերում էր, լազարեթում,
Կուռը կտրած, անտեր ու որբ՝...
Էստեղ բերին, տվին մի թուղթ։
Կարդաց Սաքոն ու իմացավ՝
Հերն էր նամակ գրել գեղից.
Սիրտը կալեց արցունք ու ցավ
Ու ետ՝ փորում կտրավ լեղին։
Էն էր գրում պառավ ապին,
Թե ոնց ռեսը հունձքը կերավ
Ու հետո էլ, նոր գարունքին
Նստավ իրանց հողի վրա։
Ու թե պառավ նանին մեռավ,
Ինքն էլ անտեր ու հալիվոր՝
Մուրացկան է գնում իրանց,
Թող փող ղրկի՝ ունի թե որ...

X

Գիրը գրեց Սաքոն մի կողմ
Ու լաց էլավ էստեղ մեկ էլ։
Ու միտք արավ մաճկալ Սաքոն,
Թե ընչի՞ է կռիվ էկել։
Ո՞ւմ համար են հավաքում էդ
Քյասիբավոր, բանվոր խալխին,
Կռիվ քցում իրարու հետ,
Արուն կաթում սաղ աշխարքին։
Ու թե ընչի՞ էդքան հանգին,
Էդքան տռուզ աղեք հազար
Ընենց չելավ՝ ֆռոնթ գային,
Կռիվ տային հետ-հավասար։

XI

Ու միտքն էկան հազարավոր
Էն տղերքը իրանց պոլկի,

Դիփը քյասիբ-աշխատավոր,
Գործը թողած՝ էկած զորքի։
Ո՞վ է, ասավ, քշել դրանց
Իրանց տնից, գործ ու կարգից,
Էսպես տվել սրի բերան՝
Հեռի մարդից ու աշխարքից։
Ո՞վ է դրանց տվել պատրոն,
Բերել—քցել սար ու չոլեր—
Հազար թոփի, պուլեմետի,
Հազար-հազար թվանքի կեր...

XII

Լազարեթում ընկած էսպես
Միտք էր անում Սաքոն։ Մի օր
Էկան ասին թե՝ ո՞ղջ ըլես,
Ջկա էլ թաց ու թագավոր։
Ասին՝ ոսի հողի վրա
Ազատութեն հիմի պտի...
Լավ է, ասավ Սաքոն իրան
Ու դուրս գրվեց լազարեթից։
Ոնց որ մորից թաղա ծնած
Քուչա ելավ Սաքոն թիլ-թիլ։
Քուչում բան չէր փոխվել հալա,
Նայող չկար քյասիբ մարդին։

XIII

Թագավորը գուզ է, չկար,
Համա նրա տեղը թախտին
Նստել էին թե եներալ,
Թե ափիցեր—հարուստ մարդիկ։
Ջէր վերջանում կռիվն էլ ետ,
Էլ ետ զորքին քշում ֆռոնթ,
Էլ ետ ախպեր-սալդաթի հետ
Խոսում էին շառ ու զոռով։
Ելավ Սաքոն, գնաց դիվան,

Թե ապրուստ տան, խարջ տան փորի—
Ընկի ռեխին նայող չելավ
Ու ուշք դնող նրա օրին։

XIV

Ման էր գալիս էսպես քաղցած
Սաքոն էդ մեծ քաղքի միջին։
Ու մի օր էլ ասին՝ հեռվանց
Մարդ է գալիս—«ընկեր Լենին»։
Ասին՝ ինչքան աշխատավոր,
Ինչքան բանվոր, ռանչպար որ կա—
Էդ բոլորի մեծն է Լենին,
Էդ բոլորի առաջնորդը։
Ինչ բանվոր կար էդ մեծ քաղքում—
Դիփը վակզալ գնաց, որ էն
Լենին ասած ընկեր մարդուն
Պատիվ բռնեն, դիմավորեն...

XV

Ելավ ինքն էլ գնաց վակզալ։
Առաջ անցավ սալդաթ Սաքոն։
Էդ սհաթին պոեզն էկավ,
Պոեզի մեջ քսան վագոն։
Ու դուրս էկավ ընկեր Լենին,
Բանվոր խալխը տվավ ուռա։
Սաքոն խառնեց նրանց ձենին
Ռանչպարի ձենը իրա։
Ու երբ մի քիչ ձենը կտրավ—
Խոսեց Լենին ժողովրդին,
Ու ետ էնպես խոսքեր ասավ,
Որ ջուր խմեց դիփի սրտից։

XVI

Մինչև հիմի, ասավ Լենին,
Աղի համար կռիվ արիք,

Հիմի վախտն է, որ ձեր սվին
Շուռ տաք էլ ետ՝ դեմ տաք աղին։
Ասավ՝ բուրժո՛ւյն է թշնամին
Կռիվ ղրկած բանվոր խալխի.
Նա՛ է խմում արյունն հիմի
Ժողովրդի ու աշխարքի։
Ձեզ կռիվ է ղրկել, ասավ,
Ձեզ պես հալալ բանվորի դեմ,
Որ ձեր ձեռով տիրե աշխարհ,
Դուք կոտորվեք— ինքը ուտե։

XVII

Էլ վերջ, ասավ ընկեր Լենին,
Էս արնախում պատերազմին.
Պատերազմը ներսո՛ւմ պտի,
Որ բուրժույի հոգին հանի։
Ի՞նչ ունենք մենք սալդաթի հետ—
Ըլի նեմեց, ըլի ոսի.
Ամեն սալդաթ հալա տգետ
Ու բուրժույի ձեռին եսիր։
Մենք բարև ենք ղրկելու էդ
Գերման զորքին ու բանվորին,
Որ վեր կենա բուրժույի դեմ,
Ջցի նրան ու տրորի...

XVIII

Խաղաղութե՞ն ֆռոնթում, ասավ,
Կռի՞վ ներսի բռնավորին.
Հարըստի հետ անենք հեսաբ
Ու տա՛նք նրա տռուզ փորին։
Ու երբ, ասավ, հեսաբ արինք
Ու բուրժույի մահը տեսանք—
Հողը կտանք ըռանչպարին,
Բանվորներին զավոդ ու հանք։
Ել վե՞ր, ասավ ընկեր Լենին,

Ու բուրժույի հաշիվը տե՛ս,
Կռիվն է էս, ասավ, վերջին—
Բանվոր խալխի կռիվը մեծ...

XIX

Էսպես ասավ Լենինն իրանց։
Լսեց Սաքոն ու հասկացավ։
Միտը էկան նանը մեռած,
Հերն հալիվոր, կրակ ու ցավ։
Միտը բերեց Սաքոն մեկ էլ
Ռեսանց հրեշ—բռնավորին.—
Ասավ՝ գնամ ետ գեղը մեր
Ու տամ խշտով նրա փորին։
Պոեզ նստավ էդ օր Սաքոն,
Էկավ-հասավ գեղը իրանց,
Մտիկ արավ աչքի տակով—
Ջար չէր մնացել քարի վրա...
Ո՛չ հեր կար էլ, ո՛չ մեր, ո՛չ տուն,
Հողն էլ ռեսանց տղի ձեռին.
Էդ էր դատել մաճկալ Սաքոն
Ի փոխարեն կտրած կռի...

XX

Գնաց Սաքոն աչքը արուն
Ու ձեն տվավ ռեսանց ցեցին.
Մտածել էր ճանապարհին,
Որ մի քացով նրան քցի։
Բայց դեմ ելավ էդտեղ նրան
Տռզած տղեն տանուտերի՝
Հնպարտ կեցած դռան վրա,
Ձեռը դրած մաուզերին...
Ռեսանց տղա Միկուն էր էդ,
Որ տնումը նստել հանգիստ,
Կերել, խմել— ու հիմի էլ
Դարձել էր ցեց— մաուզերիստ։

XXI

— Հը՞, մե՞ր տղա, արի մի դե՛ս,—
Ասավ հնպարտ տղեն ռեսի.
Քո սաղ կռից վախեցել չեմ—
Պտի վախեմ հիմի կեսի՞ց...
— Բա մեր հո՞ղը... ասավ Սաքոն.
— Հո՞ղ,— քրթմնջաց ռեսի տղեն.—
Ընենց մի հող հիմի տամ քեզ,
Որ քեզ համար լավաշ թխես...
Քանի թեզ է գնա՛, ասավ.
Մտի՛կ արա, ասավ, ձեռի՛ս...
Ու ձախ ձեռը բեղին տարավ,
Աջը դրավ մառուզերին։

XXII

Թողեց Սաքոն գեղը իրենց,
Փախավ դաշնակ մավզերիստից,
Էկավ Գյումրի քաղաքը մեծ,
Որ էստեղից մաշին նստի—
Գնա նորից Մոսկով քաղաք,
Ուր օրենք էր սավետական,
Ուր էլ չկար ռես ու աղա,
Ոչ էլ դրանց նման մի բան։
Թողեց Մոսկով գնա էլի,
Անցնի էլ ետ Հայաստանի դաշտ,
Տեսնի ինչ իրեր կասի էնին
Հայաստանի խալխի համար...

XXIII

Գյումրի էկավ Սաքոն գեղից
Ու Գյումրվա վակզալի քով
Ուստա էկավ մի լավ տղի,
Հետը զրից արավ խելքով։
Բանվոր էր էդ ծանոթ տղեն,

Պարավոզ էր ռեմոնտ անում.
Ճանաչում էր Հալա գեղեն
Մեր Սաքոյին, հորը, նանուն։
Զրից արին սրտանց։ Մեկ էլ
Էս բանվորը, թե՝ հա՛, շուտով
Տի դաշնակի յախից բռնեն,
Որ սավետի ըլի հետս...

XXIV

Ու ցույց տվավ բանվոր տղեն
Էդ դեպոյի դեսը մի քիչ,
Ոնց որ վիշաս Երգաթեղեն՝
Բրանեվոյի պոեզը մեծ։
Մե՛րն է, ասավ, նայա՛ ախպեր,
Ըստեղի՛ց ենք նշան տալու...
Դու էլ մնա, ասավ, մեզ հետ—
Էլ իզո՛ւր ես Մոսկով գնում...
Մնաց Սաքոն։ Մի շաբաթ անց
Բրանեվոյի վրից մին էլ
Հարայ տվին, քշեցին ցած—
Դե դաշնակն էլ հո չէ՞ր քներ։

XXV

Կռի՛վ, կռի՛վ դաշնակներին,
Իշխանութի՛ն սավետական...
Սաքոն ինքն էլ գնաց կռիվ,
Ջնայած որ կուռը չկար։
Մի քանի օր Գյումրի քաղքում,
Բայադեթում, Կարսա բերդում
Կարմիր բայդակ տեսավ Սաքոն,
Սավետական իշխանություն...
Բայց Հալա տես, որ բռանչպար
Խալխը՝ հսիր ցեց դաշնակին՝
Հասկանում չէր սավետական
Իշխանության կարգը կարգին։

XXVI

Սեպուն էկավ իրա զորքով,
Մավզերիստներ բերավ հազար,
Կռիվ էղավ էդտեղ հինգ օր,
Հինգ օր էսպես տվին իրար։
Կռիվ տվին մերոնք հինգ օր,
Վերջը քաշվան Ղազախու սար.
Էդ օրվանից մաճկալ Սաքոն
Բալշևիկ էր, կուսակցական,
Ու բալշևիկ տղերանց հետ
Գնաց Բաքու ու մի տարի
Ջանցած՝ էկավ իրանց գեղ ետ,
Որ տա ռեսանց տղի փորին...

XXVII

Էկավ—գեղը էն չէ՞ր հո էլ.—
Աղքատ խալխը ելել ոտքի—
Ոչ Միկիչ էր գեղում թողել,
Ոչ դաշնակի մռութ ու քիթ։
Հարուստներից ով մնացել—
Մաճկալ Սաքոն հախից էկավ,
Ու հաստատվեց էդ գեղում էլ
Իշխանութեն սավետական։
Շինականը կպավ գործի
Ու պատերազմ չկար էլ ետ—
Ոչ ինգլիզի, ոչ էլ նեմցի
Ու կամ թուրքի, վրացու հետ։

XXVIII

Հիմի Սաքոն իրանց գեղում
Նախագահ է գեղխորհրդի։
Վախտ-վախտ նստում գիր է գրում
Ռանչպարական «Մաճկալ» թերթին։
Ու թե գեղում խոսք է ըլում

Պատերազմի-բանի մասին—
Նա միշտ էն է զրից անում,
Թե ի՞նչ ասավ ընկեր Լենին։
Ռանչպա՛ր, դու լա՛վ լրի նրան,
Մտի՛կ արա կտրած կռին,
Ու թող ըլի էլ քեզ խրատ
Էս Սաքոյի զրիցը հին։

XXIX

Մաճկալ Սաքոն էլ քեզ խրատ,
Էս զրիցն էլ քեզ օրինակ։

Մենք շատ չունենք խալխի վրա,
Ոչ էլ կռիվ ու պատերազմ։
Համա թե որ էկան մեր դեմ
Բուրժույները, կռվեն միթամ—
Կարմիր Բանակ հիմի ունենք,
Դրանց ռեխին մի լավ կտանք։
Մա՛հ թշնամուն հիմի հարուստ,
Մեր տերության վրա թե գան—
Բանվոր խալխին խաղաղ ապրուստ,
Իշխանութեն սավետական...

1921

ԲԱԼԼԱԴ ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԻ, ՄՈՒԺԻԿԻ ԵՎ ՄԻ ԶՈՒՅԳ ԿՈՇԻԿԻ ՄԱՍԻՆ

I

Կարմիր գծից անդին—
Թշնամիներ անթիվ։
Ու հեռախոսը ֆրոնտից
Հաղում է
Շիֆր։

Հեռախոսով հուզումը հոսում է
Կրեմլ։
Կոմուտատոր N.
Դեպի կաբինետը Իլյիչի։
Լուրերը թափվում են շտապով,
Հասնում են հենց իրեն,
Ու հոսում են հետո
Տապով
Իր ուղեղի միջից։

Գրասեղանի հանդեպ
Հանգիստ
Նստել է Իլյիչը։
Կարդում է։
Կարգադրում։
Գրում։
Կուտակել է ուղեղը։

Սեղմել է,
Կախել է խոհերի գլխին,
Ինչպես ծանրածանր բռունցք։

Կիտել է հոնքերը ներքև,
Թերթում է, քրքրում, ջոկում։
Պսպղում է ճակատը լույսի դեմ,
Ինչպես ահագին երկրագունդ։

Լարել է ուղեղը Իլյիչը,
Ինչպես պողպատե զսպանակ...

Հարկավոր է կռվել, չդիջել...
Հարկավոր է— Կարմիր Բանակ։
Հարկավոր է ցնցել գյուղացուն
Ու բանվորին կրթել։
Հարկավոր է քանդել հին բերդը։
Հարկավոր են դրշեր, թերթեր...
Իսկ հետո՝ դպրոցին կգա հերթը։
Հարկավոր է բանվորի տղից
Պրոֆեսորներ ձուլել...
Հարկավոր է, որ ամեն աղախին
Սովորի պետություն դարձնել...

Հարկավոր է...
Ո՞րը թվել։
Հարցեր են՝ անծայր, անթիվ։
Իսկ մինչ այդ՝ հեռախոսը ֆրոնտից
Հաղում է—
Շիֆր...

II

Հավաքել է ուղեղը Իլյիչը,
Լափում է լուրերը ու ծամում.
Թռչում է ժամանակը, ինչպես սամում.
Ժամանակը քիչ է։

Բայց ի՞նչ է.
Կողքի սենյակում—
Աղմուկ է.
Խոսում են բարձր.
Քարտուղարը մեկին համոզում է...
Մոտենում է Իլյիչը.
Բացում է դուռը մի քիչ—
Լսում է։

Մուժիկ է։
Ուզում է ինչ-որ բան։
Լսում է դռների միջից...
Ի՞նչ.—
— Անցել է ահռելի ճամփա—
Եկել է Իլյիչին...

Լսում է Իլյիչը՝ ուշիմ...

— Էխ-է՜խ, մուժի՜կ։
Մուժիկին հարկավոր է—մի զույգ կոշիկ։
Դիմել է մուժիկն ուրիշի—
Ասել են՝ չի՜ք.
Դե նա էլ— եկել է Իլյիչին։

Բարկանում է,
Հուզվում է քարտուղարը.
Համոզում է, որ գնա իր գործին։
Անհոդդոդդ է մուժիկը,
Ինչպես քարը,
Կարո՞ղ ես խանգարել.
— Հապա փորձի՞...

Նայում է Իլյիչը
Արանքից դռան.
Ժպտում են աչքերը՝ մի քիչ ծուռ։
Հրում է դուռը—

Զվարթ
Մոտենում է հանկարծ գյուղացուն։

—Որտեղի՞ց ես։
— Սիբիրից։
—Ե՞րբ։
—Հինգ ամիս է՝ եկել եմ մեր գեղից։
—Կարմիր արմեյցի է տղես...
—Ի՜նքս եմ ղրկել տղիս։
—Հող ունե՞ս։
—Իհարկե։ խլեցի՜նք։
— Ընչի՞ ես եկել։
— Դելեգա՜տ եմ։
—Ենդրել եմ գեղական գործիք—
—Ստացել եմ շատը։
—Էլ ի՞նչ ես ուզում։
Ծիծաղում է։
Նայում է Իլյիչին ուշիմ...

—Էխ-է՜խ, մուժի՜կ։
Մուժիկին հարկավոր է—մի զույգ կոշիկ։
Դիմել է մուժիկն ուրիշի—
Ասել են՝ չի՜ք։
Դե նա էլ—եկել է Իլյիչին։

Ծիծաղում է քահ-քահ Իլյիչը։
Խորամանկ խինդ է աչքերում։
Բռթում է մուժիկին,
Հետո—
Վերցնում է մի թուղթ,
Գրում է.—
«Ում որ հարկն է.
Տալ մուժիկին մի զույգ կոշիկ»։

Էխ-է՜խ, մուժի՜կ...
Վերցնում է մուժիկը գլխարկը,
Հեռանում է՝ հանելով փոշի։

III

Կարմիր գծից անդին—
Թշնամիներ անթիվ։
Ու հեռախոսը ֆրոնտից
Հաղում է—
Շիֆր։

Ու նորից նստել է Իլյիչը,
Կարդում է, կարգադրում, գրում։
Թռչում է ժամանակը։
Ժամանակը քիչ է։
Ու սեղմել է նորից մեր Իլյիչը
Իր ուղեղը՝ ծանրածանր բռունցք։
Ու նորից շտապում է ուղեղը։
Լափում է խոհերը հիմա նա—
Եվ ի՞նչը, ի՞նչը կգիմանա
Այդ վիթխարի ուժին...

— Էխ-է՛խ, մուժի՛կ...
Քեզ հարկավոր էր— մի զույգ կոշիկ։
Եվ կոշիկի համար
Ընդունեց քեզ Իլյիչը։
—Բայց հասկացա՞ր, մուժի՛կ,
Որ չուներ Իլյիչը ժամանակ,
Որ Իլյիչի համար—
Մեր ժամանակը քի՛չ էր...

1924

ԼԵՆԻՆ ՔԵՌԻՆ

I

Հայրը զենքով եկավ գործարանից այդ օրը։
Դեմքը խիստ էր, անգամ մի քիչ մռայլ։
Երբ մոտեցավ, ուզեց գրկի հորը՝
Կամաց մի կողմ հրեց հայրը նրան։

Անխոս, նստեց թեյի։ Միտքը դուրսն էր. հեռուն էր։
Աչքը երկա՞ր-երկա՞ր հառել էր մի բանի։
Դեմքին դեռ մնացել էր գործարանի մուրը։
Այդ երեկո խոժոռ էր հայրն Իվանի։

«Գնում ենք, մորն ասաց, մենք լեհերի վրա.
Հանել է լեհերին մեր դեմ էլի Անտանտը։
Բայց հույս ունենք, ենի՛կ, որ կջարդենք նրանց,
Կշպրտենք— անթիվ տանկերո՛վ էլ գան թե՛։

Դենիկինն էր երեկ, հետո Կոլչակն էկավ.
Ու լեհերն են հիմի... Ոչի՛նչ, կնի՛կ։—
Կարմիր Բանակը մեր բանվորական
Սովորել է քշել նրանց բնից...»։

Այսպես երկար խոսեց հայրը մինչև գիշեր,
Խոսեց կռվի մասին՝ բուրժույի դե՛մ։
Անցած հազար-հազար դեպքեր հիշեց,
Հիշեց հուլիս ինչ-որ ու հոկտեմբեր։

Եվ նա տեսավ, տեսավ, թե ինչպես հոր
Աչքերը հուր դարձան հետզհետե.
Լուսարձակներ երկու դարձան ոնց որ,
Ոնց որ ռումբեր, որ նա պիտի էգուց նետե։

Ու վառելով այդպես իր բորբոքուն հայացքը՝
Հայրը թռավ հանկարծ, ելավ ոտքի։
Եվ Իվանին թվա՛ց թե
Այրող գնդակ անցավ իր հոր մտքից։

Ոտքի թռավ այդպես ու սրբելով քրտինքը՝
Հայրը ասավ.—«Արդյոք հասկանո՞ւմ ես, կնի՛կ,—
Մեր զորքերին էգուց խոսելու է ի՛նքը.
Ինքը Լենի՛նը մեզ պիտի ճամփա դնի...»։

Հայրը այսպես ասաց ու գնաց քնեց,
Որ առավոտ ծեգին գնա բանին։—
Բայց խոսքերը նրա վերջին էն
Վառվեցին սրտում Իվանի...

II

Հարկ չկա երկար պատմելու
Այդ բանվոր խոխի՝ այդ Իվանի մասին։
Կապույտ աչքեր ուներ, գանգուր գլուխ.
Դե ռուս տղա էր մի՝ ութ տարեկան հազիվ։

Իր բանվոր հոր հետ միասին
Գործարան էր գնում նա երբեմն։
Կամ հավաքած իր քաջ ընկերներին դրսի՝
Նա խաղում էր «Կռիվ բուրժույի դեմ»։

Ջիավոր էր լինում միշտ ինքը։
Նստած ձեռնափայտին պապի՝
Քշում էր փայտե ձին, մինչև ջերմին քրտինքը
Ողողելով մարմինը՝ վերջ տար թափին։

Մտածում էր Իվանը.— երբ մեծանա
Պիտի շոֆեր դառնա, կամ օդաչու.
Պիտի մտնի հետո— Կարմիր Բանակ...
— Դեռ սպասի՛ր, բուրժո՛ւյ.
— Դեռ կգա՛ Վայնկա-օդաչուն,—
— Դեռ մեծանա՛...

Սակայն հայրը էգուց պիտի գնա...
Պիտի ճամփա դնի նրանց— ընկեր Լենինը...
Պիտի խոսքեր ասի նրանց էգուց։
Իսկ ի՞նքը...
Պիտի այսպես տնում էլի նստած մնա՞—
Արդեն հասակն առած պատանի է թեկուզ...

Եվ նա գիտե՛ արդեն Լենին քեռուն,
Հրեն նայում է նա այնտեղ պատից՝
Խորամանկ մի ժպիտ աչքերում,
Ահագին մի միտք ճակատին։

Այդ նա՛ է, Լենի՛նը։ Այսինքն նա,
Որ ղեկավարն է բանվոր դասի.
Նրա նկա՛րն է միշտ պլակատների վրա,
Միշտ նա՛ է, ամենուր՝ Մարքսի հետ միասին...

Հայրը հաճա՛խ նրան ցույց է տվել երկու
Այդ մեծերի պատկերքը։
Անգամ այնտեղ—նրա այբուբենի գրքում՝
Նրանց նկարը կա։
Սովորել է հորից և գիտե՛ նրանց երգը՝
«— Ե-լի՛՛՛ր—բո-ղո-քի՛՛՛ր—
բան-վո՛՛՛ր դա-սա-կա՛՛՛ր...»։

Պատմել է հայրը նրան,
Որ Լենին քեռին
Եկելացի է, մեծ ու քաջ։
Այնքա՛ն, այնքա՛ն, այնքա՛ն,
Որ աշխարքում ուրիշը— այդպիսին չկա։

Պատվիրել է, որ ինքն էլ երբ մեծանա՝
Երթա նրա— այդ մեծ Լենին-քեռու ճամփով,
Որի վրա թեկուզ հազար փուշ կա ցանած,
Բայց գնում են որով գյուղացի ու բանվոր...

Բա՞ս.
Այսպիսին է Լենին-քեռին։
Եվ վաղը նա ի՞նքը պիտի խոսի։
Պիտի անցնի իր հայրը՝ զենքը ձեռին—
Եվ Լենինին լսի...

Այդ հո նման է—զարմանք բանի՞...

Եվ որոշում է Իվանը։
Ինչ էլ լինի՝
Վաղն առավոտ կանուխ պիտի փողոց գնա
Եվ տեսնի—ընկեր Լենինին։

III

Արդեն գնացել էր հայրը, երբ արթնացավ։
Շտապ հագավ շորերը և թռավ փողոց։
Վազ, վազ, վազ անցավ իրենց փողոցը
Եվ ընկավ Կարմիր Հրապարակը՝ բանվորներով ողող։

Ծփում էր Կարմիր Հրապարակը,
Ինչպես մարդկային մի անտառ։
Հավաքվել էր կարծես
Աշխարքը բովանդակ։
Ողջը բանվոր մարդիկ,
Հոր պես հագած։
Դրոշակներ անթիվ,
Անթիվ պլակատ։

Հրմշտակելով մարդկանց ու բոթելով՝
Փորձեց առաջ երթալ, հորը կոչել.
Փորձեց ելնել կողքի մի բանվորի վրով՝

Բայց բանվորը— պապի ձեռնափայտը հո չէ՞ր։
Այդպես սեղմած-մնաց։
Փորձեց էլի։
Պատահեց մի մարդ հայհոյող։
Նորից մնաց՝ հոգին մորմոքով լի։
Բայց ի՞նչ տեսներ—իր այն մի թիզ բոյով...

Հանկարծ մի ծով ամբողջ
Ոնց որ դոռա—
Դղրդաց հրապարակը,
Դոռաց ուռռա։
Հետո լռեց ամբողջը.
Բանվոր մի կին
Իր կողքի ընկերոջը
Շշնջաց՝
«Լենի՛նը...»։
Փսփսաց նա էլ կողքինին։
Ու շրթից շուրթ անցավ՝
«Լենի՛ն, Լենի՛ն...»։

Հասկացավ Իվանը.
— Այնտե՛ղ է նա...
Շփոթված գլխարկը հանեց—
Եվ սեղմեց ատամները՝ բարկությունից դեղնած։
Էլ ճար չկար։ Տեսավ՝ տեղ չե՛ն տա իրեն։
Եվ որոշեց՝ անի, ինչ էլ լինի։—
Ոտքը խոթեց հանկարծ գրպանը կողքինի—
Եվ բարձրացավ վրեն...
Թռավ ուսին նստեց
Մի բանվորի.
Բայց բանվորը ներքև շպրտել
Չփորձեց էլ նրան նորից։

Պտույտ եկավ գլուխը, սիրտը ամուր թակեց։
Կարծես աշխարքը ողջ նվիրեցին նրան։
Նայեց... Լենին-քեռին կանգնած էր տախտակե
Ամբիոնի վրա...

Ձեռքը առաջ մեկնած, գլուխը բաց,
Ինչպես տնում կախած այն նկարի խորքից—
Իր հայրիկի ձայնով, մի փոքր բարձր՝
Նա պատգամ էր ասում բանվորական զորքին...

Եվ Իվանին հանկարծ այնպես թվաց,
Թե տեսել է ինքը նրան վաղուց.
Որ այդ Լենին-քեռին պիտի սիրեր իրան,
Եթե տեսներ «բուրժույ», «զորք» խաղալիս։
Ու մտածեց՝ էգուց երթա տեսնի նրան,
Ասի՝ ինձ է՛լ զրկի, գնամ բանակ.
Ասի՝ ուզում եմ ես կարմիր շոֆեր դառնամ—
Լենին-քեռուն բոլոր իր մտքերը բանա...

Այսպես՝ աչքերը չիռ Լենին-քեռուն հառած՝
Երազում էր Իվանը։
Հանկարծ լռեց Լենինը։
Ու դղրդաց նորից բանվորական ուռան.
Ձեռքը մեկնեց առաջ— ու բղավեց ինքն էլ։
Զորքը ծփաց հետո ու շարժվեց առաջ։
Ու գրոշի վրա դիմացի նա
Տառ-տառ կարդաց վաղուց իմացած իր բառը.
«Ե ր ր ո ր դ Ի ն տ ե ր ն ա ց ի ո ն ա լ»։

Դրոշակներ նորից։ Այդ ինչքա՞ն են...
Եվ կապելով իրար տառերն հազիվ՝
Կարդաց նորից Իվանը՝
«Կ ո ր չ ի՛ բ ո ւ ր ժ ո ւ ա զ ի ա ն»։

Երգում էր զորքը «Ինտերնացիոնալը»։
Ինքն էլ գիտեր երգել։ Երգեց։ Նայեց՝ հեռուն,
Ջինվորների նման, գլուխը բաց՝
Երգում էր երգը նույն—Լենին-քեռին...

Ու խանդոտ մի բոց աչքերին՝
Նայեց նորից Իվանը... Տեսավ՝ հրե՛ն

Հայրը քայլում է՝ մեծ մի հրացան ձեռին—
Ու նայում է, նայում Լենին-քեռուն...

Ուզեց կանչի նրան,
Բայց այդ պահին հանկարծ
Մի ահռելի ուռա
Կրկին զնգաց։
Գոռում էր զորքը ողջ,
Ինչքան որ ձայն ուներ.
Ախ, ունենա՞ր ինքն է՛լ
Մի բարձր ձայն դոնե...

Թնդում էր օդը
Նրանց ձայնից,
Ինչպես որոտը՝
«Լենի՛ն, Լենի՛ն»։
Ու ինքը, Լենինը, կանգնած այնտեղ...
Նման էր ողջը—երազի...
Եվ որոշեց Իվանը, որ անպայմա՛ն երթա—
Իրա բոլոր մտքերը Լենին-քեռուն ասի...
Երթա ասի, որ ինքը կուզե շոֆեր դառնալ,
Կամ օդաչու կարմիր՝ թռչել անահ...
Այդ հարազատ, այդ մեծ Լենին-քեռու առաջ
Իրա բոլո՛ր, բոլոր գաղտնիքները բանա...

1924

ԼԵՆԻՆՆ ՈՒ ԱԼԻՆ

I

Աշխարհի կենտրոնը —Մոսկո՛վն է։
Մոսկովը Մեկկայից էլ հի՛ն է։
Մոսկովից մեծ քաղաք—չի՛ք։
— Քանի որ Մոսկովի միջին
Ապրում է ինքը—Լենինը։

Տրապիզոնը Մոսկովից հեռո՛ւ է։
Տրապիզոնից Մոսկով—
Չես հասնի ոտքով դու իսկի։
Թե ունես ոսկի՝
Կնստես նախ նավ դու
Ու նավով կերթաս նախ Բաթում.
Հետո գնացք նստած
Կհասնես Թիֆլիս,
Հետո Բաքու,
Ռոստով.
Հետո կերթա՛ս-կերթա՛ս
Ու նոր
Կհասնես Մոսկով։

Ա՛յլ, Մոսկովում հենց այդ
Ապրում է արխադաշ Լենինը։
Նա, որ մեծ է, ինչպես ամենամեծ խալիֆ։
Բայց այնպիսի՛ խալիֆ,
Որ հասկանում է միշտ ֆուխարայի հալից։

Այդ է պատճառը հենց,
Որ սիրում է նրան տրապիզոնցի Ալին։

Թիավար է Ալին մի նավակի վրա։
Ստանում է ամիսը—
Երեք ու կես լիրա։
Աշխատում է սակայն առավոտից-գիշեր։
Ու սիրում է նրան
Տերը, ինչպես գրաստ—
Քշել,
Քշել,
Քշել։

Սիրում է Ալին Լենինին։
Նրա մասին նրան
Պատմել է նավաստի մի ռուս։
Ցույց է տվել նրան
Պատկերը Լենինի.
Ասել է.
«—Լենին—կառոշ։
Ալի՛ն ասել է.
—Զո՞կ։
Ռուսն ասել է.
— Յա՞.
Լենին վար—
Բուրժույ յո՛կ»։
Բուրժույ— այսինքն գանգին,
Այսինքն էֆենդի, աղա.
Այն, որ նստում են հանգիստ,
Ուտում են ուրիշի քրտինք
Ու սիրում են
Միշտ
Ծովափին
Նստել նարդի խաղալ։

Հասկացել էր Ալին.
«Լենին—բնյուկ խալիֆ»։

«Բեյուկ խալիֆ» սակայն,
Որ հասկանում է միշտ ֆուխարայի հալից։
Ու սիրում էր նրան,
Այդ Լենինին հեռու
Իր չարքաշի սիրով տրապիզոնցի Ալին։

II

Այդ օրը սուգ էր Մոսկովում
Ու սուգը— վա՜ռ էր։
Որբացել էր ասես պրոլետարը։
Ով որ մոտ էր նրան—
Արդեն գիտեր.
—Էլ չկա Կարմիր Ղեկավարը...

Փակել էր աչքերը Ղեկավարը,
Որ կյանքում չբանա էլ բնավ։
Ջնել էր Ղեկավարը
Անզարթնելի քնով։

Այդ օրը աբդեն Կոմկուսը
Հավաքում էր մկան առ մկան
Իր ուժերը, որ պատնեշ հյուսե
Անողոք կորուստի դիմաց։
Այդ օրը ամեն պրոլետար
Մոսկովում, Բաքվում, Թիֆլիսում
Շինել էր իր կամքը — բետոն
Ու հոգին— չուգուն.
Պողպատել էր իրեն, որ էգուց,
Կորուստի տեղ այդ թանկագին՝
Կուռ՝
Դնե բյուրմկան մի բռունցք
Ոսոխի բկին։

Մորմոքող իր սրտով այդ օրը
Մեր երկրում ամեն պրոլետար
Այնպե՜ս էր զգում, կարծես նո՜ր է,

Կարծես նո՜ր է եկել կռվի օրը
Եվ ինքը գոռ գրոհ պիտի տա.
Ամփոփե պիտի իր ուժերը,
Հավաքե մկանն իր վերջին,
Որ մնա՜ բանվորի դիկտատուրը
Եվ հաղթե—
Առանց Իլյիչի...

III

Ու թռավ ռադիոն այդ օրը,
Ինչպես թուր աշխարհը կիսող՝
Մահառիթ ռադիոն այդ օրը
Մոսկովից հասավ Տրապիզոն։

Այդ օրը այնքա՜ն էր աշխատել,
Որ հալից ընկել էր Ալին։
Մարմինը քրտինք էր պատել,
Բայց պիտի աշխատեր էլի։
Նվում էր ամեն մի մկանը,
Նվալով քաշում էր դեպի տուն.
Բավակա՜ն է, ասում էր,— բավակա՜ն է
Հոգնությունը քո...

Երեկո էր։
Մութ ծովափով
Գնում էր Ալին դեպի տուն։
Ու տեսավ հանկարծ ծովափին
Իր ծանոթ նավաստուն ռուս։
Մոտեցավ,
Որ ասի սալամ,
Սեղմի ձեռքը՝ ծանոթ ինչպես հին,
Ու կամաց փսփսա նրան.
«— Կարաշո՜ Լենին»։

Մոտեցավ։
Տխուր էր նավաստին։

Անծանոթ էր դեմքը։ Անօգ։
Ու չասավ մշտական «դրաստի»-ն
Այլ—
Կամաց.
«—Ալի՛, Լենին յո՛կ»։
Էլ ոչինչ։
Հեռացավ։
Ու թվաց թե
Լեռնացած՝ ղարկեց մի ալիք։
Հասկացա՛վ խոսքերի մութ իմաստը
Նավաստի Ալին...

IV

Գիշեր է։
Քնել է Տրապիզոնը։
Չի հաչում անգամ մի շուն։
Ոստիկանը միայն, ինչպես շունը՝
Արթուն է.
Հսկում է փողոցում։
Սրթսրթում են սև սոսինները,
Փսփսում են ասես խավարին,
Որ Բնկուզ Տրապիզոնը քնել է,
Բայց ահա— արթուն է Ալին։

Գողեգող գնում է Ալին
Պատերի տակով դեպի մութը։
Գողեգող գնում է Ալին—
Դեպի ո՞ւր.
— Լոկ ինքը գիտե։

Մոտենում է ահա կամացուկ
Մի շենքի։
Կորած խավարում՝
Ցուցանակ կա այնտեղ մի ծուռ...
Նկարած է վրան—

Նա գիտե—
Հասարակ—
Մանգաղ ու մուրճ։

Շրջում է այդտեղ գողեգող
Ոստիկանը՝ խեթ ու տոռոզ։
Կոչվում է շենքը բաղաքում—
«Կունսուլատ ռուս»։
Մոտենում է Ալին ինչպես գող։
Անցնում է մոտից ոստիկանը։

Սահում է Ալին կողքով—
Մոտենում է դռանը։
Սեղմում է զանգը։
Զանգից սակայն զիլ,
Խոր լռության՛ մեջ
Ցարկում է
Մի սիրտ։

Բացվում է դուռը։
Մտնում է ներս։
Լոկ պահապանն է,
Որ արթուն է դեռ։
Նա ճանաչում է
Կարդաշ-Ալուն.
Հաճախ գնացել են մեկտեղ լոգարան։

Բայց արդեն գիշեր է.
Ուշ է արդեն.
Ի՞նչ է հարկավոր Ալուն արդյոք—
— Կոնսո՞ւլ...
— Խա՛-խա՛...
— Գիշեր է։
— Ուշ։
Բայց բախեց Ալու—
Հյուսլատոսն հանկարծ ելնում է դուրս,

—«Լենին յո՞կ»— հարցնում է Ալին։
Լռություն։
Ինչպես մուրճ՝ տաշող։
Եվ— կրծքին խփելով Ալին՝
Մրմնջում է՝
— «Նե՛թ կարաշո»։

Եվ ապա, նայելով գետին,
Մի բանից ասես վախելով՝
Ասում է՝ դառնությամբ լի.
«— Ալի պլոխ։ Ալի—աղլիոր»։

Խոնարհում է գլուխը ներքև,
Անխոս վիշտ է հայտնում ու պատիվ—
Եվ—
Հեռանում է՝ քսվելով պատին...

V

Ուրիշ ի՞նչ։
Ոչինչ։
Խնդալու
Կամ լալու կարծեմ պատճառ չի՛ք։—

—Ողջո՞ւյն արխադաշ Ալուն։
—Հաղթանա՛կ գործին Իլյիչի։

1924

ՍՏԱՄԲՈՒԼ

(ԸՆԿԵՐ ՄՅԻՍՏԱՖԱ ՍՈՒԲԽՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ)

I

Լեգենդ է,
Բայց խո՛ր ու հատու։

Զին,
Բարձած արծաթե թամբով՝
Քշե՛լ է սուլթան Ֆաթին
Ու հասել է այստեղ—
Ստամբուլ։

Քշել է հուր ձին դեպի դարը,
Մտել է Այա-Սոֆիա՛,
Ինչպես մահը՝ դաժան ու ահեղ,
Ինչպես մահը՝ միակ։

Զարկել է սուրը մարմարին—
Ճեղքել է սյունը։
Եվ—
Նայի՛ր.
Անցել են դարե՛ր, դարե՛ր,
Իսկ իր կամքը դեռ խոսում ու հուզում է։

Կոտրել է սուլթան Ֆաթին,
Թաթախել է ձեռքը արյան մեջ—

Ու խփե՛լ է մարմարե պատին՝
Տե՛ս։—

Մնացել է հետքը ձեռքի
Եվ ահա—
Դարե՛ր, դարե՛ր—
Հեծում է— ամբո՛ղջ մի երկիր,
Եվ ո՛չ թե լոկ մի պատ մարմարե։

Անցել են այն օրից դարեր,
Բայց դեռ հետքը սուլթանի ձեռքի
Մնացել է պատին այս քարե—
Ու մռայլ ճակատին երկրի...

II

Դու ապրո՛ւմ ես դեռ, սուլթան Ֆաթի՛հ,
Ես տեսնում եմ հետքը ձեռքիդ
Ու ո՛չ թե այս մեռած պատին,
Այլ դեղին, որբ ճակատին,
Այս մռայլ, այս անտեր երկրի։

Դու մեռել ես, սուլթան Ֆաթի՛հ։
Բայց դարե՛ր շարունակ,
Մինչև օրըս
Կենդանի՛ է, սերած քո կաթից—
Քո դաժան,
Ժանտ թոռանթոռը։

Նստել է այսօր էլ նա այստեղ,
Այս սունկի պես ուռած Ստամբոլում,
Ու չի ընդունում նա քեզ թե—
Բայց ոչինչ
Ժառանգդ է հլու։

Իհարկե, այլ է Պերան,
Ու այլ է հիմա Գալաթան.

Բայց նստած է Ստամբոլի վրա
Դեռ շոինդը,
Հոինդը քո տան։

Իհարկե, չկա էլ մեչետ,
Որին տա ժողովուրդը տուրք.
Իհարկե, սուլթան Մեհմետի
Սարայները դատարկ են, թափուր.
Եվ գերի երկիրը հիմա
Դարձել է՝
«Ռեգյուբլիկ թուրք»։

Այս բոլորը ճիշտ է, իհա՛րկե,
Այս բոլորը հզոր է ու նոր,
Բայց նո՛ւյնն է հղփացած այս քաղաքը,
Որ կոչվում է Պոլիս,
Ստամբոլ։

Մի ոտքը մեկնած Եվրոպա,
Մի ոտքը Ասիո մեջքին՝
Նստելով Ստամբոլը հպարտ,
Ինչպես դու, կամ սուլթան Մեհմետ։

Նստել է այստեղ, ինչպես դուք,
Ծծում է հուր ու քրտինք.
Պայքարո՛ւմ է ժողովուրդը թուրք—
Իսկ ինքը—
դի՛նջ։

Այնտեղ—
Էնկյուրից էրզրում—
Պայքար է՝
Հաղթանակ կամ մահ,—
Իսկ ինքը—
Լողում է լույսերում,
Ու պարում է,
Ու խնդում հիմա։

Վառել է վարիյեթե, սինեմա,
Վիթրիններ, թեաթր ու օթել.
Հրճվո՜ւմ է պոռնիկի նման
Կոկետ։

Պարում է ֆոկստրոտ,
Տանգո,
Հագել է—
ֆրենչ ու ֆրաք։
Նազում է—
ալաֆրանգա։
Ա՜խ։

— Զարգացե՜լ է, Ֆաթի՜հ, քո Պոլիսը.
Դու նրան դժվա՜ր թե ճանաչես։
Բայց—
Կարծում ես՝ հեռո՞ւ է գնացել
Քեզանից—
— Չէ՜։

Փոխվել է միայն— արտաքինը։
Թե առաջ մի կին էր ոսկրոտ—
Նա հիմա—
զարգացած մի տիկին է։
Սիրում է—մայոնեզ ու սինե...
Ու պարում է—ֆոկստրոտ...

III

Ստամբոլը պարում է—ֆոկստրոտ։
Պարում է—իհարկե Պերան։
Ու խնդում է—
իհա՜րկե փոստով—
Մուստաֆա Քեմալի վրա։

Ընթերցո՜ղ,
Մտնում ենք Պերա։

Ահա Թոքատլյանը։
Այստեղ—
Ահա «Restaurant Splendid»։

Մտի՜ր,
Թե կուզես տեսնել,
Թե ո՞նց է հրճվում էֆենդին։

Մի հնդիկ կառնի պալտոդ։
Մի խափշիկ— գլխարկդ, թե կուզես։

Կմտնես։
Երկնային մի հոտ
Զմայլած հոգիդ կհուզե։

Կոտի—լորիգան է այդ հոտը.
Բայց դա հեչ։
Գիտե՞ս դա դու հո։
Կցնցե ջղերդ—ֆոկստրոտը.
— Թավջութակ,
Սրինգ—
ու դհոլ։

Հասկանում ես՝ այստեղ վիոլոնը
Խառնված թմբուկ-դհոլին՝
Երգում է—
քնքո՜ւշ պոլոնեզ...
Աստվածային օյին։

Զարկում է թմբուկը թաք-թաք,
Նվում է կողքին վիոլոնը։
Ու պարում են այդ հեշտին տակտով—
Պոլոնեզ։

Իսկ կինե՜րը...
Կինե՜րը...

Օ կինե՜ր...
Հպվում են՝ այնքա՜ն մոտիկ...

Հրա՜շք են։
Շիք։
Հոգինե՜ր են։
Կամ Լորիգան-Կոտի...

Ու հոսում են շող շշուկները.
Խոսում են.
Լսո՞ւմ ես.
Իմացի՛ր.
Շրշում են շորերը,
Կոշիկները...
Համաձա՞յն եք...
— Անշուշտ...
—Հիմա ձեր...
—Շրթունքները...
— Փաշա՛...
—Կմաշե՞ն...
— Ուզում եք հիսո՞ւն...
— Չէ, շա՛տ...
— Օ ձեր ձայնը...
— Ձեր կոնքը...
— Ձեր կաշին...
— Փաշա՛...

Պարում է փաշան։ Հեշտավետ
Ջազբանդը քանդում է հոգին։
Ուզում է.
Բայց ինչո՞ւ շտապել...
Այնքան շա՜տ են.
Դեռ փաշան—
կշոկի՛։
Իսկ փաշի կողքին—էֆենդին։
Ապա սիրը,
Մուսյոն.

Ու սինյորը...
Այստեղ կա թե՛ չին, թե՛ հնդիկ.
Էֆենդին միայն— գուցե նոր է։

Ու կինե՜ր,
Կինե՜ր...
Ռի՛ժ կիները...
Ռուս կիները՝ բոլո՜ր պրինցուհի։
Թեկուզ թանկ են... գները,
Բայց արյունը — կապույտ է ու հին։

Օ, եթե տեսնե՜ին նրանք,
Որ աչքի՜ր շինած
սվին—
Անկյունից նայում է իրանց
Մի կարմիր—
իսկական բայլշևի՜կ։

Բայց հանգիստ են։
Դուրսը,
Դռանը—
Կանգնած է ոստիկանը։
Հլու՝
Ղրկել է Մուստաֆա Քեմալը
Էֆենդու հանգիստը հսկելու։

(Նա արդեն կարգադրել է,
Որ հսկե ոստիկանը խիստ։
Որպեսզի—
բարեկիրթ այդ տները
Չմտնեն պոռնիկ ու... կոմունիստ)։

Ու պարում են սիր ու մուսյո,
Էֆենդի, հեռ ու փաշա։
Հարբե՛լ են հարբեցնող մսով.
Միսը շա՜տ։

Ու հոսում են շոգ շշուկները։
Խոսում են։
Առնում են ու ծախում։
Հպվել են իրարու
ու շիկնել են։
Լսո՞ւմ ես.
— Ո՛ղջը ծախու։

Ծախվում է ամեն ինչ այստեղ։
Ծախում է—
ով ինչ ունի։
Համոզում է ֆոկստրոտը հեշտին,
Որ ծախեն ամենքը.—
Ի՞նչ..

Կինը—
Մարմինը.
Մինիստրը—հոգին։
Գի՞նը.
—Ջնչի՛ն է.
Ջոկի՛։

Ջխաբվե՛ս։
Մի գի՛ն է այստեղ։
(Այդպես է օրենքը Ստամբոլի)—
Մի գին են վերցնում այստեղ—
Թե՛ պոռնիկ,
Թե՛ փաշա,
Թե՛— միտրոպոլիտ։

Ջարմանո՞ւմ ես, ի՞նչ է, Ջարե՛նց։
Օ գլխարկդ հանիր։
Պարո՛ն,
Հասկանո՞ւմ ես՝
Նայի՛ր՝
Դա իրենց
«Հիմնական օրենքն» է պարում։

Պարում է Հիմնական Սկզբունքը,
Որ կոչվում է Մասնավոր-Սեփական։
Պարում է՝ աչքեր ու հոնքեր
Ու մարմին ու սմոկինգ հագած։

Խոնարհի՛ր գլխարկդ,
Կռացի՛ր։
Օրե՛նքն է պարում սրահում։
Ջազբա՛նդն է նրանց,—
Ինտերնացիոնալը։
Նրանց հիմնը կյանքի
Ու մահու։

Ջազբանդը։
Նա դարձել է դեվիզ։
Լոնդոնից Նյու-Յորք ու Բեռլին
Ջազբանդ են պարում երեի
Ամեն մի Կուլիջ ու Ջեմբերլեն։

Իսկ Ստամբո՞ւլը.
Ստամբոլը, դե—
Ինչպես հոլը՝ նետված այնտեղից։
Քանի դեռ նստած է այստեղ
Բարեկիրթ էֆենդին այս դեղին։

Էֆենդի՛,
Ցրա՛ք եք հագել դուք։
Միայն ֆեսն է ձեր այդ, որ հնից է։
Բայց գիտե՞ք—
Սուլթան Ֆաթուն
Դուք մի փոքր, մի քիչ... արնակից եք։

Ստամբո՛ւլ։
Դու պարում ես ջազբանդ։
Դու ուտում ես բար-մայոնեզ։
Նետում եմ ես ահա, հուզված,
Իմ քնքուշ կոմպլիմենտը—
քե՛զ։—

Ինչքան էլ մի պրոլետ-Համբո
Այս խոսքիս նախատինք խառնի—
Մի անո՛ւն դու ունես, Ստամբո՛ւլ—
Մի ջ ա ղ գ ա յ ի ն պ ո ռ ն ի կ։

IV

Հե՛նց այսպես,
Ինչպես այսօր։
Ճի՛շտ այսպես առկայծել է Պերան,
Երբ նրանց տարել են Տրապիզոն
Մի փայտյա բարկասի վրա։

Իհա՛րկե,
Բանկետ է եղել,
Պերայում եղել է կերուխում—
Երբ այնտեղ հրեշ մի դեղին
Խեղդել է արխաղաշ Սուբխուն։

Հրճվել է Թագսիմի սինեման,
Թոքատլյանը, Սպլենդիդը եռուն—
Իսկ այնտեղ քսան խեղդամահ
Օրորվել են սև ջրերում...

Ինչ հե՞շտ է բարձրացել այդ օրը
Էֆենդու «պա»-ն ֆոկստրոտում։
Երկնային մյուզիկ է ու օրոր է
Օրորել նստուկը օդում։

Իր հոգին այն օրը, օ այն օ՛րը
Ինչ քա՞ղցր հույզեր է հինել...
Կարծես շեկ, մի շեկ էլիենո՛րա
Տարել է
Իրեն
...Սինեմ։

Հե՛նց այսպես,
Ինչպես այսօր։
Ճիշտ այսպես առկայծել է Պերան,
Երբ նրանց տարել են Տրապիզոն...

Բայց—
Լսո՞ւմ եք.
— Նրանց կա՞ն։
— Չմնա՞ն։

Լսո՞ւմ եք, էֆենդի՛, փաշա՛։
Գոռում եմ Լստեղից Բիթլիս.—
— Դեռ կգա կարմիր ռեվո՛նշը։
— Դեռ կգա— արխաղաշ Սուբխին։

Հասկանո՞ւմ եք՝ նա, որ երեկ
Այստեղից բշեց Անտանտին—
Այսօր չէ էգուց—
Համբերե՛ք—
Ձեզ էլ կքշի, էֆենդի՛։

Կարծո՞ւմ եք՝ նա Անտանտին
Իզմիրից թոցրեց Վոսփոր—
Որ այստեղ դուք, էֆենդի՛,
Հղփանաք ու պարեք ֆոկստրո՞տ։

Կպարե՞ն դեռ կակուղ ձեր մսերը,
Որ լողում են հիմա ֆոկստրոտում։
Դեռ կզգան մեր զգվանքը
ու սերը—
Մեր սրի համբույրը հատու։

Դեռ կգա Ալին նավաստի,
Դեռ կանցնի այս ցոփ Ստամբոլով,
Որ ուռած ձեր բկին նստի՝
Հաստատի կենցաղը նոր։

Կհնձե՛ նա հունձը ձեր բերքի,
Կհարթե,
Որ տեղում ցանի նո՛ր ը։
Ու հետը սուլթանի ձեռքի
Արնաթոր ճակատից երկրի
Կքերե—
Թ ո ւ ր ք կ ո մ ս ո մ ո լ ը...

1924

ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՊԱՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Այստե՛ղ է Կոմունարների Պատը։
Ցցված է ահա այստեղ նա։
Այս փոքրիկ,
Փորփրած այս ֆասադը։
Այս փլատակը դեղնած։

Մնացորդն է առաջվա պատի։
Մի փոքրիկ կտորը։
Մնացել է այն օրից այդպես,
Որպես եղել է։
Վրան՝
Հատիկ-հատիկ—
Գնդակների տեղերը։

Մեկ էլ,
Հենց այդ հին քարերի վրա,
Վրեժից կիզված իր թակով՝
Փորփրել է դեմքեր
Զարհուրած
Մի քանդակագործ։

Քանդակել է ապա նա մի կին,
Որ մեջքը քարերին հպած,
Անսահման ցասումը դեմքին,
Ստինքները բաց՝

Երկարել է ձեռքերն աճավոր,
Եվ տենդոտ դեմքը թշնամուն՝
Մոնչում է՝

«La Commune est mort—
vive la Commune!»

Նա ի՞նքն է։
Ոգին Կոմունի։
Ծառացել է։
Կարո՞ղ է էլ ներել։
Եվ շուրջը,
Տղամարդ ու կին,
Նրա՞նք են.—
— Փարիզի
Կոմունարները։

Բարձրանում է սրտից իմ
Ցասման անսայր ալիք։
Ուզում եմ թվել ես նրանց։
Բայց անթի՛վ են.
Որի՞ն ես թվեմ։
Այդ նրա՞նց է,
Ելնելով Վերսալից՝
Սվիններով հնձել
Դալիֆեն։

Այդ նրանց վրայո՞վ է, որ՝
Պատվանդան շինելով այդ դիակը՝
Բարձրացել է մի օր
Տյերը։

Այստե՛ղ են խմբերով բերել
Ու հպել պատին։
Սուլել են գնդակները—
Դիպել են—
Աչքերին,
Փունջերին,

Ճակատին։
Մակել են մարմինները,
Մահերից անցել—
Ու փորել են պատը։
Սուլել են անընդհա՛տ, անընդհա՛տ։
Կուտակվել է մինչև
Հենց այս պատի առջև
Դիակների մի պատ։

Բարձրացրել են ձեռքերը վեր,
Մալել են ձեռքերը կրծքերին։
Սեղմել են մարմիններն իրենց.—
Տեսնո՞ւմ ես՝ այս քարի՛ն։
Ցայրույթից պայթող աչքերով
Թքե՛լ են թշնամու երեսին։
Որպես կարմիր դրոշ՝
Բարձրացրել է զավակին մի կին։
Ու ո՛չ սարսափ, ո՛չ ահ։
Որպես սամում—
Ոռնացել են դեմքին թշնամու՝
Vive la Commune!

. . . . . .
. . . . . .

Հիմա չկան նրանք։
Հիմա չկան։
Բայց տեսնում եմ ես ահա բոցվող,
Հպարտությամբ գոցվող
Աչքերն այն կոմունար աղջկա։
Տեսնում եմ բոցն աչքերի,
Որ վերջին վայրկյանին թռած՝
Մնացե՛լ է ահա
Փորփրած
Այն քարերի վրա։
Ու նայում է։
Ի՞նձ է նայում։
Պատրա՞ստ ես— ասում է։
Հասկանո՞ւմ ես՝ վայրկյանից մահու

Մենք այսպես— ընկած—սպասո՛ւմ ենք։
Սպասում ենք՝ հպած այս պատին,
Ականջներս ձայներով դեռ լեցո՛ւն են։
Մնում ենք, որ գաք, ազատեք,
Որ բերեք — Կարմիր Հատուցումը...
. . . . . .

Փարիզ։
Մշուշ ու ահ։
Ես,
Պոետս,
Լենինյան բայլշևիկս՝
Պատին կոթնած ահա
Լսում եմ նրանց ձայնը,
Շշուկը։

Հասկանո՛ւմ եմ ես ձեզ, ընկերնե՛ր։
Դուք մոտիկ եք ինձ։
Հարազա՛տ եք։
Մեկը թե գար հիմա և ինձ այստեղ տեսներ՝
Դժվա՛ր թե դեմքս նա ձեր դեմքերից զատեր։

Իհարկե, թշնամին թե գար՝
Պիտի կարծեր, թե դեմքս
Ձեր դեմքերի՛ց է՝
Դնդակո՛վ այս պատին քանդակած։

Ձեր մսի՛ց եմ ես էլ, ընկերնե՛ր,
Իմ մե՛ջ է մարմնացել ձեր աճյունը։
Նայում եմ ես փորած ձեր դեմքերին ահա—
Եվ մեկ-մեկ ճանաչում եմ։

Հարկավոր էր երկա՛ր դեգերել
Եվ հազար համփաներ մաշել,
Որ գայի, կանգնեի ձեր դեմ,
Որ հասնեի այստեղ—
Պեր-Լաշեզ։

Բայց չտեսած դեռ ձեզ—
Ես ձեզ գիտեի։
Եղել եք դուք ընկեր
Թե՛ երգիս, թե՛ ինձ։
Կարծես տեսել էի
Ձեզ երազո՛ւմ ես։
Օ, վաղուց զգացե՛լ եմ ես էլ
Ձեր վերջին հուզումը։

Ինչքա՛ն անգամ ես է՛լ,
Ձեր վերջին ջերմը ճակատիս՝
Սարսափած կեցել եմ՝
Հպված մի պատի։
Եվ սվիններ ինչքա՛ն
Ծակել են կուրծքս, երբ—
Մի երջանիկ դիպված
Փրկություն է բերել։
Ինչքա՛ն եմ ազատվել հանկարծ—
Ինձ կորած եմ կարծել երբ ես...
Ուզո՞ւմ եք՝ ձեզ պատմեմ մի արյունոտ արկած՝
Մեր պայքարում փոքրիկ դա մի դեպք է թեպետ։—
. . . . . .
. . . . . .

Մի փոքրիկ քաղաքում էր։
Տասնևութը թվին։
Թշնամին դիմանում էր։
Կռվելով՝ մենք քաղաքը տվինք։
Թշնամին տիրել էր
Քաղաքի դիրքերին։
Մեր բոլոր ընկերները
Ընկան գերի։

Ես և ընկերս՝
Երկու արմեյցի՝
Նետեցինք զենքերս—
Գնացինք։

Բոլոր փողոցները,
Անկյունից-անկյուն,
Թշնամին բռնել էր.
Կապել էր փողոցները, որպես հանգույց։

Ես անցա ցանկապատը։
Մտա այգին։
Նկատեց ընկերոջս մի սպիտակ կաղակ։
Եվ ահա—մտրակեց իր ձին
Եվ ընկերոջս հասավ։
— Որտեղի՞ց ես,— հարցրեց կաղակը։
— Դե էնտեղի՛ց, դիրքի՛ց...
— Բաս ո՞ւր է հրացանդ։
— Նետեցի։
— Կարմիր արմեյցի՞ ես։
— Այո՛։
— Այո՞ո՞...
Եվ մտրակեց իր ձին
Եվ քշեց՝ նրա վրայով։

Ինձ օգնության կանչեց
Ընկերս ներքևից։
Սուրը քունքին առավ,
Անցավ թևից։
Երկրորդ հարվածն հետո
Գանգը կիսեց։
Ես հեռացա փութով,
Որ չկիսվեմ ես է՛լ։

Այգիների միջով
Ես մտա մի տուն։
Հետո ընկա կրկին
Ծանոթ տեղեր։
Ու քայլեցի մթում, որպես կատու.—
Արյունը հոսում էր քաղաքում, որպես հեղեղ։
Ինձ բռնեցին շուտով։
Խուզարկեցին թեթև։

Բան չգտան վրաս՝ ձեռք չտվին։
Ինչ որ եղավ սակայն—մահից վատ չէր միթե։—
Ինձ քշեցին մի տեղ,
Մի տեղ,
Ուր կարող էր լինել մահը՝ կյանքի դեվիզ։
Մի հարյուր մարդու հետևից,
Ինձ էլ խառնած նրանց՝ դաշտը տարան։
Ճամփին բռնում էին
Սրան-նրան։

Փողոցներում տեսա
Հազար ընկեր։
Մ՚րը քունքից զարկած,
Ո՛րը վզից։
Ողջը ծանոթ մարդիկ,
Ծանոթ դեմքեր։
Հիմա դիակ դարձած՝
Փլատակներ մսի։
Սակայն թողնենք այդ դեռ։
Կայարանի հանդեպ
Կար «Ciy»-ի մի մեծ, հսկայական ռեկլամ։
Ցուցանակի նման ցցված էր նա այնտեղ՝
Ջույգ սյուների, կարծես ղույգ ոտքերի վրա։
Ա՛յ, «Ciy»-ի հենց այդ ցուցանակից
Կախված էին մերոնք... Հինգ սպիտակ մերկ դի։
Ինչ-որ կանայք, հարբած, շուրջը պարում էին։
Լեզուները հանում ու ծիծաղում լիտի։

Եվ կայարանն հետո...

Այնտեղ, դռան մոտիկ,
Երկու լապտեր կար փոքր, սովորական, ցազի։
Չորս ընկերներ այդտեղ մեկտեղ կախված էին՝
Սև լեզուներն հանած ու ոտքերը հաղից
Բարձրացրած հազիվ...

Կայարանի մոտից մեզ քշեցին դաշտը։
Երկաթ բահեր տվին։
Եվ փորեցինք ահա մեր ձեռքով մի մեծ
Եղբայրական շիրիմ։

Երկո՛ւ հազար ընկեր մենք դրեցինք այդտեղ,
Լցրինք իրար վրա, որպես ձկներ մգլած։
Որը թե չէր մեռել, կամ վիրավոր էր թե՝
Նրան նետում էին այդպես՝ մի աչքը բաց։

Հասկանո՞ւմ եք արդյոք, ընկերնե՛ր,
Թե ինչ ապրեց հոգիս այդ գիշերին,
Թե հարազա՛տ, մոտի՛կ, եղբայրական ձեռներ
Ինչքա՛ն, ինչքա՛ն անգամ ինձ դրեցին շիրիմ։

Իսկ առավոտ, երբ ես
Դարձա քաղաք—
Դրված էր մեյդանում
Մի կախաղան։
Շուրջը մարդիկ, կանայք,
Հագած-կապած.
Եկել էին կարծես
Զվարթ կաբակ։
Ու տերտերներ ճերմակ,
Որոնց շրթից
Հոսում էր, որպես թերմացք,
Ինչ-որ մի երգ խրթին։

Եվ բերեցին ահա, շրջապատած,
Մեր զինկոմին՝ տկլոր, որպես մորուք։
Նա քայլում էր հաստատ գլուխը բարձր,
Կարմիր դրոշ ուներ կարծես բռնած
Իր կապույտ, իր լուրթ աչքերում։

Կախաղանի ներքև
Դրված էր մի արկղ։
Սապոնի էր՝ վրան գրած «Բոդլո»։
Նա բարձրացավ վրան՝

Բա՜րձր, բարձր.—
Օ, ինձ այնպես թվաց, թե շուռ կտա հիմա
Երկրագունդը ոտով։

Նա նայեց այդպես իրա շուրջը՝
Հայացքը որպես գերանդի։
Ու դլխատեց կարծես նա հայացքով իր այդ—
Թշնամական վաշտեր ու բանակներ անթիվ։

Ուղեց ինձ էլ հանկարծ
Կարծես հնձի։
Հասկանո՞ւմ եք՝
Նա
Նայում էր—
Ի՛նձ։
Եվ ճանաչե՞ց արդյոք,
Հասկացա՞վ,
Հասկացա՞վ արդյոք, որ հայացքը
Կախաղան էր՝ իմ դեմ ահազարհուր կեցած։
Բայց չտեսա էլ ես։
Էլ չիմացա։
Երբ նայեցի հետո՝ նրա դին
Արդեն կախված էր ցած։
Ընկերնե՛ր,
Ես ո՞նց չխենթացա...

. . . . . .

Այսպե՛ս է ահա, Պեր-Լաշե՛զ։
Ես փրկեցի կաշիս,
Բայց անողո՛ք եղա,
Երբ Կարմիր Բանակը կրկին
Մտավ քաղաք։
Օ, երեք օր չանցած ես ունեի արդեն
Կարմիր ձեռներ...

. . . . . .

Հասկանո՞ւմ եք արդյոք, ընկերնե՛ր,
Հասկանո՞ւմ եք արդյոք հիմա թե—
Ինչրա՜ն.ենք ունեցել մենք է՛լ

Պեր-Լաշեզի պատեր։
Այս պատերի ներքո երբ ընկավ
Մեր վերջին ընկերը—
Այն օրից
Մեր կռիվը անվե՛րջ, անընդհա՛տ է։
Պեր-Լաշեզի պատեր ինչքա՛ն ենք մենք փորել...
Բայց ունենք մենք մի պատ, ընկերներ,—
Եվ ուրի՛շ է, ուրի՛շ այդ մի պատը։

Մոսկովում է նա։
Հյուսիսում։
Այստեղից հեռո՛ւ է։
Ձեզ ծանոթ է սակայն նրա ճամփան։
Եվ գիտե պայքարող բանվորը—
Լոնդոնում նա լինի, թե Ռուրում,
Որ կոչվում է նա՝
Կրեմլյան Պատ։

Պառկած են այնտեղ ընկերներ,
Որ պիտի պառկեին ձեզ հետ։
Նա մի կարմիր, մի նոր
Պեր-Լաշե՛զ է։
Բայց ուրի՛շ, ուրի՛շ Պեր-Լաշեզ։
Հաղթանակի մի պա՛տ։
Նրանո՛վ ենք փառքի մենք հասել,
Աշխարհը երկուսի կիսել։
Նրանո՛վ ենք այսօր
Հպա՛րտ։

Մե՛նք ենք փորել պատը հաղթանակից հետո։
Մեր շարքերի համար
Դա հաղթական կամա՛ր է։
Այնտեղի՛ց է անցնում մեր հիմնականը, հո՛ւնը։
Պայքարո՛վ ենք դրել
Ամեն մի քարն այնտեղ.
Հաղթանակո՛վ հիմնել
Մեր Կարմիր Պանթեոնը։

Ձեզ գուցե ցնո՞րք է թվում,
Որ աշխարհում հիմա
Կարմիր Պանթեո՛ն կա։
Եվ պառկած են այնտեղ քով-քովի
Մեր բոլոր ընկերները՝ Մոսկովում
Հոկտեմբերին ընկած։

Պառկած են նրանք, որ ընկան
Առաջին գրոհի՛ն մեր։
Երբ առաջին անդամ
Ձնգաց
Հոկտեմբերի հի՛մնը։
Եվ առաջին այդ մեր
Մարտիկներից բացի—
Պառկած են այնտեղ ընկերներ,
Վիթխարի, արի ընկերներ,
Որ պայքարի համար մեր վեհ
Քառուղիներ բացին։

Սակայն բոլո՛ր այդ վեհ շիրիմների կողքին
Կա առաջի՛նը, մե՛ծը։
Այդ բոլորի կողքին— այն մեծագո՛ւյնը կա։
Կանգնած է նա այնտեղ, իբր անհաղթ փառքի
Մի վիթխարի վկա։
Պառկած է այնտեղ—Լենինը...
Մեր կարմիր Ղեկավարը—
Լսո՞ւմ եք...
Այդպիսի ղեկավար—չկա՛,
Ու չի՛ եղել երբեք—
Ո՛չ երեկ,
Ո՛չ առաջ,
Ո՛չ հնո՛ւմը։
Լենինը—
Ուղեղն էր մեր դասի.
Մեր դասի հոգի՛ն էր։
Նրա ամե՛ն մասում
Հոսում էր մեր դասի արյունը։

Նրա մկա՜նն ամեն,
Ամեն բջիջը մի—
Դասակարգի համար եռում էր, պայքարում էր։
Լենինը—
Դե որպես երկրագունդը։
Այսինքն՝ աշխարհը,
Որ հավաքել է կյանքը իր ջղերում։
Լենինը
Հավաքել է իր մեջ—
Հիսո՜ւն հազար սերունդ։
Բանվորական, իհարկե,
Բանվորական սերունդ։

Դասակարգը
Դրել էր նրա մեջ իր ամբողջ մեծությունը։
Նա եռանդ,
Կամք,
Եվ գիտությո՜ւն էր։

Դիսցիպլի՜ն էր Լենինը
Դասակարգի մի նոր,
Որ ձգտումներ ունի
Ընդհանուր։
Որ փոխելու է կյանքը
Հանուր։

Հարկավոր էր ամբողջ մի դասի
Ինչքա՜ն քրտինք ու ջանք,
Որ ծնվեր հանճար մի այնպիսի,
Ինչպիսին էր ինքը...
Ինչքա՜ն եռանդ էր պետք—
Արևմուտքից մինչև արևելք
Ու հյուսիսից՝ հարավ։
Այսպես
Ձուլեց նա կամքը մեր
Եվ հաղթության տարավ։

. . . . . .
. . . . . .
Այստե՜ղ է
Կոմունարների Պատը։
Ցցված է ահա այստեղ նա։
Այս փոքրիկ,
Փորփրած այս ֆասադը,
Այս փլատակը դեղնած։

Մնացո՜ղն է առաջվա պատի։
Մի փոքրիկ կտորը։
Մնացել է այն օրից այդպես՝
Ինչպես եղել է։
Վրան՝
Հատիկ-հատիկ
Գնդակների տեղերը։

Քշեցին հորդու-հորդու
Ու բերեցին այստեղ,
Ի՞նչ.
Թաղեցին ձեզ թե՝
Կարծում են՝ խեղդեցի՞ն ապագան։
Ընկերնե՛ր,
Ընկաք թե որ դուք—
Բայց,
Լսո՞ւմ եք.—
— Մենք կա՜նք։
Դեռ կգա՜նք։

Լցված է կյանքը հիմա
Մեր արշավի թինդով։
Մեր հռինդով լեցո՜ւն է։
Շուտո՜վ,
Շուտո՜վ կգանք,
Կբերենք—Կարմիր Հատուցումը։

Վայրկյանը

Լարուն է հիմա, որպես երկունք։
Գալարվում է աշխարհը։
Պիտի ծնի՞։
Դեմառդեմ՝
Բանակնե՛ր երկու։
Պայքար է գալիքի
Ու համառող հնի։

Հինը
Հևում է ահա ներքևում։
Տագնապից գալարվում է։
Նվում է։
Հավաքում է ուժերը,
Կուտակում.
Խեղդել է կամենում բնում
Լեռնացող ընդհարումը։
Սարսափից դեղնել է
Երեսի կաշին։
Գույնը թափել։
Ջռել է աչքերը,
Հառել հյուսիս։
Ջառանցում է նոր Ռուր,
Պեր-Լաշեզ։
Դիե՛ր,
Դիե՛ր,
Դիե՛ր.
Էշելոններ մսի։
Կարծում է գալիքը՝
Անխուսափելին
Գալու է հյուսիսից։
Իհարկե, այնտե՛ղ է
Գլխավոր մեր բերդը։
Մեր գլխավոր ամրոցը—
Իհարկե, հյուսիսո՛ւմ է։
Կդիմանա՞ր սակայն մինչև օրս մեր բերդը,
Թե չլիներ կյանքում,

Հնդուչինից Ջանգու—
Մեր կենդանի հոսումը։

Թե չլիներ մեր շունչը Փարիզում,
Չլիներ Լոնդոնո՛ւմ կամ։
Երկրագնդի եթե
Յուրաքանչյուր մասում
Զբաղմանար, չաճեր
Հոկտեմբերի հունդը։
Յուրաքանչյուր ինչում թե չշաչեր
Մեր պայքարի շռինդը հոնդուն—
Հիմա հո չէ՞ր Փարիզը գալարվի ներքևը
Հոգեվարքի տենդում։

Տեսնում եմ՝
Ներքևում ահա,
Փողոցների եռում, շառաչում—
Լսո՞ւմ եք՝
Բառաչում է սարսափը։
Բանվորական թաղերը խավարում—
Լսո՞ւմ եք—
Աղմկում են,
Խոսում են։
Որպես վրեժ մի ալ—
Հոսում է այնտեղից սարսափը
Դեպի էտուալ։

Նրա շուրջը,
Վրան
Իջնում է ահա աղջամուղջը,
Թանձրանում է վուալը.
Կորչում է մշուշում շրջագիծը լուսե.
Արդեն էտուալը
Դողում է, որպես տերև, գալիքների ահից։
Լսե՛ք, լսե՛ք, լսե՛ք.—
Այդ թաղերի վրա
Շուտով կելնե արևը, որպես դահիճ...

1925

ԷԼԵԳԻԱ, ԳՐՎԱԾ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

I

Տեսի երկիրը ես Իտալիո,
Եվ Վենետիկը, և գոնդոլներ...
Այնտեղ շրջում է պոետը մեր
Երազային իր տարտամ քայլով։
Զշլացուած այն փարթամ փայլով,
Գեղեցկությամբ այն հեքիաթային,
Նա օրորում էր երգով մի հին
Իր սիրտը, սիրտը դեռ դայլայլող։
Այնտեղ արևը քնքուշ բույրով
Ցողում էր ծովը այնպե՜ս հեշտին,
Իսկ նա հիվանդ էր հին մի վշտից,
Հին մորմոքից՝ իր սիրտը այրող։
Նա իր սրտով հին, հին քնարով
Եվ մատներով իր՝ արդեն անուժ՝
Դեռ գուրգուրում էր հեռու մի հուշ—
Եվ այնպե՜ս, այնպե՜ս, այնպե՜ս անուշ
Նա փաղաքշում էր հուշը այդ ուշ,
Եվ ի՞նչ էր հուշը.— մշուշ ու մուժ։—

II

Նա երազում էր Արփաչայը
Եվ հին Գյումրին իր հեռավոր—
Եվ այն, ինչ հին էր, հուշ էր. այլ էր—
Նրան թվում էր առավոտ։

Նա ինձ ասում էր.— հեռվում հեռու,
Ուր դա՜շտն է, դա՜շտն է Շիրակի,
Կա հին խրճիթ մի, մի տուն խարխուլ,
Որ աղատվել է կրակից։
Այնտեղ հոսում է մի հաշտ առու
Եվ բարդիները երկնասլաց
Հիմա հիշում են երգը իրա
Եվ գլուխները թափահարում։
Նրանք թափում են թերթերը չոր,
Ծածկում խրճիթը հնամյա այն,
Ինչպես երգերը մահամնա,
Որ հեծկլտում են համր լացով։
Այն իր խրճի՜թն է։— Այնտե՜ղ է նա
Հյուսել երգերն իր ու երազել։
Այնտեղ վարդե՜ր կան, թերթեր դեղնած,
Այնտեղ երազ կա, ու երգ, ու սեր։—

III

Նա դեգերել էր, եղել էր նա
Շատ ծովերում ու ցամաքներում
Եվ ամենո՜ւր նա, օ ամենո՜ւր
Տեսել էր նույնը։—Քաղաքներում
Գործարաններ էր տեսել նա բյուր,
Ու գործավորներ՝ համր ու հլու,
Ու գործավորներ՝ ինչպես թաբուն։
Եվ ամեհի այդ քաղաքներում,
Օծված ցնորքով ու վաստակով՝
Նա ամբոխներ էր տեսել հլու
Եվ տերեր՝ շռայլ ու հաստափոր։
Կյանքում տեսել էր նա լոկ տերեր
Եվ բազմություններ կամակատար,
Որ ընդունակ են կյանքը կրել,
Ինչպես օրենք մի հավերժական։
Եվ նա ատել էր այդ տերերին,
Բայց ավելի՝ այդ թաբուննե՜րը,
Նրանց, ում կյանքը անիծել է

Եվ դարձրել է ճորտ ու դերի։
Եվ նա ասում էր։— Երկրի վրա
Գաղա՛ն է, գա՛յլ է մարդը մարդուն։
Կյանքի օրենքն է հավերժական,
Որ մեկը լսթ է, մեկը՝ արդուկ։—
Եվ նա ասում էր՝ նո՛ւյնն է մարդը
Եվ միշտ էլ նույնը կմնա,
Մինչև ցնդի այս ավնթարթը,
Որ ընթանում է դեպի մահ։
Ամբողջ կյանքում նա ու աշխարհում
Միայն այս բանն էր հասկացել։—
Եվ պատրանքին այս, ստին հլու՝
Նա երազել էր ու լացել։

IV

Եվ թափառում էր նա, որբ ու ծեր,
Քաղաքներում այդ բազմաժխոր,
Որ ողողված են երկաթաշեն
Գործարանների թանձր ծխով։
Ջտեսնված մի, քանդող խանդով
Շաչում էր շուրջը մի գոռ պայքար.
Ամեն վայրկյանը—մի գործադուլ,
Անդուլ կռիվ մի հերոսական...
Սակայն հոգին իր՝ հավիտյան խուլ
Խոլ պայքարին այդ աշխարհաշեն՝
Քաշվում էր մեջն իր, ինչպես խխունջ,
Կամ օրորվում էր, ինչպես տաշեղ։
Ուրի՞շ երազ էր նրան հուզել,
Ուրիշ ցնորք մի, սեր հնագույն—
Եվ հարազատ էր նրա հոգուն
Միայն այդ հինը։—Օ, նա կուզեր
Հեռու տնակն իր վերադառնալ,
Գտնել առվակը կրկին այն հին,
Ուր իր երգերը կարկաչեին
Երազային ու տխրաբարբառ։—
Սակայն մեր կյանքը սավիտակն

Նրան թվում էր անթով ու սուտ.
Նրա ազմուկը խորթ էր նրան
Եվ անհաղորդ էր նրա լեզուն։
Նրան թվում էր մեր լույսը՝ ցուրտ,
Մեր արեգակը՝ գիշերային,
Մեր քաղաքները՝ ահով լեցուն,
Եվ մեր դաշտերը՝ ամայի...
Նրա աչքին մեր Հոկտեմբերը
Ըմբոստ մի բունտ էր անիմաստ,
Որի ձգտումն էր ա՛յն բերելը,
Որ լոկ ցնորք է ու երազ։
Եվ մեր հորձանքը՝ երկրում ելած,
Մեր աշխատանքը դյուցազնական,
Նրան թվում էր սին մի երազ,
Որ ցնդելու է՝ ծանր ու դանդաղ։
Նրան թվում էր մանկան մի խաղ
Մեր ընդվզումը, պայքարը թեժ—
Եվ ուր որ կյանք են կերտում հիմա—
Նա լոկ տեսնում էր մահ ու աղետ։
Եվ ո՛ւժը, ո՛ւժը մեր՝ նոր ծագող,
Մեր հորձանուտը՝ կյանքում հորդած՝
Նրան թվում էր մութ մի հորդա՝
Ու ավերո՛ղ լոկ ու կործանող։
Եվ աշխարհում մեր նաիրական
Մեր մենամարտը ընդդեմ հնի—
Նրան թվում էր անիրական,
Ինչպես տարտամ մի, խառը վայրկյան,
Երբ արթնանում ես ծանր քնից։
Եվ նա ասում էր.—Մինչև շիրիմ
Պիտի նույն հուշը նա օրորե,
Եվ չե՞ն գա, չե՞ն գա պայծառ օրեր
Ո՛չ ծեր սրտին իր, ո՛չ աշխարհին։
Անցածը հուշ էր չնաշխարհիկ
Նրա սրտի՛ն ծեր, գալիքը—սուտ,
Եվ օրորուն այս հին երազով՝
Իրեն կարծում էր նոր մի Նազոն,
Որ հայրենի իր երկրից անդին
Շրջում է որբ ու վտարանդի։—

V

Ես լսում էի նրան հանգիստ
Եվ փակում էի աչքերս երբ—
Թվում էր մեկը երգում է երգ,
Որ հին է, հին է, ինչպես զանգի
Տխուր զոզանջը օրերում այն,
Երբ նախքյան մի եկեղեցի
Շռայլ՝ փռում էր երկրի վրա
Իր «օրհնությունը» և «եղիցին...»։
Բացվում էր դեմս մի մութ կամար,
Ուր արեգակը՝ թելից կախած՝
Լուսավորում էր քաղաքներ մառ
Ու գյուղեր՝ ծխոտ ու խեղդամահ։
Թախիծ էր, թույն էր այն աշխարհում,
Այնտեղ մամուռ էր միայն աճում.
Այնտեղ տերտերն էր ու վաշխառուն
Ու խարազա՛ննն էր այնտեղ շաչում։
Եվ հաշտ առուն այն, հեքիաթ-առուն,
Որ երազում էր կարոտով նա—
Այն արոտնե՛րն էր միայն ջրում,
Որոնց տիրում էր մի ռես Հովնան։
Մյուս դաշտերը—չլուտ ու չոր,
Ու դաշտերում այն—գրաստ-ապին,
Հպգին նեխած մի, ցեխոտ քապիկ,
Հոգին միշտ համր, հրատռչոր։
Եվ ժամը, ժամը գյուղամիջում՝
Կյանքի վրա այդ նստած թուխսի,
Եվ քահանան ծեր ու ծեր մուխսին,
Եվ աղոթքները եղսան բաջու։
Իսկ քաղաքնե՞րը... Այստեղ արդեն,
Որպես առանցքը ամբողջ կյանքի—
Բարսեղ աղա մի, կամ մի Արսեն՝
Կիսաչարչի ու կիսաբանկիր։
Ահա իմ դե՛մն է, դե՛մն է իմ նա.
Տեսնում եմ դեմքը նրա ճարպոտ.
Խոզի մռութ մի, ուռած մի փոր.

Նա ուղարկում է որդուն գիմնազ,
Ունի տներ ու խանութներ մեծ,
Գիտե ուտել կուշտ, չափով խմել,
Սակայն սիրում է անչափ, անչափ
Ծծել քրտինքը բազմաչարչար
Բանակների այն, որ աշխարհում
Միայն հոգնում են ու աշխատում։
Ահա՛ առանցքը։— Շուրջը սակայն.
Ինչպես լուսինը շուրջը հողի—
Դառնում է կյանքը նաիրական
Ու լիանում է նրա շողից...
Հլու ու համր նրա խոսքին
Ու շարժումին մի նրա մատի—
Ջրօրհնեքից, օ, մինչև զատիկ—
Դառնում է շուրջը կյանքը «ազգի»։
Դառնում են շուրջը գրքեր, թերթեր,
Դպրոց, թատրոն ու եկեղեցի,
Տներ, կառքեր բյուր, օթո ու ձի,
Հոգաբարձու ու վարձու տերտեր։
Դառնում են շուրջը վարժապետներ,
Որ ըստ տեղի ու ժամանակի՝
Թե՛ փաստաբան են, գրող են թե՛,
Թե՛ խմբապետ են, թե՛ խմբագիր։
Նրանք են ուղը, աղը կյանքի,
Նրանք են փայլը աշխարհի այն,
Ուր արևում է վերից մի «հայ»
Կիսաչարչի ու կիսաբանկիր։
Նա վե՛րն է, վե՛րն է, ինչպես արև,
Փառաբանում են նրանք նրան,
Եվ նա թափում է նրանց վրա
Իր բարությունը՝ փայլը հրե։
Եվ նա թվում է նրանց օրենք,
Ինչպես արևը հավերժական,
Որ պարգևում է պայծառ օրեր
Եվ շնորհում է թե՛ լույս, թե՛ կյանք։—
Ահա՛ ցնորքը, բախտը բուրյան,
Որ երազում էր նրա հոգին.

19. Ե. Չարենց, Երկեր

Թեկուզ այս կյանքը մթին էր «քիչ»,
Բայց... «հարազատ էր ու նախրյան»։
Այս կյանքը փառք էր թվում նրան,
Անհուն դրախտ մի՝ հուշով նախշուն։
Եվ ա՛յս էր, ա՛յս էր, ա՛յս էր, որ նա
Ջնաշխարհիկ մի բախտ էր հաշվում...

VI

...Ես պատմում էի նրան, թե մեր
Երկիրը ի՞նչ է հիմա դառնում
Եվ ի՞նչ ուժեր են հիմա հառնում
Իր երազած այն աշխարհի դե՞մ։
Ես պատմում էի այդը մեր մեծ
Եվ առավոտը մեր իրական
Եվ այն, որ սիրտս թինդով երգեց,
Եվ այն, որ նոր է ու պիտի գա։
Ես ասում էի.— երկրում հեռու,
Ուր մեր աշխարհն է սավետական,
Հիմա ելնում է ուրի՞շ մի կյանք
Եվ ա՛յլ պայքար է հիմա հռում։
Որ այն, ինչ մութ էր, հնին անտես,
Որ խորշերում էր, ներսում, միգում—
Հիմա դառել է հրե մի գունդ
Եվ բորբոքում է կյանքը այնտեղ։
Որ ոնց գարնանը հեղեղը գա
Եվ կապանքները ձմռան բանդե—
Այդպես մրրիկը այն հեռակա
Խուլ աշխարհում մեր արձագանքեց։
Ինչպես հանքում հին, երբ վիթխի
Շերտերը ծուխ հնաբդեն դառնում—
Ուրիշ ուժեր են վարից հառնում
Ու բարձրանում են վեր՝ արևին,—
Այդպես մրրիկը այն կարմրակեզ,
Որ Հոկտեմբեր է հիմա կոչվում—
Բերեց երկրին մեր նո՛ր մի աճում
Եվ աշխարհնե՛ր նոր հանեց հանդես։

Եվ այդ աշխարհը, ուժը այդ մեր—
Օ, ա՛յլ է, ա՛յլ է, չեղած երբեք։
Որպեսզի գար նա, կյանքում հորդեր—
Դեռ հարկավոր էր հինը սրբել։
Այդ ուժը նո՛ր է, ձերին օտար,
Ձերին ներհա՛կ միշտ ու հակադիր,
Ինչպես փայտի՛ դեմ—հալած մետաղ,
Ինչպես ջրի՛ դեմ— հրի հատիկ։
Դա մեր բանակն է, ելած վարի՛ց,
Խուլ խավարի՛ց ձեր աշխարհի այն,
Որ մեր քրտինքը փոխում քարի՝
Եվ մեզ Թողնում էր արյուն միայն։
Մեր կյանքը մութ էր ձեր աշխարհում,
Անդուռ նկուղ էր, անանց ձմեռ.
Եկավ պայքարը, ցուրտը ցրեց—
Եվ ձմեռի՛ տեղ—ամենանք գարուն։
Մենք մեր օրերը, այդը դարու
Հոկտեմբերից ենք հիմա հաշվում
Եվ անհաջող մի, հիմար սիրուց
Դեպի լեռները մենք չե՛նք քաշվում։
Եվ սրտերում մեր — տրտունջ չկա.
Մենք հավատում ենք հիմա կյանքին.
Մեզ հմայում են գործ ու պայքար
Եվ հոգնությունը աշխատանքի։
Քո ճանապարհը աշխարհում այն
Դու գնացել ես մեն ու մենակ—
Իսկ մենք անթիվ ենք, անհուն բանակ
Եվ կառուցում ենք հիմա անահ
Մեր նոր աշխարհը՝ պայծառ ու լայն։
Եվ մենք ասում ենք.— Մե՛նք ենք հիմը
Ամբողջ կյանքի ու մարդկության.
Ամբողջ աշխարհը հայրենիք է
Եվ աշխատանքը ու քրտինքը
Օ, նո՛ր աշխարհ մի պիտի տան—
Նրանց, ում կյանքը անիծել է։
Ով ճորտ է, մեկով է ու անտուն,

Բայց պայքարում են հիմա անդուլ
Եվ աշխատում են ստեղծել
Նոր մարդկություն մի՝ անցավ, անցեց...

. . . . . .

Մեր երգը—սա՛ է։ Եվ մենք հիմա
Խուլ աշխարհում մեր նաիրական
Բերել ենք ուժ նոր, ու թա՛փ, ու կա՛մք,
Որպեսզի կյանքը աշխարհի ա՛յն,
Որ դուք քանդել եք ու կործանել—
Վերաշինենք ու վերածնենք։—
Եվ մենք անթիվ ենք ու անհաշիվ,
Մենք մեր երկրում ենք ու ամենուր—
Եվ անհաջող մի, հիմար սիրուց
Դեպի լեռները մենք չենք քաշվի։—
Հիմա ելնում ենք մենք մեր կաշվից,
Հիմա հոգնում ենք, տնքում անքուն,
Որ մեր զնգուն այն, հիմար Զանգուն
Քիլովատներ ու վոյլտեր հաշվի։
Ուր անապատ էր, դաշտ էր ամա,
Ուր լոկ երաշտ էր ու մահ բոցե—
Մենք ջրանցքներ ենք շինել հիմա
Եվ մեր դաշտերը ոսկեզօծել։
Այնտեղ, ուր հովն էր քո կարկաչում,
Ուր կուզեիր որ Զարոդ ապրի—
Հիմա դրել ենք երկաթ ֆաբրիկ
Եվ մեքենան է այնտեղ շաչում։
Եվ քիլովատը յուրաքանչյուր,
Ամեն մի վոյլտը այնտեղ հաշված—
Օ, ա՛յլ վոյլտեր է կյանքի կանչում
Եվ քիլովատներ հանում աշխարհ։
Օ, դաշտերում այն մեր անջրդի,
Ուր կառքը փառք էր, եթե գնար—
Մեր նոր բանա՛կն է ելնում բանտից,
Այնտեղ զնգում է երբ մեքենան։
Երբ ծխնելույզն է ծխում այնտեղ
Եվ հիդրոշենը փռում կայծեր—
Դա թա՛թն է, թա՛թն է մեր երկաթե

Քանդում աշխարհը հնամյա ձեր...
Այնտեղ մեր շուրջը ծփում է դեռ
Ճղճիմ ճահիճը ձեր ծանրանիստ—
Եվ տարիներ դեռ քանի՞, քանի՞
Պիտի նա թափը մեր կաշկանդե։
Կարծում ես հինը չկա՞ այնտեղ,
Քո երազածը՝ հուշով նախշած։—
Օ, ո՛չ.—կանգնած ենք դեռ դեմառդե՛մ
Երկրում մեր և՛ս— երկու աշխարհ։
Եվ ձե՛րը, ծե՛րը— ճնշող է դեռ։
Քո ներբողածը—դեռ կա՛, դեռ կա՛.
Եվ կլինի՛ նա երկա՛ր, երկա՛ր,
Քանի դեռ հինը մենք չենք քանդել։
Կապրի՛, կապրի՛ դեռ շունչդ այնտե՛ղ։
Կերդեն երգերը դեռ քո թողած,
Քանի կյանքում մեր կանգուն է դեռ
Ցնորք — բոստանը քո ներբողած։
Եվ դա՛ է, դա՛ է, դա՛ է արդեն,
Չե՞ այդ բոստանն է ու զույգ բարդին
Եվ մեքենա՛ն մեր, որ դեմառդեմ
Հիմա ելել են մենամարտի։
Եվ այս պայքարը համր, լռին,
Այս մենամարտը մեր առօրյա—
Օ, ավելի՛ է տագնապալի,
Քան բարիկադը հոկտեմբերյան...
Օ, ձեր աշխարհը—դեռ կա՛, դեռ կա՛,
Նա դեռ նստած է, հաստանստուկ,
Եվ քո երգերը երեկ երգած
Դեռ շատերի՛ն են այնտեղ ազդում։
Բայց դա աշխարհն է մահապարտված,
Կյանքի մամուռը, տիղմը անհուն,
Որ բոստանի՛ն քո, առվին կառչած՝
Ե՛վ համառում է, և՛ հեռանում։
Եվ խուղերի երբ անդուլ մթում
Վառվում է լամպը էլեկտրական—
Դա մեր պայքա՛րն է ընդդեմ անդուլ
Խուլ աշխարհի ձեր նսիրական։

Եվ մեր քլունգը՝ լեռը քանդող՝
Երբ թունելներ է ձգում երկար—
Դա ո՞չ թե լեռն է քանդում անդուլ,
Այլ ձեր աշխարհը սարսափահար։
Քանդում, քանդում է նա անհանգիստ,
Քարե բերդերը շպրտում դեն
Եվ նո՞ր ջերտեր է կանչում կյանքի
Եվ բանակնե՛ր նոր հանում հանդես։
Ելնո՞ւմ, ելնո՞ւմ են նոանք արդեն,
Ստվարանում են օրը օրին,
Ինչպես մեսաղը երկրի խորից,
Ինչպես գարնանը հեղեղ հորդեն։
— Դա հորձանուտն է բանվորական,
Հորդել— գալիս է ահագնորեն,
Որ ծանրությունը պայքարի այս
Լայն ուսերով իր էգուց կրե։
Գալի՞ս, գալի՞ս են նրանք ահա,
Լցնում երկիրը շառաչով զիլ,
Եվ մեր երգերը է՛լ ավելի
Հնչում են բարձր ու խանդավառ։
Դողում է հողը այդ ինթացքից
Եվ եռանդից այդ, խանդից անծայր,
Եվ մեր գալիքը՝ այնքա՞ն պայծառ
Ահա բացվում է իմ հայացքին...

VII

Այնքան պայծա՞ռ է այդ ապագան...
Տեսնում եմ՝ վա՛ղը, վա՛ղը, շաղոտ
Երկրի վրա ձեր ռաֆեռական
Ահա՞ բացվում է ինչի առավոտ։
Ահա՞ գյուղերում քաղաքներ նոր՝
Երկաթցանցով մի իրար կապված,
Եվ առօրյան մեր ահա՞ վաղվա՝
Լցված խինդով նոր ուսումնական։
Ահա՞ շենքեր նոր, զվարթ տներ,
Ուր լո՞ւյս կա, լո՞ւյս կա, լո՞ւյս կա այնքան...

Չկան խուղերը նախրական,
Ուր լույսը փառք էր, եթե լիներ։
Ու դարեր անթիվ ու տարիներ
Ապրում էր մարդը ինչպես միջատ,
Ու չար աստված մի՝ երկնից իջած՝
Օրհնում էր կյանքը այն մոխրին...
Ելել է կյանքը, քնից զարթնել,
Դողում է հողը բեղուն բերքից...
Ու շո՞ւրջը, շո՞ւրջը, շո՞ւրջը երկրի—
Աշխարհը լա՞յն է ու անպատնեշ...
Աշխարհը դաշտ է մի համերաշխ,
Երկիրը ո՞նց է, ո՞նց է քրտնել...
Ապրում են շուրջը ժողովուրդներ՝
Եղբայրական ու հավիտյան հա՛շտ։
Եվ մա՛րդը, մա՛րդը ահա վաղվա՝
Հարվածներից հին մեջքը շտկած։
Ահա հայացքը, սիրտը իր պարզ
Եվ աշխարհում— իր քայլքը վստահ...
. . . . . .
Ահա՛ ցնորքը մեր անսահման,
Մեր երազանքը, վարպե՛տ— Սակայն,
Սա երազանք է մի այնպիսի,
Որ չի՛ տրվի մեզ խոսքերով սին,
Որի համար— օ, դարե՛ր, դարե՛ր—
Մենք պայքարել ենք ու պայքարել։
Ու պայքարում ենք։— Իմա՛ցիկ դու
Մեր երազին այս չե՛ս հավատում։
Դու երազում ես, այստեղ նստած,
Մարմանդ առու մի, մի խուլ բոստան
Եվ հեզ դառնուկ մի, որ բառաչե—
Սակայն այդ երգը— մեր երգը չէ՛...

VIII

Եվ լսի՛ր, լսի՛ր, լսի՛ր, վարպե՛տ,—
Իզուր ես հինը դու երազում
Եվ զո՛ւր է, զո՛ւր է սիրտդ հարբել

Անմխիթար այդ, սին եռազով։
Իզուր է սիրտը քո կաղազում
Երկրի հանդեպ մեր վերածնվող.
Ո՛չ մեր երկիրն է շվայտ Հռոմ
Եվ ո՛չ էլ ինքդ— նոր մի Նազոն։
Իզուր ստին այդ, մթին գերի՝
Դու անիծում ես ուժը մեր նոր.—
Դու այդ ուժի՛ց ես փախել ելնող
Եվ ո՛չ թե, ո՛չ թե արքաներից։
Եվ գաս եթե դու երկիրը մեր
Եվ նույնը, նույնը, նույնը մնաս—
Մեր նոր արևը չի՛ գուրգուրե
Քո այդ երգերը մահամնա։
Քեզ կընդունե այն աշխարհը հին,
Որ դեռ ծամում է մամուռ ու ցեց,
Բայց այդ արևը ձմեռային
Դժվա՛ր թե սիրտդ տաքացնե։
Եվ կմնաս դու տխուր ու ծեր,
Այդ նո՛ւյն ձմեռը քո ցուրտ հոգում,—
Եվ հուսահատ ու որբ կլինես
Ինչպես հեռու այս Վենետիկում...

1925 հունվար
Վենետիկ

ԲԱԼԼԱԴ ՔՍԱՆԸՎԵՑԻ ՄԱՍԻՆ

I

Ամեն առավոտ ծեգին,
Երբ քնից զարթնում է Բաքուն,
Երբ, ելած գիշերվա մեգից,
Արթնանում է կյանքը քաղաքում,—
Երբ ձայնով աշխույժ ու հնչուն,
Քաղաքի բոլոր մասերից
Շչակները գործի են կանչում
Պրոլետարներին,—
Քաղաքի ծայրերից բոլոր
Զգվելով երբ շարան-շարան
Բանվորները հոծ խմբերով
Շտապում են դեպ գործարան,—
Ամեն առավոտ ծեգին,
Այդ ժամին գորշ, մխերանգ—
Զուլվելով երթին ամենքի—
Քաղաքից անցնում են և նրանք։

II

Քսանըվեց հոգի են նրանք—
Եվ խոհուն, մտազբաղ են բոլորը։—
Առջևից գնում է նա—
Երկաթյա Կարմիր Կոմանդորը։
Քայլերով հաստատ, համաչափ,
Հետևում են նրան ընկերները,

Ընթանում են քայլերով շտապ,
Շտապում են դեպի վիշկանները։
Աննկատ, ձուլված ամենքին,
Քայլում են նրանք դեպի ծովը.
Ողջունում են ջրերը դեմից,
Համբուրում է հովը։
Համբուրում է դեմքերը քամին,
Շշնջում է խոսքեր հյուսիսի.
Երկաթյա շքախումբ է դա մի—
Գնում է ղոբահանդեսի։—

III

Քայլերով հաստատ, համաչափ
Ընթանում են նրանք խմբովին,
Անցնում են բուլվարի միջով,
Մոտենում են ծովին։
Խփում է ծովը ափերին,
Երկինքը գորշ է, կապար,
Ճոճվում են նավերը սևերիզ՝
Շղթայով ափին կապած։
Իսկ հեռուն—ուրիշ նավեր,
Կողերով ծանր նստած՝
Սահելով գնում են վեր—
Դեպի Պարսկաստան...
Գնում են դեպի Էնզելի,
Գնում էին դեպի Իրան։
Տանում են երկրից Լենինի
Մի հեղուկ ալ-հուրհուրան։
Նայում են նրանք նավերին
Եվ իրենց շրթերով անբառ,
Անսահման խինդը դեմքերին՝
Շշնջում են.— Թարի՛ ճամփա...

IV

Տեսնում են ապա հեռում
Եվ ուրիշ նավեր նրանք.

Մշուշում նրանց երևում,
Արևում են ափեր Գուրգուրան։
Տեսնում են նավեր ծանրակող,
Որ ջրերը խորունկ արխած՝
Գնում են դեպի Կրասնովոդսկ,
Գնում են դեպի Հաշտարխան...
Նայում են կարոտով անդուլ
Այդ հեռու ափերին նրանք.
Մի երգ է այնտեղից թնդում,
Ենդալով ողջունում նրանց։
Դալտերում անրեր ու ամա
Տեսնում են հարյուր նվաստում.
Երկաթի անտառի նման
Սերունդներ են լինում ու աճում։
Հասնում են նրանց ականջին
Վիթխարի մուրճերի ձայներ.
Շչակներ են թնդալով կանչում,
Աշխատանքն է հնչում ամենուր։
Լսում են նրանք այնտեղից
Բյուրավոր ձայների դղրդյուն.
Քարե՞նք է դարձնում հանդերից,
Մի կուրծք է ամրոց արտաքուն։
Նայում են հրճվանքը թանձրուն—
Ու թեթևն հանգով ջամբած՝
Կոմանդրոյը ճանչ է անում—
Ու բնում են նրանք ճամփան...

V

Ու, կրկին հնուն գալերով,
Քայլերով հաստատ, համաչափ,
Անցնում են նրանք Բաքիով,
Մտնում են քաղաքը նվաստած...
Տարինե՞ր են անցել կորովի,
Սարսուռ, պնացել անդարձ—
Ուրիշ է նահանջող ծովից
Մի ամբոխ՝ նոր նավթատան։

Ուր ծովն էր առաջ շառաչում
Եփվելով դուր եռանդից—
Վիշկանե՛ր են հիմա աճում,
Վիշկաներ անծայր, անթիվ։
Թնդում է երկիրը նվաճած,
Շնչում է եռանդ ու կրակ,
Անցնում են քայլերով համաչափ,
Երկաթե քայլերով նրանք։
Դեմքերով՝ վառված արևից,
Մազութով, մրով ծեփած՝
Վիշկանները կեցած բարևի
Ասում են.— Բարև՛, Ստեփա՛ն...
Աշխատում են, եռում են բոլորը.
Մրոտած դեմքեր ու ձեռներ։—
Հիացած՝ Կարմիր Կոմանդորը
Շշնջում է.— Բարև՛, ընկերնե՛ր։—
Ու մտնում են նրանք վիշկաները,
Երկաթե քայլերով շրջում.—
Դառնում են փոկերն, անիվները,
Եռանդի ձայնով շշնջում։
Շշնջում է Կարմիր Կոմանդորը
Փոկերի աղմուկի միջից—
Եվ լսում են, լսում են բոլորը
Նրա ձայնը ջինջ ու վճիտ։

VI

Եվ ասում է նա—Կոմանդորը.
— «Տոկացե՛ք, ընկերնե՛ր անդին.
Ձեր ամեն մի փորած նավթահորը
Մի քա՛յլ է ցանկալի կյանքին։
Բացվել է հորիզոնը լուսե,
Պայքարով ակոսել մի կյանք.
Ձեզ համա՛ր գիշերով մի սև
Ավազե դաշտերում մենք ընկանք։
Ջսանրվեց էինք մենք, քսանրվեց,
Բայց անթի՛վ, անթի՛վ է մեր անունը.

Ոչ գնդա՛կը մեզ սպանեց
Եվ ո՛չ էլ կսպանե հոգնությունը։
Քանի կաք, ընկերնե՛ր, քանի կաք,
Քանի կա աշխատանքը անդուլ—
Մեր երթին—վախճան չկա,
Մեր պայծառ գործին— պարտություն։
Տոկացե՛ք, ընկերնե՛ր, մենք ձեզ հե՛տ ենք,
Տոկացե՛ք, ընկերնե՛ր անդին,
Որ անցնենք այս նեղ արահետը
Եվ հասնենք ցանկալի կյանքին...»։

VII

Շշնջում է Կարմիր Կոմանդորը
Փոկերի աղմուկի միջից—
Եվ լսում են, լսում են բոլորը
Նրա ձայնը ջինջ ու վճիտ։
Ու անտես ամենքին, ինչպես ռիթմը,
Այնտեղից ելնում են նրանք,
Բողնելով սրտերում հուր շռինդ մի,
Վառելով անմար մի եռանդ։
Ու կրկին, հրճվանքով անհուն,
Գլուխը բարձր ու ուղիղ՝
Կոմանդորը ձեռքով է անում
Եվ փոխում են նրանք ուղին։
Հանդում է դեմից քամին,
Բայց անշեղ քայլերով նրանք
Անցնում են Բալախանի,
Մտնում են գործարան ու հանք։
Շրջում են այդպես ամենուր,
Մտնում են գործարան, զավոդ,
Դեմքերին իջնում է մուր,
Շորերին նստում է նավթի հոտ։
Եվ մինչև բարձրանում է օրը,
Դառնում է թնդացող ցերեկ—
Շրջում է Կարմիր Կոմանդորը,
Լինում է ամենուրեք։

Զուլվելով դարձող փոկերին,
Աղմկող ռիթմերի միջից
Խոսում է ընկերներին
Իր ձայնով հաստատ ու վճիռ։
Ու, ռիթմի նման անտես,
Զուլվելով սրտերին նրանց—
Շշնջում է, շնչում է անվերջ,
Անդադար ավյուն ու եռանդ։

VIII

Եվ ապա, երբ դառնում է օրը
Շառաչուն, թնդացող ցերեկ—
Իրարից բաժանվում են բոլորը,
Յրվում են ամենուրեք։
Մտաղբաղ, գլուխը թեքած,
Քայլերի համաչափ զարկով—
Ստեփանը գնում է Ցեկա,
Ջափարիձեն—դեպի Սովնարկոմ։
Գնում են և մյուս ընկերները,
Ամենքին անտես քայլերով
Անցնում են բոլոր փողոցները,
Մտնում են հիմնարկները բոլոր։
Սրտերում անբոց մի կրակ,
Պայքարում կոփված խոսքերով
Ամենուր շնչում են նրանք
Անդադար եռանդ ու կորով։
Աշխատանքը անտակ է, մեծ է,
Թշնամին անտես ու գժնի—
Եվ շրջում են այդպես Քսանվեցը.
Մինչև իրիկունը իջնի։
Շրջում են անվերջ, շշնջում են,
Առօրյա աշխատանքը հսկում,
Մինչև իրիկունը իջնում է
Ու վառում կրակներ ոսկուն։
Եվ իջնում է երբ իրիկունը,

Որ հոգնած սրտերին նստի—
Քսանվեցը անխոս հեռանում են,
Գնում են հանգստի։

IX

Եվ ամեն առավոտ, երբ օրը
Բարձրանում է՝ հոգսը թևին—
Շրջում է Կարմիր Կոմանդորը՝
Քսանհինգ ընկերներ հետևից։
Շրջում են բոլոր վիշկանները,
Մտնում են գործարան ու հանք—
Քսանվեց կարմիր ընկերնե՛ր են,
Քսանվեց մարտիկներ նրանք։
Զուլվելով դարձող փոկերին,
Աղմկող ռիթմերի միջից
Խոսում են ընկերներին
Ձայներով հաստատ ու վճիռ։
Ասում են նրանք.— Տոկացե՛ք,
Տոկացե՛ք, ընկերնե՛ր անդին,
Վառվել է հորիզոնը լուսե,
Առավոտը ցանկալի կյանքի։
Քանի կաք, ընկերնե՛ր, քանի կաք,
Քանի կա աշխատանքը անդուլ—
Մեր երթին — վախճան չկա,
Մեր պայծառ գործին—պարտությունն...

1927

ԲԱԼԼԱԴ ԳՆԴԱՊԵՏ ՏՈՄՍՈՆԻ, ԿՈՄԵՐԻՏ ՏՂԻ ԵՎ ԳՈՐԾԱԴՈՒԼԻ ՄԱՍԻՆ

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ—Բաքու,—
Որքա՜ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

Ես ունեմ ընկեր մի, ընկեր մի մոտիկ,
Նա մեջքին կապում է մի բարակ գոտի,
Նա գլխին դնում է հասարակ կեպի—
Իսկական մի հերոս է չգրված վեպի,
Հասարակ բանվոր է նա Բալախանում—
Փորում է նա հողը ու նավթ է հանում։

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ—Բաքու,—
Որքա՜ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

Այս վտիտ բանվորը, այս վտիտ տղան
Այն տարին եղել է համարյա խոխա։—
Այդ այն մութ տարին էր, երբ ծովի բացից
Գրավեց քաղաքը մեր— անգլիացին։
Երբ եկավ, նստեց նա ու հպեց պատին
Մեր ըմբոստ քաղաքն ու պրոլետարիատին։
Տոմսոնի կոշիկն էր քաղաքում տիրում.—
Թշնամին դաժան էր, բարեկամն—հեռու...
Բայց ե՞րբ է բանվորը լռել աշխարհում,—
Նա խուլ պայքարո՞ւմ էր, անդո՛ւլ պայքարում։

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ—Բաքու,—
Որքա՜ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

Այդ մութ օրերին էր, երբ մի օր բերին
Լցրեցին բանտերը մեր ընկերներին։
Եվ վաղ առավոտը, հանկարծ, դիմուդեմ—
Մեր վտիտ տղին այս կանչեց Կոմիտեն։
Գաղտնի Կոմիտեն մեր կանչեց ու ասաց.
«—Դու քաջ կոմերիտ ես՝ հասակդ առած,
Քո հայրը բանվոր է, ինքդ—պրոլետար.
Տեսնո՞ւմ ես թղթերը.— վերցրո՛ւ ու տա՛ր։
Մերոնք գործադուլ են պատրաստում արդեն.
Այս խոզ գնդապետը ելել է մեր դեմ—
Ուզում է ողջի՛ն նա դարձնել գերի.
Կտանես այս թղթերը նրա զորքերին,
Կմտնես փողոցները խռիվ ու բանուկ—
Իբրև թե աֆիշ ես հանգիստ բաժանում»։—

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ—Բաքու,—
Որքա՜ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

Հրճվանքից շողաց մեր քաջ տղի հոգին,
Կարծես թե նա տերը դարձավ բաղաքի.
Աչքերում ցոլաց մի խնդություն անհուն.—
Տեսեք՝ ինչ գործե՛ր են նրան վստահում...
Ճերմակ թերթիկները գրպանը խոթեց.—
Իսկի չվախի՛ թող գաղտնի Կոմիտեն։
Ու վազե՛ց, վազե՛ց նա սրտի դողոցով.
Դիմացից՝ մի վա՛շտ էր անցնում փողոցով.—
Զսպելով սրտում իր մի կրծող, մութ բան—
Մոտեցավ նրանց նա ու ասաց «Գուդբայ»...
Ասաց, ծիծաղեց նա կամաց, ինքնիրեն—
Ու հանեց թերթիկները, սկսեց ցրել...

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ—Բաքու,—
Որքա՜ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

Այս ի՜նչ քաջ տղա՛ է, այս ի՜նչ լավ ցրիչ...
Բոլոր զինվորները մեկ-մեկ վերցրին.
Սակայն հայհոյանքը կոկորդում զսպած՝

Մեր տղի գլուխը արնոտեց սպան։
Հարվածեց, գլուխը արնոտեց տղի—
Կարմիր կաթիլները թափվեցին հողին...
Բայց երկրորդ հարվածը երբ օդում շողաց—
Արդեն չքացել էր, կորել էր տղան...

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ—Բաքու,—
Որքա՜ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

Հևիհև հասավ մեր Կոմիտեն տղան.
Արնոտած երեսը հրճվանքից շողաց.
Կապեցին գլուխը, դրին անկողին.
Ուղարկող ընկերը համբուրեց տղին...
Հետո գործադո՛ւլ մեծ եղավ քաղաքում—
Ելան բանվորները—ու հաղթեց Բաքուն։
Ամբողջ պրոլետարը կանգնեց ղեմուղեմ—
Խոզուկ Տոմսոնի՛ն այն հաղթեց Կոմիտեն...

Հաղթեց գործադուլը ինգլիշ զորքերին—
Բաքվի պրոլետարը չդարձավ գերի.
Սարսեց գնդապետը մեր ուժից անթիվ—
Եվ ելան ընկերները Բայիլի բանտից...

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ—Բաքու,—
Որքա՜ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

Կեցցե՛ գործադուլը, կեցցե՛ Կոմիտեն,
Կեցցե՛ և փոքրիկ այն, կոմերկա տղեն,
Կեցցե՛ մեր պայքարը ու փամբը-արի—
Կեցցե՛ն բանվորները համայն-աշխարհի...

Քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ, քաղա՛ք իմ—Բաքու,—
Որքա՜ն հեքիաթնե՛ր կան այս գորշ քաղաքում...

1928

ԻՄ ԸՆԿԵՐ ԼԻՊՈՆ

(Քայլող մանկության, բախտախաղի, պայքարի և հերոսության մասին)

ԸՆԿԵՐ ԼԻՊՅԼԻՏ ՄԽՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մանկությունը հիշելիս՝ սիրտս դառնում է գինով...
Ես մի ընկեր ունեի՝ Լիպո անունով։

Ինչքան հիշում եմ նրան՝ աչքերիս հանդեպ
Մի նաիրյան տեսարան բացվում է հապճեպ։

Փռվում է դեմս իսկույն մի փողոց խաղաղ,
Ու փողոցի անկյունում— մի վտիտ տղա։

Նիրհում է Կարսը՝ խաղաղ ամառնամուտին...
Ինչքա՜ն վտիտ է տղան այդ ոսաբոբիկ։

Նա նստած է մի քարի— տասնամյա տղան,
Ու նիրհում է առաջին— մի ցածլիկ սեղան։

Կլոր սեղան է ցածլիկ, մեջտեղում — մի չարխ.
Բախտախաղ է մանկական—կոպեկնոց վիճակ։

Տո՛ւր մի կոպեկ, ու խփի՛ր,— թե բախտդ բանեց—
Մի տուփ լուցկի, կամ մի տուփ քորոց կհանես։

Կապուտաչյա այդ տղան, ա՜խ, ինչքա՜ն էր չար.
Մեզ հետ կռվում էր հաճախ, ծեծվում չարաչար։

Բախտը ժպտար եթե մեզ ու լուցկի հաներ—
Նա իր չարխը կծռեր ու կռիվ կաներ։

Ուներ բարի նա մի մայր՝ ծեր ու չքավոր.
Միակ նեցուկն էր նա տան՝ բոլորին պահող։

Ինչքան հիշում եմ հիմա մանկությունս ես—
Կապուտաչյա այդ տղան ելնում է իմ դեմ։

Տեսնում եմ միշտ նրան ես իր չարխի առջև... ,
Հետո օրեր անցան շատ, սլացան հապճեպ։

Ու կորցրի ես նրան։—Աշխարհում այնինչ
Եկան օրեր հուրհուրան, տարիներ անջինջ։

Պատերազմներ եղան մեծ, պայքարներ բազում—
Եվ ամբողջ կյանքը փոխվեց, ինչպես երազում։

Դասակարգեր ընկան հին ու ելան նորեր—
Օրեր վառվառ ու անգին, անմոռա՛ց օրեր...

Մի օր ելանք ու առանք Երևանը մենք—
Հետո դաշնակը շարժեց մառուզեր ու զենք։

Նահանջեցինք քաղաքից մենք լուսաբացին—
Եվ ընկերոջս նորի՛ց ես հանդիպեցի.—

Երկու ամիս էր արդեն ճակատում էինք—
Վերջին օրերը միայն մենք հանդիպեցինք։

Լիպարիտ էր դարձել նա, իմ ընկեր Լիպոն,
Արշավում էր բանակում՝ ռազմի շապիկով։

Նա զինկոմն էր մեր գնդի, մեր գնդի հոգին.
Անճանաչ էր համարյա՝ գորշ շինելն հագին։

Ճանաչեցի սակայն ես։— Մոտեցա նրան,
Ասի՝ հիշո՞ւմ ես, Լիպո՛, Կարսը նախրյան...

— Հիշո՞ւմ ես չարխը քո էն...— Նա ժպտաց ու խիստ
Ասաց— Գնում ենք էգուց. պատրաստվի՛ր, եղի՛ր։

— Դե, էն չարխը... նա չկա՛... Հիմա մենք
Ուրի՛շ չարխեր պիտի այս աշխարհում շարժենք։

—Բախտախաղ չէ սակայն սա, այլ կռիվ ու կամք.
Լուսաբացին մենք պիտի առաջանանք...

— Դաշնակը խաղ է կարծում, հանաք է անում...
Դե, կխոսենք մի լավ —Երևանում...
. . . . . .

...Լուսաբացին մենք անցանք գրոհի,—
Լուսաբացին խփեցին Լիպոյին...

Լուսաբացին նա ընկավ կռվում,
Երբ հաղթանակն էր վառվում, փռվում։

Ընկավ կռվում
Մեր զինկոմն արի.
Ընկավ Լիպոն
Երևանի
Ճանապարհին...

...Լուսաբացին Երևանը երևաց.
Լուսաբացին մենք մտանք Երևան։

Լուսաբացին մեր բանակը հաղթական
Քաղաք մտավ՝ հետը կարմիր մի դրոշ...

Լուսաբացին ո՛չ մի «ախ»—
Սակայն—

Լուսաբացին դրոշներ հուրհուրան
Իջան ընկեր Լիպարիտի
Վրա...

Խոնարհվեցին դրոշները բանակի—
Ու պառկած էր իմ ընկեր Լիպոն՝
Թաղմի կարմիր իր զգեստներն հագին։

— Փա՜ռք քեզ, փա՜ռք քեզ,
Մեր զինկոմ
Արի.—
Փառք, որ ընկար
Հաղթանակի
Բանապարհին...

. . . . . .

Հիմա Լիպոն իմ չկա, նա չկա հիմա,—
Ո՞վ չի սակայն երազում այդպիսի մի մահ...

Նա պառկած է
Կոմունարների
Այգում.
— Փա՜ռք քեզ, ընկած
Մեր քաջարի
Զինկո՛մ։

Դու պայքարի
Դրոշ եղար
Վառ մի.
— Թե տեսնեի՞ր ի՜նչ է դարձել
Մեր Բանակը
Կարմի՛ր։

Նա աշխարհում բանակն է, օ, առաջի՜ն։
Եվ ո՜չ մի ուժ չի՜ դիմանա առաջին։

Ննջի՜ր խաղաղ
Կոմունարների
Այգում.
— Փա՜ռք քեզ, ընկած
Մեր քաջարի
Զինկոմ...

1928

ԲԱԼԼԱԴ ԳԵՂՋԿԱԿԱՆ

(Աղջիկները պարում են ու երգում)

— Սիրո՜ւն աղջիկ, ո՞ւմն ես սիրում աշխարհում—
Սավետական էս մեր սիրուն աշխարհում։

— Քաղքից էկած էն տղին եմ ես սիրում,
Ճակատը բաց էն տղի՜ն եմ ես սիրում,
Աչքերը շող էն տղին եմ ես սիրում,
Մաշին քշող էն տղին եմ ես սիրում...

— Ընչի՞ համար դու չես սիրում էն տղին,
Բոյը սիրուն, բուսը սիրուն էն տղին,
Հոնքը կիտած, բեղը սրած էն տղին,
Գլխին սև-սև փափախ դրած էն տղին,
Մաուզերը կողքին կախած էն տղին,
Մեր հանդերից հեռու փախած էն տղին...

— Ընչի՞ սիրեմ բեղերը ցից էն տղին,
Հո՜ղը դնեմ սև ու անսիրտ էն տղին,
Ձեռքը տոուզ, խելքը տոուզ էն տղին,
Թալան տվող, լիրբ ու հարբուստ էն տղին,
Մաուզերին ձեռքը դրած էն տղին,
Ըռանչպարի շիվան ու լաց էն տղին...

—Էն ո՞նց եղավ, որ քեզ սիրեց էն տղին։
—Շեկ մազերի՜ս աչքը չռեց էն տղեն,
Արնոտ աչքը վրես ածեց էն տղեն,

Մաուզերից կրակ բացեց էն տղեն,
Ալևորիկ մորս ծեծեց էն տղեն,
Ջահել սրտես արուն ծծեց էն տղեն...

— Ե՞րբ պատահեց էդ բոլորը աշխարհում։
— Երբ դեռ սև էր խալխի օրը աշխարհում,
Երբ դաշնակի ձեռն էր տիրում աշխարհում,
Երբ ունևոր-տե՛րն էր տիրում աշխարհում,
Երբ ռանչպարին արև չկա՛ր աշխարհում,
Երբ ռանչպարի օրն էր խավա՛ր աշխարհում...

—Էն ո՞նց եղավ՝ քշեց հորըդ նա գեղից,
Եկավ, քշեց քաջ ախպո՛րդ նա գեղից,
Կրակ տվեց, ավար հանեց նա գեղից—
Քիչ էր մնում՝ քեզ էլ տաներ նա գեղից...

— Էդ էն կրակ, ցավ տարին էր մեր գեղում,
Երբ սև կրակ ու արին էր մեր գեղում,
Ռանչպարը թվանք առավ մեր գեղում,
Էն սև տղեն մի հավ դառավ մեր գեղում։

Հետո էն սև Սեպուն էկավ մեր գեղում,
Էկավ, փռեց կրակ ու ցավ մեր գեղում,
Ռանչպարին գերի արավ մեր գեղում,
Արունն էլավ—սելավ դառավ մեր գեղում...
— Թվանք առած՝ փախավ հերըս մեր գեղից,
Հետը փախավ քաջ ախպերըս մեր գեղից,
Ինչքան ռանչպար-տղամարդ կար—մեր գեղից
Ելան գացին Ղազախու սար մեր գեղից...

— Հետո էկավ, գեղը տիրեց էն տղեն,
Շեկ մազերիս աչքը չռեց էն տղեն,
Արնոտ աչքը վրես ածեց էն տղեն,
Մաուզերից կրակ բացեց էն տղեն,
Ալևորիկ մորս ծեծեց էն տղեն,
Ջահել սրտես արուն ծծեց էն տղեն...

— Հետո էկան վառման օրեր, հետո կռվի օրեր էկան,
Գեղից գացած իմ ախպերներ պոպոզավոր, հուրհեր էկան.
Ալևորիկ իմ հե՛րն էկավ,
Իմ բայլշևիկ ախպե՛րն էկավ...

—Էն օրվանից, երբ ախպերս էկավ գեղ,
Երբ բայլշևիկ, ռանչպար հերս էկավ գեղ—
Կարմիր գարուն, կանաչ արև էկավ գեղ,
Բանվոր տղից, քաղքից բարև էկավ գեղ...
Մաշին նստած՝ բանվոր տղեն էկավ գեղ,—
Ոնց որ գարուն մի հրեղեն—էկավ գեղ...

— Ընչի՞ համար էլ ես սիրեմ էն տղին,
Մազերը սև, աչքերը սև էն տղին,
Հոնքը կիտած, բեղը սրած էն տղին,
Գլխին սև-սև փափախ դրած էն տղին,
Մաուզերը կողքից կախած էն տղին,
Մեր հանդերից հեռու փախած էն տղին...

— Իմ ուղածն է քաղքից էկած էն տղեն,
Աչքերը բաց ու սիրտը բաց էն տղեն,
Գլխին կաշվե գլխարկ դրած էն տղեն,
Ռանչպարի սրտով սիրած էն տղեն...

— Ես էն տղի տեսքն եմ սիրում աշխարհում
Մաշին քշող ձեռքն եմ սիրում աշխարհում,
Նրա անուշ երգն եմ սիրում աշխարհում,
Սավետական էս մեր սիրուն աշխարհում...

1928

ԽՄԲԱՊԵՏ ՇԱՎԱՐՇԸ

I

Փողոցում լռություն էր ու թանձր խավար,
Առավոտը մոտ էր, բայց դեռ չէր բացվում—
Իսկ հյուրանոցում խմբապետ Շավարշը
Խմում էր, խմում ու մուժով լցվում։
Խմբապետ Շավարշը։— Մի հաղթ տղամարդ,
Երևսին՝ վերից վար՝ դաշույնի հարված.
Այդ հարվածն համարում էր իր դեմքի զարդը՝
Մանավանդ, երբ դժդոհ էր ու մի քիչ հարբած։
Այդ հարվածն— ու բեղերը։— Գեղին, ոլորած,
Երկու խուրձ հրեղեն, երկու առու,
Որ, ծանր, իջնելով կզակի վրա—
Նրան տալիս էին «քաջի» համարում։
Եվ մոտալ աչքերը՝ բիբերում արյուն,
Եվ խիտ հոնքերի գերանդին...
Նա իրեն համարում էր— անհաղթ արու,
Որպես հրաշք՝ ելած հայ ցեղի արգանդից։
Շավարշը խմում էր։— Լուռ, մոտալ բազմած,
Սեղանի գլուխը, որպես ամպ՝ ծանր.
Եվ ամեն մի բաժակը քամած
Նրան դարձնում էր ավելի համր։
Մենակ չէր Շավարշը։— Նրա հետ նստած
Նրա քաջ խոխեքը, իր խմբի տղերքը՝
Իրենց խմբապետի հոչակին վստահ՝
Անվերջ խմում էին— ու հոսում էր երգը։
Իգդիրցի Եգորը, Ղարսեցի Հարոն,

Մշեցի Թաթիկը ու Սաքոն Ղաչաղ,
Որոնցից վախենում էր անգամ ինքը— Դրոն,
Որ իրենց կանչել էր առավոտը վաղ։
Նա նրանց կանչել էր առավոտ վեցին,
Շավարշին կարգադրել էր, որ բերի իր խումբը.
Գիտեին, որ ուզում է ուղարկի գործի,—
Եվ ահա Շավարշը մինչև այդ—խմում էր։
Շավարշը մոտալ էր։ Մի մթին կասկած
Օձի պես կրծում էր նրա սիրտը.
Սեղանի գլուխը մութ, մոտալ բազմած՝
Անդադար խմում էր ու հայացքը— բիրտ էր։
— Կանչել է Դրոն առավոտ վեցին,—
Մտածում էր Շավարշը,— բայց ինչո՞ւ է կանչել.
Ասաց՝ զրկելու է կարևոր գործի—
Եվ թողեց, որ կասկածը մինչև լույս տանջե
Եվ ուտի իր սիրտը։— Ինչո՞ւ չասաց,
Թե այդ ի՞նչ գործի է ուղարկում նա.
Ուղեղում վիստում էր կասկած հաղար.
Մտածում էր՝ գնա՞, թե չգնա։
Ո՞վ գիտե Դրոչին։ Այո։ Ո՞վ գիտե։
Կարող է սարքել հաղար դավ։ Դրոն։
Դժվար է կռվել հետը։
Զուզեց խաթրով անի—կանի գոռոզ։
Կհանի իր վրեժը։— Երեկ չէ՞ր մթին,
Որ Շավարշն սպառնաց շտաբը բանդել։
Ինչո՞ւ— Որովհետև
Ռուսահայ սպաներն են իշխում այնտեղ։
Ռուսացած սպաները։— Օսլայած տղերք,
Ձեռքերին՝ ձեռնոցներ, դեմքերին՝ պուդրա՛։
Ո՛չ զենք են տեսել, ո՛չ կռիվ։— Մերկ
Աղջիկներ են միայն տեսել դրանք...
Եվ դրանք ահա, այդ լակոտները,
Որոնց ինքը կարող է տաներ բաղանիք—
Ուզում են, որ խմբապետները
Իրենց ձեռքին դառնան կուլ խաղալիք։
Ուզում են տիրանան երկրին, բանին,
Հաստատեն ռուսացած մի իշխանություն.

Բայց ո՞նց նա կռանա դրանց տակին.
Կնի՞կ է ինքը, թե կատո՞ւ...
Իսկ Դրոն, իգդիրցի այդ խմբապետը,
Որ եղել է հերոս, անվախ տեռորիստ
Դրոն— նրանց հետ է
Եվ ուզում է դառնա մինիստր։
Ռազմական մինիստր։— Լա՛վ։ Լա՛վ։
Հետո՞։ Ի՞նչ պիտի անի հետո նա։
Դե, որ մինիստր դառավ—
Կարող է բոլորին տա գետնովը։
Կարող է հավաքի իգդիրցիներին,
Բռնոտի բոլորին, զինաթափի,
Սպանի, ջանդակները շներին քցի,
Որ ծաղկի իր շտաբը...
Խռնվեցին մտքերը Շավարշի գլխում.
Գլուխը ծանրացավ. լցրեց ու խմեց։
Սրտում մրմռացող կասկածը խուլ
Դառնում էր հետզհետե մեծ։
Դե, Դրոն— թագավոր է։— Դեռ երեկ էր
Սպանեց իր տղերքից երկուսին,
Որովհետև այդ տղերքը
Հարբած՝ թքել էին մեկի երեսին։
Կառքից իջեցրել էին ու դեմքին թքել.
Հետո դուրս էր եկել, որ մինիստր է...
Դե, տղերքը— հարբած են եղել.
Հարբածին— էլ ի՞նչ մինիստր։
Թքել էին դեմքին ու նստել նրա կառքը,
Մինիստրի կառքը,— վա՛յ, հարամզադե՛ք...
Բայց հո չկործանվե՞ց աշխարքը.
Մինիստրը աշխա՞րք էր ազատել...
Իհարկե, սխալ էր։ Իհարկե, Դրոն
Վարվել էր անվայել, վարվել էր տմարդի.
Խաբելով կանչել էր նրանց միլիցիատուն—
Այդպես չի վարվի տղամարդը։
Խաբելով կանչել էր, թե կների.
Տղերքն էլ եկել էին,— և ահա միամիտ
Նրանց հանել էին կամերից

Ու կռնակից խփել... Միայն մի
Ինչ-որ հարբած մարդու ներկայությամբ...
Սուս ու փուս։ Գաղտագողի։ Անձեն։
Ո՞վ գիտե Դրոյին... Ինչքա՞ն է նա
Այդպես գաղտագողի հնձել...
Մեկը— Թևիկն էր, Եգորի եղբայրը.
Եգորը Դրոյին կների՞։— Ոչ։—
Ահա նստել իր մոտ— խմում է անդադար
Ու հարբած՝ համբուրում է ընկերոջը—
Ղարսեցի Հարոյին։— Լա՛վ։ Լա՛վ։
Եգորը իր մարդն է այսուհետև։
Եղբոր պես լինելու է մոտիկ, հալալ,
Նույնիսկ կովեն երբ։
Ա՛յ քեզ մինիստր... Ա՛յ քեզ Դրո։
Ա՛յ քեզ խմբապետ քաջ...
Ջեռքը խփեց սեղանին Շավարշը—
Հողը դողաց։
Խփեց ու խմեց։ Նորից խմեց։ Մոայլ։
Ու ոչ մի բառ չասաց։ Գլուխը
Ծանր՝ դրեց կրկին իր բռունցքի վրա.
Այդպես անշարժ — մնաց։ Իսկ շուրջը աղմուկ էր։
Երգում էր Ղաչաղը։— Բայաթի՞ էր, թե ե՞րգ։
Թուրքերեն, որ լսել էր Շավարշը.— ե՞րբ։
Գլխում ծանրացել էր մի թանձր մեղ.
Սրտում խլրտում էր կասկածը դեռ։
Ուզում էր բարձրանա, թքի հացին,
Իրենց կերած հացին. շուռ տա սեղանը։—
Արդեն մոտենում էր լուսաբացը.
Իսկ նա դեռ տատանվում էր. չդիտեր,
Թե կատարի՞ արդյոք Դրոյի հրամանը։
Ուզում էր տասնոցը հանի, կրակի,
Բայց իրեն զսպում էր. մտածում էր։
Վերջապես տղամարդի վարտիք է հագին,
Երակներում— արյուն է, և ոչ թե —մածուն է։
Դե, Դրոն թագավոր է։— Ու թո՛ղ լինի։
Բայց հո չի՞ կարող այդ մարդը
Ինչ ուզենա—անի.—

Բա իրա՞— Շավարշի՞— աշիրա՞թը։
Իր հետ է աշիրաթը։— Շավարշը հիշեց.
Ուղեղում բացվեց չայնանիստ—
Ալագյազը... դուման... անասող գիշեր...
Շների ոռնոց անհանգիստ...
Անցնում են գյուղերից։ Առջևից— տավարը՝
Հայկական, թուրքական գյուղերից քշած։
Գյուղերում — ընկել է հավարը.
Լաչա՞կ էր էդ գյուղերի գլխին քաշած...
Ճռճռում են սայլերը. ձիերը դոփում։
Սայլերին—երեխեք, կնանիք. բեռ...
Դումանը շոյող է, ինչպես զեփյուռ,
Ձիերի դոփյունը, ինչպես երգ...
Առջևից — տավարը, հետևից—աշիրաթը՝
Շավարշի աշիրաթը.— խնուսցիներ,
Որոնց տեղանան էր արել—
Պատերազմի թաթը—
Ու աշխարհում ցրել։
Շատերը՝ կորցրած տուն, տեղ,
Ընտանիք, երեխեք, հայր, մայր,—
Այժմ պատրաստ էին ամեն ինչ քանդել
Մի լավ ձիու, կամ մի բեռ այլուրի համար։
Ով էլ հանդիպեր, ումն էլ լիներ.
Ռուսի, թուրքի, հայի— միևնույն չէ՞։
Միայն թե քաղցից չոռնար կինը.
Միայն թե երեխեն շունչը չփչեր։
Խնուսից— Ալաշկերտ։ Հետո Ղարս։
Ցուրտ, մեղկ, սով, տիֆ։
Ինչքա՞ն, ինչքա՞ն մնռան,
Քաղցից, կամ հետ չեկան Ֆրոնտից։
Ամբողջ ճանապարհը— դիակներ, մահ։
Ով որ մնաց՝ մնաց։ Հասան վերջապես
Այն ռսի երկիրը, որի համար
Այնքան արյուն էին իրենք թափել...
Հասան։ Թափվեցին կիսամերկ։ Եվ ի՞նչ
Մնացին երկնքի տակ բաց,
Ցուրտը հետևից, քաղցն առջևից—

Ոչ օգնություն, ոչ բան։
«Ռուսահայ եղբայրնե՞րը»... հա՞-հա՞...
Ընդունեցին— թուրքից էլ վատ, այո՞.
«Ռուսահայ եղբայրնե՞րը»... «Հայրենի՞ք». «Հայ»։
Կուշտ. ականջներս դնչ. ապահով։
Բայց ինչո՞ւ ընդունեցին այդքան վա՞տ, վա՞տ,
Օտարի, թշնամու, գրողի պես.
Դե, հայեր են լիրբ, մուխանաթ,—
Մտածում էր Շավարշը— հայեր են գեշ,
Այլասերված հայեր, ռսացած.— ոչ
Կովի երես տեսած, ոչ կովի ահ.
Եվ դա չէ՞ր պատճառը, որ
Ոչխարների նման սառսափահար,
Նրանք փախան Ֆրոնտից, տվին էրզրումը,
Հետո Ղարսն, Ալեքսոլը... վա՛յ ձեզ, հայե՛ր...
Շավարշի գլուխը մտքերից եռում էր.
Շավարշը դառը ծիծաղեց.
Խմեց. ու հոսեցին կրկին մտքերը—
Իրարից ավելի գզվար ու ծանր,—
Իսկ Ղաչաղը երգում էր, դեռ երգում էր,
Հոսում էր դառնությունը համբ...
Եվ հանկարծ Շավարշը —այնքա՞ն պարզ—
Կարծես դեմը լիներ, կարծես կենդանի—
Հիշեց.— առավոտը բացվում էր, թարմ,—
Շրջապատել էին թուրքական թալինը։
Երեք օր էր արդեն— կռվում էին.
Շրջապատել էին գյուղը չորս կողմից խիտ.
Մարմանդ լուսաբաց էր, երբ
Գյուղը զարթնեց հանկարծ թանձր ծխից,—
Շավարշի տղերքը դիշերը
Վառել էին գյուղը մի ծերից— ու հիմա
Չորս կողմից խուժեցին նրանք ներս՝
Փռելով իրենց շուրջը ահ, մա՛հ, մա՛հ։
Աղմուկ, ճիչ, լաց, սմբակների շռինդ.
Ինքը, նստած ձին, ձեռքին մաուզեր,
Փայփայը թեք դրած, մի ձեռքով պինդ
Դրված ձիու բաշը՝ արշավում էր...

Եվ հանկարծ... ծառս եղավ Շավարշի ձին. ի՞նչ,
Ի՞նչ զարմանալի հրաշք, Շավա՜րշ...
Դիմացից դուրս թռավ մի հրեշտակ, չէ՛. կի՛ն.
Ձին սանձեց Շավարշը — ու մնաց։
Ջաննաթի փերի էր, կին չէ՛ր, չէ՛.
Չէր տեսել Շավարշը այդպիսի կին.
Սարսափած աչքերով կինը նայեց շուրջը—
Աչքերը սև էին, սև ու ջինջ։
Սև մազերը թափված ուսերին, կուրծքը բաց,
Ալաբաստրե, ճերմակ ձյունների նման...
Շողշողում էր կուրծքը, ինչպես լուսաբացին
Ալագյազը, երբ ցնդում է դումանը։
Շավարշը սանձել էր ձին, քարացել.
Ապդեցիկ էր տեսքը՝ հագի
Կաշվե սև զգեստը, ձին տակի,
Որ սարսափահար ծառացել՝
Խփում էր մի ոտքը հողին, վրնջում էր,
Աչքերից թափում էր բոց, շանթ, ադամանդ, ծուխ,—
Շավարշը լսում էր իր ձիու վրնջյունը
Եվ ուռչում էր կուրծքը, ուռչո՛ւմ, ուռչո՛ւմ, ուռչո՛ւմ...
Տեսարանը շքեղ էր. ինքը—զարհուրելի,
Ծառացած կնոջ առջև, ինչպես սուրբ Գևորգ.
Ու կնոջ աչքերը՝ սարսափով լի,
Աչքերը, որպես գիշեր։ Ու թվում էր— ցնորք է։
Մի վայրկյան էր միայն, որ տևեց
Երկար, ինչպես դարը։— Շավարշը մի պահ միայն
Ուզում էր բաց թողնել ձին հետևից,
Վախենալով, որ կինը կանէանա,
Կտեսլանա հանկարծ, կցնդի,
Կդառնա գարնանային մշուշ, ամպ, ցող—
Ու կմնա լոկ ինքը ու ձին՝
Գյուղամիջին ահից խրխնջացող.—
Բայց պատահեց հանկարծ զարմանալի.
Զարմանալի մի բան.— Կինը, հևիհև,
Ինչպես ճերմակ փրփուր, ճերմակ ալիք—
Փլվեց, փռվեց Շավարշի նժույգի առջևը.—
«Կուրբա՜ն»,— կանչեց կինը.—«կուրբա՜ն սյանի,

Սյա՜ն մյանքում իգիթքում, սյա՜ն մյանի ալ.
Մյան սյավարքում սյանի, իգիթ էրմյանի»—
Ձայնը՝ աղբրի՜ նման, աղբրի՜ նման զուլալ...
Ի՞նչ էր, ի՞նչ էր. ի՞նչ էր. ցնո՞րք էր, զառանցա՞նք, տե՞նդ.
(Քրտինքի մեջ կորած ձին
Լիզում էր թաց լնդերքը
Եվ հազիվ էր դիմանում սանձին)—
Երբ դիմացից հանկարծ, դիմացի խրճիթից
Դուրս թռավ մի զինվոր՝ ձեռքին դաշույն,—
Հետո հիշում է Շավարշը մի զարհուրելի ճիչ,
Հետո մշո՛ւշ, մշո՛ւշ, մշո՛ւշ...
— Ձե՛մ տա,— գոռաց զինվորը,— չեմ տա, Շավարշ. իմն է.—
Իմ ձեռքերից փախավ շան քածը...
Վրա պրծավ մռայլ,— ու շողշողաց դաշույնը,
Ու Շավարշին թվաց, թե հարբած է։—
Ու հիշում է Շավարշը— կինը՝ վերքը կողքին՝
Թավալվում է իր կարմիր արյան մեջ—և—
Իր մաուզերի շո՛ղքը, իր մաուզերի շո՛ղքը,
Ու զինվորի դիակը— իր ձիու սմբակների առջև...

. . . . . .

Այն ի՞նչ էր, ի՞նչ էր, ի՞նչ էր, ցնո՞րք էր, զառանցա՞նք, տե՞նդ.
Խենթի պես, նրանց դիակների վրայով, քշեց իր ձին,
Այրեց, ջարդեց, թափեց, քանդեց, քանդեց,
Գյուղը դաշտ դարձրեց կարմիր հնձի։
Կոտորեց. չհարցրեց ծեր, կին, աղջիկ, մանուկ,—
Մինչև ուշ գիշեր, մինչև ուշ գիշեր ասպատակեց.
Հետո լուսինը կարծես արյան մեջ էր լողանում,
Իսկ գյուղը դիակ էր կարծես՝ կապված իր ձիու ասպանդակից։
Ուղեղում մշուշ էր— կարմիր, ալ, արյունարբու,
Ուղեղում թուրք կնոջ մարմինը վառվում էր, որպես վերք.
Հետո հարբեց Շավարշը. գայլը արյունով է հարբում,
Իսկ Շավարշը— մի գայլ էր, որ կորցրել էր մի էգ—
Մի սպիտակ, մի մաքուր, մի հրաշալի...

. . . . . Շավարշը

Ուշացքը խլեց սեղանին. խմեց. և երբ
Սրբեց բեղերը բուունցքով— հիշեց իր ձիու բաշը,
Իսկ Ղաչաղը երգում էր դեռ։

II

Արդեն փողոցում ցրվում էր խավարը,
Մոտենում էր առավոտը, պղտոր բացվում,—
Իսկ խմբապետ Շավարշը
Դեռ խմում էր, խմում էր ումմուժալ լցվում։
Տղերքն հարբել էին։—Թաթիկը՝
Սիրեկանի նման գրկած Հարոյին՝
Համբուրում էր նրան հարյուրապատիկ—
Իսկ Եզորը հայհոյում էր Գրոյին։
Շավարշը մտածում էր։— Մտքերի Ոլը,
Որ այնպես տարածվել էր Ղաչաղի երգից՝
Թողնելով հիշողության, անցյալի ելը՝
Գրոյի շուրջը ոլորվեց կրկին։
Արդեն բացվում էր առավոտը.— արդեն
Բաց-կարմիր թանաքի նման Երևանի վրա
Թափվում էր հորանջող ու մռլած ույդը—
Եվ Եզորի հայհոյանքն էր ողջունում նրան,
Միայն այդ հայհոյանքը։— Ջաղաքում դեռ
Մարդիկ քնած էին ծանր, տաղնապալի քնով,
Եվ բացվող առավոտը անտանելի մի բեռ էր,
Որ իջնում էր կրկին իր անմի-թիթար հունով.—
Ջաղաքը դեռ քնած էր լուռ, համր, ծանր,
Ներքևը միայն, հյուրանոցի առջևը, փողոցում
Կանացի՞, մանկակա՞ն, թե՞ պառավային մի ձայն
Վնգստալով օգն էր սղոցում.—
Շավարշը մտածում էր. հարկավոր էր իսկույն որոշել՝
Հարկավոր էր գնալ, կամ չգնալ. մնում էր
Մի-երկու ժամ միայն— Եվ նա որոշեց.—
Նա կգնա, բայց մենակ. խումբը՝
Կազմ, պատրաստ՝ կոպասի քաղաքից դուրս,
Փարաքարի մոտի այգիներում. հետո—
Հետո հայտնի կանի։— Ջինվորներից լոկ չորսը
Կգնան իր հետ առավոտուն.—
Եզորը, Ղաչաղը, Թաթիկը, Հարոն.—
Հենց սրանք— բավական են. կարո՞ղ է՝
Թող հարձակվի Դոան.—

Բայց ո՞վ է... նրա ձեռքը... պահողը...
Կարող է բանտարկի։ Կարող է հանկարծ
Սպանի տղերքից սրան, կամ նրան։
Ոլորեց Շավարշը իր պղտոր հայացքը—
Հիշեց արյունոտ այն տեսարանը.—
Միլիցիատան բակում, ավազին,
Իրար կողքի ընկած—երկու դիակ.
Իգդիրցի Թևիկը և Աղասին՝
Լուռ, արնաշաղախ. միայն
Ծոծրակների վրա— փոքրիկ վերքեր.
Խփված էր կոնակից... Այդպե՛ս։—
Դեպի մաուզերը տարավ
Շավարշը իր ձեռքը.
Արյունը գլուխը խփեց—
Հարբեց...

. . . . . .

Դա ո՞չ թե քամին է փողոցում շաչում,
Եվ ոչ էլ հրթիռը հրդեհում խավարը,—
Իր խմբի տղերանց հետ դա հյուրանոցում
Խմում, ազմկում է խմբապետ Շավարշը։
Այդ նա էր, որ տարավ ձեռքը մաուզերին,
Հանեց. քաշեց.— և վաղ առավոտվա մեջ
Ջարագուշակ, դաժան երգեց մաուզերը
Արյան, մուժի, մահի, ասպատակի երգ...
Հետո ձայնակցեցին նրան մյուսները՝
Եզորը, Թաթիկը, Ղաչաղ Սաքոն,—
Իսկ քաղաքը, սմքած, դեռ քնել էր
Ու զառանցում էր մաուզերի կրակոց։—
Ինչպես տիֆով հիվանդի զառանցանքում հրե,
Նախճիրի պես բացվող առավոտվա ֆոնին
Դծելով տագնապի հնչնագրեր—
Երգում էր մաուզերի սիմֆոնին։
Կրակում էին տղերքը— բաց պատուհանից.
Իրար կողքի կանգնած, հայացքները դեպի լուսաբացը.
Համազարկը թռչում էր տանիքից—տանիք,
Առավոտվա միջով, որ նրանց պես հարբած էր։
Պղտոր առավոտվա միջով, առավոտվա մեգին,

Քաղաքի վրայով, որ զառանցում էր,—
Սավառնում էր խմբապետ Շավարշի հոգին,
Հարբած, մռայլ, դաժան, ինչպես ձյունը,
Որ բուք դարձած՝ խեղդում է, տրորում,
Դարձնում աշխարհը, կյանքը, ամեն ինչ—տենդ.
Կրակում էր խումբը ու նայում հեռուն՝ աչքերում
Արյան, մեգի, մահի, տագնապի նախճիրներ...
Շուռ եկավ հետո Շավարշը. մաուզերը ձեռին—
— Գնա՛նք,— գոռաց տղերքին,— ու պրծավ դուրս.
Խոպոտ՝ հորդեց կոկորդից քրքիջը,
Հետո— հայհոյանքը. հետո—
—Եգո՛ր,— կանչեց,— լսո՞ւմ ես. մեզ Դրոն ուզել է,
Ուզում է ուղարկի երկինք՝ եղբայրներիդ քով...
Ու կրկին շառաչեց Շավարշի մաուզերը—
Ասպատակի, մահի, արյան երգով։
Ահռելի էր Շավարշը. ձեռքին մաուզեր՝
Օրորվելով, գնում էր մեգի միջից.
Հետևից— իր տղերքը, բոլորի ձեռքին— զենք,
Բոլորն էլ— իր նման հարբած։— Առաջից
Քայլում էր, որպես սպառնալիք, ինքը. կողքկողք
Ընկնելով— գնում էր. այրում էր սիրտը տապը.
Հետո բռնեց նրան մի խեղդող դող.
Գլուխը շուռ եկավ. սիրտը թափեց—
Հենց այնտեղ, փողոցի մայթերին։— Տղերքը
Բռնել էին նրան։—Փողոցում,
Ուր դադարել էր արդեն մաուզերների երգը—
Մի ծանր խոպոց էր միայն օդը սղոցում։—
Մեկը, մոտիկ ընկած, մեռնում էր երևի.
Կի՞ն էր, տղամա՞րդ էր, երեխա՞,—անհայտ էր.
Ո՞ւմ ինչ, թե նաիրյան ծագող արևին
Խոպոցով էր դիմավորում այդ մարդը։—
Հանգստացավ Շավարշը։— Եվ երբ,
Բեղերը սրբելով, անցավ առաջ— երկու
Զառանցանքի նման երեխաներ,
Աչքերով ամեհի, ահարկու—
Ինչպես շները սովամահ, դաշտում դեգերող,
Հղի կանանց նման փորներն ուռած,

Մագիլների նման ձեռքերով
Հարձակվեցին Շավարշի փսխածի վրա—
Եվ սկսեցին լափել ագահաբար՝ ընկած
Երեսնիվայր մայթին, ինչպես շներ,—
Ու նրանց աչքերում պսպղում էր քաղցը՝
Անասնական, անեզրական, անեզր...

. . . . . .

. . . . . .

Գնում էր փողոցով խմբապետ Շավարշը,
Հետևից—տղերքը, իր նման հարբած։
Արդեն արթնանում էր զառանցող քաղաքը,
Արդեն առավոտ էր դառնում լուսաբացը։
Տներից ելնելով հետզհետե՝ մարդիկ
Անխոս գնում էին՝ դեմքերին հոգս։—
Անցնում էր Շավարշը, իր խմբով, մայթից,
Տարածում էր շուրջը զարհուրանք, դող։
Եվ հանկարծ—կրկին նա քաշեց մաուզերը,
Առաջին հանդիպած մարդուն հրամայեց.
— Դեպի պա՛տը ռեխդ, դե շո՛ւռ տուր երեսդ,
Տեսնո՞ւմ ես՝ անցնում եմ մայթից—ահա ե՛ս։—
— Շավա՛րշն է անցնողը։— Տղերքը զվարթ
Հռհռացին բարձր, հայհոյեց Հարոն,—
Ու շուռ եկավ մարդը, նայեց դեպի պատը,
Եվ անցավ Շավարշը՝ հայացքը աչքերին։
Եվ հետո —ինչքան նա հանդիպեց մարդու՝
Բոլորին հրամայեց նայել պատին.
Բոլորի դեմքերին նա վախ էր կարդում
Եվ դա համարում էր— բարձր պատիվ,
Եվ այդ պատճառով էլ— չափազանց հպարտ էր։
Մի ամբողջ փողոց նա այդպես անցավ,
Մինչև հանդիպեց մի մարդու,
Որ երեսը շրջել չկամեցավ...
— Երե՛սդ,—գոռաց Շավարշը,— դեպի պատը,
Թե չէ՝ ռեխ-մռեխդ հիմի կշարդեմ...—
Բայց այդ զարմանալի մարդը
Մաուզերը քաշեց— ու կանգնեց նրա դեմ։
Շավարշը շվարեց. երա՞զ էր, տե՞նդ,—

Ուզեց մաուզերի բլթակը քաշի,
Երբ հանկարծ հետևից մի ծանր ձեռք
Բռունցքով խփեց Շավարշին։
Շավարշը օրորվեց, ընկավ մայթին.
Փողոցը երերաց աչքերում. մթնեց.
Ու թվաց Շավարշին, թե այդ մարդը
Քաշեց իր ուղեղում երկաթե պատնեշ...
Լսեց էլ Շավարշը իր խմբի տղերանց
Մաուզերների ձայնը և չզգաց անգամ,
Թե ինչպես Եզորը հանկարծ
Քարի պես ծանրածանր— իր վրա ընկավ։
Ջտեսավ Շավարշը և այն, թե հետո
Իր խմբի մնացորդը ոնց նահանջեց.
Լոկ թվում էր նրան, թե մեկը երկաթով
Այրում է իր ականջը։
Եվ տանը միայն, երբ աչքերը բացեց,
Ուշքի եկավ մի քիչ—հասկացավ, որ այդ մարդը,
Որին հանդիպել էր— եղել է իր մեծ
Խաչեղբայր—խմբապետ Սմբատը։

. . . . . .

. . . . . .

1938

ԲՈՐԻՍ ԶՆԵԼԱՉԵ

Где он, бронзы звон, или гранита грань...
Вл. Маяковский

Ահավասի՜կ այստեղ, Ալեքսանդրյան այգում,
Որ կոչվում է հիմա 26-ի անվան,—
Այս պատանին,
Անպարտ այս դեկավարը,
Պատվանդանի վրա բրոնզացել է անմահ։—

Հայացքը դեմն հառած,
Դեպի անհուն հեռուն,
Կուրծքը տված գալիք մրրիկների թափին,
Հոկտեմբերի հրդեհը իր բիբերում՝
Նա նայում է հեռուն,
Հեռուն,
Ուր ծագում է մի նոր, անեզրական արփի։

Նա կանգնել է հաստատ, այդ պատանին,—
Բրոնզացել է, որպես երիտասարդ տիտան.—

Նա հիմնադիրն է Վրաստանի
Լենինյան
Կոմ—
Երիտ—
Միության։

Հիսուն հազար բրոնզյա ընկերների ձեռքով
Այս երգեցիկ բրոնզում իր ընթացքը դրած—
Հերոսության, փառքի մի երեկո
Նա բարձրացավ այս վեհ պատվանդանի վրա։—

Նա բարձրացավ հաստատ, ինքնավստահ,
Այնպես, ինչպես կյանքում դեռ ո՛չ մի ծեր,
Լեգենդական հերոս՝ իր նժույգին նստած՝
Փառքի պատվանդանին չի՛ բարձրացել։—

Ո՞ւր եք դուք, հերոսնե՛ր, որ ձեր փառքին վստահ,
Պատմության քառուղիներով, որպես լեգենդ,
Անցնում էիք՝ մարմարյա նժույգներին նստած՝
Գեղեցիկ ու սնամեջ ձեր փառքի հետ...

Ո՞ւր եք դուք, ոսկյա Աքիլլե՛ս և Պատրոկլե՛ս մարմար,
Ու արագատոն Ուլիս— հովիվների արքա...
Ահավասի՛կ բրոնզյա այս Աքիլլեսը,
Որի Հոմերոսը դեռ պիտի գա։—

Դուք կործանեցիք հեքիաթի Տրովադա՛ն,
Եվ երգեցին դարեր ձեր գործերը ռազմի,—
Ահավասի՛կ սակայն մեր նո՛ր Աքիլլեսը,
Որ կործանեց Տրովադան կապիտալիզմի...

Նա կանգնած է հաստատ։ Կուրծքը բաց,
Դեմքը քամուն տված, հայացքն հեռուն՝
Նա նայում է պայծառ, ինչպես լուսաբացը
Իր հայրենի, հանդուգն իր լեռներում։

Նա կանգնած է անպարտ։— Իր բրոնզաձույլ սրտով
Նա լսում է տրոփը սրտերի բյուր,—
Նա տեսնում է իր դեմ՝ իր նման
Բրոնզադեմ պատանիների երթը—
Այստեղ, իր շուրջը— և ամենո՛ւր։—

Նրա բանակը մե՛ծ է։— Վրաստանից մինչև
Աֆղանստան, մինչ Հնդկաստան ու Ճավա՛,
Մինչև Հոնգ-Կոնգ, մինչև Աշխարհը նոր—
Օ, ամենո՛ւր, ուր կա աշխատանքի բանակ՝
Պայքարի է ելնում ամենուրեք անահ
Նրա բանակն ահա երկաթակուռ։—

Այս չէ՞ պատճառն արդյոք, որ երգում է բրոնզը,
Որ զնգում է բրոնզը, որպես քայլերգ,—
Այս զնգոցի ռիթմով պայքարներում գալիք
Միլիոնավոր բրոնզյա պատանիներ՝ պիտի
Դեպի գրոհ քայլեն...

Երբ բարձրանում էր նա՝ իր բրոնզը երգում էր
Ընկերների ոսկյա երակներում,—
Եվ այդ պահից ահա նա անդադար երգում է,
Տարածվում է երգը հեռու.—
Երգում է բրոնզը
Հիմա իր լեռներում,
Երգում է հանքերո՛ւմ,
Գործարաններո՛ւմ,
Հնգամյակի համար գոյամարտի ելած
Կոմերիտ անթի՛վ գնդերում,
Չինաստանի կարմիր դիրքերում,
Յունգշտուրմի երկաթյա շարքերում։—
Երգում է բրոնզը
Երկրից—երկիր,—
Բրոնզը երգում է
Հերոսության երգեր...

Օ, ե՞րբ է զնգացել ջահելությունն այսպես,
Ինչպես այս բրոնզյա պատանին—
Այստե՛ղ—
Կանգնած գրանիտյա իր պատվանդանին...

Ահավասիկ, պոե՛տ, բրոնզի զնգոցը,
Որ դեռ երկար պիտի այստեղ հնչե
Եվ աշխարհի բոլո՛ր, բոլո՛ր գոտիներից
Միլիոնավոր բրոնզյա պատանիների
Հերոսության, փառքի ու պայքարի կանչե։—
Նա և՛ կյանք է, և՛ երգ է, և՛ լեգենդ,—
Այսպե՛ս է զնգում բրոնզը, պոե՛տ։—

1931

1922
«ՊՈԵԶՈԶՈՒՌՆԱ» ՇԱՐՔԻՑ

ԳՅՈՒՄՐԻ

Սիրելի Արտաշես Տեր-Մարտիրոսյանին, գյումրեցի պոետին

I

Դեռ երգում է այստեղ զուռնան,
Դեռ դհոլը սիրտ է հուզում։
Թող հոգիդ դառնորեն ոռնա—
Միևնույնն է՝ կմեռնի անլիզու։

Օ, զուռնա՛, զուռնա՛, զուռնա՛...
Տխրություն։
Թախիծ դեղին։
Օրերի ցնորք կդառնան,
Աշխարհը—անդուռ փակուղի։

Ստվերի պես կանցնես անհետ,
Ստվերի պես կյանքդ կմարի,
Ու, մռայլ, կխնդա մահիդ—
Գյումրին...

II

Դու մի օր կանցնես այստեղից։
Կուղեկցե քեզ երգը զուռնայի։
Ու Գյումրին, գորշ ու դեղին,
Անտարբեր, մռայլ կնայի։

Դու կանցնես հարբած ու անտարբեր,
Քայլերով տարտամ, անիմաստ։
Բուլվարը մշուշ կպատռե,
Կժպտա «Ապոլլո» սինեմատ։

Ու, ծույլ, աչքերի տակով
Կհեգնե կյումրեցի Վադոն
Օրերիդ ցոլքը վարդագույն,
Որ կորավ կյանքիդ դաղաղում։

Առավոտ կրնկնես կիսամեռ,
Կկանգնի սիրտդ հանկարծ։
Իսկ Գյումրին դեռ օրի կքամե,
Ու էլի զվարթ կգնդա։

Լոկ երգերդ շների նման
Եռևիցդ երկա՛ր կոռնան,
Ու վրաց դատարկ կանե—
Զուռնան...

ՍՐԻՆԳԸ

Սրինգը,
Կույր ու ծեր,
Անցնում էր փողոցով։
Սրինգը երգ էր գուցե.
Երնում էր դեպի վեր,
Իջնում էր կոր գծով։

Իջնում էր—
Ետ էր դառնում.
Հասնում էր աստղերի ծերին,—
Ու նորից, որպես վաշխառու,
Աշխարհում փնտրում էր—ի՞նչ...

Աստաֆյանի մեջով
Անցնում էր երգը սրինգի,

Սեծում էր դռները չոր։
Դռների ետևում
Մարդիկ
Ուզում էին «Ռանգի»,
Ուզում էին— «Տասնչորս»։

Մնում էր—
Դռների առաջ։
Դառնացած, որ չեն թողնում ներս։
Եվ նորից, որպես մասխարա—
Թռչում էր—կոր գծով—
Վեր...

Ի՞նչ խղճուկ էր այդ ծեր վանեցին...
Այդ երգը, երգը սրինգի...
Այդ երգը՝ աստղային, անծի՞ր...
Այդ երգը—անոգ, անգին...

Քեզ խրատ, պոե՛տ, այստեղից.
Օ, երբե՛ք չերգես անտեղի։

Լավ է— կորչե՛ս անհետ,
Լավ է— մա՛հը դեղին։

Օ, լավ է կոտրես հանգիստ
Սրինգը, որպես թևեր,—
Միայն թե, պոե՛տ, կյանքից
Սրինգի պես վեր չթևես...

ԵՐԵՎԱՆ

I

Ինչ որ չի, չի երազել
Դեռ ո՛չ մի պոետ—աստղաբիբ.
Ուզո՞ւմ եք՝ որպես գնդասեղ

Արևը խրեմ փողկապիս։
Առնեմ, որպես սինի,
Երկինքը աստղերի խաղով։—
Ու տանե՛մ այն հարսանիք,
Որպես միրգ՝ մի ճութ խաղող։
Ինձ համար ի՞նչ կա, որ չկա.
Կանե՛մ, ինչ որ կամքս ջոկի։
Ուզո՞ւմ եք՝ դարձնեմ «Չեկա»
Թաղանթի պես քնքուշ հոգիս...

II

Ես ոչի՛նչ, ոչի՛նչ չգիտեմ։

Բայց կարող եմ ես, պոետ,
Երգերիս մատներով երկաթե
Ձեր կակուղ սրտերը շոյել։
Կարող եմ, եթե սիրտս ուզե,
Կտրելով վերստեր անթիվ,
Երկարել դեպի սիրտը ձեր
Տողերիս լուսե գերանդին։
Ես կարող եմ, որպես նետաղեղ,
Թե կուզեք՝ ե՛րգս թեքել
Եվ թողնել, որ նա, հոտավետ,
Ձեր դեմքին երազներ թքե...

Բայց ի՞նչ,
Ի՞նչ դրանից...
Միևնույնն է՝ սրտիս կիջնի
Ձանձրույթը, որպես գրանիտ
Ու թախիծը՝ պաղ ու դժնի։

Օ, գիտեմ, որ սիրտս հետո,
Որպես հին մի, բեկված թերսիդես—
Իր թունոտ բողոքի նետով
Ձարկիլու է թե ինձ, թե ձեզ...

III

Բայց էլ ի՞նչ, էլ ի՞նչ ես ուզում,
Անհատնում սի՞րտ իմ երգահան...

Գրաստի նման անլեզու
Քնել է Երևանն ահա։
Գլուխը դրած Քանաքեռ՝
Ոտքերը Մասիս է երկարել։

Երևա՛ն, ես սիրում եմ քեզ,
Դորշավազ շենքերդ քարե։
Սիրում եմ տեսքդ գրաստ,
Ինչպես ճորտը սիրում է խանին,
Ինչպես սեգ պարսիկը բարեպաշտ,
Սիրում է մտնել բաղանիք...
Կարո՞ղ է արդյոք նեգրը սև
Հրաշքով սպիտակել հանկարծ։—

Երևա՛ն, ես էլ ի՞նչ ասեմ,
Որ դու ավելին չցանկաս...

IV

Բայց էլի՛, բայց էլի՛, բայց էլի՛,
Հայացքը մշուշին գամած,
Կախվում է ուղեղիս թելից
Երևանը որպես խեղդամահ։
Կախվում է։
Կախվել է ուզում։
Զանձրացել եմ, ասում է, կյանքից։

Դու գիտե՞ս, ասում է,— բաղում
Քաղաքներ կան՝ եռուն, ահհանգիստ...
Փայլում են, կոշիկի պես սրբած,
Նրանք լամպերի լույսից.
Ավա՜ղ է այնտեղ արաբան,

Փողոցի լապտերը՝ լուսին։
Շարել են իրենց դիստերին
Կամուրջները, որպես օղեր...
Ախ, նրանք— պայծառ, ոսկերիչ,
Իսկ ես—գաղթական Շողեր...
Հասկանո՞ւմ ես, ասում է, Զարե՛նց,
Ես ուզում եմ նրանց պե՛ս լինեմ...

Երն դու պետքակա՛ն ես, պոե՛տ,
Երգերի տեղ երկրնե՛ր շինե՛։
Տոզերդ կամուրջներ թող լինեն,
Օդակին գետերը գնգուն,
Որ անցնեն հազա՛ր տարիներ
Եվ հազա՛ր էլ Իսփիհան Զանգուն։
Թե կարող ես— այնպե՛ս արա դու,
Որ այստեղ... նոր քաղաք բուսնի...

Բայց դու... դեռ նստել ես սրճարան
Եվ նայում ես այդ լիրբ լուսնին...

— Ախ, լուսինն ահա վերևում,
Արաբչինն արծաթ մատներին,
Նրբաբույս աստղերի բեհում
Հեգանաղ պարում է «ինգերին»...

Իսկ Մասիսը՝ քնում թմրած՝
Երազում տեսնում է ինձ։
. . . . . .

Ես սիրում եմ քեզ, Երևա՛ն,
Ինչպես մեր այն հին հեքիաթում
Դավիթին սիրում էր իրա ձին։

*
* *

Զանգուն ու Արաքսը սեգ,
Գալիս են—մեջս թափվում։
Ես նրանց հայրը լուսե,
Ես նրանց որդին չափղուն։

Գինո՜վ եմ ես նրանց ջրով,
Նրանք իմ երգով են գինով։
Եփվում ենք արևի ճենճերում.
Գնում ենք.
Ո՞ւր ենք գնում...

Ցերեկները զուռնան արևի,
Գիշերները սրինգը լուսնի.
Էսպես—հազար օ՛ր կարևի
Ու հազա՛ր սերունդ կբուսնի։

Կթափվի Արաքսը նրանց մեջ։
Զանգուն ջրերը կլցվի,
Մինչ մի օր—բոլորս մեկ—
Կհասնենք Կարմիր Մծբին...

ԱՍՊԵՏԱԿԱՆ

(Ռապսոդիա)

I

Մի հոգնած, տխուր տրուբադուր,
Օրերի գորշ ճամփեքին
Երգում էր հարվածը հատու,
Մահացու հարվածը իր տեգի։
Երգում էր նրանց երգը լուսե,
Մարմինները նրանց ալ-կրակ,
Երգում էր սե՛րը նրանց սև
Ու վերքի արյունն ալվլան։

II

Երգում էր կարոտն իր արթուն,
Երգում էր ամո՛թը այն սև,
Որ կարող է դարձնել մարդուն
Գետնահար ստվեր մի նսեմ։
Իր մռայլ օրերի բանտում,
Աշխարհի գո՜րշ ճամփեքին
Երգում էր հեգ մի տրուբադուր
Մահացու հարվածն իր տեգի...

III

«... Հոգնած ու թույլ մի խաչակիր՝
Ես մի օր այն դգյակը մտա.

Ասպետի լաթեր էր հագիս,
Զրահներս՝ ժանգոտած ու թաց։
Ես դառնում էի սուրբ Քաղաքից
Եվ սրտիս թագուհուն նվեր
Ես տանում էի ցա՛վը վերքիս
Ու կարոտս՝ բա՛րձր ու վեհ...

IV

Դարբասը շռինդով բացվեց.—
Մի զինվոր էր մառ ու մթին։
— Կտանես ողջո՛ւյնս ձեր վեհ
Ու խիզախ, անհաղթ ասպետին։
Ասացի. ու կրկին փակվեցին
Դարբասները մութ ու մռայլ։
Հոգնած խրխնջում էր իմ ձին
Այն օտար ճամփեքի վրա։

V

Ու նորից մռայլ շռինդով
Բացվեցին դարբասները վեհ...
Եվ ասաց.— Ալֆոնս Անդոն
Ձեզ, խոնարհ, խնդրում է վեր։
Ու բռնեց ձիուս սանձից,
Հանեց զրահներս թաց։
Եվ ահա, ես՝ թոգած իմ ձին՝
Այն մռայլ դղյակը մտա։

VI

— Ողջո՛ւյն պիլիգրիմ ասպետին.
Ձեզ ծառա Ալֆոնս Անդոն։
Ու իջավ զլուխս գետին
Մի անհուն ու խոր եռանդով։
Եվ երբ, շարժումով մի անփույթ,
Բարձրացրի աչքերս լուռ—

Ես տեսա աչքե՛րը նրա մութ
Ու մորուքը՝ ճերմակ ու սուր։

VII

Ծերունի էր Ալֆոնս Անդոն՝
Իննսուներեք տարեկան...
Բայց աչքերը՝ չոր ու անթով՝
Դեռ նայում էին չար ու ագահ։
Նա կարող էր լինել արքա
Մավրերի, կամ ցեղին Արաբ,
Նա կարող էր լինել բռնակալ—
Ամբո՛ղջ աշխարհի վրա։

VIII

Ծերունի էր Ալֆոնս Անդոն,
Բայց իրանը, պիրկ ու խիզախ՝
Նա պահում էր անմար խանդով
Բարձրահեռ, որպես սուր մի նիզակ։
Նա իր կուրծքը պահում էր հաստատ,
Պղնձե վահանի նման թեք,
Եվ իր քայլը՝ բիրտ ու վստահ—
Ծծուլգի քա՛յլք էր երկաթեա։

IX

—Ը նդունե՛ք հարկը դղյակիս
Որպես ձեր հարկն հարատաս...
Եվ տվեք մեզ սուրբ Քաղաքի
Օրհնությունը, իբրև ընծա։—
Ես նրան դրախտ ցանկացա,
Ես նրան տվեցի երկու խաչ,—
Եվ հանկարծ լսեցի երգի ձայն,
Հնչեցին քնար ու ծնծղա։

X

... Ու մտան երկու գեղանի
Աղջիկներ՝ հուր-հրեղեն...
Մոտեցան կլոր սեղանին,
Դրեցին գավաթներ հոլե։
Ու ճկուն շարժումով մի պարե՝
Իրենց սեգ ողջույնը տվին...
Ուխտավո՛ր, նման մի արև
Մի՛ անգամ թող կյանքդ արևի։

XI

Ուխտավո՛ր, մի՛ անգամ կյանքիդ
Օրերում տխուր ու մռայլ
Թող ցոլա հրահուր ու անգին
Այդպիսի մի բախտ քո վրա։
Թող բացվի այդպիսի մի լույս
Երկրային կյանքում քո խավար—
Եվ ապա՝ տանջանքին հլու՝
Թող սիրտդ հավիտյա՛ն նվա։

XII

Երկու լույս էին վառ նրանք...
Երկու բոց՝ սպիտակ ու սև,
Երկու խոլ արև հուրհուրան,
Երկու հուր հրաշքներ լուսե...
Մեկի բոյը—սեգ մինարեթ,
Մյուսինը—սև՛ մի սոսի.
Մեկը վառ, պայծառ մի արև,
Մեկը կաթ, արծաթ մի լուսին։

XIII

Բեդվինի խարույկներ էին խոլ
Սևամած աչքերը մեկի,

Մյուսի աչքերը — տխուր
Միրաժներ էին անմեկին։
Մեկի կուրծքը մզկի՛թ էր սպիտակ,
Մյուսինը—սե՛գ մի տաճար.
Մեկը բիլ գազե՛լ էր կապուտաչ,
Մեկը հուր նժո՛ւյգ սևաչյա...

XIV

Մեկը թիռ քայլում էր թեթև,
Թռչկոտում էր, որպես բիլ գազել...
Մյուսի քայլքն հրաթև—
Թռի՛չք էր դաշտերում ավազե...
Աշխարհում դեռ չի՛ երազել
Նման բախտ և ո՛չ մի արքա,—
Բայց այդ վառ բախտին տիրացել,
Տիրացե՛լ էր Անդոն չարկամ։

XV

Ու հոսում էր հուր-հրահուր,
Թափվում էր գինին սեղանին։
Ու տարփում էին բո՛ց մի մահու
Մարմինները նրանց գեղանի։
Ու քամում էր գավաթը հոլե,
Ու նայում էր Անդոն չարկամ—
Կույսերին հո՛ւր-հրեղեն՝
Աչքերով չա՛ր ու ագահ։

XVI

Ու իջավ, որպես սև գիշեր
Իմ սրտին թախիծը մռայլ։
Ու մի ամպ՝ մութ-մշուշե՝
Ծանրացավ հոգուս վրա։
Ու ոռնաց մրրի՛կը իմ հոգում,
Ուրագանը շաչե՛ց ավազե—

Մի վա՜ղր էր իմ սրտում մորմոքում,
Վիրավոր էր չա՜ր մի բազե։

XVII

Մոռացել էի արդեն ես
Իմ սրտի թագուհուն լուսե,
Որի դեմքը կյանքում հողմածեծ
Տարինե՜ր էի երազել։
Մոռացա կարոտը իմ վառ,
Մոռացա թագուհուն իմ անգին,
Որի մի՜ հայացքի համար
Ես դարձել էի խաչակիր։

XVIII

— Հանգի՜ստ ասպետիդ վաստակած—
Ու ոտքի ելավ Անգոն։
Մոայլ՝ բարձրացավ ու գնաց,
Հեռացավ, որպես հուշ անթով։
Ու նրա հետից գնացին
Աղջիկները հո՛ւր-գեղանի...
Իսկ ես... մինչև լույս մնացի՝
Կոթնած կլոր սեղանին։

XIX

Մինչև լույս մնացի կիսաքուն
Կոթնած կլոր սեղանին,
Մինչև լույս պարեցին իմ հոգում
Այն կույսերը հուր-գեղանի։
Մինչև լույս, ինչպես ալվան
Երկու բոց, սպիտակ ու սև՝
Իմ հոգում պարեցին նրանց
Մարմինները լո՜ւյս ու լուսե։

XX

Եվ, ինչպես հավաքվում է քամին
Դաշտերում մառ ավազի,
Կամ ինչպես չար թշնամուն
Մոտենում են քայլերն հովազի,
Կամ ինչպես բեգվինը չարկամ
Հարձակվում է հեռվից հանկարծ.—
Մի կարոտ խո՜ր ու ագահ
Իմ հոգում շաչեց ու ընկավ։

XXI

Մինչև լույս աղմկեց իմ հոգում
Այդ կարոտը, որպես ուրագան,
Մինչև լույս մոնչաց անքուն
Այդ կարոտը չա՜ր ու ագահ։
Մինչև լույս իմ հոգում շաչեց
Այդ կարոտը, որպես է՛գ մի հովազ,—
Ու ծեգին իմ սիրտը հողմածեծ
Անապա՜տ էր արդեն գորշավազ։

XXII

Անապատ էր արդեն գորշ ու շոգ
Իմ հոգին՝ տապ ու մթին,
Ուր անբավ կարոտը ճնշող
Հղանում էր տենդեր անմեկին։
Կախված էր իմ դլխին կարծես
Անշարժ ու շոգ մի արև—
Ու ծարավ արշավում էի ես
Դաշտերում տենդուր—մոխիրի...

XXIII

Ու թվում էր, թե նորի՜ց, նորի՜ց
Ահա ես՝ խոլ մի խաչակիր—

Թռչում եմ դաշտերով մոխիրե՝
Ժանգոտած զրահներ հագիս։
Արշավում եմ անխոնջ ու ծարավ
Ու նորից եռանդ եմ ու վաղք,—
Դաշտերով տոթ, գորշավազ
Արշավո՜ւմ եմ դեպի Դամասկ։

XXIV

Այն գիշերը ուշ լուսացավ,
Այն գիշերը տևեց մի դար։
Այն գիշերը անթի՜վ անգամ
Ես Կարմիր Քաղաքը մտա։
Այն գիշերը խեղդամահ արի
Իմ սրտում հազա՜ր սարացին,—
Եվ նայում էին ինձ խավարից
Այն կույսերը հուր-հրածին...

XXV

Առավոտը, մռայլ, բացվեց։
Դուրսը մութ էր, մրրիկ ու քամի։
Գլխիկոր՝ դեռ նստած էի ես՝
Կոթնած կլոր սեղանին։
Իմ սրտում անապատ էր արդեն,
Իմ սրտում կեսո՜ր էր արդեն շոգ—
Երբ դղյակը դանդաղ զարթնեց.
Լսեցի հեռու մի շշուկ։

XXVI

Ու վագրի նման վիրավոր
Ցատկեցի իսկույն ես տեղից՝
Ու թռա անհուն ծարավով,
Ինչպես նետ՝ պոկված աղեղից։
Ու ֆչա ես դղյակի
Ներքնահարկը մռայլ ու մութ.

Ու խեղդում էր արդեն իմ հոգին
Մի կարոտ՝ համր ու անգութ։

XXVII

Եվ ահա աչքերով բոցակեզ
Ու սրտի վագրային խանդով—
Ես տեսա՝ դանդա՜ղ այնպես,
Լուռ, գնում էր Ալֆոնս Անդոն։
Ու նրա քայլերին դանդաղ
Հետևում էին հեզանազ,
Օրորուն քայլերով խանդոտ—
Այն կույսերը փայլ ու երազ...

XXVIII

Ես նայում էի անկյունից։
Հեռանում էին համրաքայլ...
Ու թվաց, թե հո՜ւր մի գինի
Լցվում է սիրտս ագահ։
Եվ ահա ես տեսա, որ թեթև
Այն կույսերը հուր-գեղանի
Ներունի ասպետի ետևից
Հեզանազ, մտան բաղանիք...

XXIX

Մի առյուծ էր, որ— իմ սրտում
Վիրավոր՝ խոլ մռնչաց։
Իմ հոգում փոթորիկ էր պայթում.
Ճարճատում էր մրրիկ մի չար։
Ես կանգնել էի քարացած,
Ես զգում էի, որ հիմա
Կծալվեն ոտքերս հանկարծ
Հողմածեծ շամբերի նման։

XXX

Եվ ես էլ չիմացա— ինչպես
Հաջորդ վայրկյանին, խանդոտ—
Քարացել էի արդեն ես
Այն մռայլ, այն մութ դռան մոտ։
Եվ զգում էի ես միայն
Մի կարոտ՝ հուր-խելագար,
Որ մի էգ բորենու նման
Ուտում էր սիրտս ագահ։

XXXI

Ես կանգնել էի դռան մոտ,
Բայց տեսնում էի արդեն ես
Մարմինները նրանց խանդոտ,
Մարմինները լույս ու հրկեզ։
Եվ տեսնում էի, որ մռայլ
Ներունու անկար խանդով
Հրեղեն մարմինները նրանց
Ջարդարո՛ւմ է Ալֆոնս Անդոն...

XXXII

Ես տեսնում էի կույսերի
Մարմինները՝ երկու ա՛լ-կրակ,
Որ ծերի մութ գիշերին
Գալարվում էին ալվլան։
Ես տեսնում էի ծերունու
Մարմինը՝ շոր-հողագույն.
Մի ճիվա՛ղ էր սև-լրբենի,
Մի կարիճ էր Ալֆոնս Անդոն...

XXXIII

Ու փարվել էր Ալֆոնս Անդոն
Գալարուն ու տոթ կույսերին,

Ու խմում էր անհագ եռանդով
Քրտինքները նրանց ուսերի։
Քրտնքոտ ծնկներին էր փարում,
Ձեռքերով մարում էր երկու բոց,
Գրկում էր մեջքերը գալարուն,
Փարվում էր՝ շար ու անթափ։

XXXIV

. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

XXXV

Ես տեսնում էի մշուշում
Տարփանքով [illegible] երկու բոց,
Երկուսի մեջտեղում— ծեր մի շուն...
Ու լալիս էր հոգիս հողմակոծ։
Որպես հուր երկու ժայռափին,
Երկու օձ՝ սոլիտա՛կ ու սև—
Ներունու մարմինը փաթաթվել,
Գալարվում էին օձաձև։

XXXVI

Ես նայում էի հուսահատ
Ու ճչում էր հոգիս խանդից
Եվ ուզում էր հոգիս—նգովված
Տիեզերքն ու կյանքը քանդի։
Կուտակվում էր կրծքում իմ ատելը,

Ահռելի ու սև մի սամում,—
Ես արդեն—մի վա՛գր էի չար,
Փոթորի՛կ էի ես անհուն։

XXXVII

Ես կարող էի բյուրավոր
Ոսոխներ խեղդել, հոշոտել,—
Հորդահոս արյան ծարավով
Արնահամ դիակներ ուտել։
Որպես չար, արնախում բորենի
Ես կարող էի սի՛րտը հանել—
Թե ընկած լիներ ծերունին
Իմ ճանկերը պիրկ ու անել։

XXXVIII

Բայց կանգնել էի ես քարացած
Ու խղճուկ էի, որպես շուն։
Լսվում էր ներսից երգի ձայն,
Ու պարում էին մշուշում։
Ու պարում էին երկու հուր,
Երկու բոց՝ սպիտակ ու սև—
Ու փարվում էին ծերունուն
Գալարքով խո՛լ-օձաձև...

XXXIX

Պայթե՛ց փոթորիկը գլխիս
Եվ սիրտս ահեղ մռնչաց։
Մրրիկի պես շաչով մտա ներս,
Բորենու պես ագա՛հ ու չար։
Ու իջավ տեգս երկաթե
Նրա չոր կրծքին ծերուկ,—
Ու հաջորդ վայրկյանին արդեն
Թավալվում էր նա ա՛լ լճերում։

XL

Ու լցվեց բաղանիքը հանկարծ
Կանացի սուր ճիչերով.
Զգացի, որ կրծքիս ընկան,
Բռնեցին ինձ երկու ուրու։
Երկու բոց՝ սպիտակ ու սև,
Երկու հուր հրեշներ է՛գ.
Երկու չար ոսոխներ օձաձև,
Երկու խոլ չարքե՛ր հուսաբեկ։

XLI

Ու վայում էին կատաղի,
Ու ծեծում էին ինձ նրանք։
Նրանց դեմքը դարձել էր դեղին
Ու հայացքը՝ օձ ալվլան։
Այդ վայրկյանը հուր-արյունի
Ցառանցանք էր՝ խո՛լ միստերի.
Ու հոսում էր ալ մի գինի
Դեպի սիրտս նրանց գիստերից...

XLII

Ճանկոթում էին նրանք ինձ,
Գազազած՝ ձեռքերս կծում,
Ու թքում էին դեմքիս
Վահրով՝ դառն ու կծու։
Ու լուսե՛ մատներով չարկամ
Իմ աչքե՛րն էին փորփրում.
Օ, մահու քա՛ղցր վայրկյան,
Օ, նզո՛վք, անե՛ծք, աններում։

XLIII

Ցառանցանք էր, տենդ էր թվում
Այդ վրեժը չար էգերի։

Ու տրվել էի ես հլու
Նրանց չար, տանջող կամքերին։
Ու խփում էին երեսիս
Նրանք հուր-թեթև ոտքերով։
Ու անհույս, սևմի կսկիծ
Լցվում էր սիրտս խռով...

XLIV

Եվ հանկարծ թողեցին նրանք ինձ
Ու հասան մեռած ծերուկին։
Կախվեցին նրա չոր դեմքից,
Ծարվեցին կրկի՛ն, կրկի՛ն։
Ու ներկում էր արյունը նրա սև,
Ծերունու արյունը մութ—
Մարմինները նրանց լուսե,
Մարմինները՝ դառն ու անգութ։

XLV

Համբուրում էին ծերուկի
Սպիտակ շրթերը նրանք։
Ու ճչում էին դառնագին,
Ու կանչում էին—նրան։
Ու սրբում էին վերքի
Արյունը մազերո՛վ իրենց սև։—
Ու ընկած էի ես մեջքիս՝
Մերժված, խե՛ղճ ու անսեր...

XLVI

Ո՞վ երկինք, պայթի՛ր գլխիս,
Փոթորի՛կ, մազերիս տեղա՛.
Տատասկնե՛ր թող բացվեն ճամփիս,
Կայծակնե՛ր գլխիս թող շողան։
Կուրանա՛ն թող աչքերն իմ դաժան,
Զորանա՛ թող ձե՛ռքը իմ չար,

Բայց գգվի ինձ մա՛հ տարաժամ,
Բայց հոգիս դժոխքո՛ւմ ճչա...

XLVII

Լ՝ ձ գնին բանտը դժգոհին,
Ինձ համար տուսեր սրեցին։
Բայց էլի լիքն էր հոգիս
Այն սիրով հուր-հրաձին։
Ու մոռալ բանտից ես փախա,
Որ կյանքի դո՛ղշ ճամփեքին
Եղգեմ իմ այս սե՛րն արնահամ
Ու հատու հարվածը իմ տեգի։

XLVIII

Զուզեցի մեռնել բանտում
Ու թաղել սերս անհետ։
Ուզեցի լինել տրուբադուր,
Դղյակից-դղյակ թափառել։
Ուզեցի, որ լուռ չմնա,
Զմարի սիրտս հրկեղ,—
Ուզեցի ապրե՛լ մշտական,
Որ նրանց գովքը երգեմ։

XLIX

Երկու լույս էին վառ նրանք,
Երկու բոց՝ սպիտակ ու սև,
Երկու խոլ արև հուրհուրան,
Երկու հուր-հրաշքներ լուսե։
Մեկի բոյը— սեգ մինարեթ,
Մյուսինը— սև մի սոսի,
Մեկը— վառ, անմար մի արև,
Մեկը—կաթ, արծաթ մի լուսին։

L

Թեգվինի խարույկներ էին խոլ
Սևամած աչքերը մեկի,
Մյուսի աչքերը—տխուր
Միրաժնե՛ր էին անմեկին։
Մեկի կուրծքը մզկի՛թ էր սպիտակ,
Մյուսինը— սե՛գ մի տաճար,
Մեկը—բիլ գազե՛լ էր կապուտաչ,
Մեկը—հուր-նժո՛ւյգ սևաչյա։

LI

Մեկը թիռ քայլում էր թեթև,
Թռչկոտում էր, որպես բիլ գազել.
Մյուսի քայլքն հրաթև—
Թռիչք էր դաշտերում ավազե։
Աշխարհում դեռ չի՛ երազել
Նման բախտ և ո՛չ մի արքա,
Բայց այդ վառ բախտին տիրացել,
Տիրացե՛լ էր Անդոն չարկամ...

LII

Ես կարող էի նրանց հետ
Աստծու գահին տիրանալ,
Դամասկի վրա հարձակվել
Մեն-մենակ՝ հա՛ղթ ու անահ։
Ես կարող էի, որպես շուն,
Հավիտյան նրանց ո՛տքը լիզել.—
Օ, նրանց ոտքերի՛ փոշում
Ինձ համար դրա՛խտ էր լուսե։

LIII

Բայց ահա— հոգնած մի տրուբադուր.
Օրերի գորշ ճամփեքին

Երգում եմ հարվածը հատու,
Մահացու հարվածը իմ տեգի։
Երգում եմ նրանց երգը լուսե,
Մարմինները նրանց ա՛լ-կրակ.
Երգում եմ սե՛րը նրանց սև
Ու վերքիս արյո՛ւնն ալվլան։

LIV

Երգում եմ կարոտն իմ արթուն,
Երգում եմ ամո՛թը այն սև,
Որ կարող է դարձնել մարդուն
Գետնահար ստվեր մի նսեմ։
Ուխտավո՛ր, լսի՛ր հիմա դու.
Աշխարհի գո՛րշ ճամփեքին
Երգում է հե՛գ մի տրուբադուր
Մահացու հարվա՛ծը իր տեգի...»։

23—Ե. Չարենց, Երկեր

1923—1924
«ԿՈՄԱԼՄԱՆԱԽ» ՇԱՐՔԻՑ

ԼԵՆԻՆ

Всем, всем, всем...
Ռադիո։
Մոսկվա։
Կրեմլ։
...Վախճանվել է Իլյիչը...

Ի՞նչ.
Ճառե՞ր,
Հեռագի՞ր.
Սո՞ւգ գուցե կամ։
— Իհարկե չէ...

Սուգը—
Առել է դեմ—
Սառել է բանվորի կոկորդում։
Տեղը—
Ոխ մի դղորդ
Հորդում է դուրս։

Է՛յ,
Զգա՛ք,
Զմոտենա՛ք.
Հազա՛ր են,
Բյո՛ւր են,
Միլիա՛րդ են,

Ավելի՛ն են.—
Ու էդ
Բոլորը
Մեբերան—
— Լենին,
— Lenin,
— Ленин...

Գիտե՞ք թե աշխարքի արգանդից
Ինչքա՛ն հանճարեղ մարդիկ,
Ինչքա՛ն, ինչքա՛ն կրոմվել,
Կամ հնդիկ Գանդի—
Անթիվ
Եղել են,
Կան դեռ,
Ու կգան.—
Այնինչ Իլյիչը—մեկ է,
Ուրիշ Իլյիչ—դժվար թե,
Ուրիշ Իլյիչ—չկա՛։

Դասակարգը
Դար դարի ետևից—
Սնել է Իլյիչին։
Դասակարգը
Դար դարի ետևից—
Հյութեր է նյութել։
Անգամ ջրկիրը Տիբեթի
Տվել է Իլյիչի ուղեղին
Մի թել։

Թել-թել։
Նյարդ-նյարդի ետևից,
Նյարդից թե քո, թե.իմ—
Առել է դասակարգը—
Տվել է Լենինին։

Թել-թել,
Նյարդ-նյարդի ետևից
Հյուսել է—
Բարդ
Կանվա։
Եվ հիմա—
Իլյիչը—
Վախճանվա՞ծ...
Մեռա՞ծ կամ,
Կամ չկա՞...

Չէ՛, պրոլետար,
Իլյիչը—փամ մե՛ջ է,
Քո մե՛ջ է.
Նրա մե՛ջ է.
Իլյիչը—կա...

Կա—դասակարգը։
Դասակարգը—
Պարզե՛լ է Լենինին իբրև դեվիզ։
Դասակարգը հակադրե՛լ է հնին—
Իր
Լենինին։
Ու կպարզե՛ հնին—
Լ ե ն ի ն ի զ մ։

Էյ,
Դուք,
Ռոկֆե՛լլեր,
Ստի՛ննես,
Մորգան կամ.
Լսո՞ւմ եք՝
Մենք դեռ կգանք.
Մեր բանակը կանցնի՛ դեռ ձեր աշխարքով։

Դեռ կգա Իլյիչը,
Որ մտնի համաշխարհային Սովնարկոմ։

1926

ՌՈՒԲԱՅԱԹ

I

Ապրում ես, շնչում ես, դու դեռ կաս—բայց ամե՛ն վայրկյան դու ա՛յլ ես.
Անցյալ է դառնում քո ներկան— ու ամե՛ն վայրկյան դու ա՛յլ ես.
Բայց ներկան քո— հո՛ւնտ է գալիքի՝ մեռնելով— նա սնում է գալիքը։
Եվ այսպես— տեսում ես դու երկար,— ու ամե՛ն վայրկյան դու ա՛յլ ես։

II

Քո ամեն ակնթարթը մի սերմ է,
Որ կրում է իր մեջ իր մահը.
Բայց հոգին քո—խնդուն ու անահ է
Եվ մի՛շտ խանդավառ է ու ջերմ է։

III

Նա թե՛ կյանք է, թե՛ մահ.— ակնթարթը.
Անհատնում հատնում է, վառք է.—
Եվ այսպես՝ մշտատև է աշխարքը.
Անդադար թարթում է—ու անթարթ է։

IV

Նա հոսում է, ալիք առ ալիք,
Եվ ամեն վայրկյան — այն չէ՛.
Եվ ամեն մի վայրկյանը—հնչեղ
Ներկա է, անցյալ—ու գալիք։

V

Ես քեզ ո՞նց, քեզ ո՞նց հասկանամ,
Ես քեզ ո՞նց ամփոփեմ ուղեղում իմ,
Երբ չեկած՝ դու արդե՛ն իսկ չկաս,
Բայց հա՛ր դու լինում ես— ու տեսում ես։

VI

Անցնում է հոսում է, վարար է,
Ելնում է, սուզվում անդադար.
Մշտապես մեռնում է—ու հար է.
Մշտապես ու հար— անկատար։

VII

Օ, խմի՛ր, խմի՛ր դու ագահ.
Օ, խմի՛ր անդադար այս հատնումը.
Կորածը—իրեն նա գտնում է,
Եվ իր այդ գտնումով— չկա։

VIII

Այս գետը,—նայի՛ր,— նա հոսում է,
Քեզ թվում է թեկուզ անփոփոխ։
Իսկ քո փառքը, հիմար, երազում է—
Հավերժական կոթող։

IX

Էյ, դո՛ւ, իմաստո՛ւն վարպետ,
Որ տաշում ես, տաշում այդ քարերը.
Քո ամե՛ն մի, ամե՛ն մի զարկին
Իր նիշը արդեն նա դրել է։

X

Նա կրկին ասում է.—«Գարունը
Ծաղկելու է էգուց վարդերով իր»։
Սակայն ո՞ր արևն է հուրհուրում այդ
Եվ ո՞վ է այդ նո՛ր արտևորը...

XI

Վերցնում ես քարը— մտածում ես.
«Հետքեր է կրում նա ջրի»—
Բայց չէ՞ որ այդ նո՛ւյն վայրկյանին հենց
Իմ վրա դու քո ձեռքը դրիր։

XII

Մի անցորդ անցավ քաղաքից այս
Ու գնաց. ու չեկավ նա ետ։
Եվ քաղաքը—կրկի՛ն գեղեցիկ է,
Նայում եմ նրան—թեև ե՛ս։

XIII

Դու ամե՛ն վայրկյան քեզ ժխտում ես
Ու այդպես ժխտելով՝ հաստատում.
Պարտվում ես դու քեզ ու հաղթում ես,
Սակայն մի՛շտ՝ այդ դո՛ւ ես— ու դո՛ւ։

XIV

Անտառը թափում է իր սաղարթը,
Անտառում հատնում է ու վատնում.
Բայց նայի՛ր—ինչքա՛ն նա զվարթ է,
Ինչքան նո՛ր է— ու մի՛շտ անհատնում։

XV

Դու ոսկի դրիչ ունես, դու այնպես իմաստո՛ւն ես,
Ինքդ քեզ հրաժեշտ ես ասում, ինքդ քեզ կրկի՛ն ընդունում ես,
Գիտես, որ՝ լինելով է լինում, հատնելով է անհատնում այս տունը—
Եվ մի՛շտ ծիծաղկուն է հոգիդ ու սիրտդ՝ մշտապես խնդո՛ւն է։

XVI

Թե կտոր տեսնես մի ամպի— ասա՝ սա ուրի՛շ է արդեն.
Թե նստես, թե իջնես թամբից—ասա՝ սա ուրի՛շ է արդեն,
Վերադարձը դարձ չէ այլևս և ո՛չ էլ կրկնություն հնի,
Քո անցած ամե՛ն մի ճամփին ասա՝ սա ուրի՛շ է արդեն։

XVII

Նա գնաց ու կրկին եկավ— երեկվա իմ սիրած սիրեկանը,
Բայց տեսա, որ արդեն չկա—երեկվա իմ սիրած սիրեկանը։
Կանգնած է մի երրո՛րդը դեմս.—այդ նա չէ՛ այլևս, նա չէ՛.—
Եկած է— ու կարծես չեկած— երեկվա իմ սիրած սիրեկանը։

XVIII

Երկնքից թռչում է մի թռչուն.— քո ներկա՛ն է այն, բարեկա՛մս.
Ինքն իրեն ժխտող մի հնչյուն.— քո ներկա՛ն է այն, բարեկա՛մս.
Նա գնաց— ու կրկին դարձավ.—այդ նա՞ է արդյոք, թե ուրի՞շը...
Դու նրան էլ չե՛ս ճանաչում... քո ներկա՛ն է այն, բարեկա՛մս։

XIX

Դու մի օր աչքերդդ կփակես, որ ուրիշը քո տեղ գոյանա.
Կգնաս, կանցնես աշխարքից, որ ուրիշը քո տեղ գոյանա։
— Այն դո՛ւ ես, իմաստո՛ւն, այն դո՛ւ,— բայց արդեն դարձած մի ուրիշ.
Հաստատեց, ժխտելով նա քեզ, որ ուրիշը քո տեղ գոյանա։

XX

Ինչ թո՛ւնդ է քո գինին, իմաստո՛ւն. նրանից իմ հոգին հարբում է.
Դա գինի՞ է, թե խո՞սք է ազդու. նրանից իմ հոգին հարբում է.
Խմելո՛ւ ես, մահո՛վ իմ սերած, խմելու ես դու է՛լ այս գինին,
Եթե այս պարտեզը գաս դու.— նրանից իմ հոգին հարբում է։

XXI

Դու քսում ես հոնքերիդ սուրմա— դու անհո՛գ ես.
Ինչո՞ւ է տրտնջում զուր նա—դու անհո՛գ ես.
Ես գիտեմ թե՝ տրտունջը նրա, թե՝ քո այդ պայծառ խնդությունը.
Տո՛ւր դու ինձ մանկություն, տուր մա՛հ,— դու անհո՛գ ես։

XXII

Դու ինքդ քո մեջ միասիրտ.—ինչ որ կաս՝ նա կա ու այդպե՛ս է.
Դու տրվում ես մեզ մի՛շտ միասին.— ինչ որ կաս՝ նա կա ու այդպե՛ս է.

Բացվում ես, լինում, գոյանում— հառնելով հենց ի՛նքդ քո դեմ՝
Պատմում ես մի՛շտ քո մասին.— ինչ որ կաս՝ նա կա ու այդպե՛ս է։

XXIII

Ախ, նայե՛ք, այդ մարդը, այդ հիմարը.— նա տեսնում է լոկ այն, ինչ տեսնում է.
Հավատում է նա, որ սա քար է. նա տեսնում է լոկ այն, ինչ տեսնում է.
Դու ծաղրի՛ր նրան, իմաստո՛ւն. դու տեսնում ես աճումն ու ընթացքը
Եվ գիտես, որ ընթացք է աշխարհը,— նա տեսնում է լոկ այն, ինչ տեսնում է։

XXIV

Այդ կապիկը՝ ձեռքին հայելի— նա կարծում է՝ արդեն իմաստուն է.
Ժպտում է հայելուն նայելիս— նա կարծում է՝ արդեն իմաստուն է.
Ախ, նայեք՝ ինչպե՛ս է սեղմել նա փայլուն ապակու այդ կտորը.
Իր միրաժն է տեսել նա էլի— և կարծում է՝ արդեն իմաստուն է։

XXV

Այդ դերվիշը—տեսե՛ք՝ նա նստած ուզում է ըմբռնի ու հասնի.
Իր մտքի թևերին վստահ՝ ուզում է ըմբռնի ու հասնի.
Նա կարծում է, որ փոխվում է ամբողջը, և իր միտքն է միայն, որ կայուն է,—
Եվ այդպես՝ անշարժ ու հաստատ՝ նա ուզում է ըմբռնի ու հասնի...

XXVI

Դու ասիր՝ նայել, հասկանալ, ու սուզվել, դառնալ անէ.—
Նա ասաց՝ լինել, կատարել, ներծծել հուրեր ու շողեր։
Դու ասիր՝ ամփոփել ամբողջը, հաշտվել ու խաղաղ լինել,—
Նա ասաց՝ ամբողջի՛ն տիրանալ, որպեսզի ամբողջը— փոխել։

XXVII

Դու ասիր՝ անէ՛ է ամբողջը, աչքերիդ իջած մի շղա՛րշ է.
Դու գերի՛ ես, մա՛րդ, ուզեղիդ, ուզեղիդ անէ վանդակին։—

Նա անդուլ պնդում համարեց թե ուղեղը այդ, թե շղարշը—
Եվ ելավ, որ փոխի այդ շղարշը— և մահին խնդաց խնդագին։

XXVIII

Նա կուզեր, որ լինի անէ,
Որ թվա լոկ, լոկ լինի հարց,
Բայց կանգնած է նա, ահա տե՛ս—
Մշտածուփ, մշտափոխ ու կարծր։

XXIX

Թե արևը այրում ու կիզում է— նա ասում է՝ ո՞ւր է իմ կամքը.
Ամեն ինչ անհաստատ ու հոսուն է. նա ասում է՝ ո՞ւր է իմ կամքը.
Օ, գիտե՛ս դու աշխարհի լեզուն և գիտես, որ կամքդ՝ այդ լեզուն է,—
Իսկ հիմարը դեռ ափսոսում է. նա ասում է՝ ո՞ւր է իմ կամքը։

XXX

Ասում են՝ վիթխարի հերոս, հանճարեղ է եղել Իսքյանդարը.
Շարժել է, խառնել է իրար ազգեր ու ցեղեր Իսքյանդարը.
Բայց գիտե՛ս դու շարժումն ու ընթացքը և գիտես՝ չլիներ թե ընթացքը—
Աշխարհում և մի շյուղ ռնգամ դժվա՛ր թե շեղեր Իսքյանդարը։

XXXI

Հետևա՛նք ես դու, իմաստո՛ւն,— այս մեկը դու լա՛վ իմացիր.
Բայց դո՛ւ էլ ես, դո՛ւ էլ ես ազդում,— այս մեկը դու լա՛վ իմացիր.
Դու ուզում ես, որ ազա՞տ լինես.— ուրեմն հասկացի՛ր ճանապարհդ
Եվ փոխի՛ր, որ հաստատ գաս տուն,— այս մեկը դու լա՛վ իմացիր։

XXXII

Մի հարուստ է անցնում փողոցով,— ախ, նայե՛ք՝ նա ինչքա՞ն ինքնագոհ է.
Մի ժպիտ կա դեմքին խոցող,— ախ, նայե՛ք՝ նա ինչքա՞ն ինքնագոհ է.

Նա կարո՞ղ է հասկանալ, այդ հիմարը, որ շուրջը ուռճանում է իր մահը
Եվ տեսնել այդ ձևոքը սղոցող,— ախ, նայի՛ք՝ նա ինչքա՞ն ինքնագոհ է։

XXXIV

Մտե՛լ են տոնական դռներից— և դրախտ են կարծել այս տունը.
Սահմանված ձևոքով մի վերին՝ անխա՛խտ են կարծել այս տունը։—
Ետևի դռներիդ մնաք մտանք՝ քանդելով այուներն ու հիմերը—
Եվ գիտենք՝ ձևոքերով ձեր շինված մի գնդա՛ն է անձև այս տունը։

XXXIII

Մի հարուստ դերվիշ էր եկել. նա ասում էր, թե ցնո՛ւրք է կյանքը.
Անիմաստ, անգո մի տեսիլ, երկնային մի շնո՛ւրհ է կյանքը.
Դու շարժե՞լ ես արդյոք բազուկներդ, փաստակե՞լ ես արդյոք ու հոգնել,—
Ուրեմն գիտե՛ս դու անշուշտ, թե ինչո՞վ է, որ նորք է կյանքը։

XXXV

Դու հարուստ չե՛ս եղել երբեք,— դու կյանքում միայն աշխատել ես.
Դու ունես մկանուտ ձեռքեր,—դու կյանքում միայն աշխատել ես,
Դու փոխում ես նյութը, բնությունը, դու գիտես, որ ամե՛ն ինչ փոխվում է.—
Կհնձե՛ս դու մի օր կյանքի բերքը— դու կյանքում միայն աշխատել ես։

XXXVI

Ապրեցիր դու ըմբոստ մի դարում— և ոչինչ քեզ հար չթվաց,
Դու տեսար մոտիկն ու հեռուն—և ոչինչ քեզ հար չթվաց.
Դու տեսար փլուզումն ու զարթնումը, անսասան հիմերի կործանումը—
Եվ, բացի պայքարից, աշխարհում քեզ ոչինչ հար չթվաց։

XXXVII

Դեռ երեկ քո միտքը խավար էր,— իմաստուն ես արդեն հիմա դու.
Դու տեսար վիթխարի այս արարը,— իմաստուն ես արդեն հիմա դու.

Դու տեսար պատմության խոհանոցը, մխացիր ճենճերում դու նրա—
Եվ գիտես, թե ո՛վ է խոհարարը... Իմաստուն ես արդեն հիմա դու։

XXXVIII

Քեզ տրված է կյանքը, որ լինես—ու ոչինչ երազ չթվա,
Որ կյանքում քո կյանքը շինես— ու ոչինչ երազ չթվա.
Քեզ գերում է ընթացքը այս տաք, բայց տեսնո՞ւմ ես դու այն, որ գալիս է,
Գալիս է իր գալիքը հինն— ու ոչինչ երազ չթվա։

XXXIX

Աշխատի՛ր, տոկա՛ անդադար, ստեղծի՛ր անդուլ— դա կամուրջ է.
Դրանո՛վ ես շինում դու աշխարքը, դրանո՛վ ջանդում— դա կամուրջ է.
Դրանով սերմանում ես կյանքեր, մեռնելով՝ հառնում դրանում.
Հուրհուրա խանդո՛վ, իմաստո՛ւն, ու խնդա՛ խնդուն— դա կամուրջ է։

XL

Ընթացի՛ր դու, մա՛րդ, անդադար, որ ոչինչ քեզ երազ չթվա,
Որ լինես անվախճան ու հար—ու ոչինչ քեզ երազ չթվա,
Որ զգաս, շոշափես դու կյանքը՝ մշտահո՛սը դու այդպիսով—
Եվ դառնա աշխարհը՝ աշխարհ— ու ոչինչ քեզ երազ չթվա։

XLI

Ծովափին նստած է մի մարդ.— այդ դո՞ւ ես գուցե, իմաստո՛ւն.
Նայում է ծովին նա հանդարտ.— այդ դո՞ւ ես գուցե, իմաստո՛ւն.
Նա զվարթ ժպտում է ծովին, նա սիրում է հոսուն այդ անհունը—
Բայց ահա հեռանում է անդարձ.— այդ դո՞ւ ես գուցե, իմաստո՛ւն։

XLII

Նա ուզում է գտնել մի կշիռ— ու չափել նրանով ամբողջը,
Ունենալ անխախտ մի հաշիվ— ու չափել նրանով ամբողջը.

Նա սիրում է «հավերժը» միայն. ախ, նայե՛ք՝ նա փնտրում է «կայունը»—
Եվ գտնում է մի... գինու շիշ— ու չափում նրանով ամբողջը։

XLIII

Նա կուզեր, որ ողջը նրան միանգամ ընդմիշտ տրվի,
Որ կյանքի իմաստը հուրհուրան միանգամ ընդմիշտ տրվի.
Դու գիտես, որ ընթա՛ցք է աշխարհը, գոյանում է ու լինում անվերջ—
Եվ գուցե քեզ մա՛հը միայն միանգամ ընդմիշտ տրվի։

XLIV

Ծնվում է, աճում է մի բան յուրաքանչյուր վայրկյան կյանքում.
Մեռնում է, կորչում է մի բան յուրաքանչյուր վայրկյան կյանքում.
Բայց ծնվողը— ծնվում է պայքարով, պայքարո՛վ է մեռնում և մեռնողը,—
Եվ այսպես—կոփվում է ապագան յուրաքանչյուր վայրկյան կյանքում։

1926 — 1930
ԷՊԻՔԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱՑ

Արփենիկ Զարենցի նիշատակին

И Музе возвращу я голос,
И вновь блаженные часы
Ты обретешь, сбирая колос
С своей несжатой полосы.

Н. НЕКРАСОВ

ՄՈՒՍԱՅԻՍ

Նախ՝ աղջիկ էիր դու մի հասարակ,
Որ դեմս ելար օրերում դժնի։
Անձրև էր մաղում իմ գլխին բարակ,
Ու չկար կյանքում սրբազան կրակ,
Ու լույսն էր ծորում երբեմն լուսնի։

Գգվեցիր դու ինձ գգվանքով քնքուշ,
Ինչպես լուսնահար աղջիկն է գգվում,
Երգեցիր սրտիս ցնորքներ ու հուշ,
Քնարդ եղավ անզոր ու անուժ
Եվ բեկվեց, ինչպես ուռին է բեկվում։

Գունատ էիր դու, ինչպես մահամերձ,
Եվ չգիտեին շրթերդ խնդալ.
Եվ տխուր էին գգվանքները մեր,
Եվ սերդ, ինչպես լուսնահարի սեր,
Անկիրք էր այնպես ու սանտիմենտալ։

Ի՞նչ իմանայի օրերում ես այն,
Որ այնքան անկյանք քո երակներում
Բարիկադների հրերում անանց
Մարտիրոսաբար մարտնչող կանանց
Բորբ, հերոսական արյունն է եռում։

Որ բացվես պիտի օրերում դու նոր,
Ինչպես ծաղիկն է արևից բացվում,
Որ քո քնարի երգերը բոլոր
Այն դժնի, խեղդող ու աղետավոր
Օրերից են լոկ թախիծով լցվում։

Եվ դու մեռնեիր երևի ինձ հետ՝
Անձրևից հյուծված և հրակարոտ—
Այն փոթորիկը եթե չցնցեր
Եվ մրրիկը այն եթե չխանձեր
Քո դեմքը իր ջինջ, կենսատու հրով։

Հառնեցիր հանկարծ վիթխարի թափով
Դու շռնդալից այգին ընդառաջ.
Լցված հոգմալին օրերի տապով՝
Կանգնեցիր՝ ձեռքիդ պայքարի շեփոր,
Եվ դարձար այնքան նոր ու անճանաչ։

Դու նզովեցիր օրերը քո հին՝
Այնքան անկրակ ու մեռած այնքան,
Եվ, գնդերի հետ ելած գրոհի,
Որպես մի կարմիր ամազոնուհի
Դու շեփորեցիր կռիվ ու պայքար։

Գեղեցի՞կ էիր այն ժամերին դու
Ու զարհուրելի, ինչպես կռվի երթ.
Հնչում էր իմ մեջ քո երգը խնդուն,
Եվ հեռուներում քո երգն էր թնդում,
Ինչպես վիթխարի հաղթանակի երգ։

Դու ջահել էիր, դու երիտասարդ,
Արյունն էր քո մեջ հողմերի եռում.—
Երգում էիր դու խնդուն ու զվարթ,
Եվ ձայնդ վաղվա հավատով անմար—
Թնդում էր մարտի անպարտ դիրքերում։

Եվ այդպես ջահել, և այդպես խնդուն
Անցար դու ինձ հետ դաշտերով հրե,
Երգեցիր անխոնջ, երգեցիր անդուլ,
Երգեցիր անմար, անհուն եռանդով,
Մինչև դիրքերում մարտը դադարեց։

Իմ ե՛րգ, իմ քնա՛ր, օրերի միջում
Ինձ անդարձ տրված արևոտ իմ կին,—
Դու անկեղծ էիր ինձ հետ, ինչպես քույր,
Դու պայծառ էիր ու անչափ մաքուր—
Թքեցի սակայն ես մի օր դեմքիդ...

Դավաճանեցի մի գիշեր ես քեզ,
Ուզեցի ընտրել սիրուհի մի սառ,
Որ ինձ երկաթե երազներ երգեր
Եվ առանց սիրո ու առանց կրքի
Տաներ ինձ մի նոր , երկաթե աշխարհ։—

Քո պայծառ, մաքուր շունչը կենդանի
Ուզեցի փոխել ես բետոնի հետ,
Սիրտս դարձնել պողպատե անիվ,
Երևս դարձնել ոնդարձ քեզանից
Եվ դառնալ անկիրք աշխարհի պոետ։...

Երեխայական մի խանդաղանքով
Ես Ի՛րն ընտրեցի իբրև հարսնացու,
Եվ երգս դարձավ անուժ ու անթով,
Եվ մոլորվեցի իրերի բանտում,
Եվ գլխիս իջավ մառախուղը ցուրտ։

Եվ, սիրտս կտրած մարդուց ու հողից,
Ես դեգերեցի անտուն ու անքուն,
Արյունս դարձավ արնահամ օդի,
Եվ ես, կորցրած եռանդ ու ուղի՝
Անվերջ գնացի անկումից անկում։—

Չկարողացա՛ ես կրել կյանքում
Պայծառ անունը քո, որպես դրոշ,—
Եվ գլխիս իջավ խավարը անդուլ,
Եվ ես հասկացա, որ դո՛ւ ես, այդ դո՛ւ
Ինձ հետապնդում հատուցման սրով։

Եվ ոռնացի ես, ինչպես մահամերձ
Գազանն է ոռնում մահվան սարսափից,
Ձեռքերս ահո՛վ կարկառեցի քեզ,
Կարոտով անհուն կարոտեցի ես
Կենդանի շնչիդ, հրիդ ու տապիդ։

Եվ մահամերձն է ինչպես հայցում օդ՝
Գլուխը դրած արնահոտ բարձին,—
Այդպես մահամերձ ու հրակարոտ,
Սրբելով ոգիս տանջանքի հրով,
Ես սպասեցի քո վերադարձին։—

Վերադարձե՛լ ես դու կրկին ահա
Անչափ դժվարին մի ճանապարհով.
Ձեռքիդ ծանրաձույլ մի քնար պահած՝
Կանգնել ես կրկին դու կողքիս, սակայն
Համա՛ռ ես հիմա ու խստաբարո։

Էլ չես դու այնքան անփույթ ու թեթև,
Ինչպես այն ջահել ամազոնուհին.—
Ոգով դու կրկին անխոնջ ես թեև,
Կանգնել է սակայն քո գլխի վերև,
Ինչպես ուրվական—հոգսը ամեհի։

Պայքար է կրկին քո շուրջը հիմա
Եվ զենքեր են պետք ավելի՛ հատու,
Եվ այս ամենի պայքարի համար
Նոր զենքեր պիտի կռես հիմա դու.
Եվ պետք է լինես ավելի՛ համառ,
Ավելի՛ զգաստ, ավելի՛ արթուն։

Դու կերգես հիմա անխոնջ ու անդուլ,
Քրտինքով թրջած երես ու ճակատ,—
Եվ, ինչպես խոփը քարաշատ արտում,
Միտքը կհերկես այսօրվա մարդու,
Մինչև գրոհի ժամանակը գոտ։

Եվ ժամը երբ գա—դու կրկի՛ն, կրկի՛ն,
Ինչպես անցյալում կոմունար կանայք—
Ամպրոպաղղորդ քնարը ձեռքիդ,
Գրոհի վսեմ երգը շրթունքիդ
Դիրքերում ինձ հետ կկանգնես անահ։

Եվ ընկնեմ երբ ես՝ իմ սրտից զարկած—
Կմեռնես ինձ հետ ժպիտով հանգիստ,
Եվ կցրտանա քնարդ հանգած՝
Մեռնելուց առաջ մի վերջին անգամ
Ողջույն հնչելով ապագա կյանքին...

ՆԵՐԲՈՂՆԵՐ ՈՒ ԽՈՀԵՐ

ԵՐԳ ՄԱՔԱՌՈՒՄԻ

«Իմ ոգին է դա, ա՛ խրգում է իր վերելքի երգը, իսկ այդ ծիծաղելի ապեռը կարծում է, թե դա ե՛ս եմ երգում...»

ԷԴԳԱՐ ԳՈ

Вперед, мечта, мой верный волк!..
В. БРЮСОВ

I

Ինչպես ճամփորդ մի, որ խորդուբորդ
Ուղիներով է բարձրանում վեր,—
Այդպես ելել ես մի առավոտ
Եվ ընկել ուղի մի անհավոտ,
Մի ուղի դժվար ու անչափ վե՛հ։

Տարել է ուղին քո խորդուբորդ
Քեզ դեպի անհաս բարձրություններ,
Եվ անձրևն է մերթ քեզ թրջել հորդ,
Եվ երկինքն է մերթ գլխիդ ձյունել։—
Դու մաքառել ես, ընկել հաճախ,
Քսել երեսդ քարերին մերկ,
Ու չարչարել ես քեզ չարաչար,
Բայց կրկի՛ն, կրկի՛ն ձգտել ես վե՛ր։

Արդեն կտրել ես, արդեն անցել
Դու երկա՛ր, երկա՛ր մի ճանապարհ,
Եվ բարձունքնե՛ր ես դու ունեցել
Եվ անկումներ ես ունեցել հար,—

Բայց դու սրբել ես հոգիդ մի՛շտ էլ
Ճամփեքի մաքուր, վսեմ հրով,
Եվ միշտ պայծառ է հոգիդ եղել,
Եվ սիրտդ լիքն է եղել սիրով։

Եվ սիրտդ լիքն է եղել հաճախ
Ցասման թույնով ու ատելությամբ,
Եվ կասկածը սև կասկածը չար
Քեզ ճնշել է մերթ իր ծանրությամբ,—
Բայց դու մաքրել ես միշտ էլ հոգիդ
Կասկածանքներից այդ խաժադուժ,
Եվ մաքառել ես, որ չչոքի
Քո սրտին երբե՛ք հոգնության մուժ։

Դու բարձրացել ես մաքառումով
Դեպի ահռելի բարձրություններ,
Եղել ես հաճախ արևին մոտ,
Տեսել գագաթներ լուսաձյունե,—
Եվ ճանապարհին ինչքա՜ն ես դու
Քո բորիկ ոտներն արյունոտել։
Բայց քայլե՛լ ես միշտ, քայլե՛լ անդուլ,
Տքնել անդադար ու կարոտել։

Եվ երբ հոգնած ես եղել դու քիչ,
Երբ ճնշել է քեզ ուղիդ անհաս,
Եվ ճանապարհի քարերին ցից
Նստել ես, որ քիչ հանգստանաս—
Քեզ մեռած են միշտ կարծել նրանք,
Այն մարդիկ, որոնք իրենց օրում
Ո՛չ մաքառել են, որ բարձրանան,
Ո՛չ տեսել սարսափ ու հոգնություն։

Այդպես էլ այժմ։—Քեզ դիմացից
Կանչո՛ւմ, կանչո՛ւմ է ուղիդ անհաս,
Եվ դու ճամփեքի քարերին ցից
Նստել ես, որ քիչ հանգստանաս,—
Իսկ նրանք ահա, չարախնդում,

Տաք ճահիճների տիղմին հլու՝
Հանգուցելոց են արդեն կարդում
Եվ երգում քեզ մահ ու ալելու...

Բայց դու հանգիստ ես։— Սրտիդ խնդուն
Եվ մտքերի՛դ մեծ, և՛ հույզերիդ
Իջել է մի նո՛ր իմաստություն՝
Ե՛վ պայծառ, և՛ ջինջ, և՛ մտերիմ։
Քիչ հետո պիտի դու բարձրանաս
Եվ մաքառումի երգով անդուլ
Կրկի՛ն տքնաջան պիտի գնաս,
Եվ ուղիդ պիտի լինի խնդուն։—

II

Զգվում է ահա քո դեմ ուղիդ
Դեպի նոր, անհաս բարձրություններ,
Եվ գգվում է քեզ բույրը հողի
Եվ գագաթների շունչը ձյունե.
Եվ մենակ ես դու կրկին ահա։
Եվ դարերն են քո շուրջը երգում,
Եվ արեգակն է, որպես վահան,
Բարձրանում քո նո՛ր այս եզերքում։

Ելնում է քո նոր այս եզերքում
Մի չտեսնված, մի նո՛ր արև,
Բարձրանում է հուր, խնդուն երգով
Քո վերջի՛ն, վերջի՛ն լեռան վերև.
Վերջին գագաթն է քո դեմ ցցված՝
Քարքարոտ, անհաս ու ձյունածիր.
Դու վերջի՛ն անգամ պիտի զգաս
Բարձունքի ցնորքն անծայրածիր։

Օ, վերջի՛ն անգամ խնդուն երգով
Թոթափի՛ր հոգիդ ու բարձրացի՛ր,
Ժպիտով անհուն նայիր ներքև՝
Դաշտերում ծագող լուսաբացին,—

Ու քայլի՛ր անդուլ, քայլի՛ր կրկին,
Թող նորի՛ց հոգիդ արյունոտի,
Բայց ճահիճների ճղճիմ երգին
Թող երբե՛ք, երբե՛ք չկարոտի։

Ներքևում ահա, լեռան լանջին,
Ուր կան խարույկներ ու արոտներ,
Ինչպես ցնորքներ ու մոքեր չնչին—
Ջզվում են նեղլիկ արահետներ։
Մարդիկ են ահա այնտեղ հածում
Եվ արածում են այնտեղ գառներ,—
Բայց ուղի՛ն, ուղի՛ն քո մահացու
Արահետներին դու չխառնես։

Եղիր վերջի՛ն դու, եղիր հետի՛ն,
Թող լինի ուղիդ օրհասական,
Քո ճանապարհը երբե՛ք, սակայն,
Չխառնե՛ս նրանց արահետին։—
Մաքառի՛ր անդուլ, գնա վերև՛,
Քո գագաթնային երգը երգիր.
Վերելքը թող քեզ տանջանք բերե,
Եվ արյուն ծորա թող քո վերքից—

Եվ ուղիդ լինի թող հիմա ցուրտ,
Եվ վերելքդ թող լինի դժվար,
Անկումդ լինի թող մահացու,
Թող գագաթը քեզ անհա՛ս թվա,—
Քայլի՛ր դու սակայն, գնա՛ անդուլ
Դեպի քարքարոտ բարձրությունները,—
Եվ եթե ընկար—բուքն հոնդուն
Թող վերջին խինդով վրադ ծյունե...

ԵՍ ԱՅՆ ՉԵՄ ԱՅԼԵՎՍ

(Ներքոդ լիրիական)

ՊԱՏԱՍԽԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՑ

Եվ գիտեմ ես հիմա, որ ճամա՛ռ է,
Առօրյա աշխատանք է անդուլ—
Այն ամենը, որ վարար, ճողմավար էր,
Որ զալու էր երգով ու խանդով...

Ե. Չ.

Օ, դո՛ւք, ասպետներ չնչի՛ն դավերի,
Ի՞նչ եք քշփշում ճանկերդ սրած.—
Ես ոգով հիմա պի՛նդ եմ ավելի,
Ավելի՛ տոկուն, քան էի առաջ։
Եվ եթե երգով ես ասում եմ, թե
Ես ա՛յլ եմ հիմա, այլևս այն չեմ—
Նշանակում է՝ նոր հո՛ւն եմ մտել՝
Ավելի՛ խորունկ, ավելի՛ անշեղ։

Ես հախուռն էի, ինչպես պղտոր գետ,
Եվ սրտով թեթև, ու երգով շռայլ,—
Եվ ոգով այսօր չե՛մ փոխվել թեպետ,
Դարձել եմ, սակայն, ծանր ու ժլատ։
Իմ հոգին այսօր էլ չի՛ մանրանում,
Չի՛ մսխում իրեն թավռուն խոսքով—
Այդպես ցողո՛ւնն է հանդում ծանրանում,
Երբ լցվում է ձույլ իմաստուն հասկով։

Ես այն չեմ հիմա... Հույզերիս քամին,
Որ քշում էր ինձ անկումից-անկում—
Հանգստացել ու նստել է հիմի
Եվ ամեն կանչի չի՛ արձագանքում։—
Էլ չի՛ հոնդում սիրուս վայրենի,
Ինչպես դաշտերում նժույգ սանձարձակ.—
Գգվեց ինձ սիրով մի ձեռք հայրենի,

Եվ ես մի գիշեր իմաստուն դարձա։
Հասկացա հոգով, որ կյանքի հանդում,
Մարդկային ծփուն ծովում հողմածեծ
Միա՛յն երգերով ու անձև խանդով
Օ, ո՛չ մի ցողուն դեռ չի՛ բարձրացել։
Ես ձեռք քաշեցի կրքերից վարար,
Զգացմունքների հորձանքից անձև—
Եվ աշխատանքի բոցը փրկարար
Իմ անձրևածեծ երեսը խանձեց։

Ու դա՞շտ եմ ելնում ես կրկին ահա,
Ինչպես հնձվորը ելնում է հնձի,
Թմբկի փոխարեն ձեռքերիս պահած
Խոհով ծանրացած քնար պղնձի։
Իմ գլխի վերև կեսո՛ր է արդեն,
Ամռան արևն է կանգնել զենիթում,
Իմ դեմ— խոհերի չհնձած արտեր,—
Եվ հոգսն է ահա հոնքերը կիտում։—
Ինչքա՞ն եմ վատնել ես անգին ժամեր,
Եվ ինչքա՞ն հունտեր ցրել եմ ձրի,—
Եվ ինչքա՞ն պիտի հիմա աշխատեմ,
Որ գտնեմ ես այն, ինչ զո՞ւր կորցրի...
Ես շո՛յլ եղա իբրև սերմնացան,
Ժլա՛տ կլինեմ՝ ելնելով հնձի,—
Եվ աշխատանքի բոցը սրբազան
Թող մինչև գիշեր ճակատս խանձի։—

Որքա՞ն աշխատանք ու խոհ կա այստեղ,
Երկաթավորվող իմ հայրենիքում,
Որի վրայով հողմեր են անցել
Եվ մեզ լվացել հրե մրրիկում։—
Որի դարերից գոսացած դեմքին
Փչել է այսօր շունչը Լենինի,—
Կիզվել է հրով երկիրը հիմքից
Ու շռնդալով շինվում է հիմի։
Առաջին անգամ իմ հայրենիքում,
Ուր հոսում էին արնահուն գետեր—

Այս այգաբացի երթը զրնգուն
Իմ բարձրաշառաչ ե՛րգն է ավետել։
Հիմա՝ վաստակած ու ձեռքիս քնար՝
Ելնում եմ ահա կրկի՛ն ժպտադեմ,
Որ սերունդների գործին անկոբար
Խոհով ծանրացած իմ երգը խառնեմ։

Ես չե՛մ երգելու այժմ շառաչուն
Գալիքի մասին, որ գալու է դեռ.
Իմ ներսում հիմա հուզվում են, աճում
Ու շարժվում ուրի՛շ խոհերի գնդեր։—
Ներկա՛ն է հիմա իմ դեմ աղմկում,
Ինչպես կրքերի ամեհի մի ծով,—
Եվ անցնում եմ ես, քնարս բեկուն,
Այս հազարագույն օվկիանի միջով։
Անցնում եմ՝ իմ նո՛ր խոհերին գերի—
Եվ շուրջս ահա, մոտիկն ու հեռուն,—
Անքուն կրքերի, զգացմունքների
Լա՛յն, անծայրածի՛ր օվկիանն է եռում։

Ճամփա եմ ելնում ես ահա մենակ,
Քնա՛րս է միայն ինձ հետ միասին,—
Եվ երգում եմ ես, երգում եմ անահ
Իմ պայծառացած խոհերի մասին։
Դժվար կլինի իմ երթը հիմա,
Դժվար ու դժնի, քան երբևիցե,
Եվ ճամփիս գուցե օձերի նման
Ինձ արյունոտեն ժանիքները ձեր,—
Բայց պի՛նդ է ոգիս... Ու ո՛չ մի ժանիք
Ինձ չի՛ բաժանի իմ անդուլ դարից,
Ինչպես ո՛չ մի ուժ ինձ չի՛ բաժանի
Իմ շռնդալից, պայծա՛ռ քնարից...

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻՆ

(Ներբող քաղաքական)

О чем шумите вы?..
А. ПУШКИН

Լծված տերերի շառաչուն կառքին՝
Հանդում եք դուք այդտեղ վայրահաչ.
Ժանգոտած սուսեր ձեռքերիդ պահած՝
Անկում եք կարդում իմ նոր աշխարքին։
Օ, դո՜ւք, ողբալի պնակալեզնե՛ր,
Բռնակալների մի հետին քուրջում
Կծկըված՝ արդյոք կարո՞ղ եք տեսնել,
Թե ինչո՛վ ենք մենք ապրում ու շնչում։
Կարո՞ղ եք արդյոք ձեր դեղին ոգին,
Որ սնվել է լոկ հրով ու արյամբ—
Ծառս չլինի ու չբողոքի
Իմ երկրի հանդեպ, որ հավե՛տ հարյավ։
Դուք չե՞ք հրդեհով միշտ շառագունել
Ու երկիրն հանձնել սրի ու հրի,
Օ, դո՜ւք, արշինի՜ երկրպագուներ,
Ասպետներ ոսկու ու մառուզերի։
Դուք չէի՞ք արդյոք, որ բախտը այս մերկ,
Բազուկ սրերով զարկած աշխարքի
Ձեր պիղծ ձեռքերով կապեցիք երեկ
Բռնակալների արնածոր կառքին։
Դուք չէի՞ք, որ մեր այս բաղմալեզու
Երկրի առաջին այդաբացին դե՛ռ,
Գործերով ձեր պիղծ, ու ժանտ, ու քսու
Դարձաք բռնակալ ցարերին ընկեր։
Եվ ըմբոստության շունչը դեղեցիկ,
Որ հառնում էր այն դժնի օրերում—
Դուք չէի՞ք, որ ձեր ձեռքով խեղդեցիք
Այն ազգամիջյան սև նախճիրներում։
Դուք չէի՞ք, որ ողջ ժողովուրդը իմ
Այն անօրինակ փորձության ժամին

Քշեցիք դեպի դաշտերը ռազմի,
Որպես հավելյալ թնդանոթի մի՛ս։—
Անշե՛ղ է եղել ձեր ուղին միշտ է՛լ,
Դուք պատվով եք ձեր պայքարը տարել.—
Եվ դա— տերերի պայքարն է եղել
Իր երթին ելած ժողովրդի դե՛մ։
Դա չղաղարող պայքա՛րն է եղել
Ձեզ կյանքի կոչած դասակարգերի,—
Եվ ձեր գործերի պսակն հրեղեն
Եղել է երկիրն՝ արցունքի հեղեղ,
Եվ ժողովուրդը՝ կրկնակի՛ գերի։—

Ո՞ր դժոխքն է էլ ձեզ այդպես հեգնել
Ու լցրել այդքան անմիտ ցանկությամբ,
Որ տե՛ր եք ուզում դուք այսօր կանգնել
Դարերի՛ ավանդ մեր ժառանգության։—
Դուք տեր եք ուզում ձեզ հայտարարել
Այն հերոսական, հսկա պայքարի,
Որ ժողովո՛ւրդն է իմ երեկ վարել
Ընդդեմ բռնակալ սուլթանի՛, ցարի՛։
Դժգոհ է եղել իր վզին նստած
Բռնակալներից նա բազմապիսի,—
Դուք նրա վսեմ ընդվզումը այս
Ենթարկել եք միշտ ձեր մութ երազին։—
Նա ծա՛ռս է եղել տիրողների դեմ՝
Լինելով անհաց վաստակի գործիք,—
Դուք ըմբոստության այդ տենչը վսեմ
Աշխատել եք միշտ ցանցել ու լծել
Թե՛ հայ, թե՛ օտար տերերի գործին։—
Լեռնացել է նա, իր սիրտը սրբել
Արհավիրքների հրե հորձանքում—
Դուք նրան դավել, մեջքի՛ց եք խփել
Ու տարել անվերջ անկումից-անկում։—
Զգտում եք հիմա պայքարը այդ մեծ
Ձե՛րն հայտարարել մտքերով մթին,—
Մենք չե՛նք տա սակայն այդ պսակը ձեզ,
Չի՛ սազում նա ձեր արնոտ մոութին։

Իզո՞ւր եք ոռնում այդպես վայրահաչ
Դուք անկախության պայքարի մասին.—
Դա մե՞րն է հիմա, դա մե՞րն էր առաջ,
Որքան էլ դավով դուք բազմապիսի
Փորձեր եք արել, փորձում եք հիմա,
Ինչպես միշտ՝ ահա կրկի՛ն ու կրկի՛ն
Մեզ քշել դեպի կործանում ու մահ,
Մեզ լծել, ծախու գրաստի նման,
Թե՛ հայ, թե՛ օտար տերերի կառքին։

Ինչպես աշխարհի ճորտերին բոլոր,
Այնպես էլ գերի աշխարհին իմ հին—
Երկինք մի մաքուր, արև մի բոսոր
Լոկ հոկտեմբերյան հողմերը տվին։
Մեզ ասին նրանք, որ կյանք մի վսեմ
Կերտելու համար հարկավոր է նախ
Ձեր դե՛մ մահացու պայքար սկսել,
Ձեզանի՛ց լինել հեռու ու անկախ։
Եվ կրում ենք մենք այդ պայքարը վեհ
Մեր երկրի անկախ արևի ներքո,
Որ Լենի՛նն է մեծ մեզ մի օր տվել՝
Պրոլետարիատի հաղթական ձեռքով։
Ոռնացե՛ք այդտեղ, որքան կամենաք,
Ու սրե՛ք մեր դեմ սուսեր ժանգոտած,—
Մենք կլինենք անհա՛ղթ, մենք կլինենք անա՛հ,
Երբ թնդանոթը մեր դեմ որոտա։—
Իսկ մինչ այդ՝ կապված ամբողջ աշխարհի
Պայքարի ելած ստրուկների հետ՝
Կերտում ենք ահա մի շենք վիթխարի,
Որ շիրիմն է ձեր լինելու հավետ։—
Մաքառում ենք մենք՝ մեր երթին լծված,
Աշխատում անդուլ, կերտում, կառուցում,—
Եվ վաղվա անմար հավատով լցված՝
Երգում է քնարն իմ պղնձաձույլ...

ԹՈՒՂԹ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԲԱՐԵԿԱՄԻՍ՝ Ն. Ն.-ԻՆ, ԳՐՎԱԾ ԵՐԵՎԱՆԻՑ

Ահա կրկի՛ն գրում եմ քեզ,
Իմ լավ ընկե՛ր, իմ բարեկա՛մ,—
Օ, քե՛զ, անհայտ, բայց մե՛ծ երգիչ,
Ողջո՛ւյն, ողջո՛ւյն պոետական։—
Գրում եմ քեզ ես պարզ հանգով,
Ռիթմո՛վ հստակ, յամբով մեկին,
Գրում եմ քեզ կարոտանքով,
Ինչպես Պուշկինը՝ Դելվիգին...

Սրտով խաղաղ եմ ես հիմա
Ու խոհերով հստակ, մաքուր։
Իջել է իմ սրտի վրա
Զարմանալի հանգստություն։
Չեմ իմանում ի՛նքս էլ սակայն,
Թե ի՞նչը ինձ այսպես փոխեց.
Քա՞յլ էր սա մի հերոսական,
Թե՞ տարիքս են արդեն կոխել։—

Դարձել եմ լուրջ, ինքնավստահ,
Ձեռք եմ քաշել հիմա մանրից...
Իմ սենյակում երեկ նստած՝
Կարդում էի Ալեքսանդրին։
Կարդում էի... Եվ իմ հոգին
Հսկա մի խինդ էր ողողում.—
Այդքան պայծառ ու ահագին
Արեգա՛կն է միայն շողում։

Եվ կարդալով Ալեքսանդրին՝
Կրկի՛ն անգամ ես հասկացա,
Թե ինչո՞ւ է նրա անդրին
Սերունդների սրտում կեցած։
Թե դարերի հորիզոնում
Ջսուզվելով՝ ինչո՞ւ է նա

Անվերջ շողում ու բարձրանում
Եվ միշտ պայծա՛ռ պիտի մնա։—

Գրում եմ քեզ ահա ես հին
Պատասխանը այդ հին հարցի.
Թե ուզում ես երգդ լսեն՝
Ժամանակիդ շո՛ւնչը դարձիր։—
Կապվի՛ր նյարդով յուրաքանչյուր
Քո օրերին ու քո դարին,
Կյանքը սիրիր լիահնչյուն
Ումի՛ դավիր քո քնարին։—

Հարկավոր է ձուլվել դարին,
Ասում եմ ես... Բայց կա՞ արդյոք
Այդքան անհուն ու դժվարի՞ն,
Այդքան թե՛ պարզ, թե՛ բարդ մի գործ։
Մարդիկ կան, որ կարծում են, թե
Ով ավելի բարձր է գոռում՝
Նա՛ է միայն դարի տենդով,
Դասակարգի խանդով եռում։

(Մի ժամանակ, դժբախտաբար,
Ե՛ս էլ էի այդպես կարծում,
Բայց վերցրած պայծառ քնար՝
Աղատվել եմ ահա փորձում
Այդ մարմաջից... Թեկուզ... Թեկուզ...
Ապագայում գուցե ցավեմ,
Քանզի դա և՛ հեշտ էր, և՛ պարզ,
Ե՛վ անվնաս, և՛ շահավետ...)

Մեր շուրջը, տե՛ս, ինչքա՛ն դեմքեր,
Ինչքա՛ն մարդիկ, շեփոր առած,
Երգում են գործ, երգում են տեմպ,
Երգում երգեր բարձրաշառաչ։—
Երգում է, տե՛ս, գիշեր ու զոր,
Պոետների մի ողջ բանակ,
Սակայն երգեր քիչ կան այսօր,
Այլ կա հաճախ թուղթ ու թանաք։

Մե՛ծ է այսօր բանակը մեր.
Թե բոլորիս քշեն զինվոր՝
Լառնենք գյուղեր ու քաղաքներ,—
Բայց երգեր ենք գրում այսօր։
Երգում ենք սեր, երգում ենք մահ,
Երգում պայքար ու աշխատանք,
Մեր երգերում, սակայն, չկա
Այսօր ո՛չ սեր, ո՛չ խոհ, ո՛չ կյանք։--

Ի՞նչ են մեր մեծ դարի հանդեպ
Երգերը մեր թոթովախոս...
Մենք, որ մի նոր կյանք ենք կանգնել,
Ջունենք երգեր հատու ու խոր։
Ինչ գրել ենք մինչև հիմա՝
Սղել է լոկ առաջաբան
Մի վիթխարի երգի համար,
Որ գալու է, բայց դեռ չկա։

Ջհավատա՞ս դու ինքնագոհ
Պոետներին մեր այն բազում,
Որ հմայված իրենց երգով՝
Ներբողներ են իրար ասում։
Շա՞տ է չնչին մեր ապագան,
Թե որ դրանց երգին նայես.—
Ե՛վ դարը մեր հերոսական
Այդ երգի՞ն է միթե վայել...

Բայց նա կգա, պոետն այն մեծ,
Մեր երազած պոետը նոր,
Եվ ներկայիս մարդուն կերգե
Նոգով իր վեհ, ու բորբ, ու խոր։
Պղնձաձույլ իր քնարով
Շո՛ւնչը կերգե այս մեծ դարի,
Կայրե սրտերը սուրբ հրով—
Ու չի՛ դավե իր քնարին...

Մեր վիթխարի դարը ահա
Շտապելով ընդդեմ հնի,

Բարձրացրել է, որպես վահան,
Հսկա անունը Լենինի։
Եվ ուր առաջ բանտ էր խավար,
Ճորտությունն էր ուր լուռ քնել—
Ալեկոծվում են հողմավար
Անծայրածիր բազմություններ։

Աղմկում է հողմանման
Սոցիալական ծովը հիմի,
Կյանքը այսօր օրհասական
Բախումների օվկիան է մի։
Լեռնացել են իրար հանդեպ
Երկու հսկա դասակարգեր,
Ընկնում են հին գահեր այնտեղ,
Այստեղ կանգնում չեղած կարգեր։—

Եվ այս անդուլ դարում ահա,
Այս լեռնացող օվկիանում
Ապրում են բյուր մարդիկ հիմա,
Տխրում, տքնում, ուրախանում,—
Մարդն է ապրում, ինչպես առաջ,
Հուզումներով իր կենդանի.
Ունի կրքեր բազմաշառաչ,
Սրտում հազար հույզեր ունի,—

Եվ ի՞նչ... այս բորբ, այս կենդանի
Հույզերը հորդ երգելու տեղ—
Միաչքանի, միոտանի
Մարդն են երգում հիմա անթև.
Մարդն են երգում, որի կրծքում
Երգեհոն է դրված կարծես,
Որ ճիչեր է միայն փղձկում,
Չունի ո՛չ խանդ, ո՛չ խինդ, ո՛չ սեր։

Սակայն դու չե՞ս գտնում արդյոք,
Որ վիթխարի այս մեր դարում
Իր հույզերով ու կրքերով

Ավելի՛ է մարդը հարուստ։
Ինչե՞ր է նա այսօր տեսել,
Ինչե՞ր ապրել ու զգացել,
Եվ ի՞նչն է նա համարել սեր,
Եվ ինչո՞վ է ուրախացել...

Տեսել է նա Հոկտեմբերի
Անօրինակ պայքարը մեծ,
Ընդվզումի տարիների
Օրերը բորբ ու հողմածեծ։—
Կործանո՞ւմն է տեսել հնի,
Պալատների անկումն անդարձ,
Տեսել է մահը Լենինի,
Կորուստն այս խոր, անվերադարձ։

. . . . . .

Ինչքա՞ն է այս ամենը բարդ...
Այս ամենի հետ միասին՝
Մարդը էլի՛ մնում է մարդ,
Որ ունի սեր, որ ունի սիրտ։
Կարո՞ղ ես դու՝ երգի՛ր նրան՝
Իր հույզերով մեծ ու մանրիկ,—
Բայց այսպիսի երգի համար...
Քնա՛ռն է պետք Ալեքսանդրի։

Քնարն է պետք Ալեքսանդրի,
Ու քնարի հետ միասին՝
Այդքան անհուն ու ահագին,
Այդքան պայծառ ու վեհ մի սիրտ։—
Իր մի՛տքն է պետք պայծառատես,
Որ օրերի վեճի միջից
Հիմնականը մանրից զատն
Եվ կարկաչե ջինջ ու վճիտ։—
Որ առօրյա աղմուկների
Միջից տեսնի օրը գալիք
Եվ չդառնա ոգով գերի
Ենթզանեերին աղմկալի,—
Տեսնի՝ ոգով թե ի՞նչն է, որ

Դառնալու է էգուց անցյալ,
Եվ ի՞նչն է, որ՝ հեռու մի օր՝
Պիտի կանգնի բա՜րձր ու պայծառ...

Եվ նա կգա, պոետն այդ մեծ,
Մեր երազած պոետը նոր,
Եվ ներկայիս մարդուն կերգն
Երգով իր վեհ, ու բորբ, ու խոր—
Պղնձաձույլ իր քնարով
Շունչը կերգի մեր մեծ դարի,
Կայրե սրտերը սուրբ հրով—
Ու չի՛ դավե իր քնարին...

Վերջացրիս— Գիշեր է խոր—
Եվ գիշերվա այս խոր պահին
Գլխիս վրա թառել է լուռ...
Իմաստուն բուն Միներ վայել
Եվ առույգ է սիրտս շնչում,
Կասկածանքներ իմ մեջ չկան։—
Դե՛, ընդունիր հազա՜ր ողջույն,
Պոետական իմ բարեկամ...

ԽՈՀ

Սերը—անա՛ նրա միակ մեղքը
ՕՎԵՍԵՓՈՍ ՆԱԶՈՆ

Նա՞ա էր լեցուն նոգվույս, ո՛վ Տեր,
բազմագեղումն այս շրջասփյուռ...
ՄԻՍԱԿ ՄԵԾԱՐԵՆՑ

Ես մարդ եմ, պոետ ու քաղաքացի,
Ապրում եմ ահա լենինյան դարում,
Գրում եմ երգեր, զնում եմ գործի,—
Ապրում եմ այնպես, ինչպես աշխարհում
Ապրել է մարդը բազմաթիվ դարեր։
Իմ երակներում արյունն է հոսում

Եվ սիրում եմ ես «աշխարհ ու արև»։—
Իմ սրտում ունեմ ես անթիվ սերեր,
Ու ցանկություններ, ու խոհեր բազում.—
Ես ինձ հետ այսօր աշխարհ եմ բերել
Հազա՛ր մտորում, հազա՛ր զղացում։—

Եվ այնպես, ինչպես բոլո՛ր դարերում
Կապված է եղել մարդը իր դարին,—
Ես իմ մեջ այսօր տենչերն եմ կրում
Մեր ժամանակի անդո՛ւլ պայքարի։
Եվ ինչպես Ճորտը շվայտ Հռոմում
Պատրիկների հետ չի՛ նստել ճաշի—
Այնպես ես այսօր, լենինյան դարում,
Չե՛մ կարող լինել բռնակալ դասի՝
Պատրիկների հետ... Հազա՛ր թելերով
Կապված եմ ես այս հսկա պայքարին—
Եվ մաքառումի այս ճանապարհին
Ես ամե՛ն տանջանք տարել եմ սիրով։

Ես դարիս ահեղ փորձության պահուն
Ո՛չ միայն հատու երգեր եմ կռել,
Այլ մարտ եմ մղել կյանքի ու մահու,
Որպես մի զինվոր— Պատրաստ եմ կրել
Ես կրկի՛ն սվին, երբ օրերը գան.
Հազար թելերով քաշում է ներկան
Ինձ հորձանուտը իր լուռ պայքարի.—
Իմ բոլո՛ր, բոլո՛ր նյարդերով՝ որ կան,
Ես կապված եմ իմ վիթխարի դարին։—

Բայց չե՛մ մոռանում ես երբե՛ք, երբե՛ք,
Որ տրված է ինձ մարդկային մի սիրտ,
Տրված են սերեր, կարոտներ, կրքեր,
Եվ կա աշխարհում... մի «հիմար լուսին»։—
Վարդե՛ր կան կյանքում, կրքե՛ր կան անանց,
Կան գրքե՛ր, գրքե՛ր հազարաչքանի,
Մրգե՛ր կան հասուն, մարգե՛ր կան կանաչ—
Եվ ես աշխարհում ապրում եմ քանի,—
Չե՛մ կարող սիրով, սրտով իմ անհագ

Զգացմունքներիս հորձանքով բեղուն
Ցսիրել կյանքի լիությունն անհաս,
Ամբողջությունը այս բազմաբեղուն...

Հազար հույզերով հուզում է ներկան
Ու փռում իմ դեմ հուզումների բերք.—
— Ողջո՜ւյն քեզ, կարո՜տ, ու խո՜հ, ու պայքա՜ր,
Ողջո՜ւյն քեզ, կյանքի բազմալեզու ե՛րգ։
Պայծա՜ռ եմ նայում աշխարհին հիմա,
Իմաստություն է իմ սրտին իջել.
Հնձի եմ ելել հնձվորի նման—
Եվ ո՜չ մի ցողուն չե՛մ ուզում ջիջել։
Չե՛մ ուզում լինել արճիճ ու երկաթ,
Այլ, սիրտս սրբած վաղվա հավատով՝
Ընդունում եմ ինձ այնպես, ինչպես կամ՝
Իմ ոգու ամբո՜ղջ տենդով ու տապով։

Եվ դո՜ւ, գալիքի երջանի՜կ ընկեր,
Համաշխարհայի՜ն դու քաղաքացի.
Լսո՜ւմ ես՝ մարտիկ լինելուց բացի
Ես է՛լ քեզ նման մի մարդ եմ եղել։
Ես է՛լ քեզ նման ունեցել եմ բյուր
Կարոտներ, կրքեր ու զգացմունքներ,
Տքնել եմ, հոգնել, պայքարել անքուն,
Թափել խնդության, ցավի արցունքներ,—
Սիրել եմ, սիրվել, ատել ու ներել,
Ընկել եմ հաճախ, բարձրացել էլի՜--
Եվ բազմապիսի երգեր եմ գրել՝
Խոհով, պայքարով ու կրքերով լի՜։--

Եվ երբ հուշ դառնա այսօրվա ներկան,
Ու դարը այս մեծ փոխվի երազի,
Եվ դու, իմ հեռու, գալի՜ք բարեկամ,
Կարդալու լինես իմ կյանքի մասին,—
Իմացի՜ր, որ մեր օրերի խորքում
Ե՜ս էլ եմ եղել կրքերի գերի,—
Հասկացի՜ր սրտիս հույզերը հորդուն...
Եվ տաժա՜ռ նայիր անցած պատկերիս...

ԷԼԵԳԻԱՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԷՊԻՔԱԿԱՆ ԱՌԱՎՈՏ

Աղջամուղջը նայում է աչքիս
Այսօր խստաբարո, զգա՜ստ։
Առավոտը շուտով կբացվի,
Եվ սիրտս խնդություն կգգա։
Ինչ լա՜վ է՝ բարձրանալ կանուխ
Եվ տեսնել, ճեղքելով մառախուղը,
Թե ո՜նց է ձգվելով բարձրանում
Մխնելույզի ծուխը։—
Զգալ, որ հո՜գսն է արթնանում,
Որ ուղի՜ պիտի դեռ գնաս,
Մի ուղի, որ վե՜ր է դեռ տանում,
Մի ճանապարհ անհաս...

Դու այդպե՜ս բացվեցիր գլխիս,
Իմ վերջի՜ն հասունություն...
Դժվարին է հիմա իմ ուղին—
Եվ գնում եմ ահա ես արթուն։
Դիմացից հո՜գսն է նայում,—
Հարկավոր է երկա՜ր մաքառել.
Որ գործը լինի մնայուն,
Ինչպես միջօրեի արև։—
Դիմացից սերունդնե՜րն են նայում,
Սաստում են, որ գնամ զգաստ.—
Ինձ անտես մի ձեռք է սպահում,
Ճանապարհին իմ այս...

Սիրո՛վ եմ բաժանվում քեզանից,
Իմ հախո՛ւռն անփութություն,
Իմ անհոգ օրե՛ր պատանի,
Իմ շռա՛յլ ջահելություն։
Ողջունում եմ քեզ խնդությամբ
Եվ ո՛չ թե դառը ցավով,
Իմ վերջի՛ն, վերջի՛ն այգաբաց,
Իմ էպիքական առավոտ...

ՄՈՒՍԱՅԻՍ

Ահա կրկի՛ն ինձ հետ ես, ահա կրկի՛ն,
Իմ բարեկա՛մ, ընկե՛ր, իմ զինակի՛ց։
Ունկնդիր եմ լինում ահա երգիդ
Ես կարոտով, սիրով վաղվաղակէ։

Քո խոսքերում հիմա, քո մտերիմ
Զրույցներում և խո՛ր, և լմարող—
Զարմանալի հստակ քո երգերում
Թախի՛ծ, թախի՛ծ կա ջինջ, անափ կարոտ։—

Ինչքա՛ն եմ ես, զիտե՞ս, սիրում հիմա
Ողի՛, ոգի՛ սրբող, բայց չկրծող
Այդ ջինջ թախիծը քո խինդանման,
Այդ տխրությունը քո ստեղծագործող...

Հայացքներում պահած պայծառ թախիծ՝
Այդպես ճամփորդն է լոկ տխրում արի,
Այն հոգնաջան ճամփորդը, որ կատարից
Ե՛տ է նայում՝ անցած ճանապարհին։—

Այդ ե՞րբ է նա անցել այդքան ուղի,
Եվ օրը ո՞նց դարձավ արդեն կեսօր...
Բայց չի՛ փոխվում այդ վիշտը մառախուղի,
Այլ քրտինք է դառնում՝ մաքրող ու զով։—

Եվ սրբելով քրտինքն իր ճակատից՝
Նա բարձրանում է վեր, քայլում կրկին,
Բայց աչքերում մնում է արդեն թախիծ
Եվ կարոտ է ձուլվում նրա երգին...

Մենք դեռ երկա՛ր պիտի քեզ հետ գնանք,
Իմ բարեկա՛մ, ընկե՛ր, իմ զինակի՛ց։—
Օ, թո՛ղ թախիծը այդ պայծա՛ռ մնա
Ու չցնցի երբեք քո ճակատից։—

ԱՅՐԱՆ ԵՐԳԵՐ

Когда для смертного умолкнет шумный день
И на немые стогны града...

А. ПУШКИН

Երբ երեկոն իջավ, որպես հոգնած ճամփորդ,
Եվ փոշեպատ նստեց տանիքների վրա,—
Ես սենյակս մտա իմ խոհերի ճամփով
Եվ հանեցի երգերքս մի երեկո գրած։
Ես հանեցի երգերքս ու կարդացի կրկին
Պատմություններ, հուշեր մի ավերված հոգու,
Եվ խորշեցի ես ինքքս իմ հուսահատ երգից,
Եվ ամոթի թախիծն էր իմ ճակատին չոքում,—
Երբ տողերի միջից իմ երգերի, իմ այդ
Մի երեկո գրած նվագների տակից
Հառնեց հանկարծ, նայեց ու ժպիտով ժլատ
Ինձ ողջունեց նաղով արդեն մեռած մի կին։
Ու տողերիս միջից ինձ պարզեցին երկու
Նախատինքի սրեր երկու աչքեր մեռած։
Հետո սրբեց ճակատքս նա իր նրբին ձեռքով,
Եվ խո՛ր հանգիստ իջավ իմ աչքերի վրա։
Նա ինձ ասաց, այդ կինը, իմ տողերի միջից.
«—Արիացի՛ր, ընկե՛ր իմ, ամրապնդվի՛ր ոգով,
Մաքրի՛ր հոգնած քո սիրտը կարոտներից չնչին,
Որ վերանա խավարը քո հուշերին չոքող։—

Թե հիշատակն իմ թանկ է դեռ քո սրտին հիմա,
Թե ուզում ես, որ հուշըս չխավարի քո մեջ,—
Կրի՛ր պայծառ անունդդ մարտիրոսի նման,
Եղիր ոգով անդո՛ւլ դու, ու մաքառող, ու մեծ»...
Օ, հարազա՛տ ընկեր իմ, իմ բարեկա՛մ, իմ քո՛ւյր,
Անվերադարձ անցած հերոսակա՛ն իմ կին,—
Ահա կրկի՛ն արև է իմ խավարած հոգում
Եվ կենսատու ժպիտ է իմ տարամերժ դեմքին։—
Երբ դադարեց քո ձայնը այն երեկո— հանգիստ
Ես շոյեցի ճակատըս ու վառեցի կրակ,
Եվ հանձնելով իմ կյա՛նքը հերոսական կամքիդ՝
Ես այրեցի երգերըս մի երեկո դրած...

. . . . . .

ՕՎԿԻԱՆԻ ԵՐԳԸ

Երգի՛ր, պոե՛տ, երգի՛ր, երգի՛ր երգը քամու,
Երգի՛ր երգը սիրո ու պայքարի,
Որպես մրրիկ՝ երգի՛ր, երգի՛ր, որպես սամո՛ւմ,—
Եվ քո սրտում այդ երգը թող չմարի՛...

Ես հիշում եմ օվկիանը փոթորիկի ժամին.—
Օրորելով կրծքին անհուն ջրեր՝
Որոտում էր անդունդը— և ահռելի քամին
Մռնչալով երգում էր մի վայրի երգ։
Նրա երգում հնչում էր մի անսահման թախիծ,
Մի վիթխարի հոգու անափ կարոտ,
Որ օվկիանի հախուռն մթնշաղից
Խելագարված՝ կանչում էր անհուն սիրով։
Խելակորույս՝ կանչում էր անծայրածիր մի սիրտ,
Մռնչալով կանչում իր սիրուհուն,
Որ երգելով փախչում էր փոթորիկի մեջից
Եվ թնդալով թռչում անծայր հեռուն։—
Եվ հողմերի միջից շառաչելով փախչող
Իր սիրուհուն վսեմ չհասնելով երբեք—

Այդ ամեհի քամին, զարմանալի թախծոտ՝
Հեռուներում երգում էր հաղթական ե՛րգ...
Դա ամեհի պայքար էր ջրերի և քամու,
Երկու իրար խանդող թշնամու սեր,—
Անհանգչելի սիրո մի վիթխարի սամո՛ւմ,
Որ տալիս էր քամուն պայքարի երգ։
Դա հաղթական մի երգ էր անեզրական կրքի,
Հերոսական մի երգ անափ սիրո,—
Եվ հանձնված սիրո այդ հաղթական երգին—
Այդ խոլ քամին թռչում էր դեպի գրոհ...

Երգի՛ր, պոե՛տ, երգի՛ր, երգի՛ր երգը քամու,
Երգի՛ր երգը սիրո ու պայքարի,
Ինչպես մրրիկ՝ երգի՛ր, երգի՛ր, ինչպես սամո՛ւմ,—
Եվ քո սրտում այդ երգը թող չմարի։—

Այն կատաղի հողմի մթնշաղի միջից
Շառաչելով կանչող այն քամու պես—
Քեզ հրկիզեց կյանքում անեզրությամբ վերջին
Մի անսահման կարոտ, մի անափ սեր։
Նա քեզ ցնցեց, այդ սերը, ինչպես շաչող քամին
Աչիքներն էր ցնցում իր խոլ թափով,
Անցավ սրտից նա քո այս պայքարի ժամին,
Որպես երթի ելած ցասման թափոր։
Նա որպես շանթ՝ պայթեց քո խոհերի վրա,
Որպես կայծակ՝ շաչե՛ց հողմաշառաչ,—
Եվ լեռնացան խոհերդդ օվկիանի նման,
Եվ որոտաց քո սերը հողմահալած...

Երգի՛ր, պոե՛տ, երգի՛ր, երգի՛ր երգը քամու,
Երգի՛ր երգը սիրո ու պայքարի,
Ինչպես մրրիկ՝ երգի՛ր, երգի՛ր, ինչպես սամո՛ւմ,—
Եվ քո սրտում այդ երգը թող չմարի։—

Այս անսահման սիրո անհանգչելի բոցում,
Այս պայքարում ահեղ, այս մարտում խոլ—
Թող կարծրանա՛ ոգիդ որպես պողպատ դաշույն,

Թող շողշողա, որպես հանճարեղ խոհ։
Քո մեջ եռա՛ թող նա, ինչպես անմար եռանդ,
Ինչպես վսեմ մի խանդ՝ թող բորբոքի,—
Եվ կլինես դու մե՛ծ, և կլինի անպարտ
Այս պայքարում կոփված քո խոլ ոգի՛ն։
Քո հույզերի, քո խոր կարոտների խորքից
Թող որոտա այդ ե՛րգը անապ սիրո—
Եվ, ունկնդիր նրա այդ հաղթական երգին՝
Թող քո ոգին թռչի դեպի դրոհ։—

Երգի՛ր, պոե՛տ, երգի՛ր, երգի՛ր երգը քամու,
Երգի՛ր երգը սիրո ու պայքարի,
Ինչպես մրրիկ՝ երգի՛ր, երգի՛ր, ինչպես սամո՛ւմ,—
Եվ քո սրտում այդ երգը թող չմարի՛...

ՄԵՌԱՆ ՊՈԵՏԻՆ

Նրանք ասում են, որ դու անցել
Ու հնացել ես, ու հեռացել,
Որ լքել են քեզ ու մոռացել
Օրերում այս խենթ ու դարձդարձիկ.
Բայց տե՛ս—կանչում է ահա մի ձեռ
Եվ մի սիրտ, որ քեզ սիրում է դեռ.
— Վերադարձի՛ր, օ, վերադարձի՛ր...

— Վերադարձի՛ր, օ, մենք քեզ կտանք
Թե՛ սեր, թե՛ հուրեր, թե՛ խնդություն.
Ինչպես սիրած մի թափառական
Դու կրկի՛ն, կրկի՛ն կմտնես տուն...
Կգգվի դեմքիդ քամի մի զով,
Օրերի շունչը, արդեն հնչե՛ղ,
Կլցնի հոգիդ անհուն հույզով—
Ու նո՛ր, նո՛ր երգեր կներշնչե...
— Վերադարձի՛ր, օ, վերադարձի՛ր...

—Այն ճանապարհով, որով մի օր
Անցար սրտաբեկ ու դնացիր—
Անցան թափորներ արևավոր
Ու նոր բյուրավոր դռներ բացին...
Ա՛ն երկրում, ուր դու մի օր լացիր
Ու մորմոքացիր այն սև բոցում—
Ահա գարուններ արևածին
Ու շռինդ, ու վառք, ու կառուցում...
— Վերադարձի՛ր, օ, վերադարձի՛ր...

ԵՐԿՈՒ ՍՈՆԵՏ ԱՐՓԻԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Блажен, кто посетил сей мир
В его минуты роковые.

Ф. ТЮТЧЕВ

I

Իմ բարեկա՛մ, իմ սե՛ր, հերոսակա՛ն ընկեր,
Դու ապրեցիր, անցար և էլ չկաս հիմա,
Սակայն դեռ կյանքը կա և չի՛ դարձել ամա,
Եվ ո՛չ մի ասող վերից դեռ ներքև չի՛ ընկել։

Ահա կրկին իմ դեմ ծաղիկներ ու կյանքեր՝
Քո գարունքին բացված ծաղիկների նման,
Կրկի՛ն ճիգեր անդուլ, անօրինակ ջանքեր՝
Մարդկային կյանքը մեր կառուցելու համար։—

Մշտահոլով, աննինջ, հավերժորեն հոսուն,
Օվկիանի անխոնջ ալիքների պես վեհ՝
Աղմկում է ահա հուզումների լեզուն։—

Եվ ինձ տալիս է թափ ու պայքարի թևեր
Այս առօրյան կրկին, որ հռանդից եռում
Ու մղում է դեպի անեզրական հեռուն։—

II

Մենք ապրեցինք քեզ հետ մի վիթխարի դարում,
Որ բյուրավոր մարդկանց խանդաղանքով ահա՛
Բարձրացրել է որպես հաղթանակի վահան,
Մի վիթխարի մարդու այգանման անուն։—

Մեր սրտերում անդուռ մի ափսոսանք պահած՝
Մի օր ճամփա դրինք նրա դագաղը մենք,—
Եվ քարացել էին, ինչպես ռազմի պահակ,
Ճանապարհին՝ անթի՛վ բազմություններ։—

Դա թաղում չէ՛ր, ընկե՛ր, այլ շառաչուն մի այգ,
Որ բացվում էր այս հին մոլորակի վրա,—
Եվ ողջունում էինք մենք այգաբացը այդ։—

Եվ հառնելով՝ արդեն կերպարանքը նրա
Հուրհուրում էր գալիք հրդեհների հրով՝
Արնանման, ինչպես հաղթանակի դրոշ...

ՄԱՀՎԱՆ ՔԱՅԼԵՐԳ

(Հերոսական)
ԼԵՆԻՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ո՛չ փող զարկինք...
Մ. ՊԵՇԻԿԹԱՇՅԱՆ

Մենք փող զարկինք և արձագանքն ահավոր
Երկրից-երկիր որոտաձայն շառաչեց,
Եվ սրտերում միլիոնավոր, բյուրավոր
Ըմբոստությունն ահագնացավ ու աճեց։

Ձնդաններում, խրճիթներում, հանքերում,
Ուր տառապած մա՛րդն է հարթում իր ուղին,—
Ոտքի ելան ահաղանգի զանգերով
Փնդերն անդուլ գործարանի ու հողի։

Եվ ոտնաձայնը գնդերի ընթացող
Եվ շառաչյունը զենքերի մահահոտ—
Խրճիթներում հնչեց, որպես մարտակոչ,
Պալատներում պայթեց, իբրև մահվան բոթ։

Եվ թափորի ելած բոլո՛ր գնդերի,
Բոլո՛ր ըմբոստ բանակների առաջում—
Արդեն ննջած առաջնորդի պանծալի,
Անձեռագործ դիակառքն էր շառաչում...

Երթը ձգվեց հերոսական, փառավո՛ր,
Եվ կայծակներ շոնդալով շողացին,
Եվ դրոշներ հազարավոր, բյուրավոր
Նրա վերև արնանման դողացին։

Եվ լուռ ննջած Առաջնորդի դագաղի
Երթին ելած բազմություններն այդ անահ
Երդո՛ւմ տվին պայքարելու կատաղի—
Մինչև վերջի՛ն, մինչև վերջի՛ն հաղթանակ...

Մենք փող զարկինք և արձագանքն ահավոր
Երկրից-երկիր որոտաձայն շառաչեց,
Եվ սրտերում միլիոնավոր, բյուրավոր
Ըմբոստությունն ահագնացավ ու աճեց։

ԶՄԵՌԱՅԻՆ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔՆԱՀԱՐԿՈՒՄ

Այս սենյակներում գիշեր մի մթին,
Երբ դուրսը բուքն է շաչել հիստերիկ—
Մի պորփյուրակիր արքա-առլեկին
Հարցաքննել է դեկաբրիստներին։
Սառը ժպիտով, բեղերը սրած,
Սեղմել է նրանց մատները դողդոջ—
Եվ նրա կապույտ աչքերից նրանց
Նայել է մի պահ բախտը անհողդողդ։
Ճի՛շտ նույն ժպիտով, որով նա հաճախ

Սիրել է նայել սիրուհու զիստին,
Բարակ ձեռքերը իր կրծքին խաչած՝
Հրավիրել է Պեստելին նստի։
Կապույտ աչքերը հառելով սրին,
Սրտում զսպելով խոր մի ահ թեպետ՝
Ջափազանց ինտիմ, քաղաքավարի
Զրույց է արել Ռիլեևի հետ։
Կանչել է մեկ-մեկ, խոսել է այսպես,
«Բացել» է անդամ իր սիրտը ոմանց,
Փորձել է անդամ վեհությամբ ազդել՝
Մի հեքիաթային արքայի նման...
Աչքերում պահած ամեհի հուրեր՝
Օրհնել է նրանց ժպիտով խաղաղ,—
Եվ ճանապարհ է այստեղից դրել
Դեպի՛ բանտ, Սիբի՛ր, դեպի կախաղա՛ն։

ԷՊԻՔԱԿԱՆ ՖՐԱԳՄԵՆՏՆԵՐ

ՁՈՒԳՈՒՆԵ ՄԱՐԴԸ[1]

На берегу пустынных волн
Стоял он, дум великих полн, —

А. ПУШКИН

Там, где сливаяся шумят,
Обнявшись, будто две сестры,
Струи Арагвы и Куры,
Был монастырь.

М. ЛЕРМОНТОВ

Այս ձորում ահա, անհողդողդ-վեհ,
Կանգնած է Մարդը այդ չուզունեն։—
Դիմացը— լե՞ռն է սրադագաթ,
Որի այն խոժոռ գագաթին ցից
Թառել է վանքը, որպես արծիվ։
Ներքևը, վարը, ահա վարար
Հոսում է գետը։— Նրա ափով,
Որպես մի հողե ժապավեն դորշ՝
Բարակ ձգվում է ահա շոսսեն։—
Քանի՜ դարեր է այստեղ հոսել
Այսպես այս գետը, քշել հեռուն
Պղտոր ջրերը իր վարարուն
Եվ իր ափերին ամայի-սև

[1] Լենինի արձանը Զագէսում։

Լոկ խոժոռ ժայռեր այստեղ տեսել
Եվ այդ ժայռերի գրկում կքած՝
Խարխուլ խուղե՛ր լոկ։— Ուղիով այս,
Որով թռչում է ահա օթոն,
Մի օր անցել է, գուցե ոտով,
Մի դանդուր պոետ հյուսիսցի...
Նրա հանդո՛վ է, որ հյուսեցի
Ես է՛լ այս երգս, նվիրված քեզ,
Օ, վիթխարի՛ դու, օ, վե՛հ Ջագէս։—
Հիմա այս ձորում, անհոգդողդ-վեհ,
Կանգնած է Մարդը այդ շուգունեն։—

Հասակը բարձր է։— Հպարտ կեցած,
Որպես մի քարե վիթխարի սյուն՝
Անհուն հայացքը սևեռած ցած՝
Պարզել է ձեռքը։— Ըմբոստ հոսում,
Խոսում է գետը ներքևում սև
Ու շրթունքներից թափում փրփուր։—
Այդ գետը ե՞րբ է արդյոք տեսել,
Որ մի մարդկային մոդական ձեռք
Իր վեհ ընթացքը կասեցրնե։—
Առաջ անցնում էր այստեղից լուռ,
Որպես մի արքա դանդաղարայլ,
Եվ անվրդով էր ու անայլայլ
Նրա ընթացքը։— Քանի՛ դարեր
Այդպես անցել է նա անհրեր
Եվ կամքով իր կուռ ու վիթխարի
Քանդել խութերը ճանապարհի
Եվ իր ընթացքով արքայական
Սաստել ամբողջը։— Մի օր եկան,
Լցրին ափերը մարդիկ ինչ-ո՛ր,
Նրանց ընթացքը խորհրդավոր,
Տարօրինակ էր։ —Ջեռքերին թուղթ,
Առած հետները ցցեր, կացին՝
Իր հին չափերը չափչփեցին։
Հետո մի ըմբոստ, ժիր ժողովուրդ
Բռնեց ափերը ու խլրտաց։—

Իսկ գիշերները ոսկեշղթա
Ձգվում էր լույսը դեպի հեռուն
Ու առկայծում էր իր ջրերում
Նրանց վառ բույլը։— Առավոտից
Մինչև խավարը իջներ գետին՝
Ներքևը, վարը, ձորամիջում
Եռում էր կյանքը ու շառաչում։
Մի հսկայական պողպատե ցալ
Փորում էր հողը։— Բառաչով ցուրտ
Թռչում, փնչում էր երկաթե ձին։
Որպես մի քարե պառաված ցին,
Իր այն բարձունքից դարավոր-վեհ՝
Քրքջում էր վանքը չարությամբ լի։—
Եվ այդ քրքիջը անլսելի—
Ջարագուշակ էր։— Սակայն անցան
Օրե՞ր, նո՛ր օրեր, օրեր էլի՛—
Եվ այդ քրքիջը դարձավ սարսափ։
Իր կույր աչքերով մի օր տեսավ
Ներքևը, վարը, նա հուն մի նոր։
Եվ այդ վիթխարի, քարե հունով
Հոսեց հին գետը։— Սակայն ինչո՞ւ,
Ինչո՞ւ է գետը ահեղ փնչում,
Եվ ինչո՞ւ նրա հորձանքի դեմ
Կանգնեց պատնեշը այդ բետոնե,
Եվ գետը, գետը դարձավ խոնարհ...
Հետո կրակներ ցոլացին վառ,
Կարծես երկինք էր գետից ելել,
Օ, մի նո՛ր երկինք բյուրաբեգակ...
Այդ արևներից ոսկեկրակ
Հետո ձգվեցին բարակ թելեր
Դեպի քաղաքը այն հեռավոր—
Եվ սի՛րտը, սի՛րտը լցվեց ահով։—
Ներքևը— կյանքն է հիմա քրքջում.
Օ, եթե դառնա՛ր հանկարծ թռչուն,
Մի երկնասլաց թռչուն ջահել,
Կարող աչքերով շուրջը նայեր,

Պարկեր թևերը ու սլանար...
Բայց շղթայված է ժայռերին նա՛
Եվ քա՜ր է ինքը ու սիրտը— քար։—
Նա գուցե այստեղ մի քանի դար
Դեռ մնալու է այսպես չնչին,
Մինչև որ մի օր քամուց փլչի
Եվ դառնա զրույց ու հիշատակ։—
Եվ նա աչքերով իր միգապատ
Նայում է շուրջը. նայում ներքև,
Ուր գետն է երգում ահեղ երգեր,
Եվ ուր, կեցվածքով անսահման վեհ՝
Կանգնած է Մարդը այդ շուգունե...

Դա ո՞վ է, ի՞նչ է, ինչո՞ւ է նա
Ներքևում կեցել, որպես պահակ,
Եվ շուրջը, շուրջը նրա ահա
Եռում է կյանքը բյուրաբեգակ։—
Դա ո՞վ է, ի՞նչ է արդյոք խոկում,
Եվ ի՞նչ հույզեր են նրա հոգում,
Եվ ի՞նչ մտքեր են արդյոք նստել
Նրա ճակատի խորշոմներին.
Նա ի՞նչ է ուզում այս ափերից
Եվ ինչո՞ւ է նա եկել այստեղ...

Մռայլ է վանքը։— Անհուն ահից
Կքվել, թեքվել է նա ավելի,
Եվ, քարե սիրտը այդ ահով լի՝
Նա լուռ նայում է հեռուներին,
Նայում է՝ աչքը ահեղ մահի—
Եվ լուռ է շուրջը ու ամայի։—
Մռայլ է վանքը։— Կպած ժայռին,
Որպես մահամերձ մի ցին վայրի՝
Շնչում է ծանր, հազիվ հեռում։—
Անցնում է կյանքը... Ու ներքևում,
Որպես մի հսկա, անհողդողդ-վեհ՝
Կանգնած է Մարդը այդ շուգունե...

ՀՈԿՏԵՄԲԵՐ 25—26 1917

(Ֆրագմենտ)

Где над возвышенным крыльцом,
С поднятой лапой, как живые,
Стоят два льва сторожевые...

А. ПУШКИН

Երկինքը գորշ է։— Պղտոր Նևան
Դանդաղ՝ խփում է իր ափերին,
Եվ մառախուղը ծխանման
Իջել է թանձր։— Պալատների
Մութ ֆասադները մառախուղում
Կարծես ճոճում է մի անտես ձեռք.
Անծայրածիր մի, անսահման երդ
Տարուբերվում է քաղաքում հար.—
Ամենուրե՛ք, օ, ամենուրե՛ք
Եռում է երթը այդ անդադար։—

Երկինքը գորշ է։— Այնտեղ, հեռուն,
Ուր գորշ Նևան է տարուբերում
Իր լայն իրանը ալիք-ալիք,—
Նստել է ծանր ու անսոսիկ
«Ավրորա» նավը։— Զմեռային
Անթով պալատն է ահա այնտեղ,
Որպես մի գամփռ, իր դեմ նստել։—
Աճում է ահը։— Սարսափն անդեմ
Դառնում է ծանր ու դժնադեմ
Ու թանձրանում է հետզհետե։—

Աճում է ահը։— Զմեռային
Հին պալատից այս մի քիչ ներքև,
Ուր առյուծներն են այն ամեհի,
Որոնց պոետն է այն մեծ երգել
Երգով իր բարձր,— այնտեղ ահա
Թնդանոթներ են դրված մեկին.

Եվ հրացանը ձեռքին պահած,
Թնդանոթներից մեկի կողքին
Ահա կանգնած է մի գունատ կին։
Երիտասարդ է։— Նրա դեմքին
Նստել է ահը։— Նրա բարակ
Մատներն հազիվ են պահում սառած
Ու ծանր կոթը հրացանի։
Ճնշում է ցուրտը։— Խոնավ քամին
Մինչև թոքերն է նրա մտնում,
Եվ նա նայում է ու թշնամուն,
Որ մոտենում է— նա չի գտնում։—
Աճում է ահը։—
Ինչո՞ւ է նա,
Գունատ այս կինը, կանգնած այստեղ,
Ինչո՞ւ է ահը այդպես նստել
Նրա նուրբ դեմքին ու աչքերին.
Այս անդառնալի լոպեներին
Այդ ո՞վ է նրան դրել այստեղ։—
Աճում է ահը։—
Թեկուզ անդին,
Իր կանգնած տեղից մի քիչ հեռու,
Ահա ցցված է Ալեքսանդրի
Ծանոթ հասակը,— իր սիրելու,
Իր մտերիմի՛, որին այնքան
Սիրում է ինքը, որ օրերով
Ահա կռվում է, որպես հերոս
Բոլշևիկների «հորդայի» դեմ,—
Թեկուզ կանգնած է ահա այնտեղ
Իր տրուբադուրը,— սակայն կրկին
Ճնշում է ահը։— Հեռուներից
Անդեմ սարսափ է մի արշավում,
Եվ մառախուղը պալատներին
Դժկամությամբ է արդեն նայում։—
Աճում է ահը։—
Այս կինը, տե՛ս,
Որ սրթսրթում է ահից այդպես,
Որի պրոֆիլը նման է հին

Մի հախճապակե մեդալյոնի,—
Ահա՛ այս կինը զինվոր է մի
Այն ամազոնյան բատալյոնի,
Որ հրացանը հիմա ձեռքին
Արհավիրքներից պիտի փրկի
Այս պալատները, ուր տարիներ
Զվարճացել է Կատարինեն...
. . . . . .
Աճում է ահը։— . . . . . .
. . . . . Այնտեղ, հեռուն,
Այս առյուծներից մի փոքր անդին,
Ուր մառախուղն է դանդաղ քերում
Ամեհի պատերը սենատի,—
Այն անծայրածիր հրապարակում,
Ուր, կարծես հենց նոր լեռից պոկած,
Ընկել է ծանր մի հսկա քար
Ու վերից իր ձեռքն է տարածում
Դեպի հեռուներն արքան այն մեծ,—
Այնտեղ ամբոխներ են խռնվել
Եվ, սուր սվիններ կոշտ ձեռներին՝
Դժկամ՝ նայում են պալատներին։
Աճում է ահը, ինչպես փորձանք։—
Օ, դո՛ւ, կարո՞ղ ես հիմա երգել
Այս մառախուղը թե՛ խոլ, թե՛ վեհ,
Այս լեռնացումը գահակործան...
. . . . . .
Աճում է ահը։ Մառախուղում
Վերջին վայրկյանն է արդեն դողում—
Եվ ծանրությյան տակ Պետրոս Մեծի
Արդեն ճռճվում է սղնձյա ձին...
. . . . . .
Աճում է ահը։ . . . . . .
. . . . . Այնտեղ, հեռուն,
Ուր գորշ Նևան է տարուբերում
Իր լայն իրանը ալիք-ալիք—
Կանգնել է, ծանր ու անտոիկ,

Քարե այն տունը։— Այդտեղ առաջ
Մի մենաստան է եղել խազաղ,
Ու սովորել են հետո այդտեղ
Այն նուրբ կույսերը սիրել, խանդել,
Երգել ռոմանսներ, պարել կուդրիլ—
Ինչ երազել է ամեն պատրիկ
Իր հոմանուհու, կնոջ համար...
Գոռ ռազմավայր է այնտեղ հիմա։
Նեղ սենյակներում, վարը, բակում,
Այգում, փողոցում, հրապարակում
Անդուլ վխտում են, հագած շինել,
Մարդկային դժկամ բազմություններ։—
Ու թնդանոթներ, գնդացիրներ,
Ռումբաձիգ գնդեր կանգնած ահա,—
Այդտեղ իր բո՛ւյնն է հիմա դրել
Մի չտեսնված, մի նոր բանակ։—
Աճում է ահը։—

Վերը, այնտեղ,
Նեղ սենյակներից մեկում, հանդարտ
Նստած է փոքր, աշխույժ մի մարդ։
Հասակը կարճ է։— Աչքերի մեջ
Անկատելի ժպիտ կա մի.
Ամբողջ մարմինը միանգամից
Շրջում է նա, երբ նայում է ե՛տ։—
Նա աշխատում է խորասուզված։—
Մեկ-մեկ մարդիկ են մտնում դռնից,
Որին հսկում են երկու կարմիր
Ջինվորներ՝ հագած զգեստներ պարզ։
Նա աշխատում է խորասուզված,
Ինչ-որ թեզեր է գրում նա, երբ
Հնչում է զանգը հեռախոսի։
Իր աթոռի հետ նա միասին
Շրջվում, առնում է փողը. անշարժ
Մի պահ լսում է. դեմքի վրա
Նստում է հոգսը։—Հետո հանկարծ
Կարծես ցնցում է մի ձեռք նրան.—

«Ավրորա՞... Ի՞նչ է... չե՞ն հանձնվում...
Արդեն ուզում եք... ի՞նչ... կրակե՞լ...»—
Վայրկյանը գար է արդեն թվում։
Նա մտածում է։ Ակնթարթ մի
Մնում է համր։— Հետո հանկարծ
Հպում է փողը շրթունքներին,
Շնչում է ծանր— ու կամացուկ
Հրամայում է.—

«Կ ր ա կ ե ց ե՛ք»։

Աճում է ահը։

«HOMO SAPIENS»

I

Տասերեք թվի ամառը, հունիսին,
Նաիրյան քաղաքի մի փողոցով խաղաղ
Անցնում էր, հոգսը երեսին,
Տասնըվեց տարեկան մի տղա։—
Վտիտ էր։ Միջահասակ։ Ուսերը նեղ։
Գանգուր մազեր ուներ, գունատ ճակատ։
Հագին սև շապիկ սատինե՝
Խունացած, առնվազը երեք ամառ հագած։
Դեղին երիզներով դպրոցական գլխարկը
Գանգուր, խիտ մազերին նստել էր ձիգ։
Նա գնում էր դանդաղ, քայլում էր գլխահակ,
Անտարբեր շրջապատին, ինչպես ձի։
Նա դուրս եկավ տնից։ Կեսօր էր։
Քիչ հետո հայրը երևի գալու էր ճաշելու։
Նա չէր սիրում հորը։
Իսկ հոր համար տղան դարձել էր հանելուկ։
Հայրը։— Հիշեց զայրացած։— Նա երեկ,
Երբ ինքը կես-գիշերին վերադարձավ տուն—
Գաղաղեց ու համոզեց երկար։— Հետո պայման դրեց՝
Կամ տուն չգալ այլևս, կամ կրկին պատրաստվել քննության։
Ուսը ցնցեց տղան մեքենայաբար,
Հիշեց դպրոցը, հորը, մռայլ տեսուչին,—
Ինքը կանգնած է գլխիկոր նրանց առաջին՝

Դեմքին ամոթ, փոշի ու արցունքներ թափած...
Խորը հոգոց հանեց, հառաչեց—
Ու քայլերը ձգեց։— Երկար
Զգվում էր իր դեմ փողոցը։ Գնում էր։
Ամառվա շաֆրանով ներկած՝
Հորանջում էր փողոցը քնում իր։
Փողոցը... Երկու շարք միհարկանի տներ՝
Դեղին, գորշ, վարդագույն, կրկին դեղին։
Իսկ մեջտեղում՝ շոսսե։— Փոշոտ, նեղ,
Ինչպես գյուղական սայլուղի։—
Երբեմն անցնում էին մայթից մարդիկ,
Դանդաղ անցնում էին ու մտնում տուն։
Ու կրկին ամայանում էր մայթը։
Շոգ։ Փոշի։ Խաղաղություն։—
Կամ մի տնից երբեմն, մի պատուհանից
Դուրս էր նայում մի պահ մի կանացի գլուխ,
Կանչում էր դիմացի հարևանին—
Ու կրկին փողոցը ննջում էր։ Լուռ։
Տղան քայլում էր դանդաղ, առանց նայելու
Իր շուրջը։— Ոտքերը մեքենայաբար
Տանում էին նրան։—Ճանապարհը
Ջուներ նրա համար հրապուրիչ բան,
Նա գնում էր այգի։— Կոնատակին
Նա տանում էր մի գիրք։—Ջսարսափե՛ս,
Ընթերցո՛ղ։— Գրքի շապիկին
Գրված էր՝ «Homo Sapiens»։—

II

Նա կարդում էր երկար, նստած ալևյում,
Այն հին կաղնու ներքևը, որի բնին
Անցյալ տարի ամառը մի տաքգլուխ
Դանակով փորագրել էր «Արփենիկ»։
Նա կարդում էր անհագ, լափելով
Էջերը, գլուխները։— Գրքի թերթերից
Մեկը, տիտանային, կարծես շանթ էր թափում
Եվ այրում իր հոգին, իր կրքերը։

Գլուխը վառվում էր։ Սիրտը
Թրթռում էր։— Ուզում էր թռչի դո՛ւրս, դո՛ւրս։—
Տագնապով դարձնում էր թերթերը
Ու կարդո՛ւմ, կարդո՛ւմ, կարդո՛ւմ։—
Չքացել էր աշխարքը։— Այգին
Դարձել էր անիրական։ Այգին չկար։
Կար մի մարդ հանճարեղ, կար մի կին։
Կար մի կարոտ միայն։
Եվ անարատ մի սիրտ կար։ Եվ մի ուղեղ՝
Դեռ անապակ, դեռ ջինջ, դեռ մաքուր։
Գավառցի պատանի կար մի խեղճ
Նաիրյան այդ խեղճ քաղաքում։
Նա կարդում էր։ Սուզվում էր անդարձ
Ցնորքների հորձանքը։— Գրքի էջերից
Երազվում էր նրան տիտանային մի մարդ,
Որի հոգին, մտքերը, տենչերը
Վիթխարի են, ամե՛ն ինչ խորտակող,
Որը բարձր է իր բուն շրջապատից,
Ինչպես ճահճից—Էլբրուսը,— և վարդագույն
Մի մշուշի նման նրա հոգում
Արդեն փռվում էր մի անկրկնելի կարոտ...
Նա կարդում էր անհագ— և գնում էր, հանդուգն,
Արդեն ինքն էլ այդ «վեհ» ճանապարհով։—
Եվ թվում էր նրան, թե իր գլխին
Շառաչում են շանթեր,— և իր սրտում
Հրդեհներ է վառում անիրական մի կին,
Մի հանճարեղ աղջիկ... անհագ թերթում
Ու կարդում էր անվերջ, մինչև հոգնեց։
Զգաց՝ քաղցած է քիչ, իսկ գրպանում...
Ընդամենը ուներ... երկու կոպեկ։

III

Երեկո էր արդեն, երբ նա, հոգնած,
Գիրքը դրեց մի կողմ։— Շուրջը նայեց—
Ամայի էր ալեյը։— Հանճարներին վայել
Մի շարժումով շոյեց նա իր ճակատն հանկարծ—

Եվ քայլերը ուղղեց ալեյից դուրս։
Այնտեղ, այգու դիմացը, կար մի փոքրիկ խանութ,
Որ վաճառում էր հաց։— Կես ֆունտ գնեց
Եվ գրպանում պահած՝ վերադարձավ կրկին
Նա ամայի ալեյը։— Շուրջը նայեց—
Չէր երևում ոչ ոք։— Նա սպասեց մի քիչ,—
Եվ սկսեց ուտել գաղտագողի։— Մտքում
Երազվում էր դեռ նա, այն հանճարեղ գերմարդը։—
Շուտով կիջնի գիշեր, այգի կգա Նվարդը...
Նա շտապով կերավ, վերջացրեց։— Հանկարծ
Մի շարժումով կրկին իր ճակատը շոյեց—
Եվ որոշեց, որ ինքը դառնալու է կյանքում...
Մի հանճարեղ պոետ։—
Նա որոշեց հանկարծ, միանգամից,
Եվ սկսեց շրջել ալեյներում խաղաղ,
Հետո մտավ ակումբը, ուր մի քանի
Ուսանողներ՝ հարբած՝ բիլիարդ էին խաղում։
Զանձրանալով՝ դանդաղ նա այդտեղից
Երբ դուրս եկավ կրկին մի քիչ հետո—
Արդեն այգին լցվել էր։—Դեմը նայեց—
Անցնում էր այն աղջիկը ծառի մոտով,
Իր երազած աղջիկը, իր դիցուհին,
Իր հանճարեղ Նվարդը... Նա մոտեցավ,
Փորձեց զուցե անել հետը մի քիչ,
Շլացնել նրան իր խոհերով պայծառ...
Բայց աղջիկը նրան չշոյեց,
Չվերցրեց անգամ նրա վարդը...
. . . . . .
Այդ պատանին հետո դարձավ պոետ,
Եվ դրեց այս նովելը, որ դուք կարդար...

ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԵՏՐՈՊԱՎԼՈՎՅԱՆ ԱՄՐՈՑՈՒՄ

Ես, անբարբառ մի մանուկ,
Երկու ձեռս պարզեցի...

ՄԻՔ. ՆԱԼՔԱՆԴՅԱՆ

Այս ամրոցի օդում՝ մղլահամ ու ճնշող՝
Ստվերներ են շրջում օրհասական,—
Եվ անցյալի մռայլ ոտնաձայնն է հնչում
Ինչպես մահվան քայլերգ հերոսական...
Ուրուների նման արնակարմիր ու վեհ,
Հայացքներում վճիռ ու տառապանք անգո՝
Տեսլանում են ահա մարտիրոսներն իմ դ[illegible]
Եղերական ու սուրբ կերպարանքով։—
Այսպես, շարան-շարան, ստվերներ հին,
Հին անուններ— այնքան հերոսական,
Դեմքեր— և՛ պարզ, և՛ ջինջ, և՛ սիրելի—
Ահա կանգնում են իմ մտքի առաջ։
Սերունդներ են ամբողջ, մի վեհ բանակ,
Շռնդալով անցնող հարթական երթ,
Հերոսության, փառքի մի ճանապարհ անհնոս,
Հիմա դարձած անցած օրերի երգ...

Իսկ այս բակում ահա, ուր հիմա մի
Շենք կա կանգնած ուրիշ,— այստեղ ահա
Մ՛յլ բաստիոն է հին ու ամեհի
Ցցված եղել առաջ, որպես պահակ
Սրբանների փառքի ու ցոփության...
Հյուսիսային այն ցուրտ դեկտեմբերյան օրից,
Որ արշալույսն եղավ այս օրերի,
Տառապել են այստեղ բազմություններ ուրիշ,
Բայց նո՛ւյնքան վեհ, անբիծ հերոսների։
Իմ ուղեղի միջով հիմա նրանք
Ահա անցնում են լուռ, խստաբարբ.

Խարազանի հետքեր մարմինների վրա,
Բայց աչքերում վճիռ մի չմարող։
Մտաբերում եմ ես նրանց մեկ-մեկ,
Ռիլեևից մինչև պայծառատես
Այն մտածողը վեհ ու հանճարեղ,
Որին Մ՛րքսն է մի օր անվանել մ ե ծ։
Այս քարերի վրա, այս պատերի,
Որոնց նայել են այդ մարդիկ մի օր—
Հայացքների նրանց ու խոհերի
Անանց հետքերն եմ ես փնտրում սիրով։
Վաղուց արդեն թողել, հեռացել են նրանք,
Որոնք ինձ հետ մտան բակն այս ահի,—
Անխոս նայում եմ ես այս պատերին մռայլ,
Շուրջս մութն է արդեն ու ամայի։
Հրաժեշտ եմ տալիս արդեն նրանց,
Շուտ եմ գալիս արդեն, որ գնամ ետ—
Երբ իջնում է հանկարծ ուսիս վրա,
Անակնկալ՝ իջնում է մի ծանր ձեռք։—

Ետ եմ նայում, վերև... Թեքված ուսիս՝
Մի մարդ՝ դեմքով հեռու, անիրական,—
Մտերմական ձայնով ասում է ինձ.
—Դուք ինձ մոռացե՞լ եք, բարեկա՛մ...
Բարձրահասակ է. ջղուտ. աչքերը սև.
Բակենբարդներ ունի, փոքրիկ մորուս։
Ես որտե՞ղ եմ նրան արդյոք տեսել.
Կյանքո՞ւմ արդյոք, տենդո՞ւմ, թե գրքերո՞ւմ
Վշտանման ժպիտ մի աչքերում՝
Նայում է նա, նայում՝ հայացքն հառած.
— Ի՞նչ է.— ասում է. — չե՞ք մտաբերում
Տարիներում այն մութ իմ բարբառած
Շռնդալից երգերն ըմբոստության մասին։—
Մաքառելո՛վ անցա ուղին ես իմ,
Պայքարելո՛վ այն սև բռնության դե՛մ,—
Եվ պարծանքո՛վ կասեմ, որ բարեկամ էի
Ես Հերցենի, պոետ Օգարևի հե՛տ...
— Ա՛,— զարմանում եմ ես, ճանաչելով նրան,

Պարզում թևերս, որ նրան գրկեմ.—
Նա ողջունում է ինձ ու հեռանում արագ—
Ամայի բակն է լոկ լռում իմ դեմ...

ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱՆ

Փակում եմ հոգնած աչքերս մի պահ
Եվ տեսնում եմ ես— այնքա՞ն, այնքա՞ն պարզ.—
Գալիք մի գարուն, վառ մի օր ահա,
Երկինքը հապույտ, օրը հրավառ։
Արևը արդեն բարձրացել է քիչ,
Ջնդում է օրը, ինչպես երգեհոն—
Ու կապո՛ւյտ, կապո՛ւյտ, կապո՛ւյտ երկնքից
Թափում է կարծես երգ ու խնդություն։—
Ոլորապտույտ ձգվում է շոսսեն
Նոր Երևանից դեպի Արարատ.
Ինչքա՞ն են արդյոք տարիներ հոսել
Մինչև գարնային այս օրը զվարթ։
Շոսսեի երկու կողմերում ահա
Տներ, փողոցներ ու գործարաններ,
Կանաչ պարտեզներ, ծաղիկներ առատ,—
Այդ ո՞վ է արդյոք այսքանը ցանել։
Ընկած են տներն իրարից հեռու,
Գործարանները մեջընդմեջ կեցած,
Ո՛չ ծուխ, ո՛չ փոշի.— և լույս տներում—
Ժիր մարդիկ ահա՝ դեմքերին ծիծաղ։—

Ելած արշնացող քաղաքից՝ ահա
Ոլորապտույտ շոսսեով այդ լայն,
Առջևում կարմիր մի դրոշ պահած՝
Անցնում է վաշտը պիոներական։
Հնչում է նրանց դոփյունը հաստատ,
Թմբուկն է թնդում ռիթմով կորովի.
Անցնում են նրանք քայլերով փստահ,
Աչքերով հստակ, դեմքերով թոմնչ։—
Քայլում են նրանք շոսսեով. հետո

Կտրելով այդ լայն, ասֆալտե շոսսեն՝
Անցնում են ահա այն ձորի մոտով,
Ուր աղմկաձայն Զանգուն է հոսում։
Զանգուն է հոսում ներքևում զվարթ,
Հստակ ջրերով անվերջ կարկաչում,
Իսկ այնտեղ ահա— մի հին ցանկապատ
Ու քարեր՝ ընկած կանաչի միջում։—
Քարեր, հի՞ն քարեր, վաղուց մոռացված,
Անտանուն, անգիր, ննջում են այնտեղ,
Ուր լռությունն է իշխում անհաստատ.
Ու հուշն է թռչում՝ հավիտյան անթև։
Ժպտում է վերից երկինքը կապույտ,
Արևն է գնում անհուն զնդոցով,
Եվ վաշտն է անցնում քայլերով անփույթ,
Արբած արևի կենսատու բոցով։
Հնչում է նրանց դոփյունը հաստատ,
Թմբուկն է թնդում ռիթմով մի ժիր.
Եվ մանուկների աչքերում նստած՝
Գարունն է ժպտում արևի ուժին։—
Անցնում են նրանք ծիծաղով հնչուն
Այդ անխոս, այդ հին քարերի մոտով,
Նրանց ծիծաղում կյա՞նքն է կարկաչում,
Գարո՞ւնն է կանչում անալի կարոտով։—

Անցնում են նրանք— Ու նրանց երթից,
Աչքերը հառած քարերին խազաղ՝
Հանկարծ բաժանվում ու մոտ է գալիս
Մի կապուտաչյա, գանգրահեր տղա։—
Պիոներական փողկապը վզին,
Ոտները մինչև ծնկները բոբիկ,
Ճակատը բարձր, աչքերը լուսե,
Հագին սպիտակ, կապտերիզ շապիկ,—
Նայում է նա ջինջ, պայծառ աչքերով
Գերեզմանատան քարերին մի պահ,
Հետո կարծրացած փոշին է քերում
Նա մի հին քարի վրայից ահա։
Նայում է ապա նա փոշոտ քարին

Աղեղանման հոնքերի տակով...
Գրված է վրան.— «Եղիշե Չարենց,
Բանաստեղծ, ծնված Մակու քաղաքում»:
Կարդում է նա իր աչքերով ծավի,
Ժպտում է, հիշում կարծես ինչ-որ բան,
Քաղում է ապա մի կանաչ բաղեղ—
Ու շարունակում իր թոզած ճամփան։
Միծազով հնչուն ու արծաթաձայն
Միանում է նա կրկին շարքերին—
Եվ, հուշի նման հավիտյան անցած,
Մնում է հանդում մի կորած շիրիմ...

. . . . . .

Լսո՞ւմ ես՝ այնտեղ իմ սի՛րտն է թաղած,—
Կոխոտի՛ր նրան քայլերով քո լույս,
Օ, դո՛ւ, գալիքի գանգրահե՛ր տղա,
Մեր լա՛վ գալիքի ոսկեհե՛ր մանուկ...

ՄԱՆՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Հիշո՞ւմ ես՝ ինչքա՜ն
Սիրում էիր դու
Այն լավ աղջկա
Աչքերը խնդուն,
Գգվանքները հեզ
Այն լա՜վ աղջկա,
Որ սիրում էր քեզ
Ու հիմա չկա...
Հիշո՞ւմ ես՝ անգամ
Այն պահին ահեղ
Ժպիտով կարկամ
Նա դեմքիդ նայեց—
Եվ ասաց քեզ նա.
«Մի՛ լինիր տրտում,
Որ պայծառ մնա
Հուշս քո սրտում...»։

ՄԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿԻ

Արև՛ ունես՞ քո աչքերում,
Քո աչքերում, քո ձեռքերում,
Քո այդ փամփլիկ թաթիկներում,
Քո խատուտիկ աչիկներում։—
Քո խատուտիկ աչիկներով
Պիտի նայե՛ս մի օր հեռուն,
Դրո՛շ պիտի պահես մի օր
Քո ամրացած ձեռիկներում,—
Ու չմարող իմ երգերով
Պիտի գնաս դեպի գրոհ...

ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՆԵՐԻՆ

Սիրելի N-ին

Երգում էր պոետը՝ նստած վրանում.—
«Մարդիկ հեռանում են ու հա՛ր մոռանում...
Այդպե՛ս մոռացավ ինձ աղջիկը այն շար.
Եվ դա՛ էր, օ, դա՛ էր, որ դարձավ պատճառ,
Որ ինքս, ես ի՛նքս մի օր հեռացա—
Եվ... չանցած գարունը՝ նրան մոռացա...»—
Էլ ի՞նչ ես երգում դու՝ նստած վրանում—
Եթե հեռանում են ու հա՛ր մոռանում...

ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳՐՔԻ ՎՐԱ

Ընդունե՛ս, ընկե՛ր, այս գիրքս այնպես,
Ինչպես աղջիկն է նվեր ընդունում.—
Սպասում է նա դրան անհամբեր,
Իսկ ստանալիս — մի կողմ է դնում։—

ԸՆԹԵՐՑՈՂ ՊՈԵՏԻՆ

Զարմանքո՛վ գուցե նայես դու փոմ այս
Գրքի էջերին՝ թե՛ անշուք, թե՛ պարզ,
Հեգնանքով գուցե ժպտաս ու ասես,
Թե պոետը մեր այս ո՞ւր է հասել...
Բայց հասել է նա մի ջինջ պարզության,
Որ ձեռք է բերվում «դժվար վարժության»։—

Մեզ համար արդեն ուղի է անցած
Համաշեշտ երգի ռիթմը նվագուն,—
Սովորի՛ր գրել դու պարզ ու պայծառ,
Ինչպես այն չքնաղ պոետը գանգուր,
Որի երգերում թե՛ քորեյ, թե՛ յամբ
Դյութում են իրենց տոկուն պարզությամբ,
Թովում են թափով, առնությա՛մբ արի—
Սրանո՛վ է նա ահա վիթխարի։

ՀՐԱԺԵՇՏ ԼԵՆԻՆԳՐԱԴԻՆ

Մնաս բարո՛վ, քաղա՛ք դու մեծ,
Քաղաք զգաստ ու մաքառող,
Ես սիրեցի առօրյան քո,
Ընթացքը քո թե՛ վեհ, թե՛ վեհ։
Ես սիրեցի փողոցներդ
Հեռուն թե՛ լուրջ, թե՛ գրավիչ,
Նեան՝ հագած գորշ գրանիտ,
Արձանն անգամ Պետրոս Մեծի,
Որ բարձունքից իր ահռելի
Նայում է հին պալատներին,
Ուր իր համար զարմանալի
Կյանք է եռում հիմա ուրիշ.
Մի կյանք՝ ուրի՛շ եռանդով լի,
Ուրի՛շ խանդով հրապուրիչ։—
Մնաս բարո՛վ, քաղաք գործի,
Աշխատանքի մայրաքաղաք,
Մաքառումի միապաղաղ,
Բայց հավիտյա՛ն ստեղծագործիչ.
Սովորեցի այստեղ ես էլ
Լինել զգաստ, լինել տոկուն.
Իջավ այստեղ իմ խել ոգուն
Իմաստություն պարզ ու վսեմ.
Սովորեցի գնալ անդուլ
Սերունդների ճանապարհով,
Ինչպես ահա գնում ես դու.
Օ, վե՛հ քաղաք,— մնաս բարո՛վ...

ՆԵՐԲՈՂ ԱՌ ՔՆՆԱԴԱՏՆ N. N

Решил Фиглярин вдохновенный,
Что я в дворянстве мещанин.
А. ПУШКИН

Օ, դո՛ւ, նաիրյան մարքսիզմի չստեր
Հագած ֆիլիստեր,
Օ, դո՛ւ, պատահմամբ սերտած մտքերի

Մի խղճուկ գերի
Դարձած կրետին—
Լսի՛ր մի անգամ խոսքը պոետի,
Որին դու անշուշտ հայհոյես պիտի...
Զարմանո՞ւմ ես դու, որ երգ եմ գրել
Ես այսօր ահա մաքառման մասին,
Եվ չթառամող խոսքերով հրե
Գովք եմ կարդացել անդուլ եռապին
Եվ բարձունքների ցնորքին անհաս.—
Օ, հավատացի՛ր, ընկե՛ր սիրելի,
Որ հավետ անմահ մի երազ է այս։—
Չի կարող լինել մեր ոգին դերի
Սերտած խոսքերի, կռտած մտքերի.—
Թե ապրում է նա ու շնչում է դեռ՝
Զգաելու է նա անհաս ափերի,
Որքան էլ ահա դու այսօր պնդես,
Թե չկա ուղի ինքնախոյացման,
Խղ, անխոնջ ոգու անդուլ մաքառում,
Որ հասել ենք մենք «անդորրի» հիմա—
Լենինյան այս վեհ գործերի դարում...
Չէ՞ որ լուծված են քեզ համար բոլոր
Հարցերը, անգամ «պրոբլեմը սիրո».—
Օ, բոլո՛ր, բոլո՛ր հարցերին արդեն
Դու վաղուց պատրաստ լուծումներ ունես,
Քեզ համար չկա ասպարեզ, որտեղ
Դու անդորրության հասած չլինես։—
Իսկ ե՞ս... Ի՞նչ պահեմ իմ հանցանքը ես.
Բարդ է ինձ համար աշխարհը մի քիչ,
Եվ բոլոր այդ բարդ հարցերի հանդեպ
Չե՛մ կարող այսօր ես թեթև խանդով
Արձակել միայն հիացմունքի ճիչ։—
Հե՞շտ է ձեզ համար մեր ուղին այսօր
Եվ չե՞ք նկարել շարունակ մեզ դուք,
Ինչպես ձեր գոված պոետն է ասել—
Այս ուղին, որպես մի «թեթև ոստյուն»։—
Փռված է այսօր կրկին ձեր առաջ
Այս ուղին, որպես հարսանիքի երթ,

Եվ դուք, երջանիկ թմբուկներ առած,
Երգում եք անվերջ հարսանիքի երգ—
Եվ ինքներդ ձեր երգով հիանում,—
Հասկանո՞ւմ եք դուք, թե ի՛նչ եք անում...
Չե՛մ ուզում գնալ ես ճանապարհով,
Ուղիով ձեր այդ՝ զարմանալի հեշտ,
Գերադասում եմ ուղին քարքարոտ,
Որով շարունակ ընթացե՛լ եմ ես։—
Եվ մի՛ք շփոթի ձեր ուղին այդ հեշտ,
Այդ ուղին թեթև խաղի ու պարի—
Պրոլետարիատի ճանապարհի հետ,
Նրա՛ մաքառման, նրա՛ պայքարի։—
Այդպես չի՛ այսօր շարքերով իր կուռ
Սրբում նա իրեն պայքարի բոցում,
Եվ աշխատանքի հնոցում անդուլ
Այսպես չի՛ այսօր նոր կյանք կառուցում։—
Ես չեմ էլ ձգտում, որ դուք ինձ շոյեք.—
Դուք չե՛ք, որ պիտի սնեք իմ ոգին.—
Լանցնեմ իմ ուղին ես, որպես պոետ,
Զգտելով միայն, որ ժանգ չլոքի
Իմ ոգու վրա և ո՛չ մի վայրկյան։—
Երգել եմ այստեղ ես խոհ ու պայքար
Եվ խնդությունն եմ երգել իմ ոգու,
Երգել եմ նրա ձգտումն անդադար,
Զգտել եմ երգով, որ մնա տոկուն
Նա թե՛ տխրության, թե՛ հոգսի ժամին,
Ինչպես հնոցի հուրը բորբոքուն,
Ինչպես օվկիանում թնդացող քամին։—
Ես գիտեմ հիմա, որ հարսանիք չի՛
Մեր կյանքը այսօր, կամ «թեթև ոստյուն».
Որ փոշի՛ է լոկ այն ոգուն նստում,
Որ կարծում է, թե թեթև կթռչի,
Ինչպես ծիծեռնակ՝ դեպի կյանքը նոր։—
Ես գիտեմ հիմա՝ որպիսի՛ զնով,
Որպիսի՛ դժվար ջանքերով է մարդ
Կռում իր ոգին, որ նա կարծրանա,
Կոփվի— և ապա պիտանի դառնա

Այս դժվար, այս բարդ պայքարի համար—
Որ չի՞ վերացել դեռ կյանքից ներկա
Եղկությունը՝ մեր խոհերին նստող,
Եվ փոքրությունը մարդկային դեռ կա,
Եվ ոգու, ոգո՛ւ ճորատությունն ստոր...
Ես գիտեմ հիմա, որ մարդը հանճար
Կարող է մղել մարտ բազմաշատ,
Բայց ոգով կրվել, թերվել չարաչար
Սիրտ, կորսան, կամ հոգսի առաջ—
Թե խոհերը նա այն բազմապիսի
Որ ընդունում է ուղեղով իր ցուրտ—
Զբրծի անդուլ և չհրկիզի
Ոգու, տանջանքի անհինջ հնոցում։—
Դժվար է եղել իմ անցած ուղին
Եվ կորուստներ եմ ունեցել ես մեծ,
Եվ ճանապարհս եղել է հղի
Խոր անկումներով,— սակայն ահա ես
Ոտքի եմ կենում կրկին անվեհեր՝
Խոր տանջանքներով իմ ոգին կոփած,
Եվ մաքառում եմ կրկի՛ն ահա վեր՝
Նինջ ու հոգնություն ներքևում թողած։—
Ոգի է տալիս ու թափ ներշնչում
Ինձ կրկին այն մեծ պայքարը նրա՛նց,
Որոնց դժվարին, բայց հաղթական չուն
Երգել եմ ես իմ երգով հուրհուրան։—
Եվ կերգեմ կրկին։— Եվ ո՛չ մի ժանիք
Ինձ չի՛ բաժանի լենինյան դարից,
Ինչպես ո՛չ մի ուժ ինձ չի՛ բաժանի
Իմ շանդալից, պայծա՛ռ քնարից...

1927 — 1930
«ԼԻՐԻՔԱԿԱՆ ԱՆՏՐԱԿՏ» ՇԱՐՔԻՑ

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Մանկությա՛ն իմ ոսկեծամ...

ԳՅՈՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

I

Օ, մանկության մասին գրել են շատ-շատերը.
Մի կողմ թողնենք եթե մենք հներին—
Պիտի թվենք նրանց, որ գրքերում գրել են
Ողջ պատմությունն իրենց այդ օրերի։—
Ես էլ ահա փորձում եմ իմ մանկության օրերը
Ուրիշների նման առնել գրի։—
Ո՛ւժ տուր, Մուսա՛, գրչիս, որ կարենամ հիմա
Մանկությունս երգել ուրիշների նման։—

II

Տոլստո՛յ, Ժան-Ժակ-Ռուսսո՛, Ցլորե՛ր, դե-Ամիչի՛ս,
Բալզա՛կ, Ռեդյարդ Կիպլի՛նգ, Զորյան ու Մահարի՛...
Օ, չհուզի քեզ թող, իմ ընթերցո՛ղ, որ ես
Վերջին երկու անունը դրանց շարքում դրի։—
Խաբուսիկ է հաճախ գրական բախտն այդպես,
Գրողներին եթե ըստ նյութերի
Մենք դատելու լինենք... Բայց չե՞ն անում արդյոք
Միևնույնը— մեր նոր քննադատներն այսօր։

III

Մեն նայենք նրանց—այսօր ունենք արդեն
Մենք թե՛ Շեքսպիր, թե՛ Դանտ, թե՛ Էսքիլես, թե՛ Պու—
Բավական է երդես երկաթաթերթ վարդեր—
Եվ քննադատն արդեն մի ամեհի խանդով
Կրհռչակե քեզ մեծ ու հանճարեղ վարպետ։
Չե՞ք հավատում։— Ինչո՞ւ— Դեռ երեկ չէ՞ր արդյոք,
Որ Վերհարեն դարձավ ծերուկ պոետը մեր,
Քանզի, ինչպես և նա, պոեմներ էր գրել։

IV

Քաղաքների մասին... (Օ, ալեհեր պոե՛տ,
Քեզ չեմ անշուշտ այստեղ դատապարտում, թեկուզ
Գրել ես դու, ավա՜ղ, ութ տողանոց սոնետ
Եվ քորեյը յամբից դու դժվար ես ջոկում)—
Մեծարում եմ ես քո քննադատին, որ էդ
Մեծ ախտաղոսով գուցե քո ամեհի ոգուն
Կամեցել է ձոնել մի վայելուչ ներբող՝
Հատիշակված անշուշտ քո բոցավառ երգով...

V

Սակայն անցնենք նյութին։— Բայց ի՞նչ հանգով արդյոք
Հարկավոր է գրել, որպեսզի երգը մեր
Լինի զգաստ, ինչպես մի երկաթյա արդուկ,
Լինի հաճո, ինչպես մտերմական նվեր։—
Ես չեմ ուզում հիմա, օ, ընթերցո՛ղ, որ դու
Անտանելի ռիթմով դեպի ձանձրույթ չվես։
Օ, վիթխարի Վոլթե՛ր, օ, Բուալո՛, օ, Գի՛լ,
Ինձ օգնության հասե՛ք, ինձ փրկեցե՛ք կրկին...

VI

Գրել ենք մենք անթիվ երգեր— և երգերում,
Մեր երգերում բազում գործածել ենք չափեր,

Որ նվում են հաճախ, հաճախ ականջ քերում,
Շշմեցնում հաճախ անսանձ թափով,—
Այսօր զերում է ինձ օկտավների հեռուն,—
Որ զուսպ է, սեղմ, ինչպես կաղմակերպված թափոր,
Ինչպես երթի ելած զինվորների շարան,
Ուր տողն իր տեղն ունի, ուր չե՛ն հրում իրար

VII

Տողերն, ինչպես ցուլեր, մերձավորման ժամին...
Ուզում եմ ես երգել իմ օրերի հեռուն,
Բայց ո՛չ այնպես, ինչպես անտառների քամին,
Որ ճչում է, փնչում, կամ զայրույթից եռում։—
Օ, մանկությո՛ւն իմ, պարզ պատմություն ես դու մի,
Դու քնքշություն, դու մեղմ թովչություն չե՛ս բուրում...
Փռվում է դեմս ահա քո գորշագույն կտավը—
Եվ իմ երգի համար ես ընտրում եմ օկտավը։—

VIII

Բացվում է դեմս ահա մի մոխրագույն հեռու,
Մի մոխրագույն քաղաք՝ զարմանալի անթով...
Կոկորդս մի խեղդող զգացմունք է քերում
Եվ պատրաստվում եմ ես երգել անուշ խանդով
Քաղցրությունը, որ կար այդ օրերում,
Այդ օրերի չքնաղ մեղմությունը բանտող,—
Բայց... բայց ինչո՞ւ հանկարծ, էլեգիական երգի
Փոխարեն մեջս ահա մի խեղկատակ քրքիջ

IX

Խլրտում է, ինչպես մի աներես տղա...
Այո՛... Չքնա՜ղ օրեր, զարմանալի անհոգ...
Աշխարհի ծայրն ընկած մի գորշագորշ քաղաք...
Հայրս՝ դաժան մի մարդ՝ բարբարոս ու անոգ.
Եվ շրջապատս ահա, զարմանալի խաղաղ,
Օ, ավելի՜ խաղաղ, քան շարունակ քնող

Մարդն է լինում՝ անճառ իր բերկրանքին հլու—
Երբ չի կծում նրան մի չափազանց չար լու...

X

Օ, որպիսի՜ չքնաղ, դրախտային օրեր...
Սիրտս պատում է մի էլեգիական թախիծ,
Անգամ կապույտ թախիծ, անգամ զորեղ
Մեր Մահարու երգած սխուվախից...
Ահա տեսնում եմ ինձ՝ գարնանային շորեր,
Կապույտ շապիկ հագած, հայացքս ջինջ։—
Դեմս փռվում է լուրթ մի առավոտ—
Եվ հասնում է քշիս... անմահական մի հոտ։—

XI

(Ո՞վ ընթերցող, վերջին բազմակետը, որ ես
Վերը դրի՝ «քշիս» բառից հետո—
Զմոռանա՛ս— Դրա ամբողջ իմաստը քեզ՝
Իր մորալով հանդերձ՝ կպարզվի շուտով)։
Ուրեմն, հա՜... ահա սկսում եմ ես հեղ
Մանկությունս երգել հանդով դյութող։—
Եվ դու ներող եղիր, ո՞վ ընթերցող, եթե
Քեզ դուր չգա հանկարծ այս նոքնդես թեքեն։—

XII

Մեղավո՞ր եմ արդյոք, որ չ՝եմ կարող ես է՛լ
Իմ մանկությունն հյուսել գույներից լուրթ,
Որ շողում են, ինչպես դրախտային տեսիլ,
Ինչպես անդարձ կյանքի անհաս խորհուրդ։—
Թող թույլ տրվի իմ պարզ այս պատմությունն ասել՝
Սկսելով դեպքից մի փոքր մութ...
Ուրիշները երգեն թող մայրական համբույրը,—
Իսկ ես... երգում եմ ես... ամենրապույր այն բույրը։—

XIII

Չե՛մ մոռանա երբեք այն առավոտը ես...
Երկինքը ջինջ, ինչպես լվացվելուց հետո...
Օդը մաքուր, բուրյան, ողողված է ասես
Գարնան, վարդի, բախտի, կամ մանկության հոտով։—
Մի տասնամյա մանուկ՝ հագած մի նոր զգեստ՝
Անցնում եմ ես ահա պատուհանի մոտով
Մեր տանտիրոջ, որի փոքրիկ տղան ագեղ
Միշտ զարծենում էր իր զգեստներով շքեղ։

XIV

Չեզանից ո՞վ արդյոք չի զգացել բերկրանք,
Երբ առաջին անգամ նոր զգեստ է հագել,
Երբ աշխարհը ամբողջ քեզ թվում է ներկած,
Ոսկեզօծած, ինչպես գարնանային կրոկետ...
Ո՞ր երեխան արդյոք շաբաթներով երկար
Չի երազել այդ օրը և սիրտը չի թակել,
Երբ առաջին անգամ՝ իսկական իր չափին՝
Հագցրել է նրան մայրը մի նոր շապիկ։—

XV

Այդպես ուրեմն,— նոր, կապույտ շապիկն հագիս,
Ամբողջովին լցված երջանկությամբ այդ վա՛մ՝
Ես կանգնեցի այն բարձր պատուհանի տակին,
Որ տանտիրոջ տղան նախանձանքից պայթի...
Ախ, որքա՜ն էր նա ինձ մեր բազմամարդ բակում
Իր շորերով և իր հիշողներով խայթել։—
Նա ինձ տեսավ վերից, նայեց մի պահ վրաս,
Ասաց— «Մի փոքր կաց»— ու մի վայրկյան կորավ։—

XVI

Ես մնացի ներքևը՝ հպարտությամբ լցված.
Նա երևի գնաց, որ քրոջը կանչեր։—

Նայում էի ես ինձ՝ հիացմունքից հուզված,
Երբ վերևից մի ձայն ինձ բարձրաձայն կանչեց։
Ես նայեցի վերև... Եվ այդ պահին հանկարծ
Ինչ-որ դեղին հեղուկ դեմքս թրջեց...
Ես հասկացա, բայց ուշ էր. շոշափեցի հագինս,—
Ողողված էր ավա՜ղ... իմ ոսկեզօծ շապիկը։—

XVII

Էլ ի՞նչ։— Հարկ կա՞ արդյոք շարունակել
Այս պատմությունն իմ ջինջ այգաբացի մասին.—
Հարկավո՞ր է ասել, որ մայրս ինձ թակեց,
Երբ պատմեցի նրան փորձությունը ես իմ.
Հետո մեզ դուրս արին այդ բարեկիրթ բակից,
Երբ փորձեցի՝ մանուկ ըմբոստությամբ վսեմ՝
Վրեժխնդիր լինել հարվածներով համառ
Վերից գլխիս թափած այդ բուրմունքի համար...

XVIII

Տոլստո՛յ, Ժան-Ժակ-Ռուսսո՛, Ֆլոբե՛ր ու Ամիչի՛ս,
Ու Մահարի Գուրգեն,— ինձ օգնության եկե՛ք,
Որ կարենամ երգել իմ մանկությունը ջինջ—
Իր առաջին քայլից նա ողողվեց թեպետ
Մի հեղուկով, որի բուրմունքների միջից
Օ, դժվար է մի քիչ քնքշություններ բեկել...
Մինչև օրս, երբ ինձ մանկություն են ասում—
Ես, չգիտեմ ինչու... այդ բուրմունքն եմ հիշում։—

XIX

Ահա՛ և իմ ամբողջ մանկությունը։— Էլ ի՞նչ,
Էլ ի՞նչ կարող եմ ես հիշել՝ ավելի վա՛ռ.—
Այսպես թափվել է միշտ մի քնքշություն վերից,
Եվ երբ փորձել եմ ես ըմբոստանալ—
Մայրս սարսափահար կշտամբել է միշտ ինձ
Եվ խրատել է՝ լուռ, խոնարհ մնալ,

Եվ ընդունել վերից թափվող ամեն մի բույր,
Որպես վերուստ տրված երջանկության համբույր...

XX

Եվ իսկապես— այդ բո՛ւյրը։— Իմ ուղեղի մուժից,
Որ կոչում են մարդիկ հիշողություն,—
Նա ելնում է ահա և իմ սիրտը խուժում,
Որպես անցած կյանքից բարձրացած թույն.
Եվ չգիտեմ հիմա, թե ես ի՛նչ եմ հիշում.
Իմ մանկությո՞ւնն արդյոք, թե այն անթով,
Այն գարշահոտ անցյալը, որ մեզ համար միայն
Նողկալի բույր ուներ, ու անարգանք, ու մահ։—

XXI

Փա՜ռք քեզ, ուրիմն, ո՜վ դրախտային բուրմունք.—
Օ, մանկությո՛ւն, այդ քո բուրմունքը չէ՞ միթե,
Այդ չե՞ն արդյոք հաճախ պոետները երգում,
Այդ չի՞ արդյոք բազում պոետների դյութել...
Եվ Մահարին արդյոք իր ոսկեբառ գրքում
Չի՞ փառում բույրը— այդքան, այդքան հյութեղ...
Եվ եթե մենք մի քիչ զգաստ նայենք հետուն—
Ո՞ւմ մանկությունն է այդ, որ այդպես չի՛ բուրում։—

XXII

Ուրեմն փա՜ռք կրկին այդ բուրմունքին հրե...
Բայց... նայելով այդ գորշ առավոտին ես իմ՝
Այլևս չեմ ուզում և ո՛չ մի բառ գրել
Իմ մանկության, իմ «վառ արշալույսի» մասին։—
Եվ դու, Գուրգե՛ն, իզո՛ւր ես քո քանքարը դրել,
Որ համոզես, թե քոնը եղել է ջինջ լուսին.—
Օ, ո՛չ, Գուրգե՛ն.— քան գորշ մանկությունը ներկենք—
Լավ չէ՞— վաղվա մեր վառ... ծերությունը երգենք։—

ARS POETICA

I

Ողջո՛ւյն ձեզ, ողջո՛ւյն ձեզ, Լենի՛ն, Մա՛րքս,
Ու գո՛րծ, ու փորձությո՛ւն, ու երգեր նո՛ր—
էլ չես վերադառնա երբեք դու Կարս՝
Տերյանի, Մահարու, կամ քո երգի հունով։
Ողջո՛ւյն ձեզ, ողջո՛ւյն ձեզ, Լենի՛ն, Մա՛րքս,
Ու Շեքսպի՛ր, ու Դա՛նտ, ու վեհություն։—
Օ, ժամեր, հոսեցե՛ք դուք հիմա պարզ
Ու բախե՛ք, ու բախե՛ք բյուրավոր դուռ...

II

Թե ուզում ես, որ խոսքդ կտրի հորիզոններ, դաշտեր,—
Պիտի վարպետ լինես անօրինակ թափի,
Ինչպես Լենինը—ապստամբության, ինչպես Էյնշտեյնը—
Թվի, տարածության, ձգողության, չափի։—

III

Երբ այնքան ճանաչես դու հույզերը մեր,
Որքան մժեղի մկանը ծանոթ է ֆաբրին—
Այնժամ դու բաց կանես պոեմների ֆաբրիկ
Եվ եթե եփվես էպոքում— կդառնաս Դա՛նտ, Հոմե՛ր։—

IV

Քո ամպլուան— տարերքն է... Այս լենինյան դարում
Թեկուզ, ճիշտ է, երբեմն տարերքն էլ է ազդում,
Բայց կա այսօր մի ա՛յլ իմաստություն՝
Համառ, սիստեմատիկ, խստարարո,
Ինչպես ինքը՝ Լենի՛նը, ինչպես դիսցիպլինը,
Որ սաստում է ՊԵ՛ կամք, ՊԵ՛ ինտելեկտ—
Եվ ձգում է գանգից քո դեպի հինը
Եվ դեպի դեռ չեկած ապագան— հաղարավոր թելեր...

V

Դու նկատե՞լ ես, որ շատ անգամ
Մի հնչյուն, մի հանգ, մի մելոդի,
Անգամ մի ասոնանս, անգամ մի հանգ
Երգդ փոխում է հանկարծ անկամ կարոտի։
Կան դավաճան շեշտեր, կան ռիթմեր, կան բառեր։
Երբ քաշում է դակտիլը— ըմբոստացի՛ր։—
Պրե՞տ ես— դու այսօր պիտի մաքառես—
Եվ չի օգնի այստեղ քեզ գնդացիրը։
Չի օգնի սվինը։— Հինը հաճախ
Հանճարեղ անցքեր է ճարում,—
Եվ չկոտրե՛ս եթե այդ ռիթմը դավաճան—
Քեզ չի օգնի Լենինը— այս լենինյան դարում...

VI

Ես վախենում եմ, ինչպես Նեկրոման, կես-գիշերային ժամից,
Երբ ելնում է լուսինը դագաղից ու մեռնում է անգամ քամին։
Այդ ժամին, թե ուրթուն եմ լինում, զգում եմ սարսափով,
Որ ահա կգա Բոդլերը, կերևա Էդգար Պոն։
Ծերունի Վերլենը կգա ու ֆավնի ձայնով երդեցիկ
Կերգե աշուն, թախիծ, գիշերվա լապտեր, ակացի։
Եվ դեմը խշշացող լարդին, կթվա կրկին, թե Հայնե՛ն է—
Եվ լուսինը կրկին վերևում կթերթե իմ ախուր «Ռուբայները»...

ԿԵՍ-ԳԻՇԵՐԱՅԻՆ ԷՍՔԻԶ

VII

Ինչպես սենտիմենտալիստ՝ գոնտը նստել էր
Պատուհանի առաջ— Նայում էր աստղերին։
Հեռվում ծխնելույզի ծուխը, որ բարակ ձգվում էր վեր՝
Նրան թվում էր անիրական փերի։
Եվ այդ սենտիմենտալ կես-գիշերին,
Որի մեջ ձայներն էին անընդմար աճում,

Լուսինը կանչում էր նրան իր մեռած ափերից,
Եվ պոետի հոգում հոսում էր սիրազեղ վարդաջուր։
Իսկ հետո, երբ հեռուն ժամացույցը ցնցեց
Իր հատու զարկերով լռությունը—
Նա արդեն դանդաղ մոթմոթում էր
Տերյանի երգերից ինչ-որ մի տող հնչեց
Հետո կինը նրան սենյակներից կանչեց,
Նա ցնցեց մազերը և մտավ ներս։—
Այս ամենը կատարվում էր կես-գիշերին, երբ
Լուսինը գծում էր երկնքում իր էլիպսիսն անշեղ։—

VIII

Դու ճամփա ելար մի առավոտ,
Երբ մութ էր, ամպ էր ու մառախուղ.
Բողիր ետևդ մի խարխուլ խուղ
Ու մանկություն մի արյունահոտ։
Որպես տկլոր մի թափառական,
Մեջքիդ մաղա՛խ մի ու ձեռքիդ ցուպ՝
Ընկար ուղի՛ն քո և՛ մութ, և՛ ցուրտ,
Եվ կյանքդ տենդ էր անիրական...
. . . . . .
Եվ առաջինը, որ հանդիպեց
Քեզ ճանապարհին քո ահավոր—
Այն խեղճ պոետն էր, այն սրտաբեկ,
Տխուր պոետը արևավոր։
Նա տխուր երգեր սրտիդ երգեց,
Եվ այդ երգերը հրատոչոր
Ծծեց հոգին քո շրթերով չոր...
. . . . . .
. . . . . .

Դու դեռ քայլում ես։— Ու դեռ երկա՛ր,
Դեռ երկա՛ր պիտի այսպես քայլես,
Մինչև երգերը քո դեռ չերգած,
Մինչև մոխիրը սիրտդ այրեն։
Մինչև սրտում քո չմնա էլ

Հույզին, երքի ու հրի մի կայծ,
Մինչև մարի՛ հար ու դառնա քար
Քո սի՛րտը, սի՛րտը...
. . . . . .

IX

Դու աճում էիր, ինչպես խոտը։— Դու
Լուսնի նման էիր՝ սենտիմենտալ։
Եվ լուսնի լորձունք էր կաթկթում
Քո շրթերից հաճախ խնդալ
Ջդիտեիր բնավ։— Քո երգը
Մերթ հոսում էր, որպես հորձանք,
Բարձրանում էր, որպես հանդի բերքը—
Անտեր։— Մերթ, տեսար, որոտաց
Ինչպես թիթեղաձայն թնդյուն։—
Դու խարխափում էիր ու փնտրում,
Բայց ի՞նչ— անհայտ էր քեզ։—Հիմա
Դու անփորձ ես ահա աշակերտի նման.
Այս նոր հերկը, որ ուզում ես ցանել—
Օ, իհարկե, կարող է քեզ կործանել։
Բայց պիտի համառես, որպես եզ։ Պիտի
Իմանաս, որ լուսինը քեզ
Էլ դժվա՛ր թե փրկե։—
Լուսադեմին, վաղ առավոտին,
Երբ արևը ելնում է, որպես ճարպագունդ,
Ու փռում է իր ճարպը արոտների վրա—
Դու բարձրանաս պիտի ու հունդդ
Ժլատորեն փռես։— Ահա՛։
Պիտի տքնես, քրտնաթոր,— պիտի դեմքդ
Քրտինքը ողողե, ինչպես բալզամ,—
Մինչև գիշերը իջնի ու տարածվի քո դեմ.
Գիշեր, վերջին խավար, մենություն, մա՛հ տարաժամ...

Ահա՛։—

X

Քո անկումները եղել են միշտ
Եղանակի՛ պես պատահական,
Այդպես երկինքն է թափում հանկարծ
Թե՛ կարկուտ, թե՛ ձյուն, թե՛ փոթորիկ.
Բայց հետո, հետո,— հետո կրկին
Բացվում է օրը— և վերևից
Պայծառ արևն է ժպտում էլի
Հրով սրբած ու մաքո՛ւր երկրին։—

XI

Օ, դո՛ւ, կարո՞ղ եմ արդյոք երբեք
Մոռանալ ես քեզ, բանի իմ մեջ
Հնչում է թեկուզ ինչին մի էջ
Մեր կյանքից՝ անցած այնքա՛ն բեկբեկ։—

XII

Դու շա՛տ ես ցրել, տվել բամուն
Քո գանձը, որպես շռայլ տղա.—
Դրա համա՞ր էր արդյոք տրված
Այս վսեմ բախտը քեզ աշխարհում։

XIII

Նրանք ասում են, որ ես հոգնել եմ,
Որ ես շեղել եմ ուղիս ուղիղ,
Որ մեր պայքարը հոգիս լքել է,
Եվ ես ընտրել եմ ուրիշ ուղի։
Նրանք ծամում են այդ ցուրտ խոսքերը,
Ջառամ շրթերը քսում իրար,
Կարծես շրշում են դեղին հասկերը,
Կարծես մեռնում են այնտեղ նրանք։—

XIV

Նա մի աղջիկ էր, մի դիցուհի՛,
Որ օրերո՛ւմ այն տրտմաթախիծ
Քեզ նայեց նաղով ու ծիծաղեց—
Մի գավառական գեղեցկուհի...
Նա խոստացա՛վ քեզ երգեր երգել,
Բերել կարոտներ ու անմար փառք,—
Բայց երբե՛ք, երբե՛ք նա քնքշաբար
Չփարվեց կրծքիդ ու չգիրեց։
Այդ գեղեցկուհին... Մուսա՛դ էր նա,
Որ այնտեղ, Կարսում, այն դետափին
Նվիրեց մի օր քեզ գո՛րշ մի շապիկ
Ու գավառական մի խեղճ քնար...

XV

Դու բա՛ձր ես, մե՛ծ ես, դու վիթխարի.
Արյո՛ւն, արյո՛ւն է եղել միշտ քո
Ամե՛ն մի տողը։— Դու քո երգով
Ընդմիշտ կապված ես այս մեծ դաբին.
Եվ ինչպես օրը օրացույցից
Անհնարին է նետել մի կողմ—
Այդպես անունը քո աղմրկող
Հա՛ր մնալու է օրերին կից,—
Այս օրերի՛ն, այս տարիների՛ն,
Այս տարիների հրին, սրին։—

XVI

Нет, я не Байрон, я другой...
М. ЛЕРМОНТО

Քայլի՛ր, քայլի՛ր քո ճանապարհով.
Դու ո՛չ Գյոթե ես, ո՛չ Վերհարեն.
Մեր Վերհարենը— նայի՛ր, հրեն—
Քաշում է փառքը իր պարանով...
Քայլի՛ր, քայլի՛ր քո ճանապարհով.

Դու ո՛չ Գյոթե ես, ո՛չ Վերհարեն—
Դու լոկ Զարե՛նց ես, միայն Զարենց՝
. . . . . ու վարանոտ...

XVII

...Լե՛նին, այո՛,— Լե՛նին։— Բայց ո՛չ միտինգային,
Բայց ո՛չ թմբուկ թեթև, բայց ո՛չ պլակատ։
Լե՛նին— այսօր արդեն ասել է—գագաթ,
Ասել է— ներքի՛ն կառուցում քո նոր թեմայի։
Այդ թեմա՛ն ուռճանում է այսօր քո մեջ,
Աճում է, բայց ո՛չ այնպես, ինչպես խոտը.
Նա աճում է կամքո՛վ, երկաթո՛վ,— նա կյանքի՛ առավոտ է՝
Մտքի, խորքի, կառուցման անհուն ելևէջ...

XVIII

Քեզ ժպտում է արևը։— Քեզ կյանքը
Թվում է արյան պես տաք։
Քեզ թվում է աշխատանքդ,
Քեզ թվում է այս հա՛նգդ անգամ։
Բայց այս թվչանքը թանկ է
Քեզ համար ավելի, քան կյանքը,—
Քանի որ, քանի որ դո՛ւ ես
Կառուցում քո այս խնդումը։

XIX

Նյութը դիմադրո՛ւմ է, դիմադրո՛ւմ է միշտ,—
Լինի երկաթ, կղմինդր, լինի մարմար։
Դիմադրում է բառը։— Ահա դեմից
Արդեն վազում է հանգը— «հարմար»։
Դա— հնի՛ ճանապարհն է, հեշտի, բնազդի,
Օ, հնի հո՛ւնն է դա, սովորության հունդը,—
Այնինչ արևը, լուսինը և մեր երկրագունդը
Անվերջ կարծրանում են իրենց անեզրական վազքից։

XX

Ո՛չ մի ձագ, ո՛չ մի ձագ ձվի կեղևից
Չի բաժանվում ողբով։
Ողբով չի՛ բաժանվում արյունը վարակից։
Այլ— պայքարո՛վ միայն։
Այդպես էլ քանա՛կն է ահա փոխվում որակի,
Այդպես էլ ե՛րգն է դառնում կարմի՛ր բողբոջ։—

XXI

Կարող են անցնել փոթորիկներ մեծ,
Անցել են ինչպես մրրիկներ բազում,—
Անխախտ կմնա կառուցումն այս մեծ
Գալիք օրերի անջինջ երազում։
Կառուցումն այս վեհ մտքի ու ոգու,
Կյանքը տեսնելու ընթացքն այս ուղիղ,
Կյանքը փոխելու ձգտումն այս տոկուն,
Խոհի, պայքարի այս անծայր ուղին...

ԷՊԻԳՐԱՄՆԵՐ ԵՎ ՍԱՏԻՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՖԻՍՏՈՖԵԼ

Եվ ասաց նա ինձ. «Լսի՛ր, լսի՛ր.—

Ափերիցդ հորդող քո էներժին,
Որ տալիս ես դու դինու, կանանց,—
Տո՛ւր անպարտելի խոսքիդ, գրչիդ,
Դարձրու այն մաղձ, թույն ու թանաք...»—

Եվ ես ասացի.— Լսո՛ւմ եմ, սի՛ր։—

ՆԱ.

Նա ո՛չ պոետ է, ո՛չ քննադատ,
Ո՛չ վիպագիր է, ո՛չ մտածող,
Բայց ունի գլուխ, ունի ճակատ—
Եվ բավական է ունեցածով։
Եվ երազում է նա անընդհատ
Ուղեղով իր ծույլ ու բիացող,
Որ թե՛ պոետ է, թե՛ քննադատ,
Թե՛ վիպագիր է, թե՛ մտածող։

ՄՈՆՈՒՄԵՆՏ

(Հեկզամետր)

Կանգնած է ահա մեսաղե այս մոնումենտը, նայի՛ր.—
Մի մարդ է՝ աչքերը հառած դեպի հեռուները. դեմքին

Նստել է մի խոհ հանճարեղ, կերպարանքը խրոխտ է ու վի՛հ,—
Բայց ի՞նչ է կյանքում նա արել— անհայտ է այսօր ամենքին։
Մարդիկ կան այդպես մեր կյանքում։— Քայլում են հպարտ, ամբոխում
Կանգնում են, որպես մոնումենտ, իսկ թե ի՞նչ են արել— չգիտես։—
Քո դատարկ գլո՛ւխն է միայն այդ մարդկանց միակ պատվանդանը,
Հիմարությո՛ւնդ է միայն դարձնում նրանց մոնումենտ։—

«ՀԱՆԴԵՐՁ»

Ահա՛ քննադատ, որ եվրոպացի
Եվ ինտելիգենտ լինելով հանդերձ՝
Ոչնչել չգիտե դեռ չորը թացից
Եվ ամե՛ն ինչից դողում է անդեմ։—

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Կար մի քննադատ։— Նա երեկ, ահեղ փրփուրը բերնին,
Ինձ գովք էր կարդում և պատառոտում թշնամիներիս։
Այսօր նրա՛նց է համբուրում ահա, որ պիտի մեռնի
Իր հերոսական դիրքերի վրա, հայհոյելով ինձ—
Էհ, մեռնի՛ թող նա՝ ո՛ր դիրքերում էլ ուզում է լինի,
Միայն թե— մեռնի...

N. N.

Նա մեջ է ընկնում տեղի-անտեղի,
Սխալվում է միշտ ու կարծիք փոխում.
Նման է նա քիչ այն ծծկեր տղին,
Որ մատն ուզում է բերանը կոխի,
Բայց միշտ անպատեհ տեղեր է կոխում։

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Նա մի պոեմ պիտի գրեր
Ու մի պիես, ու մի վեպ.
Գրիչ առավ, թղթեր դրեց
Եվ հայացքը հառեց վեր.
Նայեց, նայեց առաստաղին,
Հանճարի տեսք ընդունեց,
Դեմքին իջավ խորը թախիծ,
Քունը տարավ... ու քնեց։
Երկա՜ր քնեց։— Եվ աչքերը
Խորը քնից բացեց երբ—
Թերթում կարդաց, որ գրել է
Նա մի պիես ու մի վեպ։—

ԷՊԻՏԱՖԻԱ

Այստ հանգչի— (անուն)։— Նաիրյան երկրի քննադատը մեծ,
Որ երկա՜ր ապրեց, բայց հերոսաբար ոչինչ չգրեց։—
Խոնարհի՛ր գլուխդ, օտարակա՛ն, այս քարի առաջ.—
Այստեղ Նաիրյան հանճարն է հանգչում՝ կրկնակի՛ մեռած։—

ՖԱՈՒՍՏ

(Թեմա։ Անազնվություն)

Չէի՞ր ձանձրանա դու գիտությունից,
Չէի՞ր ձանձրանա սիրուց ու կյանքից,
Թե ունենայիր թշնամիներ մեծ,
Թե նրանց շարքում գեթ մեկը լիներ
Մտքիդ հավասար... Այժմ դո՛ւ ես լոկ
Միակ թշնամիդ... Ու ձանձրանում ես։—

ԱԼԵՀԵՐ ԲԱՐԵԿԱՄԻՍ

(Տխուր էպիգրամ նրա մի գրական ելույթի առթիվ)

Օ, դո՛ւ, ալեհեր իմ բարեկա՛մ,
Ուշացած, տխուր փիլիսոփա,
Եղանակի պես փոփոխական,
Քմահաճ, բեկբեկ, որպես նոպա.—
Օ, հին բարեկամ դու Հեգելի,
Մարքսի վրայով հապճեպ անցած,—
Ես ներո՛ւմ եմ քեզ, ներո՛ւմ էլի,
Քանզի— խե՜ղճ ես դու, և ո՛չ թե չար...

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

— Այսինչի մասին ինչո՞ւ չեք մի սուր էպիգրամ հյուսել։—
—Օ, ես չե՛մ սիրում ձեռքերս կեղտոտ բաների քսել։—

N. N.

Կոճղանման գլուխ։ Մոնումենտալ ճակատ։
Երկրագնդի նման կլոր նստուկ։—
Ա՛յ թե ինչո՛ւ է նա, որպես մտքի գագաթ,
Թե՛ վիհություն, թե՛ ահ, թե՛ պատկառանք ազդում։—

EX UNGUE LEONEM

(Պուշկինից)

Լույս ընծայեցի մի անգամ ես իմ
Ոտանավորը անստորագիր։
Մեկն հոդված տպեց թերթում այդ մասին՝
Նույնպես թաքցրած ազգանունը իր։—

Բայց ի՞նչ... Ջմնաց գաղտնիք մեզանից
Ո՛չ անունը իմ և ո՛չ էլ նրա.—
Իմ սուր ճանկերից ճանաչեց նա ինձ,
Ես ականջներից իմացա նրան։—

ՄԻ ԱՆՊՏՈՒՂ ԻՄԱՍՏԱՍԵՐԻ

Քեզ հարց եմ տալիս, ո՞վ իմաստասեր,
Որ բազմապիսի գրքեր ես կարդում.—
Դու կարդացածդ գլխո՞ւմդ ես բարդում,
Թե— դրանի՞ց է նստուկդ հաստացել...

ԷՔՍՊՐՈՄՏ, ԳՐՎԱԾ ՀՈՂՄԻ ԺԱՄԱՆԱԿ

(Դրական նավապետին)

Սանձե՞լ է ուզում հողմերին
Այս... ողորմելին։—

1929—1934
«ԳԻՐՔ ՃԱՆԱՊԱՐՀԻ»
ՊՈԵՄՆԵՐ

Գիրս նվիրում եմ իմ գուսան
ԱՐՓԻՆԻԿ ՉԱՐԵՆՑԻՆ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

Գառնանք—բարբառենք նզովք մենք նախ
Մսրամելիքի՛ն, թագավորի՛ն։
Գառնանք— բարբառենք նզովք ապա
Զևով—Օհանին, իշխանին նե՛նգ։
Գառնանք— բարբառենք նզովք ապա
Ա՛յլ իշխաններին բոլոր այն մեր,
Որ բերին մեզ մահ, ու մուժ, ու նեռ։

Օ՜հ, փառաբանենք ապա մենք մեր
Առյուծ-Մհերին, դյուցազնին քա՛ջ,
Դավիթին՝ նրա որդուն դյուցազն,
Մհերին՝ նրա որդուն անմահ,—
Ողջ ժողովրդին ապա Սասմա
Որ լուրթ լեռներում մի օր բարձած
Հորինեց պայծառ զրույցը այս—
Եվ անցավ անհետ, դարձավ երազ։—

Սկսենք ապա հանդով ճարտար
Սասունցի Դավթի զրույցն արդար,
Որ մնալու է հավիտյան— հա՛ր
Զրույց իմաստուն և ոսկեբառ։—

Ա

Մհերը՝ զարմով արևազուն՝
Քառասուն տարի իշխեց Սասուն,
Իբրև արդ արդար և դյուցազուն։—
Նա պատերազմներ մղեց բազում
Թշնամիների հանդեպ հզոր,
Որ խուժում էին անբավ ուժով
Տիրելու բարձրիկ երկրին Սասուն,—
Բայց մարտերում այդ հզորազոր
Հաղթում է նա միշտ իր սրով սուր։—
Որպես այր ռամիկ ու դյուցազուն՝
Նա հուր ձի ուներ, կայծակե սուր,
Բայց ուժը նրա, որ չէր կասում,
Ժողովուրդն էր իր բազմաբազում։
Եվ անպարտ էր նա իր սրով սուր
Եվ ժողովրդով ռամիկ ու սուրբ։—

Բ

Մհերի օրով երկրում Սասուն
Ապրում էր ռամիկ մի ժողովուրդ,
Ջուներ իշխաններ նա դեռ հմուտ,
Իշխաններ դժնի, ու չար, ու մութ,
Եվ ապրում էր իր լեռներում լուրթ
Վաստակով իր պարզ, քրտինքով սուրբ։
Առյուծ-Մհերին, դյուցազնին մեր
Նա ինքն էր իրեն իշխան կարդել—
Եվ ապրում էր իր լեռներում դեռ
Նա կյանքով ազատ ու անարգել։—

Գ

Օ՜, ռամիկ կյանքի անգո պատկեր,
Դարերում հեռու, ու հին, ու ծեր,
Երբ մարդկությունը ապրում էր դեռ

Վաստակով արդար, ու սուրբ, ու վեհ։
Օ՜, վաղընջական արշալույսներ,
Մանուկ մարդկության օրեր լուսե,
Երբ լուրթ լեռներում դեռ չէր բուսել
Դժնի բռնության ընձյուղը սև,
Երբ իշխում էին աշխարհում դեռ
Ռամիկ ու արդար դյուցազուններ...

Դ

Իշխեց նա այսպես, դյուցազնը մեր
Քառասուն տարի։— Եվ ահա ծեր
Մազերին նրա, գլխին հուրհեր
Իջավ մառախուղ, ցրտին ձմեռ—
Դարձավ նա զառամ ու ալեհեր,
Եվ կամաց-կամաց դյուցազնին ծեր
Սկսեց պատել, ինչպես գիշեր,
Վիշտ անբուժելի ու մահաբեր։—
Ջուներ նա ժառանգ աշխարհում դեռ—
Եվ մտորում էր դյուցազնը ծեր։

Ե

Մտորում էր նա, դյուցազնը ծեր,
Որ մնալու է երկիրն անտեր,—
Բարձրաբերձ լեռներ, հարուստ հանդեր,
Եվ ոսոխի ու չարի հանդեպ
Ռամիկ ժողովուրդ՝ անկար, անզեն։—
Մտածում էր նա, դյուցազնը սուրբ,
Որ անցնելու է իր փառքը զուր,
Որ իր երկնահեց երկիրն հզոր
Դառնալու է վաղն հաղար ու բյուր
Թշնամիների ավար ու կուր։—
Եվ այսպես՝ հասած ծերության դուռ՝
Մտորում էր նա սրտով տխուր,
Եվ իր հետ մեկտեղ, թախիծով հուր,
Ժողովուրդն էր ողջ մտորում լուռ։—

Զ

Կարո՞ղ է սակայն պատահել, որ՝
Որքան էլ լինի ապագան մութ՝
Մնա անժառանգ ու անսերունդ
Երկիր մի ամբողջ ու ժողովուրդ։—
Կարո՞ղ է լինել, որ երկրում լուրթ,
Որքան էլ խավարն իջնի տխուր,
Ջքացվի հանկարծ հրաշքով հուր
Գալիքի համար փրկության դուռ։—
Եվ ահա— մի վառ ու պայծառ օր—
Հրաշքով անհաս ու զորավոր—
Առյուծ-Մհերին մեր ալևոր
Ծնվեց մի մանկիկ արևավոր։—

Է

Ծնվեց մի մանկիկ արևավոր
Առյուծ-Մհերին իբրև ժառանգ.
Դավիթ անվանեց ծնողը նրան,
Փառք տվեց ապա բախտին իրա,
Որ հուշն իր էլ հա՛ր երկրի վրա
Պիտի առկայծի ու հուրհուրա։—
Եվ նայելով իր մանուկ Դավթին՝
Նա պայծառացավ սրտով կրկին,
Նա ի՛նքն էր կարծես եկել երկնք
Հրաշքով մի սուրբ ու անհնար,—
Նա ի՛նքն էր կարծես եկել աշխարհ
Ու հուր-հավիտյան պիտի մնար...

Ը

Գիտեր նա աջդին, դյուցազնը ծեր,
Որ դյուցազուն է Դավիթն հուրհար,
Որ երկիրն իր լուրթ, ու բարձր, ու վեհ
Որքան էլ ահ դա, որքան ավեր—
Կելնե Սասունցի Դավիթը վեր,

Իբրև նո՛ր դյուցազն ու նոր Մհեր։
Գիտեր, որ արդեն երկրին Սասուն,
Իր ժողովրդին ռամիկ ու սուրբ
Թեկուզ փորձանքներ իջնեն բազում,
Որքան էլ տևեն նոքա երկար։—
Ահա Դավի՛թը իր դյուցազուն,
Իր ժողովրդի ցաղուկը սուրբ՝
Ե՛վ արդար, և՛ վեհ, և՛ աներկբա...
Ցնծաց նա սրտով իր աներևր,
Այդ ինքն էր կարծես ծնվել երեկ,
Նոր խավարի մեջ տեսել ցերեկ.
Փարվեց կուրուտով որդուն նորեկ—
Լանգով խնդալին գրկեց նրան,—
Փակեց նա ապա աչքերը սեգ—
Եվ ինքն էլ, կինն էլ ընկան— մեռան...

Թ

Երբ տեսավ այսպես Մհերը ծեր,
Թողնելով մանկան իր նորաժին—
Սասմա իշխաններն Լկան-ասին,
Թե մերն է հիմա Մհերի ձին,
Եվ տեր կանգնեցին ու տիրեցին
Մհերի ամբողջ ունեցածին։—
Եկան իշխաններն ու խլեցին
Մհերի հոգին ու նրա ձին,
Մհերի գորքերը ցրեցին
Եվ կալվածները բաժանեցին։—
Եվ տիրանալով երկրին այսպես՝
Ջենով-Օհանի՛ն բերին հանդես,
Որ իբրև հմուտ ու հեռատես
Այդ հավատարիմ, իշխան ու մեծ—
Կառավարե և իշխե իրենց։—

Ժ

Ջենով-Օհանը դարձավ իշխան...
Եվ Օհանը երբ իշխան դարձավ—
Առյուծ-Մհերի դեմքերն հրցայտ,

Նժույգներն այն հուր, սուրը կայծակ—
Հավաքեց, լցրեց մի քարանձավ։
Մոռացած նրա փառքը պայծառ՝
Թարգրեց նրա զենքերն հրցայտ,
Առյուծ-Մհերի սուրը կայծակ
Եվ զորությունը նրա անծայր։—
Հավաքեց ապա, տիրեց իսկույն,
Առյուծ-Մհերի ամբավ ոսկուն,
Սրտում ա՛հ հազար, հազար սոսկում՝
Աչքերը չռեց նրա ոսկուն։—
Մոռացած նրա համբավն հավետ՝
Նրա վաստակած ոսկուն ցավեց,
Իբրև ոսոխից աշխարհավեր
Միա՛կ փրկություն ու ապավեն։—
Իսկ դյուցազն Դավթին, մանկանն հուրհեր
Նա հովիվ կարգեց սարերում մեր,
Որ խաշն արածե ամառ-ձմեռ,
Իսկ գիշերները քնի մի ծեր,
Մի այրի կնոջ խուղում, որ էլ
Մոռանա հավետ, որ դյուցազուն
Իր հայրը ուներ կայծակե սուր,
Հուր նժույգ ուներ, դրահներ հուր,—
Զբրկելով նրան այսպես մի օր
Զենքերից իր քաջ, դյուցազուն հոր։—

ԺԱ

Օ՜, Առյուծ-Մհե՛ր, ոամի՛կ արդար,
Փրկության պատնե՛շ չարից չարկամ,
Ձի՛ոք ժողովրդի, ո՛ւժ տիրակալ,
Անհատնելի ու անեղբական...
Մինչև բարձրանար վերջին անգամ
Դյուցազուն Դավիթն իր քնից վեր—
Զենով-Օհանը, իշխանն այն նեռ
Դեռ որքա՜ն պիտի քրտինք քամեր,
Եվ ինքնությունն ու հուր դանձը մեր
Տա՜ր զարկիչներին աշխարհավեր...

ԺԲ

Մսրամելիքը, արքան այն նեռ,
Երբ լսեց մի օր երկրում իր ջեռ,
Որ չկա Սասնում Առյուծ-Մհեր,
Որ իշխաններն են արդեն տիրել
Լեռներին Սասմա ու դարձել տեր—
Եկավ, պաշարեց հովիտ ու լեռ,
Որպես չար խորշակ, կամ ժանտ ձմեռ։—
Օհանը մի օր բարձրացավ վեր—
Պաշարված տեսավ երկիրն հայոց,
Տեսավ զրահներ, ու հուր, ու բոց,
Սարսափեց, սարսեց էությամբ ողջ,
Եվ գնաց հայցի աղիողորմ
Փրկություն՝ չարից այն անողոք։—

ԺԳ

Գնաց մեր Օհանն, ահով-դողով
Արքայի առջև այն անողոք
Գլուխ խոնարհեց ազգով-ցեղով,
«Քոնն է»— աղերսեց— «Երկիր ու հող»—
Ընծայեց նրան ոսկի շողշող,
Գերության հանձնեց Սասունը ողջ։—
«Լավ»— համաձայնեց Մելիքն ահեղ,—
«Ձեր կյանքը»— ասաց— «կխնայե՛մ,
Միայն թե թող գա քո երկնահեռ
Ժողովուրդն ամբողջ, մանուկ ու ծեր,
Եվ անցնի տակով իմ թրի կեռ,
Որ Սասմա երկրում ո՛չ մի մարդ էլ
Չշարժի իմ դեմ զրահ ու զենք»։

ԺԴ

Զենով-Օհանը, իշխանն այն նեռ
Գլուխ խոնարհեց Մելիքին նեռ,
Արձակեց ապա հրաման զոռ,

Որ ժողովուրդը Սասմա ամբողջ
Գա, անցնի նրա փայլատակող
Արնահոտ, դաժան թրի տակով։—
Եվ ժողովուրդը Սասմա անկոր՝
Խեղճացած, խոնարհ ու գլխիկոր,
Անցավ Օհանի դժնի կամքով
Մսրամելիքի թրի տակով։—
Մելիքը, շողշող գրահ հագին,
Կանգնեց՝ ահռելի ու ահագին,
Եվ ժողովուրդը, մանուկ ու կին,
Անցավ պողպատե թրի տակից։
Բայց հերթը հասավ երբ Դավիթին՝
Զմոտեցա՛վ նա չարի թրին,
«Չե՛մ անցնի»— ասաց կամքով անկոր—
«Մսրամելիքի թրի տակով»։

ԺԵ

Ոլորեց աչքերը արնակոխ
Մսրամելիքը Դավթի վրա,
Մտրակեց ապա նժույգն իրա,
Մտրակեց, քշեց Դավթի վրա,
Որ սմբակներով հրահրան
Ոտնակոխ անի, ճզմի նրան։—
Բայց մանուկ Դավիթն անփույթ, ուրախ,
Իբրև խաղ մանկան մի հրածին,
Բռնեց Մելիքի ձիու սանձից,
Ետ գնաց, սեղմեց Մելիքի ձին,
Եվ մնաց Մելիքն այն չարածին
Կախված ահաբեկ ձիու սանձից։
Մրընչաց Մելիքն ահով անծիր,
Իր կայծակնափայլ սուրը քաշեց,
Որ հարվածով մի, զարկով մի շեղ
Դյուցազուն Դավթին միջից կիսե։
Մոտ եկավ սակայն նրան մի ծեր,
Մի ռամիկ արդար, այր ալեհեր,
«Ներիր»— բարբառեց— «Մանուկ է դեռ.

Ողջ Սասունն է քեզ գլուխ թեքել,
Օ՜, Մսրամելի՛ք, ինչո՞ւ ես էլ
Վախենում որբից մի կաթնակեր»։
Նայեց Մելիքը ռամիկ ծերին,
Իր սրին նայեց, իր զորքերին,
Նայեց սասունցի իշխաններին
Եվ ժողովրդին՝ դարձած գերի,—
Եվ եկավ, նայեց ապա Դավթին,—
«Ներում եմ»— ասաց ժողովրդին,—
«Բայց թե փորձանք գա մի օր գլխիս—
Սրանի՛ց կգա, այս ծուռ Դավթից»։
Ասաց, մտրակեց իր նժույգ ձին,
Հավաքեց, ոսպա զորքերն անծիր,
Հեռացավ, գնաց Սասմա երկրից,
Մարդիկ ուղարկեց ապա կրկին,
Որ Սասմա ամբողջ հարկը փրկիչ
Հավաքեն, տանեն Մսրա երկիր։—

ԺԶ

Եվ եկան Բաղին ու Կողբաղին,
Ցնծագին հասան մի օր Սասուն,
Հետները բերին պարկեր բազում,
Որ Սասմա ամբողջ գանձերը ձույլ
Հավաքեն, տանեն։—Խանդով քսու
Ջենով-Օհանը, իշխանն այդ մեծ,
Հարկահաններին դիմավորեց։—
Գնաց նա ապա, անհուն հորից
Հանեց Մհերի գանձը խորին,
Եվ զարմանալի՜ շռայլորեն
Սկսեց չափել, ինչպես ցորեն,
Ադյուծ-Մհերի գանձը, որ էլ
Մսրամելիքի ձեռքը զորեղ
Հավիտյան իշխե, թագավորե։—
Զկար Մհերի զորքը հո էլ,
Որ ճզմեր նրանց ու տրորեր։—

ԺԷ

Այդ ժամին մանուկ Դավիթն հուրհեր
Այն պառավ կնոջ աղքատ արտում,
Թռչունների դեմ ելած մարտի,
Ձեռքին մի կանաչ, բարակ բարդի,
Խաղում էր զվարթ ու թռչկոտում։—
Պառավը կանչեց մանուկ Դավթին.
«Ո՞վ Դավիթ»— կանչեց— «Քաջի՛ որդի,
Դու ի՞նչ ես ուզում իմ խեղճ արտից.
Ինչքա՜ն տրորես ոսկեհատիկ
Հասկերը այրու կտավատի.
Չե՞ս տեսնում՝ Բաղին ու Կոզբաղին
Տանում են քո հոր արդար ոսկին.
Ուժ, զորություն է տված բազկիդ,
Գնա՛, ո՞վ Դավիթ, գնա՛ հսկի—
Ետանեն քո հոր արդար ոսկին»։
«Բայց ո՞վ է տալիս ոսկին իմ հոր
Բաղուն, Կոզբաղուն» —զարմանքով խոր
Հարցրեց Դավիթ-դյուցազնը նոր։—
«Ձենով-Օհա՜նն է տալիս քո հոր
Գանձերը չարին՝ չարի սովոր»—
Բարբառեց պառավն հառաչքով խոր։
Եվ գնաց մանուկ Դավիթը, որ
Տերություն անի գանձերին հոր։—

ԺԸ

Գնաց նա, տեսավ՝ սենյակում հին
Կանգնել են Բաղին ու Կոզբաղին,
Իսկ Ձենով-Օհանը մահատիպ
Ջափում է ոսկին ոսկեհատիկ,
Պարկերը հենած հողե պատին,
Ինչպես բեռ հնձած կտավատի։—
Դավիթը տեսավ, նայեց Բաղուն,
Դարձավ, լուռ նայեց նա Կոզբաղուն,
Մոտեցավ ապա նա Օհանին

Եվ չափը խլեց նա ցորյանի,
Ասաց.— «Թող որ ե՛ս չափեմ, Բաղի՛,
Մհերի ոսկին ոսկեհատիկ»։
Ասաց, պարկերի ոսկին թափեց,
Դատարկ ամանով օդը չափեց,
Շրջեց այն ապա նա պարկի մեջ—
Եվ ծիծաղելով ասաց.— «Այս մե՛կ»։
Զայրացավ, դժնեց Կոզբաղին նենգ,
«Դե՛ն տարեք»— կանչեց— «Դավիթին խե՛նթ,
Մսրամելիքի հարկը տվե՛ք,
Ձեք ուզում եթե՝ գնանք ասենք—
Դա, հիմքից քանդի Սասունն անտեր,
Անապատ դառնան Սասմա հանդեր»։
Զայրացավ անչափ Դավիթն այստեղ,
Բարկությունն անհուն էլ չզսպեց,
Ետ դարձավ— ձեռքի պղինձը մեծ
Կոզբաղու ճաղատ գլխին խփեց։—
Զայն տվեց ապա նա Օհանին,
«Ո՞վ Ձենով»— կանչեց— «Գնա քնի՛.
Մսրամելիքը յոթգլխանի
Ինչ որ կարող է՝ թո՛ղ գա՝ անի՛»։

ԺԹ

Գնացին Բաղին ու Կոզբաղին,
Մսրամելիքին գանգատ արին,
Պախարակեցին Դավթին արի,
Դովեցին, իբրև Սասմա բարիք,
Ձենով-Օհանի վարքը բարի։—
Մսրամելիքը, արքան այն նեռ,
Զայրացավ, ինչպես դաժան ձմեռ,
Արձակեց ապա հրաման գոռ,
Որ գա, հավաքվի անհաշիվ զորք.—
Հազար, հինգ հարյուր մանուկ նորել,
Հազար, հինգ հարյուր ռազմիկ զորեղ,
Հազար, հինգ հարյուր այր սեահեր,
Հազար, հինգ հարյուր այր ալեհեր,—

Որ գնա Սասմա երկրին տիրե,
Որ Սասմա քաղաքը ավիրե,
Որ ժողովրդին ամբողջ գերե,
Տեղահան անե, Մսրը բերե։—

Ի

Մսրամելիքի զորքերն եկան,
Բռնեցին Սասմա սարերը ողջ,
Լցրին շոնդյուն, ու թինդ, ու կոչ,
Ձիերի խրխինջ ու խրխնջոց,
Եվ Սասմա չքնաղ աշխարհն ամբողջ
Բռնեց աղաղակ, ու ծուխ, ու բոց։—
Ջենով-Օհանը, իշխանն հայոց
Բարձրացավ, տեսավ մի առավոտ
Մսրամելիքի զորքերն այն հոծ,
Տեսավ արշավանք մի մահահոտ
Եվ սիրտը նրա լցվեց ահով։—
Գնաց նա ապա Դավիթի մոտ
Ասաց.— «Ո՜վ Դավիթ, մանո՛ւկ դիվոտչ
Բերել եմ ահա քեզ մահվան բոթ»։
«Ո՜վ Դավիթ»,— կանչեց— «Դավի՛թ»— ասաց—
«Սասմա ավերման ժամը հասավ.
Եկել է զորքով բազմահազար
Մսրամելիքը, արքան գազան.
Գնա՛նք, ո՜վ Դավիթ, գնա՛նք»— ասաց.
«Իրեն տանք հարկը իրա ուզած.
Գնանք, ո՜վ Դավիթ, ոսկի տանենք,
Փրկություն հայցենք արքայից նենգ,
Որ վրեժն իր չար նա չհանե,
Սասմա երկիրը չկործանե»։
Եվ ասաց Դավիթը Օհանին.
«Ո՜վ Ջենով»— ասաց— «Գնա քնի՛,
Առավոտ, առած ազեզ ու նետ,
Ի՞նքս կգնամ—կռիվ կանեմ»։

ԻԱ.

Առավոտ եկավ Դավիթը վեր,
վերցրեց-առավ աղեղ ու նետ,
Որ գնա՝ Մսրա արքայի հետ
Մղի պատերազմ մի չարաղետ,—
Որ ուժը նրա հորդած, ինչ գետ,
Դարձընի, քշի մեր երկրից ետ։—
Բայց տեսավ նրան այրին այն խեղճ,
«Ո՜վ Դավիթ»— ձայնեց — «Այդ ո՞ւր»— կանչեց։
Դավիթը ասաց.— «Գնում եմ ես
Մսրամելիքին կոչեմ հանդես,
Մեր երկրի համար կռիվ անեմ,
Մսրամելիքին Սասնից հանեմ»։
Գառավը ասաց.— «Դավի՛թ ռամիկ,
Ինչքա՞ն ես անմիտ ու միամիտ,
Փուչ գլխիդ ունես լեռան քամի.
Մարդ էլ՞ կգնա դարանամիտ
Մսրամելիքի հետ հարամի
Նետով-աղեղով կռի՞վ կանի»։
«Բա ի՞նչպես անեմ»— Դավիթն ասաց.
«Ո՛չ զրահ ունեմ, ո՛չ զենք հազար»։
«Բա ինչպես անե՛ս»— պառավն ասաց.—
«Բա չե՞ս իմանում, Դավի՛թ անճար.
Մհերը ուներ զենքեր անչափ,
Մհերը ուներ նժույգ պայծառ,
Մհերը ուներ և սուր-կայծակ»։
Դավիթը կիտեց հոնքերն, ասաց.—
«Բա ո՞ւր են իմ հոր զենքերն»— ասաց.—
«Հե՜յ, խևո՛ւկ Դավիթ»— պառավն ասաց.
«Ջենով Օհանի՛ն գնա ասա.
Ինչքա՞ն որ զենքեր քո հերն ուներ,
Ինչքան որ զրահ Մհերն ուներ—
Ջենով Օհա՛նն է տարել-պահել։
Գնա՛, ե՛տ խլիր, Դավի՛թ հուրհեր»։
Ասաց, խրատեց պառավն արթուն
Դյուցազուն Դավթին, ինչպես որդուն.

«Հավատ չընծայես ուրիշ մարդու.
Թե սիրով չտա— ուժո՛վ առ դու»։

ԻԲ

Գնաց Դավիթը սրտով տրտում,
Գնաց այն Զենով-Օհանի տուն,
Թակեց, թնդացրեց երդիկ ու դուռ,
«Ո՛վ Օհան»— կանչեց— «ե՛կ— արի դո՛ւրս,
Առյուծ-Մհերի զենքերը տո՛ւր,
Որ կռիվ գնամ զենքերով հուր»։
Օհանը, սարսած, ելավ գավիթ.
«Ի՞նչ զենքեր»— ասաց— «խևո՛ւկ Դավիթ,
Դու մանուկ էիր մի միամիտ,
Ո՞րտեղից փչեց գլխիդ քամին»։
Դավիթը ասաց.— «Զենո՛վ-Օհան,
Մհերը ուներ ոսկե վահան,
Մհերը ուներ զենքեր հրցայտ,
Մհերը ուներ նժույգ պայծառ,
Մհերը ուներ և՛ սուր-կայծակ։
Բեր, հանձնի՛ր զենքեր ու զրահներ,
Եթե ոչ»— ասաց— «Ուժո՛վ կառնեմ»։
Օհանը, ահով լցված հազար,
Հարցըրեց— «Դավի՛թ, քեզ ո՞վ ասաց»,
Դավիթը ասաց.— «Պառավն այն մեր.
Ե՛լ, Զենով-Օհան, զենքերը բե՛ր,
Գնամ, մեն-մենակ կռիվ անեմ,
Մսրամելիքին Սասնից հանեմ»։

ԻԳ

Տեսավ՝ ճար չկա Օհանը նենգ,
Հավաքեց, բերեց զրահ ու զենք,
Բերեց Մհերի զենքերն հրցայտ,
Նժույգը բերեց նրա պայծառ,
Եվ սուրը բերեց նրա կայծակ։—
Եվ Դավիթը երբ նժույգն հեծավ,

Երբ հագավ իր հոր զրահն արծաթ,
Երբ բռնեց ձեռքին սուրը կայծակ—
Դարձավ — Դավիթի հետքից ասավ.
«Ափսո՞ս, Մհերի հրեղեն ձի՛,
Զրահնե՛ր անգին, զանձե՛ր անծիր,
Ափսո՞ս Մհերի ձիու սանձին»...
Դավիթը լսեց և ետ դարձավ,
«Ո՛վ Զենով-Օհան, Օհա՛ն»— ասավ,
«Պապանձվի՛»— ասավ— «քո չար լեզուն.
Բա մանուկ Դավթին չե՞ս ափսոսում»...
Օհանը ահից խոսքը փոխեց.
«Ափսո՞ս մեր մանուկ Դավիթ»— ասեց.
Աչքերից առատ արցունք հոսեց,
Իբրև թե խղճաց ու ափսոսեց։—
Դյուցազուն Դավիթն էլ չխոսեց,
Առյուծ-Մհերի անունն հիշեց,
Ե՛տ դարձավ ապա և ձին քշեց...

ԻԴ

Դյուցազուն Դավիթն հուր-ձին քշեց—
Մսրամելիքի բանակն հասավ.
Երբ բանակն հասավ, նայեց-տեսավ՝
Քնել է, բռնած հովիտ ու սար,
Մսրամելիքի զորքը հազար։—
Դյուցազուն Դավիթն երբ այս տեսավ՝
Մտածեց, մանուկ մտքում ասավ.
«Թե հիմա այսպես քշեմ-գնամ,
Ցորյանի նման հնձեմ նրանց—
Պիտի մտածեն, թե մենք քնած,
Դավիթը գող-գող եկավ գնաց»։
Ձայն տվեց ուստի Դավիթը քաջ.
«Վե՞ր կացեք, ելե՛ք, զորքե՛ր քնած,
Որ չասեք հետո, թե մենք քնած՝
Դավիթը գող-գող եկավ գնաց»։
Արթնացավ իսկույն բանակն ամբողջ,
Թնդյուն, շառաչյուն, շռինդ ու կոչ,

Զիերի խրխինջ ու խրխնջոց,
Զենքերի շաչյուն, ու հուր, ու բոց...
Հավաքեց Դավիթն իր ուժը ողջ,
Մրրիկի նման հուր-ձին թողեց,
Կայծակներ թռան քարից, հողից,
Արեգակն անգամ գույնը փոխեց,
Երբ սուրն արձակեց հրե շողեր։—
Շարժելով այսպես իր սուրն հրե,
Սկսեց հնձել, ինչպես ցորեն,
Մսրամելիքի զորքը զորեղ,
Որ Սասմա վրա քանի՛ օր էր
Եկել էր, նստել, ինչպես մորեխ։—
Ահեղ էր Դավիթն ու ահավոր,
Իբրև այր արդար, ռամիկ զինվոր,
Իբրև սնսասան դյուցազուն, որ
Կռվում էր սրով իր անպարտ հոր։—
Երբ տեսավ նրա ցասումն այդ խոր
Մսրամելիքի զորքը բոլոր,
Դեմ ելավ նրան մի ալեոր
Մսրա աշխարհից եկած զինվոր։—
«Դավի՛թ»— բարբառեց զինվորը ծեր—
«Ինչո՞ւ ես մեր դեմ կռվի ելել,
Մսրամե՛լիքն է, արքան այն նեռ,
Մեզ քշել, բռնի Սասուն բերել.
Ո՛վ Դավիթ»— կանչեց— «Ո՛վ միամիտ,
Դյուցազո՛ւն Դավի՛թ՝ մեզ պես ռամիկ,
Մսրամելի՛քն է քո թշնամին,
Դյուցա՛զն ես՝ գնա դարանամիտ
Մսրամելիքի՛ց վրեժդ հանի»։
«Լա՛վ»— պատասխանեց Դավիթը մեր.
«Իսկ ո՞ւր է հիմա Մելիքը նեռ»։
«Այնտե՛ղ է»— ասաց զինվորը ծեր.
«Վրանում այն մեծ քնած է դեռ,
Ծուխ է բարձրանում այնտեղից վեր—
Այնտե՛ղ է հիմա Մելիքը նեռ»։

ԻԵ

Լսեց— արձակեց Դավիթն իր ձին,
Էլ չանսաց հուր ձին իրա սանձին,
Ինչպես գերանդին ցորյան հնձի՝
Մրրկվեց այդպես թափով անծիր,
Ելավ գնաց, կանգնեց այն առանձին
Վրանի առջև, որի միջից,
Ինչպես հնոցից. թափով ամբողջ,
Ծո՛ւխ էր բարձրանում, ու հո՛ւր, ու բո՛ց։—
«Ո՛վ Մելիք»— կանչեց ձայնով անզող
Դյուցազուն Դավիթն սնհուն խանդով.
«Ո՛վ Մելիք»— կանչեց— «Քնելը թո՛ղ,
Ե՛լ, կռիվ մղենք, զարկե՛նք հերթով,
Ինչքա՞ն ես տեսնենք արդյոք դու քաջ,
Որ ժողովրդիդ՝ ահից կորած՝
Քշել ես, բերել Սասմա վրա»։
Մելիքը լսեց ձայնը նրա,
Վեր կացավ, նստեց մի պահ մռայլ,
Նայեց նա հպարտ իրա զորքին,
Մոտ կանչեց ապա մանուկ Դավթին,
Հսկա բերանը ապա բացեց,
Դյուցազուն Դավթի վրա փչեց,
Որ նրան, ինչպես չնչին տաշեղ,
Թռցնե, Սասմա դաշտից քշե։—
Բայց կանգնած մնաց Դավիթն հուրհեր
Իր տեղում անշարժ ու անեղեր։—

ԻԶ

Վեր թռավ տեղից Մելիքն ահեղ
Սարսափից կորած ու խելահեղ,
Բայց զսպեց իրեն, շունչը պահեց,
Ժպտալով ապա Դավթին նայեց,
«Նե՛րս արի»— ասաց— «Դավի՛թ ջահել,
Նստենք միասին, մարդավայել
Խոսք-զրույց անենք, ապա կրկին

Ելնենք միասին, կարգով կարգին
Զի-նժույգ նստած, զրահ առած՝
Մեր ուժը փորձենք զորքի առաջ»։
Օ՜, մանուկ Դավիթ դու միամիտ,
Առյուծ-Մհերի որդի՜ ռամիկ,
Քո գլխում ինչքա՜ն խաղա քամի,—
Ահեղ փորձության, մահու ժամին
Որքա՜ն հավատաս անգետ կամիվ
Ամե՜ն մի ոսոխ ու թշնամի
Մսրամելիքի ու Օհանի...
Ահա Մելիքը, արքան այն նեռ,
Քեզ նենգ ժպիտով կանչում է ներս,
Որ դավով խարդախ ու արնանենգ,
Քեզանից, Դավի՜թ, իր ոխն հանե։—
Եվ ռամիկ Դավիթն, արդար ու մեղմ,
Հավատաց չարին ու մտավ ներս,
Եվ ընկավ, խաբված դավով այն նենգ,
Մելիքի փորած անդունդի մեջ...

Իէ

Ընկավ մեր Դավիթն անդունդի մեջ.
Շուրջը— մթություն, ու մուժ, ու մեգ,
Իսկ վերից Մելիքը արնանենգ,
Սարսելով ահից իր խելագար,
Քաշեց մի հսկա, վիթխարի քար։—
Դավիթը մնաց փոսում խավար,
Անպաշտպան, մենակ, իսկ դուրսը չար
Մսրամելիքը, արքան դաժան,
Քրքջում էր ահեղ ու ժանտաժանտ։—
Եվ Սասմա վրա իջավ այնժամ
Խորշակ դառնաղետ, մահ տարաժամ։—
Եվ Դավիթն, ընկած խավարում քար,
Օգնության կանչեց երկար, երկար,
Եվ զուր է ասում զրույցը հար,
Թե պահուն այդ սև, այդ ժամին չար.
Օգնության եկավ խորհուրդով վառ

Ջենով-Օհանը, իշխանն այն մառ։—
Նա չեկավ, Ջենով իշխանն հայոց.
Սև սրտում՝ սարսափ ու ա՜հ մահու՝
Նա Մելիքին էր նվաստ նայում
Եվ ժողովրդին հրամայում—
Հավաքեն, տանեն նրա համար
Քառասուն կաղ կին՝ կորեկ աղան,
Քառասուն այլ կին, որ ուղտ բառնան,
Քառասուն աղջիկ՝ նման գարնան՝
Գնան՝ Մելիքին վարձակ դառնան։—
Հավաքեց ապա ահով՝ անսանձ
Օհանը ամբավ ոսկի ու դանձ,
Մսրամելիքի մոտը գնաց,
Թախանձեց, խնդրեց վիզը ծռած,
Որ գերի գրի հավիտյան-հար
Երկիրը Սասմա և դարեդար
Թե՛ իր և թե ո՛ղջ Մսրա համար
Գա, ոսկի տանի, անհատնում հարկ։—
Մելիքը լսեց, չարկամ խնդաց,
Մոընչաց—ձայնից հողը թնդաց,
Արձակեց ապա հրաման գոռ,
Որ ժողովուրդը Սասմա ամբողջ,
Հավաքի, բառնա հարկը փրկիչ
Եվ գերի գնա Մսրա երկիր։—
Ջենով-Օհանը լսեց, գնաց
Եվ ժողովրդին՝ ահից կորած՝
Հայտնեց Մելիքի հրամանն այս։—
Եվ սուգ բարձրացավ, տրտունջ ու լաց
Աշխարհում հայոց,— և որբացած
Սասմա աշխարհի ձայնը գնաց,
Հասավ ականջին Դավթի դյուցազն,
Որ խավար ու խուլ հորում կորած
Ժայթքում էր աչքից կրակ ու կայծ։—
Սթափվեց, հիշեց Դավիթն այնժամ
Առյուծ-Մհերի փառքը պայծառ,
Հիշեց կայծակն սուրը հրացայտ,

Հավաքեց ամբողջ իր ուժն անծայր,
Խփեց-շողշողաց սուրը կայծակ—
Եվ քարը կտրեց — միջով անցավ...

ԻԸ

Դուրս եկավ հորից Դավիթն այնժամ,
«Ո՜վ Մելիք»— կանչեց— «Արքա՛ դաժան,
Ելել եմ, բերել քեզ մահու ժա՛մ»։
Կանչեց նա ապա ձայնով ահեղ.
«Ե՛լ, հանդես արի՛, ո՜վ արքա նենգ,
Զկ՛ նստիր, կապի՛ր զրահ ու զենք,
Որ վերջին անգամ դեմ-հանդեպ մենք,
Ո՜վ Մելիք, մահու կռիվ անենք»։
Դեմ ելավ դաժան արքան նրան,
Ժպտաց շողոքորթ, նայեց վրան,
Զենքերին նայեց այն հուրհուրան,
Նժույգին նայեց նրա կրակ,
«Ե՛կ, նստի՛ր»— ասաց ժպիտով նենգ.
«Ե՛կ, նստի՛ր, սիրով զրույց անենք,
Թե կամիս հետո՝ առած թուր-տեգ,
Ո՜վ Դավիթ, մահու կռիվ անենք»։
«Ո՛չ»— պատասխանեց Դավիթը մեր.
«Սասունցի Դավթին չե՛ս խաբի էլ.
Ե՛լ, Մսրամելի՛ք, զենքերդ բե՛ր,
Կանգնի՛ր անխարդախ ու անվեհեր,—
Քեզ մա՛հ եմ բերել, ո՜վ արքա նեռ»։
Բարձրացավ Մելիքն իր տեղից վեր,
Զրահնեռ հագավ, առավ զենքեր,
Ձի-նժույգ նստեց և կանգնեց մեր
Դավիթի հանդեպ, ինչպես մի լեռ։—
«Դավի՛թ»— բարբառեց Մելիքը նեռ,—
«Ո՞ման է առաջին հարվածն արդյոք»։
«Քո՛նն է»— դյուցազուն Դավիթը մեր
Պատասխան տվեց այն նեռ-մարդուն։—

ԻԹ

Եվ կանգնեց Դավիթը նրա դեմ
Անսասան, անահ, դեմքով վսեմ,
Հայացքով պայծառ, ժպիտով սեգ,
Բոցավառ, ինչպես պայծառ արեգ։
Մսրամելիքը իր ձին քշեց,
Հեռացավ, եկավ, և ապա շեղ
Հարվածով դժնի, թափով ուժեղ
Հարվածեց Դավթին, որ նրա սեգ,
Բարձրաբերձ կուրծքը միջից կիսեց։—
Երբ զարկեց Մելիքն հարվածն ուժեղ,
«Հո՜ղ դարձավ Դավիթ»— դարձավ պսեց.
«Այստե՛ղ եմ»— կանչեց Դավիթը սեգ,
Եվ ահով լցվեց Մելիքը սև։—
Նա երկրորդ անգամ իր ձին քշեց,
Եկավ, հարվածեց հարվածով շեղ.
«Հո՜ղ դարձավ Դավիթ»— էլի ասեց,—
«Այստե՛ղ եմ»— կանչեց Դավիթը սեգ։—
Եվ երրորդ անգամ իր ձին քշեց
Մսրամելիքը, արքան այն սև,
Եկավ, հարվածեց գուրզով ուժեղ.
«Այս անգամ մեռա՜վ Դավիթն»— ասեց.
«Այստե՛ղ եմ»— կանչեց Դավիթը սեգ.
«Կանգնի՛ր, ո՜վ Մելիք, ո՜վ արքա սև,—
Ե՛ս պիտի հիմա իմ ձին քշեմ»։
Երբ կանգնեց Մելիքը նրա դեմ,
«Դավի՛թ»— բարբառեց— «Ռամի՛կ զորեղ,
Թո՛ղ, մանուկ Դավիթ, խոր հոր փորեմ,
Մտնեմ նրա մեջ, գլխիս քաշեմ
Քառասուն կաշի, քառասուն քար—
Եվ ապա՛ արի, քո զարկը զարկ»։
«Լա՛վ»— ասաց Դավիթն արքային շար.
«Թող փորեն խոր հոր, քաշեն թող քար,—
Ձի՛ փրկի, Մելի՛ք, քեզ ո՛չ մի ճար
Սասունցի Դավթի զարկից աղքար»։

Լ

Բերին, փորեցին մի հոր խավար
Մսրամելիքի, նեռի համար.
Եվ մտավ Մելիքը դողահար
Իր համար փորած հորը խավար,
Եվ բերին ապա, քաշեցին մառ
Քառասուն կաշի, քառասուն քար։
Եվ քշեց Դավիթն ապա իր ձին,
Որ խփի հարվածն իր առաջին,
Մոտ վազեց սակայն մի պառավ կին,
Մսրամելիքի մայրն էր՝ հագին
Մսրա զգեստներ՝ մետաքս անգին.
Եկավ, փաթաթվեց Դավթի ոտքին.
«Ի՞նձ բաշխիր»— ասաց— «Զարկդ առաջին»։
«Լա՛վ»— ասաց Դավիթը պառավին.
Ես քե՛զ եմ բաշխում զարկս առաջին»։
Եվ երկրորդ անգամ քշեց իր ձին
Դավիթն շտապով, սակայն կրկին
Եկավ, փաթաթվեց նրա ոտքին
Մի ուրիշ—տարեց, գեղեցիկ կին.
Մսրամելիքի քույրն էր՝ հագին
Զգեստներ չքնաղ ու թանկագին.
Եկավ, փաթաթվեց Դավթի ոտքին.
«Դավի՛թ»— բարբառեց— «Դյուցա՛զն անգին,
Ի՞նձ բաշխիր երկրորդ զարկդ կրկին»։
«Լա՛վ»— ասաց Դավիթն —«Ո՞վ չքնաղ կին,
Քե՛զ եմ շնորհում զարկս կրկին»։
Եվ երրորդ անգամ իր ձին քշեց,
Ոչ-ոքի խնդիրք էլ չլսեց,
Առյուծ-Մհերի անունն հիշեց,
Եկավ, կայծակե սուրը խփեց,
Զարկեց հարվածով, զարկով վսեմ—
Քառասուն կաշին միջից կիսեց։—
Կտրեց քառասուն կարծր կաշին,
Քարերը կտրեց չրաղացի,
Ճայթեց խորությամբ մի անհաշիվ,—

Դեմքն արևպական բռնեց փոշին։
Երբ փոշին մի քիչ բարձրացավ վեր—
«Այստե՞ղ եմ»— կանչեց Մելիքը նեռ.
«Սասունցի՛ Դավիթ, չե՛մ մեռել դեռ»։
Զարմացավ Դավիթն, ապա ասեց.
«Ո՞վ Մսրամելիք, թա՛փ տուր դու քեզ»։
Մելիքը նրա ձայնը լսեց,
Թափ տվեց իրեն, արյունն հոսեց,
Մեջտեղից եղավ նա երկու կես,—
Անցավ, խորտակվեց Մելիքն այսպես...

ԼԱ

Այսպես է ասում զրույցը մեզ,
Սասունցի Դավթի զրույցն արդար,
Ասում է ապա զրույցն այդ վառ,
Որ մեռավ այսպես երբ նեռը չար—
Դավիթը նրա զորքին դիմեց.
«Գնացե՛ք»— ասաց— «Ձեր երկրում կեց
Ապրեցե՛ք ազատ, ապրուստով վես,
Եվ հանգիստ թողեք մեր տունն ու մեզ»։
Ասում է ապա զրույցը մեզ,
Որ Դավիթն հետո դաշտից քշեց
Ջենով-Օհանին, իշխանին նենգ,
Հավաքեց ապա զրահ ու զենք,
Եվ դարձավ ռամիկ երկիրն ուժեղ,
Եվ հնչեց կրկին ամենուրեք
Սասմա լեռներում ծիծաղ ու երգ...
Ասում է ապա զրույցը մեզ,
Որ Սասմա երկրում տիրեց այսպես
Կյանք զարմանալի, արդար ու վես,
Մինչև մահացավ Դավիթն հրկեզ
Եվ ժառանգ թողեց երկրի վրա
Մհերին՝ որդուն իր հուրհուրան,
Բայց դժնի ուժեր տարան նրան,
Փակեցին Սասմա անհուն լեռան
Քարայրում մթին, որ այնտեղ նա
Հավիտյան, ընդմիշտ գերված մնա...

— Օ՜, դյուցազն Մհեր, ռամիկ դու ա՛յր,
Առյուծ-Մհերի շավի՛ղ պայծառ,
Դյուցազո՛ւն վերջին, ռազմի՛կ արդար,
Ձե՛ռք ժողովրդի ստեղծարար,—
Ուժեր կործանիչ, և՛ մութ, և՛ չար
Քարայրում այն մութ, միգում խավար
Փակեցին ահով քո դեմքը վառ,
Եվ գալիք քենից սարսափահար՝
Հայտարարեցին քեզ նեռ ու չար,
Որ չելնես մի օր՝ նրանց համար
Չբերես անկում, ու մուժ, ու մահ...

ԼԲ

Հուշ դարձավ այսպես, կյանքից գնաց
Սասունցի Դավթի զարմը դյուցազն,
Եվ տիրեց անհուն աղետ ու լաց
Լեռներին Սասմա, աշխարհին բարձր,
Եվ ժողովրդին ռամիկ ու պարզ։—
Հուշ դարձավ այսպես, դարձավ երազ
Առյուծ-Մհերի զարմը զորեղ,
Եվ դարեր ապա ու տարիներ
Լեռներում Սասմա, աշխարհում մեր,
Որ ոչ մի դյուցազն էլ չսերեց—
Ձենով-Օհանի զարմը տիրեց...
Տիրեց Օհանի սերունդը մառ
Բաղում տարիներ,— ու դարեդար
Հայրենի երկրում ժլատ ու չար,
Անդուլ կեղեքող—ձեռքով շռայլ
Ցրե՛ց մեր երկրի գանձը անծայր
Եվ ինքնությունը մեր ոսկեսար։—
Եվ եկան ապա ու շարեշար
Տիրեցին երկրին իշխաններ չար,
Տերեր հայրենի ու զանազան,
Ագատանիներ՝ վարքով գազան,
Եվ նեռ-արքաներ հազարհազար։
Եվ ժողովրդի գլխին ազատ,
Իբրև հովանի մի սրբազան,

Կախվեց տերերի ժանիքը ժանտ—
Ե՛վ խարույկ, և՛ խաչ, և՛ խարազան...
Այսպես Օհանի սերունդը մառ
Տիրեց աշխարհում երկա՛ր, երկա՛ր,
Մինչև օրն եկավ— և դեմքով վառ
Հլավ քարայրից Մհերն արդար,
Եվ բերեց զարմին Օհանի չար
Անկում վերջնական և մահ անճառ—
Օ՜, անմահ Մհե՛ր, քանի՜ դու դար
Գիտի մնայիր այրում խավար,
Մինչև աշխարհում քո օրը գար
Եվ ելնեիր դու արևավառ—
Հա՜մ՝ աշխարհի զարմերին չար
Բերելու անկում և մահ արդար։—

ԼԳ

Եվ մենք աշխարհում հավիտյան-հար,
Որքան վերհիշենք զրույցն այս վառ,
Սասունցի Դավթի զրույցն արդար,—
Սերունդե-սերունդ ու դարեդար—

Դառնանք—բարբառենք նզովք մենք նախ
Մսրամելիքի՛ն, Թագավորի՛ն,—
Դառնանք— բարբառենք նզովք ապա
Ձենով-Օհանի՛ն, իշխանին նե՛նգ,—
Դառնանք— բարբառենք նզովք ապա
Ա՛յլ իշխաններին բոլոր այն մեր,
Որ բերին մեզ մահ, ու մո՛ւժ, ու նե՛ռ։—

Փա՛ռք փառաբանենք ապա մենք մեր
Առյուծ-Մհերի՛ն, դյուցազնին քա՛ջ,
Դավիթին՝ նրա որդուն դյուցազն,
Մհերին՝ նրա որդուն անմահ,—
Ո՛ղջ ժողովրդին ապա Սասմա,
Որ լուրթ լեռներում մի օր բազմած
Հորինեց պայծառ զրույցը այս—
Եվ անցավ անհետ, դարձավ երազ...

ԴԵՊԻ ԼՅԱՌԸ ՄԱՍԻՍ

Ակսել Բակունցին, պայծառ բարեկամիս

Նա դուրս եկավ տնից առավոտվա ծեգին,
Իր ետևից կամաց դուռը փակեց,
Վերջին անգամ նայեց իր տնակին—
Եվ քայլերը ուղղեց դեպի բաղերը։—
Ցուրտ էր։— Արևը դեռ հորիզոնից
Նոր էր փռել աղջամուղջը վաղընջական,
Եվ վաղ առավոտի ծիրանեգույն ֆոնին
Հեռվում երևում էր Մասիսը՝ կապույտ շղարշ հագած...

. . . . . .

. . . . . .

Գիշերը չէր քնել։— Քրքրել էր թղթերը,
Երկար թերթել թերթերը բազմաթիվ,—
Օրագրեր, գրքեր, ձեռագրեր,
Գրություններ՝ մնացած դեռ Դորպատից։
Կյանքի նման իր բարդ, խառնիխուռը, լիքը,
Իր խոհերի նման բազմապիսի,
Խոհեր՝ ուղղած դեպի սերունդները գալիք,
Ծրագիրներ՝ կիսատ, կամ սկսված հազիվ,—
Ո՞ւմ էր թողնում բոլորը, ո՞ր սիրեցյալ սանին,
Որպեսզի վաղը նա այդ թերթերից
Գուրգուրանքով հաներ իր խոսքը կենդանի
Եվ խնամքով հանձներ տպագրյալ գրին...
Եվ նամակնե՞ր ապա... Այդ թերթերը դեղին,
Ծածկած հաճախ գրով գոթական—
Այդ չէ՞ր միթե հախուռն իր օրերի ուղին,
Իր խոհերի, գործի ու տքնաջան
Մաքառումի՝ ընդդեմ իր գոյության չարքաշ...
Օ՜, անպտուղ վաստակ ու տքնություն երկար,
Գոսն օրերում— ոգու հոգնություն ե՛ղկ,—
Անտեսանելի գալիք ու կապարե ներկա,
Անհորիզոն կյանքի կապարե ե՛րգ...

Գիշերը երկար նա նստած
Քրքրել էր իր հին նամակները բազում.—
Մոռացության փոշին էր նրանց վրա նստած,
Եվ թվում էր՝ հեռու մի երազում
Նա տեսնում է կրկին իր օրերը,
Հորձանուտը նրանց անօրինակ—
Այդ դեղնավուն թերթերը, այդ զանազան գրերը՝
Ի՜նչ ըղձերով արդյոք հորինած...
Նամակների դեզում կային խստաբարո
Գրություններ՝ շեշտով խրատական,
Ինչ-որ ուրիշ կյանքի ընթացք բարբառող,—
Գրություններ կային, որոնք, սակայն,
Նշում էին նրան ուղի նվաստ,
Գծում դժնի ընթացք ասիացու,
Եվ հորդորում էին քայլով զգաստ
Ընթանալ կամոքն աստուծո՝
Խոնարհության՝ շավղով, առաքինության՝,
Դարերով սրբագործյալ հեզության,
Որ ժողովուրդը լինի, ինչպես հնում—
Ջարքաշ, աստվածավախ ու արդար։—
Սակայն նամակների դեղին դեզերում,
Ծալքերում նրանց փոշաբույր
Հանկարծ աչքին ընկավ մի գրություն գերող՝
Մի փոքրիկ թերթ կապույտ։—
Ինչպես ցողն է լինում ծաղիկների վրա՝
Թափանցիկ, վաղընջական ու գերող—
Այդ թերթիկը կապույտ ալեկոծեց նրան
Հուշերով՝ չճաշակած մի քաղցրություն բուրող...
Հիշեց։— Ե՞րբ էր արդյոք։— Դեռ ինքը՝ երիտասարդ՝
Լցված երազներով ու հույզերով,
Երևանից մինչև այն եզերքը հասած՝
Բռընկվեց անկարելի մի սիրով...
Մոայլ հեռուներից եկած մի աբեղա,
Ընտելացած խոհեմ երազի ու կյանքի—
Զգեցած սուրբ վարքի խստաբարո ուրար—
Դեմ հանդիման եկավ այդ տենչանքին անգին...
Եվ հանկարծ— այնքա՜ն պայծառ,

Կարծես այսօր լիներ, հենց հիմա—
Պատկերացավ նրան այդ անցյալը
Մի տեսիլի նման։—
Կանգնեց իր դեմ աղջիկը.— ոսկե գիսակներով,
Աչքերով, որպես երկնակամար,
Աստվածածնի նման պսակավոր,—
Ի՞նչ մեղսական ու հույլ տենչանքների համար
Բուսած, ինչպես ծաղիկ, անուշ ու անզրկելի...
Երիտասարդ էր. կուրծքը հեշտանքով լի,
Բարակ մատներն ինչպես սիրո տավիզ.—
Մորմոքում էր իր սիրտը անհուն ցավից,
Երբ դիտում էր պատկերն այդ մեղսալի...
Այդ ե՞րբ էր. երե՞կ էր, թե տարինե՞ր,
Տասնամյակնե՞ր առաջ... Եվ ե՞րբ անցավ...
Ժամանակը հետո փոշոտ պատնեշ հինեց—
Եվ ինքը ամբո՞ղջը մոռացավ։—
Եվ ի՞նչ մնաց։— Այս թերթը ոսկերիզ,
Այս թերթիկը կապույտ, ինչպես անուրջը,
Ուր գրում է նա իր հրաժեշտի խոսքերը,
Այն ոսկեծամ աղջիկը— Շարլոտտա Շուլցը։—
Մի բաց-կապույտ թերթիկ, վերևը զարդարած
Սուվենիրով խրթին ու մանրանկար,
Եվ գոթական սուրսայր նշաններով գրած
Ոտանավոր մի խեղճ ու անքանքար...
Ահավասի՛կ ամբողջը։— Երկա՞ր, երկա՞ր նայեց
Սուվենիրին նա նուրբ ու գրերին,
Ուզեց ճմլել այդ թերթը, ինչ-որ մի տեղ պահել,
Կամ պատառոտել նվերը,—
Սակայն թողեց. թաղեց թերթերում ա՛յլ,
Կամքի վերջին ճիգով քերեց խոհերից,
Եվ սկսեց թերթել զգաստությամբ մոայլ
Մյուս թերթերը հին։—
Եվ հետո, արդեն լուսադեմին,
Երբ մոտենում էր տնից հեռանալու ժամը—
Նա գզրոցից հանեց տետրակ մի հին,
Որ նայի նրան մի անգա՛մ էլ։
Երկա՞ր, երկա՞ր նայեց նա տետրակին,

Հիշեց հանկարծ իր հորը, Երևանի բերդը,
Մորը հիշեց՝ պարթև ու արխալուղ հագին,—
Եվ սկսեց թերթել...
Նախ թերթում էր այնպես, աննպատակ,
Հետո աչքին ընկավ մի բայաթի,
Սկսեց կարդալ մի հատված,
Հետո խորասուզվեց— և մինչև առավոտի
Շողն առաջին ընկավ սենյակից ներս—
Նա կարդում էր, կարդում էր, մոռացած, որ պիտի
Շուտով թողնի ամբողջը և ելնի վեր...
Երկա՞ր, երկա՞ր կարդաց։— Մի երկու տեղ
Նկատեց փոքրիկ վրիպումներ
Եվ մատիտով ուղղեց։— Հետո թեթև
Այլ ուղղումներ արավ,— սակայն անվերջ
Գիտակցության տակից, իր էության
Մութ խորքերից, ուր միտքը վախենում էր թափանցել—
Տագնապալից աճում էր ահանման մի բան՝
Կասկածի պես անորոշ ու անձև...
Արդեն մոտենում էր առավոտը և նա դիտի գնար,
Սակայն կարդում էր դեռ,— և հանկարծ
Տագնապալից այն միտքը անհետ
Բարձրացավ, ցցվեց ուղեղում՝ զարմանալի ուռուցիկ ու
պայծառ։—
Ի՞նչ է ասում այդ գիրքը և ի՞նչ է բարբառում.
Չուր չէ՞ արդյոք վատնել անհատնելի իրձիրքը.
Եվ չի՞ արդյոք եղել իր ողջունած հեռուն
Մի թիարտն վատթար,— և այդ գիրքը՝
Իր արյունով, սրտի յուրաքանչյուր նյարդով,
Իր վերջին ճիգով հորինած—
Չէ՞ արդյոք խեղճության ու սխալի արդյունք՝
Սերունդների երթին ի վնաս...
Վաղո՞ւց են չարաշուք այդ խոհերը խոցել
Անօգնական իր սիրտը,— սակայն ամեն անգամ
Հենց որ հանել է գիրքը և կարդացել—
Ինչ-որ անհուն մի բան,

Զարմանալի մի բան՝ կարոտի
Ու թովչության նման անհասկանալի—
Ողողել է իր սիրտը և կոկորդում
Իբրև արցունք՝ հորդել... Օ՜, անձկալի
Ժամեր միայնությա՜ն, ընդվզո՜ւմի, խոհի՜,
Ոգու ըմբոստության ու կորովի,—
Ստեղծագործ մտքի թռի՜չք ամեհի՝
Ճգնության պես անձուկ ու թովիչ...
Եվ հայրենի բարբառը՝ որոտաձայն, հախուռն
Ոգու անեղծ հրով սրբագործած,—
Եվ խորախոց խոհերը տարիներում անդուռ—
Միթե սո՞ւտ է բոլորը և փորձա՞նք...
Միթե մո՞ւխ է բոլորը, ոգու սայթաքո՞ւմ,—
Եվ ամենը, որ եղել է կյանքում
Իր երազանքը սուրբ, իր ըղձանքը թաքուն—
Անիմա՞ստ է եղել, ինչպես հորձանքով,
Գոսն օրերի դժնի հորձանուտով տարված
Թղթե չնչին նավակ կամ տաշեղ,—
Եվ իր կյանքը ամբողջ եղել է սին մի հարց՝
Աննպատակ ուղղած և ամպաշեն...
Բայց ո՛չ. ի՛նչ էլ լինի— այնուամենայնիվ
Հո չի՞ ստում կարկաչն այս բարբառի,
Այս երգեցիկ գրքի երգանման ձայնը,
Որ դիպչելով կյանքի հազարամյա քարին՝
Պիտի ճեղքե այդ քարը, այդ ժայռակուռ պարիսպը,
Պիտի բանա թեկուզ փոքրիկ կածան,
Որ դպրությունն անցնի ու հորդանա, ինչպես
Ջինջ առուն է անցնում ջրանցքներով բացած։—
Ո՛չ. չի՛ ստում բարբառը.— ահավասի՛կ գարնան
Հեղեղների նման որոտում է իր դեմ,—
Եվ նա կարդում է հափշտակված, կարդում է բարձրաձայն,
Իսկ դուրսը— առավոտ է արդեն։—
Իսկ թե չի՛ ստում այն կասկածը
Եվ ստում է այս գիրքը...— Նա
Տագնապասիրտ՝ գրքի նախաբանը բացեց,
Մի-երկու տող կարդաց— և գազազած
Պատրաստվում էր արդեն շպրտել գիրքը դեն,—

Երբ աչքերի հանդեպ ահասաստ
Հառնեց, կանգնեց հանկարծ մի բարի դեմք...
Այդ նա՛ էր— ուսուցի՛չը։— Դեմքով բարի,
Ե՛վ հարազատ, և՛ սառը, խստաբարո,
Բարեկամի նման մտերիմ,
Ե՛վ անհողդողդ, և՛ մեղմ, և՛ անսահման ներող—
Նայեց նրան մի պահ, աչքերը սևեռեց
Նրա հոգու խորքը— և մարմարի պես նուրբ
Ձեռքը եղբայրաբար գրքի վրա դրեց
Եվ մրմնջաց հանգիստ.— Թո՛ղ, խաչատո՛ւր։—
Այնքան ընքո՛ւշ էր ձայնը— և, միևնույն պահին,
Ահասաստ։ էր, ինչպես մահվան պատգամ,—
Եվ նա հիշեց հանկարծ. — այն ցուրտ ճանապարհին
Դեպի լյառը Մասիս— մի անգամ
Այդ միևնո՛ւյն ձայնով նա՝ ուսուցիչը՝
Ջսպեց իրեն, երբ ինքը մի գյուղացու
Ուզում էր սառցապատ ճանապարհից գցել,
Որովհետև այդ բութ գյուղացին
Համոզել էր, թե ինքը գիտե ճանապարհը,
Բայց հասցրել էր իրենց անդունդի,—
Եվ այժմ, նո՛ւյն ձայնով, նա հորդորում էր հար
Անդավաճան մնալ իր ուխտին։—
Եվ նա մնաց։— Հապճեպ մի շարժումով
Գիրքը ծալեց, դրեց արկղում ավանդական,
Հետո հավաքեց նամակները ու մի
Դառն հայացքով— երկա՜ր, վերջի՜ն անգամ
Դիտեց թղթերը, արկղը, պատերը սենյակի,
Արկղը փակեց, հագավ վերարկուն,
Գլխարկը դրեց կոնատակին—
Եվ ելավ դուրս։—
Առավոտ էր արդեն։— Այգիների վրա
Արդեն փռել էր իր լույսը ծիրանեգույն
Արարատյան արևը— և հուրհուրան
Առավոտվա միգում
Հեռուն, հորիզոնի վաղընջական ծիրում
Արթնանում էր Մասիսը վեհափառ,
Որպես լուսե ցնորք, որպես հեռու

Բարեկամ անդավաճան, կամ եղբայր։
Գիշերը չէր քնել։— Հոգնած էր, վաստակած,
Խոհերը խառնիխուռը և վրդովյալ,—
Հոգնած էր ու տխուր,— երբ դուրս եկավ սակայն—
Առավոտվա վեհությամբ թովված՝
Զգաց հանկարծ իրեն այնքա՜ն թեթև,
Եվ այնքա՜ն, այնքա՜ն թարմացած,
Որ ամե՛նը, ամե՛նը, որ մնում էր ետևը,
Իբրև ցնորք անցած—
Թվաց անգին ու քաղցր, հեռու ու անիրական,
Սրբագործված, ինչպես ոսկեղեն հուշ—
Եվ նա քայլեց հաստատ, քայլով սովորական,
Ինչպես գնում են գործի, որ կարևոր է հույժ։
Դեմը— դաշտն էր անծայր, իսկ հեռվում Մասիսը,
Լյառն այն վսեմ, որի ճանապարհով մի օր
Բարձրացել էր ինքը և սառցանիստ
Գեղեցկությամբ գերվել։— Եվ այժմ, մենավոր
Նա գնում էր կրկին դեպի հեռուն այն լուրթ,
Դեպի լյառը անհաս ու վեհանիստ,—
Դեպի գագաթը բարձր, որ իր ժողովուրդը
Համարել է հավիտ իր գոյության խորհուրդը,—
Որ ճաշակե այնտեղ հավերժական հանգիստ...

ԳՈՎՔ ԽԱՂՈՂԻ, ԳԻՆՈՒ ԵՎ ԴԵՂԵՑԻԿ; ԴՊՐՈՒԹՅԱՆ

Ա

Օրերում այս ջերմ ու հողմածեծ,
Երբ շառաչում են բանակներ մեծ,
Երբ Արարատից մինչ բարձրաբերձ
Հիմալայները այն երկնահեծ
Ելած պայքարի՝ շաչում են, տե՛ս,
Դասակարգերի զորքերն հրկեզ,—
Ոգևորությամբ պայծառատես
Երգում եմ ահա այս գովքը ես։

Բ

Երգում եմ ահա այս գովքը ես
Մեր օրերում այս բաղմաշառաչ,
Երբ բազմություններ հողմահալած
Մղում են պայքար մի լուսագես.—
Մղում են այնտեղ մի պայքար մեծ
Ընդդեմ դասերի կործանարար,
Դասերի այն սև, որ երկրում մեր
Սրբենց մրրիկը այն փրկարար։—

Գ

Օ, Հոկտեմբե՛ր դու ազատարար,
Որ շրերի պես ելած հորդուն՝
Կյանքի լորձունքը քշեցիր դուրս
Եվ բերիր մեզ կյանք մի անարատ,—
Եվ բերիր մեզ կյանք մի լուսառատ,
Որով հրկիզված՝ ահա անդուլ
Ե՛վ պայքարում ենք, և՛ հար կերտում
Օր բեղմնավորվող և օր խնդուն։

Դ

Դեռ պայքարներ կան մեր դեմ անդուլ,
Դեռ փոթորիկներ մեծաղժվար,

Սակայն արևը այսօրվա վառ
Էլ չի հանդգնի բերելու վար
Երկնակամարից մեր խնդավառ
Եվ ո՛չ մի ոսոխ ձեռքերով չար։—
Օ՛, ընդունակ ենք պահելու հար
Մենք մեր արևը արևափայլ։

Ե

Այն մենք վառել ենք մեր գլխին հար
Ձեռքերով մեր ձիգ ու ջլապինդ,
Պայքարներով ենք վառել դժվար
Եվ գրոհներով մեծաշռինդ։
Այսօր վառում է նա արդեն խինդ
Եվ մեր աշխարհում անծայրածիր
Փռում է հունձքի գանձեր անծիր՝
Ե՛վ արվեստ, և՛ երգ, և՛ բերք, և՛ միրգ...

Զ

Ահա՛ թե ինչու,— թեկուզ այնտեղ,
Մեր անծայրածիր աշխարհից դուրս,
Դեռ չի երևում հորիզոն լուրթ,
Այլ ամպեր են բիրտ կուտակվում մութ,—
Ահա՛ թե ինչու, թեկուզ մենք մեծ
Պայքարներ ունենք դեռ հեռակա—
Հավատով անբիծ, անապական
Ես կյանքի գովքն եմ երգում ահա։—

Է

Երգում եմ ահա այս գովքը ես
Խաղողի մեր բորբ ու լուսատեսք,
Մեր գինու՝ պայծառ ու հրակեզ,
Մեր արվեստների մեծահանդես։
Եվ դպրությո՛ւնն եմ մեր երգում ես,
Գեղեցկությունը դպրության վեհ,

Որ օրերում այս պարգևե մեզ
Հույզեր հրահուր և մրգեր կե՛զ։

Ը

Անհուն հավատքով դիմում եմ քեզ,
Հանճար ճորտերի, արև՛ հրկեզ,
Որ շառաչելով մղում ես մեզ
Դեպի ապագա մի այգամեծ։
Դիմում եմ, որ ինձ առաջնորդես
Խոհերում իմ այս այնպես, ինչպես
Մեր կյանքի բոլոր հերկերում մեզ
Առաջնորդում ես քո մտքով թեժ։

Թ

Չի՛ առաջնորդում այլևս մեզ՝
Երգասաններիս, այն լուսերես
Երգի դիցուհին, որ անմարմին
Իջնում էր առաջ, դարերում հին,
Ոգի էր տալիս այրերին հին,
Հանճար էր տալիս այրերին հին,
Ու մղում էր այդ այրերին հին
Դեպի կյանք վսեմ ու երկնային։

Ժ

Օ՛, հելլենական դարեր վսեմ,
Երբ մարդկությունն իր խանձարուրում
Դեռ երգերո՛վ էր դիտում, խորհում,
Եվ երգերո՛վ էր տնկում բույսեր,
Եվ երգերով էր հերկում լուսե
Իր արոտները, և իր նսեմ
Ուղեղով դեռ նո՛ր փորձում էր սև
Կյանքի ընթացքը նախատեսել։

ԺԱ

Սակայն քերթողն է դեռ այն ասել,
Այն ոլիմպացին վերջին, թե երբ
Կյանքում աճում է ամենուրեք
Ոգի գործարար, իմաստ զորեղ,—
Այլևս դու չե՛ս առաջնորդում,
Դիցուհի՛ երգի, այլ ինքդ՝ դու
Առաջնորդվում ես, գնում արթուն
Հետևերով Մտքի առաջնորդող։—

ԺԲ

Օ, փա՛ռք ուրեմն Առաջնորդին,
Մեր Ղեկավարին հրաքանքար,
Նրա հանճարին արևափայլ
Եվ բանակներին երկաթաքայլ։—
Դիմում եմ ես քեզ, օ՜, Ղեկավա՛ր,
Ոգի՛ հանճարեղ, հանճար անճառ,
Որ վառեցիր այս արևն անմար
Երկնակամարում մեր հողմահար։—

ԺԳ

Դիմում եմ ես քեզ, օ՜, ննջած հար,
Բայց հա՛ր կենդանի հանճար անմար,
Որ մղելու ես մեզ անդադար
Դեպի բարձունքներ արեգնափայլ։
Օգնի՛ր ինձ, ո՛ւժ տուր, օ՜, Ղեկավա՛ր,
Հյուսելու գովքս արևավառ,
Որ լինի գովքս թե՛ խոր, թե՛ հար
Քո բազմաբեղուն ոգուն հարմար։—

ԺԴ

Որքան կանգուն է աշխարքը քար,
Որքան փայլում է արևը վառ—

Եղել է խաղող, ողկույզ պայծառ,
Եվ գինի՝ մաքուր ու կենարար։
Եվ երգ է եղել աշխարհում հա՛ր,
Եղել է արվեստ ստեղծարար,
Եվ դպրություն է եղել դժվար,
Ոգու տքնություն հանճարափայլ։

ԺԵ

Բայց չեմ գովերգում երգով իմ այս
Ես հին դարերի խաղողն այն սև,
Եվ հին դարերի գինին այն ղեխ,
Եվ հին դպրության հո՛ւնն այն դժվար։
Օ՜, տքնությո՛ւն դու դարերի ծեր,
Որ արքաների՛ն միայն լուսել,
Որ ճորտությո՛ւն ես սերմանել սև
Եվ սին դպրությամբ ոսկեզօծել։

ԺԶ

Օ՜, միջնադարյան մթին խուցե՛ր
Եվ վարդապետնե՛ր դեմքով մթին,
Որ դպրությունն եք ստեղծել հին,
Սևակող գրքեր՝ մտքերով սին,
Դժնաձայն տաղեր, հանգով խրթին,
Աղոթքներ՝ ձոնված անեղծ կույսին,
Որ գեղջուկ մարդու գեղջուկ մտքին
Քաշեք պատնեշներ խավարածին։

ԺԷ

Օ՜, վեղարավոր գպիրներ հի՛ն,
Որ ճաշակել եք ողկույզն անգին,
Ճորտերի տնկած ողկույզն անգին,
Ճորտերի քամած արդար գինին—
Եվ ձեր խուցերում՝ հանգով խրթին՝
Անեծքներ հղել գինուն, որթին,

Եվ ռամիկ, սրդար ժողովրդին
Ժուժկալ Հորատություն քարոզել սին։—

ԺԸ

Օ՜, մռայլախոս դպիրներ սև՛,—
Դո՛ւ, Շնորհալի՛, և դո՛ւ, Նարե՛կ,
Դո՛ւք— մագաղաթյա ու հանճարեղ,
Դո՛ւք— զարհուրելի, ինչպես Դարեհ,
Դո՛ւք— պատան մտքի, դո՛ւք— անարև,
Որ սրտի համար դարե՛ր, դարե՛ր
Կերտել եք դագաղ— պատյան քարե,
Եվ ոգու համար— դժնյա տառեր։—

ԺԹ

Օ՜, միջնադարյան մռայլ արև՝
Կախված կապարե երկնքից մութ,
Միջերկրականից մինչև Տղմուտ
Երկի՛ր քարաշատ, հերկեր ջերմոտ,—
Եվ հրով կիզված մի ժողովուրդ՝
Կուռ դղյակների թե՛ բիրտ, թե՛ բութ
Բռնության ներքո՝ կեղեքված սուտ
Քարոզչությամբ այդ բազմահմուտ...

Ի

Գոռ դղյակներում նստած հարուստ
Ազատանիներ շվայտ ու ցոփ,
Ջրահներ զարհուր ու արնացոլք—
Եվ ստրուկների վերջին հացով
Բարձրացած վանքե՛ր քանդակազոծ...
Վանքեր երկնահեց ու խոյացող՝
Մռայլ դպրության հեղձուկ բոցով
Ճորտերի հոգին ընդմիշտ խոցող...

ԻԱ

Ես չե՛մ գովերգում հանճարը ձեր,
Օ, ժանտաբարո դպիրներ ծե՛ր,
Որ մառ բարբառով դպրության մութ
Կոփել եք ստրուկ մի ժողովուրդ,
Կերտել եք ձեռքով բազմահմուտ
Ոգու շղթաներ թե՛ բարդ, թե՛ բութ—
Եվ ձեր դպրության գրքերը սուտ
Հռչակել թե՛ վեհ, թե՛ լույս, թե՛ սուրբ։—

ԻԲ

Ձեր տքնությունը եղել է զուր,
Որքան էլ հմուտ ու հանճարեղ—
Ձեզ չի հաջողվել սակայն մարել
Ճորտ ժողովրդի բարբառը սուրբ...
Օ՜, ռամիկ մարդու արդար լեզուն
Հունով հայրենի, չնայած ձեր
Դժնի դպրության— դարե՛ր, դարե՛ր
Իր մաքրամաքուր ջուրն է տարել...

ԻԳ

Դո՛ւք— պալատական, դո՛ւք— արդարև
Դժնի դպրության կոթողներ սին,
Թշնամի կյանքի՛ն, սրտի՛ն, լույսին,
Հանուն սրբության անեղծ կույսի՝
Քերթողնե՛ր կրքի ու տոփության,
Դուք չե՛ք այսօրվա մեր դպրության
Դարերից հորդող գետն այն փարթամ,
Որ դեռ հավիտյա՛ն պիտի երթա...

ԻԴ

Օ, ո՛չ.— համընթաց ձեր դպրության,
Այդ հին դարերից, որպես Գողթան

Վտակներ վճիտ ու ոսկեձայն—
Հասել են տաղեր մեզ տխրության...
Եվ գեղջկաբարբառ ուրախության...
Հասել են տաղեր գուսանական,
Հայրեններ ռամիկ ու ռազմական
Եվ անտունիներ թափառական...

Իե

Ասում եմ ես գովք գուսանական
Քաջերիկ երգերին մեր ոսկեձայն,
Որ երգիչները թափառական
Երգել են մթին դարերում այն։—
Մեր հին քերթությա՛նն այս աշխարհիկ,
Որ դայլայլներով բիրտ բարբառի,
Ընդդեմ վանքերի մռայլ քարին—
Երգել է սերը չնաշխարհիկ...

Իզ

Եվ ասում եմ գովք ես հիմա այն
Մեր հայրեններին գեղջկաբարբառ,
Որ գինու գովքն են երգում անչար,
Որթան ողկույզի հմայքն անճառ՝
Քրտնաթոր մարդու վաստակն արդար։
Ո՜, ռամիկ մարդու լեզո՛ւ ճարտար,
Զայն աշխատանքի արևավառ,
Սիրո, խնդության գեղջուկ քնա՛ր...

Իէ

Օ՜, խնդությո՛ւն խեղճ՝ առանց առթի,
Օ՜, ուրախությո՛ւն ռամիկ մարդի,
Օ՜, խաղող՝ քաղած վերջի՛ն հերթին,
Օ՜, գինի՝ քամած վերջին որթից,
Որ մութ վանքերի զանգից հեռու
Հոսել ես խարխուլ այն խուցերում,

Ճորտերի տրտում տնակներում,
Նրանց երգերում ու սրտերում...

ԻԸ

Օ՜, ճարտար ճորտե՛ր, ապրել եք դուք
Խարխուլ խուցերում անծածկ, անդուռ,
Կամ քաղաքների պաքսպից դուրս
Խուլ քարայրներում այն ժայռակուռ,
Արդար վաստակով ձեր ձանր ու սուրբ,
Քրտինքով անգին, տքնությամբ լուռ,—
Եվ երդել եք ձեր երգերը հուր
Բարբառով վճիտ, հանգով մաքուր։—

Իթ

Ասում եմ ես գովք ապա արդար
Անտունիների՛ն տխրաբարբառ,
Շրջիկ տաղերին, որ դարեդար
Երգել են հողն մեր գյուղերում,
Կամ քարաքանդակ քաղաքներում—
Այդ քաղաքների խուլ տներում,
Սիրելիների սիրուց եռուն՝
Իրենց հայրենի խուղից հեռու...

Ի

Օ՜, ճարտար ճորտե՛ր,— մեր քերթության
Աղբյուրնե՛ր մաքուր,— դո՛ւք, ոսկեձա՛յն,
Որ կարկաչելով հասած մինչ լայն
Մեր հարձանուտը տաղերգական,
Ձուլվելով երդին հովնաթանյան
Եվ սայաթնովյան խաղերին ա՛յն—
Եղել եք ակո՛ւնքը խսկական
Մեր նո՛ր արվեստի քերթողական...

ԼԱ

Օ՜, ձեզանի՜ց են սկիզբ առել
Մեր ժողովրդի երգերն հրե,
Մեր աշուղների այն հանճարեղ
Երգերը ոսկուն, որպես արև.
Եվ ձեզանի՜ց է ապա սերել
Այն քերթությունը, որ դեռ երեկ
Լոռու տաղերգուն մեր արդարև
Դարձրեց պայծառ, ինչպես բյուրեղ։—

ԼԲ

Ապա տխրադեմ եկան հանդես
Երգիչներ տխուր ու մոխրագեմ,
Երգեցին տաղեր տխրահանդես,
Այնպե՜ս մեղմաձայն, տխո՜ւր այնպես,—
Մինչ հանդես եկա նվաստս— է՜ս,
Եվ՝ վառված հրով աշխարհի կեղ՝
Երգեցի երգեր և՛ բորբ, և՛ թեժ,
Տաղեր հողմաձայն ու փրփրադեզ։

ԼԳ

Ինձանից հետո եկան հանդես
Երգիչներ երկրի՜, հողի՜, հանքի՜,
Երգիչներ՝ ելած նորոգ կյանքից.
Երգիչներ խնդո՜ւն աշխատանքի,—
Եկան խուղերի՜ց այն անարև,
Հանքերի՜ց եկան, եկան քարե
Այն զնդանների՜ց, ուր որ դարեր
Միայն ճորտությո՜ւնն էր բարբառել։—

ԼԴ

Այրում էր մի սև, դժնի արև
Դարեր շարունակ, մինչև երեկ

Քարե երկիրը մեր անտերև,
Մեր խրճիթները հողմաբերեր։—
Մեր գլխին— բազում դաժան տերեր՝
Հայրենի, օտար և զանազան,—
Արքաներ, որպես վայրի գազան—
Ե՜վ խռովք, և՛ խաչ, և՛ խարազան...

ԼԵ

Շահատակողներ ժանտադաժան.—
Թեյմուրլենկ՝ չարաչք ու չարաժանտ,
Չինգիզխան՝ զորքով բազմահազար,
Արբասներ՝ զարհուր ու զանազան,
Եվ ռուս արքաներ արնաբաժան...
Օ՜, ժանտ արքանե՜ր, ձեր սրբազան
Արշավանքներում որքա՜ն տեսանք
Փորձանքներ դժնի ու տարաժամ...

ԼԶ

Սակայն ձեզանից հար անբաժան,
Հովանու ներքո ձեր սրբազան—
Ահա՜ հայրենի տերեր դաժան՝
Ավելի՜ զարհուր ու ժանտաժանտ...
Օ՜, դղյակներում նստած՝ գազան
Աղատանինե՜ր ժանտաբարո,
Իշխաններ՝ շվայտ ու անկարող,
Եվ մութ մելիքներ արնակարոտ...

ԼԷ

Անլուր գերության ճանապարհով
Անցած դպրությո՜ւն գեղջկաբարբառ,
Որ հասած մինչև արևն այս վառ,
Այսօրվա մեր բորբ արևն անմար—
Հորդում ես ահա, որպես վարար
Գետ մաքրամաքուր ու կենարար,—

Ես քե՛զ եմ երգում հանգով ճարտար
Ներբող նրբակերտ ու գովք արդար։

ԼԸ

Փա՜ռք մաքառումին քո անդադար,
Քո ռամիկ հանգին, որ դարեդար,
Ճորտության միջից հունով դժվար,
Կտրելով մթին մի ճանապարհ—
Հասել է ահա մինչև մեր վառ
Այս արեգակը ստեղծարար,
Որ վառվել է հար, վառվել է հար,
Բոլո՜ր ճորտերի փառքի համար։—

ԼԹ

Փա՜ռք արևին մեր, որ հիմա վառ
Լուսավորում է հրով բերրի
Անցնող խավարը մեր խուղերի,
Խուլ նկուղները քաղաքների,
Եվ լեռնաշխարհում ահա մեր հին
Շաղում է շողեր անմարելի,
Որ ճորտության մեջ հեծող գերին
Դառնա իր բախտի տերը վերին։—

Խ

Օ՜, ո՛ւր, հեռավոր եղբայրներ ի՛մ,
Քերթողնե՛ր գեղջուկ հայրենների,
Երգասան ճորտեր՝ մտքով գերի
Ձեր ժամանակվա օրենքների,—
Ահա՛ բարբառը ձեր երգերի,
Հասած մինչև ինձ՝ իմ ձեռքերից
Անցած նորանոր երգիչների—
Հորդո՜ւմ է արդեն իր ափերից...

ԽԱ

Օ՜, ճարտար ճորտե՛ր, եթե դարեր
Ճորտությունն անգամ այն անարև
Ցխեղդեց բարբառն այս հանճարեղ,
Որ վտակներով բազմաբարև
Հասավ մինչև մեր օրն այս հրե—
Ապա արևի ներքո այս մեր,
Ուր չկան տերեր, չկան ճորտեր—
Որքա՜ն հորդառատ պիտի հոսեն...

ԽԲ

Ու պիտի գնա՜ հիմա այն դեռ
Մինչև օվկիա՜նը գալիք կյանքի,
Ուր մարդկությունը ողջ աշխարհքի,
Առանց դասի ու դասակարգի,
Լծված խնդագին աշխատանքի
Պիտի իր անհուն երկի՛րն հերկի,—
Երկիր արևի՜, գինո՜ւ, երգի՜—
Եվ մտքի՜, ոգո՜ւ բեղուն բերքի...

ՆՈՐ

Ա

Բարձրաբերձ բլուրի վրա,
Ավանում այն հին, հայրենի,
Ամրացած հնավանդ իր բնին՝
Բարձրացել էր բարդին այն բուրյան,—
Բարձրացել էր բարդին նաիրյան
Եվ թե՛ լույս, թե՛ մութ օրերում
Իր իրանն էր մեղմ օրորում—
Եվ սիրում էինք մենք նրան։

Բ

Կար պոետ մի՝ անունը Տերյան,
Մի պոետ մեղմախոս ու խեղճ,—
Նա մի օր եկավ ու երգեց
Այդ բարդու հմայքը բուրյան.—
Եվ սիրեց մեր ոգին նրան,
Պոետին այդ տխուր ու բարի,
Որ կառչած բարդու այդ ծառին՝
Մորմոքաց իր վիշտը նաիրյան։

Գ

Նաիրյան խեղճ ոգին էր այդ,
Որ հեռու-հեռու հյուսիսից,
Որպես նոր մի, նաիրյան Ուլիս
Դարձել էր իր տունն հնավանդ,—
Դարձել էր հոգնած ու տխուր,
Քաղաքներ տեսած ու ծովեր,
Դարձել էր տնակն իր ավեր,
Իր երկիրը դեռ թե՛ մութ, թե՛ խուլ։

Դ

Նա եկավ, երգեց ու գնաց
Դեպի հեռուներն աշխարհի,
Բայց երգը իր կառչած մնաց
Իր երկրի հնավանդ ծառին.
Սարյակի նման փետրաթափ,
Թաքնըված նրա սաղարթում՝
Նրա երգը խեղճ ու հիվանդ
Մորմոքում էր անօգ ու տրտում։

Ե

Օ՜, Նորքում բարձրացած բարդի՝
Տերյանի նման մորմոքող.
Մենք կառչել էինք մեր ոգով
Քո դեղին ու եղկ սաղարթին.
Դա մեր երգն էր վերջին, որ թառած
Մեր երկրի անպտուղ ծառին—
Ցնորում էր անմիտ մի երազ՝
Կտրըված անհուն աշխարհից....

Զ

Կանգնած էր բարդին հնավանդ
Բլուրի վրա հայրենի
Եվ թվում էր հին մի ավանդ՝
Կտակած մեր մեռած հայրերից.
Հողմերի դիմաց ահավոր
Նա պահել էր եղկ մի սաղարթ—
Եվ թվում էր սաղարթը մեզ այդ
Ապաստան հողմերից ահահոտ...

Է

Եվ ոգին, նաիրյան ոգին,
Տատրակի նման թևաթափ,

Ընտանի իր հին մորմոքին,
Հեծում էր իր վիշտը տևական,—
Հեծում էր Տկրյանի ձայնով,
Նաիրյան պյդ վերջին պոետի,
Թե չկա՞ փրկության օր
Աշխարհում մռայլ ու մթին։—

Ը

Թե խավարը պիտի խտանա
Եվ պիտի բարձրանա քամի,
Որ ահեղ մրրիկի նման
Մեզ պիտի ոտնատակ անի,
Պիտի պիրկ արմատից հանի
Այս բարդին, որի սաղարթում
Նաիրյան վերջին գուսանի
Ոգին էր ահից թպրտում...

Թ

Օ, որքա՞ն էր մեկ հպարտատ,
Դարերով պարտված մեր ոգուն,
Որ տեսել էր հազար խարազան,
Բայց կրկին մնացել տոկուն,—
Օ, որքա՞ն էր մեզ հարազատ
Այդ ահը, որ դարձած արդեն երգ,
Խարիսխի նման սրբազան
Մեզ պահում էր շղթայված իր հետ...

Ժ

Բայց ահա բարձրացավ մի օր
Այն հողմը— ուրագանն արյունոտ,
Սամումի նման ահավոր
Տարածվեց աշխարհի հունով,—
Ոտնատակ արավ աշխարհում
Բյուրավոր քաղաքներ ու շներ,
Ավերեց երկիրը իր ողջ
Եվ անապատ շինեց...

ԺԱ

Մանգաղի նման մահաբեր
Նա հնձեց օրերում այն սև
Բարձրաբերձ այգեստանը մեր,
Մեր երգի պարտեզը լուսե.—
Շարժելով մահու գերանդին՝
Նա հնձեց բերքի նման սուրբ—
Նաիրյան գուսաններ անթիվ,
Եվ ամբո՛ղջ մի անմահ ժողովուրդ...

ԺԲ

Եվ արդեն մոտենում էր մանգաղը
Մեր երկրի սրբազան բարդուն,
Որ կանգուն էր դեռ ցուրտ ու պաղ
Արարատյան դաշտում,—
Երբ մրրիկ մի ուրիշ, փրկարար
Շառաչեց Հյուսիսից կենսաբեր—
Եվ գարնան գետի պես վարար
Ողողեց լեռնաշխարհը մեր։—

ԺԳ

Հողմերի հանդեպ այն դաժան
Մերկացել էր արդեն այն բարդին
Եվ սաղարթը նրա սրբազան
Մահամերձ՝ տաքնապում էր արդեն,—
Կացինի նման բարձրացած
Կախվել էր արդեն իր վրա
Հայրենի բռունցք մի դաժան,
Որ պիտի կործաներ նրան...

ԺԴ

Թռել էր արդեն իր միջից
Մեր երկրի բարձրաբերձ ոգին

Եվ պատրաստ էր արդեն իր վճիտ
Հեզությամբ ավանդել հոգին,—
Երբ մրրիկը նոր, կենսաբեր,
Ցնցելով մերկ իրանը նրա—
Ներշնչեց կորով մի վսեմ
Եվ կազդուրեց նրան։

ԺԵ

Առաջին անգամ այն օրից,
Երբ վերջին պոետը նաիրյան
Իր քնքուշ երգով օրորեց
Ու փայփայեց նրան,—
Առաջին անգամ այն օրից
Նա զգաց կենսատու մի շունչ,
Որ գալիս էր սրբելու նորից
Իր սաղարթը մահաբեր փոշուց։—

ԺԶ

Այն օրից, երբ երգով տխրաբառ
Այն պոետը անցավ առհավետ,—
Մեզ երգեց ուրի՞շ հրավեր
Աշխարհի հեռուն հրավառ.
Անձրևեց մեր հոգում ամա
Խնդությո՛ւն մի անխորտակ ու վեհ—
Եվ ոգին մեր թևաբաց թևեց
Դեպի ա՛յլ ցնորք մի անմահ։

ԺԷ

Մեր ոգին, ոգին նաիրյան,
Որ գիտեր լոկ մորմոք ու լաց—
Առաջին անգամ թևաբաց
Սավառնեց աշխարհում համայն,—
Մոռացած իր մորմոքը ունայն,
Իր բույնը թողած այն խեղճ—

Սավառնեց ճիգով մի ահեղ
Դեպի աշխարհը լայն։—

ԺԸ

Առաջին անգամ նա թռավ
Դեպի հուր հեռուներ անծանոթ
Գտնելու հրե մի անոթ
Ըղձերի համար իր հրակ,—
Շառաչող հողմերին այն ուրախ
Նա իր բորբ տենչանքը տվեց—
Եվ լսեց երկիրը նրան,
Եվ հառնեց՝ ըմբոստ ու վեհ։

ԺԹ

Նո՞ր ջրեր էին վարարել
Մեր երկրի գետերում արդեն,
Նվ մի ա՛յլ արև էր վառել
Մեր երկրի հուրհուրան արտերը.
Եվ մահու կացնից ազատված
Մեր երկրի սրբազան բարդին
Հրահուր խնդությամբ լցված
Սպասում էր երգի ու վարդի։—

Ի

Բայց ոգին նաիրյան երգի,
Հողմերի շնչով օրորուն,
Աշխարհի խնդությամբ հրկեզ՝
Սավառնում էր երկա՞ր դեռ հեռուն,—
Մենք երկա՞ր, երկա՞ր դեռ պիտի
Կիզվեինք հողմերում հանուր,
Որ մեր երգը դառնար երկաթե,
Եվ ոգին մեր՝ անկոր ու անհուն։—

ԻԱ

Ինչքան է՛լ կարոտով անձուկ
Սպասեր բարդին մեր երգին—
Մեզ մի ա՛յլ կարոտ էր խանձում,
Մի ուրիշ—անսահման երկիր.—
Եվ մինչև դառնայինք կրկին
Մենք երկիրը մեր՝ նո՛ր երգերով—
Դեռ որքա՜ն այն արևը փրկիչ
Մեզ պիտի կիղեր իր հրով։

ԻԲ

Եվ ճախրում էր նա, մեր ոգին,
Մեր երկրի դաշտերից հեռու,
Ունկնդիր աշխարհի մորմոքին,
Աշխարհի տագնապալի եռուն,—
Ուռճանում էր նա անհագուրդ,
Հրկիզվում աշխարհի հրով,
Ամբարում էր իմաստ ու խորհուրդ,
Որ լցվի անհո՛ւն երգերով։—

ԻԳ

Եվ այսպես երկա՛ր սավառնեց
Մեր ոգին հեռու-հեռուները,
Իր ամբողջ վեհությամբ հառնեց
Մոռացած մեր երկրի առուները,—
Առաջին անգամ նա տեսավ
Որքա՜ն աշխարհը իր դեմ, ինչպես ի՛ր ը,—
Հյուսիսը՝ ճաղատած լուսով
Թոթափեց դեմքից հին մգեփերը։—

ԻԴ

Եվ այժմ ահա նա կրկին
Դառնում է դեպի հին իր տունը,

Որ հզոր շառաչով երգի
Աշխարհում՝ իր նո՛ր խնդությունը։—
Ո՛չ տխուր է նա հիմա, ո՛չ խեղճ,
Ո՛չ անհուն աշխարհում կորած.
Նա բերել է հուր մի անշեջ
Եվ անահ գոյության երազ։

ԻԵ

Նա երգում է այսօր հողմաձայն
Նվագներ մեր երկրի համար նոր,
Երգերում մեր շաչում է հրցայտ,
Շեփորում է պողպատե ձայնով,—
Աշունքվա երգով ոսկեբառ
Վերհիշում է մերթ իր մորմոքը,
Մեր գրած գրքերում արդար
Երազում անմահ իր ցնորքը...

ԻԶ

Օ՜, դու չե՛ս այսօր մեր ցնորքը,
Նո՛րք, անո՜ւ մահացող ավան.—
Ելնում է մի նո՛ր Երևան
Եվ նայում է մեր նո՛ր ոգու խորքը.
Օ՜, ուրի՛շ, դա ուրի՛շ մի նորք է՝
Բարձրացած ճիգերով մեր այն—
Մեր ոգուց՝ թեկուզ նախիրյան,
Բայց ուրի՛շ խոհերով բորբոք։—

ԻԷ

Մեզ համար անհուն ու բուրյան է
Օ՜, Նո՛րք, քո ցնորք-բարդին,—
Հարազատ է հնում մեզ Տերյանը,
Ինչպես բույրը քո հին սաղարթի.
Բայց սաղարթը այդ արդեն ծե՛ր է,
Արդեն հուշ է— մշուշ ոսկեման,—
Եվ ամենը, որ մի օր անցել է—
Մեզ համար լոկ ե՛րգ է հիմա...

ԻԸ

Մենք կոչված ենք այսօր, որ համայն
Աշխարհի սրտում ոսկեհուն
Անվհատ շեփորենք հիմա
Խնդությունը մեր— քո՛ խոսքերով—
Մենք կոչված ենք հիմա, որ քարիդ
Եվ ջրիդ ինքնությամբ լցված—
Ավետենք համա՛յն աշխարհին
Այս առավոտը բացված։—

ԻԹ

Եվ կառչի թող հիմա մեր երգը
Մեր բարդու բարձրաբերձ ընին,
Որ ելնող աշխարհի համերգում
Ինքնահուն նվագներ ծնի,—
Որ հավե՛տ ապրի աշխարհում
Օ՜, Նո՛րք, քո ցնորքը բուրյան,—
Այս թռի՛չքը մեր լայնահուն
Եվ բարբա՛ռը այս նաիրյան...

ՏԱՂԵՐ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՏԱՂ ՍԻՐՈ
ԶՈՆՎԱԾ ԱՊԱԴԱՅԻ ՊԱՐՄԱՆԻՆԵՐԻՆ

Ա

Յուրաքանչյուր անգամ, երբ գարունը բացվում է
Եվ նոր կյանք է մտնում նոր մի սերունդ—
Արեգակը թվում է ծնծղա և երկիրը բուրում է
Անկրկնելի բույրով բոլոր պարմանի սրտերում։—

Յուրաքանչյուր անգամ և ամենա՛յն ուրույնությամբ,
Յուրաքանչյուր անգամ տարբեր ու առանձին,
Յուրաքանչյուր անգամ անհո՛ւն մի թարմությամբ,
Եվ յուրաքանչյուր անգամ— անծի՛ր...

Ո՛վ դու, որ առաջին անգամ իբրև քե՛զ ընծայած
Եվ միայն քե՛զ համար սահմանած մի բարիք—
Ընդունելու ես կույսի խոստումնալից հայացքը
Քո օրերի դժնյա ճանապարհին,—

Որ իբր տոթ ողկույզ՝ ճմլելու ես շրթերը
Եվ գգվանքները դեռ դաշն քո ընկերուհու—
Ահավասի՛կ երգում եմ ես մեղսական քո սերը,
Իբրև հավերժական խորհուրդ...

32—Ե. Չարենց. Երկեր

Ռ

Մեզ բոլորիս համար սահմանված է վերուստ
Մի քնքշաբույր գարուն անվերադարձ,
Երբ յուրաքանչյուր վայրկյանը և՛ գյուտ է, և՛ կորուստ,
Ե՛վ դաշտ է արևանիստ, և՛ խավարով հղի մի ոնտառ։—

Եվ դո՛ւ, որ մտնելու ես արևային քո դաշտը՝
Քաղելու վարդեր ու մանուշակներ—
Փա՛ռք քեզ, եթե լինես քո օրերի հետ դաշն
Եվ օրերիդ հանդեպ երկաթյա քղանցք չհագնես...

Եթե երիտասարդ լինես ո՛չ միայն սրտով քո,
Ո՛չ միայն մարմնով և ոգու անգիտությամբ,
Այլև յուրաքանչյուր քայլափոխիդ քո հետքով
Ժամանա՛կը քայլե և ողջունե քո երթը՝ խնդությամբ։—

Որովհետև որքան էլ գարունը դ հուրհուրա
Եվ դափնիներ ցանե ճանապարհիդ անցած—
Պարտավոր ես, ո՛վ երիտասարդ, դու ինքդ նրան
Ոսկեզօծել սիրով անագորույն և ընթացքով պայծառ...

Դ

Ուրեմն քայլի՛ր թեթևաքայլ քո դաշտով գարնանային
Եվ թո՛ղ գարունը քնքշե քո հետքերով,
Եվ անվախ դու, ո՛վ երիտասարդ, ապագային նայիր՝
Վայելելով պտուղը ոռշնական քո առաջին սիրու։

Եվ վայելելով պտուղը ոռշնական քո առաջին սիրո՝
Կարո՞ղ ես չզգալ դու, որ հետզհետե
Հանձնվում է քեզ կյանքը— և դու
Պարտավոր ես քո հաղթ ուսերից այն գետին չնետել։—

Որովհետև կամո՛ւրջ է քո սերը, և ո՛չ երբեք եզերք,
Եվ վարդերը սիրույդ մարգագետնի խոստումներ են ունայն—

Եթե սերը հողե ընկերուհուդ չդառնա ցոլքը սեգ
Այն վիթխարի ու վսեմ ադամանդի, որ տալիս է մեզ կյանք...

ՏԱՂ ԵԿՎՈՐՆԵՐԻՆ ՈՂՋՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ողջո՛ւյն ձեզ, ողջո՛ւյն ձեզ, ո՛վ անծանոթներ,
Որ գալիս եք անվերջ ու անվերջ մտնելու այս հին դարպասներից,
Գալիս եք միշտ ու հավիտյան և բերում եք ձեզ հետ
Պարզներ անհուն ու անհատնում և, ո՛վ գիտե, թե ի՛նչ բերքեր
անտեսնելի...

Յուրաքանչյուր վայրկյան մտնում եք մեր տունը,
Մեր հինավուրց պարտեզը, դր դեռ բազմաթիվ
Անբեր ճյուղեր ունի, և դրդ խնդությունը
Չի իջնում, իբրև ցող, կամ երկնային բարիք, բոլորի ճակատին։—

Այս հինավուրց պարտեզը դեռ խառն է ու խռիվ
Եվ անգամ ծառը գիտության
Պահանջում է ջանք ու խոնջենք, որ ճյուղերը ծռի
Եվ մատուցե պտուղներ վայելքի և դպակի իմպպատության։—

Եվ խոնջենքից անքուն, և տքնությունից բացի
Արյամբ ու դժնությամբ է, որ յուրաքանչյուր ճյուղը
Հառնում է խալարից և նայում լուսաբացին՝
Ընծայելով կաթիլ առ կաթիլ իր դառնագին հաճույքը։—

Եվ որքա՜ն դեռ, որքա՜ն դեռ ջանքեր են հարկավոր,
Եվ որքա՜ն տքնություն ու անկարելի խոյանք,
Որ պարտեզի յուրաքանչյուր բուռ հողը դառնա պարգևավոր
Եվ երջանիկ դառնա մեր կյանքը...

Քայլերով երկաթյա և անդրդվելի եկե՛ք ուրեմն, ո՛վ դուք,
Նե՛րս խուժեք գնդերով խուռներամ այս հին դարպասներից,
Եվ թող ձեր երթը հսկի ապագայի Ղովտը,
Որ երբե՛ք դուք ետ չնայեք՝ ձեր լեռան կիսին հասնելիս...

Որ անխախտ ու հաստատ ընթանաք այս ուղին անծայրածիր,

Այս ճանապարհը՝ ձեզ ի վերուստ սահմանած,—
Որ այնքա՜ն հոգնությամբ ճաշակած ձեր հանապազօրյա հացը
Ունայնության սաղմով չդառնանա...

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՂ ԵԿՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դուք գալիս եք աստղերի նման և ցորյանների նման.
Ալիքների նման անեզր օվկիանի,
Գալիս եք ճաշակելու ունայնություն ու մահ,
Ե՛վ տրտմություն, և՛ վիշտ, և՛ ոգու դառնություն
անհրաժանիկ։—

Բայց գալիս եք դուք ընձեռելու այստեղ,
Իբրև բախտ անմահական և բեղմնավոր բարիք—
Ա՛յն, որ չունի ցորյանը, և չունեն աստղերը—
Ստեղծելու հմա՛յքը հոյակապ ի վերուստ մեզ
տրված այս ճանապարհի...

Թեև գալիս եք դուք ալիքների նման և աստղերի՝
Ձեր ճանապարհի՛ն, ձեր կոչումի՛ն, ձեր ընթացքի՛ն
անգետ—
Բայց լինելու է ձեր երթը այս դժնի ու լուրթ ափերին
Արևներից, աստղերի՛ց ավելի ուրույն ու
բարձրականթեղ...

ՏԱՂ ԶՈՆՎԱԾ ԽԻԶԱԽ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻՆ

Ահավասիկ հագած ուղևորի զգեստ,
Եվ ձեռքիդ ցուպ առած, և ուսիդ մախաղ—
Դու գնում ես դեպի հեռուները վսեմ,
Եվ կորովի է ոգիդ, և դեմքդ հանգիստ է, և հայացքդ՝ կապույտ
ու խաղաղ։—

Թե ի՞նչ մաքառումի, կամ ի՞նչ չտեսնըված
Հեքիաթային ու բարձր մեծագործության

Ճանապարհ ես ընտրել,— մեզ կպատմես միայն
Վերադարձիդ, եթե վերադառնաս և ոտքդ չդիպչի փորձության։—

Եթե վերադառնաս— հայացքներում քո լուրթ
Դու կբերես անհո՛ւն հորիզոններ,
Անհայտ հեռուների օվկիաններ կապույտ,
Եվ գետերի ընթացք, և լեռների շղթա, և հողմերի պտույտ՝
բեղմնավոր ու զորեղ...

Քո ոտքերի վրա դու կբերես հետքեր
Ո՞վ գիտե, ինչպիսի՞ արահետների,
Ուր չի կոխել երբեք ուղևորի ոտքը,
Ուր թերևս դու տեսել ես արևը՝ գիշերի մեջ՝ շռայլ ու
անհատնելի...

Եվ քո լեզվի վրա, ճաշակելիքի,
Դու կբերես, ո՞վ գիտե, ինչպիսի՞ քաղցրություններ...
Ի՞նչ հյութերով արդյոք դու կլինես լիքը,
Եվ որպիսի՞ թույներ կընդունես...

Քո ոտնգներում անմահ բույրե՞ր դու կբերես,
Որ թերևս և ո՞չ մի մահկանացու
Դեռ չի շնչել կյանքում, որ թերևս
Կենսատու են, կամ, գուցե, մահացու։—

Եվ քո ուղևորի արթուն ականջներում
Դու կբերես ձայնե՞ր գերերկրային,
Անապատի ձայներ ու անտառների, ձայներ, որ թաքնըվում են
ու կանչում են հեռուն,
Ե՛վ սողունի ձայներ, և՛ կրիայի...

Այս երգս քե՛զ եմ ձոնում, ո՞վ ճանապարհորդ,
Ո՞վ անհայտ հորիզոնների զննիչ,—
Ընթացի՛ր, գնա՛ քո ուղին, և լինի թող այն քարքարոտ,
Անվհատ թո՛ղ լինի ոգիդ և կարոտդ թո՛ղ լինի անհնչ։—

Հաղար քարավանի բեռներից ավելի

Հարուստ կլինի ոգիդ վերադառնալիս,
Իբրև բարիք՝ կբերես քաղձանք անբալիելի,
Կպարգևես նրանց, որ ցանկացան քեզ մահ և կորուստ
դառնագին...

Իսկ եթե ընկնես ճանապարհիդ և չվերադառնաս,—
Օ՜, մեռնելուց առաջ, վերջի՜ն ժամին,
Քո ոունգների՜ց, քո սրտի՜ց, քո հեարների՜ց հառնած՝
Քեզ կողջունեն օրերդ— և՛ անցյալդ, և՛ ներկադ, և՛ գալիքդ՝
միանգամից...

Եվ կոպերիդ ներքո շռայլությամբ վերջին
Արևը իր բույրը կվառե,
Իսկ ժամանակը, որպես հավերժական երդիչ—
Կշշնչա անմահական բառեր...

ՏԱՂ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եթե հիվանդ ես դու և տկար է ոգիդ,
Եթե հոգնությունն է երգում քո երակներում—
Այս երգս քեզ չի՜ ամոքի,
Քանզի ապրողների՜ն է միայն երգը բարիք բերում։—

Բայց դու կարող ես լինել անեզրությա՜մբ տկար,
Եվ տխրությունը, որ բարիք է բարձրագույն և ծնվում է ոգու
կարոտից—
Կարող է ծանր լինել քո ուսերի համար
Եվ դժնի ճենդ դառնալ, իբրև մշուշ իջնել, և աչքերդ զրկել
փարոսից...

Եթե տխրությամբ ես տկար և ոգու անեզրությամբ,
Եթե հիվանդ ես դու երգի կարոտով—
Ես քեզ ապաքինում և օգնություն կտամ,
Եվ դու ոտքի՜ կելնես, և կողջունես այս երգս քո վիշտը
վարատող։—

Ապա կընկնես ինձ հետ ուղի աղետավոր,

Եվ քեզ հետ միասին, օ՜վ կարոտի եղբա՜յր,
Մենք կընթանանք անխոնջ դեպի կարոտ մի նոր,
Եվ դժնությունը մեր մեզ կթվա չեզյալ...

Բեղմնավո՜ր է այսօր մեր մարդագետինը,
Մեր հրկիզված արոտը որքա՜ն արգասավոր,—
Ո՞ւմ համար է այսօր, որ հորիզոնը մթին է,
Ո՞ւմ համար է աբեգակը դժնի, ո՞ւմ աստղն է այսօր գիսավոր...

Նրանք շրջում են այսօր հիվանդ ու անբուժելի,
Եվ մաքառումը նրանց ընդդեմ մահվան—
Մաքառում է արդե՜ն մահացող, ի վերուստ նիշված ուժերի.
Օ՜, մահու պարտված հիվանդնե՜ր, մեր օրերի գրքում ձեզ
հայտնի միայն մա՜հ է գրված...

Դուք դժվար եք մեռնում. և ձեզ համար այն ո՜վ է,
Ո՞ր գուսանը թշվառ ու մահատիպ,
Որ ունայն նվագների ավյունով
Պիտի կյանք սրսկե ձեր ցամաք երակները, և ձեր մեռյալ
սրտերը—հուսա հատիկ...

Դուք դժվար եք մեռնում. մաքառումով, պոռով,
Եվ օրերի այս բուռն օվկիանում,
Եթե հնար լիներ— սուզվողների նման չէի՞ք արդյոք
Մեր ոտքերից կախվի, որ մեզ էլ՝ ձեզ հետ միասին՝ քաշեիք
անդունդը...

Բայց ձեզ համար ունենք մենք ձեռքերում մեր պերկ
Օ՜, դանակ պողպատյա, և ո՜չ երգի հարված,—
Օ՜, անսացե՜ք ուրեմն այս կարոտի երգին,
Ոգինե՜ր ըմբոստ ու կարող, վաղվա հրով վառված...

Ձե՜զ եմ ձոնում այս երգս, օ՜վ դուք, որ այսօրվա
Մեր խնդության, մեր երգի, մեր փառքի աբշալույսին.
Գալիք այգաբացի կարոտի տակ կոթված՝
Ընթանում եք երգիս հետ միասին,—

Եվ թեկուզ լինում եք դուք երբեմն ծանրաբեռնված
Կարոտով, որ նման է հիվանդության,—
Այս տողերով, վսեմ այս դեղով կազդուրված՝
Դիմեցե՛ք դեպի անհայտ հեռուները— և հեռուները ձեզ
անմահություն՝ կտան...

ՏԱՂ՝ ԶՈՆՎԱԾ ԳՐՔԵՐԻՆ

Օ՜, գրքերի աշխարհը— տիեզերք է անեզր։—

Արևների նման բազմապիսի,
Ե՛վ աստղերի նման, և՛ շողերի—
Ես սիրում եմ գրքերը, որ աշխարհի մասին
Բարբառում են անձուկ ու մտերիմ։
Տարփանքով, ինչպես պատանին,
Որ սիրում է իր լույս ընկերուհուն փարվել—
Ես սիրում եմ գրքերը թե՛ նոր, թե՛ հին,
Թե՛ արվեստով գրված, թե՛ անարվեստ։
Բայց և կամքով անշեղ, ինչպես ղեկավարը,
Ինչպես ա՛յրն է հասուն ձգտում սիրած գործին,—
Ես սիրում եմ գրքերի աշխարհը,
Իմ խոհերի վսեմ այրուձին։—

Նրանք շա՜տ են ու բազմապիսի, տարբեր ու գունագեղ,
Մնված զանազան դարերում ու երկրներում,
Յուրաքանչյուրը բերում է մի առանձի՛ն պարգև,
Յուրաքանչյո՛ւրն իր մեջ մի աշխարհ է կրում։—
Մեր կյանքի երկար ճանապարհին
Հանդիպում են նրանք հետզհետե,
Եվ դառնում են ընկեր ու մտերիմ,
Կամ մնում են անցած տարիների ետևը։
Ուղեկից են դառնում մինչև ի մահ
Մի քանիսը միայն՝ անդավաճան հավետ,—
Եվ այնպիսի՛ գրքեր կան, որ չարքերի նման
Հալածում են մեզ մինչև վե՛րջ։
Գրքեր կան, որ կյանքում մի ակընթա՛րթ միայն

Մեզ ժպտալով՝ անցնում են ու կորչում,
Բայց նրանցից մնում է մեր սրտերում մի բան,
Որ տարինե՛ր ենք մենք անրջում։
Գրքեր կան, որ խոժոռ են ու խստադեմ,
Ինչպես ուսուցիչը, կամ առաջնորդը,—
Եվ այնպիսի՛ գրքեր ես գիտեմ,
Որ համբերի նման անհաղո՛րդ են։
Աղջիկների նման սեթևեթ
Կան կարկաչուն գրքեր, որ հանդիպում են մեզ,
Հրապուրում, գերում— և մոռացվում հավետ...

Օ՜, գրքերի աշխարհը— տիեզերք է անեզր։—

Նրանք շա՜տ են ու բազմապիսի,
Յուրաքանչյուրն իր մեջ մի աշխարհ է ուրույն,
Եվ պատմում են նրանք մեզ աշխարհի մասին
Խոսքերով անկրկնելի և անագորույն։—
Կան անզգեստ գրքեր, կան պճնազարդ
Ֆոլիանտներ, որոնք սնամեջ են, ինչպես
Ասորական արքա Բալթասարը,
Որ պճնում էր իրեն պչրուհու պե՛ս։
Եվ անարվեստ գրքեր կան, որ բնության նման
Խառնիխուռն են թվում, խառնիճաղանջ,
Բայց գերում են, կապում մինչև ի մահ,
Եթե անխոնջ ոգով ու տքնությամբ ջանաս
Խորասուզվել, բանալ գաղտնիքները նոցա,
Նոցա ներքին դաշնությունն հասկանալ,—
Այդ գրքերը խոհի ամրոցներ են գոցած,
Եվ կբացվեն քո դեմ, եթե լինես անահ։—
Գրքեր կան, որ դրսից նման են հոյաշեն
Դղյակների, սակայն ներս ես մտնում դու երբ—
Գաղջ՝ շնչում է դեմքիդ ամայության փոշին
Եվ սեղմում է կոկորդդ մի մեռյալ ձե՛ռք։
Անտառների նման գրքեր կան թանձր ու մութ,
Կան օվկիանի՜ նման անհուն գրքեր,
Կան զեփյուռի նման, նման քամո՜ւ,
Կան, որ գգվում են մեզ, ինչպես ձեռքեր։—

Ե՛վ սրինգի ձայնով, և՛ շեփորի,
Ե՛վ որոտի ձայնով կան գրքեր,
Եվ կան անձա՜յն գրքեր, որ լռին
Սրսկում են մեր սիրտը եղերական կրքեր...

Օ՜, գրքերի աշխարհը— տիեզերք է անեզր։—

Ես սիրում եմ նրանց բազմախորհուրդ
Այս ինքնությունը գաշն, անկրկնելի,
Նրանց միջև եղած տարբերությունն այս խոր,—
Եվ բոլո՜ր են նրանք ինձ սիրելի։
Արեգակի բոլո՜ր երանգների նման,
Տիեզերքի նման բազմալեզու—
Ես սիրում եմ նրանց երփներանգ
Այս հուրերը կիզուն
Եվ բնության բոլո՜ր ձայների,
Եվ մարդկային կյանքի բուրմունքների բոլոր
Այս ճառագո՜ւմն եմ ես սիրում վերին,
Այս բո՜ւյլը մշտահոլով։
Եվ այս ամենը՝ մեծ մի գաշնություն կազմած,
Կազմած ուրույն մի կյանք, մի ինքնամփոփ աշխարհ—
Մեր տների փայտյա դարակներում բազմած՝
Ասլրում են լո՜ւռ կյանքով և կենդանի են հար։
Ես սիրում եմ նրանց լաբիրինթոսն այս լուռ,
Երանգների՜, գույնի՜ շռայլությունն այս մեծ,
Ինձ սիրելի է միշտ բազմազեղումն այս խոր...

Օ՜, գրքերի աշխարհը— տիեզե՜րք է անեզր։—

ՏԱՂ՝ ԶՈՆՎԱԾ ՄԱՆՐԱՆԿԱՐԻԶՆԵՐԻՆ

Այս մատյանները հին, մագաղաթյա,
Այս հաստակող գրքերը՝ ձեռքով գրված,—
Որքա՜ն, որքա՜ն մեջքեր՝ ցավից կորված
Եվ որպիսի՜ կորով ու երկաթյա
Համբերություն ու կամք են նոցա ծնել...

Օ՜ հանճարեղ ճորտե՜ր, որ չեք քնել
Գիշերներով երկար, ու կապարե, ու կույր,
Ինչպես դարերը ձեր, ինչպես անզուր
Տքնությունը ձեր խեղճ ու սրբազան...
Օ՜, բարբարոս բերքի հազարամյա՜կ դաժան,
Անարշալույս խավար ու տքնություն,
Եվ անպտուղ մտքի խռովք անդավաճան,
Եվ կեղեքող ոգու հանճարեղ թե՜ւն...

Ահավասիկ նստած են կորաքամակ՝
Արծաթյա մորուքներով և աչքերով բորբոք,
Եվ գրում են ոգու ստրվության համար
Մագաղաթյա գրքեր... օ՜, անթափանց ցնորք,
Կույր դարերի ծնած, օ՜ զառանցանք հոպիտ—
Ոգու աղքատության ու տաժանքի գնով
Օ՜, անտենչանք վատնում ստեղծագործ մտքի...
Այսպես նստած դարեր՝ ոսկեղենիկ գրչով
Ճորտությո՜ւնն են իրենց ոսկեզօծել,—
Ինչպես նստեր այսօր մի հանճարեղ աղջիկ
Եվ գիշերվա խավարը ասեղնագործեր...
Անկարելի սիրով, տքնությունով անզուր,
Հաճախ անխոցելի ճարտարությամբ,
Մանրակրկիտ, ինչպես հանելուկ,
Հրաշալի, ինչպես հարության
Զարմանալի լեգենդը— զարդարել են էջերը
Գրերով թռչնազարդ ու ծաղկապատկեր,—
Եվ դարձել է մոայլ միջնադարյան գիշերը
Նրանց աչքին ցնորք մի լուսաճեր։
Եվ տանջանքով իրենց ստեղծագործ ոգու
Կատարելով հրաշքը այս սնամեջ—
Ճաշակել են նոքա բերկրությունը թաքուն,
Որ տալիս է խոնշինքը խոհերին մե՛ր։—
Եվ վերացած ոգու հիացմունքով անհո՛ւն այն,
Բավարարված այդ խոլ երջանկությամբ—
Թաքցրել են նոքա իրենց նվաստ անունը՝
Հավատալով հոգու անմահության...

Օ՜, միամիտ ճորտե՜ր, թեկուզ և հանճարեղ,—
Ահավասիկ ձեր հին ճարտարությամբ տարված՝
Մենք փորձում ենք ձեր հին անունները ճարել
Մատյաններում այս հին՝ ձեր ձեռքերով գրված։
Չե՜նք հավատում մենք ձեր հոգու անմահության,
Բայց գիտենք՝ գրքերն այս մագաղաթյա,
Որ գրել եք մի օր դուք խոնարհ տքնությամբ—
Դարձել են ձեզ համար— մահո՜ւ պատյան։—
Այս մատյանները հին, այս սնամեջ
Դամբարանները, որ ձեր հանճարեղ ձեռքով
Զարդարել եք մի օր դուք արվեստով անմեռ
Միջնադարյան մռայլ կամարների ներքո...

ՑԱՂ՝ ԶՈՆՎԱԾ ԲՆՈՒԹՅԱՆԸ

Օ՜, Բնությո՜ւն, օ՜, Մա՜յր,—

Մշտահոլով, մշտագո և մշտատև,—
Դո՜ւ, որ փոխվում ես հար,
Բայց մնում ես և կաս բազմաձև,—

Օ՜, Բնությո՜ւն, օ՜, Մա՜յր։—

Ահա՜ աստղերը քո և երկինքներդ ահա՜,
Ահա՜ ընթացքը քո մշտահոլով,—
Եվ արեգակդ ահա՜, և հորիզոնդ ահա՜,
Ե՜վ օվկիաններդ լուրթ, և՜ լեռներդ լազուր, և՜ գետերդ բոլոր։—

Օ՜, Բնությո՜ւն, օ՜, Մա՜յր։—

Եվ ուժերդ ահա՜ կենսապարար՝
Ինքնաբուխ, մշտնջենական և հարափոփոխ,—
Եվ ոգին իմ ահա՜, որ տիրաբար
Դեպի քե՜զ է ձգտում՝ ողողված լույսերիդ տարափով։—

Օ՜, Բնությո՜ւն, օ՜, Մա՜յր։—

Խուժի՜ր, տեղա՜ իմ մեջ, սուզվի՜ր իմ մեջ բոլոր
Քո աստղերով, ծովերով և երկինքներով,
Քո ընթացքով անկանգ ու մշտահոլով,
Քո ուժերով՝ թե՜ կյանք, թե՜ խնդություն բերող։—

Օ՜, Բնությո՜ւն, օ՜, Մա՜յր։—

Բայց չես սիրում դու մեզ, չես մերձենում դու, երբ
Մենք հայեցող ոգո՜վ ենք ձգտում հասնել
Քո ընթացքի՜ն, քո վազքի՜ն, քո վեհությանը պերճ,
Քո խորհուրդին՝ բազմաշխարհ և բազմաստեղծ։—

Օ՜, Բնությո՜ւն, օ՜, Մա՜յր։—

Դու դաժան ես ու բարի, դու հեզ ես և անողոք,
Դու սիրում ես շարժումը, զորությունը, ուժը,—
Ունայնությամբ ես լցնում ու հողով
Դու հայեցող սրտերը, որ խեղճ են և քնքուշ են։—

Օ՜, Բնությո՜ւն, օ՜, Մա՜յր։—

Եվ առաջին անգամ դու չե՞ս տվել արդյոք
Քո արևից, քո սրտից մի բեկոր—
Այն զարմանալի ճարտար և հանճարեղ մարդուն,
Որը ո՜չ թե սրտի մորմոքով,
Այլ ձեռքերով կոպիտ վերցրել է քարը
Եվ զարկել է մի ուրիշ քարի—
Եվ արևի դստերը իր խրճիթն է տարել,
Որ գիշերի գրկում ոսկեվորիկ պարի...

Օ՜, Բնությո՜ւն, օ՜, Մա՜յր։—

Եվ չե՞ս տվել արդյոք դու ծովերիդ անեզրությունը
Եվ բարիքները նրանց խորքերի,—
Այն ըմբոստին, այն խիզախ ճանապարհորդին,

Տիեզերքի զարկին անհաղորդ, և չեք ճաշակելու բույրեր, և չեք լսելու
ձայներ...

Դուք գնում եք մոխրանալու և դառնալու տարերք,
Խառնվելու հողին ու ջրին,—
Էլ ի՞նչ ասեմ ես ձեզ.— անիմաստ են բառերը,
Գուցե ա՛յն միայն, որ վախճանվելը վիճակված է, ավա՜ղ,
յուրաքանչյուրի՛ս...

Բայց եթե միևնույնն է վախճանը բոլորիս գերեզմանից անդին,
Եթե նո՛ւյնն է մեր բախտը հեռանալուց հետո,—
Ապա տարբեր է հուշը, հիշատակը, այն զրույցը անդին,
Որ մնում է սրտերում մարդկանց և լցնում է սրտերը կարոտով...

Բայց ի՞նչն է, ի՞նչն է արդյոք, որ մոխիրից հետո
Լուսաղարդ ու շքեղ վե՛ր է հառնում,
Լցնում է օրերն ապագա անմարելի բույրով
Եվ դառնում է երգ ու զրույց, և հիշատակ է դառնում...

Ա՜խ, մոխրանում են օրե՛րը, մոխրանում են աստղե՛րը, արևնե՛րն են
Կապույտ երկնքներում հանգչում հավերժաբար և մոխրանում,—
Մոխրանում է գարո՛ւնը, մոխրանում են կանաչ տերևնե՛րը,
Մոխրանում են ծիլե՛րը չծլած, և վարդե՛րը վառման, և ծաղիկնե՛րն
անգամ տխրանուն...

Բայց չի մոխրանում հիշատակը... Հիշատակը արդյոք լույսերի՞ց է,
Լույսերի՞ց է արդյոք նա սերում, թե հուրերից անշեջ.—
Հիշատակը սերում է գործերից.— հիշատակը մշուշ է,
Որ բարձրանում է եփվող ջրերից, բայց մնում է ինքը— անմեռ։

Հիշատակը ձեր անցած օրերի արձագանքն է ու ցոլքը, ո՜վ
հեռացողներ,
Նա ծլում է հաճախ ձեր անցած ճանապարհի փոշոտ եզրերին,
Ելնելով ձեր շոգ կեսօրին՝ նա իջնում է հետո, ինչպես ցողը,
Բայց ուրի՜շ վարդերի վրա, իբրև պարգև վերին...

Ելնելով ձեզանից, ձեր սրտից, ձեր խոհերից անդուլ,
Ելնելով արյունի՛ց անգամ ձեր և ձեր շնչից վերջին—

Հիշատակը ձեզ չի՛ պատկանում, ինչպես որ տողերն իմ հանդուգն
Օ՜, ինձ չեն պատկանում, թեև ելնում են ահա իմ գրչից...

Այդպես էլ շողն է արևի ու ցոլքը մեռած աստղերի.—
Հասնում է լույսը նրանց մեզ, բայց վաղո՜ւց մոխրացած են նրանք։—
Մոռացությո՛ւն ուրեմն բոլո՛ր մեռյալներին,
Եվ փա՜ռք նրանց ընդմիշտ ու հավիտյան, որ թողել են կյանքում
հիշատակի կրակ...

ՅՈԹԸ ԽՈՐՀՈՒՐԴ ՔԱՂԱՔ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻՆ

Ո՜վ դուք, որ գալու եք վաղը կառուցելու այստեղ,
Այս անապատում ամայի բազմաժխոր քաղաք.—
Ահավասի՛կ գրում է ձեզ համար մի անհայտ
բանաստեղծ

Յոթը խորհուրդ, որ շինեք ձեր կառուցման շաղախ։
Առաջինը.— ո՛ւր էլ որ կամենաք, թեկուզ
անապատում,

Շինել ձեր նոր քաղաքը— չմոռանա՛ք երբեք,
Որ այդտեղ, այդ անապատո՛ւմ անգամ, ավազներում
նրա անհատնում

Երբեմն կանգնել են ու խորտակվել բազմաթիվ
քաղաքներ ու բերդեր։

Քանզի,— և չմոռանա՛ք դուք այս, ո՛վ ապագայի
որմնադիրնե՛ր,—

Աշխարհի մեկ ծայրից մինչև մյուսը, արևագակի
ներքո՝

Չկա և ո՛չ մի թիզ հող, որ բազմիցս անգամ մեր
նախնիները

Չլինեն հերկած ու կործանած իրենց ստեղծարար
ձեռքով։

Ուրեմն, ո՜վ առաջնորդնե՛ր, սկսեցե՛ք փորել
Ձեր ցանկացած վայրում երեք թիզ հող—
Մինչև հանդիպի ձեր քլունգը մի դագաղի բարձ

Եվ դուք հանեք այն խավարից՝ ձեր ձեռքերով
կերտուլ։
Բայց հողի խորշերից այն հանելուց առաջ
Բարձրացրե՛ք նախ դուք քարե կափարիչը
Եվ տընեցեք գտնել, թե հանգչելուց առաջ
Ի՞նչ ուղղությամբ են նրա կոպերն իջել։

Եվ ապա այդ նո՛ւյն ուղղությամբ չափեք հարյուր
կանգուն
Եվ հիմնեցե՛ք այդտեղ քաղաքի աշտարակը,
Եվ գամեցե՛ք ապա աշտարակի գլխին
Ձեր ժամացույցը կարմիր,
Որ նրա զարկերին ունկնդիր՝
Սերունդները նշեն գալիքում
Իրենց աշխատանքի և խոնջինքի ժամը։—

Եվ բարձրացե՛ք ապա այդ աշտարակի կատարը
Եվ նայեցե՛ք դուք նախ դեպի հարավ,
Ապա դեպի հյուսիս, և՛ արևմուտք, և՛ արևելք,
Որ որոշեք սահմանը քաղաքի ու նրա
Պարիսպների խոյանքը դեպի վերև։

Եվ յոթերորդ խորհուրդը, որ տալիս եմ ես ձեզ.—
Կառուցելուց առաջ ձեր քաղաքը՝
Այրեցե՛ք մագաղաթյա մարմինը ննջեցյալի
Եվ մոխիրը նրա հաղարամյա
Խառնեցե՛ք ձեր ապագա պարիսպների քարին։—
Եվ դագաղը նրա մարմարիոնյա,
Որպեսզի տարածվի համբավն ամենուրեք—
Ապագայի բոլո՛ր եկվորներին ի տես՝
Քաղաքի ոսկեքանդակ դռների մոտ դրեք։—

Քանզի մեռյալների մոխի՛րն է ամենապինդ կիրը,
Ամենապինդ շաղախը և առհավատչյան,—
Եվ նրանո՛վ է դառնում երկիրը— երկիր,
Եվ ժողովուրդը— ժողովուրդ, և գալիքը— գալիք՝
անհողդողդ ու անհառ...

ՈՒՂԵՐՁ ՄԵՐ ՀԱՆՃԱՐԵՂ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ

Սիրելի Միքայել Մազմանյանին

Ա

Մեր վարպետները հնուց տուֆ են սիրել ու մարմար,
Շունչ ներշնչող են եղել կարծր քարին ու հողին.—
Մեր վարպետները հնուց երգ են սիրել ու պայքար,
Մահ են բերել անքանքար, բութ ու տխմար տիրողին.—
Ես խոնարհում եմ գլուխս հանճարի առջև ձեր անճառ,
Ո՞վ վարպետներ, որ տվիք— ձև, կերպարանք մեր հողին։—

Բ

Քաղաքներ էիք կառուցում, կամուրջներ, բերդեր ու տներ,
Հոյակապ շենքեր, որ դրին հանճարեղ կնիքն իրենց վառ
Ողջ ճարտար արվեստի վրա՝ Մասիսից մինչև Միջագետք,
Մեր երկրից մինչև Արևմուտք՝ սնելով գոթականն անմար...
Ձեր ձիրքով թողիք աշխարհում դուք անանց և անջինջ մի հետք,
Եվ մնացիք հավիտյան քերթության վարպետներ անմահ...

Գ

Աշխարհի ծայրերում բոլոր մենք գտնում ենք հիմա բեկորներ,
Որ տաշած կողերի վրա աստղաձև խաղեր են կրում.—
Այդ՝ կորած անուններն են ձեր, ո՞վ անանուն վարպետներ,
Որ կերտել եք լուռ ու անցել— և ձեր շունչը թողել դարերում.
Չի հաջողվում մեզ թեկուզ ձեր անունները գտնել,
Բայց գիտենք, որ ապրել եք դուք— գետնաքարշ, խարխուլ խուղերում։

Դ

Ունեիք դուք չափ ու կշիռ, ունեիք ձիրք անհեղլի,
Որ նյութին տալիս էր վսեմ կերպարանք ու ձև խորըզգա.
Թո՞ղ ձեզանից ուսանեմ ես այսօր գաղտնիքը գեղի,
Որ արվեստս լինի դաշնավոր, ինչպես ձեր հմտությունն հսկա.
Ո՞ւժ ներշնչեք իմ երգին, որ ընթացքը իր չշեղի,
Որ ժառանգորդը դառնամ հանճարեղ արվեստի ձեր ոսկյա։

Ե

Ուզում եմ աշակերտ լինել ձեզ և տիրել արվեստին ձեր անհուն,
Որ տողերս լինեն մեջտեղից ձեր ոսկյա օրենքով հատած,
Որ հանգերըս լինեն հարդարած ձեր արդար, անխաբ թեզանով,
Եվ ձեր նուրբ քարերի նման՝ բառերս լինեն սրբատաշ.
Թող ձեր հին շենքերի նման գործերս մնան անանուն,
Բայց լինեն դարի արևով և երկրի եղյամով պատած...

Զ

Մի՞թե իմ մեջ է այսօր արթնացել հանճարը ձեր սեգ.
Ե՞ս եմ շառավիղն արդյոք ձեր, ո՞վ հանճարներ մեր մեռած.
Թո՛ղ հուրհուրա իմ գրքում ձեր ոգու ցոլքը լուսե,
Թո՛ղ երգերում իմ այսօր, խոսքերում իմ— ձեր ջանքը եռա՛։—
Ո՞վ մեր մեռած վարպետներ, իմ թախանձանքը լսե՛ք.—
Ձեր անմահ կնիքը դրե՛ք— իմ անմար երգերի վրա...

ՑՈԹԸ ԽՈՐՀՈՒՐԴ ԳԱԼԻՔԻ ՍԵՐՄՆԱՑԱՆՆԵՐԻՆ

Ո՞վ գալիքի սերմնացանն՝ր, որ լիաբուռ
Նետելու եք ձեր սերմը մեր ձեռքերով հերկած
Այս դաշտերում, բերրի այս հերկերում՝
Մեր քրտինքով, երգով ու արյունով ներկած,—
Ո՞վ, որ գալու եք զվարթ ու թեթևաքայլ,
Արևի և ոգու ծնծղաներով ձեր լուրթ,—
Ահավասիկ գրում եմ, որպես հեռու եղբայր,
Ձեր ընթացքի համար յոթը խորհուրդ։—

Եվ առաջին խորհուրդս, որ հղում եմ կարմիր
Մեր օրերից այս բորբ ու գալիքնաբեր.—
Անդրանիկ բուռը ձեր անեզրական սերմի
Մեր դաշտերի վրա իբրև ցո՛ռ թափեք։

Փռե՛ք իբրև բարիք, որ անհատնում է,
Մեր երկրի թռչուններին ու հովերին,—
Թող անսահման լինի նրանց խնդությունը,
Անսահման էր ինչպես տառապանքը մեր հին։

Դեպի Հյուսի՛ս հղեք ձեր շնորհը երկրորդ,
Դեպի տափաստաններն ընդարձակ,
Ուր բորբկած Կարմիր Ուրագանը մի օր
Այս հերձեցյալ երկրում և ամենուր
Գարնան անձրև՝ դարձավ։—

Իսկ երրորդ բուռը ձեր անհատնելի սերմի
Դեպի լյառը Մասիս սերմանեցե՛ք,—
Թող թանձրացյալ թռչի, իբրև ցնորք շերմին,
Դեպի կուրծքը նրա ձյունածեծ։—

Ապա մի բուռ ցորյան կամ ցնորք,
Ձեր խոհերի նման լուսափայլ ու ազնիվ—
Սերմանեցե՛ք դեպի այս հին ավանը նորք,
Որ այնտեղ նո՛ր երգի մի նո՛ր բողբոջ հասնի։

Հինգերորդ բուռը ձեր անհատնելի գանձի
Սերմանեցեք ոգո՛ւն մեր ի նվեր,
Որ օրերում հեռու երկնեց այս երգն անծիր,
Այս երազանքը վեհ։

Իսկ վեցերորդ ձեր բուռը, ո՛վ սերմնացանն՝ր,
Հղեցե՛ք անցյալի՛ ոսկորներին,—
Եվ կլսեք հանկարծ հառաչանքի ձայներ
Մեր երկրի բոլո՛ր խորքերից։—

Եվ նո՛ր ապա, այս վեց հղումներից հետո,
Լցրե՛ք դուք բուռը ձեր և, յոթերորդ անգամ—
Ձեր ապագա հունձքի անե՛զրը կարոտով
Սերմանեցե՛ք ձեր հերկը անեզրական...

ՑՈԹԸ ԽՈՐՀՈՒՐԴ ԳԱԼԻՔԻ ԵՐԳԱՍԱՆՆԵՐԻՆ

Բաղում ուղիներով ու հերկերով անցած,
Եվ ճաշակած արդեն իմաստության
Դառնապատիր պտուղը,— ահա տալիս եմ այս
Խորհուրդները ես ձեզ, ո՞վ մեր վաղվա անհաս
Երգասաններ փառքի ու վեհության։—

Ահավասիկ, ո՞վ դուք, իմ առաջին
Խորհուրդը, որ գալիս է կյանքից ու դարերից.—
Զմոռանա՞ք երբեք, երբ հյուսելու լինեք ձեր երգը շառաչուն,
Որ երգը երկրի՞ց է աճում, և ո՞չ թե ձայներից կամ բառերից։

Երկրորդ խորհուրդը, որ տալիս եմ ձեզ ահա,
Օ՜, անհողդո՞ղդ պահեք իբրև պատգամ.—
Երգը— ընթացք է ու հուն, և՛ տեգ է, և՛ ոգու ագամանդյա վահան,
Ե՛վ բարիք է, և՛ շնորհ անանձնապատկան։—

Երրո՞րդ խորհուրդը ձեզ, ո՞վ գալիքի
Երգասաններ.— դարե՛րն են ձեզ հետևում.—
Թեկուզ դարն է ծնում և երկիրն է տալիս երգին շունչ ու ոգի—
Բայց երգը երկրից ու դարից մի՛շտ երկար է տևում։

Ուրեմն, ո՞վ գալիքի երգասանն՝ե՛ր,
Որքան էլ վեհ լինի ձեր ներկան—
Զմոռանա՞ք, որ դուք պիտի սերմեր ցանեք,
Որ լինեն դարից ձեր— երկար։

Եվ իմացե՛ք ուրեմն, որ ո՞չ մի աշխատանք
Տքնաջան չէ այնքան, որքան ոգու հերկը.—
Ի սկզբանն էր բանը, և բանն էր ճիգ ու ջանք,
Եվ ջանքին առընթեր էր— երգը։

Ուրեմն, ո՞վ գալիքի երգասաննե՛ր,
Ձեր ոգու տեգերով զրահավորված՝
Տքնեցե՛ք տքնաջան ու հնչյուններ ցանեք՝
Հերկելով հերկերն անցյալի՝ հանուն գալիք օրվա։—

Եվ ասում եմ ահա— ձի՛զ, որ պիտի երգեք՝
Կարդալով մատյանն այս խորախորհուրդ.—
Խորհուրդ չի ընդունում ապագայի երգը,—
Եվ ա՛յս է իմ խորհուրդը յոթերորդ...

ԱՐՎԵՍՏ ՔԵՐԹՈՒԹՅԱՆ

NOSTALGIA

I

Երազում եմ ես լուսավոր մի գետ,
Մարմարյա տներ ափերին նրա,—
Շրջում են շուրջը չքնաղ աղջիկներ,
Իմ կյանքի մասին պատմելով իրար...
Դարեր են անցել արդեն, ինչպես գետ,
Եվ երգերս պարզ՝ այդ դարերի հետ
Հասել են մինչև ափերն այդ վսեմ,
Գալիք աշխարհի ափերը լուսե։—
Իմ երազներում հաճա՞խ եմ տեսել
Ես գետն այդ վսեմ և երթը լուսե,—
Եվ միշտ, երազում, թե խոհերում պարզ—
Թվացել է այդ— ցնորք ու երազ...

II

Իմ ոսկի՞, ոսկի՞ իմ Իրան...
«Զարենց-Նամե»

Այն ափերում, ուր դու,— օ, տարիներ առաջ,—
Թափառելով՝ սիրո երգեր էիր երգում
Եվ գուրգուրում, իբրև սերունդների երազ
Ա՛յն, որ թաղված մնաց քո գրքերում,—
Այն ափերում հիմա մի բարբարոս հովիվ,
Երազելով քեզ պես կնոջ գգվանք ու սեր—
Ունկնդրում է միայն շշուկներին հովի,
Եվ, երգերի տեղ քո, երգում անբառ մի շեր...

*
* *

Թումանյանի երգերը
Կարդալիս՝ միշտ ես
Միտք եմ անում, թե արդյոք
Կարո՞ղ եմ ես էլ
Լինել այդքա՜ն իմաստուն
Երբ լինեմ ծեր...

Կարողանա՞մ պիտի ես
Արդյոք, ինչպես նա,
Այդքան հանգիստ ընդունել
Թե՛ անկում, թե՛ մահ.—
Շա՜ղ տալ ձեռքով լիառատ
Երգեր ու գանձեր,
Իմաստությամբ անարատ,
Երբ լինեմ ծեր...

* * *

Գիշերային պահերն այս քո,
երբ լապտերի նման վառ
Հուրհուրում է քո մեջ ոգին
ստեղծագործ ու պայծառ—
Ջարժե՞ն արդյոք տառապանքին
ու տրտունջին այս անվերջ
Եվ մարդկային հերյուրանքին՝
անմարելի ու անծայր...

*
* *

Եթե փակվեն հավիտյան աչքերդ այսօր—
Ձե՛ս տրտնջա դու մահից, որ տանում է քեզ.
Գիտես, որ խեղճ է հավետ, անօգ ու անզոր
Մահը քո դեմ, քո ոգու՝ անխորտակ ու մեծ։—

Չի՝ ինչ տվել է կյանքում բնությունը քո
Աննինջ ոգուն— դու նրան արվեստով վսեմ,
Վեհ քերթությամբ զարդարուն— ե՛տ ես տվել կրկին,
Իբրև ցնորք, իբրև երգ՝ անմահ ու լուսեղ...

*
* *

Ինչ ունեցել է ժողովուրդը քո
Հնում, անցյալում— լուսավոր ու վեհ,
Ինչ ունի այսօր, ինչ ցնորք ու խոհ—
Ո՛ղջը հավաքել և քե՛զ է տվել։—

Տվել է, որ դու այդ ամենը այս
Օրերին խառնած, խոր հավատքով լի՝
Պարզես գալիքի ցնորքին անհաս—
Եվ ընդմի՛շտ մնաս մեծ ու սիրելի։—

*
* *

Դու գիտես, որ քո մատյանն այս վերջին
Ո՛չ թե օրերի համար ես գրել,
Այլ տարիների՛ հեռակա ու չինջ,
Եվ գուցե, անգամ, դարերի՛ նորեկ։—

Քանզի քո դարում ի՛նչ որ կար զգաստ,
Ե՛վ հուզումնավոր, և՛ խորունկ, և՛ վեհ,—
Դրել ես անմեռ մատյանում քո այս—
Եվ ա՛յս է քեզ թափ ու թռիչք տվել։—

ՄՈՆՈՒՄԵՆՏ

Ես մոնումենտ կանգնեցի ինձ համար դժվար մի դարում,
Երբ կործանվում էր իմ շուրջը այն ամենը, որ բազմաթիվ
Տարինե՛ր, դարե՛ր էր կանգնել— և անմա՛հ էր թվում աշխարհում։

Իմ մոնումենտն հյուսեցի երգերից ես խոր ու խրթին,
Խոհերից, որ բորբ են ու նոր, որ կյա՛նքն են կրում իրենց մեջ,—
Որ հորդելով բխեցին իմ դարի բորբոքուն սրտից։—

Ծնվեցի ես Կարսում, սակայն՝ իմ հոգում արևն Իրանի
Հա՛ր հուրհուրաց, իբրև հին, հայրենի կարոտ մի անմար,—
Բայց հայրենիքը ոգուս— բովանդակ աշխա՛րհը եղավ։—

ԳԻՐՔ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ

ՌՈՒԲԱՅԻՆԵՐ

Ա

Այսպես՝ այս ուշ ժամին եկավ և մոտեցավ քո ոգուն
Իմացության, կշռույթների գիշերային անմահ բուն.—
Ախ, դեռ ինչպես ամենատես Իմաստո՛ւնն է այն ասել—
Գիշերո՛վ է ելնում որսի այդ թռչունը իմաստուն։

Բ

Ո՞վ իմաստուն, այդ շերեփով չի՛ դատարկվի այս կաթսան.
Քանի՛-քանի՛ իմաստուններ և հանճարներ անսասան
Այդպես՝ միայն հայեցումո՛վ այն ձգտեցին դատարկել,—
Եվ ո՛չ միայն հատակն, այլև— մակերե՛սը չտեսան։—

Գ

Դո՛ւ ես միայն և միայն դու, ո՛վ պայքարող դու ոգի,
Որ հավիտյան հուրհուրալով, ինչպես խարույկ մորմոքի,
Վառում ես միշտ ու բորբոքում իղձ ու տենչանք անհագուրդ—
Եվ չե՛ս լինի դու երբեք մութ, որքան էլ մութը չոքի։

Դ

Այս խոհերի, այս գրքերի, այս մտքերի աշխարհում
Կա մի արև անեզրական, որ չի իջնում ու մարում.
Վառվում է նա լույսով անմար և ջեռ պահում մեր ոգին
Ստեղծագործ հրով անճառ՝ անգետ չարին ու բարուն։—

Ե

Մեր քերթությունը՝ մեր դարի ընթացքի հետ միասին՝
Առընչվելով մեր տենչերին՝ երգ է ասում մեր մասին.
Եվ լինում է երգը այնքա՛ն բարձրահոն ու բառնրախոհ,
Որքան լինի դաշինքն այդ խոր, միաձույլ ու միասիրտ։

Զ

Դու Տերյանից սովորեցիր լսել տրտունջը ոգու,—
Ա՛յն, որ մեր մեջ նվում է միշտ, գանգատվում ու մորմոքում.
Բայց արդ՝ քո մեջ ծայր է առնում ա՛յլ մեղեդի մի անվերջ.—
Թումանյանի հուրն է անշեջ քո կրակը բորբոքում։—

Է

Ա՜խ, շռայլ է լինում ոգին— լոկ մի՛ անգամ իր կյանքում.
Երբ վառվելով, մոխրանալով՝ իր վախճանին է հանգում.
Լինում է միշտ դա լույս, անվիշտ և երջանիկ այն ժամին,
Երբ իր մահով՝ խինդոտ, ահով՝ ծնում է աստղ իր հանգույն։

Ը

Չի՛ շղթայվի մարդու ոգին ո՛չ մի կապով արատաքին,
Եթե դարի, ժամանակի զրահ ունի իր հագին.
Կբարձրանա ու կկանգնի նա հավատով անսասան
Եվ կմնա գալիք կյանքում՝ անխորտակ ու ահագին։—

Թ

Ամեն պոետ՝ գալիս՝ իր հետ մի անտես նետ է բերում,
Եվ նետն առած, խոհակալած— սրտ է անում երգիրում.
Բայց դառնում է պոետ նա մեծ ոչ թե նետի՛ մեծությամբ,
Այլ նշանի՛ ահագնությամբ, որ հանճարներ է սերում։—

Ժ

Եղե՞լ է երբ, որ քո մտքում հուրհուրացող խոհ մի խոր
Գրի առած՝ լինի այդքա՛ն ինքնաբավ ու այդքան նո՛ր.—

Ա՜խ, բույր ունեն խոհերը մեր, ունեն կշիռ, ունեն խորք,
Բայց գրքերում դառնում են լոկ— ցոլք ու ցնորք հեռավոր։—

ԺԱ

Զգում ես, որ՝ անհոն ու խոր՝ ինչպես մի հանք անսպառ,
Բացվում է հար, ահով, դժվար, ու խորանում քո ոգին.
Դեռ ի՞նչ գանձեր— անհուն, անծիր— պիտի հանես դու աշխարհ,
Եթե անդուլ կյանքիդ վրա անդուռ դիշեր չլոքի։—

ԺԲ

Առուներով, գետակներով, վտակներով անհամար
Հորդում են հար ու կուտակվում քո մեջ խոհեր ու գանձեր.—
Այդպես գետե՛րն են գոյանում վտակներից աննշմար,
Անհատնելի ու անդադար, անկերպարանք ու անձև։—

ԺԳ

Խոհն անդադրում է կուտակվում, անկշռելի ու անտես.
Չի՛ ենթարկվի նա հսկումի, որքան էլ հոնը բանտես.—
Բայց ինչքա՜ն էլ հախուռն զգաս դու կուտակումը ոգուդ—
Երգերիդ բերքը հնձելիս պետք է դու քեզ կաշկանդես։—

ԺԴ

Նրանք գալիս են միշտ լուռ, պատահաբար ու անձուկ.
Եվ ո՛չ մի խոհ չի գալիս, երբ տարաժամ ես կանչում.
Սիրուհիներն են այդպես այցի գալիս մեզ հահախ—
Անակընկալ, ինչպես կայծ, որ թռչելով է խանձում։—

ԺԵ

Ո՞վ իմանա, ե՞րբ է մարդ դառնում այսպես իմաստուն.
Հասակի՞ց է արդյոք այդ, թե ճանապա՞րհդ է ազդում.
Այդպես ցողո՛ւնն է լցվում հատիկներով ոսկեհատ.—
Օ՜, հանճարե՛ղ ակընթարթ, դու ընթացք ես— ու ոստում։—

ԺԶ

Հե՜յ, անցյալի երգասաննե՛ր, որքա՜ն եք դուք երազել,
Որ մարդկային կյանքը դառնա երգի պարտեզ մի լուսե.
Հասնում ենք մենք ահա շքեղ այդ օրերին երազած,—
Չե՛նք մոռանում սակայն մենք ձեր գործն ու վաստակը վսեմ։

ԺԷ

Արևմուտքում, Գուտենբերգի հայրենիքում հարազատ,
Խարույկներ են վառում այսօր, այրում գրքեր բյուրհազար.
Այսպես՝ նրանք, որ սրբազան արշավանք են քարոզում
Ընդդեմ երկրի մեր հոյաշեն— դառնում են հոն ու գազան։

ԺԸ

Ո՞վ երգիչներ մեր մե՛ծ երկրի, եղե՛ք զգաստ ու արթուն.
Տրված է ձեզ երգել խինդը և աշխատանքը մարդու.
Մե՛ծ Հայնևի հայրենիքից երդի ոգին վտարվեց—
Դո՛ւք պիտի արդ բորբոք պահեք քերթությունը զվարթուն։—

ԺԹ

Ո՞վ Արևմուտք, որ դարերով հայրենիքն ես եղել մեծ
Հանճարների,— դարձել ես արդ խժդժությանց մի կրկես.
Բայց տեսնում է հայացքը մեր հրդեհներում այդ ահեղ—
Այգարացներ անեզրական, որ դու կրում ես քո մեջ։—

Ի

Հորիզոնի վրա կրկին ամպեր են մութ ծանրանում,
Մա՜հն է կրկին ոխակալել՝ մռայլ նստած դարանում.
Պատրաստվում են անկում կարդալ մեր աշխարհին հոյաշեն—
Չե՛ն հասկանում սակայն, որ մեր հաղթանա՛կն է նորանում։

ԻԱ

Վերջին անգամ պատմությունը, մի թռիչքով գեղեցիկ,
Մեր ձեռքերով փորձեց մի նոր մարդկային կյանք կառուցի,
Կրկի՛ն ահա հավաքվում են, որ արյունով ու հրով
Կյանքը հրեն ետ՝ դեպի հին օվկիանոսը սառուցի։

ԻԲ

Չի՛ ընթանում սակայն երբեք պատմությունը դեպի ետ.
Ի՞նչ որ կյանքում վեհ է ու լավ— մեր մե՛ջ է արդ ու մեզ հետ.
Գաղանային ոհմակներով ինչքան էլ գան՝ պիտի լոկ
Ճրագացնեն մա՛հն իրենց սև— ու չքանան առհավետ։

ԻԳ

Մենք քանդեցինք, կործանեցինք աշխարհը հին իր հիմից,
Կամքը մարդու ստեղծագործ կուտակեցինք մենք ի մի.—
Էլ ի՞նչ պատնեշ կարող է մեզ մեր ընթացքից բաժանել,
Երբ մեր ոգին բանտից անել անդարձ հանել ենք հիմի։

ԻԴ

Պատմությունը տվել է մեզ ուսուցիչներ երեք մեծ.
Մեկը— դեռ հին կապանքներում միտք ու ընթացք մեզ տվեց.
Մյուսն եկավ ու կործանեց կապանքները մեզ գերող,—
Կերտում է կյանք նրանց տեղով Ուսուցիչը մեր երրորդ։

ԳԻՍՏԻՔՈՍՆԵՐ

Auf, ihr Dichstichen, frisch..
Coethe

I

Մա՛րդ, բարձրախոհ դու եղիր, պայքարի՛ր դարիդ առընթեր,
Բայց քնքշությունդ երբե՛ք քեզ առաջնորդ չկարգես։—

II

Սի՛րտ, քնքշությո՛ւն, սանտիմե՛նտ,— ե՛րգ, և՛ ցնորք, և՛ թախիծ...
Ո՞նց ապրեցիր աշխարհում, այս ահեղ դարում դու, Տերյա՛ն։—

III

Երգդ թեթև էր,— ասում ես,— և կյանքդ միայն դժվարին էր.
Բայց— հավատա՞նք մենք արդյոք, որ «թեթև էր արվեստդ՝ խնդում»։—

IV

Նուրբ էր արվեստդ, չքնաղ,— բայց— մեր դարում հարկավոր էր
Ո՛չ թե սրտի քնքշություն, այլ— ոգու կորո՛վ ու պայքար։—

V

Կա Մեծարենց, կա Տերյան,— և բազում ուրիշ պոետներ կան,
Բայց— Թումանյա՛նն է անհաս Արարատը մեր նոր քերթության։—

VI

Մեր պատմության դառնաշունչ, չար ու խորշակ դիշերում
Ո՞նց է ծաղկել զվարթուն մեր քերթությունն հնամյա։—

VII

Վարժ ու հմուտ վարպետներ, ճորտ հանճարներ անանուն
Վառ և անմար են պահել մեր քերթությունն հավիտյան։—

VIII

Երգը այնժա՛մ է միայն քերթողի՛ց իր և դարի՛ց իր անցնում,
Երբ առընչվում է կյանքին հուր միջուկով իր անանց։—

IX

Ո՛չ ակունքները Դելֆյան, ո՛չ կախարդանքը Պանի
Ձեն հոչակի քնչ պոետ, եթե խորթ է ոգուդ— առօրյան։—

X

Այգը բացվեց աշխարհում, երբ դու դեռ քերթող էիր լոկ,—
Այժմ կեսօր է արդեն— ժա՛մ է դառնաս իմաստուն։—

XI

Վա՛ղ արթնացիր, սերմնացան,— այս պատվերը հնո՛ւց քեզ տրված է.
Բայց ունե՞ս աչքեր սրատես, որ մթնում հերկերը տեսնես։—

XII

Ձիրք՝ քեզ Իրա՛նը տվեց, խոսք՝ Նաիրին հնամյա,—
Բայց Հոկտեմբե՛րը կոչեց քեզ հանճարեղ բանաստեղծ։—

XIII

Դո՛ւք դարձրիք ինձ հարուստ, և լցրիք ավյունով հեք ոգին իմ,
Կյա՛նք, և՛ դաշինք, և՛ խոհեր,— գործ ու պայքար ընդհանուր։

XIV

Ի՛նչ որ գտնես այս գրքում, ի՛նչ մտածմունք ու խորհուրդ—
Ողջը հանած համարիր— քո օրերի մատյանից։—

XV

Քո հանճարո՛վ բա՛ձրացար դու դարից քո, կյանքից, քեզանի՛ց իսկ.—
Ո՞նց քո ոգին չմեռավ— եղկ ու չնչին Վայմարում։—

XVI

Երբ փոթորիկը պայթեց— ամպրոպից սարսեց Իմաստունը.—
Զրմբռնեց, որ քայլ է դա մի— դեպի դաշնությունն իր ուղած։

XVII

«Ո՛չ կա միջուկ առանձին, ո՛չ կեղև— դրանք միասին են».—
Դա՞շն էին սակայն իրար հետ— քո կեղևն ու միջուկը, Վարպե՛տ։—

XVIII

Դու ձգտում էիր դաշնության, երբ անդա՛շն էր շուրջդ կյանքը.—
Ա՛յս է ահա, որ հնում— սիզիֆյան աշխատանք են կոչել։—

XIX

Մեծ դաշնությունը ոգու— դո՛ւրսը, կյանքո՛ւմ է կոփվում.—
Դաշն է ոգիդ աշխարհին— այդ մարտին մասնակից ես եթե։

XX

Սեր, և՛ պայքար, և՛ քնար,— միասի՛ն եք դուք, միասի՛ն եք.—
Դղյակներո՛ւմ է ապրում երգը՝ սրից առանձին։—

XXI

Կարո՞ղ ես քեզ կոփել այնպես, որ քո մեջ ամփոփես անցյալը,
Բայց և լինես ներկայում— նոր, քան նորերը բոլոր։—

XXII

Ո՛վ հանճարներ վիթխարի,— Դա՛նթ, Հոմերո՛ս, Ալեքսա՛նդր,—
Ձե՛րն էր արոտն երեկվա.— ձե՛րն է և հունձքը վաղվա։—

XXIII

Ուզո՞ւմ ես բարձրանալ քո դարից.— ուրեմն ոգով դու պիտի
Թե՛ անցյալը զգաս հարազատ— և թե նոր լինես ներկայո՛ւմ։—

XXIV

Ֆավն, ու նիմֆեր, ու սրինդ,— երդ և տավիղ քաղցրաձայն...
Մի՞թե աղբյուրդ չունե՞ր— տիղմ ու թախիծ, Ապոլո՛ն։—

34—Ե. Չարենց, Երկեր

XXV

Դա՛փնիս ու Քլոյա... Հիմա— մեզ համար մեռած մի լեգենդ է
Սերն ու մորմոքը ձեր ջինջ,— էլ ինչո՞ւ է ձեր վեպը հուզում։

XXVI

Ա՛խ, արթնանում է հաճախ ձևը— մեռած համարվող.—
Կյա՛նք, քո ծիլերը հաճախ— հին կերպարանք են հագնում։—

XXVII

Դուք սավառնում էիք վեր, կյանքը՝ տավիղ անվանում,—
Բայց— ձեր կյանքում և երգում կա՞ր դաշնության արդյոք հնաք։

XXVIII

Ո՛վ կամենում է, որ իր ծնունդից սկսվի այս կյանքը—
Թող իմանա՛, որ իր հետ— այն կմեռնի հավիտյան։—

XXIX

Մի՛շտ էլ կենտրոն է եղել մարդը կյանքում— և կարծել է,
Որ— իր ներկա՛ն է տալիս միտք ու իմաստ անցյալին։

XXX

Լա՛վ իմացիր, որ եթե դու ուզում ես մի օր չտեսել—
Քեզ լոկ օղա՛կ համարիր,— և ո՛չ թե սկիզբ կամ վախճան։—

XXXI

Շա՛տ էր հարուստ խոհերով, հույզերով ու հրով իմ դարը.—
Կույրն ու հիմարը միայն կարող էր մնալ ընչաքուրկ։—

XXXII

Քո ժամանակը ուներ խոհ— ամենի՛ց ավելի,—
Բավ էր կապվել նրա հետ, որ դառնայիր իմաստուն։—

XXXIII

Շա՛տ գաղտնիքներ բացվեցին, որ երեկ դեռ մթին հանելուկ էր,—
Տաղտկալի՞ դարձավ արդյոք կյանքը.— ո՛չ, խորացավ ավելի։—

XXXIV

Նոր ու խրթին խնդիրներ, որ երկնում էին հանճարները—
Պարզ ու հատու լուծվեցին— բիրտ ու անհաշտ պայքարով։—

XXXV

Ա՛յն, որ մտքով ձգտեցիք դուք հասկանալ ու հայել,—
Մենք պայքարո՛վ լուծեցինք— և տիրացանք աշխարհին։—

XXXVI

Դու կարո՞ղ էիր ըմբռնել, որ հարցը «էության և ձևի»—
Հարց է հողի ու հացի — և լուծվում է անհաշտ պայքարով։—

XXXVII

Դարը մեզ մուրհակ է տալիս,— բայց այդ փակ մուրհակի հատուցումը
Սերունդնե՛րն են ճշտում ապագա— և շատե՛րն են սնանկ հռչակվում։

ԲԵՅԹԵՐ

Ա

Ո՛վ երգասան, կյանքդ եթե երգ ու դինի էր,—
Քանի՞ մարդու կյանք քո դարում— վերքի սինի էր։—

Բ

Դու ասացիր՝ հող կդառնան շահ ու նոքար, Հաֆի՛զ,—
Ինչո՞ւ էլ դու կին սիրեցիր, ռանգ ու ռուքար, Հաֆի՛զ։—

Գ

Կյանքի իմաստը գինու մեջ ու ջանի մեջ դու փնտրեցիր,—
Բայց, ո՞վ խայամ, կինն ու գինին քյուլհանի մե՞ջ դու փնտրեցիր։—

Դ

Ոսկեզօծել է բազում շահերի քո շահիրական ջանքը, Ֆիրդուսի՛,
Բայց չեղա՞վ մի շահ, որ ոսկեզօծեր քո անօգնական կյանքը,
Ֆիրդուսի՛։—

Ե

Շահնշահերի արշավանքների գովասանքը բորբ
Ձրոսկեզօծեց ո՞չ քո մահը խեղճ, ո՞չ քո կյանքը որբ։

Զ

Խոսքդ եղավ զառ ու զառբաբ, Սայա՛թ-Նո՛վա,—
Բայց չունեցա՞ր յար ու շարբաթ, Սայա՛թ-Նովա։—

Է

Ոսկե բառեր, անգին քարեր, լալ ու գոհար շարել ես դու։—
Քեզ միայն քո յարն է վառել,— քանի՞ յարեր վառել ես դու։—

Ը

Ո՞ր շահն ունի այդքան ոսկի ու անգին քար, Սայա՛թ-Նովա,—
Չի՞ ունեցել քեզ պես շռայլ խալխը՝ նոքար, Սայաթ՛-Նովա։—

ԶԱՆԱԶԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ

Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս,
Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին
Պայծառ է նա, որպես մշտաբորբոք փարոս,
Վառված հրով անշեջ դուրերում հին։—

Եվ վարպետներ, խոնարհ ու հանճարեղ,
Հղկել են այն դարեր, որպես մարմար,
Եվ փայլել է նա մերթ, ինչպես բյուրեղ,
Մերթ կոպատացել, ինչպես լեռնային քար։

Բայց միշտ պահել է նա իր կենդանի ոգին,—
Եվ եթե մենք այսօր կոտրատում ենք այն մերթ—
Այդ նրանից է, որ ուզում ենք մեր
Նոր խոհերի վրա ժանգ չլոքի։—

Այդ նրանից է, որ մեր այսօրվա ոգուն
Այլևս չի կարող լինել պատյան
Ո՛չ Տերյանի բարբառը նվագուն,
Ո՛չ Նարեկի մրմունջը մաղաղաթյա։—

Եվ ո՛չ անգամ Լոռու պայծառ երգիչ
Թումանյանի բարբառը գեղջկական,—
Բայց նա կգա— լեզուն այս երկաթյա բերքի
Եվ խոհերի այս խո՛ր ու երկրակամ...

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Ես սիրում եմ նրանց, յուրաքանչյուր անդամ
Երբ թերթում եմ էջերը բազմապիսի.
Մեկը լալիս է ջերմ, կամ աղերսում անկամ,
Մեկը նգո՛վք նետում մեր ավերիչ ասին։—

Ա՜խ, տողերում նրանց յուրաքանչյուր
Ինձ համար կյանք կա, կամ— կա մահվան սերմ.—
Ա՜խ, միևնույն թափով դեպի մահ է մղում
Եվ դեպի կյանք— մյուսը՝ կարոտով ջերմ...

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Նրանք գալիս են անտես ու աննշմար,
Ինչպես արյունն է հոսում երակներում,
Բերում են մեզ բոլորիս թե՛ կյանք, թե՛ մահ,
Նետում են բախտը մեր անեղրական
հեռուն։—

Եվ ի՞նչն է սահմանում նրանց դեկավար,
Եվ ի՞նչն է նրանց բեղմնավորում—
Հավետ անհայտ է մեզ, ինչպես սրտի համար
Արյան ընթացքը, որ ամոքում է բերում։—

Հ. Թ.

Ես կարդում եմ նրան ու ասում.— Այս հմո՛ւտ, հանճարեղ Լոռեցին
Հոմերի, Գյոթեի հետ մի օր՝ հավասար՝ նստել է քեֆի,
Եվ թաս է բռնել նրանց հետ, մեծարանք տվել ու առել,
Ինչպես իր պապերն են արել՝ իրար հետ խնջույքի նստելիս։—

Հ. Թ.

Նա մեծ էր ավելի, քան եղավ։— Երկրնքի նման ընդարձակ,
Օվկիանի նման՝ իր ոգին ընդգրկել էր կյանքը անեզր։—

Եվ ոգու ափերին նստած՝ նա նայում էր հայացքով պայծառ—
Եվ որսում էր երգեր ու խոհեր, և տեսնում էր չքնա՜ղ երազներ...

Հ. Թ.

Նա մեծ էր հողո՛վ, արյունո՛վ։— Արմատնե՜ր ուներ նա հողում։
Իր երգերը— գեղջուկ նաիրցու քրտինքո՛վ էր նա ողողում։
Հանճարեղ երգերում նրա— իր երկրի արև՛ն էր շողում։—
Նա մեծ էր հողո՛վ, արյունո՛վ։— Արմատնե՜ր ուներ նա հողում։—

*

* *

Նա եկավ Հյուսիսից։— Ճորտերի փրկության
փառքո՛վ էր նա մեծ։—
Բայց հեծում էինք մենք դարեր— կրկնակի՛
գերության ներքո։
Մեզ ճնշում էր բռունցքն հայրենի։— Նա
կտրե՛ց այն իր ձեռքով։
Ջունեինք մենք դարեր— հայրենիք։ Եվ նա մեզ
հայրենիք տվեց։—

Ա. Մ.

Ե՛լ, բարձրացի՛ր դագաղից և կրկի՛ն երևա աշխարհին։
Աներեր, բրոնզյա քո ձեռքով կրկի՛ն մեր ընթացքը
վարիր։
Դու կոչված էիր լինելու ղեկավար երկրի ու դարի.—
Քեզ տրված էր ոսկյա՜ մի բեկոր լենինյան վսե՜մ
հանճարից։—

Ա. Մ.

Նաիրյան արև՛ն էր քո մեջ՝ լենինյան հրով
ճառագած,
Կործանելող մեր երկրի համար դու եղար փրկության
առագաստ։—
Դու տվիր ընթացք և ուղի մեզ մինչև դարերն հեռակա.—
Նաիրյան արև՛ն էր քո մեջ՝ լենինյան հրով ճառագած։—

Մ. Մ.

Արյուն է եղել աշխարհում։— Եղել է եղեռն ու կռիվ։
Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամեհի ելած իրար դեմ։
Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կտրած,
Արև՛ է երգել ու գարուն այս հիվանդ, հանճարեղ պատանին։—

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՐՁԱՆԻՆ

(Երևան, Աբովյան հրապարակ)

Քո պատվանդանը փոքր է չափազանց։—
Բայց մե՞ծ էր արդյոք հերկը հայրենի,
Որի բարգավաճ գալիքին ընծա
Դու հանճարը քո և կյանքը բերիր։—

ԳՅՈԹԵԻՑ

Բարեկա՛մ, անխախտ հասկացի՛ր դու սա.—
Դարում, ուր Ոգին ու Միտքն են հորդում—
Լոկ առաջնորդվել կարող է Մուսան,
Բայց ինքը արդեն չի՛ առաջնորդում։—

ՊԱՏԱՍԽԱՆ ԳՅՈԹԵԻՆ

Օ՜, Ոլիմպացի՛, այս աշխարհում երբ
Չեն լինի Ոգու տերեր ու ճորտեր—
Կհնձե կրկի՛ն բազմաբեղուն բերք,
Եվ կրկի՛ն, կրկի՛ն ուղիներում մեր
Երգի դիցուհի՛ն մեզ կառաջնորդե։—

ԱԿՐՈՍՏԻՔՈՍ

Արեգա՛կ, օվկիան զորության,
Բոպե առ բոպե
Փայփայի՛ր, տո՛ւր զորություն
Էակին այս, թո՛ղ բորբ տրոփե
Նրա սիրտը դեռ մաքուր ու թույլ.
Իմաստուն ու բարի՛ դու.—
Կյա՛նք, լո՛ւյս, աճում ու բարիք։—

Չհերկած դաշտերում աշխարհի,
Արեգա՛կ, դեռ ինչքա՛ն չարիք.
Բաբբի՛ դու, ուսուցիչ բարի.
Էությամբ քո լցվի՛ր նրա մեջ.
Նվիրի՛ր քո կորովն անշեջ—
Յուրդ թող երբե՛ք չմարի։

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Չկա՛ քեզ պես սիրուն մանկիկ,—
Ասում եմ քեզ, իմ դո՛ստր անգին.
Բայց վաղը, երբ դու մեծանաս,
Աշխույժ վազես, փողոց գնաս,—
Գալու ես ինձ ասես, անգի՛ն.
— Դուրսը ինձ պես այնքա՛ն մանկիկ...

HEINRIGH HEINE

Ես սիրում եմ քեզ, Հա՛յնրիխ Հա՛յնե,
Դու մոտիկ ես ինձ չափազանց,
Երգերիդ միջից քո ձայնը
Հնչում է ինձ հա՛ր հարազատ։

Դու մոտիկ ես ինձ, Հա՛յնրիխ Հա՛յնե,
Թմբկահար, մարտիկ ու պոետ։

Երբ բացվեց հոգուս վաղորդայնը—
Սիրեցի նվագները քո ես։

Սիրեցի երգերիդ քնքշությունը,
Երաշխերդ չքնաղ ու նրբին,
Տխրագեմ, դու մտար իմ տունը՝
Ոսկեբար քնարը ձեռքիդ։

Բայց հետո, երբ մի քիչ մեծացա ես—
Սիրեցի թմբուկդ հնչեղ,
Սիրեցի շեփորող քո ձայնը,
Որ գիտե պայքարի կոչել։

Իսկ ապա, երբ ճամփիս ծաղիկները
Փոխվեցին փշերի ու խոցի—
Սիրեցի երկմիտ շշուկներդ
Եվ հեգնանքդ, որ նման է բոցի։

Ինչպես դու— ես է՛լ աշխարհում այս
Ապրում եմ դարում հողմաշունչ,
Եվ երգերս խնդուն, ես խրում եմ
Հնի սիրտը, ինչպես մի դաշույն։

Ինչպես դու— ես է՛լ մտքերով իմ
Ապրում եմ գալիքում դեռ չեկած,
Եվ գնում եմ առաջ երգերո՛վ իմ՝
Դեռ գլուխս նիրքև չթեքած։

Բայց ուղում իմ, որով ընթանում եմ—
Երջանիկ եմ ավելի, քան դու,
Օ, իմ դա՛րն է այսօր, որ տանում է
Ինձ դեպի խոյանք մի անդուլ։

Եվ գալիքը այն, որ, Հա՛յնե,
Մի ցնորք էր հեռու քեզ համար,—
Շողշողում է, ինչպես վաղորդայնը,
Եվ թնդում է շուրջս հիմա։

Բայց էլի՛ ուղին իմ դժվար է
Եվ նման է ուղուն քո վերին...
Ինձ հետ է թեկուզ իմ դարը,
Բայց իմ դեմ է մարդը դեռ հին։—

Նա դեռ կա։— Այսօր է՛լ նա նստել է
Ինքնագոհ, կառչած իր բույնին,—
Եվ նա նո՛ւյնն է, նո՛ւյն ֆիլիստերը՝
Ջնայած դիմակի գույնին։

Օ՛, պարզվում է այսօր նա գույնը,
Իսկ մինչև—— ատում է հոգով։
Նա ատում է սերը, քնքշությունը,
Իր հույզերը կապում է թոկով։

Նա մոլի ձաղկող է, ուղղափառ է,
Խուզարկու է հոգու ու սրտի,
Նա սիրում է միայն գաղափարը,
Գայմանով որ... չլինի խրթին։

Ամենից առաջ քննադատ է
Նա այսօր,— ես ծանոթ եմ նրան.
Նա սիրում է դնել իր թաթը
Իմ գրքերի վրա։

(Քո մասի՛ն է միայն իմ խոսքը,
Օ, կարմիր հագած ֆիլիստե՛ր,
Եվ ոչ թե նրանց, որ իրոք
Մեզ ասում են լե՛նինյան խոսքեր)։

Նա լսել է, որ այսօր պոետը
Նախ մարտիկ է, քաղաքացի,—
Թե վարդի մասին խոսես հետը—
Նա քեզ կտա քացի։

Բայց, չնայած սրան,
Նա ինքը կյանքում
Սանտիմենտալ է այնքան,
Որ սիրուց տնքում է անքուն։

Նրա շուրջը եռանդով անդուլ
Կառուցում են մարդիկ կոմունիզմ,—
Գիշերները նա Վերլեն է կարդում,
Ցերեկները— հայհոյում է ինձ։

Դեռ նա կա այսօր, դեռ նա կա,
Եվ հոգված կամ ռեցենզ գրելիս
Նա սիրում է բառը «հակա»՝
Չափի՛ց ավելի...

Իր վարքով— չափազանց նա անսանձ է,
Կհաներ նա ինձ կախաղան,
Թե չզսպեր նրան— ղեկավարի սանձը,
Որ միակ զսպիչն է նրա։

Այդ նա է միայն, որ նստել է
Կոկորդին իմ ու թորում է թույն,—
Այդ կարմրազգեստ ֆիլիստերը,
Իմ դահիճը այդ մշտարթուն։

Իհարկե, ունեմ մեղքեր ես,
Ուրանալն այդ— անշուշտ անհեթեթ է,—
Բայց գիտեմ, որ թեթև են մեղքերս,
Քանզի ես— պոե՛տ եմ։

Եվ ինչպես ուսուցիչը մեր մեծ
Ներում էր քո բոլոր մեղքերը,—
Գիտեմ, որ ինձ էլ կներե
Դասակարգը— իմ փոքրիկ հանցանքները։

Նա հաղթող է այսօր, նա մեծ է,
Օվկիա՜ն է նա մի ընդարձակ,—
Նրանո՛վ է, որ ես մնացել եմ
Դեռ դահճիս ձեռքով չհնձած։

Չլիներ թե նրա հաղթությունը—
Իմ դահիճն ինձ վաղո՛ւց էր կերել,

Եվ դարձել էր արդեն իմ անունը
Ոտնակոխ արված մի տերև։

Բայց կարո՞ղ է նա այդ անել։
Ո՛չ։ Նա չի՛ այսօր կյանքի հիմը։
Բարձրանում է աշխարհ մի անեզր,
Որ քո՜նն է անշուշտ և ի՛մը։

Իսկ խխունջը այն, որ նստել է
Տզրուկի նման մեր քթին,—
Նա կանցնի, ինչպես սավևերը,
Երբ արևը հասնի զենիթին։

Այս արևը, որ հար բարձրանում է,
Կխանձե նրան իր հրով,—
Բայց նրա ցոլքերում մեր անունը
Կհիշեն գգվանքով ու սիրով...

ԱՆՏԻՊ ԷՋԵՐ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

ՆՐԱ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ողջո՜ւյն, ողջո՜ւյն ժողովրդին եղբայրական,
Նո՜ւյն արևով սնված մեզ հետ և նույն հացով,
Մեզ հետ մեկ տեղ կրած կալանքը ցարական,
Մեզ հետ մեկ տեղ հառնած կյանքի արևազօծ,—
Հանուն հնում կրած անհուն տառապանքի
Հանուն այսօր՝ կոփվող կյանքի լիահնչյուն,—
Հանուն անմահ մեր դաշինքի և հա՜շտ կյանքի,—
Եղբայրական ժողովրդին ողջո՜ւյն, ողջո՜ւյն...

ՏԱՂ ՍՐՏԱՌՈՒՉ
ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ

ՆՐԱ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ 15-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ա

Երկի՛ր վերձիգ, վսեմ դարձիգ դեպի գարունդ այս արար՝
Երանգների՜, խոյանքների վարարումդդ փրկարար,—
Շքեղ երթիդ՝ դեպի բախտի քառուղիներ վարդակոխ—
Ես՝ բանաստեղծս երկրի հայոց՝ հղում եմ խոսք սրտաբուխ։

Բ

Երդվում եմ քեզ, երկիր անեղծ երազների ու երգի,—
Քանի՜ անգամ չքնաղ պարուհին իմ հայրենի եղերքի,
Քեզ հետ մեկ տեղ՝ իբրև կանթեղ գիշերներում այն դաժան՝
Ոտնակոխ է արվել, մարվել քամիներից ժանտաժանտ։

Գ

Երդվում եմ քեզ, արևակեզ տենչանքների՛ դու երկիր.—
Նո՜ւյն վիշտն է միշտ գերել թե քեզ, թե բարձրաբերձ իմ երկրին.
Բազուկն է նույն ճղմել հնում թե աշխարհին իմ, թե քեզ—
Եղել ենք մենք միշտ միևնույն կրակների ողջակեզ։—

Դ

Անցել ենք մենք՝ բազմակեղեր՝ այսպես դարե՜ր ու դարե՜ր,
Մինչև մոայլ մթնում երեկ ծագեց շողշող մի արև.
Հերոսական Հոկտեմբերին նա հյուսիսից ճառագեց—
Եվ մեզ՝ հրկեզ իր ափերից՝ փրկության լո՜ւր առաքեց...

ՄԱՀՎԱՆ ՏԵՍԻԼ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԹԱՄԱՆՅԱՆԻ ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Որքա՜ն նման է հղել պահն այդ՝ մարող կանթեղի
. . . . . .
...Նրա կոպերը երեկ երբ քարացել են խաղաղ—
Կապույտ բոցով բռնկված վերջին ջերմում ուղեղի,
Նա տեսել է երևի արևային մի քաղաք...
Ինչպես մաքուր մարմարի կապույտ կողին նկարած
Արևային ժամացույց՝ քարտեղն ահա քաղաքի,—
Պողոտանե՜ր, փողոցներ՝ բոլորաձիգ երկարած,
Իսկ կենտրոնում երկնահաս, գրանիտյա մի բագին։
Ակնթարթում մի վսեմ, որ երկարում է դարեր,
Փոշիոտում են ուղեղում— սիրտ պայթելու չափ պայծառ-
Սյունաշարքե՜ր, տերրասնե՜ր, աստիճաննե՜ր մարմարե,
Եվ պարտեզնե՜ր ոսկեզօծ, շատրվաններ՝ երգաձայն...

Աշտարակնե՛ր երկնահաս և կամարնե՛ր կորանիստ,
Քանդակազարդ կարնիզնե՛ր, պատուհաններ նուրբ հատած,
Եվ մարմարիոն մարմնազույն, և գանգրահեր գրանիտ
Եվ վարդաբույր տուֆաքար, և բիլ բազալտ սրբատաշ...

. . . . . .

Պարզիլ է ձեռքը դողդոջ դեպի ցնորքն այդ կապույտ,
Այնքան մո՛տ է, այնքան մոտ— կըշոշափի նա հիմա—
Բայց ծանրացել է հանկարծ ձեռքն հանճարեղ ու հմուտ,
Ընկել է վար— չոր կրծքին... լռությո՛ւն։ Մահ։

ՀՈՒԶՈՒՄՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Հովն-հորովել է ասում,
Անձրևը ցուրտ բառեր,—
Հուզումնավո՛ր իմ լեզու,
Ինչո՞ւ ես լռել։

Ա՛յն, որ ասել ես ուզում՝
Տե՛ս, քեզանից զորեղ
Դրսում ծաղիկն է ասում
Եվ ջուրը բյուրեղ։

Եվ աղջկա աչքերից
Երբ մանիշակն է նայում—
Էլ Տերյանի երգերի
Ի՞նչն է հմայում...

Ջուրը հորդոր է հուզում,
Հուրը— մորմոք կարմիր,—
Հուզումնավոր այս լեզուն,
Պոե՛տ, քեզ չի՛ տրվի։

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԱՇՈՒՆ

Այս աշունը եկավ, բացվեց, ինչպես երբեք,—
Եկավ, ինչպես զինվոր ու զեկավար.—
Այս աշունը բերեց իմաստության երգեր
Եվ պայքարի կանչեց— ապագայի համար։—

Եվ աշնան ցուրտ քամին ինձ մարտակոչ թվաց,
Թվաց կռվի կանչող հնչուն շեփոր,—
Եվ անձրևի շնչով երբ երեսիս հևաց—
Ինձ զգացի ես թարմ— և անչափ նո՛ր։—

Եվ անձրևի թելերն ինձ թվացին թելեր՝
Աշխարհներին կապող և կյանքին խո՛ր.—
Կարծես ծառե՛րն անգամ պայքարի են ելել,
Որ թոթափեն հույզերը— և դառնան նոր...

Շրշյուն աշունն այսօր ինձ՝ գործ ու կյանք վսեմ
Եվ ո՛չ թե մուժ ու մահ, ու անկում է գուժում։—
Օ. հիրավի, երբե՛ք ես չեմ տեսել
Մի այսպիսի՛ աշուն...

*
* *

Իմ օրերում ես ցանկացա լինել վսեմ և ինքնուրույն,
Իմ օրերում ես ցանկացա կյանքս զոհել դրա սիրուն։

Իմ օրերում երգը միայն նրանո՛վ էր մեծ ու անգին—
Որ բորբոքում, հուր էր տալիս դեռ չկոփված, չեկած կյանքին։

Բայց օրերում իմ հուրհուրան աշխա՛րհն էր նոր ծնվում հնից,—
Եվ մե՛ծ եմ ես, քանզի ինձ մեծ երթ էր նշված պատմությունից...

Իմ օրերի երգը եթե իմ տողերից հիմա լսես—
Ուրեմն ես մե՛ծ եմ ու խոր, երգի՛ց էլ իմ խոր ու վսեմ...

Ու եթե ես ունեմ մի բան, որով կարող եմ պարծենալ,
Իմ օրերի շաղա՛փն է այդ, իմ օրերի ձայնը անահ...

Ողջո՛ւյն, ուրեմքն, օրերիս, իմ օրերի անհո՛ւն շնչին,—
Եվ օրերիս հանդեպ այդ մեծ— թող երգըս ձեզ թվա չնչին...

Բայց եթե կա երգերում իմ գեթ շեշտ կամ բառ իմ օրերից—
Ես կըմնամ հա՛ր ու հավետ, ես կարթնանամ մահից նորից...

Մե՛ծ եմ ու վեհ իմ օրերով— ես այդ գիտեմ հուր-հավիտյան,—
Ողջո՛ւյն, իմ ե՛րգ, իմ խնդությո՛ւն, իմ օրերի անհո՛ւն մատյան...

*

* *

Այնքան մաղձ կա իմ սրտում, այնքա՛ն
դառնություն.
Ես միայն վիշտ եմ տեսել, և՛ թախիծ, և՛ թույն...

Չգիտեմ՝ ե՞ս եմ եղել մեղավոր, թե մեր
Կյա՛նքն է եղել անողոք ու մռայլ, ու նեռ...

Ոչ բարեկամ ունեցա, ոչ թշնամի մե՛ծ.—
Բարեկամը հեռացավ, թշնամին — տևեց։

Համայնական էր թեկուզ կյանքը մեզանում—
Ամեն ոք շուրջս սակայն իր թելն էր մանում...

Ես էլ, մենակ, մանեցի իմ թելը կյանքում—
Ինչքան որ ուժ ունեի— անխոնջ ու անքուն։

Թույն շահեցի սակայն ես վաստակիս համար—
Եվ մնացել եմ այսպես դառնացած հիմա...

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻՆ

Սառն ու հմուտ էիր, խոր ու գիտուն,
Պատմությունն էր անհուն քո Մուսագետը,—
Եվ դու եղար մեզ հետ, երբ ահավոր աղետը
Մոլեգնությամբ իր բիրտ մտավ մեր տուն։—

Այն օրերում մեր տունը չկար խնդում,
Կորնչում էր միգում մեր արահետը,—
Եվ մեր հանճարը հին, կոփված անդուլ
Սերունդների ջանքով— դեռ անծանոթ մի գետ էր։

Դու սուզվեցիր, վարպե՛տ, անեզրական այդ ծովը,
Եվ շլացած անծիր մեր գանձերի փայլից—
Նլար, ինչպես նավազ, որ գյուտերից գինով է...

Եվ աշխարհի առջև, որ դեռ ահով էր լի,
Դու բացեցիր ոգու մեր գանձարանն անհուն—
Եվ մեզ համար դարձար— անմարելի անուն։

«ՄԱՆՈՆ ԼԵՍԿՈ»

Լ. Զ.-ին

Մանոն Լեսկոն, այդ կինն անմեղ,
Ո՛չ թե սիրով, այլ լոկ ոսկով,
Միայն մարմնով, միայն «այնպես»
Տրվեց մարդկանց այն պիղծ, այն կեղծ,
Երբ ասպետից իր բաժանվեց—
Մանոն Լեսկոն։—

Բայց միշտ գերի սիրույն այն վեհ՝
Սրտո՛վ մաքուր,— և ո՛չ ոսկով,—
Իր ասպետի՛ն սիրեց հավետ,—
Եվ ուրիշի մահճում անգամ
Իր ասպետից չըբաժանվեց...

Եվ մնաց սուրբ, մնաց անեղծ—
Մանոն Լեսկոն։

ՆԱՎԶԻԿԵ

(Հատվածներ)

*
* *

Նայադների նման, նայադների նման
Կարոտներիս ձայնով կանչում է ինձ,
Խոստանալով սիրո անհասանելի հմայք
Եվ թողնելով մորմոք ու կորուստի կսկիծ...

Մանկությունից անդարձ՝ իմ օրերում անցած,
Տարիներիս կարմիր ավազի մեջ,
Ինձ թվացել է միշտ, որ կարոտիս կառչած՝
Ինձ սպասում է իմ Նավզիկեն...

Նախ՝ կարոտի նման անծանոթ կյանքի
Բիլ ծովերում նավող նավակի մեջ՝
Իբրև ցնորք գայթող կամ երազանք անգին,
Հեռուներից կանչեց իմ Նավզիկեն։

Եվ օրերում ապա, տարիներում անդարձ,
Վայրկյաններիս կարմիր ավազի մեջ,
Երազեցի ընդմիշտ, թե կարոտիս կառչած՝
Ինձ սպասում է իմ Նավզիկեն...

Մերթ աղջկա նման, մերթ մանկական տեսքով,
Մերթ որպես կին՝ տեսած երազի մեջ,
Մերթ իբրև կույս անեղծ, մերթ մի Մանոն Լեսկո—
Պատկերացել է ինձ՝ իմ Նավզիկեն։

Մերթ սպիտակ, որպես մարմարոնյա արձան,
Մերթ մեքենյան կավե մի վազի պես,—
Մերթ եբենյա մարմնով եգիպտուհի դարձած՝
Հմայել է հեռվից իմ Նավզիկեն։—

Մերթ կոնքերով ողորկ, որպես ձուլած արծաթ,
Մերթ որպես էգ մի օձ երազի քեզ,
Մերթ՝ աչքերով կանաչ, մի կին դարձած,
Անեղծ մի կույս դարձած իմ Նավզիկեն։

Նա մերթ կանչել է ինձ սրինգային ձայնով,
Մերթ՝ քնարի քնքուշ նվագի պես,
Մերթ՝ դարերով ծանոթ, մերթ միայն նոր
Ինձ հարազատ ձայնով— իմ Նավզիկեն։

Վերելքներում անծայր, հովիտներում այն ցած,
Կամ ծովափնյա ոսկե ավազի մեջ,—
Մերթ շառաչում ծովի, մերթ լճերում անձայն—
Ես լսել եմ քո քայլքը, իմ Նավզիկե։

Ես սպասել եմ քեզ յուրաքանչյուր վայրկյան,
Եվ երազել, որ երթըս երազվի քեզ,—
Յուրաքանչյուր վայրում, յուրաքանչյուր վայրկյան,
Կնոջական ցնորք իմ, իմ Նավզիկե...

Ե՛վ հանճարեղ երգում, և՛ հանճարեղ գրքում,
Ե՛վ հանճարեղ ամեն կտավի մեջ,—
Ե՛վ հյուսիսում, և՛ հին Արևելքում,
Եվ հարավում դեղին, իմ Նավզիկե։

Շրջադարձում, երթում, քայլափոխում ամեն,
Հսկող հսկա դեպքի, կամ դավի պես,—
Ես սպասել եմ, որ կամ դու, կամ ես
Կբճանաչենք իրար, իմ Նավզիկե։

Յուրաքանչյուր բացվող առավոտվա, կամ իմ
Յուրաքանչյուր տեսած երազի մեջ,—
Անգամ մի դուռ է երբ իմ դեմ բացում քամին—
Հանդիպումդ եմ հսկում, իմ Նավզիկե։

Մանկությունից իմ լուրթ— մինչև կեսօրն իմ թեք,
Իմ օրերում անցած երազի պես,

Ես սպասել եմ, որ ահա կելնես իմ դեմ,
Ամենօրյա ցնորք իմ, Նավզիկե։

Ե՛վ իմ գրքերն ամեն, և՛ իմ երգերն անմեռ,
Ե՛վ բորբոք հուրն իմ այս ծարավի կեզ,—
Ի՞նչ որ արել եմ ես, ի՞նչ անելու եմ դեռ—
Քեզ գտնելու համա՞ր է, իմ Նավզիկե։

Եվ մինչև օրն այն սև, մինչև դառնա նսեմ,
Մինչև ավյունս ամբողջ նվազի— քեզ
Ես փնտրելու եմ իմ ուղիներում լուսե,
Անհասանելի՛ իմ սեր, իմ Նավզիկե՛...

Ե՛վ պոետի հոչակ, և՛ փառքի տենչ խորին,
Ե՛վ արնահամ երգի, երազի սե՛ր,—
Ես տենչացել եմ՝ լոկ հավատալով, որ ինձ
Դեռ սպասում ես դու, իմ Նավզիկե՛...

Որ վարդերիս անդարձ, տարիներիս հնձած,
Անդառնալի ցնդած երազի տեղ—
Իմ օրերի վերջում, իբրև անհուն ընծա—
Ինձ ժպտալու ես դու, իմ Նավզիկե...

Նայադների՞ նման, նայադների՞ նման,
Կարոտներիս ձայնով կանչել ես ինձ,—
Խոստանալով սիրո անհատնելի հմայք—
Եվ թողնելով լոկ մահ ու կարոտի կսկիծ։

*
* *

Նայադների՞ նման, նայադների՞ նման,
Կարոտներիս ձայնով կանչեց նա ինձ.
Նա խոստացավ սիրո անհատնելի հմայք
Եվ ինձ թողեց միայն մահու կսկիծ...

Նաժիշտներով իր յոթ շրջապատված,
Նաժիշտներով սիրո և դավի կեզ,—

Իբրև հոժար կամքով մահապարտված՝
Ընդունեց սերն իմ սև— իմ Նավզիկեն...

Կարոտներիս ծովի կղզիներում անցած
Դու իմ կղզին եղար միակ ոսկե,
Բայց սև աղետ դարձավ ու մահացու հանցանք
Քեզ համար սերն իմ սև, իմ Նավզիկե...

Եվ վարդագույն, ինչպես մի վարդագույն մարջան,
Կարոտներիս կարմիր ավազի մեջ,
Դու ժպտացի՞ր, անցա՞ր, աներևույթ դարձար,
Օ՜, մահացու իմ սեր, իմ Նավզիկե...

3

... Արդեն նայի՞վ դարձած նայադների նման,
Նայադների նման քնքուշ ձայնով՝
Խոստանալով գարուն ու գարնային հմայք՝
Այն ո՞վ է ինձ կանչում, այն ո՞վ...

Ինչպես Ուլիս՝ տրված կարոտներիս կայմին,
Նայադների չքնաղ երգի՞ն գերի՝
Ամբողջովին տրված իմ հուշերի ձայնին,
Ես մոտեցա կրկի՞ն այն ափերին...

Մի՞թե կրկին, իբրև վերադարձող Ուլիս՝
Մի անհնար, չքնաղ երազի մե՛ջ—
Պիտի տեսնեմ կղզի՞ն այն, ուր սիրով լի՝
Սպասում է ինձ կի՞նն այն՝ Նավզիկեն...

Նո՛ւյն նայադներն ահա... և կախարդիչ նույն երգը,
Բայց ավելի անհուն ու հմայիչ...
Եվ մոտենում է նույն կախարդական եղերքը՝
Բայց... ինչո՞ւ է թվում նա ամայի...

Նո՛ւյնն են ափերը լուրթ,— և պտույտի ելած
Նո՛ւյն աղջիկներն ահա,— և Նավզիկեն...
Բայց նա նայեց անթարթ— և աչքերում ցոլաց
Անդառնալի անցածը— երազի պե՛ս...

Եվ սուզվելով, ինչպես մի վարդագույն մարջան,
Տարիների կարմիր ավազի մեջ,
Անվերադարձ անցավ և զառանցանք դարձավ,
Մանկությա՜ն պես անցած— իմ Նավզիկեն...

*
* *

Նայադների՞ նման, նայադների՞ նման,
Կարոտներիս ձայնով կանչեցին ինձ,
Խոստանալով սիրո անհատնելի հմայք,
Եվ թողնելով միայն մահու կսկիծ։

Արկածներիս ծովի կղզիներում անցած,
Ինձ հանդիպեց քանի՞ Նավզիկե,
Որ հեռացավ, անցավ իր կարոտին կառչած՝
Իբրև ուրի՞շ Ուլիս, ուրիշ սե՛ր...

Հեքիաթային կապույտ իր եզերքին կառչած՝
Իբր ուրիշի՞ սիրո մի Նավզիկե,
Իր Ուլիսի՞ն հսկող արքայադուստր դարձավ
Կարոտներիս կարմիր երազի մեջ...

Եվ կարոտիս կառչած արքայադուստր կարծած
Քանի՞, քանի՞ չքնաղ Նավզիկե
Ընկղմվեցին, կորան, որպես կարմիր մարջան՝
Կարոտներիս կարմիր ավազի մե՛ջ...

Արկածներիս կապույտ կղզիներին կառչած՝
Վայրկյաններիս կարմիր երազի մե՛ջ,
Միշտ ուրիշի սիրո արքայադուստր դարձավ
Ինձ հանդիպած ամե՛ն մի Նավզիկե...

Բայց ուրիշի երկրում արքայադուստր դարձած
Իմ կորցրած ամե՛ն մի Նավզիկե,
Ինձ հանդիպեց կրկին և սիրուհի դարձավ—
Իմ երգերի կարմիր ավազի՛ մեջ...

Տարիներում անցած իմ կարոտին կառչած՝
Իմ երազած միա՜կ իմ Նավզիկե,
Ուր սպասում էի— կորցրեցի նրանց՝
Երազներում սիրած, երազի՛ պես...

Արկածներիս կարմիր կարոտներում փնտրած՝
Ինձ չըժպտաց և ո՛չ մի Նավզիկե,
Եվ ինչ տալու էի ես աշխարհում նրանց—
Իմ չսիրած աղջիկ, տվեցի քեզ...

Ինչ որ դեռ դուրս մնաց իմ երգերում զրած
Իմ կրքերի կարմիր ավազի մեջ,—
Ինչ որ տալու էի ես աշխարհում նրանց—
Կյանքում տվեցի քեզ, իմ Նավզիկե՛։

Ուղիներում կյանքի, բիրտ օրերում մեր այս,
Ինչ որ կարոտ էր, հուր— ես տվի քեզ,
Որ չըմնա երազ էլ, որ երազեմ նրանց,
Որ չկանչե էլ ո՛չ մի Նավզիկե։

Սակայն կրկի՛ն, կրկի՛ն, նայադների նման,
Կարոտների ձայնով կանչում են ինձ,
Խոստանալով սիրո անհատնելի հմայք՝
Թե ինձ տալով միայն մահո՛ւ կսկիծ։

Ո՛չ գգվանքներս՝ քեզ շոայլորեն ցրած՝
Գիշերներիս կարմիր երազի մե՛ջ,—
Ո՛չ կարոտներս անհուն՝ իմ երգերում զրած,
Ջսպառեցին կարոտն իմ, Նավզիկե՛։

Նայադների՞ նման, նայադների՞ նման,
Կարոտների կանչով կանչում ես ինձ,
Եվ կանչելու ես ինձ, քանի կյանքում դեռ կամ,
Խոստանալով ինձ սե՛ր, տալով կսկիծ...

Դու կանչելու ես ինձ, մինչ աչքերով հանգած՝
Վայրկյաններիս վերջի՛ն երազի մեջ,
Ի՞նձ կընդունե վերջին կարոտանքիս կառչած՝
Արքայադուստրն իմ սև, իմ Նավզիկեն...

Եվ կկանչեն նրանք մինչև անշնչացա՝
Վայրկյաններիս վերջի՛ն երազի մեջ՝
Ինձ համբուրի, իբրև իր Ուլիսին տեսնած՝
Վերջին շնչիս կառչած իմ Նաբզիին։

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Կնոջս և բարեկամիս՝ Իզաբելլային

Իմ մահվան օրը կիջնի լռություն,
Ծանր կնստի քաղաքի վրա,
Ինչպես ամպ մթին կամ հին տրտմություն
Կամ լուր աղետի՝ թերթերում գրած։

Ծանոթ կնոջ պես այրի կամ դժբախտ,
Բարեկամուհու նման տխրատեսք,
Լուրը կշրջի փողոցները նախ,
Ապա կմտնի դուռ-դարպասից ներս...

Իբրև ծերունի մի թերթավաճառ՝
Հուշիկ քայլերով և համարյա կույր,
Կշրջի բոլոր տներն անպատճառ
Ու կհայտնվի ամեն մի բակում։

Ստվերի նման, սահած տնից-տուն,
Կկանգնի անտես հյուրի պես մռայլ,
Կկանգնի ինչպես դժնի լռություն՝
Տարածված ամբողջ քաղաքի վրա։

Եվ համր՝ մի պահ՝ գիշերվա կեսին,
Բոլորի սրտում կկանգնի հանկարծ,
Անհաղորդ, ինչպես հեռավոր լուսին,
Իմ դեմքը՝ արդեն հավիտյան հանգած։

Եվ մարդիկ՝ երեկ կյանքիս անծանոթ,
Եվ երբեք, երբեք դեմքս չտեսած,

Եվ մարդիկ՝ միայն երբեմն ինձանով
Իրենց ֆանտաստիկ առասպելն հյուսած,

Եվ մարդիկ՝ անդամ երգերիս անգետ,
Մարդիկ, որ թեև՝ կյանքիս արձագանք,
Բայց եղել են լոկ վկա անտարբեր
Եվ կարծել են, թե ես վաղուց չկամ,—

Այդ բոլոր մարդիկ իմ մահվան բոթից,
Որպես ընդհանուր աղետից սարսված՝
Ջարմացած կղզան ինձ այնքան մոտիկ
Եվ հանկարծ այնքան թանկ ու հարազատ...

Եվ երկրում, ինչպես բարձրանա փոշի,
Եվ հոգիներում, ինչպես հուշ հառնի,—
Ելնելով անցած օրերիս նաշից,
Իմ ուրվականը պիտի սավառնի։

Եվ քաղաքներում, և գյուղերում խուլ,
Անցորդներն՝ իրար անծանոթ անդամ,
Աչքերում իրար և հայացքներում
Պիտի միևնույն թախիծը կարդան...

Եվ դեմքով տխուր, և լուռ աչքերով
Պիտի միևնույն սուգը հաղորդեն,
Երգերիս հանդեպ անսահման ներող,
Մոռացած բոլոր հանցանքներս արդեն...

Կբանան ոմանք իմ գիրքը գուցե,
Կթերթեն դանդաղ, կկարդան տողեր,
Տարտամ շարժումով գիրքը կդոցեն,
Եվ թախիծը խոր հուշս կողողեն։

Եվ գուցե միայն սենյակում մի խուլ,
Գլուխը թեքած պատկերիս վրա՝
Կնայի մի կին աչքերիս տխուր,
Եվ կարցունքոտվեն աչքերը նրա։—

Եվ ինչպես կյանքում տարիներ առաջ
Հուշերում հանկարծ անցյալը բուրի,
Երազանքներում գուցե իմ անցած
Եվ արդ իմ հառնած գրկում հուշերի։

Այն, որ ես էի, որ իմն էր առաջ,
Արդեն չի հառնի և ոչ մի գրքում,
Եվ ո՛չ մի գրքում՝ աշխարհում գրած,
Եվ ո՛չ մի գրքում, և ո՛չ մի գրքում...

ԷՊԻՏԱՖԻԱ

Ասա՝ Կոմիտասն է հանգչում՝ իբրև հող և աճյուն
առհավետ։
Սիրտ մոխրացած, դարձած հող՝ երբեմնի անոթ ձայնած!նն։
Ա՛յր մահացու՝ աշխարհում նա եղել է դպիր, վարդապետ։
Այր մշտատև՝ ձայնապետ— ձայների արքա— ձայնադիր։

«ԻՄ ԼՈՒՍԱՍՏՂԸ»

Ցառավոտ կանուխ բարձրացի՛ր,
Երբ դեռ նո՛ր մարմանդ լուսանում է։—
Կտեսնե՛ս Լուսաստղը կապտածիր,
Որ պայծառ ցոլքով բարձրանում է։—

Ախ, այդպե՛ս բարձրացավ մի օր
Աշխարհում, Ջարե՛նց, քո անունը...
Բայց հետո— կլանեց անհունը
Քո լուսաստղը— ցոլուն, ոսկեոր...

Այդ ո՛չ թե Արևն էր՝ բարձրացավ—
Եվ սրբեց ոսկեզօծ քո ցոլքը
Իր շքեղ ցոլքերով պայծառ։—
Ո՛չ։— Ջնչին ամպերի սև զորքը

Պաշարեց Արևի՛ց առաջ քեզ,—
Իսկ այնտեղ, ներքևում,— երգի սով էր,—
Բայց ցնծում էր Պառնասն— առանց քե՛զ...

*
* *

Կրկին կանգնած եմ ես ինքս իմ դեմ շվար՝
Անօդնական, մենակ, ինչպես կաղնի հանդում,
Ուր ոչ մի ծառ չկա, ուր տագնապով անդուլ
Քամիներն են միայն շաչում դժնի ու հար,
Ուր գորշ հողին կպած լոկ մի քանի մացառ,
Որպես մարդիկ, որ մի գաղտնիք են իմանում,
Փսփսում են իրար ինչ-որ անհայտ անուն,
Երազելով մի հարթ, մի անկաղնի բացատ...

16—9—1936

Եվ ի՞նչ պատահեց կյանքում արդարև,
Որ ձեռքս հանկարծ հոժար, ինքն իրեն
Իմ գրած բոլոր տողերի վերև
Ջոր թվականներ սկսեց գրել...
Եվ վերնագրերն այդ սովորական,
Որ բառեր էին գրված թանաքով,—
Խորհրդանիշեր դարձան մոգական՝
Ինչպես խաչն առաջ՝ մահ նշանակող։

ԻՄ ՄՈՒՍԱՅԻՆ

(Ռոնդո)

Մաքուր իմ սեր, միակ իմ զեն,
Միակ իմ հուր, իմ սուր, իմ զարդ,
Հույս իմ լուսե, քույր իմ հպարտ,—
Իմ անաղարտ սիրո հույզեր,—
Լո՛ւյս իմ կյանքի, հո՛ւյս իմ զվարթ...

Ամեն վայրկյան ու ակնթարթ
Դո՛ւ ես միայն ինձ հետ կիսել
Թե՛ վիշտ, թե՛ վերք, թե՛ երգ, թե՛ վարդ,—
Մաքո՛ւր իմ սեր։—

Ինչպես անգետ մանկան համար
Թռիչք ու վազք, ու կարուսել,—
Ինչպես երգչին— քնքուշ քնար,
Ջորավարին— անկոր սուսեր,—
Իմ զե՛ն, իմ սո՛ւր, իմ հո՛ւր անմար,—
Անհուն իմ սեր...

*
* *

Ջնչին, ինչպես Արարատին նետած քար՝
Դավերը սև մարդուկների այդ անկար—
Օ, չըհասած քղանցքներին անգամ քո՝
Վայր են թափվում համայնացած քո կամքով—
Եվ առհավետ կորչում անզոր ու անկար,
Ինչպես անհաս Արարատին նետած քար...

REQUIEM AETERNAM

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ա

Հայրենի երգն ես դու մեր՝
Վերադարձած հայրենիք։—
Դեմքիդ տանջանքն է դրել
Անագորույն մի կնիք։—
Եվ հանճարի հեռակա
Հուրն է հանգչում ճակատիդ,
Ինչպես մարող ճառագայթ
Արարատի գագաթին։—

Բ

Հայրենի ե՛րգն ես դու մեր
Հալածական, ինչպես ամպ,
Որ քամիներն են ցրել
Եվ տարիներն ապստամբ։—
Ժողովրդի հանճարեղ
Սրտով երկնած ձայն ու շունչ,
Որ բարբառել ես դարեր
Օտարության մշուշում։

Գ

Առանձին ձայնն է ինչպես
Դառնում հնչյուն հայրենի—
Դաշնության մեջ լոկ հնչեղ
Հայրենական ձայների,—
Այդպես մեր հին դաշնության
Ով մարգարե տարագիր,—
Դու գտանում ես ահա
Ե՛վ ժողովուրդ, և՛ երկիր։

Դ

Հայրենի երգ մեր վսեմ,
Հազարամյա՜ մեր հանճար,—
Լոկ ժողովո՛ւրդն է հյուսել
Քո դաշնությունը պայծառ,—
Քեզ ժողովո՛ւրդն է խոնարհ
Տառապանքով իր ծնել,
Իր ավյունով պահել վառ,
Իր ոգու մեջ ընդունել...

Ե

Քեզ ժողովո՛ւրդն է չարքաշ
Իր բորբ շնչով տվել շունչ,—
Ո՛չ մի իշխան կամ արքա
Քեզ չի՛ պահել իր նաշում։—
Թե՛ հայրենի, թե՛ օտար
Տիրողների համար միշտ
Եղել ես— ձա՛յն որոտան,
Եվ հա՛ր օտար, և ո՛ւրիշ։—

Զ

Դու աշխատա՜նքն ես երգել
Եվ քրտինքը մաճկալի,—
Անջո՛ւր հանդեր ու հերկեր,
Սիրո երգեր անձկալի...
Դու պանդուխտի տարագիր
Սի՛րտն ես երգել կարոտող՝
Անհայրենիք արագիլ՝
Կապված հուշի նարոտով։—

Է

Հնչյուններ ես հավաքել
Հենքի համար քո երգի
Դու՝ հանդերից մահաբեր
Հայրենական եզերքի.—

Եվ հայրենի հանդերի
Մրմունջներից չմարող
Հյուսել ես երգ անթերի
Սերունդների համար նոր։—

Ը

Դու երգել ես միայն ճորտ
Ժողովրդի համար մեր
Երգեր՝ կյանքի նման խոր
Եվ զրկանքի նման վեհ։—
Եվ երգերում քո անհուն—
Ժողովրդի սրբազան
Սի՛րն է միայն վեհանում
Եվ աշխատանքը դաժան։—

Թ

Դու երգել ես միայն բորբ
Ժողովրդի սրտում մեր
Վառվող ցնորքն անհողդողդ՝
Իր գալիքի մասին վեհ։—
Հայրենիքի՜ մասին նոր,
Կյանքի, որ հաշտ ու աղատ—
Ծնվելու է արյունով
Եվ զոհերով սրբազան...

Ժ

Քո ժողովո՛ւրդն է խոնարհ
Քո երգերում անրջել՝
Իր կյանքի տենչն անհնար
Եվ սիրո շունչը հնչեղ։—
Խաղաղությունն հաշտ ու սուրբ՝

Տանիքների վրա մեր,—
Եվ սիրո խոսք ու շշուկ,
Հասկերի երգ ու համերգ...

ԾԱ

Մեղմ՝ կարկաչում էր քո ջերմ
Երգը՝ երկրում մեր անշող—
Տանիքների վրա մեր
Եվ սրտերի ղողանջող։
Կարկաչում էր նա հուշիկ,
Մինչև խորշակն այն դաժան
Հո՜ւշ դարձրեց ու փոշի
Երկիր ու երգ սրբազան...

ԾԲ

Քեզ չմնաց անգամ քո
Հայրենի հող կոչվող սև
Այն հեռաստանն արնակոխ,
Որ քո ցնորքն էր լուսե։
Քեզ չմնաց անգամ ժանտ
Այն արեգակն հայրենի,
Որ ավելի՜ էր դաժան,
Քան թշնամին վայրենի...

ԾԳ

Քեզ չմնաց անգամ քո
Գորշ ժողովուրդն այն չարքաշ,
Որ, ինչպես եղ գլխիկոր,
Տքնում էր լուռ ու չարքաշ.—
Սև զրկանքում մտորող
Քո ժողովո՜ւրդն անգամ հեղ,
Որ լոկ հացի ու սիրո
Հույզերո՜վ էր սնում քեզ...

ԾԴ

Քո ժողովուրդը չարքաշ,
Հազարամյա զրկանքով,
Հազա՜ր սրով զարկած հար՝
Մարտիրոսյա՜լ իր կյանքով—
Իր եզերքում հայրենի
Հազիվ գտած հող մի բուռ—
Քշվե՜լ է հար իր բնից,
Իր խրճիթից ընդհանուր...

ԾԵ

Քեզ չմնաց անգամ քո
Հայրենիքում դեռ աճած՝
Մի բուռ ցնորք, մի խուրձ խոտ
Կամ թոնիրում թիաած հաց...
Գերի երկրում քո անթով
Անգամ մի մա՜յր, որը քեզ
Սնե՜ր անգին իր կաթով
Եվ հավատով իր փրկեր...

ԾԶ

Չար ուրագան մի շաչող,
Դաժան մրրիկ մի ահեղ—
Քշեց շյուղի նման չոր,
Հողմի նման խելահեղ,—
Եվ տերևներ ինչպես հին՝
Ծառից ընկած ու անկյանք—
Քշեց երախը մահի
Թե՛ մայրերին, թե՛ մանկանց...

ԾԷ

Չարհուրելի եռանդով,
Ինչպես քաղցած մի գազան—
Սրբեց կամքով մի քանդող

Երկիր ու տուն սրբազան...
Լափեց եզերքը քո հին՝
Ե՛վ ժողովուրդ, և՛ վաստակ,—
Եվ անապատ ամայի
Դարձավ երկիրն Հայաստան...

ԺԸ

Ինչպես գրքից պոկված թերթ,
Կամ չորացած արտի շյուղ,
Նետված հողմով այն անեզր
Մահվան քամուն ու փոշուն,—
Դու՝ հանճարի նման մեր՝
Հաղարամյա ուրվական՝
Դարձար տերև մահամերձ,
Քշված ոգի ու վկա...

ԺԹ

Հողմով տարված ինչպես շյուղ,—
Ուղիներում դու տեսար
Հրաճարակ կյանք ու խուղ,
Եվ ժողովուրդ հրկիզած,—
Ինչպես մահո՛ւ մանգաղով,—
Տեսար գյուղե՛ր դու հնձած,—
Այդ ժողովո՛ւրդն էր քո ոգի,
Որ քեզ տվեց երգի ձայն...

Ի

Եվ արդեն խո՞լ դարձած հողմ,
Խուղերի ծուխ ու փոշի՝
Քշված ձեռքով անողորմ
Ջարհուրելի մի ուժի,—
Խելակորույս քո ոգին
Դո՛ւրս շպրտվեց երկրից հար,—
Եվ թափառեց տարագիր,
Իբրև մեռա՛ծ երգի բառ...

ԻԱ

Վիթխարի եզ մի ինչպես՝
Սովից տոչոր՝ հանկարծ գա,
Լիզե մի ողջ ոսկի դեզ
Եվ չթողնի հե՛տք անգամ,—
Այդպես աղետն այն զարհուր
Անցավ բարձրիկ քո դաշտից,—
Եվ դաշտն ամբողջ դարձավ մո՛ւր,
Ինչպես արտը՝ երաշտից։—

ԻԲ

Հալածակա՞ն, որպես քո
Ո՛ղջ ժողովուրդն այն պահին—
Խելակորույս քո ոգով
Ջտրվեցի՞ր դու Մահի...
Ո՛չ.— չմեռա՛ր այնժամ դու,
Այլ սարսափից խելագար՝
Երազեցիր դառնալ տուն,
Որ աշխարհում էլ չկար...

ԻԳ

Եվ՝ սարսափից խելագար
Ե՛վ գզգվված, և՛ բոկոտն
Մահվան սքեմ դու հագար
Եվ սնվեցիր քո ոգով։—
Բայց քո ոգին չքամեց
Եվ չէ՛ր կարող քամել ժանտ
Այն զոհերի մեծամեծ
Արյունը սուրբ ու անչափ...

ԻԴ

Անհնարի՞ն էր, Վարպետ,
Որ քո ոգին ստեղծող
Հղիանա՛ր ու արբեր

Ավյունով ժանտ ու խոցող...
Անհնարին էր, որ քո
Երգի ոգին հանճարեղ
Նաիրական իր երգով
Այնժամ երգեր մի արև...

ԻԵ

Անհանգրվան, ինչպես նոր
Հալածական Արքա-Լիր՝
Սրտում քո՝ սո՜ւրբ մի ցնորք՝
Անէացած մի երկիր,—
Զգեցած մահ ու սարսափ,
Տեսած և՛ ահ, և՛ դժոխք,—
Ինչպես կարող էր անսալ
Ոգին քո կյանք ու ցնորք...

ԻԶ

Քո հին սրինգը գրկած,
Իբրև մանուկ մի ազատ,
Որ դեռ պահում է երգած
Երգերիդ շունչն հարազատ,—
Քո այդ եղեգն երգեցիկ
Հեռու ափեր դու տարար,
Բայց դու երբեք չերգեցիր
Նրանով— ե՜րգ փրկարար...

ԻԷ

Անհանգրվան տարվեցիր
Երկրից-երկիր, որպես մերկ,
Անհայրենիք մուրացիկ,
Որ հացի տեղ—ունի՛ երգ։—
Բայց չլսեց ոչ ոք քեզ,
Քեզ ոչ մի սիրտ չգթաց,—
Միայն քամին մորմոքեց,
Միայն անձրևն իջավ թաց...

ԻԸ

Եվ ափերում այն օտար,
Ուր քեզ նետեց հողմը սև—
Դու ունկնդիր չգտար,
Իսկ պատահմամբ թե լսեց
Քեզ մի անցորդ կամ մոլոր
Մի ուղևոր հոգնաբեկ,—
Տեսար, որ նույն հողմերով
Քշվածներ են նրանք հեք...

ԻԹ

Նրանք՝ իրենք—տարագիր,
Իրենք՝ և՛ որբ, և՛ անճար—
Ունկնդրում են քո երգին,
Որ երազեն ու տենչան,—
Որ՝ բռնելով քո թելից
Իրենց սրտով կարոտող
Դառնան երկիրն այն էլի,
Գոնե հուշով փարատող...

Լ

Ինչ պիտի տար սրտին քո,
Քո հանճարին որբացած
Նրանց անհող արցունքով
Ցողված ոգիդ նրբաձայն...
Հեռու երկրից քո այն վառ,
Ժողովրդից՝ դարձած հուշ—
Ո՞նց քո ոգին որոտար
Կարոտանքից նրանց ուշ...

ԼԱ

Որքան էլ պի՛րկ նա լիներ՝
Ստեղծագործ քո ոգին—
Ո՞ր դաշտերում նա հիներ
Երգն իր անմահ մորմոքի...

Ա՜խ, ծաղկի սերմն 'Հայրենի'
Հող չի՛ հաճախ ճանաչում,—
Բայց սե՛րմն հոգու— միայն իր
Հայրենիքում է աճում...

ԼԲ

Ամայացա՛վ քո ոգին,
Ինչպես անջուր հանդի հող,
Եվ մազերին քո չոքեց
Ցմեռ ու ձյուն անողոք։—
Եվ գիտնահար, որպես ծառ՝
Պոկված հողմով կատաղի—
Բեկվեց ոգին քո պայծառ՝
Առանց բույրի ու շաղի։—

ԼԳ

Քո հեռավոր երկրի ջեռ
Արոտների նման ա՛յն,
Որ դարձրեց սև մի ձեռք
Հերկ՝ խորշակյալ և ունայն,—
Խորշակյալ դաշտ դարձավ չոր
Այդպես ոգի՛ն քո հնչեղ,
Որ ո՛չ արև կենսաշող,
Ոչ հույսի շող չշնչեց։—

ԼԴ

Հո՛ղ ցանեցիր ու մոխիր
Քո մազերին զառամյալ,—
Եվ՝ հալածված ոսոխից՝
Երազեցիր միայն մահ...
Ջառանցանքի մեջ զարհուր
Երազվեցին քեզ հեռվից—
Հրդեհ ու ջարդ ընդհանուր
Եվ գլխատում արևի...

ԼԵ

Ապա խավար իջավ խոր
Եվ հանճարեղ քո ոգում
Փռվեց գիշեր ու ժխոր,
Եվ մտքի մուժ բորբոքուն.—
Եվ տարինե՛ր անցան սին,
Եվ քո ոգին խելագար
Կիզվեց հուրո՛վ այն զաղիր,
Մինչև գիշեր վերջին գար։—

ԼԶ

Ո՛վ հայրենի մեր երգի
Հրե հանճար տառապած.
Դու չտեսա՛ր քո երկրի
Արշալույսը փառապանծ...
Իբրև աճյո՛ւն դու եկար,
Իբրև մեռա՛ծ տարագիր,—
Հին դաշնության դու վկա
Եվ առաջին քարակիր...

ԼԷ

Անհանգրվան, ինչպես մի
Տերև, պոկված իր ծառից՝
Քեզ վտարեց մի քամի
Քո հայրենի աշխարհից,—
Եվ քո ոգում՝ հայրենի
Հուշն արյունով նա նշեց—
Ջառանցանքով արյունի՝
Հորդած կարմիր մի գիշեր...

ԼԸ

Ճի՛շտ է, Վարպետ։— Քո ոգուն
Իջած մուժի՛ նման մառ—
Եվ հալածող մահաթույն,
Եվ խավարի պես խավար,—

Այն օրերում մեր երկրի,
Մեր աշխարհի՛ վրա ողջ—
Իջել էր սև՛ ավերքի
Զարհուրելի մռայլ քո՛ղ...

ԼԹ

Այն օրերին արդեն մեր
Ողջ աշխարհում համարյա՝
Նստե՛լ էր սև, ինչպես նեռ,
Մեր սև ոսոխն հնօրյա,—
Ինչպես բերքի տեղ հանդի՝
Հնձեն թուփեր վարդենի,—
Այդպես մահու գերանդին
Հունձն էր արել արդեն իր—

Լ

Ո՛ղջ աշխարհում արդեն մեր,
Ծայրեհիծայր համարյա
Կենդանի հունտ էր ինչ դեռ
Պարտեզներում հնօրյա,—
Եվ՝ ամենից առաջ՝ ինչ
Բողբոջ ու ծի՛լ էր ոդու՝
Որ շյուղ անգամ էլ չաճի—
Հնձել էր ձեռքն ահարկու—

ԼԱ

Վերջին հողի վրա լոկ,
Վերջին քարին հայրենի,
Ցցված կղզու նման շոգ՝
Օվկիանում արյունի,—
Վերջին քարի վրա այդ,
Դեռ մնացած անողող՝
Զառանցում էր հուսահատ
Մեր ժողովուրդը՝ դեռ ողջ...

ԼԲ

Զառանցում էր կիսամեռ
Ժողովրդի մեր մի բուռ
Մնացորդը, որ չուներ
Էլ փրկության կարծես դատ—
Հորդաներով ամեհի
Շրջապատված ու ողող՝
Տերն էր նաև «հայրենի»
Քշում անդունդն անողոք...

ԼԳ

Ինչպես մարդկանց նավաբեկ՝
Կառչած լաստին մոտեցող—
Ծովահենն է հրում լերկ
Մոլեգնությամբ դեպի ծով.—
Ժողովրդի ինչպես մեր
Բեկորները այդ չնչին.—
«Հայրենական» տերն էր դեռ
Հրում անդունդը վերջին...

ԼԴ

Փորձանքներից հարատև
Արդեն կորած, անուղի,
Այդ շյուղն անգամ մահամերձ
Ժողովրդի ու հողի,—
«Իր» տերերի ձեռքով սև,
Որպես դիակ՝ կրծքին քար—
Պիտի սուզվեր վերջապես,—
Թե փրկությունը չգար...

ԼԵ

Բայց փրկությունը՝ եկավ
Խո՛ր խավարում, ինչպես լույս
Արեգակի հեռակա,
Որ ճառագում է վերուստ...

Որպես հրա՜շք նա եկավ,
Որպես որո՜տ շառաչեց,—
Խնդությունից խելագար,
Մի փրկչի՜ պես փառաճեմ...

ԽԶ

Մեզ հայրենի տվեց հող,
Հերկ՝ ձեռքերով մեր հերկած,—
Դաշտ՝ արգանդում իր պահող
Հանճարի հունտն արևկա.
Հանճարի հուրը այն որբ,
Որ դարերից մինչև մեր
Այս օրերը հրաբորբ,
Երգն է երկնել մեր անմեռ...

ԽԷ

Եվ եղերքում մեր նորոգ,
Հայրենիքում ահա մեր—
Արդ ողջունում ենք սիրով
Ջո վերադարձը, Վարպե՜տ։—
Իր տարագիր հանճարի
Վերադարձն է տոնում արդ
Ժողովուրդը քո արի
Հայրենիքով իր անպարտ։—

ԽԸ

Հազարամյա ճո՜րտ անհող
Իմ աներկիր ժողովուրդ,
Էլ չկա քեզ կործանող
Ոչ մի դժնի, խեղդող ցուրտ.—
Եվ հնամյա իր երգով
Գիրկն է դառնում քո անմահ—
Ահա քո շուրջը երգող
Քո ձայնաբերը անմահ։—

ԽԹ

Վերադարձել է ահա
Քո հայրենիքը ազատ,
Մեռած սրտում քո պահած
Նրա փոշին սրբազան.
Գուրգուրեցի՜ր այն խավար
Ջառանցանքում քո անդուռ,
Բայց չբացվեց քեզ համար
Դարձի շավիղ դեպի տուն...

Ծ

Հալածական երգ մեր հին,
Հանճարեղ ձայն դու մեր որբ,—
Դեմքիդ կնիքը մահի,
Բայց միշտ անմահ ու միշտ բորբ.—
Ջորս ծայրերում աշխարհի
Ինչքան եղար դու խաչված,
Մինչ հայրենիք դառնայիր՝
Նոր պայքարում նվաճված...

ԾԱ

Օ՜, հնամյա դու մեր հույս՝
Ողու զրույց դու մեր հին,
Որքան զրկանք ու կորուստ
Եվ լուսե զոհ մենք բերինք—
Մինչ այս դարձի համար քո,
Եվ հայրենի, և ազատ—
Այլ պայքարով ու երգով
Հիմնեցինք հող հարազատ։—

ԾԲ

Եվ չգիտեմ ես՝ արդյոք
Կա՞ աշխարհում մի այլ երգ,
Որ քո երգի նման խոր,
Եվ արնաթոր, ինչպես վերք—

Ժողովրդի սրտում իր
Տարիներով որբացած
Լինի այնքա՞ն մտերիմ,
Որքան ուզին՝ նոր բացած։—

ԾԳ

Եվ չտեսար, ո՛վ երգիչ,
Այս հայրենիքը նորոգ,
Որն իբրև մայր ամոքիչ
Արեալին իր սիրով
Բուժեր քո սիրտը խոցված
Սև տեգերով անցյալի,
Դափնեպսակ դներ պարզ
Քո ճակատին պանծալի։

ԾԴ

Իբրև աճյուն դու դարձար
Քո հայրենիքը, որ քեզ
Հուշ էր թվում սրբացած,
Մեռած զրույց, որ որպես
Արդեն անդարձ, կորած հեք,
Ննջած մի այր՝ դարձած հող,—
Չի՛ բարձրանա էլ երբեք,
Որ արևի ըմպի շող...

ԾԵ

Արդյոք կարո՞ղ էր քո սուրբ,
Բեկված հոգին երազել,
Որ դառնալու ես մի օր
Քո հայրենիքը վանեմ,
Որ պիտի շուրջդ բուրի
Սերն ու ղգվանքը մեր այս
Եվ Չարենցը համբուրի
Քո շրթունքները մեռած...

ԾԶ

Բայց հայրենի երկրում քո,
Մայր-քաղաքում նրա հին,
Պատվանդանի վրա նոր
Եվ սրտերի վրա հիր՝
Ահա մարմինը քո սուրբ,
Իբրև մասունք զմռսած՝
Բարձրացել է վեհաշուք
Եվ բարձրաբերձ՝ իբրև սար...

ԾԷ

Սեր է բերել ու գորով
Քո ժողովուրդն ահա քեզ—
Քո հնօրյա երգերով
Օրորելով սիրտդ կեզ։—
Սիրտդ տանջանք տեսած լոկ
Եվ չարչարանք կրած հեզ,—
Ահա քեզ փա՞ռք երգելով՝
Այնքան հպարտ ենք արդ, տե՛ս...

ԾԸ

Կարոտով խոր իբրև վերք
Եվ երկյուղով սրբազան—
Խոնարհվել եմ ահա ես
Աճյունիդ դեմ երգաձայն,—
Սիրտն ու հոգին իմ ահա
Նույն ափսոսանքն են հորդում՝
Օ՜, իմ անդարձ ննջած հայր,
Որ չտեսար քո որդուն...

ԾԹ

Կարծես տեսել եմ ես քեզ,
Մանկությունից մինչև մահ
Դեզերել եմ կարծես ես
Ուղիներում այն ամա։—

Բռնած քո ձեռքը դողդոջ,
Հանուն ջրի ու հացի՝
Դեգերել եմ որպես գող՝
Կույր իմ հոր հետ մուրացիկ...

Կ

Այդպես բռնած ձեռքը ծեր
Հալածական իմ հոր՝ ես
Հաց եմ լեղի մուրացել
Հեռուներում աղեկեզ.—
Ցուրտ բակերում ժամերի
Հիվանդ հոր հետ իմ պառկած՝
Երազել եմ ես մեր հին
Տունն հեռավոր, ինչպես հաց...

ԿԱ

Սվ հեռավոր մի ժամի
Պատերի տակ ցրտահար՝
Ես առաջին անգամ ինձ
Երջանիկ եմ տեսել, հա՛յր—
Հա՛յր, առաջին անգամ ես
Կյանքում ժպիտ տեսա քո
Շրթունքներին, երբ որ քեզ
Մի բաժակ թեյ տվի գոլ...

ԿԲ

Հետո փակել եմ հոգնած
Քո աչքերը՝ ընկած խոր,—
Եվ քարերին այն պառկած՝
Ննջել կողքին մեռած հոր—
Առավոտյան իմ մռայլ,
Իմ մեռած հոր դեմքին ցուրտ—
Երանության անայլայլ
Ժպիտն էր նույն հանգչում լուրթ...

ԿԳ

Եվ հողմերին հեռավոր
Տալու մարմինը քո, հայր,
Կարո՞ղ էի ես արդյոք
Ջառանցանքում անգամ վառ—
Օ՜, երազել անգամ լույս
Վերադարձիդ մասին այս,—
Որ հայրենիք ես գալու,
Իբրև աճյուն դմռսած...

ԿԴ

Մի՞թե իրոք դու այն բիրտ
Ծերունին չես ննջած հար,
Որ անունով միայն իր
Կոմիտաս չէր, այլ Աղդար—
Ինչպես մեռած մարդարե
Քարաքանդակ իր նաշում,
Մի՞թե դու չես երկարել
Այն իրիկվա մշուշում...

ԿԵ

Եվ մատները այն դողդոջ,
Մոմե մատներն այն բարակ,
Որ փակեցին մի օր քո
Հոգնած կոպերն անկրակ՝
Չէի՞ն արդյոք այն իմ խեղճ
Մատները որբ՝ դեռ գերի
Նվագների տրտմաշնչտ
Եվ տերյանյան երգերի...

ԿԶ

...Իբրև մեռած մարդարե՝
Պառկել էր նա այդպես միշտ,
Դեմքը մի քիչ երկարել
Եվ խաղաղվել էր ընդմիշտ—

Իսկ անդագաղ նրան երբ
Իշեցըրինք գերեզման—
Խաղաղությամբ նայեց վեր
Եվ արքայի էր նման...

ԿԷ

Եվ վայրկյանին ահա այդ,
Երբ որպես սուրբ մի նաշեց,
Արքայական վեհությամբ
Նայեց նա խեղճ իր փոսից,—
Ես հասկացա, որ այդ խիստ,
Այդ մռայլ մարդն աշխարհում
Բարի մի հայր էր միայն
Եվ տխրությունն էր սիրում...

ԿԸ

Այն տխուր մարդն էր, որ իր
Մռայլ տեսքի տակ ուներ
Մի անսահման սիրող սիրտ
Եվ երազի հեռուներ,—
Որ ահաբեկ իր կյանքում
Ոչ մի անգամ չժպտաց,
Բայց գիտեի, որ հոգում
Ունի հուրեր մշտակայծ...

ԿԹ

...Տխուր մի մարդ էր նա լոկ
Եվ երազող ուներ սիրտ,
Ուներ ոգի համբերող,—
Դեմքն էր միայն նրա բիրտ—
Դեմքն էր նման փականքի,
Որ նա երբեք չբացեց,—
Ահաբեկվել էր կյանքից
Եվ զրկանքից քարացել։

Հ

Ո՛չ մի անգամ չժպտաց
Նա հոգնատանջ իր կյանքում։—
Տեսա ամպի պես մթնած
Ես նրա դեմքը մանկուց։—
Գոց մնաց դուռն երկաթե
Մինչև վայրկյանը մահվան,—
Եվ միայն մայրս գիտեր,
Որ այնտեղ սերն է պահված։

ՀԱ

...Չհամբուրեց աշխարհում
Զավակներին նա երբեք,—
Եվ ժամերով նստած լուռ՝
Չպատահեց, որ արբեր։—
Մարդու հանդեպ չարացած՝
Ո՛չ խոհերի, ո՛չ հացի
Նա չունեցավ բարեկամ,
Լռությունից իր բացի։

ՀԲ

...Եվ տարիներ միայն վերջ՝
Արդեն բեկված, արդեն լուրջ՝
Նոր հասկացա միայն ես,
Երբ նրա պես դարձա լուռ—
Որ երգերում բոլոր իմ
Եվ խոհերում այնքան վեհ՝
Ինչ կա անհուն ու խորին,
Այդ միայն նա՛ է տվել...

ՀԳ

...Որ իր ամբողջ կյանքում լուռ
Ի՛նչ չէր վատնել նա երբեք,
Ի՛նչ չէր այրել իբրև հուր
Եվ չէր երգել իբրև երգ,—

Երազներում իր տխուր,
Պահած անգամ իրենից.—
Թաքցրել է այնքան խոր,
Որ իբրև գանձ բաշխի ինձ...

ՀԴ

Կա տառապանք անվեհեր
Նաիրական քո դեմքին՝
Խոհն աշխարհի այն ավեր,
Շողն հանճարի աներկիր...
Նա էր այդպես պառկել վեհ
Մի օր հողե իր փոսում—
Որպես վկա հանճարեղ՝
Հազարամյա մի նաշում...

ՀԵ

Եվ հիրավի՛.— դու անմահ
Հայրն ես երգի մեր համայն,
Որ տարագիր գտած մահ՝
Տուն ես դարձել արդ միայն։—
Դու թաղվելու ես եկել
Երկրում քո նոր, որ արդեն
Դարձել է հաշտ ու հզոր
Եվ քեզ բերում է վարդեր...

ՀԶ

Կարդում եմ ես քո հոգնած,
Մագաղաթյա կոպերին
Եվ ճակատի վրա բարձր—
Մտերմություն մի վերին։—
Նույն մտորումն ու անհուն
Նաիրյան խոհն հարազատ,—
Նույն երազանքն անանուն՝
Հազարամյա՜ երազած։—

ՀԷ

Ճգնավորի դեմքով ծեր՝
Մարտիրոսի դեմքով սուրբ,—
Օ՜, ուրվական դու վսեմ,
Թափառական մեր Հիսուս,—
Ճգնավորի ճակատով
Եվ մորմոքով վկայի՝
Նո՜ր ես հառնում ահա դու
Իբրև վկա ներկայի...

ՀԸ

Օ՜, վարդապետ անվեղար,
Որ վայրերում վրդովիչ
Ձայնի հովի՜վ լոկ եղար՝
Ձեռքիդ սրինգ մի թովիչ։
Դու աղոթքի փոխարեն
Ձայն խնկեցիր միայն վեհ—
Դեպի երկինք, որ բյուրեղ
Ժողովրդիդ սիրտն էր մեծ...

ՀԹ

Ո՜վ նաիրյան հանճարի
Հազարամյա դու տեսիլ,—
Որքան զրկանք ու չարիք
Դու աշխարհում կրեցիր.—
Մարտիրոսյալ հավիտյան,
Որպես անհող մարգարե—
Դու հանգրվան չգտար
Կյանքում—դարեր ու դարեր։—

Ձ

Եվ միայն արդ, Նահապե՛տ,
Դիսախռիվ, կորացած,
Հազարամյա հոգնարեկ
Թափառումից քո դարձած՝

Գիտի հառնի շողշողուն
Հանճարիդ հուրն այգաբեր,—
Եվ խոր հանգչեն մեր հողում
Քո ոսկորներն հոգնաբեկ...

ԶԿ.

Իբրև աճյո՞ւն դու դարձար
Քո հայրենիքը ազատ,—
Իբրև մասունք մի պայծառ,
Իբրև նշխար հարազատ,—
Եվ հայրենի քո հողում,
Հին հանճարի իբրև սերմ՝
Կբարձրանա՞ նա բեղուն,
Երկրիդ ցողով ցոդված ջերմ։—

ԶԲ

Իբրև աճյուն դու դարձար,—
Բայց հայրենի երկրում քո
Հանճարիդ հունան հրացայտ
Կբարձրանա՞ նոր բերքո՞վ։—
Բեղմնավորված սրբազան
Քո աճյունով և անեզր
Արեգակով մեր կիզած՝
Հոգն հազար ծի՞լ կաա մեզ։

ԶԳ.

Մե՞ծ ցնծություն է հիմա
Մեր սրտերում, ո՞վ երգիչ։—
Տոնն է երգի իր անմահ
Տոնում հառնած մի երկիր։—
Դարձի համար քո այս վեհ,
Վերադարձի քո անմահ—
Կյա՞նք ենք կերտել արդեն մենք
Ե՛վ արևոտ, և՛ անմահ։—

ԶԴ

Վերադառնա՞ն պիտի դեռ
Հազա՞ր սրտեր տարագիր,
Ջարհուրելի հեռուներ
Տարված հողմով հարաբիրտ։—
Իբրև սրտե՞ր կենդանի,
Իբրև աճյուն կամ մասունք—
Սրտեր քանի՞, դեռ քանի՞—
Հողն են իրենց երազում...

ԶԵ

Վերադառնա՞ն պիտի դեռ
Հայրենի հողը բուրյան՝
Իբրև նորո՞գ երկրի տեր՝
Ե՛վ Թումանյան, և՛ Տերյան։—
Շիրիմներից իրենց որբ
Իրենց դարձին են նայում
Ե՛վ Դուրյանի սիրտը բորբ,
Ե՛վ Մեծարենցն հմայուն։—

ԶԶ

... Միջագետքից— Օրենբուրգ,
Հելեսպոնտից մինչև Վան,—
Ո՞ր աշխարհում արդյոք սուրբ
Չկա մասունք նաիրյան...
Ո՞ր ափերով աշխարհի
Քո մերկ ոտքերը չանցան,—
Օ՜, նաիրյան հանճարի
Հազարամյա Սերմնացան...

ԶԷ

Պիտի դառնան դեռ հերթով
Տարագիրներն այդ անթիվ,—
Որ աճյունով կամ սրտով
Դառնան աղբյուր եռանդի։—

Կենդանի սիրտ, թե աճյուն—
Իբրև հունտեր հանճարեղ,
Բեղմնավորե՞ն պիտի սուրբ
Հայրենի հողն արդ իրենց։—

ԶԸ

Իսկ դո՛ւ, ոգի՛ երգի մեր,
Վերադարձած արդեն տուն,—
Օ, սրբազա՞ն բերքի պես
Ընդունեց սիրտը խնդուն.—
Ցնծությունից խելագար
Ժողովրդի սիրտը քեզ,—
Իբրև աճյուն դու եկար,
Բայց իբրև կյանք ընդունեց։—

ԶԹ

Ինչպես երգերը քո ջերմ,
Ժողովրդի սիրտը մեծ
Իբրև բարիք, իբրև սերմ
Մի ոգեղեն ընդունեց,—
Քեզ կընդունե այդպես հար
Հայրենի հողն արդարև—
Ե՛վ քո աճյունը արդար,
Ե՛վ քո ոգին հանճարեղ։—

Ղ

Թո՛ղ ամոքվի՛ վերջապես
Հազար սրով զարկված խոր—
Սիրտդ հողում մեր հրկեզ,
Որպես գրկում սիրած մոր։—
Որպես վսե՛մ ողջակեզ՝
Հոգնած աճյունը քո թո՛ղ
Գտնի հանգի՛ստ վերջապես—
Եվ հայրենի դառնա հող...

ՂԱ

Եվ հայրենի այդ հողից,
Ջանցած գարուն մի քանի—
Կելնեն շքե՛ղ և ուղիղ
Երգի շյուղե՛ր կենդանի։—
Եվ շշունջում երգեցիկ,
Հնչեղ երգում նրանց խոր—
Կապրի հանճարը քո ջինջ՝
Անմահ երթի՛ ելած նոր...

ՂԲ

Կխաղաղվի՛ վերջապես
Խոնջած աճյունը քո հար—
Դարձած մոխի՛ր կենսաբեր,
Դարձած ավյո՛ւն, դարձած քար։—
Անէացա՛ծ, սրբացած
Կապրի ոգիդ հմայող՝
Դարձած ելնո՛ղ երգի ձայն—
Եվ հայրենի՛ դարձած հող...

30—V—1936
30—XI—1936
(ՈՒՇ ԳԻՇԵՐ)

1923—1936
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԵՄՅԱՆ ԲԵԴՆԻ

«ԼԵՆԱ»

1912 թ. ապրիլի 4
(Բանվորների զնդակահարումը Լենայում)

Փարված իր փոքրիկ երեխաներին՝
Մարդուն է ահա կինը սպասում։
— Օ, մի՛ սպասի՛ր, նա ետ չի՛ գալու,
Թշնամու գնդակն հատու էր ու սուր։
Նա ընկավ դաշտում, և ո՛չ թե մենակ.
Քո ավագ որդին, մեռած աչքերով,
Դաժան թշնամու հարվածների տակ
Իր բանվոր հոր հետ պառկել է խոռվ։
Եվ շուրջը նրանց— ընկեր, բարեկամ
Ընկել են՝ կազմած ա՛լ հողաբլուր.
Եվ տաք վերքերից բանվորի արյան
Հեղեղն է հոսում կարմիր ու հուրհուր։
Փայլում է գարնան արևը պայծառ.
Չի՛ պատժի աստված չարագործներին...
Եղբայրնե՛ր, օ՛, թո՛ղ անիծվի՛ նա հար,
Ով որ մոռանա այս օրը խավար,
Ով այս արյունը թշնամուն ների։

ՎՈԼՖԳԱՆԳ ԳՅՈԹԵ

ԵՐԳ ԼՎԻ ՄԱՍԻՆ

Կար-չկար՝ բարի մի արքա՛ կար,
Ապրում էր նրա մոտ մի լու։
Սիրում էր նրան այդ արքան,
Ինչպես իր հարազատ որդուն։
Կանչում է նա մի օր դերձակին,
Տալիս է շտապ հրաման,
Որ լվին զգեստներ կարի
Եվ շքեղ հագցընի նրան։

Եվ ահա—մետաքս ու թավիշ
Զգեստներ ունի նա հագած,
Եվ կրծքին ունի ժապավեն
Եվ արծաթ շքանշան։
Դառնում է ահա նա մինիստր,
Փայլում է իր կրծքի աստղի պե՛ս։
Պալատում ամբո՛ղջ նրա ցեղը
Դառնում է թե՛ հայտնի, թե՛ մեծ։

Կծում են նրանք ու խայթում
Պալատում հիմա ամենքին,
Կծում են անգամ թագուհուն
Եվ չեն խնայում ոչ-ոքի՛։
Եվ չունի ոչ-ոք իրավունք
Կծած տե՛ղն անգամ քորելու,—
Այնինչ մենք իսկույն սպանում ենք,
Թե փորձի մեզ կծել մի լու...

*

* *

Բարեկա՛մ, անխախտ հասկացի՛ր դու սա.—
Դարում, ուր Ոգին ու Միտքն են հորդում—
Լոկ առաջնորդվել կարող է Մուսան,
Բայց ինքը արդեն չի՛ առաջնորդում։—

ԵՐԳ ԵՎ ՔԱՆԴԱԿ

Հույնը մարմին կերտելիս
Տրորի թող կավը։
Օ, հրճվի թող մարդը միշտ,
Երբ կերտում է լավը։

Բայց մենք սիրում ենք խառնել
Եփրատի հորդ հունը,
Եվ ձեռքերով մեր բռնել
Հոսուն բնությունը։

Ջուրը կարծր կդառնա,
Կհնչեն երգերը,
Եթե մաքուր են միայն
Պոետի ձեռքերը։

ՍԱՏԵՐՈՎԱՆ

Անվանում են պոետ մի մեծ
Բոլորը քեզ շուկաներում։
Երգում ես դու— ուրախ եմ ես,
Լռում ես— ջերմ ունկ եմ դնում։

Բայց սիրելի է ինձ անշուշտ
Համբույրը քո անխոս, անբառ.
Չէ՞ որ բառերն անցնում են շուտ,
Այնինչ համբույրն զգում ես հար։

Լավ է երգը, բայց հայեցումն
Ավելի է օգտակար մեզ.
Ուրիշներին երգեր դու տուր,
Մատերովակին— լռություն վիս։

ՎԵՆԵՏԻԿՅԱՆ ԷՊԻԳՐԱՄՆԵՐԻՑ

Ես պառկեցի գոնդոլում,— և սահեց նա կողքով նավերի՝ այն,
Ծանր նստած են որոնք Մեծ Ջրանցքի ջրերում։
Շատ ապրանքներ կգտնես նրանց մեջ, որ մեզ միշտ պետքական են՝
Հաց, պտուղներ և գինի, չոր, եղեգնյա վառելիք։
Մենք սահեցինք անշշուկ,— Եվ հանկարծ դափնենու մի չար ճյուղը
Դեմքս չանգռեց։— Ասացի.— «Դա՛փնե, խփո՞ւմ ես դու ինձ.
Ես հատուցում եմ ուղում».— Բայց նիմփը, խնդուն, շշնջաց ինձ.
«Ծանր չե՛ն մեղանչում պոետները։ Թեթև՛ է ձեր տուրքը։— Ողջո՛ւյն»։—

ԱՆԱԿՐԵՈՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Աստ, ուր վարդն է ծաղկում, ուր որթն է փարվում դափնենո՛ւն այն.
Ուր տատրակն է ճախրում, ուր միշտ ծղրիդն է երգում,
Ո՞ւմ գերեզմանն է այստեղ, որ փռել են վրան աստվածները
Ո՛ղջ ճոխությունը կյանքի։— Անակրեո՛նն է հանգչում։
Գարո՛ւն, և՛ ամառ, և՛ աշուն— ո՛ղջը կյանքում ճաշակեց նա,
Բայց ձմռանից նրան ցուրտ թո՛ւմբն այս ծածկեց վերջապես։

*
* *

Զգում եմ խնդուն՝ դասական հողով եմ կրկին ներշնչվել ես։
Հին և նոր կյանքը ինձ հետ բարձր են խոսում ավելի։
Ա՛ստ եմ լսում խորհուրդներ, թերթում եմ նոցա վաստակները
Վարժ ու հմուտ իմ ձեռքով, նո՛ր հրճվանքով շարունակ։

ԹԱՓԱՌԱԿԱՆԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՐԳԸ

Գագաթները ննջում են
Անդորր։
Լռություն է քո շուրջը
Խոր։
Թռչունները անտառում, հանդում
Քնել են՝ պարուրված մութով.
Սպասի՛ր մի փոքր՝ շուտով
Կքնես և դու։

ՊԻՆԴ ԵՎ ԱՄՈՒՐ

Աշխատանքը պոետի,
Օ, խիզախ է հար։
Էլ ի՞նչ եք ինձ հայհոյում
Անվերջ, անդադար։

Եթե պահը տանջանքի
Դառը թվար մեզ—
Կլինեինք կրկնակի
Մենք համեստ ու հեզ։

Համեստությունը թողնենք
Կույսերին բողբոջ,
Որ քնքշությունն են սիրում,
Կոպտությունը— ո՛չ։

Համեստությունը,— օ, նա
Հարկավոր է, երբ
Իմաստությունն է խոսում
Խորիմաստ, մեզ հետ։

Աշխատանքը պոետի.
Օ, խիզախ է հար.
Ծրգի՛ր,— քեզ հետ կլինեն
Սրտերն հրավառ։

Օ, անշուրջառ տերտերնե՛ր,
Լեզու չքերե՛ք.
Միևնո՛ւյնն եմ ես— թեկուզ
Դուք ինձ մահ բերեք։

Ձեր խոսքերը սնամեջ,
Որ աբում էր դեռ—
Կոշիկների նման ես
Մաշել եմ արդեն։

Թող ջրադացը երգի
Իմ ադունն ադա.—
Հասկացողը կների
Մինչև վերջ նրան։

ՖԱՈՒՍՏ

(Հատված)

Ախ, ուսերի ես փիլիսոփայություն,
Եվ բժշկություն, և իրավունք,
Իրրև աշակերտ՝ սերտեցի նաև
Աստվածաբանության խոսք և սկզբունք,—
Եվ կանգնած եմ արդ անօգ, շվարած,
Եվ ո՛չ խելացի, քան էի առաջ։
Դարձա ես մագիստր, և դոկտոր դարձա—
Տասերորդ տարի՛ն է ահա
Աշակերտներիս այս կողմ ու այն կողմ
Քշում եմ, ինչպես մի անիմաստ հոլմ—
Եվ տեսնում եմ՝ ճիշտ գիտություն չկա...
Եվ սիրտս է դառնում մոխիր անզգա։—
Թող լինեմ գիտուն, քան բոլոր անխիղճ
Մագիստրոսներն ու տերտերները գինջ,
Թող լինեմ ազատ նախապաշարքից,
Թող չը վախենամ ահից ու չարքից—
Բայց և ես չունեմ խինդ հնարավոր,
Չեմ տեսնում նաև ճշմարտություն իսոր,
Չեմ տեսնում, որ ես կարող եմ ուսել
Ուրիշներին միտք, ու ընթացք, ու սեր։—
Այլև ընչազուրկ եմ կյանքով իմ ողջ—
Ո՛չ փառք եմ շահել, ո՛չ պատիվ, ո՛չ փող։
Այսպես և՛ շունը չէր կամի ապրել,—
Ահա՛ թե ինչո՞ւ մոգության տրվել
Եվ ձգտում եմ, որ վրձիններն անխոնջ
Բաց անեն իմ դեմ նյութի, բնության
Գաղտնիքները ողջ...

Որ ես, քրտնաթոր աշակերտներիս
Ցսրտեմ հենց այն, ինչ անհայտ է ինձ...
Որ ինքս ըմբռնեմ բնության ներքին
Կապը ընդհանուր, գաղտնիքը բոլոր,—
Որ ճշմարտություն քարոզեմ ես խոր,
Եվ ոչ թե բառեր՝ անիմաստ ու սին...
Օ, լուսի՜ն, եթե քո լույսը պայծառ
Դու վերջին անգամ թափեցիր վերից
Իմ վշտի վրա, որ տանջում է ինձ
Այս մութ սենյակում, այս խցում խավար։
Իմ հին թղթերի, գրքերի վրա,
Կրկին դու, տխուր, փայլում ես ահա։
Ախ, եթե չքնաղ ցոլքերիդ ներքո
Ես թափառեի լեռների գրկում,
Ոգիների հետ ճախրեի վերում,
Թռչեի թեթև լո՜ւյս հովիտներում,
Եվ, խուսափելով գիտության թույնից—
Քո՜ պայծառ ցողով սրբեի ես ինձ..

Ավա՜ղ, բանտում եմ ես հին դարձյալ,
Իմ հին որջում եմ այս անիծյալ։
Աստ լույսն արևի հազիվ է հասնում
Ապակիների միջով գույնզգույն։
Հին դարակներում՝ գրքեր ամենուր,
Մինչև սենյակիս առաստաղը մութ
Պառկած են ահա— փոշու և անգութ
Ճիճունների կուր։
Տաշտիկների և շշերի մի շարք
Կորցրված փոշում՝ մնում են անկարգ.
Օ, ա՞յս է արդյոք քո աշխարհը հար—
Եվ այս է, որ դու կոչում ես աշխարհ։—

Եվ զարմանո՞ւմ ես դու դեռ, թե այդ
Ինչո՞ւ է սիրտդ այդքան տխուր—
Այդ ի՜նչ կարոտ է անհուն ու խոր,
Որ հալածում է քեզ անընդհատ։
Ախ, փոխարեն ողջ լույս բնության.

Որ խինդի համար տրված է մեզ—
Շրջապատել ես, նայի՜ր, դու քեզ
Կմախքով, մռայլ շնչով մահվան...

Փախի՜ր։ Դո՜ւրս։ Դեպի ազա՜տ աշխարհ
Եվ մի՞թե գիրքն այս խորախորհուրդ,
Որ Նոստրատումն է գրել մի օր—
Քեզ չի՞ ավետի ուղի մի այլ։
Աստղերի վազքը կը հասկանաս,
Երբ բնությունը քեզ հետ խոսի,
Անհուն զորություն քո մեջ կզգաս,
Երբ ոգիները քեզ հետ խոսեն...
Եվ ոգիները քեզ կըլսեն.
Զար մտքով երբեք դու չես գտնի
Այս սուրբ գրերի միտքը գաղտնի։
Ձե՜զ, ձե՜զ եմ դիմում, ոգինե՜ր ջինջ,—
Ձա՜յն տվեք, եթե լսում եք ինձ։—

ԳՐԻԹԽԵՆԻ ԵՐԳԸ

«ՖԱՈՒՍՏ»-ից

Հանգիստքս կորել է
Եվ սիրտս է—հեք,—
Ձեմ գտնի նրա՜ն ես,
Երբե՜ք, երբե՜ք։—

Եվ ուր չկա՜ նա—
Դագաղ է ինձ,—
Ամբողջ աշխարհն է
Թույն ու թախիծ։—

Իմ խեղճ գլուխը
Մթնել է հար,—
Իմ խեղճ ոգի՜ն էլ
Նանր ու խավար։—

Հանգիստքս կորե՛լ է,
Եվ սիրտս է— հեք,—
Ջե՛մ գտնի նրա՛ն ես
Երբե՛ք, երբե՛ք։—

Նրան եմ հսկո՛ւմ ես
Լոկ պատուհանից—
Նրա համա՛ր եմ
Ելնում լոկ տանից։

Հասակը բարձր է,
Քայլվածքն— հաստա՛տ,—
Ժպիտը սիրող է,
Հայացքը— սա՛սա,—

Եվ իր խոսքերը,
Եվ ձայնը՝ հաղթ...
Ջերքի հպումը,
Համբույրը, ախ...

Հանգիստ չունե՛մ ես,
Տանջվում եմ, հեք,—
Ջե՛մ տեսնի նրա՛ն էլ
Երբե՛ք, երբե՛ք։—

Նրա՛ն է կուրծքս
Ջգտում ընդմիշտ,—
Գրկել նրան— ու
Հանգչել անվիշտ...

Համբուրել նրան,
Կուզեի լոկ,—
Նրա համբույրում
Մեռնել անհոգ...

ՄՐՐԿԱՀԱՎԻ ԵՐԳԸ

Ծովի ալեհեր հարթության վրա
Ամպեր է ահա կուտակում քամին,
Ահեղ ամպերի և ծովի միջև
Ճախրում է հպարտ մրրկահավը՝
Թռչում է՝ մի սև կայծակի նման։
Մերթ ալիքներին թևով դիպչելով,
Մերթ նետի նման ամպերին հասած՝
Ճչում է նա չոր—և խինդ են լսում
Ամպերը խիզախ թռչունի ճիչում։
Հնչում է ճիչում— փոթորկի ծարավ։
Ե՛վ զայրույթի ուժ, և՛ կրքի հրդեհ,
Ե՛վ հաղթանակի հավատք են լսում
Ամպերը նրա այդ ահեղ ճիչում։
Նվում են ճայերն ամպրոպից առաջ,
Սուզահավերը նվում են նույնպես,—
Սուզահավերին անհայտ է հավետ
Անհուն հրճվանքը կյանքի պայքարի։
Գոռ որոտներից սարսում են նրանք։
Հիմար պինգվինը թաքցընում է խեղճ,
Գիրուկ մարմինը ժայռերի խորքում...
Եվ միայն հպարտ Մրրկահա՛վն է
Ճախրում համարձակ, խիզախ և ազատ
Ծովի այևոր, ճերմակ փրփուրում։
Ավելի մռայլ ու ծանր են իջնում
Ամպերը ծովի հարթության վրա,
Եվ ալիքներն են երգում ու պարում՝
Թռչելով դեպի որոտը պայթող։
Ցասման փրփուրում որոտն է թնդում,
Ալիքներն են հորդ՝ վիճում քամու հետ,
Եվ ահա հանկարծ գրկում է քամին
Ամպերի երամն անդուլ զրկանքով,
Եվ շպրտում է ամեհի թափով,

Վայրի բարկությամբ, ժայռերի վրա,
Փշրում է, ցրում, դարձընում փոշի
Նրանց զմրուխտե կույտերն ահագին։—
Մրրրկահավը ճախրում է ճիչով,
Կայծակի նման ամպերը ճեղքում—
Պոկում է թևով փրփուրը ջրի,
Ճախրում է ահա, ինչպես հզոր դև,
Սև, անագորույն ոգի փոթորկի,—
Եվ ծիծաղում է և խուլ հեկեկում...
Որոտի ցասման, վրդովմունքի մեջ
Նա—զգայուն դև— վաղուց է արդեն
Հոգնություն տեսնում։— Համոզված է նա,
Որ չեն պարուրի ամպերն արևին,
Չե՛ն ծածկի ընդմիշտ, չե՛ն ծածկի, օ, ո՛չ։—
Ոռնում է քամին... Որոտը թնդում...
Կապույտ բոցի պես ամպերն են վառվում
Ծովի ալեկոծ անդունդի վրա
Բռնում է ծովը կայծակի նետերն
Ու իր ահռելի ընդերքում մարում։
Կրակե կարմիր օձերի նման
Ե՛վ գալարվում են, և՛ կորչում ծովում
Այդ կայծակների ցոլքերը բոսոր։
— Փոթորիկն հիմա թինդով կպայթի...
Դա խիղախ, հպարտ մրրրկահավն է
Ճախրում սլացող կայծակների մեջ,
Ահեղ, աղմկող, հորդ ծովի վրա.
Դա— հաղթանակի երգի՛չն է ճչում.
— Թո՛ղ փոթորիկը ուժգնորե՛ն պայթի...

ԲԱՑԵԻ ՆՐԳԸ

Բարձր լեռների
Կատարը սողաց
Եվ պառկեց այնտեղ,
Խոնավ քարափում,
Գալարուն իժը՝
Հայացքը ծովին։

Բա՜րձր արևն էր
Երկրնքում շողում
Եվ լեռներն էին
Շող՝ շնչում վերի,
Եվ ալիքները
Ջարնըվում էին
Վարը՝ քարերին։

Իսկ ձորի միջով
Վարը, խավարում,
Սահանքն էր սահում
Դեպի ծովը լուրթ,
Ջարկելով իրար
Ջարերն հատակի,—
Փրփուրով պատած,
Հզոր, ալեհեր,
Կտրում էր լեռը
Եվ ծովը թափվում
Դժգոհ ոռնոցով։

Հանկարծ այն քարափն,
Ուր իժն էր պառկել,
Վերևից ընկավ
Վիրավոր բազեն՝
Փշրված կրծքով,
Փետուրն արյունոտ։
Մի հատու ճիչով
Նա ընկավ գետին—
Եվ զարնըվում էր
Անզոր զայրույթով
Ամրակուռ քարին...

Իժը վախեցավ,
Ետ սողաց ճեպով,
Հասկացավ սակայն,
Որ կյանքին նրա
Մնացել է լոկ

Մի քանի վայրկյան...
Մոտ սողաց իսկույն
Մեռնող թռչունին
Եվ ֆշշաց ուղիղ
Աչքերին նրա.
«Ի՞նչ է, մեռնո՞ւմ ես...»
«Այո՛, մեռնում եմ,—
Շշնջաց բաղեն,
Խորը շնչելով.
— Ես լա՜վ ապրեցի...
Ես բախտավոր եմ...
Քաջ կռվեցի՛ ես...
Տեսա երկինքը...
Դու չե՞ս տեսնի այն
Երբեք այնքան մոտ...»։
«Է՜հ, խե՜ղճ արարած,
Ի՜նչ է երկինքը.
Դատարկ տեղ միայն...
Ո՞նց սողամ այնտեղ...
Այստեղ ինձ համար
Ավելի լավ է,
Խոնավ ու տաք է»։

Այսպես իժն ասաց
Ազատ թռչունին,
Միծաղեց հոգում
Նրա անհեթեթ
Մտքերի վրա
Եվ այսպես խորհեց.
«Թռի՛ր թե սողա—
Վախճանն հայտնի է...
Բոլորս էլ վերջը
Կըպառկենք հողում,—
Ամե՛ն ինչ վերջը
Աճյուն կդառնա»։
Բայց խիզախ բազեն

Թպրտաց հանկարծ,
Կանգնեց մի փոքր
Եվ շուրջը նայեց—
Քարափին խոնավ։

Գորշ քարի միջով
Ջուրն էր թորում դուրս,
Եվ հեղձուցիչ էր
Քարափում իավար,
Եվ գալիս էր գաղջ,
Ծանր, լեշի հոտ։
Եվ ճչաց բաղեն
Կարոտով, ցավով,
Հավաքած բոլոր
Իրա ուժերը.
— Օ, եթե երկինք
Մեկ է՛լ թռչեի...
Ես կըսեղմեի
Թշնամուն կրծքիս
Եվ... թո՛ղ հագենար
Արյունով իմ նա...
Օ՜, երջանկություն
Կռվի, պայքարի...
Իսկ իժը խորհեց.
«Երևի այնտեղ
Ապրելը այդքան
Իրո՛ք որ լավ է,
Եթե նա այդպես
Խոր հառաչում է...
Եվ առաջարկեց
Ազատ թռչունին.—
«Դու է՛լ մոտեցիր
Եզրին քարափի
Եվ նետվիր ներքև—
Գուցե թևերդ
Քեզ բարձրացրնեն,

Եվ կապրես կրկին
Դու մի քիչ և՛ս,
Քո վեհ տարերքում»։

Եվ հառնեց բազեն,
Եվ, խենթ ճչալով,
Գնաց եզերքը՝
Ճանկերը խոնավ
Քարին քսելով։
Եվ մոտեցա՛վ նա,
Պարզեց թևերը,
Շնչեց կրծքո՛վ ողջ,
Բացեց աչքերը—
Եվ գլորվեց վա՛ր։
Եվ, ինչպես քարը,
Սահելով ներքև,
Արագ ընկնում էր,
Կոտրում թևերը.
Եվ կորցընում էր
Իր փետուրները...
Ջրի ալիքը
Գրկեց մարմինը.
Եվ լվանալով
Նրա արյունը,
Փրփուրով պատած
Մղեց դեպ ծովը։
Իսկ ալիքները
Տխուր հառաչով
Զարնվում էին
Զոր քարերին ա՛յն.
Եվ չէր երևում
Նրա մարմինը
Ծովի անսահման
Տարածության մեջ...
Քարափում պառկած
Խորհում էր երկար
Իժը թռչունի

Վախճանի մասին
Եվ սիրո մասին
Դեպի երկինքը...
Եվ ահա նայեց
Դեպի հեռո՛ւն նա,
Որ հար շոյում է
Մեր հայացքները
Բախտի երազով։
«Իսկ ի՞նչ էր տեսնում
Մեռնող այն բազեն
Այդ անապատում
Անտակ ու անեզր...
Ինչո՞ւ են նրանք,
Մեռնելով հավետ
Հուզում հոգին մեր
Իրենց սիրո՛վ այդ՝
Դեպի թռիչքը,
Դեպի երկինքը...
Ի՞նչն է պարզ այնտեղ...
Չէ՞ որ կարող եմ
Ես ի՛նքս իմանալ
Այդ ամենը—գեթ
Մի փոքր պահով
Երկինք թռչելով»։
Ասաց և արավ։
Ոլորված, որպես
Փայլուն մի օղակ՝
Թռավ առա՛ջ նա—
Եվ արևի դեմ
Փայլեց, ինչպես մի
Բարակ ժապավեն։
Սողալու համար
Ծնվածը—թռչել,
Օ, անկարո՛ղ է...
Մոռանալով ա՛յս...
Ընկավ քարի՛ն նա,
Բայց չփըշրվեց,

Այլ ծիծաղե՛ց լոկ.
«Ահա՛ թե ո՞րն է
Երկինք թռչելու
Հիմար հաճույքը...
Ընկնելու մե՛ջ է...
Հիմա՞ր թռչուններ...
Հողին անընտել,
Զանձրացած այնտեղ,
Նրանք ձգտում են
Դեպի երկինքը—
Եվ կյա՛նք են փնտրում
Անապատում տո՛թ։
Այնտեղ— դատարկ է.
Այնտեղ լույս շա՛տ կա,
Բայց չկա այնտեղ
Ուտելիք, չկա
Կենդանի մարմնի
Համար հենարան։
Էլ ինչի՞ է այդ
Հպարտությունը...
Էլ ինչի՞ է այդ
Հանդիմանանքը...
Նրա համա՛ր, որ
Ծածկեն նրանով
Իրենց տենչերի
Խելառ ընթացքը,
Որ նրանց հետև
Քողարկեն իրենց
Անպետքությունը
Այս կյանքի համար...
Հիմա՞ր թռչուններ...
Բայց չե՛ն խաբի ինձ
Այլևս նրանց
Խենթ զրույցները...
Ես ի՛նքս գիտեմ
Ամե՛ն ինչ հիմա։

Ես ինքս արդեն
Տեսա երկինքը...
Վե՛ր ճախրեցի ես
Եվ չափեցի՛ այն,
Տեսա անկումը,
Բայց չմեռա՛ ես,
Այլ ավելի՛ եմ
Հավատում ի՛նքս ինձ...
Թող նրանք, ովքեր
Չեն սիրում հողը—
Ապրեն ստեղծ՛վ լոկ—
Ես գիտեմ հիմա
Ճշմարտությունը—
Եվ նրանց կոչին
Չե՛մ հավատում ես։
Հողի ծնունդ եմ—
Հողո՛վ կապրեմ ես»։
Եվ կծկվեց նա
Պերկ՝ քարի վրա՝
Իրենով հպարտ։—
Փայլում էր ծովը
Վառ լույսերի մե՛ջ,
Եվ ալիքները
Ջարնըվում էին
Ալիսերին՝ ահեղ։
Նրանց որոտում
Թնդում էր երգը
Բաղեի մասին։
Եվ դողում էին
Ժայռերը՝ նրանց
Հարվածներից դո՛ռ
Եվ երգից նրանց.—
Հոլ-խիզախների
Խենթության վեհ
Երգում ենք փա՛ռք մենք։
Հոլ-խիզախների
Խենթության վեհ—

Օ, ա՛յս է ահա
Կյանքի իմաստը...
Օ, քա՛ջ բազե,— դու
Կռվում՝ քո դաժան
Ոսոխների՛ դեմ
Եղար արնաքամ...
Բայց կգա օրը
Եվ քո արյունի
Վառ կաթիլները՝
Կայծերի նման՝
Կբռնկվեն մեր
Կյանքի խամարում
Եվ բազմաթիվ քա՛ջ
Սրտեր կբվառեն
Ծարավով լույսի
Եվ ազատության։
Թեկուզ մեռար դու,
Բայց երգերում քաջ
Եվ հոգով արի
Ու խիզախ մարդկանց—
Ընդմիշտ կլինես,
Պայծառ օրինակ,
Հպարտ օրինակ,
Խոլ-խիզախների
Խենթությանը վեհ
Երգում ենք և՛րգ մենք...»։

ՎԱԼԱԽԱԿԱՆ ԼԵԳԵՆԴ

Անտառում ապրում էր փերին,
Գետում լողանում էր անվերջ.
Մի անգամ անզգույշ գտնվեց—
Եվ ընկավ ձկնորսի թոռի մեջ։
Ձկնորսները խիստ վախեցան,
Բայց այդտե՛ղ էր պատանի Մարկո՛ն,

Նա գրկեց փերուն համարձակ,
Սկսեց համբուրել կրքոտ։
Իսկ փերին, ճկուն ճյուղքի պե՛ս,
Թևերում նրա գալարվում էր,
Նայում էր Մարկոյին անվերջ
Եվ ինչ-որ բանի ծիծաղում էր...
Ամբողջ օրը գուրգուրեց Մարկոյի՛ն,
Բայց իջավ գիշերը հենց—
Ջքացավ ծիծաղկուն փերին,
Մարկոյի հոգին տխրեց...
Ջոր-գիշեր Դանուբի ափերին
Թափառում, կանչում է Մարկոն հե՛ք,
Հառաչում է. «Ո՞ւր է փերին»։
Ալիքներն ասում են. «Ձգիտե՛նք»։
Բայց ճչաց նա նրանց. «Խաբո՛ւմ եք,
Ինքնե՛րդ եք նրա հետ պարում...»
Եվ նետեց իրեն հիմարը
Դանուբի՛ մեջ, որ գտնի փերուն։
Լողանում է փերին Դանուբում,
Ինչպես և Մարկոյից առաջ,
Իսկ Մարկո՛ն էլ չկա... Բայց, տեսե՛ք—
Իր մասին գոնե ե՛րգն այս մնաց...

. . . . . .

Իսկ դուք աշխարհում կապրեք
Որդերի նման կույր ու սին,—
Ձեր մասին ո՛չ զրույց կասեն,
Ո՛չ երգեր կերգեն ձեր մասին։

ԱՂՋԻԿԸ ԵՎ ՄԱՀԸ

I

Դառնում է արքան պատերազմից։
Գնում է—զայրույթից դողում է։
Լսում է— թփի հետևից
Մի աղջիկ ծիծաղում է։

Անեղ կիսելով հոնքերը դնդին
Արքան մարակեց ձիուն՝ փնչալով,
Հարձակվեց վրան, ինչպես փոթորիկ,
Եվ գոռաց՝ զրահը ցնցելով.
— «Ի՞նչ ես դու»,— գոռաց նա չար ու կոպիտ,—
«Ի՞նչ ես դու, աղջի՛, ցցել ատամներըդ.
Կործանեց, հաղթեց ինձ թշնամին,
Իմ ամրոցը զորքը կոտորվել է,
Գերի է ընկել շքախումբիս ողջ,
Գնում եմ ահա, որ նոր զորք բերեմ.
Ես— արքան եմ քո, սիրտս— վիշտ ու ոխ,—
Հիմար ծիծաղըդ ես ո՞նց համբերեմ»։

Շապիկը կրծքին շտկելով հազիվ՝
Աղջիկը ասաց արքային գազիր.
— Ես խոսում եմ, տե՛ս, հետն իմ սիրածի,—
Տե՛ր-արքա, դու, լավ է— հեռացի՛ր։—
Արքաների հետ խոսելու համար
Սիրողը ե՞րբ է ժամանակ ճարում.
Երբեմն սերը վառվում է արագ,
Քան մոմն՝ աստուծո պայծառ տաճարում։

Մոլեգնեց արքան բարկությունից չար,
Հրաման տվեց իր խմբին խոնարհ.
— «Զնդան նետեցե՛ք այս վիրք աղջկան,
Կամ, լավ է, իսկույն խեղդեցեք նրան»։

Նամածրեելով մոուցները հեզ՝
Արքայի մարդիկ թափվեցին վրան,
Շրջապատեցին չար դևերի պես—
Մահին հանձնեցին դժբախտ աղջկան։

II

Լեցուն է մահը միշտ չա՛ր հույզերով,
Բայց այդ օրը նա փոխվել էր ասես.
Չէ՞ որ գարնանը սերմերը սիրո

Ուզում են անգամ այդ պառավի մե՛ջ։
Ջանձրալի է հար նեխած մսերում
Ոչընչացնել հիվանդությունները.
Երբեմն ուզում ես ապրել անօգուտ,
Ամեն մի բոպեն մահով չընդունել։
Բոլորը՝ նրան տեսնելու պահին՝
Ցգում են մի՛այն սարսափ անիմաց.
Ջանձրացել էր նա մարդկային ահից,
Թաղման ծեսերից, փոսերից այն բաց։
Զրաղված գործով անշնորհակալ՝
Այս կեղտոտ ու մութ աշխարհի վրա—
Իր գործն հմտորեն կատարում է հար—
Բայց ավելորդ են համարում նրան։
Վիրավորիչ է, իհարկե, ոա քիչ.
Բարկանում է մերի մարդկանցից նա ի՛լ,
Եվ, բարկանալով, տանում է կյանքից
Ո՛չ նրանց հոգաս, ում պե՛տք է տանել։
Է, սատանայի՞ն սիրի նա գուցե,
Անհագուրդ շնչի դժոխքի հրով,
Հեկեկա սիրով ցավից ու խոցից,
Նրա հետ մեկտեղ արքենա սիրով...

III

Աղջիկը՝ կանգնած Մահի առաջին՝
Սպասում է հարվածին Մահի։
Փնչում է Մահը,— խղճում է գոհին.—
— «Ինչքա՞ն էլ չահե՛լն է, նայի՛ր...
Ի՞նչ ես արքային ասել կոպտաբար.
Սպանեմ պիտի քեզ դրա համար...»

— Օ, մի՛ բարկանա, — աղջիկը ասաց.
Ինչո՞ւ ես իզուր բարկանում վրաս.
Առաջին անգամ համբուրում էր ինձ
Սիրածս՝ թփի կանաչ հովանում,
Իսկ արքան— փախչում էր պատերազմից.
Ի՞նչ արքա, ի՞նչ բան— այդ լույս վայրկյանում...

Դե, ես էլ ասի արքային, նրան.
— Հեռացի՛ր, արքա՛, այստեղից։—
Լա՛վ էի ասում, կարծես թե, —սակայն
Տես՝ ինչքա՛ն եղավ անտեղի...

Էհ, Մահից գիտե՛մ, ազատում չկա.
Մահվանից եմ, գիտե՛մ, չըսիրած,—
Բայց ամբողջ հոգով խնդրում եմ ո՛վ Մահ,—
Թույլ տուր, որ մնակ է՛լ համբուրեմ նրան...

Տարօրինակ էր զրույցն այս Մահին.
Ո՞վ է Մահվանից նման բան ուզում.
Մտածեց՝ էլ գործ կըմնա՞ իրեն,
Թե չհամբուրվեն մարդիկ աշխարհում...

Եվ, տաքանալով արդեն ներքո,
Մահն ասաց՝ մոտիկ կանչելով օձին.
— «Գնա՛, համբուրվի՛ր— և ե՛տ եկ շուտով.
Գիշերը՝ քոնն է, կըսպանեմ— լուսին»։

Եվ նստեց քարին։—Օձը ժանիքո՞վ իր
Մահվան գերանդին է լիզում։
Աղջիկը բախտից հեկեկում է,
Փնչում է Մահը.— «Գե գնա՞, դե՛, շո՛ւտ»։

IV

Գարնան արևով քնքուշ տաքացած,
Մահը արձակեց տրեխները հին,
Հենվեց չոր քարին— և խորը քնեց։
Եվ վատ մի երազ այցելեց Մահին։

Իբրև Կայենը, ծնողը նրա,
Իր թոռանթոռի՝ չար Հուդայի հետ,
Երկուսն էլ զառամ,— ելնում են լեռը,
Երկու իժի պես սողում են կամաց։

—«Տե՛ր»,— հառաչում է, մոայլ Կայենը,
Երկինք նայելով մարած աչքերով.
«Տե՛ր»,— հայցում է չար Իսկարովտացին՝
Աչքերը հողից չըբարձրացնելով։

Վերը, ամպի մեջ, լույս լեռան վրա
Տերն, ընկողմանած, կարդում է մի գիրք.
Վառ աստղերով է այդ գիրքը գրված,
Մի էջն է նրա Սիր-Կաթինն անհուն։

Կանգնած է վերը Հրեշտակապետն՝
Ըսպիտակ ձեռքում —կայծակների խուրձ,
Ուղևորներին ասում է նա խիստ.
— «Հեռացե՛ք,— ասված ձեզ չի՛ ընդունի»։

— «Միքայե՛լ,— տխուր հայցում է Կայենն.
Մե՞ծ է հանցանքս աշխարհի հանդեպ՝
Ե՛ս ծնեցի կյանքն ըսպանանողին,
Ե՛ս եմ հայրն ըստոր, անիծյալ Մահի»։

— «Միքայե՛լ»— տխուր ասում է Հուդան.—
Գիտեմ՝ Կայենից հանցապա՛րտ եմ ես,
Քանզի մատնեցի գարշելի Մահին
Լույսի պես պայծառ սիրտը աստուծո»։

Եվ աղերսում են նրանք երկուսով.

— «Միքայե՛լ,— տերը մեզ մի խո՛սք միայն,
Թող մի խոսք ասի, թող խղճա լոկ մեզ—
Չէ՞ որ ներումն մենք չենք աղերսում»։

Հրեշտակապետն ասում է կամաց.

—«Երիցս արդեն ասել եմ նրան.
Երկու անգամին նա ոչինչ չասաց,
Երրորդ անգամին նա խիստ բարբառեց.

— Իմացի՛ր՝ քանի դեռ Մահը կյանքում
Կործանում է շունչ ու ծիլ կենդանի—
Չի՛ք ներում նրանց— Կայեն-Հուդային»։

Այստեղ Մատնիչն ու Եղբայրասպանը
Տխուր ոռնացին ու հեծկլտացին,
Եվ, գրկած իրար, գլորվեցին ցած՝
Լեռան ներքևի ճահիճը նեխած։

Իսկ մութ ճահիճում հրճվում են, խաղում
Մարդակեր դևեր ու սատանաներ—
Եվ թքում են բութ նրանց երեսին
Ճախճախուտային կապույտ կրակներ։—

V

Մահը արթնացավ կեսօրին մոտիկ։
Նայում է— աղջիկը չի՛ եկել դեռ։
Փնչում է քնկոտ. «Տե՛ս անամոթին,—
Գիշերն, արի տես, խիստ կարճ է եղել»։

Քաղեց մի հասած արևածաղիկ,
Հոտոտեց, հրճվեց՝ արևի ներքո
Դիտելով ծաղկած ծառերի դեղին
Տերևներն՝ առես դարձած ոսկեգույն։
Եվ արևգակին նայելով— հանկարծ
Երգեց նողկալի իր ձայնով հանգած.—

— Մարդիկ՝ ձեռքով չարաղետ՝
Մերձավորին սպանում—
Եվ թաղում են, և երգում.
«Ի վերին Երուսաղեմ»։

Չեմ հասկանում ես ոչինչ.
Բռնակալը իր ձեռքով
Սպանում է մարդկանց միշտ
Եվ միշտ թաղում—նո՛ւյն երգով։

Աղնիվ է թե ավազակ—
Հենց որ ուզում են թաղեն,
Նո՛ւյնն են երգում շարունակ.
— «Ի վերին Երուսաղեմ»։

Հիմարի թե ստորի,
Հենց որ ձեռքով իմ քաղեմ—
Երգում են միշտ բոլորին.
— «Ի վերին Երուսաղեմ»։

VI

Նա երգը երգեց և խիստ դժգոհեց.
Անցել է արդեն ժամ ու ժամանակ—
Իսկ Աղջիկը դեռ չկա, չի՛ գալիս.
Մա— վատ է. Մահը — չի՛ սիրում հանգ։

Դառնալով դժնի ու չար առավել—
Հագավ Մահը իր տրեխները հին,
Եվ, հազիվ իջավ լուսընկա գիշեր—
Ճանապարհ ընկավ՝ ամպի պես մթին։

Քիչ գնաց— մեկ էլ տեսնում է ահա.
Ցոզապատ, դալար թավուտի ներքո
Նստած է, գարնան դիցուհու նման,
Աղջիկը՝ շաղած լուսնյակի ցոլքով։

Վաղ— գարնանային հողի պես տկլոր՝
Բացված է նրա կուրծքը անամոթ,
Եվ թավ, մետաքսյա մաշկի վրա, խոր,
Աստղերն են փայլում համբույրների պես։—

Աստղերի նման կուրծքն են զարդարում
Գիրգ ստինքների պտուկները հուր,—
Եվ, աստղերի պես, աչքերն են նայում
Վեր՝ Կայեն-Ծիրի ճամփեքին մաքուր։

Կապույտ ստվերներ աչքերի տակին,
Շրթերը— կարմիր վերքերի նման,
Գլուխը դրած նրա ծնկներին՝
Հոգնած, հագեցած՝ նիրհել է տղան։
Նայում է Մահը— և բոցը քենի
Մարում է դանդաղ իր դատարկ գանգում։
— «Եվայի նման այդ ի՞նչ ես էլի
Թաքնվել աստծուց խոտի արանքում»։

Երկընքի նման մարմնով իր լուսեղ
Իր սիրած տղին ծածկելով Մահից—
Պատասխան տվեց Աղջիկը խիզախ.
«— Սպասի՛ր մի քիչ, դեռ մի՛ հայհոյի,
Ազմուկ մի՛ հանի, մի՛ դիպչի սրան,
Մի՛ հնչեցրու գերանդին քո սուր.
Կրգամ, կըմտնեմ իսկույն գերեզման—
Միայն թե սրան— երկար կյա՛նք դու տուր։
Մեղավոր եմ ես, չեկա ժամկետին,
Կարծում էի, որ — դու շա՛տ ես մոտիկ,
Թո՛ւյլ տուր սիրածիս ես գրկեմ էլի—
Կյանքը նրա հետ շա՛տ է ցանկալի...
Նա էլ— լա՛վն է շատ. նայի՛ր՝ հուրհուրան
Ինչպիսի՛ չքնաղ, ինչպիսի՛ վսեմ
Հետքեր է թողել նա կրծքիս վրա.
Տես՝ կակաչներ են կրակե ասես...»

Մահն, ամաչելով, կամաց ծիծաղեց.
«...— Արևի հե՛տ է համբուրվել ասես...
Բայց— մենակ դու չե՛ս իմ հոգսը կյանքում.
Շատերի՛ն պիտի ես մահ տամ ու քուն.
Ես ժամանակին լա՛վ եմ ծառայում,
Գործ շատ կա, իսկ ես— զառամ եմ արդեն.
Ամեն մի վայրկյանն ինձ թանկ է կյանքում—
Հավաքվի՛ր, աղջի՛, ժամանակն է, դե՛...»

Պնդում է աղջիկը.—
«— Իմ սիրածը ինձ

Երբ գրկում է— էլ ո՛չ երկինք, ո՛չ հող.
Լցվում է հոգիս կարոտով աննինջ,
Վառվում է իմ մեջ երկնային մի շող...
Էլ սարսափ չկա դալիքի հանդեպ,
Ո՛չ մարդ է էլ պետք, ո՛չ երկինք անհուն.
Մանկան պես— խինդը իրենո՛վ է խենթ,
Եվ իրենո՛վ է սերը հիանում...»

Լսում է Մահը, մտածկոտ ու սև,—
Էհ, ո՞նց կասեցնի այս երգը անվերջ...
Ջի՛ք աստված կյանքում— արևից վսեմ,
Ջի՛ք կրակ— սիրո կրակից անշիջ...

VII

Լուռ է Մահը, իսկ զրույցներն աղջկա
Հալում են չոր ոսկորները նրա հին,
Մերթ սառեցնում և մերթ կիզում են նրան,—
Ի՞նչ պիտի տա Մահու սիրտը աշխարհին։

Մահը— մայր չէ, բայց կի՛ն է նա և նրա
Սի՛րտն էլ անշուշտ մտքից ուժեղ է և խիստ.
Իր մութ սրտում կան բողբոջներ հուրհուրան
Կարոտանքի, վրդովմունքի և խղճի։

Նրանց, ում նա սիրում է խոր իր սիրով,
Ում սիրտը որ չոր կարոտով է լեցուն—
Գիշերները նա որպիսի՛ կարոտով
Մե՛ծ հանգիստի զրույցներ է շշնջում։

— «Էհ, ի՞նչ,— ասաց Մահը.— Հրա՛շք թող լինի.
Թույլ եմ տալիս— ապրի՛ր, ապրի՛ր դու, միայն
Միայն թե ես ընդմիշտ քեզ մոտ կլինեմ,
Սիրո կողքի՛ն ես կլինեմ հավիտյան...»

Այդ օրվանից սերն ու մահը, ինչպես քույրեր,
Միասին են շրջում կյանքում մինչև հիմա,
Սիրո հետքից Մահն է քայլում քայլով երեր,

Սուր գերանդին ուսին, միջնորդ կնոջ նման։—
Քայլում է նա, իր քրոջով հմայված հա՛ր—
Եվ ամենուր, թաղման ծեսին, թե հարսանքին —
Նա անդադրում, անշեղորեն կերտում է վառ
Երկնքը սիրո և բերկրության կյանքի։

ԻՄ ԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՐԵՍԱՄ ԼՈՒԻԶԻ ՑԱՊԵԼԼԻԻՆ

Ինչպես կայծերը ամպի սև ծխում—
Միայնակ ենք մենք օվկիանում կյանքի.
Բայց մենք —գալիքի հունտերն ենք կյանքում,
Մենք— կրակնե՛րն ենք պայծառ գալիքի։—

ԲԱԼԼԱԴ ԿՈՄՍՈՒՀԻ ԷԼԼԵՆ ԳԵ ԿՈՒՐՍԻԻ ՄԱՍԻՆ

Հայտնի՞ է Ձեզ արդյոք, որ ողջ Բրեսանում,—
Ուզում ես՝ հարցրու լույսին,—
Չկա ավելի գեղեցիկ մի կին, քան
Կոմսուհի Էլլեն դե Կուրսին։

Այն ամենը, որ լինում է կյանքում—
Մենք պետք է տեսնենք ու լսենք,—
Դրա համա՛ր էլ, աստծո կամքով,
Աչքեր և ականջներ ունենք։

Դղյակից ասում է կարապի նման
Եվ գնալի կամուրջն է նա գնում։
Մի մուրացիկ է հանդիպում նրան,
Իսկ վերից— արևն է նայում։

Բայց երբ պատահում է, որ մեր աչքը
Ձափից ավելի է սուր—
Նշանակում է, որ Արարիչը
Ուզում է տանջել մեզ իզուր։

Զբարձրացնելով աչքերը սիրող—
Գնում է նրա հետևից
Ձահել մանկլավիկը, ինչպես և սիրում
Շնիկը չքնաղ մադամին։

Մենք գիտենք— չունեն հաճախ
Դառնում է ագնի՛վ բարեկամ.
Հաճելի է սիրել շարքին.
Չի խանդում ոչ-ոք նրան։...

Ձեզ կասեմ, որ այդ մուրացիկը
Ձահել էր, թիկնեղ, գեղեցիկ,
Եվ կույր էր.— բայց մի՞թե կույրը
Տիկնոջ ուշադրության արժանի չի՞...

Նախանձում է տեսնողին միշտ կույրը.
Բայց եթե նա իմանա՞ր,
Թե սրտում մեր ինչքա՞ն մթություն ենք
Մենք պահում— և՛ սև, և՛ խավար։

Թպրտաց սիրտը կոմսուհու, սրտո՞ւմ այդ
Սերը բնակվում էր միշտ։—
Կոմսուհին նայեց մուրացկին անթարթ.
—«Արժանի է սիրո, օ, ճի՛շտ»։

Ամե՛ն ոք սրտի խոր խոհեր ունի.
Օձը, առյուծը և դո՛ւք,—
Բայց ո՞վ այդ խոհերը գիտե,
Եվ գիտե՞ս դու քոնն արդյոք...

Կոմսուհին ասում է մուրացկին. «—Լսի՛ր։
Կոմսուհի Էլե՛ն է դիմում քեզ.
Ցավ է պատճառում ինձ քո մութ հոգին.
Ինչպե՞ս ամոքեմ նրա վիշտը ես»։

Երբ զգում ես դու քո սրտում
Մեղրի կամ թույնի կուտակումն առատ—

Տո՛ւր մերձավորիդ ավելցուկն իսկույն.
Ինչի՞դ է նրա տենդը հորդառատ։

— «Մաղա՛մ,— ասում է մուրացիկը հեզ.
Իմ թանկագի՛ն մադամ,—
Իմ ամբողջ կյանքի օրերը սև
Ձեր մի համբույրի՛ն ես կտամ»։

Լույս-ճշմարտության կարոտով վառված՝
Այնքա՛ն ես ագահ այն ուզում,
Որ սիրում ես քո սուտը հնարած,
Ինչպես ճշմարտություն մի սուրբ։

— «Սիրելի՛ս, դու քիչ այն կո՛ղմը նայիր,
Ասաց կոմսուհին ծառային,—
Բարի աստծու փառքի համար ես
Հեզությունս չե՛մ խնայի»։

Կինն էլ աշխարհում—ամեն ինչի պես—
Խաղալիք է աստուծո ձեռին.
Լա՛վ է— մտածենք մանկիկների հե՛զ,
Թիթեռնիկների, ծիտերի մասին։

Գրկում է կույրը հպարտ կոմսուհուն,
Հպում է շրթերը շրթերին,—
Մշուշվում է կոմսուհու հայացքը,
Խոնարհվում է իրանը նրբին։

Օ, այրե՛ր,— կեցցե՛ երջանկությունը։
Թող թեկուզ լոկ մի պահ տևի։—
Երջանկության մեջ իմաստությո՛ւն կա
Բոլոր գրքերից ավելի՛։

Այստեղ կոմսուհու հպարտությունը
Հաղթեց կրքերին նրա վեհ.
Եվ հրամայեց մանկլավիկին նա.
— Էժե՛ն, օ, մանկի՛կս, չընայե՛ս։

Մեր ոսոխները— պահն ու սատանան—
Աշխարհում հաղթում են միշտ մեզ.
Անպարտելի է ժամը փորձության.—
Ուրեմն դու քեզ չտանջե՛ս։

Հետո, հագեցած ոտքի կանգնելով,
— Սպանի՛ր,— ասաց ծառային.
Եվ ուրախությամբ այդ տղան սիրող
Ոսոխին իր հանձնեց սև մահին։

Ով խմում է սերն ու խանդը կիզող
Միևնույն այրող բաժակից,—
Անխուսափելի խմելու է նա
Վրեժի հեղուկը կարմիր։

Խոնավ շրթերը սրբելով նազով,
Կոմսուհին ասաց Հիսուսին.
— Քե՛զ ընծայեցի, դրախտի՛ արքա.
Իմ մաքրությունը լույսի...

Թե ո՞ւր է փչում, ո՞ր կողմը, քամին—
Մեզ դաշտի ցողունն է ասում,—
Բայց աստված ինքն էլ չգիտե երբեք.
Թե կինը ի՛նչ է ուզում։

Եվ մանկլավիկին նա հեզ հարցրրեց.
— Ճի՞շտ չէ, որ բարի եմ ես շատ...
Էլ ինչո՞ւ ես լալիս, սիրելի՛ս.
Գնանք տուն, ժամանակն է արդ...

Մնվում է սերը, ինչպես բոց, արագ,—
Եվ մենք այրվելով նրանում,
Դառնում ենք ինքնե՛րըս կրակ՝
Գեղեցի՛կ, և վառ, և անհուն։—

Չպատասխանեց ծառան կոմսուհուն.
Արցունքը միայն նա սրբեց,
Բայց հառաչանքը իր անհուն
Էությունը, ավա՜ղ, չըզսպեց։

Բաշխում ենք մենք կյանքը շռայլ.—
Չէ՞ որ ամենքս կյանքում
Բերում ենք ծիծաղ մի քիչ վառ—
Եվ մի սիրտ լիքը արցունք։

Կոմսուհին իր սև հոնքերը կիտեց
Եվ, ճիչը զսպելով հազիվ—
Իր մանկլավիկին կամուրջից նետեց
Դեպի ջրերը փոսի։

Եթե մենք խստագույնս դատենք
Բոլորին, ով արժանի է դատի—
Երջանիկ չե՛նք լինի մենք,
Բայց աշխարհը դատարկվի պիտի։

Եվ կրկին իր կապույտ աչքերը
Էլենը դեպ երկինք հառեց.
— Եղիր դատավո՛ր, ինձ, տե՛ր իմ,
Բայց արդար եղի՛ր, ինչպես ես։

Մենք գիտենք.— գեղեցիկ կանանց
Մեղքերը— հանաքներ են քնքուշ.
Իսկ— այնքան բարի՛ է աստված,
Այնքան հե՛ղ է նա և զգույշ...

Գիշերը կոմսուհին, աբբային կանչելով,
Պատմեց իր մեղքերը բոլոր,
Եվ— քավեց իր այդ մեղքերը բոլոր
Լոկ հիսուն լուի հանձնելով։

Ինչ որ պատահում է կյանքում—
Մենք պետք է տեսնենք ու լսենք,
Դրա համար էլ, աստուծո կամքով,
Աչքեր և ականջներ ունենք։

Այս ամենը— հար գաղտնի կըմնար,
Այս մասին ո՞վ կասեր մեզ,—
Բայց— աշխարհբույրի գումարում հանկարծ
Ինը կեղծ դրամ պատահեց...

Բայց երբ պատահում է, որ մեր աչքը
Ձափից ավելի՛ է սուր—
Նշանակում է, որ Արարիչը
Մեզ չարչարել է ուզում։

Եվ ահա, բաշխելով այդ կեղծ դրամները
Իր հոտի ծուխերին աղքատ—
Աբբահայրը պատմեց այս քնքուշ բաները
Եվ տվեց մեզ— չքնաղ մի բալլադ։

Ցանչալից են սրտի ցավերը
Եվ հաճախ— չի՛ք բուժում նրանց.—
Այնժամ զվարթուն հանաքո՛վ ենք
Մենք բուժում ցավերն այդ անանց։

ԸՕՏ ՍԵՐԳԵՅ ԵՍԵՆԻՆԻ

ԸՆԿԵՐՆԵՐԸ

Նրանք փոքրիկ էին՝ երեխան ու կատուն,
Մեկտեղ խաղում էին տախտակների վրա,
Մինչև մութը իջներ, մինչև հայրը գար տուն
Ու հողագույն հացով կերակրեր նրանց։

Հայրը բանվոր էր։ Միշտ, առավոտվա ծեղին,
Նա գործարան կերթար ու ետ կգար մութին.
Հաց կբերեր իրա երեխային մի քիչ,
Երեխան էլ կտար՝ կեսը կատուն ուտի։

Էսպես ապրում էին։ Հայրը նրանց մեկ-մեկ
Բան կպատմեր դրսի, հարուստների մասին,
Որ կուշտ են միշտ նրանք, բայց չեն հոգնում երբեք,—
Եվ «Մարսելյեզ» կերգեր, որ երեխան լսի։

Ու կպատմեր, որ միշտ ի՛նքը հոգնի պիտի,
Պիտի արյուն թքե, որ չոր փշրանք գա տուն.
Ու լռություն դարձած՝ իրիկնային մութին
Կլսեին նրան երեխան ու կատուն...

Բայց մի օր— մի օր կարմիր—
Գործարան չգնաց էլ հայրը.
Աչքերում վճիռ կար մի,
Ժպիտը հաստատ ու անծայր էր։

Փողոցում— մարդիկ, մարդիկ,
Դրոշներ ալվոլան, կարծես տոն էր...
Ու նման էր մայիսյան վարդի
Օրերում այդ— հոր խնդությունը։

Եվ մի օր համբուրեց զավակին
Բանվոր հայրը՝ ձեռքին հրացան.

Համբուրեց աչքերը կատվի
Ու գնաց անձայն...

Բայց դարձավ դռնից բանվոր հայրը,
Համբուրեց նրանց վերստին.
— «Հասկանո՞ւմ եք,— ասավ,— ժամանակն է՝
Զարկելու ենք էսօր հարստին»։

Ու ելավ։ Փողոցում կրակոց էր։
Փողոցում չոքեց բանվոր հայրը։
Ձորքերով լեցուն էր փողոցը.
Փողոցում կռիվ ու պայքար էր։

Զարկեցին... Ճչաց բանվոր հայրը,
Հարվածը կրծքին էր, հատու։
Բայց հառաչը խոր ու անծայր այն
Լսեցին երեխան ու կատուն...

Վազեց, վազեց փողոց փոքրիկ երեխան.
Կատուն վազեց հետքից իր ընկերոջ փոքրիկ.
Նրանց գլխին— կարկուտ, կարմիր գնդակ տեղաց,
Եվ երկուսն էլ ընկան հայր-բանվորի կողքին։

Չխաղացին նրանք էլ հատակի վրա,
Չսպասեցին էլ՝ զուր, որ հայրիկը գա տուն.
Նրանք փոքրի՜կ-փոքրիկ նահատակներ եղան—
Երեխան ու կատուն...

ՄԵՌՆՈՂ ԳԼԱԴԻԱՏՈՐԸ

Ցնծում է Հռոմն ահեղազդորդ։ Ու հանդիսավոր
Մափերի ձայնից թնդում է հսկա կրկեսը մոլի։
Եվ ընկած է նա լո՜ւռ ու միայնակ, կրծքից վիրավոր
Եվ խարխափում են ծնկները փոշոտ ու արյունալի։
Եվ իզո՜ւր է նա պղտոր հայացքով դիմություն հայցում,
Արյունռուշտ արքան և սենատորը նրա շողոքորթ
Սովոր են ծափել հավասարապես թե՛ փառք, թե՛ անկում։
Ի՞նչ փույթ ամբոխին մեռնող մի ստրուկ, մի ըմբիշ խոցոտ։
Անարգված է նա, որպես խեղկատակ, մոռացված արդեն.
Հոսում է կրծքից արյունը կարմիր— վայրկյանը վերջին...
Բայց ահա լուսե մի հիշողություն ուղեղում դարթեց,
Հոսում է ահա Դունայն հայրենի իր հոգու միջից...
Եվ տեսնում է նա երկիրն հայրենի, իր կյանքը ազատ,
Տե՛սնում է նրանց, որ թողե՛ց մի օր ռազմի գնալիս։
Տեսնում է հորը՝ զողդոջ ձեռքերը դեպ իրեն պարզած,
Կանչում է իրեն ձայնով մտերիմ, տխո՜ւր, անձկալի՜...
Տեսնում է սիրած երեխաներին, փոքրերին պաշտած.
Բոլորն էլ իրա դարձին են նայում, ավարին, փառքին...
Բայց իզո՜ւր, ահա որպես մի ստրուկ, մի գազան սաստած,
Մեռնում է նա լուռ, ամբոխին ի տես շվայտ հաճույքի
Առարկա դարձած մի վայրկենական...

Մնա՜ս բարով, Հռո՜մ, մնա՜ս բարով, երկի՜ր իմ հայրենական։

ՋՈՒԼՀԱԿՆԵՐԸ

Նրանց աչքերին արտասուք չկա.
Նրանք կրճտում են ատամները քար.
«—Գերմանիա՜, պատանք ենք գործում քեզ համար»
Նրան մենք հյուսում ենք մեր անեծքը վառ,
Գործում ենք անվերջ, անդադար։

Անեծք աստծուն, որին աղոթքով
Այնքան աղերսել ենք, դիմել ենք մտքով։
Իզո՜ւր, չհասավ նա օրին մեր դժվար,
Իզո՜ւր, նա խաբեց մեզ, թողեց մեզ շվար,—
Գործում ենք անվերջ, անդադար։

Անեծք և նրա՜ն— կուշտերի արքային,
Որ մեզ միշտ ճնշել է, մատնել է մահի.
Վերջին մեր կոպեկը խլել է նա հար,
Արճիճ ու գնդակ է թողել մեզ համար—
Գործում ենք անվերջ, անդադար։

Անե՜ծք քեզ և քե՜զ, մեր երկիր սատրաքարշ,
Ուր տեր է ամոթը, անարգանքն արքա,
Ուր լավը մեռնում է անլույս, ցրտահար,
Ուր կուշտ են որդերը և սարդերը չար—
Գործում ենք անվերջ, անդադար։

Սահում է մաքոքը, ընդում մեքենան.
Անդուլ աշխատում ու երգում են նրանք.
—Հի՜ն Գերմա՜նիա, պատանք ենք գործում քեզ համար»
Նրան մենք հյուսում ենք մեր անեծքը վառ—
Գործում ենք անվե՜րջ, անդադար։

ՆԱԶԻՄ ՀԻՔՄԵԹ

ԱՐԵՎԵԼՔ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔ

Ասրար,
Հեզություն,
Ճակատագիր,
Ճաղազարդ պատուհան.
Կարավան,
Շատրվան,
Արծաթե ափսեներում պար եկող սուլթա՛ն։

Իշխան, փադիշահ,
Հաղարամյա մի շահ։
Մինարեներից կախված սադափե նալքններ,
Ռունգները հինայած կիներ՝
Ոտներով գորգեր են նկարաղարդում.
Քամիների հանդեպ կանաչամորուս իմամներ՝ ազա՛ն են կարդում...

Ահավասի՛կ ֆռանգ շահիրների տեսած Արևելքը.
Ահավասի՛կ
Յուրաքանչյուր վայրկյան միլիոններով թխվող
Գրքերի Արևելքը։
Սակայն,—
Ո՛չ այսօր, ո՛չ վաղը, ո՛չ երեկ,
Այսպիսի Արևելք
Չի՛ լինելու,
Չկա՛։
Արևելք,
Մերկ,
Քաղցած գերիների
Դու սովամահ եղե՛ր։
Արևելքից բացի բոլորին
Բաժին դարձած աշխարհ,
Ուր սովը մեռնում է սովից,
Մինչև կոկորդ հացով լիցուն ամբար,—

Եվրոպայի ամբա՛ր։—
Ա՛սիա,
Ամերիկյան դրեստնոուտների սյուներից
Չինացիները քո
Դեղին մոմերի նման՝
Երկար մազերից իրենց
Կախված են խեղդամա՛հ։
Հիմալայի է՛ն բարձր,
է՛ն ցից,
է՛ն ձյունոտ գագաթին՝
Բրիտանական սպաները նվագում են ջազբանդ։
Իրենց սևեղունգ ոտներն են սուզում՝
Փայլուն, սպիտակատամ դիակներով լեցուն
Գանգեսում։
Անատո՛լիա, դու ծայրեծայր
Արմստրոնգի շաչուն ռումբերին
Հրապարակ դարձար։
Ասիայի կոկորդը լցվե՛ց.
Արևելքը
Էլ չի կարող տանե՛լ։
Արևելքը զզվե՛ց։
Թե ձեզանից մեկը
Անգամ հարություն տալ ուզի
Մեր սովամահ եղին—
Եթե բուրժույ է նա
Թող մեր աչքից կորչի՛.
Անգամ դո՛ւ,
Դո՛ւ.
Պյեր Լոթի՛։—
Մեր դեղին մաշկի վրայով
Մարմնից մարմին անցնող
Ոչիլն անոթի
Մեր սրտին ավելի՛ է մոտիկ,
Քան դու, ֆրանսիական սպա՛,
Պյեր Լոթի՛։
Դու, ֆրանսիական սպա՛,
Այն խաղաղ աչքերով աղջկան,

Ազիադեին
Պոռնիկից շո՛ւտ մոռացար, Պյեր Լոթի՛,
Ձեր ձեռքով սրտում մեր տնկած
Ազիադեի շիրմաքարը
Մի փայտյա նշանի նման
Կապեցիր թնդանոթի։

Ջիմացողները թող իմանա՛ն.
Դու, ոչի՛նչ ես՝ շառլատանից բացի։
Ֆրանսիական փտած ապրանքները
Հարյուրին հի՛նգ հարյուր օգուտով Արևելքին ծախող
Պյե՛ր Լոթի։
Ի՛նչ խոզուկ բուրժույն ես եղել, գիտե՞ս...
Հավատայի եթե
Հոգուն, նյութից բացի,—
Արևելքի ազատագրման օրը
Քո հոգին՝
Կամուրջի էն գլուխը կբարձրացնեի ցցի
Ու դիմացը կանգնած՝ կծխեի։
Ձեզ ենք մեկնել ձեռքներս,
Ողջագուրեցե՛ք դուք մեզ,
Օ՛, Եվրոպայի սանրյուլոտնե՛ր։
Կողք-կողքի թող թռչեն կարմիր ձիե՛րը.
Կայարանը մո՛տ է,
Նայեցե՛ք.—
Ազատագրման ժամերն հաշված են արդե՛ն.

Կարմիր թաշկինակով ծածանվում է մեր դեմ
Արևելքի ապստամբության օրը։—
Մեր կարմիր նժույգները սմբակում են արդե՛ն
Իմպերիալիզմի փորը։

ԱՆԱՏՈԼԻԱՅԻ ՌՈՄԱՆՏԻԿԱՆ

... Մենք չէինք շրջում,
Որպես անրջում.
Օ, ո՛չ։—

Չէինք ուղարկում
Դարունքին ողջույն,—
Օ, ո՛չ,
Օ, ո՛չ,—
Ո՛չ նրա համար, որ հինը ծամենք,
Անցանք ծայրեծայր այս երկիրը մենք։

Մենք անցնում էինք
Աղբի մութ փոսեր—
Թող դրանց երբեմն
Քաղաքներ ասեն։

Թող նրանց, որ այստեղ չեն եղել երբեք,
Որպես վառ ռոմա՛նտիկա՝ այդ աղբը երգեն։

Նեղ, քթները կախ, հողագույն տներ,
Փողոցները—մութ, խլուրդի բներ,
Տները տվել են ճակատ-ճակատի
Ու անվերջ ծխում են քթների տակից։

Մնկները ծալած՝ նստել է խանութում
Լիմոնե չալմայով մի մարդ.
Փողոցի եռ ու դեռն է դիտում
Ժպիտով մեղմ ու հանդարտ։
Հաստավիզ ժանդարմը
Ձի ուզում ձրի
Իր չնչին ռոճիկն ունենալ.—
Պուրակից նա քշում է
Այն ցոփ զույգերին,
Որ այնտեղ ցանկացել են շնանալ։
Կալյանի թմբիրը մշուշած վրա՛ն էր՝
Լուռ, խաղաղ նիրհել է կիսամութ սրճարանը.
Անկյունում մի ծերուկ, մորուքը դեղին,
Հիացքով նայում է ծառայող տղին։—

Իր զառամ հասակից, թե կրքից—
Կաթում է թուքը շրթունքից,—
Եվ զառամ շրթերով մոմռում է նա.
— Լահո՛ւֆ-լյու-վալլահ,

—Լահո՜ւֆ-լյու-վալլահ,
Վալլա՜հ... վալլա՜հ...

Սակայն տեսնելով զույգերին,
Որոնց քշում է ժանդարմը—
Թքում է նրանց երեսին
Այդ զառամ պառավը։
Թքում ու—
ժպտում է գոհ. —
«Ամեն ինչ պապական օրենքով»։
Մազաչափ անգամ անփոփոխ
Գլորվում են օրերը...
Այս քաղաքը՝ նեխած մի փոս,
Ուր բուրում են թթու երազները...

Հողագույն դեմքով այս ծեր գյուղացին
Դառնությամբ ասում է, որ հայր է.
Այս ծերուկ գյուղացին ունեցել է որդի,
Բայց մենակ է վարում իր արտը։—
Քանի որ որդու կրծքի խորքում
Կովում ստացած գնդակն է երգում։

Ծերուկ գյուղացին ունի աղջիկ,
Բայց նա էլ անկարող է օգնել նրան,
Քանի որ հարկահավաքը շրջիկ՝
Իր ոխը թափել է նրա վրա։
Գյուղացու դաշտը մի ափ է լոկ,
Բայց չի բաժանվի իր հողից նա,—
Ծերուկի շրթունքները չեն ստում.— յո՜ք.
Թե մահը գալու է,— այստե՛ղ թող գա...

Բոբիկ ոտներով, տրեխով հողե,
Ծայրեծայր մենք անցանք այս երկիրը.
Եվ գիտենք կարոտը ջրի ու հողի
Այս երկրում, որին վիշտը զրկել է։

. . . . . .

Ինչպես որ կինը
Սպասում է մարդուն
Անքուն գիշերին.—

Այդպես այս դաշտերը
Գգվանքն են խնդրում
Մեքենաների։
Այդպիսի՜ մեքենա է հողը երազում,
Որ անգամ, երբ խրում է ճանկերն իր սուր.—
Քնքշությամբ փարվում է, գերում նրան,
Ինչպես սուր թիակը՝ ջրի վրա...

. . . . . .

Է՜յ,
Դուք,
Որ խոսում եք ինչպես նարգիլե,—
Որ զվարթ թռչում եք,
Մեր երկրում անոթի,—
Որ կույր,
Հաշմանդամ գյուղացիներին
Նետում եք հառաչանքը
Պյեր Լոթու,—
Ի՞նչ է՝ վարդագույն երազներով ձեր
Հրամայում եք՝
Արտե՞ր հնձել...
Զափազանց շռայլ է
Գրիչը ձեր,
Բայց մենք իմանում ենք
Ձեր թափը սանձել,—
Սովալլուկ դաշտերից այս՝
Անցե՛ք, անցե՛ք...
Ձեզ չե՛ն սպասում
Երկրում այս մութ,—
Ձեր երազները
Տվեք քամուն...
Հերի՛ք է, ինչքան
Կորանք հնում...

Այստեղ մենք նեխո՛ւմ ենք
Կենդանի-կենդանի,
Որտեղի՞ց
Ռոմա՛նտիկա
Այստեղ լինի...

ՊԱՏԱՐԱԳ ՔԱՐԻՆ

ԽԱՎԱՐՈՒՄ

(Հին աշխարհը)

Կանգնի՛ր, ալիք, ե՛տ նահանջիր, դեպի ե՛տ.
Հորձքդ երբեք չի ծառացել այդքան խենթ,
Այդքան խիզախ... ինչո՞ւ, ալիք դու աղի,
Այդքան պաղ ես, մոլեգին ու կատաղի։
Եվ ինչո՞ւ է կես-գիշերի այս ժամին—
Ոռնոցդ ահեղ, հեղեղատդ ու քամիդ։
Որպես հրաշք մի ահավոր, հողմ ու ջուր,
Ո՞ւր ես այդպես դու թռչում ու մռնչում։
Կանգնի՛ր, ալի՛ք, լսի՛ր դու ինձ ու մնա՛.
Սա՛ է վերջին քո սահմանը էլ հիմա.
Մի՛ կործանիր գրոհներով քո մոլի
Օրենքները, սովորություններն անցյալի,
Թշվառության, մոլեգնության լուծը սև,
Վաղուց նիրհած մտքի հետքերն այդ նսեմ,
Ուր հանգչել են ցանկություններն ապարդյուն.
Անցած կյանքի սին հուզումներն ու խնդում...
Օ՜, մի՛ քանդիր ստրկության այն շղթան,
Որ ճնշում է կնոջը սև ծանրությամբ։
Եվ թող, ալի՛ք, խնջույքը մեծ, ուր չունին
Խեղճերը տեղ,— ուր մոլուցքն է արյունի...
Օ՜, մի՛դիպչիր, կանգնի՛ր, սուրբ են մեզ գրանք՝
Հին, զորավոր պատնեշները այն մռայլ,
Որ կանգնեցրի ես ջուրջը ողջ մարդկության...
Բայց դու վազում, դու ելնում ես ավելի,
Ու տանում ես ողջը քեզ հետ դո՛ւ, ալիք։
Ահա մաշված մի ձեռագիր, օրենսգիրք,
Ահա ահեղ մռնչյունով մի անհատ՝
Ծովն է գցել արյունոտ մի կառափնատ...
Ահա գահույքն արքայական... Թո՛ղ, աստվա՛ծ,
Գահընկեց է արդեն նա էլ, անարգվա՛ծ—

Եվ նրա հետ գահավիժել են արդեն
Պատարագի վերջին քուրմերն ահագեմ։
Դատավորնե՞րն ահա.— կանգնի՛ր, դրանք սև
Նժդեհներ են կառափնատան մի վսեմ...
Բա՛վ է, կանգնի՛ր, էլ մի՛ վազիր դեպի վեր,
Աղի՛ ալիք, եղիր հանդարտ՝ անավեր...
Բայց դու նորից բարձրանում ես, դու նորից
Մակընթացով քո թռչում ես ծնկներիս,
Խուժում ես ներս մենանոցը իմ բարի...
Ալիք
— Մակընթա՞ց ես կարծում ինձ։— Ես հեղեղն եմ աշխարհի՛...

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԻՄ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ

Անհայտ ծովերի հեռավոր ափով
Անցնում է լուսինը—
Իմ կինը։
Իմ շիկահեր սիրուհին։
Իր կառքի ետևից, թափով
Զգվում է համաստեղությունների երփներանգ ամբոխը։
Պսակվում է ավտո-գարաժի՛ հետ,
Համբուրում է թերթի կիոսկները,
Իսկ շլեյֆի կաթն-ծիրը, որպես նաժիշտ,
Զարդարված է չնչին զարդերով։
Իսկ ե՞ս։—
Իմ ծարաված սրտին քո հոնքերի կեռով
Քո աչքերի հորից բերում էիր դույլեր։
Կախվում էիր լճե մետաքսներում,
Սաթե ջութակների՛ պես երգում էին կոնքերդ։
Այնտեղ, ուր իշխում են դժնի տանիքները—
Չե՛ս նետի ցոլքը քո դու։
Բուլվարներում խեղդվում եմ՝ դեմքիս թախիծ փռած։
Ախր դա դո՛ւստրն է քո—
Իմ երգը—
Ամուր շուլքիներով—
Կաֆեների առաջ։

«ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ» ՏՐԱԳԵԴԻԱՅԻ ՊՐՈԼՈԳԸ

Կարո՞ղ եք
Դուք
Հասկանալ,

Թե ինչո՞ւ ես
Հանգիստ
Հոգի՛ս եմ ափսեով տանում
Գալիք օրերի ճաշին։
Փողոցի չսափրած դեմքից
Հոսելով, ինչպես արցունք—
Ես,
Գուցե,
Պոետն եմ վերջին։

Նկատե՞լ եք.
Ճոճվում է
Քարե ալեյներում
Զոլավոր կերպարանքը ձանձրույթի, որ մեռել է։
Իսկ վազող ջրերի
Սապնափրփուր վզին
Կամուրջներն են ծալել երկաթե ձեռները։

Երկինքը լալիս է
Անզուսպ,
Բարձրաձայն,
Իսկ ամպի կնճռոտ շրթունքին
Խեղկատակ գրիմա՛ս կա։
Կարծես թե մանկիկ է երազել մի կին,
Իսկ աստված պարգևել է մի իդիոտ երեխա։
Շեկլիկ ու մազածածկ,
Գիրուկ մատներո՛վ իր
Ձեզ գուրգուրել է արևը՛ բոռի՛ պես աներես.
Ձեր հոգում ճորտ կա պառկած։
Իսկ ես,
Անվախ,
Ատելությամբ լցված դեպ ցերեկվա լույսերը՝
Երկաթե լարերի նման
Իմ հոգի՛ն ձգել եմ—
Ես— լամպերի արքա։
Եկե՛ք բոլորդ մոտս.
Ով ծվատում էր լռությունը,
Ով ոռնում էր, քանի՛ որ

Ցերեկների հանգույցը ձիգ է.
Խոսքերով, որ պարզ են
Ինչպես բառաչյունը—
Ես կբանամ ձեզ ձեր հոգիները՝
Դժժացող, ինչպես հեռագրասյունը...
Ես ձեր գլխին միայն
Կդիպչեմ մատներով—
Եվ կբուսնեն շրթեր— հսկայական
Համբույրների համար,
Եվ կունենանք լեզու, որ հարազատ է
Տիեզերքին համայն։
Իսկ ես,
Կաղլիկ հոգով,
Կքայլեմ դեպի գահս,
Որի հին
Գմբեթներին
Կան աստղային ծակեր։
Կպատկեմ, լուսավոր,
Մուլության շորերով,
Իմ փափուկ անկողնում, որ իսկական թրքի՛ց է,—
Եվ անչա՜փ կամացուկ,
Շպալների ծնկները գգվելով,
Շոգեկառքի անիվը կհամբուրե իմ վիզը...

ԼԱՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԴԵՊԻ ԶԻԵՐԸ

Դոփելով, սմբակները
Երգում էին կարծես.
— Գրիբ.
— Գրաբ.
— Գրոբ.
— Գրուբ։
Քամուց լիզված,
Սառցոտ
Սահում էր փողոցը։
Զին

Հանկարծ
Սայթաքեց—
Հավաքվեցին նրանք
Եվ ընկավ հոհոցը։
Նրանք, որոնք անգործ
Թրև էին տալիս—
Հավաքվեցին։
Ծիծաղ։
— Զի՛ն ընկավ։
— Զի՛ն։
Ծիծաղում էր փողոցը։
Միայն ես
Չթաքնեցի իմ ձայնը այդ ոռնոցին անձուկ։
Մոտեցա ու տեսնում եմ.—
Զիու աչքերը...
Փողոցը շրջվել է—
Հոսում է նրանցում...
Մոտեցա ու տեսնում եմ—
Կաթիլ առ կաթիլ
Արցունքը
Հոսելով մռութից
Թաքնվում է բրդում։
Եվ ինչ-որ ընդհանուր
Անասնական թախիծ
Իմ մեջ ծվեց հանկարծ
Եվ հորդեց դուրս։
«— Զի՛,
Հարգավոր չի՛.
Մարի՛կ ավելը ինձ.
Ինչո՞ւ եք դուք կարծում, որ վատ եք նրանցի՛ց էլ։—
Մանկի՛կս,
Բոլո՛ր էլ
Ձիեր ենք մի քիչ.
Մեզանից ամե՛ն մեկը իր տեսակի մի ձի է»։
Կարելի է
Ձեր ձին
Կարիք է՛լ չուներ դայակի.

Կարելի է խոսքե՛րս իսկ
Տակտակ թվացին նրան,—
Զին
Սակայն
Կանգնեց հանկարծ ոտքի,
Խրխնջաց—
Ու գնաց։
Խաղացնում էր պոչը։
Մանկան պես ուրախ էր։
Ուրախ մսուրն հասավ,
Պոչը շարժեց։
Եվ թվում էր նրան,
Թե ինքը— քուռակ է.
Արժե ապրել կյանքում
Եվ աշխատել արժե։

Ա՛Յ ՔԵԶ

Մի ժամ անց— այստեղից դեպ մաքուր նրբանցքը
Կհոսի ձեր ճարպը լույծ, բաժին-բաժին,
Իսկ ես բացի ձեր դեմ այնքա՜ն երգեր-գանձեր,
Ես— անգի՜ն խոսքերի վատնիչ ու տրանժիր։

Ա՛յ, դուք— տղամարդ եք։ Ձեր բեղերին նստել է
Թափթփած մնացորդը լավ չկերած բորշչի։
Իսկ դուք ահա, որ կին եք— այդ ինչքա՜ն եք քսել.
Ոստրեի պես նայում եք դուք իրերի որջից։

Բոլո՜րդ էլ պոետի սրտի թիթեռնիկին
Կոխոտում եք, կեղտոտ, ու կեղտոտում միջինը։
Ամբոխը, զայրացած, կբարձրանա ոտքի,
Կգալարե ոտները բյուրոտանի ոջիլը։

Իսկ եթե ես այսօր չցանկանամ քծնել,
Եթե կոպիտ հոնիս համբերությունն հատնի—
Ես կքրքջամ, ուրախ, ու կթքե՛մ,
Կթքեմ դեմքի՜ն ձեր,
Ես— անգի՜ն խոսքերի տրանժիր ու վատնիչ։

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ
(Գրոլոգ)

Հե՜շտ է ձեզ։
Ննջեցյալք ո՛չ ամաչեն։
Մեռած մարդասպանների հանդեպ
Ողբդ մարի՛ր։
Մաքրագործող ջրով մաքրվում է արդեն
Մեղքը հոգու,
Որ թռել է այս աշխարհից։

Հե՜շտ է ձեզ։
Իսկ ե՛ս
Այս շալյունի,
Այս բիրտ շառաչյունի միջից
Ի՞նչպես տանեմ
Սերը
Դեպի մարդը։
Ընդունում եմ.
Սիրո
Փշրա՜նքն անգամ վերջին
Այս ամեհի ծխում
Խեղդվել է արդեն։

Նրանց,
Որ դառնում են—
Ինչի՞ն է նրանց հարկավոր
Ձեր տխրությունը, կամ
Ձեր երգերի օրորը։
Նրանք,
Որ պիտի մի կերպ
Կաղալով
Մթնացնեն օրը։

Վախկո՞տ եմ։
Վախում եմ— սպանե՞ն։
Իսկ այսպես
Կարող եմ դեռ մի դար ճորտանման աճե՞լ։

Մո՛ւտ է։
Ընդունակ եմ ես և
Առաջի՛նը լինել
Հերոսության,
Մարտի շառաչում։

Այն ո՞վ է,
Ո՞վ է
Որ—
Քանդիչ տարիների այս նաբաթով կանչած—
Չի՛ լինի խիզախ ու արի։
Իսկ ես
Աշխարհում
Մի՛կն եմ—
Գալիք օրերի մարգարե։

Այսօր հրճվում եմ ես։
Առանց թարթիթափելու
Հոգին իմ
Կարողացա բերել։
Օ,
Միակ մարդկայինը—
Այս ոռնոցի միջին
Բարձրացնում եմ
Ձայնս
Հրես։
Կուզեք—
Կապեք սյունին,
Կամ դեմ տվեք պատին,
Կարծում եք՝ վարանե՞մ գուցե։—
Ուզո՞ւմ եք—
Տուգը
Փակցնեմ ճակատին,
Որ նշանը պայծառ ցոլա ձե՛զ...

ՄԱՅՐԻԿԸ ԵՎ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՆՎԱԾ ԵՐԵԿՈՆ

Սև փողոցներում սպիտակ մայրերը
Տարածվեցին, ինչպես սև զազաղի գլուխներ.
Հաղթանակի մասին կանչողներին ասին.
«Ախ փակեցե՛ք, փակեցե՛ք գաղեթների աչքերը»։

Նամակ։

Մայրի՛կ, բա՛ցիր։
Ծուխ։
Ծուխ։
Ծուխ։
Էլ ի՞նչ եք, մայրի՛կ, երկարում։
Տեսնո՞ւմ եք—
Օդն ամբողջ քարած է
Թեժ ռումբերի ուժից դղրդացող քարով։
Հենց հիմա բերեցին վիրավոր երեկոյին.
Երկար գիմադրում էր՝
Անհարթ,
Մռայլ,
Կուզիկ.
Եվ հանկարծ,
Ցնցելով ամպն ուսերը—
Արտասվեց՝ փաթաթվելով Վարշավայի վզին։
Կապույտ շապիկ հագած ոսկե աչք աստղերը
Ինչացին.
«Սպանվա՞ծ է
Մեր անգին,
Թանկագինը»։
Եվ մահիկն իր մի աչքը սարսափահար հառեց
Երբոյմը պինդ սեղմած, մեռած, սառած ձեռքի՛ն այն։
Վազեցին տեսնելու ֆատվիական գյուղերը,
Թե ինչպես, հաշմանդամ դարձած,
Արցունքներով ոսկե կաստելների աչքերը
Կոտրատում է Կովնոն փողոց-մատներն անծայր։

Իսկ երեկոն ճչում է—
Անձեռ,
Անոտ.
«Սո՛ւտ է.
Կարող եմ դեռ—
Ջնգացնելով պարում շպորները—
Բեղրս ոլորել»։

Զանգ են տալիս։

Մայրի՛կ։
Ի՞նչ պատահեց,
Լսի՛ր։—
Սպիտակ է, ինչպես սև դագաղի գլազեթ։
«Թողե՛ք.
Հեռագիր է
Սպանվածի մասին։
Ախ, փակեցե՛ք, փակեցե՛ք գաղեթների աչքերը»։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Ահա քայլում եմ ես—
Անդրծովյան ջայլամ—
Հանգով ու վանկով փետրազարդ։
Աշխատում եմ
Հիմարքս
Գլուխս թաքցնել՝
Թաղելով փետրում երդաձայն։

Քոնը չե՛մ ես, երկի՛ր հայրենի.
Խո՛րը
Հոգի՛ս
Փետուրներում թաղվի՛ր—
Եվ կբացվի ուրի՛շ մի հայրենիք
Հրկիզված հրով հարավի։

Շոգ ու տապի կղզի։
Արմավներով պճնած։
«Է՛յ,
Ճանապարհ տվե՛ք»։
Անրջանք եմ հյուսում։
Եվ կրկին
Մինչ մյուս օազիսը
Հյուսում եմ նոր հետքեր վայրկյանների փոշով։

Ոմանք փախչում են.
— Երևի կծում է։
Ոմանք
Ստոր
Քծնում։
«Մայրի՛կ,
Ա՛, մայրի՛կ,
Ածո՞ւմ է նա ձու»։
«— Չգիտեմ, հոգյա՛կս,
Երևի ածում է»։

Վրնջում են էտաժները։
Փողոցները ղժժում։
Շնչում են ջրի ցրտություն։
Ամբողջովին խոցված մատներով ու ծխով՝
Անցնում են տարիներս ցուրտ։

Դե, ի՞նչ.— խեղդի՛ր հիմա ինձ գգվանքով պազիր,
Փետուրներս խուզի՛ր քո ցուրտ քամու ձեռքով։
Թող կորչեմ,
Օտար ու սառնասիրտ,
Բոլոր ձմեռներիդ մրրիկների ներքո։

41—Ե. Չարենց, երկեր

ԱՆՕՐԻՆԱԿ ԱՐԿԱԾ, ՈՐ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ՀԵՏ ԱՄԱՌԻ ԴԱՉԱՅՈՒՄ

Հարյուր քառասուն հսկա
Արևների ուժով
Հուրհուրում էր ամռան
Մայրամուտը։
Հուլիսին էր, շոգին,
Հոսում էր շոգը շոգ,
Դաշայում էր—
Տոթ էր։
Փոքրիկ լեռան ներքևը—
Ակո՛ւլինս սարի—
Ընկած էր գյուղը
Տեղը
Տանիքների պարի։
Գյուղի հետևը— փոս էր,
Եվ այդ քոսոտ որջում
Ամեն անգամ
Արևը
Իջնում էր ու կորչում։
Իջնում էր նա, որ վաղը
Կրկին ելնի, վառվի,
Որ ողողի
Աշխարհը
Իր շողերով կարմիր։
Եվ ամեն օ՛ր
Նա նո՛ւյնը,
Ու ճշտությամբ
Խստիվ—
Եվ այս ամենը
Ինձ
Բարկացրեց սաստիկ։
Մի օր այնքա՛ն ես
Բարկացա,

Որ դունատվեց սարսափը,
Եվ գոռացի ես.
— Իշի ցա՛ծ,
Բավակա՛ն է տապեռ։
Եվ գոռացի ես.
— Զրիակե՛ր,
Դու այդտեղ— քնքշացել ես.
Իսկ ես այստեղ
Ամառ-ձմեռ
Ներկում եմ պլակատներըս։
Եվ գոռացի ես.
—Սպասի՛ր,
Լսի՛ր, ոսկեճակա՛տ,—
Անգործ շրջում ես,
Է,
Լավ չէ՞—
Ինձ մոտ թեյի թե գա։
Ես ի՞նչ արի...
Օ, ես կորա...
Ինձ մոտ,
Հոժար կամքո՛վ իր,
Ահա արևը հուրհուրան
Դաշտով գալիս,
Քայլում է...
Ուզում եմ
Վախս
Թաքցրնեմ,
Գնում եմ ես ետ-ետ,
Բայց պարտիզում է նա հրան,
Գալիս է
Նա
Արդեն։
Մոնում է դուռ ու պատուհան,
Թափվում է ներս—
Անհասը.—
Մտավ—

Եվ շունչ առավ մի պահ,
Հետո հնչեց իր բասը.—
— Քշում եմ
Ետ
Շողերը։
Ես այս անգամ թեպետ—
Սակայն
Դու ինձ
Կանչել ես.—
Պոե՛տ,
Դե թեյը բե՛ր...
Եվ,
Քրտինքի մեջ լողալով,—
Օ, շոգն հոգիս վառել էր,—
Ես,
Ինքնահոր ցույց տալով,
Ասի՝
— Նստի՛ր, արև՛ըս...
Ո՞ր սատանան էր՝ ինձ դրդեց,
Որ ես
Կանչեմ նրան,—
Բայց, քաշվելով, ես նստեցի,
Որ չինդա վրաս։
Ու լուսավոր մի պարզություն
Հորդում է նա—
Եվ վախը։
Ես մոռանալով
Նրա հետ
Խոսում եմ—
Եվ
Ուրա՛խ եմ։
Խոսում եմ
Ես
Դեսից-դենից,
Ասում եմ.
— Շատ է գործս։

Իսկ նա ասում է.
— Պա՛րզ նայիր
Կյանքին—
Դեռ դու անփո՛րձ ես։—
Կարծում ես
Հե՞շտ է
Արևել.
Հապա գնա՛,
Փորձի.
Բայց դե—
Ես պե՛տք է արևեմ,
Ես չե՛մ փախչում գործից...
Այսպես
Խոսում ենք երկուսով,
Կորչում է մութի հետքը.
Էլ ի՞նչ
Գիշեր.
Արդեն դու-յով
Խոսում ենք իրար հետ մենք։
Քիչ անց արդե՛ն ես՝
Մտերիմ՝
Խփում եմ իր ուսին.
Իսկ նա.—
— Նո՛ւյն բախտն է վիճակված,
Պոե՛տ, մեզ երկուսիս։
Գնա՛նք, պոե՛տ,
Գոռա՛նք,
Երգե՛նք,
Խրվենք կյանքի գորշ խորքը.
Ես իմ
Շողերը կցրեմ,
Դու քոնը—
Երգերո՛վ քո։
Էլ ո՛չ ստվեր կա,
Ո՛չ խավար,
Ընկավ մութի պատնեշը.
Հիմա երգի՛ր դու

Ու շողա՛—
էլ լույսն ու երգն անվե՛րջ է։
Երբ նա հոգնի,
Ուզի պառկել
Գիշերն՝ այդ բութ քնկոտը,—
Ես իմ շողերը կարձակեմ,
Եվ գիշերի՛ մեջ
Կծագե
Իմ լույսն ու առավոտը։
Լուսել ընդմի՛շտ,
Երգել անվե՛րջ,
Մինչև սառչի լեղո՛ւն քո,—
Լուսել—
Ա՛յ սա է արևի
Եվ իմ
Միակ
Լոզունգը...

ՆԻԿՈԼԱՅ ՆԵԿՐԱՍՈՎ

ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Վանյա.— Ո՞վ է շինել այս նանապարհը։
Հայրը.— Կոմս Կլեյնմիխելը, սիրելիս։

Օ, բարի՛ հայրիկ, ինչո՞ւ եք խաբում
Ձեր որդուն խոսքով այդ նսեմ,—
Թույլ տվեք լուսնի ցոլքերի ներքո
Ես նրան ճիշտը ասեմ։

Աշխատանքն այդ, Վա՛նյա, սոսկալի դժվար էր,—
Ջի՛ր կարող շինել դա մի մարդ։
Աշխարհում մի արքա կա, այդ արքան անողո՛ք է,—
Սո՛վ է անունը նրա։

Նա բանակներ է վարում, ծովերում նա
Շարժում է նավերը, դաշտում
Քշում է գութանը և անդուլ հսկում է,
Ուր աշխատանքն է իշխում։

Հենց նա՛ էլ քշել է այստեղ մասսաները,
Շատերը դաժան պայքարում,
Կյանքի կոչելով անպտուղ չոլերը—
Մեռել են այս գորշ քարերում։

Ճանապարհն ուղիղ է. նեղլիկ բլուրներ են,
Կամուրջներ, ռելսեր ու սյուներ,—
Իսկ երկու կողմերիցը, նայի՛ր՝ ոսկորնե՛ր են...
Հասկանո՞ւմ ես, Վա՛նյա,— ինչքա՛ն են ընկել...

Լսո՞ւմ ես, լսո՞ւմ ես ահավոր կանչերը.
Դուփում են, ատամ կրճատում,—

Տեսնո՞ւմ ես՝ ամբո՛խ է, անթիվ մեռելներ են...
Ինչքա՞ն են, ինչքա՞ն են— իմանո՞ւմ ես դու...

Նրանք մերթ կտրում են երկաթ ճանապարհը,
Վազում են, ուզում են հասնել.
Լսո՞ւմ ես՝ երգո՛ւմ են.— «Լուսնյակ գիշերո՛վ այս
Սիրում ենք մեր գործը տեսնել։

Մենք այստեղ տառապել ենք ցրտի ու հովի՛ դեմ,
Հավիտյան կորված մեջքերով,
Ապրել ենք խուզերո՛ւմ ցուրտ, պայքարել սովի՛ դեմ,
Մրսել ու թրջվել օրերով։

Մեզ թալանել են տասնապետ—գիտունները,
Ծեծել են տերերը, կարիքը ճնշել,
Ամեն ի՛նչ մենք տարել ենք, բայց հավետ մենք եղել ենք
Խաղաղ վաստակի զավակներ։

Եղբայրնե՛ր, վայելում եք դուք հիմա մեր պտուղը,
Իսկ մենք մոխրանում ենք հողում,—
Դուք արդյոք մեզ հիշո՞ւմ եք, մեզ արդյոք դեռ հիշո՞ւմ է՛ք,
Թե մոռացե՛լ եք վաղուց...։

Զսարսափե՛ս դու ամեհի երգից այդ.—
Մեր երկրի բոլոր ծայրերից
Հավաքված այդ խմբերը քո հալալ եղբայրնե՛րն են՝
Անտուն ու զրկված գյուղացիք։

Ամո՛թ է. ինչո՞ւ ես հեռացնում հայացքդ.
Դու արդեն մեծացել ես, փոքր հո չե՞ս.
Տեսնո՞ւմ ես՝ կանգնած է հաղթանդամ գյուղացի՛ մի—
Նա տենդից հյուծվե՛լ է այնպես։

Շրթունքներն անարյուն են, կոպերը ընկել են,
Ձեռքերին վերքեր չորացած.
Ոտքերը ուռել են՝ նա այդպես աշխատել է—
Հավիտյան ջրում կտացած։

Նրա կուրծքը փոս է, այդ կրծքով նա բահը
Շարունակ սեղմել է, հավիտյան հրել.—
Դու նայի՛ր նրան, Վա՛նյա, ուշադիր նայի՛ր դու՝
Դժվար է այդ մարդը իր հացը ճարել։

Դու նայիր՝ այդ մեջքը, որ հիմա կռացած է,
Չի շտկել նա դեռ իր օրում.
Լուռ կանգնած՝ աշխատում է, ժանգոտած բահո՛վ իր
Նա հողն է փորում ու փորում։

Նրանից այդ սերը դեպի աշխատանքը
Մեզ է՛լ է հարկավոր սովորել.
Դե օրհնի՛ր դու, Վա՛նյա, այդ ազնիվ աշխատանքը,
Սովորի՛ր մուժիկին սիրել։

Եվ մի՛ վհատիր մուժիկի համա՛ր դու.
Ինչքա՞ն չարչարանք է արդեն նա կրել,—
Կրել է նաև այս երկաթ ճանապարհը,
Եվ ինչքա՞ն է, ինչքա՞ն է կրելու նա դեռ։

Կկրի նա ամբողջը,— և կրծքով իր համա՛ր նա
Կհարթի ճանապարհ լուսագեղ,—
Բայց ափսո՞ս որ, Վա՛նյա, գեղեցիկ կյանքին այդ
Չենք հասնի ոչ դու և ոչ ե՛ս։

ԷԹԵՆ ՊՈՏԻՅԵՆ

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

— Ելի՛ր, ում կյանքը անիծել է,
Ով ճորտ է, մերկ է և ստրուկ.
Արդեն վառվում են մեր սրտերը,
Արդեն կռվի ենք մենք ձգտում։
Այս հին աշխարհը կփորենք մենք
Մինչև հիմքերը — և հետո
Մեր նոր աշխարհը կշինե՛նք մենք,
Ուր ոչ ստրուկ կա, ոչ ժգոհ։

Սա՛ է վերջին կռիվը
Եվ պայքարը մեր մեծ.
Ինտերնացիոնալը
Աշխարհը կփրկե։

Ոչ-ո՛ք չի տա՛ մեր փրկությունը,
Ո՛չ խենթ հերոսը, ո՛չ արքան.
Մենք պետք է մեր ազատությունը
Կռենք ձեռքով մեր սեփական։
Որպեսզի շուտ փշրենք մեր լուծը
Եվ ետ խլենք սուրբ հողը մեր
Խփե՛նք մուրճերը, տանք մեր ուժը
Քանի երկաթը տաք է դեռ։

Սա՛ է վերջին կռիվը
Եվ պայքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը
Աշխարհը կփրկե։

Լոկ մե՛նք, ճորտեր ու բանվորներս,
Ունենք անխախտ մի իրավունք

Ասել, որ հողը մե՛րն է, մե՛րն է—
Կորչի հարուստը թող տգրուկ։
Եվ երբ պայթի մեծ փոթորիկը
Եվ կուշտ շները չբանան,
Նորից երկիրը և երկինքը
Մերն ե՛ն ու մերը կմնան։

Սա՛ է վերջին կռիվը
Եվ պայքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը
Աշխարհը կփրկե։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊՈՒՇԿԻՆ

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Որթատունկի աստվածն ուրախ
Թույլ է տալիս երեք բաժակ
Ըմպել քեֆին երեկոյան։
Առաջինը՝ Շնորհների
Կենացն անբիծ ու ամոթխած,
Երկրորդ բաժակը՝ կարմրագեմ
Եվ կարմրաշուրթ առողջության,
Երրորդն՝ ազնիվ մտերմության։
Իմաստունը երրորդից վերջ
Վայր է առնում դափնին գլխից
Եվ ուղերձ է արդեն հղում
Հանդուգնավետ Մորփեոսին։

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Ապրում էր մի աղքատ ասպետ
Եվ լռակյաց, և բարի,
Տեսքով՝ դունատ ու խստադեմ,
Ոգով՝ խիզախ ու արի։

Տեսել էր նա տեսիլ մի վառ,
Մտքի համար անքնին,
Եվ տեսիլն այդ հավիտյան— հա՛ր
Դրոշմվել էր իր սրտին։

Այդ օրվանից հոգով անխոնջ
Նա կանանց չէր նայում էլ,
Նա մինչև մահ ո՛չ մի կնոջ
Չկամեցավ խոսք ասել։

Պարանոցին, շալի տեղ, մի
Ջոր վարդարան նա կապեց,
Եվ պողպատե քողը դեմքի
Ոչ-ոքի դեմ չբացեց։

Սիրտը լցրած սիրով անեղծ
Եվ ցնորքով այն անահ՝
A. M. D. իր արնով գրեց
Իր վահանի վրա նա։

Եվ հեռավոր Պաղեստինում,
Պալադիններն ուր ուրիշ
Իրենց տիկնանց էին դիմում
Դեպի կռիվ թռչելիս—

Lumen coelum, Sancta Rosa,
Բացականչում էր նա խենթ,
Եվ որոտի նման կոչն այս
Սփռում էր մահ ու աղետ։

Դառնալով իր ամրոցն հեռու
Փակ մենակյաց նա դառավ,
Մի՛շտ անբարբառ և մի՛շտ տխուր,
Իբրև մի խենթ, նա մեռավ։

ԱՇԽԱՏԱՆՔ

Ժամն ըղձական արդ հասավ. ավարտված է երկար աշխատանքը։
Ի՞նչ է թախիծն էլ անհայտ սիրտս կրծում անդադար։
Գո՞ւցե վաստակս ավարտած՝ ես կանգնել եմ, ինչպես բեռնակիրը՝
Վա՛րձն իր արդեն ստացած, ա՛յլ վաստակի անընտել։
Կամ տքնությա՞նս եմ ցավում, գիշերվա լռակյաց ուղեկցի՞ն իմ,
Որ մտերիմն էր իմ տան, ջուլրը Այգի ոսկեղեն։

ԷՄԻԼ ՎԵՐՀԱՐՆ

ԲԱՆԿԻՐ

Նամակներով ծածկված գրասեղանի առաջ,
Թիկնաթոռում թաղված, դողդոջուն ու մռայլ,
Նա գրում է ճերմակ թղթիկների վրա՝
Միտքը հեռո՛ւ-հեռուն՝ երկրի ծայրերն հառած։

Տեսնում է նա Կափը, Ցեյլոնը ու Ճավա՛ն,
Եվ օվկիանոսն Հնդիկ, ուր իր նավերն հազար
Դեպի չորս կողմն հողի, դեպի հազար կայան,
Առագաստները բաց՝ նավարկում են ազատ։

Կայարաններն իրա ու ռելսերը կարմիր,
Որ ուղարկե պիտի անապատներն անթուխպ,
Ուր արևն է միայն շարժվում մեռյալ տոթում—
Եբենոսի, սաթի աշխարհները անծիր։

Իր հանքերը, նավթի շատրվաններն անթիվ,
Իր բանկերի մոլի եռուզեռը հնչուն,
Որ խեղդում է, լափում, զառանցանքով տանջում
Եվ իր տենդը նետում օվկիանոսից անդին։

Ժողովուրդներ, որոնց սենատները դահիճ
Եվ օրենքները խեղճ հպատակ են իրեն—
Նա կարող է մատնել նրանց հողմին հրե,
Թե օգտակար լինի հաշիվներին դա իր։

Պատերազմներ, արյուն, մոլեգնություն ու ոխ,
Որոնց միակ արքան— ինքը— կրծում է հար
Պաղ թվերի անկիրք ատամներով— հազար
Հանգույցներ ու հարցեր՝ արյունոտ ու այրող։

Եվ նա գիտե, որ հին թիկնաթոռում բազմած,
Իր մատյանում երբ նա խծբծում է դողդոջ—
Իր քաղքենի ոգուն կապում է կյանքը ողջ,
Ուր տիրում է թախիծ ու սպիտակ սարսափ։

Օ, ոսկի՜ն, իմ ոսկի՜ն, որ ցանում է հեռու,
Բազմապատկում այնտեղ— մոլի բաղաքներում,
Այնտեղ— խրճիթներում ու խուցերում տխուր,
Ու լույսերում, օդում, ամենո՛ւր։

Իր թնավոր ոսկի՜ն, հեռուներով հարբած,
Իր սավառնող ոսկի՜ն, իր գիշատիչ ոսկի՜ն,
Ոսկի՜ն՝ շնչող ու վառ,—
Ոսկի՜ն։

Իր ոսկի՜ն, որով փայլում են բորբ ամեն քամի ու հով,
Իր ոսկին, որ հեղն է ծծում
Թշվառության անթիվ շրթունքներով։
Իր ոսկի՜ն՝ հուրհրատող, իր ոսկի՜ն՝ խորամանկ, խաբող՝
առա՛նց խոսքի,
Հույսի ու արևի բեկոր— իր ոսկի՜ն։

Նա չգիտե ինքն էլ. Ոչ ինքն ինչի՞ է տեր,
Բայց իր դիպած ոսկին ավելի է եթե,
Քան բուրգերը հսկա, աշտարակները ցից—
Նա սիրում է խորհել, պաղարյուն ու հանգիստ.
Խորը, զգաստ սիրով,
Որ ինքն ունի արդեն, որպես բարիք ու գանձ—
Իսկական ակն հողի՝ զրնգան ու զնգան։

Ամբոխն ատում է իրեն, բայց պատկանում է նրան.
Նախանձում են բոլորն էլ. ոսկին պա՛կն է նրա։

Ցանկությունը երկրային, հրդեհումը նրա կեզ
Լափում է սիրտը նրանց, ինչպես իր սիրտը լափեց։

Ինքը— նա՛ է, որ տալիս է ուզածին
Դյութիչ վաստակը հացի։
Ի՞նչ հոգ, որ նա կեղեքում է բոլորին.—
Ով իր դռնից հեռացավ— նա դառնալու է նորից։
Որպես հսկա ջրապտույտ, որպես հորձանք.
Թավալվում է ուժը նրա ահեղաձայն,
Փրփրում է, եռում ու քաշում է իր մեջ
Տերևներ ու ճյուղեր և քարեր ու սերմեր,—
Կարողություն, հասույթ, տնտեսություն ու կյանք
Եվ կոպեկնե՛րն անգամ,
Որ խուղերի մթում, գիշերն ամեն ծառա
Համարում է ծածուկ իր ճրագի առաջ։

Այսպես ահա, հսկա իր դեզերով փողի
Թիկնաթոռում թաղված, դողդոջուն ու մռայլ,
Նա տիրում է բոլո՛ր արքաների վրա
Ու վճռում բախտը ծովերի ու հողի։

ԼՈՆԴՈՆ

Այն—Լո՛նդոնն է, ցնո՛րք չուգուն ու երկաթե.
Այնտեղ հեծում է հանքն ահագնազարկ մուրճից.
Այնտեղից են մեկնում նավերը— ո՛վ գիտե՝
Դեպ ի՞նչ անլույս ծովեր ու արկածներ վերջին։

Կայարաններ տխուր, ուր կարոտի բոցում
Դողդողում են գազի լապտերները կորգիծ,
Ուր ձանձրույթի ահեղ հրեշներ են ճչում
Վեստմինիստերյան դաժան ժամացույցի զարկից։

Ու լապտերներ, Թայմզի երկայնքն ի վար շարած,
Որ աչքերի կեղմած լճակներում լեղի
Օրորվում են, որպես ջրահեղձ ու մեռած
Նավազների զարհուր ուրվականներ դեղին։

Եվ հարբածի երգեր, ու պառնիկի քրքիջ,
Ու պանդոկի պատին — բախտանման գրեր,—
Եվ հանկարծ— մա՛հն ահա, որպես մի հյուր անկոչ...
Այն— Լո՛նդոնն է՝ ցնորք, որ կրում ես քո մեջ։

ՈՒԻՏՄԵՆ ՈՒԻՏՄԵՆ

ՄԵՐ ՕՐԵՐԸ

Էլ ջնջված են սահմանները՝ արքաների ձեռքով Եվրոպայում քաշած.
Ժողովուրդն ինքն հիմա կքաշե իր ուզած սահմանները.
Դեռ երբեք հասարակ մարդը չի՛ եղել աստվածներին այնքան հավասար,
Որքան հիմա։—
Ամենուր է նա հիմա՝ երկրում, օդում և ջրի վրա։
Նա կապել է, նա ձուլել է ի մի բոլոր երկրները, ամբողջ երկրագունդը.
Ամենո՛ւր, ամենո՛ւր ցրված
Նավերով, հեռագրով, թերթերով ու գործարաններով։
Այդ ի՞նչ շշուկ է, երկրնե՛ր, վազում ձեր միջով, հուզում ծովերի
ջրապտույտը.
Բոլոր ժողովուրդները զրույցի են նստել։ Մի սի՞րտ է արդյոք ծնվում
Երկրագնդի կրծքում։
Մարդկությունը մի մարմին է դարձել և մի ժողովուրդ։
Դողում են բռնակալները, հալչում են նրանց թագերը միրաժների նման։
Ո՞վ կասի՝ ի՞նչ կըլինի վաղը... օրերն ու գիշերները գալիքներով են
բեղմնավոր։
Օ, իմաստուն մարգարեական տարինե՛ր։
Վաստակներ, դեռ գլուխ չբերած, իրեր, դեռ չստեղծված, հորդում են
դեպ ինձ,
(Ես տեսնում եմ դրանց տենդագին երազում),
Նրանք հորդում են ինձ վրա, ճնշում են ինձ, թափանցում են ներսս—
Եվ իմ աչքերիս առաջ, ահա՛, ո՛չ Ամերիկա, ո՛չ Եվրոպա.—
Բոլոր անցածն ու կատարվածը նահանջում է ետ, դեպի խավարը.
Շարժվում է հսկա գալիքը, գալի՛ս ու գալիս ու գալի՛ս է դեպի ինձ։
Տեսնում եմ ետ-ետ է գնում հորիզոնը՝
Տեսնում եմ Ազատությունը, փառքով զրահավորված որպես տրիումֆատոր,
Եվ իր հետ կողք-կողքի հաղթական երթի են ելել խաղաղությունն ու
Աշխատանքը։

ԵՎՐՈՊԱ

Ճորտի խեղդող որջից
Շանթի պես նա թռավ՝ ինքն իրմով հիացած.
Ոտքերով նա կոխոտում է մոխիրն ու ցնցոտիները,
Իսկ ձեռքերով սեղմում կոկորդն արքաների։
Օ՜, հույս և սպասում։
Օ՜, տանջանքը քշված ազատասերների, որ մաքրում են իրենց ըմբոստ
հոգին օտար հեռաստաններում,—
Օ՜, որքա՜ն սրտեր կան հիմա տխրությունով հիվանդ.
Վերադարձե՛ք այսօր ձեր տները, թող նոր կյանք բացվի ձեզ համար։
Իսկ դուք, որ ոսկի էիք առնում, որպեսզի ժողովրդին արատավորեք,
Իմացե՛ք, ստախոսներ և վաշխառուներ, որ ձեր բոլոր կառափնատների,
ձեր մոլության,
Եվ նրա համար, որ դուք, որպես որդեր, ծծում էիք միամիտ ու բարի
մուրացկաններին,
Եվ նրա, որ խոստանալով, խաբում էին շուրթերն արքայական...
Եվ, դրժելով երդումը, քրքջում էին—
Այս բոլորի համար ներումով կպատժե ձեզ ժողովուրդը, նրա՞ պետք չեն
ձեր գլուխները.
Զզվելի՛ է նրան դաժան ոխակալությունն արքաների։
Բայց հեզ ներողամտությունը ծնում է կորուստ անողոք,— և
սարսափահար արքաները ահա դառնում են ետ—
Անցնում են հպարտ ու հանդիսավոր, և ամեն մեկին շրջապատում է
շքախումբը.— տերտեր, բռնաբարող,
դահիճ, բանտապետ, դատավոր,
վաճառական, զինվոր ու լրտես։
Իսկ բոլորի ետևից, տե՛ս, ինչ-որ ուրվական է սողում գաղտագողի,
ինչպես մառախլապատ գիշեր.
Ամբողջովին կարմիր, ճակատը, գլուխը և մարմինը արնավառ ծալքերով
ծածկած։
Չեն երևում ո՛չ դեմքը, ո՛չ աչքերը։
Բայց իր այդ ալ-կարմիր զգեստների տակից, որ վեր են բարձրացվում
ինչ-որ անհայտ ձեռքով,
Ահավասի՛կ մի մատ, որ ցույց է տալիս հեռուն, հորիզոնները—
Գալարվում է, ինչպես օձի գլուխ։

Իսկ թարմ գերեզմաններում պառկած են, արնաթաթախ, երիտասարդ
մարմիններ,
Եվ ձգված են պարանները կախաղանների, և շաչում են տերերի
գնդակները,
Եվ բռնակալները քրքջում են բարձր— բայց այս ամենը կտան պտուղներ,
և առատ կլինի նրանց հունձքը։

Այդ դիերը պատանիների,
Այդ նահատակները, օղակներից կախված, գորշ արճիճով ծածկված
այդ սրտերը,—
Նրանք անշարժ են և պաղ, բայց և այնպես ապրում են նրանք
հավիտյան, և անհնարին է նրանց սպանելը.
Նրանք ապրում են, օ՜, արքանե՛ր, մնացած իրենց պես ջահել սրտերում,
Մնացած եղբայրներում են ապրում նրանք, նրանցում, որ պատրաստ են
ձեր դեմ կրկին ապստամբելու,
Նրանք մաքրվեցին, սրբացան նրանք մահով, մահը մեծացրեց նրանց և
իմաստավորեց։
Ազատության համար ամեն մի մեռածի վրա, ամեն մի գերեզմանից կծլի
ազատության սերմը, իսկ նրանից— նորը.
Հեռա՜ւ-հեռո՜ւ կտանեն քամիները նրան՝ գալիք սերունդների համար,
Կգուրգուրեն նրան անձրևներն ու ձյունները։
Օ՜, ամե՜ն մի հոգի, որ թողել է մարմինը՝ բռնակալ դահիճներից
զարկված—
Անտեսանելի ճախրում է աշխարհի վրայով, շշնջում է, կանչում, հսկում։
Ազատությո՜ւն. թող հուսալքվեն ուրիշները. ես չեմ հուսալքվի երբեք։
Ի՞նչ։ Այս տունը գամվա՞ծ է. տերը տե՞ղ է գնացել.—
Ոչի՛նչ. շուտով նա կգա. սպասեցե՛ք նրան։
Պատրաստվեցե՛ք դիմավորելու նրան.— արդեն գալիս են նրա
համբավաբերները։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եղիշե Չարենց . . . Ալմաստ Զաքարյան . . . 3

ԸՆՏՐՔ ԵՐԳ ՏԵՐԱԴԱՐՁՈՒԿ ԱՂՋԿԱՆ

1. Ճամփին... . . . 23
2. Անքուն գիշերին . . . 23
3 Մեռելոց . . . 27

«ՀՐՈ ԵՐԿԻՐ» ԳՐՔԻՑ

Երազում եմ այն երկիրը հեռավոր... . . . 28
Ու իրիկնային... . . . 28
... Ու կապտագույն... . . . 29
Ու լալիս էիր... . . . 30
Բայց մոտեցար... . . . 30
Ու մոտեցար... . . . 31
Օ, այն չէ՞ր... . . . 31
... Եվ երբ դադարեց... . . . 32
Ես ի՞նչ անեի... . . . 32
Քո՛ւյր, գուցե՞ լրկա՞ք... . . . 32

ՏԵՍԻԼԱԺԱՄԵՐ

Մի լուսե աղջիկ... . . . 33
Ես նստում էի... . . . 34
Եվ մի իրիկուն... . . . 34
Հոգուս մեջ... . . . 35
Հայրենիքում . . . 35
Եվ մի առավոտ... . . . 36
Հիմա չգիտեմ 36

«ԼԻՐԻԿԱԿԱՆ ԲԱԼԼԱԴՆԵՐ» ՇԱՐՔԻՑ

Մարի, է՛գ թռչուն... 37
Հարդագողի ճամփորդները 40

«ԾԻԱՑԱՆԸ»՝ ՇԱՐՔԻՑ

Ես աստղային մի պոետ... 43
Հոգին չի մեռնում... 43
Միածանը 44
Երեք ճաճանչ... 44
Կապույտը 44
Առավոտ կանուխ... 45
Ոսկին 46
Մանուշակագույն 46
Աչքերի վճիտ... 47
Ու տրտում էին... 47
Իրիկուն էր 48
Հրաժեշտի երեկոն 48
Դու գնում ես... 49

ԳԱՋԵԼՆԵՐ

Ինչ տրտում են... 50
Իրիկուն է, քո՛ւյր... 50
Թող ապրի հոգին... 50
Սիրո երգի կորած տողն ես... 51

«ՈՂՋԱԿԻԶՎՈՂ ԿՐԱԿ» ՇԱՐՔԻՑ

Իրիկունը 52
Ծորենների արտի վրա... 52
Առավոտ 53
Օրերը հուր են... 54
Հնչում են խոսքերը... 54
Հնչում են օրերը... 55
Նո՞ր է կարոտս հիմա... 55
Դու հրե մի ուրու ես... 56

Բրո՜նզ ես, հո՛ւր ես... 56
Բրոնզե քո՛ւյր իմ... 57
Կարմիր նժույգները թռչում են... 59
Ինչպես երկիրս անսփոփ... 59
Վառվում ես... 60
Վառվում է հեռու... 60
Ելե՛լ են նորից... 61

«ԷՄԱԼԵ ՊՐՈՖԻԼԸ ՁԵՐ» ՇԱՐՔԻՑ

Սոնետ 62
Էմալե պրոֆիլը Ձեր... 63
Երբ ես տեսնում եմ Ձեզ— 63
Հստակ հոսում են... 64
Երբ ես տեսնում եմ... 64
Թղթից շինած ծաղիկների պես... 65

ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

Այսօր Ձեր մատները... 66
Շրջում են իմ շուրջը... 66
(Տրիոլետ ինտիմ) 67
Ջրնգում է շուրջս... 67

«ՓՈՂՈՑԱՅԻՆ ՊՁՐՈՒՀՈՒՆ» ՇԱՐՔԻՑ

Շամիրամ 68
Անկումների սարսափից 69
Վարսավիրի հմայքներ 71
Շան կարոտներ 72
Խեղկատակ 73

ՏԱՂԱՐԱՆ

Ինչքան որ հուր կա... 75
Ամռան անուշ... 75
Երազ տեսա... 75
Աչուղ Սայաթ-Նովի նման... 76
Ես մեն անգին գոզալ տեսա... 77
Կուզեմ հիմի փչե զուռնեն... 77

Ես մեկ հարված դուքանդար եմ... 77
Էլի կաքուն կգա... 78
Ամեն տեսակ երգ երգեցի... 78
Երբ էս հին աշխարհը մտա... 79
Աշխարհիս մեջ ես էլ մեկ օր... 80
Հապար ու մեկ վերք ես տեսել... 80
Ես իմ անուշ Հայաստանի... 81

ՈՒԹՆՅԱԿՆԵՐ ԱՐԵՎԻՆ

Նեսա՞լ է երկաթե մի ձեռք... 82
Աղջկա կոնքերի նման... 82
Ինչ որ լավ է... 82
Տեսնում եմ... 83
Բորբ մի աղջիկ... 83

ԼԱՌՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիշերը ամբողջ... 84
Շամիրամ 84
Կան անուս հյուրեր 85
Երգում է քաղաքն... 85
Գիտեմ, որ մի օր... 86
Պոետ 86
Պատահական անցորդին 87
Արտիստը 88
Հեռացումի խոսքեր 89
Տաղ անձնական 89
Ոսկեվրթուր, ոսկեպուրպուր... 90
Աշնանային 90
Անքնություն 91
Աղմկում է իմ սրտում... 91
Խավար է, գիշեր է... 92
Հիմա հիշում եմ բոլոր... 93
Մորս համար գաղել 93
Վահան Տերյանի հիշատակին 94
Մահվան տեսիլ 95
Աստղիկ 96

Կարմիր սոնետ 100
Ո՞վ կհանդիպի... 100
Կատուներն ու ես 101
Քամին 103

ՊՈԵՄՆԵՐ ԵՎ ԲԱԼԼԱԴՆԵՐ

Կապուտաչյա հայրենիք 106
Դանթեական առասպել 112
Վահագն 132
Աթիլա 133
Հատված 136
Սո՛մա 139
Ամբոխները խելագարվեցին 147
Նարի երկրից 156
Դեպի ապագան 160
Բրոնզե թևերը կարմիր 163
Երգ ժողովրդի մասին 167
Խաղաղության ոգին 176
Ամենապոեմ 180
Զարենց-Նամե 203
Մահկալ Սաքոյի պատմությունը 225
Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի գույգ կոշիկի մասին 238
Լենին քեռին 243
Լենինն ու Ալին 250
Ստամբոլ 257
Կոմունարների պատը Փարիզում 269
Էլեգիա, գրված Վենետիկում 284
Բալլադ քսանվեցի մասին 297
Բալլադ գնդապետ Տոմսոնի, կոմերիտ տղի և գործադուլի մասին 304
Իմ ընկեր Լիպոն 307
Բալլադ գեղջկական 311
Խմբապետ Շավարշը 314
Բորիս Ջնելաձե 327

«ՊՈԵԶՈԶՈՒՐՆԱ» ՇԱՐՔԻՑ

Գյումրի . . . 330
Սրինգը . . . 331
Երևան . . . 332
Զանգուն ու Արաքսը սեգ... . . . 336
Ասպետական (ռապսոդիա) . . . 337

«ԿՈՄԱՎՄԱՆԱԽ» ՇԱՐՔԻՑ

Լենին . . . 354

ՌՈՒԲԱՅԱԹ

I—XLIV . . . 357—365

ԷՊԻՔԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱՑ

Մուսայիս . . . 366

ՆԵՐԲՈՂՆԵՐ ՈՒ ԽՈՀԵՐ

Ի-դ մաքառումի . . . 371
Ես [illegible] չեմ այլևս . . . 375
Գաշնակցականներին . . . 378
Թուղթ բանաստեղծ բարեկամիս՝ N. N.-ին, գրված Երևանից . . . 381
Խոհ . . . 386

ԷԼԵԳԻԱՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էպիքական առավոտ . . . 389
Մուսայիս . . . 390
Այրած երդեր . . . 391
Օվկիանի երգը . . . 393
Մեռած պոետին . . . 394
Երկու սոնետ Արփիկի հիշատակին . . . 395
Մահվան քայլերգ . . . 396
Ձմեռային պալատի ներքնահարկում . . . 397

ԷՊԻՔԱԿԱՆ ՖՐԱԳՄԵՆՏՆԵՐ

Զուգունե մարդը . . . 399
Հոկտեմբեր 25—26 1917 . . . 403

ՁԱՓԱԾՈ ՆՈՎԵԼՆԵՐ

«HOMO SAPIENS» . . . 408
Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում . . . 412
Գանգրահեր աղան . . . 414

ՄԱՆՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվերնագիր . . . 417
Մի հոկտեմբերիկի . . . 417
Նմանություն Հայնեին . . . 418
Մակագրություն գրքի վրա . . . 418
Ընթերցող պոետին . . . 418
Հրաժեշտ Լենինգրադին . . . 419
Ներքող առ քենաղատան N. N. . . . 419

«ԼԻՐԻՔԱԿԱՆ ԱՆՏՐԱԿՏ» ՇԱՐՔԻՑ

Մանկություն . . . 428
Ars poetica . . . 430
Կես-գիշերային էսքիզ . . . 431

ԷՊԻԳՐԱՄՆԵՐ ԵՎ ՍԱՏԻՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեֆիստոֆել . . . 438
Նա . . . 438
Մոնումենտ . . . 438
«Հանգերձ» . . . 439
Անվերնագիր . . . 439
N. N. . . . 439
Սովորական պատմություն . . . 440
Էպիտաֆիա . . . 440
Ֆաուստ . . . 440
Ալեհեր բարեկամիս . . . 441
Հարց ու պատասխան . . . 441
N. N. . . . 441
EX UNGUE LEONEM . . . 441
Մի անպտուղ իմաստասերի . . . 442
Էքսպրոմտ, գրված հողմի ժամանակ . . . 442

«ԳԻՐՔ ՃԱՆԱՊԱՐՀԻ»

Սասունցի Դավիթը . . . 443
Դեպի լյառը Մասիս . . . 468
Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության . . . 475
Նարք . . . 488

ՏԱՂԵՐ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Տաղ սիրո ձոնված ապագայի պարմանիներին . . . 497
Տաղ եկվորներին ողջունելու համար . . . 499
Երկրորդ տաղ եկվորների համար . . . 500
Տաղ ձոնված խիզախ ճանապարհորդին . . . 502
Տաղ հիվանդների համար . . . 504
Տաղ՝ ձոնված գրքերին . . . 506
Տաղ՝ ձոնված մանրանկարիչներին . . . 508
Տաղ՝ ձոնված բնությանը . . . 511
Տաղ՝ ձոնված մեռյալներին . . . 513
Յոթը խորհուրդ քաղաք կառուցողներին . . . 515
Ուղերձ մեր հանճարեղ վարպետներին . . . 516
Յոթը խորհուրդ գալիքի սերմնացաններին . . . 517
Յոթը խորհուրդ գալիքի երգասաններին . . . 517

ԱՐՎԵՍՏ ՔՆԵՐԻՈՒԹՅԱՆ

Nostalgia . . . 519
Թումանյանի երգերը... . . . 520
Գիշերային պահերն այս... . . . 520
Եթե փակվեն հավիտյան... . . . 520
Ինչ ունեցել է... . . . 521
Դու գիտես... . . . 521
Մոնումենտ . . . 521
Ռուբայիներ (Ա—ԻԴ) . . . 522—526
Դիստիքոսներ (I—XXXVII) . . . 526—531
Բեյթեր (Ա—Ը) . . . 531—532

ՋԱՆԱՋԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր լեզուն . . . 533
Անվերնագիր . . . 534
Անվերնագիր . . . 534
Հ. Թ. . . . 534
Հ. Թ. . . . 534
Հ. Թ. . . . 535
Նա եկավ Հյուսիսից... . . . 535
Ա. Մ. . . . 535
Ա. Մ. . . . 535
Մ. Մ. . . . 536
Խաչատուր Աբովյանի արձանին . . . 536
Գյոթեից . . . 536
Պատասխան Գյոթեին . . . 536
Ակրոստիքոս . . . 537
Անվերնագիր . . . 537
Heinrich Heine . . . 537

ԱՆՏԻՊ ԷՋԵՐ

Խորհրդային Ադրբեջանին . . . 542
Տաղ սրտառուչ եղբայրական Վրաստանին . . . 542
Մահվան տեսիլ . . . 543
Հուզումների լեզուն . . . 544
Ջարմանալի աշուն . . . 545
Իմ օրերում ես ցանկացա... . . . 545
Այնքան մաղձ կա... . . . 546
Վալերի Բրյուսովին . . . 546
«Մանոն Լեսկո» . . . 547
Նավպիկե (Հատվածներ) . . . 548
Անվերնագիր . . . 554
Էպիտաֆիա . . . 556
«Իմ լուսատուը» . . . 556
Կրկին կանգնած եմ ես... . . . 557
16—9—1936 . . . 557

557
Իմ Մուսային (ռոնդո) . . . 558
Ջնչին, ինչպես... . . . 559
REQUIEM AETERNAM *(Կոմիտասի -հիշատակին)*

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

586
Գեմյան Բեդնի— *«Լենա»* . . . 587
Վոլֆգանգ Գյոթե— *Երգ լվի մասին* . . . 587
Բարեկամ... . . . 588
Երգ և քանդակ . . . 588
Մատրոնակ . . . 589
Վենետիկյան էպիգրամներից . . . 589
Անակրեոնի գերեզմանը . . . 589
Զգում եմ խնդուն... . . . 589
Թափառականի գիշերային երգը . . . 590
Պինդ և ամուր . . . 591
Ֆաուստ (հատված) . . . 593
Գրեթխենի երգը («Ֆաուստ»-ից) . . . 595
Մաքսիմ Գորկի— *Մրրկահավի երգը* . . . 596
Բազեի երգը . . . 604
Վալախական լեգենդ . . . 605
Աղջիկը և մահը . . . 614
Իմ թանկագին բարեկամ Լուիջի Ցապելլիին . . . 614
Բալլադ կոմսուհի Էլլեն դե Կուրսիի մասին . . . 620
Սերգեյ Եսենին— *Ընկերները* . . . 622
Միխայիլ Լերմոնտով— *Մեռնող գլադիատորը* . . . 623
Հայնրիխ Հայնե— *Ջուլհակները* . . . 624
Նազիմ Հիքմեթ— *Արևելք և արևմուտք* . . . 626
Անատոլիայի ռոմանտիկան . . . 630
Վիկտոր Հյուգո— *Խավարում* . . . 632
Վլադիմիր Մայակովսկի— *Մի քանի խոսք իմ կնոջ մասին* . . . 632
«Վլադիմիր Մայակովսկի» տրագեդիայի պրոլոգը . . . 634
Լավ վերաբերմունք դեպի ձիերը . . . 636
Ա՛յ քեզ . . . 637
Պատերազմ և խաղաղություն . . . 639

Ռուսաստանին . . . 640
Անբրինակ արկած, որ տեղի է ունեցել Վլադիմիր Մայակովսկու հետ ամառը դաչայում . . . 642
Նիկոլայ Նեկրասով— *Երկաթուղին* . . . 647
Էժեն Պոտիյե— *Ինտերնացիոնալ* . . . 650
Ալեքսանդր Պուշկին
Անվերնագիր (Որթատունկի աստվածն ուրախ...) . . . 652
Անվերնագիր (Ապրում էր մի ազբատ ասպետ...) . . . 652
Աշխատանք . . . 653
Էմիլ Վերհարն— *Բանկիր* . . . 654
Լոնդոն . . . 656
Ուտո Ուիտմեն— *Մեր օրերը* . . . 658
Եվրոպա . . . 659

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ԵՐԿԵՐ

ЕГИШЕ ЧАРЕНЦ
Сочинения
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1983

Հրատ. խմբագիր՝ Ռ. Մ. Մուրադյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սոսոյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Մ. Բալաքյան

ИБ 4499

Հանձնված է շարվածքի 2. 09. 82։ Ստորագրված է տպագրության 13. 04. 83։ Ֆորմատ՝ 60×84 1/16։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 39,06 պայմ. տպ. մամ., 39,4 պայմ. ներկ. թերթ., 27,4 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 51000։ Պատվեր՝ 2206։ Գինը՝ 2 ռ. 60 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91։
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65։
Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.